

ՊԱՏՄՍԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ  
ՏԱՆԴԵՍ  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2

2018

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Մ Ն  
Ն Ա Ն Դ Ե Ս  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2018, 2 (208)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2018 ԵՐԵՎԱՆ

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից  
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года  
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Գ լ խ ա Վ ը ր խ մ ք ա գ ի ր ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱԶԱՐՅԱՆ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ն ր հ ն ի ր ղ

ՄԵԼԿՈՆՅԱՆ ԱՇՈՏ (Եսախագահ), ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,  
ԴՈՒՆԻՄԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱԶԵ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԼԱՎՐԵՆՏԻ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ

Г л а в н ы й р е д а к т о р АНУШАВАН ЗАКАРЯН

Р е д а к ц и о н н а я к о л л е г и я

МЕЛКОНЯН АШОТ (председатель), АБРАМЯН ЛЕВОН, АВETИСЯН ПАВЕЛ, АСРАТЯН  
МУРАД, ДОЛУХАНИЯН АЭЛИТА, ИОАННИСЯН ГЕНРИК, МУРАДЯН САМВЕЛ,  
ОВАКИМЯН ВАЧЕ, ОВАНЕСЯН ЛАВРЕНТИЙ, САФРАСТЯН РУБЕН

© Պատմարանագիտական հանդես, 2018  
© Историко-филологический журнал, 2018

Հասցավումը՝ ՊԲՀ  
Аббревиатура — ИФЖ

I

Յ. ՅՅՈՒԲՇՍԱՆԸ ԵՎ ՅԱՅԵՐԵՆԸ ՅՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ  
 ՃՅՈՒԴԻ ԼԵՁՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՅԱՐՑԸ  
 (ԾԱՆՈՅԱԿ 170 և ՆԱԽԿԱԿ 110-ԱՄՅԱԿԻ ԱՌՔԻՎ)

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գերմանացի հայագետ Յոհան Հայնրիխ Հյուբշմանը հնդեվրոպական լեզուների, մասնավորապես իրանական լեզուների և հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում ամենանվիրական ու ամենաառանցքային դեմքերից է: Եթե այս բնագավառում մեկուկես հարյուրամյակի մեջ (1830–1980 թթ. ) հիշենք մեկ տասնյակի հասնող անուններ (Հ. Պետերման, Պ. դը Լագարդ. Ք. Պատկանյան, Ա. Մեյե, Հ. Պեդերսեն, Ն. Մառ, Գ. Ղափանցյան, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան, Է. Աղայան), ապա այդ թվում է Հ. Հյուբշմանը: Նա զբաղվել է ոչ միայն հայերենի, այլև հայագիտության տարբեր բնագավառների (պատմություն, աղբյուրագիտություն, ազգագրություն և այլն) վերաբերյալ հարցերի լայն ուսումնասիրությամբ:

Գերմանիայի էրֆուրտ քաղաքում (Պրուսիա) 1848 թ. (հուլիսի 1-ին) ծնված, տեղի վարժարանն ու գիմնազիան ավարտած, այնուհետև Ենայի, Տյուբինգենի և Մյունխենի համալսարաններում բանասիրություն ուսանած, մասնավորապես իրանագիտության մեջ մասնագիտացած [նրա ատենախոսությունը վերաբերում էր հին զրադաշտական մի հիմնի՝ “Ein Zoroastrisches Lied” («Զրադաշտական մի երգ») վերնագրով (Մյունխեն, 1872), քննությունը] և հայերենագիտության բնագավառում մեծ արդյունքի հասած գիտնականը 1877 թ. հաստատվում է Ստրասբուրգում: Այստեղ պրոֆ. Հ. Հյուբշմանը տարիներ շարունակ (մինչև իր վախճանը՝ 1908 թ. հունվարի 28, Ֆրայբուրգ) դասախոսական և գիտահետազոտական աշխատանք է ծավալում, հիմնականում հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում հիմնվելով հնդիրանական, գերմանական և սեմական լեզուների, այլև հունարենի, լատիներենի ու հայերենի տվյալների վրա:

Հյուբշմանի կյանքի և գիտական ընդհանուր գործունեությունն անդրադարձել է Ռ. Շմիտը՝ կազմելով և հրատարակելով նրա հատ-

ընտիր հոգվածները<sup>1</sup>: Երևանում նրա կյանքի և գործունեությունից համառոտ ժամանակագրությունը կազմել է է. Մկրտչյանը<sup>2</sup>:

Ա. Հայերենի վերաբերյալ հետաքրքրությունն առաջացման նախադրյալները:

Հայերենին ծանոթանում է Ենայի համալսարանում, ուր դասեր է առնում այսօր ոչ այնքան հայտնի անուն Մերքսից: Հայերենի ուսուցումը հիմք եղավ գրաբար բնագրերի ուսումնասիրման համար, որի հիման վրա գրեց բնագրագիտական (տեքստաբանական) մեկերկու աշխատություն, օրինակ՝ ըստ Սեբեոսի բնագրի «Հայերի պատմության և արաբների առաջին պատերազմի մասին» (Լայպցիգ, 1875): Հետագայում ևս Հյուբշմանը տարբեր առիթներով գրում է հայերեն բնագրերի առնչությունը բանասիրական՝ բնագրագիտական աշխատանքներ, որոնցում հանդես է բերում հին հայերենի բավարար իմացություն: Հայերենին տիրապետելը շատ դեպքերում հասնում է բարբառներին բավարար չափով տեղյակ լինելու աստիճանի:

Այսուհանդերձ, Հյուբշմանի գիտական տարերքը ծավալվում է համեմատական լեզվաբանության մանրամասների մեջ, հայերենի համեմատական-ստուգաբանական քննության ամենադժվարին հարցերի անդրադառնալիս:

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում նա արեց այն, ինչ չէին մտածել իրենից առաջ իր նախորդները (Ֆ. Վինդիշման, Հ. Պետերման, Պ. դը Լագարդ, Ֆր. Մյուլլեր և ուրիշներ), իսկ իրենից հետո եկողներն ի վիճակի եղան անելու միայն այն, որի ուղին գրեթե ամբողջությամբ գծել էր (հայերենի ստուգաբանության հարցում, օրինակ, այնպիսի խոշոր մասնագետներ, ինչպիսին են, ասենք, Հ. Պեդերսենը, Հ. Աճառյանը, է. Մակաևը, Գ. Զահուկյանը, Վյաչ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն և ուրիշներ, մեծ մասամբ առաջնորդվում են Հյուբշմանի սահմանած հնչյունական օրենքներով):

Ենայի համալսարանում Հյուբշմանը հայերենին առնչվում է, երբ ընդամենը քսան տարեկան էր, իսկ հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության հիմունքներին ծանոթանում է Ա. Շլայխերի դասախոսություններից, մասնագիտանում՝ Ֆր. Մյուլլերին աշակերտելիս: Վերջինս, ինչպես իր նախորդները, հայերենը դիտում էր հնդեվրոպական լեզուների մեջ ոչ առանձին, այլ իրանական ճյուղի լեզու, ավելին՝ ինչպես ժամանակին Ֆր. Դիֆենբախն էր Հ. Պետերմանի գրքին վերաբերող մի գրախոսականում ենթադրել, մարերենի բարբառ: Իսկ ինքը հիմնովին, ժամանակի համար անհա-

<sup>1</sup> Հ. Հյուբշման. Հայերենագիտական ուսումնասիրություններ, թարգմ.՝ Մ. Ն. Հարությունյանի, Երևան, 2004:

<sup>2</sup> Հ. Հյուբշման. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1990, էջ 196–199:

վատալի ձևով ապացուցեց, որ այն առանձին լեզու է, այլև ներկայանում է իբրև ինքնուրույն ճյուղ հնդեվրոպական ցեղակցության մեջ:

Հայերենի բնույթի հարցում, ինչպես ասում են, աշակերտը գերագանցեց ուսուցչին, որ սկզբնական շրջանում այնքան էլ հանդուրժելի չեղավ: Դա 1870-ական թվականների կեսերին էր, ուստի, կարելի է ասել, որ հետագայում ընդամենը երեք-չորս տասնամյակի ընթացքում կատարված հայերենի համեմատական քննությունը ցույց տվեց, որ այն ոչ միայն հնդեվրոպական է, վերջինիս մեջ առանձին լեզու է, այլև կազմում է ինքնուրույն ճյուղ այդ տիպի լեզուների մեջ: Այս հարցին լավագույնս անդրադարձել է է. Ադայանն իր դասական աշխատության մեջ<sup>3</sup>:

Եվ եթե նախորդների ենթադրություններն առավելապես հիմնված էին իրանական լեզուներից հայերենին անցած անհամեմատ մեծ թվով փոխառյալ սովորական բառերի և հատուկ անունների վրա, ապա նա, լինելով գերմանական երիտքերականական դպրոցի ուղղափառ (օրթոդոքս) ներկայացուցիչ, առաջ էր քաշում հնչյունական օրենքների վրա հիմնված հարցադրումներ, որոնցով ապացուցվում էր հայերենի ինքնուրույն, հատկապես իրանականից առանձին լինելը:

Մեծ խիզախություն էր ժամանակի գերմանացի (և ոչ միայն) անկոտրում իմացության տեր համեմատաբանների միջավայրում առաջ քաշել մի լեզվի ոչ միայն առանձին և ինքնուրույն լինելու, այլև հնդեվրոպական լեզուների մեջ նոր ճյուղի հավակնելու տեսություն: Այդ մոտեցման ամենաառաջին անհավանական համարողը եղավ և մնաց իր իսկ ուսուցիչ Ֆ. Մյուլլերը, որը, ի դեպ, գրեց նույն վերնագրով աշխատություն, ինչ Հյուբերմանին էր [“Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen” («Հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի դիրքի մասին»)] նպատակ ունենալով մերժելու այդ նոր տեսությունը (հայերենն առանձին ճյուղի լեզու):

Եվ դա արեց Հ. Հյուբերմանը հայերենի բնույթի վերաբերյալ:

Հայերենի ինքնուրույն ճյուղի լեզու լինելու տեսությունը Հյուբերմանի ամենամեծ ներդրումն է համաշխարհային հնդեվրոպաբանության մեջ: «Այդ խնդրի լուծմանը 26-ամյա Հյուբերմանը, որը մինչ այդ գործնականորեն, ըստ էության, որպես «իրանագետ» էր հանդես գալիս, ըստ երևույթին հասավ վերջապես այն բանից հետո և այն էլ այնպես, որ նախ Սուրբ Ղազարում Մխիթարյանների մոտ հիմնովին հայերեն սովորեց: Իր ուսման ընթացքում, որի լեզվաբանական պտուղը եղավ Սեբեոսի թարգմանությունը, նա գնալով ավելի ու ավելի պարզորոշ ընկալեց, որ հայերենը մի կողմից՝ շատ բառերի տեսանկյունից, լիովին համապատասխանում է պարսկերենին,

<sup>3</sup> է. Ադայան. Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Երևան, 1958, էջ 236–237:

մյուս կողմից, սակայն, բազմաթիվ առանձնահատկություններ է ցուցաբերում և հազիվ թե հնդեվրոպականի տպավորություն է թողնում»<sup>4</sup>:

#### Բ. Աշխատությունների բնույթը և բնագավառները:

Հայերենին Հյուբշմանն անդրադառնում է համեմատաբար ուշ, քան որ նա գիտական ասպարեզ էր մտել իբրև արևելագետ իրանական բանասիրության և համեմատական լեզվաբանության գծով:

1. Նրա առաջին աշխատանքն այս ոլորտում, ինչպես վերը նշեցինք, լինում է գրադաշտական կրոնին վերաբերող մի հատվածի («Յասնայի գլուխ 30») քննությունը, որն իբրև առաջին աշխատություն լույս է տեսնում «Ein Zoroastrisches Lied» («Զրադաշտական մի երգ») վերնագրով. հեղինակն այստեղ նախ թարգմանել է բնագիրը, այնուհետև կատարել համապատասխան վերլուծություն, որի համար էլ ստանում է իր գիտական առաջին աստիճանը, իբրև իրանագետ:

Իրանագիտության մեջ նա գրում է նաև այլ աշխատություններ՝ «Zur Casuslehre» («Հոլովների տեսության շուրջ») (Մյունխեն, 1875), «Etymologie und Lautlehre der ossetischen Sprache» («Օսեթերենի ստուգաբանություն և հնչյունաբանություն») (Ստրասբուրգ, 1887), «Persische Studien» («Պարսկերեն ստուգաբանություններ») (Ստրասբուրգ, 1887)՝ չհաշված այդ բնագավառին վերաբերող տարբեր բնույթի և ծավալի հոդվածներն ու գրախոսականները, որոնք լույս են տեսնում ժամանակի հանդեսներում և պարբերականներում:

2. Հյուբշմանի գիտական բուն դավանանքը, ինչպես գիտենք, գերմանական գիտության մեջ երիտքերականական դպրոցի սկզբունքներն էին, որին նա հարեց իր գործունեության ողջ ընթացքում: Լեզվաբանության պատմությանը լայնորեն հայտնի են այդ դպրոցի նվաճումները, որ հսկայական քայլ էր համեմատական լեզվաբանության մեջ՝ թեկուզ Ա. Շլայխերի տեսությանը քննադատաբար մոտենալու նկատառումով: Նա որոշակի ներդրում ունի հնդեվրոպական լեզուների գիտական ուսումնասիրության հնդեվրոպաբանության բնագավառում, գրում է միանգամայն արժեքավոր աշխատություններ, օրինակ՝ «Das indogermanische Vokalsystem» («Հնդեվրոպական ձայնավորական համակարգը») (Ստրասբուրգ, 1885): Հիշենք, թե ժամանակին երիտքերականների համար ինչ էր նշանակում հնչյունական օրենքի սկզբունքը, և ահա, կարելի է ընդգծել, թե այդ աշխատանքն ինչպիսի կարևորություն է ունենում տվյալ բնագավառի համար՝ համեմատաբանական ընդհանուր չափանիշներով:

<sup>4</sup> Ռ. Շմիտ. Ներածություն.— Հ. Հյուբշման. Հայերենագիտական ուսումնասիրություններ, էջ 4–5:

3. Հյուբշմանը, հավանաբար 1860-ական թվականների կեսերին անցում է կատարում, ավելի ճիշտ կլինի ասել՝ իրանականին զուգակցում է հայերենի ուսումնասիրությունը: 1875 թ. լույս է տեսնում նրա “Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen” (“Zeitschrift für vergleichende Sprachforschung”) («Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին») («Համեմատական ուսումնասիրությունների ամսագիր», 1875, 23, էջ 5–49) ծավալուն հոդվածը<sup>5</sup>: Նույն տարում, ի դեպ, Լայպցիգում լույս է տեսնում նաև ոչ պակաս ուշագրավ, բանասիրական բնույթի մեկ այլ աշխատությունը՝ “Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, aus dem Armenischen des Sebeos” («Հայերի պատմության և արաբների առաջին պատերազմի մասին՝ ըստ հայերեն Սեբեոսի»):

Գ. Հայերենի առանձնացումը իրանականից և ինքնուրույն ճյուղի լեզու կարգելը. հիմնավորումներ:

Մինչև Հյուբշմանի «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին» հոդվածի երևան գալը Եվրոպայում, սկսած XVI դ. եղել են այդ տեղի վերաբերյալ տարբեր, նույնիսկ իրար հակադիր կարծիքներ՝ հայերենը սեմական լեզու, թուրանական լեզու, նաև «ինքնուրույն լեզու, որ որևէ կապ չունի այլ լեզուների հետ»<sup>6</sup>:

Այնուհետև, դեռևս Ա. Այտընյանն էր իր «Քննական քերականություն» մեջ (Վիեննա, 1866) նկատել հայերենի և պարսկերենի ու

<sup>5</sup> Կարծում ենք՝ ավելի ճիշտ է վերնագրի այս՝ «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին» ձևակերպումը, որ չենք գտնում հայերեն երկու թարգմանություններից ոչ մեկում:

<sup>6</sup> Բնորոշումը Ք. Պատկանյանինն է, նկատի ունի Յ. Յ. Շրյոդերին, որ նման կարծիք է հայտնել իր “Thesaurus linguae Armeniacae, antiquae et hodiernae” (Ամստերդամ, 1711) գրքում (ավելի մանրամասն տե՛ս Կ. Ս. Ս. Պատկանյան. Исследование о составе армянского языка. СПб., 1864, с. VIII–IX): Ի դեպ, Պատկանյանը նույն աշխատության էջ X–XII-ում բերում է իրանական լեզուների և հայերենի տարբերակման մեկ տասնյակից ավելի հատկանիշներ, որոնց, ինչպես ինքն է գրում, իրենց աշխատություններում արդեն անդրադարձել էին նախորդ ուսումնասիրողները (Գոչեն, Ֆ. Մյուլլերը, Շպիգելը). բավականին ուշագրավ է համարվում Շպիգելի դիտարկումը՝ “Grammatik der Huzvaresch–Sprache” գրքում (Վիեննա, 1856, էջ 14), որ Պատկանյանը ձևակերպում է հետևյալ կերպ. «Այս ամենից բացի նկատվել էր, որ որոշ դեպքերում հայերենը հնչյունաբանության առումով բավականին հին է պարսկերենից, որում ավելի քիչ են կատարվել հնչյունական տեղաշարժեր վերջին սասանյանների ժամանակից սկսած» (Կ. Ս. Ս. Պատկանյան. Նշվ. աշխ., էջ XI):



Հունարենի միջև եղած զուգադրիպումներում բնիկ և փոխառյալ լի-  
նելու փաստը, թեև դրանց առանց մասնավոր քննության, առավել  
ևս համապատասխան օրենքների սահմանման<sup>7</sup>:

Հայերենի մեջ բնիկ և իրանական շերտերի առանձնացումը կա-  
տարվում է լեզվական բաղադրիչների տարբեր մակարդակներում՝  
հնչյունական, արմատային, բառային և այլն, որոնք հաստատուն  
կռվան են եղել երիտասարդ Հյուբշմանի համար:

ա) Հնչյունական մակարդակում ամենագորեղ կռվան էր այն, որ,  
օրինակ, արիական (հնդիրանական) ձայնեղ բաղաձայնների (b, d, g)  
դիմաց հայերենը սովորաբար ունենում էր խուլեր (պ, տ, կ), երբեմն՝  
ձայնեղներ (բ, դ. գ). հմմտ. հհնդկ. daçan, պրսկ. dah «տասը», իսկ  
հայերենն ունի տասն, այլև դահեկան «10-ի արժեքով դրամ», ուստի  
դահեկան-ը հայերենում փոխառություն է: Մեկ այլ օրինակ՝ հայ.  
դուստր (< \*d<sup>[h]</sup>ug<sup>[h]</sup> t<sup>[h]</sup>er-) – ավեստ. dugədar, duγədar, պրս. duhtar,  
duht (հմմտ. հհնդկ. duhitar, այլև հայ. Սահակդուխտ և այլն). բեր-  
ված օրինակից երևում է ոչ միայն խլացման երևույթը հայերենում,  
այլև այն, որ հայ. դուստր-ը բնիկ է, իսկ դուխտ-ը, հանդիպում է ի-  
գական անվանակերտ բաղադրիչի իմաստով փոխառություն իրա-  
նականից:

Հե. խուլ բաղաձայնները հայերենում արտացոլվում են իբրև  
չփականներ, իսկ իրանականում պահպանվում են: Օրինակ՝ հայ.  
հայր (< \*p<sup>[h]</sup> t<sup>[h]</sup>er-) – իրան. p. (ավեստ. pitar- «հայր», հմմտ.  
հհնդկ. pitār – «հայր»): Մեկ այլ օրինակ՝ հե. \*P<sup>[h]</sup>aH- / \*p<sup>[h]</sup>oH(i)-  
«պահել» (հատկապես անասուն), «արածեցնել» տարբերակային ար-  
մատը հայերենում առանձին չի պահպանվել, հավանաբար, իրանա-  
կանից փոխառելյալ պահ-ի ազդեցության հետևանքով (հմմտ. ա-  
վեստ. pāiti «պահում է», այլև հհնդկ. pāiti «պահում է»): հայերե-  
նում, այդ արմատը կա հովիւ «(ոչխար) պահող արածեցնող» բառի  
մեջ, որ ծագումով ունի բարդ կազմություն՝ \*(հ)ովիւ-ւ < հե. \*oxi-  
p<sup>[h]</sup>aH- (ըստ Գամկրելիձեի՝ երկար ā-ով), ըստ այդմ՝ հայ. ւ < հե.  
\*p<sup>[h]</sup>aH- [վերջնականի aH-ի (ā-ի) անկում շեշտի վերջնթերութ-  
յամբ պայմանավորված]:

բ) Հայերենում առկա այն բոլոր բառերը, որոնք ոչ միայն իմաս-  
տով, այլև հնչյունապես համընկնում են իրանականի հետ, պետք է  
դիտել փոխառություն: Այս դեպքում նկատի է առնվում թե՛ հասա-  
րակ և թե՛ հատուկ անունները. օրինակները հայտնի են, դրանք  
ցանկերի ձևով բերվում են իր իսկ Հյուբշմանի, այնուհետև Աճառ-  
յանի, Ջահուկյանի և մյուսների կողմից՝ հնչյունապես ու իմաստա-  
բանորեն սահմանված և խմբավորված:

<sup>7</sup> Տե՛ս է. Աղայան. նշվ. աշխ., էջ 287: Հմմտ. է. Մկրտչյան. Ներա-  
ծություն. – Հ. Հյուբշման. Հայագիտական ուսումնասիրություններ, էջ  
15:

դ) Զգալի տարբերություններ կան ձայնավորների համակարգում. իրանական լեզուներն ունեն ձայնավորների երկարություն/կարճություն հակադրություն. հե.  $a/e/o >$  իրան  $a$ , հե.  $\bar{a} / \bar{e} / \bar{o} >$  իրան.  $\bar{a}$ , իսկ հայերենը չի տարբերում նման հակադրություն, այսինքն՝ երկու դեպքում էլ ունի  $a$  (ա): Օրինակ՝ հայ. մայր ( $< *maHt^{[h]}er-$ ) – ավեստ. mātar (հմմտ. հնդգ. mātar «մայր») և այլն<sup>8</sup>:

Այստեղ հիշենք Հյուբերմանի մեկ այլ ներդրումը ևս, այն է՝ հայերենի գիտական տառադարձությունը, որի իրագործման ընթացքում հեղինակը բազմիցս խորհրդակցել է ճանաչված հնչյունաբան է. Զիվերսի հետ: Ա. Մեյեն, օրինակ, բարձր է գնահատել Հյուբերմանի աշխատանքն այդ հարցում:

դ) Զեբանական մակարդակում հատկանշական է, օրինակ, հայ. բ -ի (հին հայերենի գործիական հոլովի վերջավորություն) առկայությունը (նաև ալբաներենում և այլն) ( $<$  հե.  $*bhi-$ ), որ չունեն արիական (առանձնապես՝ իրանական) լեզուներ:

Այս կետում մեր ընդհանուր դիտարկումն այն է, որ հայ-իրանական մերձակցության քննությունը հայերենի առանձնացման նպատակով, որ մասամբ նկատելի է նաև նախորդ ուսումնասիրողների աշխատություններում, Հյուբերմանի կողմից այն դառնում է հնչյունական օրենքների խստագույն գործադրմամբ առավել ապացուցված և համոզիչ, որին գումարվում է բառապաշարի իմաստաբանությունը, հատուկ անունների և տեղանունների նույնպիսի քննությունը: Հյուբերմանի արածը լիովին տարբերվում է նախորդների ընդհանուր ձևով նկատածից, այն հաստատապես և անշեղիչորեն առաջ է մղում հայերենի գիտական ուսումնասիրությունը՝ հնդեվրոպական լեզուների ցեղակցության առնչությամբ:

Հետագայում այդ տեսությունը հակառակ ձեռնարկումները, ինչպես գիտենք, որևէ արդյունք չտվեցին, անպտուղ դուրս եկան:

#### Դ. Աշխատությունների հրապարակումները:

Բավականին տեղին պիտի լիներ, եթե մեր օրերի հայերենագիտության մեջ ամբողջական տեսքով կազմված տեսներինք անվանի լեզվաբան-հայագետի թե՛ հայերենին և թե՛ մյուս լեզուներին վերաբերող, ընդ որում ոչ միայն գուտ լեզվաբանական, այլև բանասիրական-բնագրագիտական (աղբյուրագիտական և այլն) աշխատանքների համահավաք մատենագիտությունը, որը, անշուշտ, կարևոր է, ուստի շնորհակալ գործ:

<sup>8</sup> Դրանք մի քանի կետով բերվում են է. Աղայանի կողմից (նշվ. աշխ., էջ 237), այլև Ք. Պատկանյանի աշխատության մեջ (նշվ. աշխ., էջ VI–XII), երբ վերջինս խոսում է այն մասին, թե Հյուբերմանից առաջ ուսումնասիրողներն ինչ տեղ են տվել այդ երևույթին հայերենի և արիական լեզուների հարաբերակցության մեջ:

Այստեղ միայն նշենք, որ Հյուբերշտանի աշխատությունները լույս են տեսել թե՛ իր կենդանություն ժամանակ, թե՛ հետագայում: Դրանք տպագրվել են տարբեր հանդեսներում, գիտական և այլ կարգի ժողովածուներում, ընդ որում ոչ միայն գերմաներեն (բնագրով), այլև հայերեն թարգմանությամբ: Նախկինում, ասենք, թարգմանություն լավ գործ են կատարել Մխիթարյանները (հ. չ. Տաշյանը և ուրիշներ):

Նախ, զգալի թվով հոդվածներ լույս են տեսել «Բագմավեպի» և «Հանդես ամսօրյայի» էջերում: Գիտական լավագույն համագործակցությունը Մխիթարյանների երկու դպրոցների հետ եղել է յուրօրինակ նպաստ Հյուբերշտանի հատկապես հայերենին վերաբերող աշխատությունները լույս ընծայելու գործում. ցավոք, թարգմանիչների ոչ հնդեվրոպաբան-լեզվաբան լինելու հանգամանքը ինչ-որ չափով խանգարել է որոշ տեքստերի ու գիտական ձևակերպումների հարցում ճշգրտություն հասնելուն:

Այնուհետև, 1980-ական և 2010-ական թվականներին Երևանում լույս տեսան Հյուբերշտանի կարևորագույն աշխատությունները երկու առանձին գրքերով, որոնք ամեն դեպքում հարկավոր են նոր ուսումնասիրությունների համար. առաջինում ընդգրկված է հեղինակի «Քերականությունը», իսկ երկրորդում՝ շուրջ երկու տասնյակի հասնող տարբեր ծավալի հոդվածները:

Նշենք Հյուբերշտանի աշխատություններից մի քանիսը, որոնք նրա գիտական մտքի, այսպես կոչված, միջուկն են. վերնագրերի թվարկումն անգամ (կից հայերեն թարգմանությամբ) պատկերացում է ստեղծում դրա վերաբերյալ.

1. Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen // “Zeitschrift für vergleichende Sprachforschung”, 1875, 23, s 5–49 (Նույնը, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1990, էջ 46–88, արտատպ.՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 4, էջ 27–54, նոր թարգմ.՝ Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 10–55):

2. «Հին հայերենի արտասանության և տառադարձության մասին» // “Zeitschrift der Deutschen morgenländischen Gesellschaft” (1876, 30, s 53–80):

3. Armenische Studien («Հայերեն ուսումնասիրություններ») (Leipzig, 1883):

4. “Das indogermanische Vokalsystem” («Հնդեվրոպական ձայնավորական համակարգը») (Strassburg, 1887):

5. “Armenische Grammatik. I Teil. Armenische Etymologie. I Abteilung: Die persischen und arabischen Lehrwörter im Armenischen” («Հայերենի քերականություն, I մաս. Հայերեն ստուգաբանություն. I բաժին. Պարսկերեն և արաբերեն փոխառյալ բառեր հայերենում») (Leipzig, 1895):

6. “Armenische Grammatik. I Teil. Armenische Etymologie” (Bibliothek indogermanischer Grammatik, Band VI) [«Հայերենի քերականությունը, I մաս. Հայերեն ստուգաբանություն» (Հնդեվրոպական քերականության մատենաշար, հ. VI)] (Leipzig, 1897):

7. “Kleine Schriften zum Armenische (Collectionen)” [«Մանր աշխատություններ Հայերենի մասին» (Ժողովածու)] (German Edition, Hildesheim, 1976) և այլն:

Իսկ, այսպես կոչված, մանր աշխատություններից (ավելի վաղ լույս տեսած, քան վերը թվարկվածներից վերջինը) հարկ ենք համարում նշել հատկապես նրանք, որոնցում առաջ են քաշվում և գիտական աներկբա վերլուծության են արժանանում Հայերենի վերաբերյալ հարցեր, և որոնք մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունը, տարբեր առիթներով նկատի են առնվել Հայերենի համեմատական ուսումնասիրությանը վերաբերող հետագա աշխատություններում: Այդպիսին են, օրինակ՝ «Իրաներենի Հնչյունաբանության մասին» (տպագր.՝ է. Կունի «Համեմատական լեզվաբանության ամսագրում», 1883, № 36, էջ 153–158), «Հայերենի Հնչյունական օրենքների ժամանակագրության մասին» (տպագր.՝ Ղ. Պատրուբանյանի «Լեզվաբանական հոդվածներ» մատենաշարի մեջ, 1898, № 1, տետր 8, էջ 129–172): Այստեղ, ինչ խոսք, բացառիկ են Հյուբընանի հոդվածները՝ “Iranica” («Պարսկականք»), “Armenica” («Հայկականք») և այլն վերտառությամբ:

#### Ե. Հայերեն թարգմանությունները:

Իր կենդանության օրոք ևս Հյուբընանն իր աշխատությունների որոշ մասը տպագրված է տեսնում նաև Հայերեն լույս տեսնող ամսագրերի (հանդեսների, ժողովածուների և այլն) էջերում, դա նախանցյալ դարի վերջին տասնամյակում էր կամ անցյալ դարի առաջին տասնամյակում:

Ամենից առաջ նշելի են “Armeniaca” («Հայկականք») շարքի հոդվածները («Հանդես ամսօրեայ», 1892, դեկտեմբեր, էջ 353–356, 1901, դեկտեմբեր, «Բազմավէպ», 1901, էջ 379–380, 1902, էջ 212–213 և այլն), «Սեմական փոխառյալ բառեր հին Հայերենի մեջ» համեմատաբար ծավալուն հոդվածը («Հանդես ամսօրեայ», 1893, էջ 14–18, 81–84, 148–150 և այլն), որը լույս է տեսել նաև առանձին գրքուկով վենետիկյան «Ազգային գրադարան» մատենաշարով (նույն տեղում, № 15, էջ 1–70): Այսպես նաև «Հին Հայերենի հատուկ անունները» («Հանդես ամսօրեայ», 1894, էջ 175–188, 198–211) և այլն:

Այնուհետև, Հյուբընանի (ընդունված է ասել) դարակազմիկ հոդվածը («Հնդեվրոպական լեզուների շրջանում Հայերենի դիրքի մասին») Հայերեն թարգմանվել է երկու անգամ (երկրորդը առաջինից, թերևս, անտեղյակ). առաջինը տպագրվել է «Պատմաբանասիրական

Հանդես»-ում (1985, №4, էջ 27–54, թարգմանիչ՝ Լ. Ս. Հովսեփյան), երկրորդը՝ Հյուբերտի «Հայագիտական ուսումնասիրություններ» գրքում (էջ 10–55, թարգմանիչ՝ Մ. Ն. Հարությունյան): Երկրորդը, պետք է նշել, թարգմանություն որակի առումով բավականին զիջում է առաջինին:

**Զ. Գիտական ժառանգության վերլուծությունները:**

Հյուբերտի աշխատություններին թե՛ անցյալում և թե՛ համեմատաբար ավելի ուշ ժամանակներում անդրադարձել են համեմատական լեզվաբանության շատ մասնագետներ, նրա աշխատությունների հրատարակիչներ, գիտական հանդեսների հոդվածագիրներ, լեզվաբանության պատմության ուսումնասիրողներ:

Ժամանակի հայկական, նաև այլ լեզուներով ամսագրերում, հատկապես գիտնականի մահից հետո, հրապարակվում են տարբեր բնույթի հոդվածներ՝ մասհիստորիկ, այս կամ այն աշխատության վերաբերյալ գրախոսական, տարբեր ծավալի վերլուծականներ և այլն: Տեղի սղություն պատճառով չընկալվելով դրանք՝ այստեղ ուշադրության ենք առնում հետևյալ կարևոր աշխատանքները:

Օտար լեզուներով լույս են տեսնում Հյուբերտի գիտական ժառանգության ամբողջական կամ մասնակի հրատարակությունը կից ներածություններ, որոնցից ուշագրավ են հատկապես երկուսը. նկատի ունենք նրա աշխատությունների գերմաներեն և հայերեն հրատարակություններին կից այն երկու առաջաբանները, որոնցից մեկի հեղինակն է Ռ. Շմիտը, իսկ մյուսինը՝ Է. Մկրտչյանը:

Մեզանում, թերևս, առաջինը է. Աղայանն է, որ իր հայ լեզվաբանության պատմությանը նվիրված մնայուն աշխատության մեջ առանձին բաժնով անդրադառնում է Հյուբերտի հայերենագիտական գործունեությանը՝ քննելով հատկապես հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի տեղի մասին<sup>9</sup>: Այդ բաժնում Հյուբերտն, իրավամբ, գնահատվում է իբրև իր ժամանակի խոշոր լեզվաբան, որ մեծ հետք է թողել ոչ միայն առհասարակ հնդեվրոպաբանության և իրանական լեզուների ուսումնասիրության մեջ, այլև առավելապես հայերենի բազմակողմանի քննության ու ցեղակից լեզուների շարքում նրա տեղորոշման առումով:

Է. Աղայանը վերլուծությունը, չենք կարող չնկատել, գրեթե ամբողջովին վերաբերում է «Հայերենի դիրքի մասին» հոդվածին, իսկ հեղինակի մյուս աշխատանքներն ուշադրության առարկա են, եթե կարելի է ասել, կողմնակիորեն: Վերլուծությունը կատարված է հայերենի և իրանական լեզուների առնչակցության զգալի թվով օրինակների հիման վրա, առնված նրա իսկ աշխատություններից գնահատման մակարդակում ապացուցելու հայերենի թե՛ առանձին ճյուղ ներկայացնելը, թե՛ ցեղակցային տարբեր կարգի առանձնա-

<sup>9</sup> Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 231–244:

Հատկություններ ունենալը՝ ի համեմատություն մյուս ճյուղերի (իտալական, բալթիկ-սլավոնական և այլն) ներկայացուցիչ լեզուների:

Մյուս կարևոր անդրադարձը է. Մկրտչյանի առաջաբանն է, որ գտնում ենք իր կազմած այն հատորյակում, որ ներառում է նախ հայերենի բնույթի պարզաբանման առումով կարևորագույն աշխատանքը («Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին»), այնուհետև՝ այլ աշխատանքներ նույնպիսի հարցադրումներով («Հայկական» I, II, III մասերով, «Սեմական փոխառյալ բառեր հին հայերենի մեջ», «Հայկական հատուկ անուանք» վեներտիկյան թարգմանություն, «Տառագարձություն»), ինչպես նաև Մխիթարյան հայրերի թարգմանություն, նախկինում լույս տեսած մանր գրախոսական-հոգվածները («Տառագարձություն», «Մայր ցուցակ հայերեն ձևագրաց հրատարակյալ ի Մխիթարյան միաբանություն», «Նամակ նոր գրական հայերենի արտասանության առթիվ», «Նամակ «Հանդես ամսօրյային» վարդապետ բառի ստուգաբանության առթիվ»): Թարգմանաբար լույս տեսնող այս գրքի պարունակած նյութերի հիման վրա մեր օրերի մասնագետ ուսումնասիրողը բավարար պատկերացում է ունենում Հյուրշմանի տեսության վերաբերյալ:

Կարելի է ասել, մեզանում ամենևին չի դադարել գիտական հետաքրքրությունը Հյուրշմանի հայերենագիտական ժառանգության ուսումնասիրության շուրջ, որովհետև ըստ այդմ հայտնի են դառնում նոր իրողություններ, հանգամանքներ, որոնցով ավելի է ամբողջանում անվանի լեզվաբանի՝ հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում մեծանուն մշակի հայացքների և մոտեցումների առումով: Եղել են առանձին հոգվածներ Հյուրշմանի տեսությունը վերաբերող այս կամ այն հարցի առնչությամբ, գրվել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված նրա հնդեվրոպաբանական ժառանգությանը՝ հայերենի հայեցակերպից<sup>10</sup>:

Նշենք նաև անվանի լեզվաբան Ռ. Շմիտի «Ներածություն»-ը, որ դրված է Հյուրշմանի երկերի հայերեն թարգմանված վերը նշված գրքի սկզբում (էջ 3–9): Շմիտը սեղմ շարադրանքով, ընդգրկման որոշակի խորքով գնահատում է Հյուրշմանի արածը, ընդգծում, որ այն արդիական է և կարևոր հայերենի, առհասարակ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրման մեջ:

Ի դեպ, այս թարգմանությունը թեև կատարված է բնագրից՝ գերմաներենի հմուտ մասնագետ-թարգմանչի կողմից, սակայն համեմատական լեզվաբանությանը, առհասարակ հնդեվրոպաբանությանը վերաբերող տերմինների և տերմինային անվանումների, նույնիսկ հեղինակի որոշ աշխատությունների վերնագրերի հարցում միշտ չէ որ կա հստակություն, եթե չասենք՝ ճշգրտություն: Մեր այս առար-

<sup>10</sup> Յ ու . Գ ա բ ր ի ե լ յ ա ն . Հյուրշմանը և հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի դիրքի խնդիրը, Երևան, 1987 (ձեռագիր):

կուլթյունը հավասարապես վերաբերում է մյուս աշխատույթյան թարգմանությունը՝ կատարված բնագրից<sup>11</sup>:

Այս ամենով հանդերձ կարևոր է, որ Հ. Հյուբշմանի հայերենագիտական ժառանգության մեծագույն մասը դրված է գերմաներենի հարցում դժվարություն ունեցող հայ մասնագետի սեղանին, այսինքն՝ այս ոլորտում գիտական նոր ձեռնարկումների համար կա մատչելիություն:

Է. Հյուբշմանը և Մխիթարյանները. տեսական հիմքեր:

XIX դ. եվրոպացի հայագետները եղել են ակնարկային վերլուծաբաններ, համեմատաբար ուշագրավ է Ա. Շրոմպֆի ուսումնասիրությունը<sup>12</sup>:

Հյուբշմանը, ինչպես գերմանացի շատ հայագետներ, հայերեն սովորել կամ նրանում հմտացել են Վենետիկի, այլև Վիեննայի Մխիթարյան դպրոցի միջավայրում: Ուստի գտնում ենք, որ մեծ է Մխիթարյանների գիտական, կրթական և մշակութային ներդրումը հայերենի ուսումնասիրման, վերականոնավորման և տարածման գործում: Այդ թեմայի մաս է այն, որ նրանք ունեցան իրենց դերը նաև հայերենի հնդեվրոպական ցեղակցության ոլորտում ուսումնասիրության սկզբնավորման գործում: Այս ենթաթեման հայոց լեզվի բնույթի, ծագումնային (պատմահամեմատական) քննության առումով կարևոր է և տարողունակ, որ մինչև օրս մնում է չուսումնասիրված:

Այդ հայագետներից են, օրինակ, Հայնրիխ Հուլիոս Պետերմանը (12. 08. 1801–1876), Ֆրիդրիխ Վինդիշմանը (1811–1861), որի աշխատությունը ոչ պակաս նշանակություն է ունեցել հայերենի բնույթի բացահայտման առումով<sup>13</sup>, այնուհետև՝ Գերման Օստհոֆը (1847–1909), Ֆրիդրիխ Մյուլլերը (1834–1898) և ուրիշներ<sup>14</sup>: Վերջինս, լինելով Հ. Հյուբշմանի ուսուցիչը, չի ընդունում նրա տեսությունը հայերենի բնույթի վերաբերյալ, գրում է հատուկ աշխատանք իր տեսությունը փաստարկելու համար<sup>15</sup>:

<sup>11</sup> Հ. Հյուբշման. Հայերենի քերականություն. Առաջին մաս. Հայերենի ստուգաբանություն, թարգմ. Հ. Ա. Ղուկասյանի, Երևան, 2003:

<sup>12</sup> Ա. Շրոմպֆ. Ուսումնասիրություններ հայ լեզուի եւ մատենագրության յԱրևմուտս (թարգմ. Գ. Զարբհանյանի, լրացումներով), Վենետիկ, 1895:

<sup>13</sup> S t e ' u F. W i n d i s c h m a n n. Die Grundlage des Armenischen im arischen Sprachschamme.– “Abhandlungen der I Klasse der Bairischen Akademie der Wissenschaften”, IV, B. Abth. II. 1846:

<sup>14</sup> Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան. Հայերենագիտության Մխիթարյան դպրոցը և հայերենի համեմատական ուսումնասիրության սկզբնավորումը.– «Լեզու և լեզվաբանություն», 2017, №1, էջ 3–13:

<sup>15</sup> F. Müller. Über die Stellung des Armenischen im Kreise der Indogermanischen Sprachen.– “Gerold”, 1877.

Հ. Հյուրշմանը ոչ միայն երիտասարդ տարիներին է լինում Մխիթարյանների միջավայրում, այլև երբ արդեն համեմատական լեզվաբանություն բնագավառում ճանաչված հեղինակություն էր, ժամանակ է գտնում լինելու վենետիկյան միաբանությունում: Այս մասին է. Մկրտչյանը գրում է. «1903 թ. նա այցելում է Ս. Ղազար կղզին, և Մխիթարյան միաբանությունն ի տրիտուր հայագիտության մեջ նրա գիտական բեղուն գործունեության Հյուրշմանին ընտրում է Հայկական ճեմարանի պատվավոր անդամ: Այդ կոչումը Հյուրշմանը կրում է մեծ հպարտությամբ»<sup>16</sup>:

Ուստի կարելի է անվարան ասել, որ Մխիթարյանները հնդեվրոպական լեզուների բնագավառում հայերենի համեմատական-ստուգաբանական ուսումնասիրության մեջ ունեն սկզբնավորողի, ավելի ճիշտ կլինի ասել՝ հիմք հանդիսացողի դեր՝ ըստ ամենայնի նպաստելով եվրոպացի համեմատաբանների տեսական աշխատանքների ստեղծմանը:

Ը. Ք. Պատկանյանի և Հ. Հյուրշմանի գիտական համագործակցության եզրերը:

Պատկանյանը գրել է հայերենի և հայ բարբառների վերաբերյալ տեսական աշխատություններ, նաև քննել առանձին բարբառներ, օրինակ՝ «Исследование о составе армянского языка («Ուսումնասիրություն հայերենի կազմության մասին») (СПб., 1864), «Исследование о диалектах армянского языка. Филологический опыт» («Ուսումնասիրություն հայ բարբառների մասին: Բանասիրական փորձ») (СПб., 1869), այլև՝ «Материалы для изучения армянских диалектов. Вып. I. Говор Нахичеванский» («Նյութեր հայ բարբառների ուսումնասիրման համար, պր. I, Նախիջևանի խոսվածքը») (СПб., 1875), «Материалы для изучения армянских наречий. Вып. II. Мушский диалект» («Նյութեր հայ խոսվածքների ուսումնասիրման համար, պր. II, Մուշի բարբառը») (СПб., 1875) և այլն:

Ք. Պատկանյանի՝ հայ բարբառների վերաբերյալ հիմնական աշխատությունը ժամանակին թարգմանվել էր Ֆրանսերեն, ուստի կարելի է մտածել, որ եվրոպացի հայերենագետները, այդ թվում՝ Հ. Հյուրշմանը, հազիվ թե տեղյակ չլինեին նրա այնքան կարևոր, բարբառների գիտական հիմքերը դնող, գիտություն այդ ճյուղը սկզբնավորող աշխատանքներին:

Պատկանյանը հին գրական հայերենի վերաբերյալ ուներ յուրահատուկ մոտեցում. գրաբարը համարում է առանձին, քան ժամանակի խոսակցական լեզուն, ուստի շատ կարևոր է համարում հայ բարբառների, իբրև գրական կամ գրավոր լեզվի հիմքի, ուսումնասիր-

<sup>16</sup> է. Մկրտչյան. Ներածություն, էջ 38:



րությունը, ինքն էլ օրինակ է տալիս ձևաբանական ոչ թե մեկ, այլ շուրջ մեկ տասնյակ հատկանիշով դրանք բնութագրելու:

Եվրոպացի հայագետներն այդ ամենը լիովին գիտեին, մանավանդ Հյուբերմանը, որ նամակագրական-խորհրդատվական կապի մեջ է եղել Պատկանյանի հետ: Եվ մի<sup>17</sup> թե դա չէ այն հիմքը, որ Հյուբերմանը Փարիզում կայացած գիտաժողովին (1897 թ.) մասնակցելիս երիտասարդ Աճառյանին խորհուրդ է տվել զբաղվելու հայերենի բարբառներով:

Թ. Հյուբերմանի հայագրի աշակերտները. հայերենի ուսումնասիրության հետագա ընթացքը:

Հ. Հյուբերմանի աշակերտներից հիշենք Հ. Աճառյանի, Կ. Բասմաճյանի, Յո. Կարստի անունները. վերջին երկուսը ևս զգալի դեր ունեն հայ բանասիրության, մանավանդ միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում: Հ. Աճառյանը հայոց լեզվի համեմատական ուսումնասիրությանը նվիրած իր աշխատանքներում («Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատորյակը, «Արմատական բառարանը» և այլն) անվերապահորեն դավանեց Հյուբերմանի տեսությանը: Ավելին, Հ. Աճառյանին աշակերտեցին հատկապես Ա. Ղարիբյանը, Էդ. Աղայանը և Գ. Զահուկյանը, որոնք հսկայական ներդրում ունեն արդի հայերենագիտության բնագավառում:

Հյուբերմանը հայերենի տվյալներին տիրապետում էր հին գրավոր լեզվի (գրաբարի), այլև միջին հայերենի մակարդակով, թերևս, տեղյակ էր նաև հայերենի նոր բարբառներին. հիշենք, որ նա չէր ընդունում հին հայերենի մեջ բարբառների գոյությունը հնարավորությունը: Օրինակ՝ Ս. Սյունեցու կողմից առանձնացվածները, ըստ նրա՝ «ոչ թե հայերենի բարբառներ, այլ ուրիշ ցեղային լեզուներ են եղել»<sup>17</sup>: Այս տեսակետին էր նաև Ա. Մեյեն, ուստի նրանց աշակերտ Հ. Աճառյանը ևս պիտի նույն վերաբերմունքն ունենար հայերենի բարբառների ու դրանցից առանցքային բարբառների հիման վրա բարձրացած գրական լեզուների փոխհարաբերության հարցում, մի վերաբերմունք, որ մասնակիորեն ընդունեցին Աճառյանի աշակերտները՝ հայ բարբառների այդ կնճռոտ հարցում տեղիք տալով գիտական լայն բանավեճի:

Հյուբերմանի տեսությունը այսօր էլ պահում է իր կենսունակությունը, որովհետև իրական է: 1970-ական թվականներից սկսած հայերենի համեմատական ուսումնասիրությունը թևակոխում է նոր փուլ, գրվում են աշխատություններ, մասնավորապես եվրոպացի և նախկին խորհրդային լեզվաբանների կողմից, որոնցում Հյուբերմանի տեսական դրույթները, այլև մեթոդիկական իրենց հիմնական գծերով շարունակում են հիմք հանդիսանալ հայերենի տվյալների հարցում:

<sup>17</sup> Հմմտ. է. Աղայան. նշվ. աշխ., էջ 239:

Նրա գիտական ժառանգությունը թարգմանվում է ավելի լայն ընդգրկմամբ, գրվում են աշխատանքների նրա տեսություն վերաբերող հարցերի շուրջ: Այսպես, նրա մասին հոդվածներ են գրվել «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա» և այլ պարբերականներում, ինչպես նաև Երևանում լույս տեսնող գիտական ամսագրերի էջերում: Նրա կարևորագույն հոդվածները, բացառությամբ մի քանիսի, լույս են տեսել հայերեն, ընդ որում ոչ միայն «Հանդես ամսօրյայի» (1893, 1894, 1896, 1901, 1904–1907 թթ.) և «Բազմավեպի» (1901–1902 թթ.) էջերում, այլև առանձին գրքերով լույս տեսած Վիեննայի «Ազգային մատենադարան» (հ. ԺԵ, հմ. 53) շարքի մեջ:

Շուրջ երեք տասնամյակ առաջ, ինչպես վերը նշեցինք, հայերեն թարգմանվեց Հ. Հյուրբնանի «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին» հիմնարար աշխատությունը (1985 թ.) [“Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen”], իսկ վերջին ժամանակներս Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ լույս ընծայվեցին, ի թիվ հիշյալի, հայերենագիտական մյուս աշխատանքները. առաջինը «Հայերենի քերականություն» ծավալուն աշխատությունն է (Երևան, 2003) [“Armenische Grammatik”], իսկ երկրորդում երկու տասնյակ հոդվածները և գրախոսությունները՝ «Հայագիտական ուսումնասիրություններ» (Երևան, 2004 թ.) վերնագրով:

Մեծանուն լեզվաբանը ժամանակին սահմանել էր հայերենի և իրանական լեզուների առանձնացման վերաբերյալ մի շարք հնչյունական օրենքներ, վերջիններս հիմնավորել ապացուցողական մեծ արժեք ունեցող փաստերով (օրինակներով), որոնք հիմք հանդիսացան ոչ միայն իրանական ու հայկական լեզվաճյուղերը միմյանցից սահմանազատելու և առանձին բնութագրելու, այլև հայերենի ու նրան առավել մերձակա լեզուների (հունարեն, բալթյան-սլավոնական, նաև իրանական) միջև ավելի մանրամասն համեմատություններ անցկացնելու համար:

Այդ օրենքների գործադրմամբ նա ժամանակին ստուգաբանել էր հայերեն շուրջ 2200 բառ կամ բառարմատ (1971 հասարակ և 217 հատուկ անուն), բնականաբար, նկատի ունենալով իր նախորդների, հատկապես Պ. դը Լաբարդի և Ռ. Գոշեի կատարածը:

Ինչպես գիտենք, մի կողմից՝ Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» հետո, Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության տվյալներով, հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման բառերի կամ արմատների թիվը, օրինակ, ավելացել է շուրջ 800-ով, իսկ մյուս կողմից՝ ճշգրտվել կամ նոր ստուգաբանություն պարզություն է մտցվել հայերենի փոխառությունների հարցում: Հետագայում կատարված այդ ստուգաբանությունները կամ ճշգրտումները, կարելի է ասել, գրեթե լիովին հիմնված են նաև Հյուրբնանի սահմանած հնչյունական օրենքների, արմատի կազմության սկզբունքների վրա:

Այնուհետև, Հյուբշմանը տվել է նաև հայերենի տարածքային բնութագրերը: Ըստ այդմ՝ ցեղակից լեզուներից հայերենի հետ ավելի սերտ առնչություն ունեն մի կողմից՝ հունարենը, մյուս կողմից՝ բալթյան և սլավոնական լեզուները: Այս բնորոշումը հետագայում ավելի է հաստատվում, հատկապես Վ. Պորցիգի, Գ. Ռ. Զոլտայի, Գ. Զահուկյանի, Է. Մակաևի և ուրիշների աշխատություններում:

Ժ. Հ. Հյուբշման և Հ. Աճառյան. վերջինիս «Հայերեն արմատական բառարանը»:

Հ. Աճառյանը իրեն համարում էր ոչ միայն Ա. Մեյերի, այլև Հ. Հյուբշմանի աշակերտը:

Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», կարելի է ասել, գրված է Հյուբշմանի գիտական մտածողության (կոնցեպցիայի) ամբողջացման ու լիակատարի հասցնելու նպատակով: Թվում է այն, ինչ չհասցրեց անել Հյուբշմանը, նրանից մի քանի տասնամյակ անց իրականացրեց Աճառյանը, մանավանդ հայերենի բառապաշարի ստուգաբանական ամբողջացման առումով:

Այսպես, բավական է ասել, որ Աճառյանի Արմատական բառարանի շատ բառահոգվածներ ներկայացվում են ոչ միայն ըստ Հյուբշմանի ստուգաբանման, այլև այն դեպքերում, երբ ուրիշների կողմից կատարվածի մեջ կարելի է հանդիպել ավելի հավանական, առավել համոզիչ ստուգաբանությունների, Աճառյանը դա չի ընդունում, որովհետև դրանց նկատմամբ, ինչպես երբեմն ինքն է նշում, թերահավատ է եղել իր մեծ ուսուցիչը՝ Հյուբշմանը: Դա, իրոք, այդպես է, որն ինչ-որ չափով թուլացնում է այդ բառարանի գիտական ուժը:

Այսպիսով, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության առումով Հ. Հյուբշմանի ներդրումը շարունակում է մնալ ամուր հիմք հայագիտության հետագա զարգացման մեջ:

Г. ГЮБШМАН И ВОПРОС ОБ АРМЯНСКОМ КАК О ЯЗЫКЕ  
ОТДЕЛЬНОЙ ГРУППЫ ИНДОЕВРОПЕЙСКИХ ЯЗЫКОВ  
(К 170-летию со дня рождения и 110-летию со дня смерти)

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Резюме

Известный немецкий арменист Генрих Гюбшман (1848—1908) внес большой вклад в выяснение характера и особенностей армянского в сравнительном исследовании индоевропейских языков. В статье рассматриваются вопросы, имеющие ключевое значение для оценки научной заслуги Г. Гюбшмана в истории армянского языка, а также в области индоевропеистики в целом: а)

предпосылки появления интереса к армянскому языку; б) характер и области научных трудов, в) выделение армянского от иранских языков и становление его как языка отдельной группы среди индоевропейских языков: реальные аргументации; г) появление в свет его научных трудов по арменистике; д) переводы на армянский язык трудов автора; е) критический анализ общенаучного наследия; ж) Гюбшман и мхитаристы: теоретические основы; з) стыки научного сотрудничества К. Паткяняна и Г. Гюбшмана; и) ученики-армяне Гюбшмана: ход дальнейшего исследования армянского языка; й) Г. Гюбшман и Р. Ачарян: «Коренной словарь армянского языка» Р. Ачаряна.

С точки зрения сравнительно-исторического изучения армянского языка вклад Г. Гюбшмана продолжает оставаться прочной основой для дальнейшего развития арменоведения.

## H. HÜBSCHMANN AND THE ISSUE OF THE ARMENIAN AS A LANGUAGE OF SEPARATE GROUP AMONG THE INDO-EUROPEAN LANGUAGES

(To the 170th birth and the 110th death anniversaries)

VAZGEN HAMBARDZUMYAN

### Summary

In the article by comprehensive analysis but in a breath summary is presented the introduction of the known German armenologist H. Hübschmann in clarification of character and features of Armenian in a comparative research of Indo-European languages. The following questions having key value for assessment of a scientific value are generally considered: a) prerequisites (occasions) of emergence of interest in Armenian; b) character and areas of scientific works, c) singling out the Armenian language from the Iranian languages and establishing it as the language of a separate group among the Indo-European languages: real arguments; d) the appearance of his scientific works on Armenology; e) translations into the Armenian language of the author's works; e) critical analysis of the general scientific heritage; g) Hübschmann and the Mkhitarists: theoretical foundations; h) joints of the scientific cooperation of K. Patkanyan and H. Hübschmann; i) Armenian students of Hübschmann: the course of further research of the Armenian language; H. Hübschmann and H. Acharyan: "The Root Dictionary of the Armenian Language" by H. Acharyan.

From the perspective of the comparative-historical research of the Armenian language H. Hübschmann's input continues to be a sustainable basis for further development of Armenology.

---

---

ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ  
«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԷՋԵՐՈՒԲ  
(1958–1960 թթ.)

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Արդեն վեց տասնամյակ հայ բարբառագիտության տարաբնույթ խնդիրներ են արտացոլվում «Պատմաբանասիրական հանդեսի» էջերում՝ հաճախ առիթ դառնալով գիտական բանավեճերի ու քննարկումների և այդպիսով ենթարկվելով համակողմանի ու հանգամանալից վերլուծության: Հանդեսում հրապարակված աշխատանքներում լեզվաբանների ուշադրության առարկա են դարձել հայ բարբառների ծագմանն ու զարգացմանը, գրական լեզվի և բարբառների առնչություններին, բարբառների դասակարգմանը, բարբառագիտության պատմությունը վերաբերող ընդհանուր-տեսական բնույթի հարցեր, ներկայացվել են բարբառային առանձին միավորների, հատկանիշների հետազոտության արդյունքներ, կատարվել են բարբառային բառերի մեկնություններ, բառանվանումների գործառական քննություն, այլ կարգի դիտարկումներ:

Հանդեսի առաջին իսկ համարում տպագրվել է Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտության հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում» հոդվածը<sup>1</sup>, որտեղ հեղինակն անդրադառնում է նաև հայ բարբառների առաջացման խնդրին՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ մեր բարբառներն առաջացել են ոչ թե առանձին-առանձին, այլ «ասոցիացիաներով»<sup>2</sup>: Ընդ որում՝ յուրաքանչյուր ճյուղ ներկայացնում է բարբառների մի «ասոցիացիա» և պատմականորեն ունի որոշ տեղադրություն<sup>3</sup>: Հիմք ընդունելով այս ըմբռնումը՝ Ա. Ղարիբյանը դիտարկում է հայ բարբառների և հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգերի առնչություններն ու կատարում եզրակացություններ բարբառների առաջացման վերաբերյալ: Մասնավորապես, նա նշում է, որ Փոքր Հայքի բարբառների բաղաձայնական համակարգի մեծ հարազատությունը հնդեվրոպական նախալեզվի համակարգին վկայում է, որ հայ բարբառների բաղաձայնական համակարգի այդ տարբերակն ամենահինն է. այստեղից են սկսվում հայոց լեզվի բոլոր բարբառների, ինչպես և հին հայերենի բաղաձայնական համակարգի տարբերակների գոյացումները. միաժամանակ դա վկայում է, որ հայոց լեզուն Հայաստանի մեջ

---

<sup>1</sup> Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտության հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում. — ՊԲՀ, 1958, №1, էջ 18–38:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>3</sup> Նույն տեղում:

ու Հայաստանի հարևան շրջաններում տարածվել է Փոքր Հայքից, ուրեմն և հայերենի հնագույն հայրենիքը, հնդեվրոպական նախալեզվից անջատվելուց հետո, եղել է Փոքր Հայքը<sup>4</sup>: Նշվում է նաև, որ գրաբար լեզվի հնչյունական համակարգը համեմատաբար ուշ գոյացում է<sup>5</sup>:

Հոդվածում բարձրացված հարցերն առիթ են դառնում, որ 1958–1960 թթ. ընթացքում հանդեսի համարներում քննարկման առարկա դառնա հայ բարբառների ծագման խնդիրը: Լեզվաբաններն արծարծում էին իրար շաղկապված երկու հարց. ա) V դարում և դրանից առաջ հայերենը բարբառներ ունե՞ր, թե ոչ, բ) արդի բարբառները հին բարբառային վիճակների շարունակությունն են, թե՞ առաջացել են գրաբարի քայքայման հետևանքով<sup>6</sup>:

Թվում էր՝ XIX դարի երկրորդ կեսին արդեն այս հարցերն իրենց պատասխանները ստացել էին Ա. Այտընյանի և Ք. Պատկանյանի դիտարկումներով: Այսպես, Ա. Այտընյանը համոզված էր, որ «Հայաստանի պէս ընդարձակ երկրի մը բազմաթիւ գաւառներուն մէջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածուիլն այնչափ բնական էր, որ եթէ գրաւոր վկայութիւններն ալ լռէին՝ լոկ մակաբերութիւնը դեռ կ'արժէր»<sup>7</sup>: Միանգամայն տրամաբանական ու ճշմարտացի են լեզվական բազմազանություն վերաբերյալ հայագետի նաև հետևյալ դատողությունները. «Իսկ թէ միեւնոյն երկրին, միեւնոյն գաւառին մէջ ալ միեւնոյն ժամանակը կար գրաւոր լեզուէն զանազանեալ խոնարհագոյն – Ընտանեկան կամ Ռամկական – հայերէն բարբառ մ'ալ, այնչափ ստոյգ է՝ որչափ ստոյգ է որ Հայաստան իւր արքունեացն ու պերճ ազատորերոյն դիմաց՝ միջին եւ ստորին կարգի մարդիկն ալ ունէր այլեւայլ դրից եւ կրթութեան աստիճանաւ, որոնց կենցաղական յարաբերութիւնները թագաւորական դիւանին յարաբերութիւններէն շատ տարբեր եւ բոլորովին ու-

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 38:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 35:

<sup>6</sup> Մինչ այդ՝ հարցի էությունն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության 2-րդ մասում ներկայացրել էր Հր. Աճառյանը՝ գրելով. «Ոմանք կարծում են, թե հայ բարբառները ժամանակակից և կամ նույնիսկ ավելի հին են գրաբարից, հետևաբար և նրանից անկախ են: Ուրիշները կարծում են, թե հայ բարբառները գրաբարի շարունակությունն են և հետևաբար նրանից ավելի ուշ են ձևացած: Երկու կարծիքները ձևակերպելով մի ուրիշ ձևով, կարելի է ասել, որ ըստ առաջինների Ե դարում կային մի խումբ հայերեն բարբառներ, որոնք ապրում էին իրար հետ կողք կողքի և որոնցից մե՛կը միայն բարձրացավ գրականության և կոչվեց գրաբար. մյուս բարբառները թեև նրան ժամանակակից, բայց մնացին միայն ժողովուրդի մեջ՝ իբրև խոսակցական լեզու և նրանց շարունակությունն են կազմում արդի բարբառները: Երկրորդ կարծիքին հետևողները Ե դարում առանձին բարբառների գոյությունը չեն ընդունում և հետևաբար նոր բարբառները հին բարբառների շարունակությունը չեն համարում» (Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 362):

<sup>7</sup> Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 42–43:

րիչ աստիճանի պէտք էին ըլլալ: Ո՞վ կրնայ հաստատել՝ թէ ճոխ նախարարաց սէգ ամրոցներուն մէջ նոյն ոճն ու նոյն լեզուն կը հնչէր՝ ինչ որ հանդարտիկ խաղաղասէր ընտանեաց խոնարհ երգերուն տակ»<sup>8</sup>: Բնականաբար, բարբառային զանազանութիւնները գրավոր խոսքում ցայտուն արտահայտութիւն չէին կարող ունենալ<sup>9</sup>: Այնուամենայնիվ, իր քերականութեան մեջ Այտընյանը բերում է նախնայաց գրվածքներից քաղված՝ գրաբարի բառաքերականական իրողութիւններից շեղումների օրինակներ<sup>10</sup>, նախապես ծանուցելով, որ «Եղած դիտողութիւններն ու բերուած օրինակները գլխաւորաբար երկու բան կը հաստատեն. մէյ մը՝ հին մատենագրական հայերէնին ժամանակակից ընտանեկան կամ ռամկական հայերէնի մը գոյութիւնը. եւ մէյ մ'ալ՝ որ հիմայ աշխարհաբարի յատուկ մնացած կամ գուտ աշխարհաբար երեւցած բացատրութիւններ արդէն շատ հնուց կենդանի էին՝ մանաւանդ նոյն հասարակ լեզուին մէջ»<sup>11</sup>: Միաժամանակ, նոր լեզուն ու բարբառները իրենց մեջ կրում են հնին բնորոշ բազում իրողութիւններ. «Ռամիկը շատ անգամ այնպիսի ծածուկ հնութեանց աւանդապահ է՝ որոնք գրագէտ մը միայն իւր խուզողութեամբ կրնայ գրքերուն մէջէն հանել: Այսպէս շատ յաճախ է տեսնել չէ թէ միայն այնպիսի բառեր՝ որոնց գոյութիւնը հին գրքերէն ճանչցող բանասէր մը յանկարծ զարմանքով գիւղացւոյ բերնէն կը լսէ, եւ կամ գիւղացւոյն ու ռամկին սովորականը հին գրոց մէջ տեղ մը կը գտնէ»<sup>12</sup>:

Համանման տեսակետներ հայտնել ու փաստարկներ է բերել նաև XIX դ. նշանավոր մյուս հայագետը՝ Ք. Պատկանյանը: Ելնելով այն իրողութիւնից, որ ցեղային կապերը նախորդում են ազգային գիտակցված միասնութեանը, և որ բարբառները որևէ լեզվի տարատեսակներ են՝ նա փաստում է, որ «Ինչպես չկա ազգ՝ առանց ցեղերի, այդպես էլ չի կարելի պատկերացնել լեզու՝ առանց բարբառների»<sup>13</sup>: Ըստ լեզվաբանի՝ բոլորին հայտնի ճշմարտութիւն է, որ չկա մի ժողովուրդ, որն իր բնակութեան ողջ տարածքում կարող է խոսել մեկ լեզվատարբերակով<sup>14</sup>: Անդրադառնալով ժամանակակից հայ բարբառներին՝ Պատկանյանը համարում է, որ դրանք նախապատմական ժամանակներում գոյութիւն ունեցած բարբառների ժառանգներն են<sup>15</sup>, և ընդգծում է՝ քննադատութեան չի դիմանում այն տեսակետը, թե իբր արդի զանազան հայ բարբառները ողջ հայ ազգի համար

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 47–48:

<sup>9</sup> Մեկնաբանութիւնը տե՛ս նույն տեղում, էջ 48–49:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 63–120:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>13</sup> К. Патканов. Исследование о диалектах армянского языка. СПб., 1869, с. 2.

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 3–4: Նկատենք նաև, որ Պատկանյանի կարծիքով՝ արդի հայ բարբառները համարյա նույն տեսքով գոյութիւն ունենի դեռևս V դարից առաջ (նույն տեղում, էջ 10):

ընդհանուր հին լեզվի ձևափոխություններ են<sup>16</sup>: Պատկանյանի համար ևս հայերենի բարբառների վերաբերյալ մատենագիրների վկայությունները և ոսկեդարյան շրջանի հեղինակների՝ գրական լեզվի անաղարտությունը պահպանելու մղումին հակառակ՝ գրական լեզուներթափանցած անկանոն ձևերը հիմքեր են՝ հաստատելու, որ ամենահին ժամանակներից սկսած՝ ժողովուրդը խոսում էր գրաբարից տարբեր բարբառով<sup>17</sup>:

Հայ բարբառների ծագման հարցի և վերը բերված խնդիրների մասին այլ էր Հր. Աճառյանի տեսակետը: Մեծանուն հայագետի կարծիքով «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում»<sup>18</sup>: Այս դրույթին համահունչ են նրա՝ V դարում հայ բարբառների գոյությունը հավաստող դիտարկումները. «Մեսրոպյան հայերենը մեր լեզվի կյանքի մեջ առաջին երևույթի այն առաջին պատկերն է, որ ավանդել է մեզ պատմությունը. նրանից առաջ եղած պատկերները, թեև գիտենք որ կան, բայց մեզ անծանոթ են: Բայց միևնույն ժամանակ, նույն այդ մեսրոպյան շրջանին, պետք է ընդունենք, թե կար նաև երկրորդ երևույթը, այն է զանազան բարբառներ հայերենի մեջ, որոնցից մեկը միայն բարձրագույն գրականության, այն է մեսրոպյան գրավոր հայերենը»<sup>19</sup>: Քննելով գրաբարյան շրջանում բարբառների գոյությունը փաստող վկայություններն<sup>20</sup> ու լեզվական մի շարք փաստեր<sup>21</sup> լեզվաբանը եզրակացնում է, որ V դարում հիշատակված են վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց կարելի է հավելել նաև, այսպես կոչված, արևելյան ու արևմտյան բարբառներ, սակայն դրանք չունենին իրարից անջրպետող խոշոր տարբերություններ, այնպես որ այդ բարբառները կարելի է կոչել ոչ թե իրապես բարբառ, այլ ենթաբարբառ<sup>22</sup>: Համեմատելով արդի մի շարք բարբառների որոշ իրողություններ գրաբարի հետ<sup>23</sup> Աճառյանը եզրակացնում է. «գրաբարը ավելի հին է և բարբառները ծագած են նրանից շատ ավելի ուշ»<sup>24</sup>, «Ե դարում կամ նրանից առաջ էլ Հայաստանում խոս-

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 6:

<sup>18</sup> Հր. Աճառյան. նշվ. աշխ., էջ 324:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 114–115:

<sup>20</sup> Մասնավորապես, V դարում հայերեն բարբառների գոյության համար պատմական գորեղ փաստ է համարում Եգնիկի մի վկայությունը, որով այս բառի տարբեր տարածքներում զանազան իմաստներով գործածվելը վկայում է Հայաստանի տարբեր հատվածներում լեզվական տարբերությունների առկայությունը (տե՛ս նույն տեղում, էջ 115): Մյուս կողմից նշում է, որ «քերականների վկայությունները վերաբերում են ոչ թե հայերեն բարբառներին, այլ Հայաստանի մեջ բնակվող օտար մանր ազգերի լեզուներին» (նույն տեղում, էջ 363):

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 115–134:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 364–380:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 380:



վում էր մի՛ հայերեն, որի ներկայացուցիչն է գրաբարը: Բարբառների այնպիսի սուր տարբերություններ, ինչպես նկատում ենք այժմ մեր մեջ, չկային, եղածները մանր բաներ էին»<sup>25</sup>: Ի վերջո, Աճառյանը բարբառների ծագման շրջան համարում է XII դարը, բայց նկատում է նաև, որ «Կան բարբառներ, կամ ավելի ճիշտ՝ բարբառային երևույթներ, որոնք էլ ավելի ուշ են առաջացած»<sup>26</sup>: Այնուհետև դիտարկելով գրաբարի ու բարբառների բայական համակարգերում առկա զանազանությունները՝ լեզվաբանը հանգում է այն մտքին, որ «հայերեն բարբառների խոնարհման նոր ձևը (նկատի ունի ներկայի ձևավորումը կու մասնիկով – Վ. Կ.) ԺԲ դարում դեռ ընդհանուր է ամեն տեղ և կը և ում ձևերի երկճյուղությունը սկսում է հայերեն նոր բարբառների բաժանումը ԺԲ դարից հետո: Մինչև այդ ժամանակը տիրում է հայերենի մեջ համատարած միություն ինչպես քայքայման պատճառների, նույնպես և քայքայման ընթացքի և արդյունքի մեջ»<sup>27</sup>:

Ընդհանուր առմամբ Հր. Աճառյանի տեսությունն պաշտպանությունն ու նորովի մեկնաբանությունը, ինչպես նաև Ա. Ղարիբյանի հարցի վերաբերյալ ունեցած այլ պատկերացումների քննադատությունն է նվիրված է. Աղայանի «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին» հոդվածը<sup>28</sup>, որով և սկսվում են բարբառների ծագման խնդրի քննարկումները «Պատմա-բանասիրական հանդեսում»<sup>29</sup>: Անդրադառնալով հարցի շուրջ եղած կարծիքներին՝ է. Աղայանը նշում է, որ Հր. Աճառյանը փաստական տվյալներով է ներկայացնում իր տեսակետը<sup>30</sup>: Հայերեն բարբառների ծագման վերաբերյալ Ք. Պատկանյանի պատկերացումները շաղկապելով Ն. Մառի տեսակետին՝ է. Աղայանը գրում է՝ այս «տեսակետի կողմնակիցները ելնում են այն դրույթից, որ իբր ժամանակակից բարբառները շարունակությունն են այն նախկին ցեղերի լեզուների, որոնք ձուլվել են հայերին»<sup>31</sup>, և ապա շարունակում է՝ դրույթը հիմնված է լեզուների խաչավորման հակապատմական տեսության վրա և մերժելի է<sup>32</sup>: Ա. Ղարիբյանի տեսակետի առնչությունը է. Աղայանը նկատում է, որ նա միանգամայն իրավացի է, երբ գտնում է՝ մեր բարբառների

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 383:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 381:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 433:

<sup>28</sup> է. Բ. Աղայան. Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին. – ՊԲՀ, 1958, № 2, էջ 211–233:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, Ա. Ղարիբյան. Հայ բարբառների ծագման հարցի շուրջը. – ՊԲՀ, 1958, № 3, էջ 240–266, Գ. Սևակ. Հայ բարբառների ծագման հարցի շուրջը. – ՊԲՀ, 1959, № 1, էջ 224–245, Գ. Զահուկյան. Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը. – ՊԲՀ, 1959, № 2–3, էջ 282–319, Ս. Ղազարյան. Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը. – ՊԲՀ, 1960, № 3, էջ 172–192:

<sup>30</sup> Տե՛ս է. Բ. Աղայան. նշվ. հոդվ., էջ 211–212:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>32</sup> Նույն տեղում:

մի մասի պայթական բաղաձայնների համակարգը գրեթե նույնանում է հնդեվրոպական բաղաձայնների համակարգի հետ, իսկ մյուս մասինը, ինչպես և գրաբարինը, խիստ տարբերվում է նրանից<sup>33</sup>: Հիշատակելով նաև Ա. Ղարիբյանի կատարած դիտարկումները բարբառների ու գրաբարի քերականական համակարգերի վերաբերյալ՝ է. Աղայանն ամբողջացնում է լեզվաբանի առաջ քաշած՝ հայ բարբառների պատմության հետևյալ ընդհանուր պատկերը. «ընդհանուր հայերեն (նախագրաբարյան վիճակով), հայերեն հիմնական բարբառներ (Եփրատի հյուսիս. փերի, Փոքր Հայքի և Կենտրոնական Հայաստանի), գրաբար և, վերջապես, գրաբարից առաջացած բարբառներ»<sup>34</sup>: Այնուհետև դիտարկելով հայերեն որոշ բարբառների պայթական բաղաձայնների և հնդեվրոպական բաղաձայնների համակարգերի նույնականության վերաբերյալ Ա. Ղարիբյանի հայտնած տեսակետը՝ է. Աղայանը հանգում է այն եզրակացության, որ «այն բարբառները, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ և որոնց բաղաձայնական համակարգը գրեթե նույնն է հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգի հետ, ոչ թե շարունակում են հնդեվրոպական վիճակը, այլ այդ վիճակի փոփոխված համակարգից՝ հին հայերենի համակարգից հետո կատարված նոր փոփոխություններով վերստին հանգել են հնդեվրոպական բաղաձայնական սխտեմին»<sup>35</sup>, այլ կերպ ասած՝ «հայերեն բարբառների շնչեղ ձայնեղները ներկայացնում են ոչ թե հնդեվրոպական նույն բաղաձայնների ուղղակի շարունակությունը, այլ հին հայերենի բ, գ, դ, ճ, ջ ձայնեղների հետագայում շնչեղացած վիճակը»<sup>36</sup>: Քերականական իրողությունների վերլուծությունը (վերլուծական թե համադրական ձևերի նախնականության, հարակատար դերբայի առաջացման և այլ հարցեր) է. Աղայանին թույլ է տալիս եզրակացնել, որ «գրաբարն ավելի հնատիպ է ու հին, քան մեր բարբառներից որևէ մեկը, և, հետևաբար, մեր բարբառներն առաջացել են գրաբարի կազմավորումից հետո և հենց գրաբարից, որ հին հայերենի գրավոր ավանդված վիճակն է»<sup>37</sup>: Ի վերջո, լեզվաբանը հանգում է այն մտքին, որ միակ ընդունելին մնում է Հր. Աճառյանի տեսությունը<sup>38</sup>: Միանգամայն ճիշտ ու սպառիչ համարելով Հր. Աճառյանի կարծիքը V դ. հայ բարբառների վերաբերյալ՝ է. Աղայանը համարում է, որ պետք է տարբերակել հին հայերեն բարբառներ և նոր հայերեն բարբառներ հասկացությունները<sup>39</sup>: Նա իրավացիորեն նկատում է. «Ամեն մի լեզու ունի իր բարբառները: Այդ բարբառները կարող են առավել կամ պակաս տարբերություններ ունենալ, բայց բոլոր դեպքերում էլ

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 214:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 217:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 219:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 222:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 225:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 226:

նրանք կան: Չկա լեզու, որ բարբառներ չունենա»<sup>40</sup>: Ըստ Հայ ժողովրդի և հայերենի կազմավորման վերաբերյալ է. Աղայանի պատկերացումներ<sup>41</sup>՝ հայերենը նախ դրսևորվել է իբրև բարբառների ամբողջություն, որոնք համաժողովրդական հայերեն լեզվի կազմավորումից հետո մահացել են, իսկ հետագայում ձևավորվել են նոր բարբառներ. «IV–V դարերը մոտավոր սահմանագիծն են հանդիսանում հին հայերեն բարբառների մահացման և նոր բարբառների սաղմնավորման»<sup>42</sup>: Ինչ վերաբերում է գրաբարին, ապա այն ժամանակի համաժողովրդական, ընդհանուր խոսակցական լեզուն էր, և այդ նույն լեզուն, գտնվելով բարբառային ճյուղավորումների գործընթացում, հետագայում ենթարկվեց ուժգին փոփոխությունների, որը հանգեցրեց նոր հայերեն բարբառների առաջացմանը<sup>43</sup>: Նկատենք, որ որքան էլ է. Աղայանը դիմում է նաև հունարենի օրինակի օգնությունը, հայ ժողովրդի պատմական զարգացման դրվագներին կամ Հր. Աճառյանի փաստարկներին<sup>44</sup>, միևնույն է, լեզվաբանի՝ հին հայերեն բարբառների միաձուլումով (հետևաբար՝ վերացումով) համաժողովրդական լեզվի առաջացման, ապա վերջինիս քայքայմամբ նոր բարբառների առաջացման տեսությունը քննադատություն չի դիմանում. համոզիչ չեն ինչպես հին բարբառների մահացման վերաբերյալ դատողությունները, այնպես էլ նոր բարբառների՝ գրաբարից առաջացած լինելու վարկածը:

Բարբառների առաջացման վերաբերյալ Հր. Աճառյանի առաջարկածից տարբեր տեսակետ է հայտնում Ա. Ղարիբյանը<sup>45</sup>: Նա հարցի իր պատկերացումը ներկայացրել է հետևյալ կերպ. «Մեր կարծիքով, մեր դարաշրջանից առաջ, առաջին հազարամյակի սկզբում կազմվել են մեր հիմնական բարբառները, որոնք հետագայում ավելի ու ավելի տարբերվել են միմյանցից, ճյուղավորվել են, միմյանց համադրվել առանձին մասերով, հիմնական մասով միմյանցից ավելի հեռացել, հաճախ որոշ հատվածներով իրար միացել և այս ձևով շարունակել իրենց գոյությունը մինչև նոր ժամանակները: Հայկական ֆեոդալիզմի ստեղծման և զարգացման զուգընթաց հին բարբառները զգալի փոփոխություններ են կրել, նրանք իրենց ներսում բաժանվել են նոր բարբառների՝ առաջացնելով բարբառային ճյուղեր: Դրա հետևանքով է, որ այժմ մենք հայտնաբերում ենք շուրջ վաթ-

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Ըստ է. Աղայանի՝ քանի որ հայերենը հնդեվրոպական լեզվի ճյուղավորում է, ուրեմն մ. թ. ա. երրորդ հազարամյակից մինչև երկրորդ հազարամյակի սկիզբները, երբ առաջանում էին հնդեվրոպական ցեղակից լեզուները, կային ցեղեր, որոնք խոսում էին նախահայերեն լեզվով, և միանգամայն բնական է, որ այդ լեզուն պետք է ունենար իր բարբառները (տե՛ս նույն տեղում, էջ 227):

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 228–229:

<sup>45</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան. Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, էջ 240–266:

սուն բարբառներ»<sup>46</sup>: Ա. Ղարիբյանը քննադատաբար է մոտենում է. Աղայանի՝ հին բարբառների մահացման և նորերի առաջացման վերաբերյալ դատողություններին: Նա իրավացիորեն անհամոզիչ է համարում է. Աղայանի այն դիտարկումը, թե իբր «II դարում ստեղծված հայ պետականությունը Հայաստանում այնպիսի մի կենտրոնացված պետականություն էր, որ պայմաններ ստեղծեց հայ հին բարբառների վերանալուն»<sup>47</sup>: Գիտականորեն արժեքավոր է նաև Ա. Ղարիբյանի այն դիտարկումը, որ «բարբառները անպայման վերափոխության են ենթարկվում, ճյուղավորվում են, նոր տարբերակներ են տալիս և կարող են նման չլինել իրենց նախորդներին»<sup>48</sup>: Լեզվաբանը վերահաստատում է իր պնդումը, որ բարբառների հնչյունական համակարգն իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած<sup>49</sup>, իսկ բարբառների քերականական կառուցվածքն իր զգալի մասերով բխում է ոչ թե գրաբարից, այլ գրաբարին նախորդող հայերենի վիճակից և գրաբարին զուգահեռ առաջացել է նախագրաբարյան հայերենից<sup>50</sup>: Վերադառնալով հայ հին բարբառների միաձուլման աղայանական տեսությանը՝ Ա. Ղարիբյանն այն համարում է տրամաբանություն ու պատմական գործընթացին հակասող<sup>51</sup>, բայց և հետագա էջերում ներկայացնում է պատմական ընթացքի այնպիսի պատկերացում<sup>52</sup>, որը ևս, մեր կարծիքով, միշտ չէ՛ արժանահավատ ու հիմնավոր է, և շատ ղեպքերում հենվում է ենթադրությունների վրա: Այնուամենայնիվ, ուշադրության արժանի է Ա. Ղարիբյանի հետևյալ դիտարկումը. «Ձի կարելի պնդել նաև, որ ժամանակակից բարբառները հին բարբառների հետ իրենց կազմությունամբ բոլորովին նույնն են. բայց որ մեր յոթ բարբառային ճյուղերը ներկայացնում են հնագույն շրջանի հայ բարբառները նոր վիճակով, այդ բանում կասկածելու առիթ չկա»<sup>53</sup>: Լիովին ընդունելի է նաև այն պնդումը՝ «չի եղել ժամանակ, որ հայերեն լեզուն բարբառներ չունենա»<sup>54</sup>:

Ա. Ղարիբյանի մի շարք դիտարկումների հետ իր անհամաձայնությունն է հայտնում Գ. Սևակը «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում<sup>55</sup>: Նա հայ բարբառների նախագրաբարյան ծագման վերաբերյալ, ինչպես նաև հնդեվրոպական նախալեզվի հետ մեր բարբառներից մի քանիսին հատուկ շնչեղ ձայնեղների ուղղակի կապի մասին Ա. Ղարիբյանի բոլոր պնդումները համարում

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>48</sup> Նույն տեղում:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 244:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 258:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 260:

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 260–263:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Գ. Սևակ. նշվ. հոդվ.:

է չհիմնավորված<sup>56</sup>: Գ. Սևակի կարծիքով «Բանավիճող երկու կողմերը՝ Ա. Ղարիբյանը և Է. Աղայանը ելնում են իրարից միանգամայն տարբեր, բայց իրենց հավասարապես անսասան ու հաստատուն թվացող կանխակալ դրույթներից և հետևաբար չունեն շփվող ոչ մի եզր»<sup>57</sup>: Այսպես, Ա. Ղարիբյանը հրաժարվել է պատմականությունում ու զարգացում որոնելու պահանջից և կտրականապես պնդում է, թե «մեր բոլոր բարբառները առաջացել են ոչ թե գրաբարից, ոչ թե գրաբարատիպ հին հայերենից, այլ պատմական Հայաստանում տեղադրված այլևայլ ժողովուրդների կողմից հայոց լեզուն յուրացնելու պրոցեսում՝ հեռավոր նախապատմական շրջաններում»<sup>58</sup>: Մյուս կողմից՝ Է. Աղայանը, հետևելով Հր. Աճառյանի դրույթներին, «կատեգորիկ կերպով ընդունում է, որ այսօրվա մեր բոլոր բարբառները նոր գոյացություններ են, գրաբարի ծնունդ, որ սաղմնավորվելով II–IV դարերում՝ ձևավորվել են VII–XII դարերում»<sup>59</sup>: Հետագա շարադրանքում Գ. Սևակը հանգամանորեն անդրադառնում է Ա. Ղարիբյանի տեսության խոցելի կողմերին և, ի վերջո, հանգում եզրակացության, որ միանգամայն անհիմն և անհամոզիչ է Ա. Ղարիբյանի ողջ տեսությունը հայ բարբառների ծագման մասին, քանի որ նա անտեսում է և չի ընդունում հայոց լեզվի ու նրա բարբառների ինքնազարգացումը, նրանց զարգացման ներքին օրենքները<sup>60</sup>: Ինչ վերաբերում է Է. Աղայանի դիտարկումներին, Գ. Սևակը կարծում է, որ Է. Աղայանի ասածների մեջ կան շատ ճշմարտություններ, որոնց հանգեցրել են լեզվական տվյալները և պատմահամեմատական մեթոդի ճիշտ կիրառումը<sup>61</sup>: Գ. Սևակը չի ընդունում հին և նոր բարբառների վերաբերյալ Է. Աղայանի առաջ քաշած նոր դրույթը, սակայն անհերքելի է համարում «բոլոր հնդեվրոպաբան հայագետների այն դրույթը, որ մեզ ծանոթ բոլոր հայ բարբառների հնչյունական և քերականական համակարգը հին հայերենի՝ գրաբարյան համակարգից է սերել և չի կարող ավելի հին լինել նրա համակարգից»<sup>62</sup>: Ընդ որում՝ լեզվաբանը տարբերում է «գրաբար գրական լեզուն՝ գրաբարյան համակարգից, որը շատ ավելի հին է, քան մեզ ծանոթ գրաբար լեզուն»<sup>63</sup>:

Բարբառների ծագման հետ կապված խնդիրներում որոշակի հստակություն է մտցնում Գ. Զահուկյանը «Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը» հոդվածով<sup>64</sup>: Լեզվաբանի համար հայերենի բարբառների հարցը լոկ բարբառագիտական հարց չէ. այն սերտորեն կապված է հայոց լեզվի ծագման ու

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 226:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 240–241:

<sup>61</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 244:

<sup>62</sup> Նույն տեղում:

<sup>63</sup> Նույն տեղում:

<sup>64</sup> Գ. Զահուկյան. նշվ. հոդվ.:

ձևավորման հարցի հետ<sup>65</sup>: Գ. Ջահուկյանը հավաստում է, որ «Հայագիտության զարգացման ժամանակակից էտապում այլևս վիճելի չպետք է համարել նախ՝ V դարում հայերենի բարբառների գոյություն հարցը և երկրորդ՝ բարբառներում այնպիսի արխայիկ գծերի առկայության հարցը, որոնք գրաբարի հուշարձաններում պահպանված գծերից ավելի հին են: Վիճելի պետք է համարել լուրջ V դարի հայերենի բարբառների ծագման, բնույթի, քանակի և ժամանակակից բարբառների հետ ունեցած փոխհարաբերության հարցերը»<sup>66</sup>: Այնուհետև լեզվաբանն անցնում է Ա. Ղարիբյանի տեսակետի թերությունների վերհանմանն ու քննադատությանը՝ նշելով, որ նրա լեզվաբանական-բարբառագիտական կոնցեպցիան աչքի է ընկնում անհետևողականությամբ և ընդհանուր մեթոդոլոգիական բնույթի վրիպումներով<sup>67</sup>: Գ. Ջահուկյանը փաստում է. «որքան ավելի ուժեղ է թեքականությունը և համադրականությունը հնդեվրոպական որևէ լեզվում, այնքան ավելի է այդ լեզուն մոտ հին վիճակին. այս տեսակետից կասկած չի կարող լինել գրաբարի՝ բարբառներից ավելի հին վիճակ ներկայացնելու մասին»<sup>68</sup>: Ա. Ղարիբյանի տեսակետների առնչությամբ կատարելով հնչյունաբանական վերլուծություններ՝ Գ. Ջահուկյանն արձանագրում է. «1) գրաբարյան ձևերը ընդհանուր առմամբ հնդեվրոպական նախաձևերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 2) գրաբարյան ձևերը փոխատու լեզվի ձևերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 3) բարբառային ձևերը կարելի է հնդեվրոպական և հին փոխատու աղբյուրի ձևերի հետ կապել հին հայերենի ձևերի միջնորդությամբ միայն»<sup>69</sup>: Նա հանգում է այն տեսակետին, որ բարբառները մինչև X–XI դդ. ուժեղ տարբերակված չէին, և ժամանակակից բարբառների հիմնական հատկանիշները ձևավորվել են այդ դարերից հետո<sup>70</sup>: Գ. Ջահուկյանը նկատում է, որ «ժամանակակից հայերենի բարբառները հենց ժամանակակից հայերենի բարբառներ են, որոնք հայոց լեզվի զարգացման ընթացքին համապատասխան փոփոխության են ենթարկվել»<sup>71</sup>: Ընդհանրապես, լեզվաբանը գտնում է՝ «պետք է համապատասխանաբար տարբերել հին շրջանի կամ հին հայերենի բարբառներ, միջին շրջանի կամ միջին հայերենի բարբառներ և նոր շրջանի կամ նոր հայերենի բարբառներ. սակայն չի կարելի կարծել, որ նոր շրջանի բարբառները ուղղագծորեն գալիս են միջին շրջանի բարբառներից, սրանք էլ հին շրջանի բարբառներից, վերջիններս էլ նախահինհայերենյան (նախագրաբարյան) շրջանի բարբառներից»<sup>72</sup>: Բարբառները զարգացող, փոփոխվող իրողություններ են. «Հայերեն

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 282:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 283:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 291:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 303:

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 305:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 310:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 310–311:

նի ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ. հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ՝ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները»<sup>73</sup>: Լեզվաբանի կարծիքով մինչև XI–XIII դդ. հայ բարբառների տարբերությունները գերազանցապես հնչյունական-բառապաշարային էին, XII դարից հետո միայն սկսում են գերակշռող դիրք գրավել ձևաբանական տարբերությունները<sup>74</sup>: Անդրադառնալով բարբառների առաջացման ընթացքին՝ Գ. Զահուկյանը համարում է, որ «հայերենի հնդեվրոպական հիմնալեզվից անջատվելու և կազմավորվելու պրոցեսը երկարատև պրոցես է եղել, որի սկզբնական շրջանում հայերենը չէր կարող քիչ թե շատ ուժեղ բարբառային տարբերակումներ ունենալ»<sup>75</sup>, նույնիսկ V դարում էլ հայոց լեզվի տարբերակվածությունը այնքան ուժեղ չէր, ինչ XII դարից սկսած<sup>76</sup>: Բայց և սխալ պետք է համարել այն տեսակետը, համաձայն որի՝ ժամանակակից բարբառները ծագել են գրաբարից ու նրա հետագա աղավաղումներն են. «գրաբար ասելով պետք է հասկանալ հին գրական հայերենը, իսկ գրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների»<sup>77</sup>: Գ. Զահուկյանը իրավացիորեն նկատում է, որ ցանկացած բարբառ կարող է պահպանած լինել գրաբարից ավելի արխայիկ գծեր, բայց ընդհանուր առմամբ գրաբարն արդի բոլոր բարբառներից էլ հին է<sup>78</sup>: Մյուս կողմից՝ բարբառները միանգամից չեն կազմավորվել. դրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից<sup>79</sup>:

Հայերենի բարբառների ծագման վերաբերյալ հետաքրքրական դիտարկումներ է կատարում նաև Ս. Ղազարյանը «Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը» հոդվածում<sup>80</sup>: Նա այս հոդվածով ամփոփում է «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում ծավալված բանավեճը՝ նշելով, որ հայ բարբառների ծագման վերաբերյալ Ա. Ղարիբյանի տեսակետի դեմ հանդես գալով է. Աղայանը, Գ. Սևակը և Գ. Զահուկյանը հիմնականում պաշտպանեցին Ա. Մեյերի և Հր. Աճառյանի կարծիքը հայերենի բարբառների մասին՝ ընդունելով, որ գրաբարն ավելի մոտ է հնդեվրոպական հիմնալեզվի վիճակին, քան որևէ բարբառ<sup>81</sup>: Դիտարկելով հայտնված բոլոր տեսակետները՝ Ս. Ղազարյանը կատարում է հետևյալ եզրահանգում-

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 312:

<sup>76</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 312–313:

<sup>77</sup> Նույն տեղում:

<sup>78</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 313:

<sup>79</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 315:

<sup>80</sup> Ս. Ղազարյան. նշվ. հոդվ.:

<sup>81</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 173:

ները. ա) կասկածից վեր է, որ ժամանակակից որևէ բարբառ չի կարող իր արդի վիճակով ավելի հին լինել, քան գրաբարը, սակայն սխալ է հայերենի բարբառների արդի վիճակի իրողությունները նկատի ունենալով պնդել, թե դրանք գրաբարից հին չեն, ինչպես նաև չի կարելի պնդել, թե հայերենը V դարում չի ունեցել իր բարբառները<sup>82</sup>, բ) հայերենի բարբառների որոշ մասը առաջացել է հայ ժողովրդի մեջ ձուլված ցեղերի լեզուների հիման վրա՝ մ. թ. ա. VIII–II դդ. ընթացքում, ընդ որում՝ հայերենի բարբառների գոյությունը պետք է ընդունել այն ժամանակվանից, երբ կազմավորվել է հայ ժողովուրդը, միաժամանակ՝ առանձին բարբառներ և բարբառախմբեր առաջացել են ավելի ուշ շրջանում՝ V դարից հետո<sup>83</sup>, գ) գրաբարը ձևավորվել է որևէ բարբառի կամ բարբառների հիման վրա, այն չի քայքայվել, արձանագրվելով V դարում՝ պահպանվել է անփոփոխ ձևով<sup>84</sup>: Ս. Ղազարյանը ևս հանգամանորեն անդրադառնում է Ա. Ղարիբյանի՝ բարբառների բաղաձայնական համակարգերի վերաբերյալ արտահայտած տեսակետներին և իր հերթին դրանք ենթարկում քննադատական վերլուծության<sup>85</sup>, բայց և բարձր է գնահատում նրա կատարած հնչյունաբանական դասակարգումը, հանգամանորեն անդրադառնում դրան ու կատարում մի շարք դիտարկումներ<sup>86</sup>:

Այսպիսով, «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում հայ բարբառների ծագման խնդրի շուրջ ծավալված բանավեճի արդյունքում իրենց լուծումն են ստանում մի շարք հարցեր: Ըստ այդմ՝ հայ բարբառագիտության հետագա զարգացման համար պետք է առանձնացնել և կարևորել մի շարք դիտարկումներ ու եզրահանգումներ, որոնցից են՝

- չկա լեզու, որ բարբառներ չունենա. հայերենը միշտ ունեցել է բարբառներ,
- V դարում և դրանից առաջ էլ հայերենը բարբառներ ուներ, սակայն արդի բարբառները դրանց ուղղագրի շարունակությունը չեն,
- արդի հայ բարբառներն իրենց ներկա վիճակով ավելի հին չեն, քան գրաբարը, բայց և գրաբարի քայքայման արդյունք չեն ու գրաբարի աղավաղումներ չեն. գրաբար ասելով պետք է հասկանալ հին գրական հայերենը, իսկ գրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների,
- ժամանակակից բարբառները պահպանել են այնպիսի արխայիկ գծեր, որոնք ավելի մոտ են հնդեվրոպականին, քան գրաբարի ա-

<sup>82</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 174: Ս. Ղազարյանը բերում է նաև V դարում հայ բարբառների գոյությունը հավաստող վկայություններ և փաստեր (նույն տեղում, էջ 175–176):

<sup>83</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 178:

<sup>84</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 188–189:

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 180–183:

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 183–188:



վանդված ձևերը, բայց ընդհանուր առմամբ գրաբարն արդի բոլոր բարբառներից էլ հին է,

- Հայերենի ոչ մի բարբառ որևէ դարաշրջանում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել. բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ընթացքում,

- Հայերենի տարբեր բարբառներ ձևավորվել են տարբեր ժամանակաշրջաններում, ընդ որում՝ բարբառները միանգամից չեն կազմավորվել. դրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից:

Միևնույն ժամանակ, չի կարելի կարծել, թե բանավեճի ընթացքում առաջադրված բոլոր հարցերը ստացան իրենց սպառիչ ու համոզիչ պատասխաններն ու լուծումները: Մասնավորապես, հայ բարբառների ծագման ժամանակի և ընթացքի վերաբերյալ արտահայտված տեսակետները (մի կողմ թողնելով գրաբարից առաջացած լինելու մերժելի վարկածը) ինչ-որ առումով անորոշ են ու հակասական: Թվում է՝ անհրաժեշտ է ընդգծել մի հանգամանք. ցանկացած լեզու կարող է ի հայտ գալ, առաջանալ միայն ու միայն իբրև անմշակ, հաճախ անմիօրինակ ու անմիասնական, սակայն տվյալ լեզվական հանրության շրջանակում ընդհանուր առմամբ ընկալելի, հասկանալի և գործածական ձևերի ու միավորների ամբողջություն, այսինքն՝ բարբառային վիճակով: Այդ վիճակը, բնականաբար, ըստ լեզվական հանրության բաժանումների (ցեղեր, տոհմեր, տարածական խմբեր և այլն) կուսենա իր տարբերակային դրսևորումները, որոնք կարող են միմյանցից շատ կամ քիչ տարբերվել: Հետևաբար, բնական է պնդել, որ հայերենի բարբառների առաջացումը սկսվում է հայերենի ծագումով, այն է՝ հայերենի նախնական բարբառային վիճակով, և այս հարցում էական չէ ո՛չ բարբառային տարբերությունների ուժեղ կամ թույլ լինելը, ո՛չ էլ բարբառների քանակը:

Բացի այդ, համոզիչ չեն թվում դրույթներն այն մասին, թե իբր V դարում բարբառային տարբերությունները թույլ էին, և բարբառները մինչև X–XI դդ. դարերը ուժեղ տարբերակված չէին, իսկ ժամանակակից բարբառների հիմնական հատկանիշները ձևավորվել են այդ դարերից հետո, կամ՝ մինչև XI–XII դդ. հայ բարբառների տարբերությունները գերազանցապես հնչյունական-բառապաշարային էին, և XII դարից հետո միայն սկսում են գերակշռող դիրք գրավել ձևաբանական տարբերությունները: Մեր կարծիքով՝ վերջնականապես լուծված չի կարելի համարել հայերենի բարբառների բաղադարական համակարգերի և հնդեվրոպական համակարգի փոխհարաբերությունների հարցը. որքան որ հիմնավորված չեն համարվում Ա. Ղարիբյանի տեսակետները, նույնքան էլ որևէ կերպ հիմնավորված չէ է. Աղայանի ներկայացրած՝ շնչեղ ձայնեղներ<պարզ ձայնեղներ> շնչեղ ձայնեղներ անցման վարկածն ու այլն: Այնպես որ, բանավեճն արդյունավետ է եղել ոչ միայն լուծումներ առաջարկելու,

*այլ նաև իրենց լուծմանն սպասող խնդիրներ առաջադրելու առումներով:*

ВОПРОС ПРОИСХОЖДЕНИЯ АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ НА  
СТРАНИЦАХ «ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»  
(1958 – 1960 гг.)

ВИКТОР КАТВАЛЯН

Р е з ю м е

Проблема происхождения армянских диалектов рассматривалась на страницах «Историко-филологического журнала» (1958 – 1960 гг.) А. Гарибяном, Э. Агаяном, Г. Севаком, Г. Джаукяном и С. Казаряном. В результате были решены некоторые вопросы, сделаны важные наблюдения и выводы. В частности, было подчеркнуто, что в V веке и до него армянский язык имел диалекты, но современные диалекты не являются их продолжением. Грабар древнее всех современных диалектов, но диалекты не являются искаженными формами грабара. Не на все выдвинутые в ходе обсуждений вопросы были даны ответы.

THE ISSUE OF THE ORIGIN OF ARMENIAN DIALECTS ON THE PAGES  
OF THE “HISTORICAL-PHILOLOGICAL” JOURNAL  
(1958–1960)

VIKTOR KATVALYAN

S u m m a r y

The issue of the origin of Armenian dialects was discussed in the pages of the “Historical-Philological” journal (1958–1960) by prominent linguists A. Gharibyan, E. Aghayan, G. Sevak, G. Jahukyan, and S. Ghazaryan. As a result, a number of issues were solved, important observations and conclusions were made. In particular, it was emphasized that the Armenian language had its dialects in the 5th century AD and even earlier, but modern dialects do not present their direct continuation. Grabar /Old Armenian/ is older than all modern dialects, but these dialects are not the distorted forms of Grabar. Not all of the issues raised during the debate received their answers.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԹՅՈՒՄՆԵՐԸ (1918–1920 թթ.)

ՀՐԱՅՐ ԶՈՐՅԱՆ

Լրատվության միջոցները բոլոր ժամանակներում դիտվել են որպես հասարակական-քաղաքական գործունեության կարևորագույն ոլորտ, կյանքի հրատապ հարցերին, երևույթներին և իրադարձություններին ժամանակին արձագանքելու, ամենատարբեր գաղափարախոսությունների, շարժումների արտահայտիչ: Այդպիսի դերակատարում է ունեցել նաև Հայաստանի հեռագրական գործակալությունը (ՀՀԳ), որը ստեղծվելով Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակ՝ որպես պետական լրատվական գործունեություն՝ տարբեր անվանումներով իր գործունեությունն անդադար չարուեսակում է մինչ օրս:

Հայրենի երկրում չունենալով նախադեպ՝ Հայաստանի Ազգային Խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 18-ին ընդունած օրենքով հիմնված պետական լրատվական այս կառույցը, որն ի սկզբանե անվանվել է Հայաստանի հեռագրական գործակալություն, անցել է կայացման ոչ դյուրերին ուղի:

Երկրի հասարակական-քաղաքական կյանքում և լրատվական դաշտում հսկայական դեր խաղացած պետական այս մարմինն ըստ արժանավունյն չի գնահատվել ուսումնասիրողների կողմից: Խորհրդային շրջանի աղբյուրներում, որպես Հայաստանի պետական լրատվական գործակալության հիմնադրման տարեթիվ, հիմք է ընդունվել ՀՍՍՀ Կենտգործկոմի 1922 թ. հոկտեմբերի 2-ի որոշումը՝ անտեսելով նախորդ՝ ամբողջ չորս տարվա ընթացքում ՀՀԳ-ի գործունեությունն ու փորձը, որոնց հիման վրա էլ գործակալությունն իր աշխատանքը շարունակեց արդեն Հայաստանի երկրորդ Հանրապետության տարիներին՝ ժառանգելով նաև իրավահաջորդությունը: Նման անտեսումը, թերևս, պայմանավորված էր խորհրդահայ պատմագրության մոտեցմամբ, երբ շրջանցվում էին Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին կայացած իրողությունները:

Մինչ Հայաստանի Ազգային Խորհրդի կողմից պետական հեռագրական գործակալության հիմնադրումը լրատվության ապահովման որոշակի գործառույթ իրականացնում էր Վրաստանում հայկական դիվանագիտական առաքելությանը կից ստեղծված Ինֆորմբյուրոն: Նախ անդրադառնանք այս կառույցի գործունեությանը, քանի որ

այն կարելի է դիտարկել որպես ՀՀԳ-ի նախատիպը՝ նպաստելով վերջինիս կայացմանը:

Որպես միջպետական հարաբերությունների լուսաբանման մի օղակ Հայաստանի Ազգային Խորհրդի 1918 թ. հուլիսի 3-ի որոշմամբ Վրաստանում ստեղծում է հատուկ ծառայություն՝ Ինֆորմբյուրո: Նախնական շրջանում գործելով գինվորական գերատեսչության ենթակայությունում՝ այն խնդիր է ունեցել հավաքագրելու և ամբողջացնելու հայկական կորպուսի գինվորական մասերին վերաբերող տեղեկությունները, սպաների, գինվորների, զոհվածների ու գերիների մասին լուրերը: Հանձնարարված էր կազմել նաև հայկական գործառնական մարտական գործողությունների վերաբերյալ վավերագրական տեղեկանքներ, տարբեր իրադարձությունների կապակցությունում մամուլի օրգաններում տեղ գտած ոչ ճիշտ մեկնաբանումների դեպքում՝ հանդես գալ պաշտոնական հերքումներով:

Կարճ ժամանակ անց Ազգային Խորհուրդը Ինֆորմբյուրոն հանձնում է Վրաստանում Հայկական դիվանագիտական առաքելության ենթակայությունը՝ որոշակիորեն փոփոխելով կառույցի գործառնականները: Հաստատվում է հաստիքացուցակը՝ պետ, երկու տեղակալ, գործավար-քարտուղար: Պետ է նշանակվում Ա. Մալխասյանը:

Ինֆորմբյուրոն, գլխավորապես կենտրոնանալով իր հիմնական գործառնական Վրաստանի ու Ադրբեյջանի կառավարությունների հետ Հայաստանի փոխհարաբերությունների վրա, իրականացնում է նաև լրատվական գործակալությանը բնորոշ աշխատանք՝ թիֆլիսյան լրատվադաշտի հնարավորություններին համապատասխան լուրեր հաղորդելով Երևան:

Ինֆորմբյուրոյի՝ Հայաստանի ազգային արխիվում<sup>1</sup> պահպանված տեղեկագրերն ընդգրկում են պատկերացում են տալիս 1918–1920 թթ. անդրկովկասյան երեք նորաստեղծ հանրապետությունների ներքին ու արտաքին քաղաքականության, միջպետական փոխհարաբերությունների, միջազգային կյանքի կարևոր իրադարձությունների, առանձնապես հայ-թուրքական հակամարտությունների, տարածաշրջանում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի, աշխարհով մեկ սփռված հայ գաղթականության մասին:

Տեղեկությունների հաղորդմանը զուգահեռ՝ բյուրոն հրապարակել է նաև պատմաքաղաքական բնույթի բազմաթիվ նյութեր՝ «Վրաստան, Գերմանիա, Ռուսաստան», «Ադրբեյջանը և Հայաստանը», «Վրաստանը և հայերը» և այլ խորագրերի ներքո, որոնք որոշակի պատկերացումներ էին տալիս տարածաշրջանում մեծ տերությունների իրականացրած քաղաքականության առնչությամբ: Արխիվային նյութերում պահպանվել է նաև Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում ստեղծված իրավիճակի, թուրքերի կողմից հայերի զանգվածային բռնազաղթի ու ոչնչացման մասին փաստաթղթեր՝ ֆրանսերեն լեզվով, որոնք ուղարկվել են Փարիզ՝

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 7, գ. 53-ա:

հաշտության վեհաժողովի հայկական պատվիրակությանը<sup>2</sup>: Բյուրոն իր տեղեկագրերը պարբերաբար ուղարկել է նաև Ռուսաստանի քաղաքական տարբեր շրջանակների, այնտեղ ապրող հայուկթյանը, նյութեր մատակարարել Հայաստանի կառավարության այդ ժամանակվա պաշտոնական «Կառավարության լրագրեր» թերթին:

Ինֆորմբյուրոյի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառույցի պետն Ազգային Խորհրդին ներկայացրած բացատրագրերից մեկում առաջ է քաշում գործունեության շրջանակներն ընդլայնելու հարցը: Անհրաժեշտ է համարվում Անդրկովկասի տարբեր վայրերում ինֆորմբյուրոյի քաղաքական գաղտնի գործակալությունների, հատուկ ռուսական բյուրոյի (կենտրոնը Եկատերինոդար) ստեղծումը: Որպես հիմնավորում նշվում է, որ Ինֆորմբյուրոն տեղեկատվություն է հաղորդում ոչ միայն Հայաստան-Վրաստան, Հայաստան-Ադրբեջան առնչությունների, այլև ռուսաստանյան քաղաքական իրադարձությունների վերաբերյալ, լուրեր մատակարարում Կ. Պոլսի ու Փարիզի հայկական պատվիրակություններին:

Այսպիսով՝ Ինֆորմբյուրոն իր գործունեությամբ հասունացրել էր զուտ տեղեկատվական առանձին կառույցի ստեղծման անհրաժեշտությունը, Հայաստանի կառավարությունում պետական լրատվական գործակալություն ստեղծելու գաղափարի խմորումը:

Ի վերջո, Հայոց Ազգային Խորհուրդն իր առաջին տասնյակ օրենքների թվում 1918 թ. դեկտեմբերի 18-ին ընդունում է, ինչպես նշվեց, նաև Հայաստանի հեռագրական գործակալության հիմնման մասին օրենքը:

Գործակալության հիմնման վերաբերյալ օրենքից երևում է, թե ստեղծման առաջին օրերից ինչպիսի կարևոր դերակատարություն է վերապահվում գործակալությանը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Այդ օրենքով երկրի բոլոր պետական ու հասարակական հիմնարկները պարտավորեցվել են տեղեկություններ տալ գործակալությանը, ընդ որում՝ արգելվել է նախքան դրան հաղորդելն այդ տեղեկությունները տրամադրել մասնավոր անձանց կամ հաստատությունների: Արգելվել է նաև գործակալության հեռագրերի արտատպումն այլ հրատարակություններում՝ բաժանորդ թերթերում դրանց հրատարակումից հետո 48 ժամվա ընթացքում: Սահմանվել է ՀՀԳ-ի հեռագրերի բաժանորդագրին. Երևանի պարբերական հրատարակությունների համար՝ ամսական 300 ռ., գավառային թերթերի համար՝ 200 ռ., մասնավոր անձանց համար, առանց բազմացման իրավունքի՝ 50 ռ.: Հայաստանի Խորհրդի նիստերի վերաբերյալ հեռագրերի համար՝ լրացուցիչ 100 ռ.: Նշվել է, որ ընդհանուր հեռագրերը ներկայացնելու են Հայաստանի Խորհրդի գործունեության միայն կարևորագույն դեպքերը:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 142:

Ինչ վերաբերում է հաղորդող հեռագրերի ծավալներին, ապա դրանք պետք է ունենային ոչ պակաս, քան 150 տող, յուրաքանչյուր տողում՝ 25 տառ: Իսկ եթե ամսվա ընթացքում տողերի թիվը նշվածից ավելի լինի, ապա ավելցուկն անցնելու է հաջորդ ամսվա հաշվին: Նույնչափ տողեր են սահմանվել նաև Հայաստանի Խորհրդի նիստերի վերաբերյալ հեռագրերի համար:

Օրենքին կցվել է գործակալության ծառայողների հաստիքացուցակը և մուտքերի ու ծախսերի նախահաշիվը: Սահմանվել է այսպիսի կառուցվածք. կառավարիչ՝ 900 ռ. ամսավճար, քարտուղար՝ 600 ռ., սուբհանդակ՝ 250 ռ.: Հեռագրական ծախսերը կազմելու էին 3000 ռ.: Որպես մուտքեր նշվել են Երևանի չորս թերթերից՝ ամսական 300-ական ռ., գավառական թերթերից՝ 600 ռ., Հայաստանի սահմաններից դուրս գտնվող օրգաններից՝ 1800 ռ., մասնավոր բաժանորդագրուկներից՝ 500 ռ. Ընդամենը՝ 4100 ռ.: Իսկ ծախսերի պակասը պետք է իր միջոցներից լրացնեն կառավարությունը:

Սկզբնական շրջանում գործակալությունը դրվում է ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո՝ նկատի ունենալով, որ այն ուներ իր տպարանը, թղթային պաշարները, հասու էր երկրի ներքին անցուղարձին:

Գործակալության ստեղծման ակունքներում մեծ է լրագրողական փորձառությունը, մի քանի պարբերականներում աշխատակցած ու թերթեր հրատարակած, ՀՅԴ կուսակցության գործիչ Սիմոն Վրացյանի ներդրումը: Գործակալությանը վերաբերող արխիվային նյութերում որպես ՀՀԳ-ի առաջին կառավարիչ նշվում է նրա անունը, թեև պաշտոնական գրություններից մեկը ստորագրելիս Վրացյանը կառավարիչ բառից առաջ մատիտով ավելացրել է՝ «ժամանակավոր»:

Ս. Վրացյանը հսկայական դեր է խաղացել լրատվական նոր կառույցի ձևավորման, վերջինիս աշխատանքի հաջող մեկնարկն ապահովելու գործում: ՆԳ նախարարին ուղղած գրություններից մեկում նա առաջարկում է հատուկ շրջաբերականով պարտադրել նախարարության ենթակա մարմիններին, որ դրանք պարբերաբար, ամեն օր որոշակի ժամի գործալուծյան ներկայացուցչին հաղորդեն իրենց կազմակերպությունում եղած տեղեկությունները, պահանջում, որ այդ կազմակերպությունները առանձնացնեն հատուկ պաշտոնյայի, ումից կարելի լինի ստանալ անհրաժեշտ տեղեկությունները: Արդյունքում՝ մինիստր-նախագահի անունով շրջաբերական է իջեցվում Արտգործնախարարությանը և մյուս գերատեսչություններին, որով պահանջվում է անհապաղ իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկությունը, նաև իրենց մոտ տեղի ունեցող անցուղարձի մասին անվերապահորեն իրազեկել գործակալությանը, որոնց հիման վրա կարելի լինի կազմել հանրապետության ներքին ու արտաքին կյանքի ամբողջական պատկերը ներկայացնող տեղեկագրեր: Այլ հանձնարարականներով նախարարություններից պահանջվում է համապատասխան կարգադրություն անել, որպեսզի իրենց ենթակա կազ-

մակերպությունները ՀՀԳ-ին տան հասարակական բնույթի տեղեկություններ: Այդ լուրերի մատակարարման ժամանակը նշանակվում է ցերեկվա ժամը 12-ից 17-ը՝ պարտադրելով, որ առհասարակ նորություններ հաղորդելիս պետք է ճշտորեն ղեկավարվել Հայաստանի Խորհրդի թիվ 47 օրենքի երկրորդ կետով. այսինքն, արգելվում է տեղեկություններ տալ մասնավոր անձանց և հաստատություններին՝ նախքան դրանք գործակալությունը հանձնելը:

Նախարարություններին տեղյակ է պահվում, որ ՀՀԳ-ն իր գործունեությունը սկսելու է 1919 թ. հունվարի 15-ից, ուստի հարկ է նրան հայտնել, թե նախարարությունների ենթակա կառույցներից որոնք կցանկանան բաժանորդագրվել ՀՀԳ-ի տեղեկագրերին (հասցեն՝ Տեր-Ղուկասով 64):

ՀՀԳ-ի տեղեկագրերին բաժանորդագրվելու առաջին հայտը ներկայացնում է Արտգործնախարարությունը: Վրացյանն իր գործն ավարտած է համարում ՀՀԳ-ի ստեղծման հարցում, և կառավարությունը գործակալության նոր տնօրեն հաստատում է ՀՅԴ անդամ Հակոբ Տեր-Հակոբյանին:

Հանրությանը լրատվամիջոցի առաքելությունը ծանոթացնելու և բաժանորդներ գտնելու նպատակով պաշտոնական մեկնարկից երեք օր առաջ՝ հունվարի 12-ին, հրապարակվում է լուրերի առաջին փորձնական թողարկումը: Այն ներառում է փոքր-ինչ հնացած լուրեր երկրի ներքին ու արտաքին կյանքի մասին: Պետական գործակալության առաջին նյութերը եղել են հեռագրի բնույթի՝ երկու-երեք տող, որոնք ստացվել ու հաղորդվել են անթել հեռագրի եղանակով:

Ահա դրանցից մի քանիսը: Տեղեկացվում է, որ «ավարտվել են (դեկտեմբերին) Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությունները. ձայների գերակշիռ մասն ստացել են վրաց սոցիալ-դեմոկրատները, միակ հայը Զուրաբովն է...»: Մեկ այլ լուրով հայտնվում է, որ «Ղարաքիլիսայից Թիֆլիս մեկնող առաջին գնացքը Քոլագերան կայարանում կանգնեցվել է վրաց երկաթուղայինների կողմից: Կայարանապետը հրաժարվել է մեկնաբանել պատճառը: 12-ժամվա պարապուրդից հետո գնացքը վերադարձել է ելման կետ՝ Ղարաքիլիսա»: Արևսանդրապոլից էլ հաղորդել են, որ «Թիֆլիսից ժամանել է գաղթականներով լի մի գնացք, որոնց մեջ են նաև Ամերիկայից վերադարձող Թուրքահայաստանի փախստականներ: Ուղևորատար գնացքը բերել է նաև Գերմանիայում գերի ընկած հայ զինվորների» և այլն:

ՀՀԳ-ի առաջին պաշտոնական հեռագրային ժապավենը թողարկվում է նախանշված օրը՝ հունվարի 15-ին՝ ընդգրկելով 22 կարճ լուր: Դրանք ուշագրավ տեղեկատվություններ են հանրապետության առօրյայի, նաև ազգամիջյան հարաբերություններում գլուխ բարձրացող խժոժությունների մասին:

ՀՀԳ-ի երկրորդ ղեկավար Հակոբ Տեր-Հակոբյանը, իր նախորդի նման, շուտ հրաժեշտ տվեց գործակալությանը՝ ստանձնելով այլ

պաշտոն: Հեշտ չէր Արմենտագի<sup>3</sup> համար գտնել գիտակ և հմուտ կազմակերպչի, երբ երկրում մասնագետների մեծ պակաս էր զգացվում: Հարցի լուծմանը դարձյալ իր մասնակցությունն է ունենում Ս. Վրացյանը, ով համարվում էր գործակալության նվիրյալներից:

Վարչապետի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանին հղած գրույթյամբ նա Արտաշես Նազարյանին ներկայացնում է որպես հեռագրական գործակալության աշխատանքին գիտակ և հմուտ մասնագետի՝ նրան երաշխավորելով ՀՀ Գ-ի տնօրենի պաշտոնում: Արդյունքում՝ Ալ. Խատիսյանի հրամանով 1919 թ. մայիսի 9-ից գործակալությունը, իր հիմնումից չորսուկես ամիս անց, ունենում է առաջին հաստիքային կառավարչին:

Ըստ արխիվային նյութերի՝ Ա. Նազարյանը մինչ այդ աշխատել է Ռուսաստանի հեռագրական գործակալության բաժանմունքում: Ինչպես ցույց են տալիս նոր պաշտոնում նրա բուռն ու ոչ դյուրին գործունեությունից մի քանի ամիսները, եղել է հեռագրային լրատվության ու տեխնիկայի առանձնահատկություններին քաջածանոթ, ով խնդիր էր դրել միջազգային չափանիշներով կազմակերպել պետական լրատուի աշխատանքը, բարձրացնել վերջինիս հեղինակությունն ու դերը: Նրա օրոք գործակալության աշխատանքում որոշակի բեկում է մտցվում ինչպես ստեղծագործական, այնպես էլ կազմակերպական առումով: Թեև այդ ժամանակ աշխատողների թիվը հասել էր 7-ի՝ կառավարիչ, պատքարտուղար, երկու թղթակից երեւանում, գործավար, մեքենագրող և սուբհանդակ, կային թղթակից-գործակալներ Թիֆլիսում (Սիմոն Մկրտչյան), Բաքվում (Արշակ Մալխասյան), Բաթումում (Օհանջան Մարություն), Կարսում (Սիմոն Յաթալյան) ու Ալեքսանդրապոլում (Հեբերիկ Չոլախյան), այնուամենայնիվ, առկա էին բազմաթիվ դժվարություններ՝ կապված հանրապետության և արտերկրի տարբեր տարածաշրջաններից լուրերի հայթայթման, մշակման, մեքենագրման, բազմացման ու տարածման, նաև՝ փոստ-հեռագրային տեխնիկայի անկատարության հետ:

Աշխատողները շուրջօրյա կապված ռադիոընդունիչին, արտերկրների ռադիոկայաններից տարբեր լեզուներով որսում էին միջազգային լուրեր, ընդունում հեռախոսագրեր, թարգմանում, մեքենագրում, խմբագրում թղթակից-գործակալներից, կազմակերպություններից ստացված նյութերը: Դրանք բազմացվում էին «ցիկլոստիլ» կոչվող սարքով, ապա փոստով կամ առձեռն ուղարկվում հայաստանյան, իսկ հուլիս կարևոր նյութերն անթել հեռագրով՝ արտասահմանյան բաժանորդներին:

ՀՀ Գ-ի նորանշանակ տնօրենի առաջին գործը լինում է պատշաճ տարածքի ձեռքբերումը, քանի որ ՀՀ խնամատարության նախարարության շենքում հատկացված մեկ սենյակում դժվար էր կազմա-

<sup>3</sup> Ռուսերենն այս հապավումը, ի սկզբանե, դարձավ գործածական և հետագայում այդպես էր անվանվում նաև պաշտոնական գրույթյուններում:



կերպել բնականոն աշխատանք: Ա. Նազարյանին հաջողվում է Աստաֆյան փողոցի մասնավոր մի տանը երկու սենյակ վարձել: Հարկ է լինում կատարել ՀՀԳ-ի կառուցվածքային բարեփոխումներ, ստեղծել արտաքին կապերի լայն շրջանակ:

Պաշտոնավարման առաջին իսկ շաբաթում Ա. Նազարյանը դիմում է վերադասին՝ Արտգործնախարարությունը՝ խնդրելով թույլ տալ մեկնել Թիֆլիս և Բաքու՝ տեղում ծանոթանալու Վրաստանի ու Ադրբեյջանի հեռագրական գործակալությունների աշխատանքի փորձին, նրանց հետ կազմակերպելու լրատվության փոխանակություն: Նախարարն ընդառնում է՝ հատուկ վկայականով նրան տալով գործելու լայն լրագործություններ, Թիֆլիսի և Բաքվի դիվանագիտական առաքելություններին հղված հեռագրերով էլ խնդրում ըստ ամենայնի աջակցել Նազարյանին:

Գործուղումից վերադառնալով՝ տնօրենը նախարարին տեղեկացնում է, որ լուրջ խոչընդոտ է անթեղ հեռագրակայանի բացակայությունը: Ըստ նրա՝ քանի դեռ Երևանը չունի իր սեփական հզոր կայանը, գործակալությունը, կտրված լինելով աշխարհից, ստիպված է լինելու միջազգային անցուղարձի մասին տեղեկությունները ստանալ երկրորդ աղբյուրից: Տվյալ պահին այդ աղբյուրը Վրաստանի հեռագրական գործակալությունն էր, որը, սակայն, մերժում է իր ստացած լուրերն անվճար փոխանակել ՀՀԳ-ի հետ: Ավելին, չի համաձայնվում նաև հայկական գործակալությանն ընդունել իբրև սովորական բաժանորդ: Հայաստանի ու նրա հարևան երկու նորահազմ երկրների միջև հեռագրական հաղորդակցության համար չկար «մամուլի արտոնյալ սակագին», ինչպես ընդունված է եվրոպական երկրներում: Վրաստանի հեռագրական գործակալությունն իր կառավարությանն առաջարկել է մտցնել «հեռագրական բառավճարի» մամուլի սակագին, որ 1–2 կոպեկից ավել չպիտի լինի, և վրացի գործընկերները կարծիք էին հայտնել՝ այդ հարցը դրական լուծում կստանա, եթե Հայաստանի պատվիրակությունը նույն հարցը բարձրացնի Անդրկովկասյան պետությունների համաժողովում: ՀՀԳ-ի կառավարիչը նախարարին խնդրում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ խնդրի շտապ լուծման համար: Հավանություն տալով Ա. Նազարյանի առաջարկությանը՝ նախարարը Թիֆլիսի հայկական դիվանագիտական առաքելությանը հանձնարարում է համապատասխան մարմինների հետ այդ հարցերի շուրջ բանակցել և արդյունքների մասին տեղեկացնել:

Թեև վերադասն արագորեն և դրականորեն է արձագանքել նորանշանակ տնօրենի օրեցօր աճող պահանջներին, այդուհանդերձ, կարճ ժամանակ անց կտրուկ փոխում է վերաբերմունքը նրա նկատմամբ: Անպատասխան է մնում Ա. Նազարյանի առաջարկությունը՝ պետականորեն բռնագրավել քաղաքի «Դրուժբա» սրճարանի վերնահարկը և հատկացնել ՀՀԳ-ին: Մեկ այլ պահանջ. պատճառաբանելով ՆԳՆ-ի տպարանի անորակ աշխատանքը, որի պատճառով ՀՀԳ-ի տեղեկագրերը տպագրվում են աղավաղված, անընթեռնելի

(այսպիսի բազմաթիվ տեղեկագրեր պահպանվել են արխիվում), իսկ «Կուլտուրա» տպարանում էլ դրանք տպագրելու ու բազմացնելու համար պահանջում են քառապատիկ վարձավճար՝ կառավարիչն առաջարկում է պետականորեն բռնագրավել «բացարձակապես սպեկուլյացիայով զբաղվող այդ ձեռնարկությունը» և հանձնել գործակալությանը: Հեռագրերի հաղորդման-ընդունման գործն էլ լավ հիմքերի վրա դնելու նպատակով, մինչև Երևանում անթել հզոր հեռագրատան գործարկումը, առաջարկվում է թույլ տալ օգտվելու Զինվորական նախարարության հեռագրակայանի հնարավորություններից:

Որքան էլ տրամաբանական էին առաջարկները, այդուհանդերձ, կառավարությունը ամենևին էլ հակված չէր հանուն ՀՀԳ-ի գնալ դժվար իրագործելի լուծումների:

Ներքին խնդիրներին զուգահեռ՝ վրացական և ադրբեջանական լրատվական գործակալություններն ամեն կերպ արգելքներ էին ստեղծում ինչպես տարածաշրջանի, այնպես էլ միջազգային իրադարձությունների մասին տեղեկությունները Հայաստան հաղորդելու կամ ՀՀԳ-ից ստացվող տեղեկագրերն իրենց բաժանորդներին հասցնելու գործում: Այդ նյութերի ընդունում-առաքումը, հատկապես Ադրբեջանում, ձգձգվել է, ենթարկվել գրաքննության, հաճախ էլ՝ ոչնչացվել են:

Առանձին վավերագրերից հայտնի է դառնում, որ Երևանում էլ վերադաս մարմինների կողմից սահմանափակումներ են մտցվում ՀՀԳ-ի գործողություններում: Հեռագրերի համար ծախսերը նվազեցնելու նպատակով հատուկ որոշմամբ պահանջվում է կրճատել մայրաքաղաքից հեռագրով հաղորդվող նյութերի քանակն ու ծավալը, ավելի շատ օգտվել փոստային ծառայություններից՝ միաժամանակ բարձրացնելով լուրերի օպերատիվությունն ու գաղափարական ուղղվածությունը: Սա վերադասի կողմից առաջին լուրջ, բայց ոչ նպաստավոր միջամտությունն է ՀՀԳ-ի գործերին, որով սահմանափակվում են լուրերն ամենաօպերատիվ հեռագրային ճանապարհով տեղ հասցնելու հնարավորությունները: Լուծում չի ստանում նաև քաղաքի լավագույն տպարանում մատչելի գնով տեղեկագրերի տպագրման հարցը: Ա. Նազարյանը ստիպված է լինում սեփական հնարավորություններով հաղթահարել եղած դժվարությունները:

Տեղեկագրերը տպագրելով «Կուլտուրա» տպարանում՝ ապահովելով դրանց պոլիգրաֆիական բարձր որակը, չնախատեսված ծախսերը հատուցելու նպատակով տպաքանակի մի մասը՝ 300 օրինակ, որպես լրատու-թերթիկ հանվում է վաճառքի՝ գինը մեկ ուրբի: Դա ընթերցողներին սեփական «թերթով» ներկայանալու՝ գործակալության առաջին փորձն էր:

Թերթելով ՀՀԳ-ի արխիվը՝ տեղեկագրերում հանդիպում ենք լուսաբանումներ բոլոր այն քայլերի ու ձեռնարկումների մասին, որոնք իրականացվում էին նորանկախ Հայաստանի իշխանություն-

ների կողմից երկրում առկա ազգամիջյան, սոցիալ-տնտեսական, հումանիտար խնդիրների հաղթահարման ուղղութիւնում:

Մասնավորապես, ՀՀ Գ-ի թողարկումներից տեղեկանում ենք, որ 1919 թ. Երևանում մեկնարկել են համալսարանի շենքի շինարարական աշխատանքները, իսկ մեկ այլ լուրով հայտնվում է, որ Երևանի համալսարանի կազմակերպիչ պրոֆեսոր Դ. Զավրիւք Թիֆլիսից հեռագրել է՝ համալսարանը կսկսի գործել ավելի շուտ՝ մինչև մայրաքաղաքում շենքի կառուցման ավարտը: Բացումը տեղի կունենա հունվարի 25-ին Ալեքսանդրապոլում: ՀՀ Գ-ն լուսաբանել է Հայաստանի այդ առաջին բուհի բացման հանդիսավոր արարողությունը: Լուրեր են հրատարակվել նաև Երևանում մատենադարանի, հանրային գրադարանի հիմնման, ինչպես նաև տնտեսական նշանակություն ունեցող ստեղծման ուղղութիւնում ձեռնարկված քայլերի մասին:

Մեկ այլ թողարկումից իմանում ենք, որ Ն Գ նախարարը շրջաբերական է ուղարկել իր կոմիսարներին և երկաթուղային կայարանների միլիցիայի պետերին՝ առաջարկելով ամենախիստ միջոցները ձեռնարկել արգելելու ու կանխելու Հայաստանի Հանրապետության սահմաններից ամեն տեսակ հնությունների դուրս բերումը: ՀՀ Գ-ի թողարկումներից մեկն էլ տեղեկացնում է կառավարության որոշման մասին՝ հանրապետությունում տոների սահմանման վերաբերյալ<sup>4</sup>:

ՀՀ Գ-ի ռեպորտաժներից ամբողջական ու մանրամասն պատկեր ենք ստանում պատմական այնպիսի իրադարձություններից, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետության ստեղծման առաջին տարեդարձին նվիրված տոնակատարությունը և Հայաստանի առաջին պառլամենտի ընտրությունները (1919 թ.), Խորհրդարանի առաջին նստաշրջանի բացումը:

Արտաքին և ներքին թշնամու դեմ մղված պայքարի դրվագները ևս իրենց արտացոլում են գտել ՀՀ Գ-ի 1919 թ. տեղեկագրերում: Այսպես, հունվարի 30-ի թողարկմամբ տեղեկացվել է. «Վերջին ժամանակներում թաթարական զինված բանդաներն ավելի ու ավելի են թշնամություն հանդես բերում Դավալուի շրջանում հայկական զինմասերի նկատմամբ: Նրանք կենտրոնացել են Խալիսա գյուղում և կրակ բացել մեր զորքերի վրա: Ապա ամրանալով Բեյուկ-Վեդիի բարձրություններում շարունակել են կրակ բացել: ՀՀ զինվորական մինիստրը կարգադրել է հայկական դիվիզիային՝ տարածքը մաքրել զինված բանդաներից, իսկ Արտգործմինիստրությունը հանձնարարվել է այդ դեպքերի մասին տեղյակ պահել Կովկասում բրիտանական զորահրամանատարությունը»:

Սակայն պարբերական բնույթ ստացած այս դեպքերը ինչ-ինչ պատճառներով հետագա ամիսներին հայկական լրատվամիջոցներում լայն լուսաբանում և մեկնաբանում չեն ստանում: Փոխարենը դրանց այլ կերպ են արձագանքում «Ազերբայջան» (Բաքու) և

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86:

«Գրուզիա» (Թիֆլիս) հակահայ թերթերը՝ իրենց ամենօրյա համարները լցնելով սուտ, մտացածին նյութերով, իբր, Հայաստանում թաթարների նկատմամբ գործադրվում են բռնություններ ու կոտորածներ, որ Բեյուկ-Վեդիի դեպքերում էլ մեղավորը հայերն են:

Դավալուի իրադարձությունների առնչությամբ տեղեկատվական իրարամերժ հոսքերը պատճառ են դառնում գործակալության աշխատանքների կազմակերպման վերլուծությունների: Վրաստանում ՀՀԳ-ի սեփական թղթակիցը գործակալության ղեկավարությունը հայտնում է, թե տեղի հայ հասարակությունը պահանջում է, որ Հայաստանի կառավարությունը մանրամասնորեն մեկնաբանի Դավալուի դեպքերը, ճշմարտությունը դարձնի հասարակության սեփականությունը: Գործակալության տնօրենը հեռագրի պատճենը կառավարությանն է ներկայացնում, մասնավորապես՝ նշելով, որ այս երևույթի ամենամեծ պատճառը մեր կառավարության և նրա տեղեկատու մարմնի՝ ՀՀԳ-ի (որին կարգադրված է ոչ մի բառ չհրապարակել այդ մասին) հիշյալ դեպքերի վերաբերմամբ պահպանած լուծությունն է:

Համամիտ լինելով գործակալության տնօրենի դիտարկումներին՝ Արտգործնախարարության մակարդակով պատրաստվում է Բեյուկ-Վեդիի դեպքերի վերաբերյալ պաշտոնական հայտարարություն, որը հրապարակվում է գործակալության հերթական թողարկմամբ: Այդ հաղորդագրությունն առաջ է բերում նախարարության և Վրաստանում նրա դիվանագիտական առաքելության պաշտոնյաների վրդովմունքը՝ տեղիք տալով ՀՀԳ-ի հասցեին ամենախիստ գնահատականների ու մեղադրանքների: Սկսվում է նման կարգի նամակների ու գրությունների հոսքը կառավարական մարմիններին, որոնց հեղինակները նորանոր պատճառներ են որոնում ընդդեմ Նազարյանի: Ի վերջո, գործակալության տնօրենի շուրջը ստեղծվում է անվստահություն միջոցով:

Արդյունքում հաստատվում է «ՀՀԳ-ի քննիչ» պաշտոնը՝ գրաքննությունների առաջին դրսևորումը ՀՀԳ-ի թողարկումների նկատմամբ: Քննիչի պաշտոնը ստանձնում է Ներսես Բաբայանը՝ գործակալության դեմ ակտիվ արտահայտվողներից մեկը:

Գրեթե միաժամանակ ՀՀԳ-ի վրա իր գրաքննչական իշխանությունն է փորձում հաստատել նաև ՆԳ նախարարությունը՝ պահանջելով, որ լույս տեսնող հեռագրերից, նախքան տպագրության տալը, մի օրինակ ուղակի նախարարություն՝ գրաքննության ենթարկելու համար: Հակառակ պարագայում խոստանում են ենթարկել «օրինական խիստ պատասխանատվության»:

Օղակը ՀՀԳ-ի, նրա տնօրենի շուրջ սեղմվում է թե վերևից, թե ներքևից: Բաց թողնելով այդ ողջ գործընթացի մանրամասները՝ նշենք, որ, ի վերջո, վճռվում է ՀՀԳ-ի տնօրենի պաշտոնաթողության հարցը:

Ա. Նազարյանը հեշտությամբ չի զիջում իր դիրքերը և անցնում է հակահարձակման: Նա նախ աշխատակազմին վտարում է այն

տարածքից, որը վարձակալել էր իր ընտանիքի համար և, մինչև նրա վերադարձը Երևան, ժամանակավորապես տրամադրել գործակալությունը: Այդ բնակարանի շուրջ սուր վիճաբանություններ, անգամ դատական քաջքշուկ է սկսվում, որից Նազարյանը, այնուամենայնիվ, հաղթող է դուրս գալիս:

ՀՀԳ-ն կանգնում է նոր գրասենյակ գտնելու, իսկ նրա վերադասը՝ Արտգործնախարրությունը, նոր կառավարիչ որոնելու խնդիրների առջև:

Նախարարի կարգադրությամբ գործակալության ղեկը՝ մինչև նոր տնօրինություն, հանձնվում է տեղեկատու բաժնի վարիչ Վարդգես Ահարոնյանին: Վերջինս, որը եռանդուն հանդես էր գալիս նախկին կառավարիչի ամեն քայլի դեմ՝ այս պաշտոնում դիմանում է միայն 10 օր: Վերադասի որոշմամբ նրան հաջորդում է մյուս ընդգրկմասուսը՝ «ՀՀԳ-ի քննիչ» Ն. Բաբայանը:

Պաշտոնավարման մեկ ամիսը չբոլորած՝ Բաբայանը նախարարություն է ներկայացնում գործակալության տեխնիկատեխնոլոգիական լուրջ թերությունների վերաբերյալ գրություն՝ նշելով, որ լրատվությունը տպագրվում է անմաքուր, երբեմն անընթեռնելի, բացթողումներով՝ արժանանալով բաժանորդների դժգոհություններին: Պատճառները, ըստ տնօրենի, բազմազան են. մոմաթերթերը թարմ չեն, նորերը գտնելը շատ դժվար է, գրամեքենայի տառերը վատ են պատրաստված: Հարկ է ունենալ երկու գրամեքենա, որի համար միջոցներ չկան: Մաշվել է նաև «ցիկլոստիլի» ցանցը: Չկա հատուկ մուր, փոխարենը օգտագործվում է տպարանային հասարակ մուրը, որի հետևանքով տառերը ստացվում են անընթեռնելի, իսկ էջերի չորացումը տևում է մի քանի ժամ: Ինչ վերաբերում է տեղեկագրերը տպարանում տպագրելուն և բազմացնելուն, ապա այնտեղ էլ չեն բավարարում արժիճե տառերն ու այլ նյութեր:

Նոր կառավարիչը այլ հարցեր էլ է առաջ քաշում, այդ թվում փոքր-ինչ հարմարավետ գրասենյակի ձեռք բերում: Քանի որ ՀՀԳ-ն հնարավորություն չունի երկրի բոլոր կարևոր կետերում ունենալ իր գործակալ-թղթակիցները, ուստի առաջարկվում է, որ արտաքին և ներքին գործերի նախարարությունները գավառների իրենց կոմիսարներին հանձնարարեն տարածքներում տեղի ունեցող իրադարձությունների մասին անմիջապես հաղորդել գործակալությունը՝ այդ կերպ օգնելով հնարավորինս ամբողջական և ժամանակին լուսաբանելու երկրի ներքաղաքական կյանքը: Նշվում են այլ դժվարություններ ևս, որոնց մասին ժամանակին տեղյակ էր պահում նաև Ա. Նազարյանը:

Հարկ է նկատել, որ, չնայած բազում օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններին, ՀՀԳ-ն, այնուամենայնիվ, կարողանում է հնարավորինս ապահովել երկրի ներքին ու արտաքին քաղաքական կյանքի լուսաբանումը, մատուցում կարևոր լուրեր նաև աշխարհի անցուղարձի մասին: Ինչ վերաբերում է թուրքիային, ապա գործակալությունն ամեն ջանք գործադրում է անհրաժեշտ նյութեր քաղե-

լու հենց այդ երկրի լրատվական միջոցներից՝ կապված Հայոց ցեղասպանության հեղինակների, մյուս ջարդարարների ճակատագրի, դատավարությունների ընթացքի մասին:

Հանրապետությունում ստեղծված թվացյալ հարաբերական անդորրը թույլ է տալիս կառավարությունը կրկին անդրադառնալու իր պաշտոնական լրատվական գործակալությունը, որի դերը գնալով մեծանում էր ինչպես երկրի ներսում ձեռնարկված քաղաքական ու տնտեսական կարևոր քայլերի մասին հանրությունը տեղյակ պահելու, նրա ուժերը համախմբելու, այնպես էլ այլ երկրների հեռագրական գործակալությունների հետ փոխադարձ կապերը զարգացնելու, վերջիններիս և արտասահմանյան ռադիոկայանների միջոցով աշխարհաքաղաքական նշանակություն լուրերի ստացումն ապահովելու, Հայաստանն արտաքին աշխարհին ներկայացնելու գործում:

Նախարարների խորհուրդը 1920 թ. ապրիլի 4-ին ընդունում է ՀՀԳ-ի մասին երկրորդ օրենքը, որով ընդլայնվում են նրա իրավունքները, բարձրանում հեղինակությունը հասարակական-քաղաքական և լրատվական դաշտում: Օրենքը խորհրդարանի կողմից հաստատվում է ապրիլ 9-ին:

ՀՀԳ-ի կարգավիճակը սահմանվում է որպես կառավարությունը կից, նախարարների խորհրդի անմիջական հսկողության տակ գործող, վերջինիս հրահանգներով առաջնորդվող: Հնարավորություն է տրվում մայրաքաղաքից և երկրից դուրս ունենալ բաժանմունքներ կամ գործակալներ, կարող է անմիջական համաձայնություն մեջ մտնել ուրիշ հեռագրական գործակալությունների հետ՝ դրանցից տեղեկություններ ստանալու նպատակով: ՀՀԳ-ին իրավունք է վերապահվում պետական հեռագրով ամեն օր տալ անվճար մինչև 600 բառով հեռագիր թե Հայաստանի սահմաններում, թե արտասահման: Խորհրդարանի նստաշրջանների ընթացքում բառերի այս քանակը կարող է կրկնապատկվել, եթե գործակալությունը հաղորդում է օրենսդիր մարմնի նիստի հաշվետվությունը: Նշված բառերից ավելիի համար վճարվում է գոյություն ունեցող հեռագրավճարի 50 %-ը: Անվճար առաքման արտոնություն է տրվում նաև Հայաստանի շրջաններից թղթակիցների՝ գործակալությանն ուղարկած հեռագրերի, վերջինիս կողմից իր բաժանմունքին և գործակալներին հղած հեռագրերի, փոստային առաքումների պարագայում: Այլ արտոնություններից բացի՝ արգելվում է ՀՀԳ-ի հեռագրերի արտատպումը գործակալության տեղեկագրերի լույս տեսնելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում: Նոր օրենքով վերացված է համարվում Հայաստանի Խորհրդի կողմից 1918 թ. դեկտեմբերի 18-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հեռագրական գործակալություն հիմնելու մասին» օրենքը:

Այս փաստաթղթից բացի՝ կառավարությունը 1920 թ. երկու այլ օրենք էլ է ընդունում՝ ուղղված պետական լրատվական գործակալության ֆինանսատեխնիկական բազայի ամրապնդմանը: Ապրիլի 15-ի նիստում լսվում է Ալ. Խատիսյանի զեկուլյցը ՀՀԳ-ի ենթակա-

յուլիան հարցի շուրջ: Որոշվում է, որ գործակալությունը հետ այսու առանձին շահանորեն ենթարկվում է մինիստր-նախագահին<sup>5</sup>:

Կառավարության համար, սակայն, բաց էր մնում գործակալությունից տնօրենի հարցը, քանի որ նախկին ղեկավարը տեղափոխվել էր այլ պաշտոնի: Որպես թեկնածու քննարկվում է վրաստանաբնակ Հ. Քալանթարյանը՝ մեկն այն հայ մտավորականներից, որոնց նկատմամբ 1919–1920 թթ. վրաստանում սկսվել էին զանգվածային հալածանքներ՝ հակավրացական քարոզչության մեղադրանքով: Արխիվային նյութերում պահպանվել են Քալանթարյանին վերաբերող երկու երկտող-նամակ, որոնցից մեկը հասցեագրված է Ս. Վրացյանին, մյուսը՝ Ալ. Խատիսյանին՝ երաշխավորելով նրա թեկնածությունը ՀՀԳ-ի կառավարչի պաշտոնում: Երաշխավորող երկտող-նամակը ստորագրել է Սուրենը, ով հասարակական-քաղաքական գործիչ, որոշ ժամանակ նաև «Հորիզոն» թերթի տնօրեն Համբարձում Մելիքյանի երեք որդիներից մեկն էր: Ս. Վրացյանը դրական է արձագանքում Հ. Քալանթարյանի թեկնածությանը, և վարչապետը, ով բարձր է գնահատել Վրացյանի լրագրական ու քաղաքական աշխատանքի երկար տարիների վաստակը, այս երկտողի տակ նույն օրն իսկ մակագրում է՝ «Կցել Արմենտագի գործին», ասել է թե՛ Հ. Քալանթարյանն ընդունված է:

Հ. Քալանթարյանը (չհաջողվեց պարզել նրա անունը, քանզի լրատվական բոլոր թողարկումների ու պաշտոնական գրությունների տակ նա ստորագրել է՝ Հ. Քալանթարյան) 1920 թ. ապրիլից ստանձնելով գործակալության ղեկը՝ ձեռնամուխ է լինում գործնական քայլերի՝ ընդլայնելու համար ծառայության գործունեության շրջանակները, կատարելագործելու տարբեր օղակների աշխատանքները:

ՀՀԳ-ի նոր կառավարիչն իր պաշտոնավարման առաջին ամսում արտգործնախարարին տեղեկացնում է, որ վրաստանի թերթերում Թուրքիայի վերաբերյալ օպերատիվ շատ նյութեր են հրատարակվում, որոնք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև Հայաստանի համար, սակայն դրանց հայթայթման աղբյուրները գործակալությանը հասանելի չեն: Այդ նյութերը վրաստանի թերթերը ստանում են Թիֆլիսում Հունաստանի թագավորական առաքելությունից, որոշ նյութեր էլ արիքարկվում են Փրանսիական ռազիոհաղորդումներից: Սակայն Հայաստանն այդ հնարավորությունը չունի, քանի որ Երևանի ռազիոկայանը գուրկ է չխլացնող ռազիոընդունիչից, ծառայությունում էլ չկան փորձառու ռազիոալիքարկողներ: Ըստ կառավարիչի՝ խնդիրը կլուծվի, եթե Թիֆլիսի ռազիոկայանն օրվա որոշ ժամերի հիշյալ ռազիոկայանների հաղորդումներն ընդունի Հայաստանի համար: Այդ գործը կարելի էր իրականացնել վրաստանի արտգործնախարարի միջնորդությամբ, որին պետք է դիմի Հայաստանի արտգործնախարարությունը: Հ. Քալանթարյանը

<sup>5</sup> Նույն տեղում, գ. 481:

գտնում է, որ եթե վրաց կառավարությունը ռադիոհեռագրիչների սղուծյան պատճառով մերժի այդ խնդրանքը, ապա կարելի է առաջարկել իրենց մոտ ունենալ լրացուցիչ մեկ հեռագրիչ՝ Հայաստանի խորհրդարանի կողմից վարկավորվող Երևանի ռադիոկայանների լսորդ-ձայնորսիչների հաշվին:

Առաջարկությունը, սակայն, ընթացք չի ստանում վրացական կողմի անհամաձայնության պատճառով: Քալանթարյանն առաջ է քաշում նաև Երևանի ու Բասրայի ռադիոկայանների միջև կապ հաստատելու հարցը, բայց պարզվում է, որ վերջինս խիստ ծանրաբեռնված է ամբողջ օրվա ընթացքում՝ միայն Բաթումի հետ այն օրական կապված է լինում 12 ժամ:

Այնուամենայնիվ գործակալության տնօրենը գտնում է լուրերի հայթայթման այլ աղբյուրներ: Վկայությունը այն բազմաբովանդակ տեղեկագրերն են, որ ՀՀԳ-ն պարբերաբար մատուցել է հանրապետությունում լույս տեսնող թերթերին, բաժանորդ անհատներին ու կազմակերպություններին՝ հանրությանը տեղյակ պահելով տարածաշրջանում, աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին:

Կառավարությանը ներկայացրած մի զեկուցագրում Հ. Քալանթարյանը փաստում է, որ ներքին ու արտաքին ամենագլխավոր հարցերի վերաբերյալ տրվող ոչ բավարար լրատվության, ինչպես և շատ տեղերում միջազգային խոշոր իրադարձությունների մասին տեղեկատվության լրիվ բացակայության պատճառով լայն զանգվածները սնվում են ամեն կարգի կեղծ, ոչ ստույգ լուրերով, որը ստեղծում է տագնապալի իրավիճակ: Լրատվության քաղցր վերացնելու համար ՀՀԳ-ի տնօրենն առաջարկում է Հայաստանը ծածկել, այսպես կոչված, պատի կամ պլակատային թերթերով՝ դրանց կազմակերպումը վերապահելով գործակալությանը: ՀՀԳ-ն ի զորու էր երկրի ներքին ու արտաքին կյանքի վերաբերյալ իր տրամադրությունների տակ եղած լուրերից կազմել համառոտագրված տեղեկագրեր և հեռագրով կամ փոստով հասցնել տեղական ղեկավարներին, բնակավայրերին: Դրա համար կպահանջվեր, որպեսզի ներքին գործերի և հաղորդակցությունների ղեկավարները հատուկ շրջաբերականներով իրենց ենթակա հաստատություններին և պաշտոնատար անձանց տեղեկացնեն ՀՀԳ-ի այդ տեղեկատուների առնչությամբ իրենց պարտականությունների մասին: Առաջարկվում է նաև հանձնարարել, որ դրանց նյութերը տպագրվեն մեծ չափի թերթերի վրա և փակցվեն աչքի ընկնող տեղերում:

Կառավարությունը հաստատում է ՀՀԳ-ի տնօրենի այս զեկուցագիրը և հատուկ կարգադրություն է իջեցնում բոլոր խոշոր գործասերին ու կայագործներին՝ պատրաստվել ընդունելու «պատի թերթերը»՝ ծախսերը դնելով գինվորական նախարարության վրա:

Այս գաղափարը, սակայն ինչպես երևում է, կյանքի չի կոչվում, և իրականացվում է ավելի ուշ՝ արդեն խորհրդային կարգերի հաս-



տատման առաջին տարիներին՝ որպես գործակալության լուրերի տարածման արդյունավետ եղանակներից մեկը:

Մինչ ՀՀԳ-ն մշակում էր իր նոր ռազմավարությունը, հանրապետությունից գլխին սկսում են սև ամպեր կուտակվել: 1920 թ. առաջին ամիսների խանդավառ հանդիսություններին, որի վերջաբանը մայիսի ամսվան տոնակատարությունն էր, հաջորդում են ուժգին ցնցումներ. Մայիսյան ապստամբություն, ազգամիջյան նոր ընդհարումներ, թուրքերի կողմից պատերազմական գործողությունների վերսկսում, հայ բնակչության դեմ կազմակերպված նոր կոտորածներ:

Հարևան երկրներից ստացվող լուրերը տազնապալի են դառնում: ՀՀԳ-ի Բաքվի ռազմական հաղորդումներից ալիքարկված մի նյութից պարզվում է, որ Բաքուն հայտարարվել է սովետական, իսկ Ադրբեյջանի բնակչությունը խանդավառություն է ընդունել կոմունիստների մուտքը երկիր, որը եղել է առանց արյունահեղության:

Ադրբեյջանում խորհրդային կարգերի հաստատումը, ինչպես և սպասվում էր, անմիջապես իր անդրադարձն է ունենում Հայաստանի ու Վրաստանի վրա: Ակտիվանում են Հայաստանի նկատմամբ սահմանային նկրտումներն ու հարձակումներն Ադրբեյջանի կողմից: ՀՀԳ-ն իր տեղեկագրերում հանգամանորեն անդրադարձել է այն իրողություններին, որոնք սպառնում էին Հայաստանի Հանրապետության անկախությանը: Այդ առումով առաջին հարվածներից մեկը բոլշևիկների կազմակերպած Մայիսյան ապստամբությունն էր, որն անմիջապես հաջորդեց մայիսի ամսվան տոնակատարությանը:

Մայիսի 1-ը Երևանում տոնվել է մեծ շուքով, որին մասնակցել են մեծ բազմություն, երկրի քաղաքական բոլոր հոսանքները: Տոնահանդեսից և գորահանդեսից հետո կառավարության շենքի առջև կայացել է հրապարակային ժողով, ապա՝ Երևանի նոր կայարանի հանդիսավոր բացումը: Բայց այդ ընդհանուր խանդավառությունը մթազնել էր արդեն խորհրդային դարձած Ադրբեյջանի վերջնագրի, որով Հայաստանի Հանրապետությունից պահանջվում էր երեք օրվա ընթացքում հայկական ուժերից ազատել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Եվ հենց տոնական այդ հանդիսության ժամանակ էլ առանձին խմբավորումների կողմից փորձեր են արվում այդ վերջնագրին տալ բոլշևիկյան բնույթ, հնչել են հակակառավարական ելույթներ:

Ստեղծված իրավիճակում մայիսի 5-ին Ալ. Խատիսյանի կառավարությունը հրաժարական է տալիս: Խորհրդարանի արտակարգ նիստում կազմվում է նոր կառավարություն՝ Համո Օհանջանյանի գլխավորությամբ: Հանդես գալով հայտարարությամբ և ներկայացնելով պահի դրամատիկ վիճակը՝ նա Հայաստանի քաղաքացիներին կոչ է անում համախմբվել կառավարության շուրջը:

Կառավարությունը, ի վերջո, հաջողվում է ճնշել Ալեքսանդրապոլի, Կարսի ապստամբներին: Պայքարը շարունակվում է արդեն Բաքու-Երևան հեռագծով, ռազմագրերով՝ փոխադարձ լուրջ մեղադրանքներով ու սպառնալիքներով:

Մայիսյան այս դեպքերը համարժեք արտացոլում չեն գտել ՀՀԳ-ի թողարկումներում: Կան միայն հատուկենտ նյութեր: Ենթադրվում է, որ, ինչպես Դավալուի շրջանում թաթարական զինված ընդհարումների ժամանակ, այս դեպքում ևս քաղաքական նկատառումներով հանդես է բերվել որոշ վերապահում՝ հանրութայան իրարանցումից զերծ պահելու մտադրությամբ:

Սակայն հետապստամբական արձագանքներին արդեն ՀՀԳ-ն անդրադարձել է շատ ավելի հանգամանորեն: Սովետական Ռուսաստանի՝ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ ՌԽՍՀ արտգործնախարար Գ. Չիչերինի 1920 թ. հուլիսի 20-ի նոտայի կապակցությամբ հանրապետության քաղաքական տարբեր կուսակցություններ, ընդհանրապես դեմ չլինելով նման հարաբերությունների հաստատմանը, այնուամենայնիվ գտնում են, որ անվերապահորեն չի կարելի ընդունել այդ առաջարկը: ՀՀԳ-ի կազմած մամուլի տեսությունում ակնառու ներկայացվել են տարբեր կուսակցությունների նկատառումները: Այսպես, Ժողովրդական կուսակցության անդամներն իրենց «Ժողովուրդ» թերթում գրել են. «... Բարեկամության մասին սովետական կառավարության գեղեցիկ խոստումների հետևում փաստորեն թաքնված են իրականության աղաղակող փաստեր: Չիչերինը մինչև այժմ ոչ միայն չի օգնել, որպեսզի Արևմտահայաստանի կամ ինչ-որ վիճելի տարածք միացվի մեր հանրապետությանը, այլ, ընդհակառակը, փաստերը ցույց են տալիս, որ բոլշևիկյան գործերը բռնի կերպով մեզանից խլեցին Ղարաբաղն ու Զանգեզուրը: Իրողությունը խոսում է այն մասին, որ Քեմալը առ այսօր չի դադարեցնում իր հարձակումները Հայաստանի վրա, իսկ բոլշևիկների կողմից Ադրբեջանը նվաճելու պահից սկսած ևս ոչ միայն չվերացվեցին պատիժներն ու հարձակումները, այլ, ընդհակառակը, բոլշևիկները մեր դեմ զինեցին նաև Հայաստանի բոլշևիկներին»<sup>6</sup>: Ավելին, սովետական իշխանությունների ագրեսիվ քաղաքականությունը արդարացնելու համար նրանք իրենց մամուլում առաջ են քաշում մեղադրանքներ՝ ընդդեմ «դաշնակիցների»: «Թող հայտնի լինի բոլշևիկներին, որ Հայաստանի Հանրապետությունը պատկանում է ոչ թե առանձին ինչ-որ կուսակցությունների, այլ ամբողջ հայ ժողովրդին: Եվ այսօրվա կառավարությունը, որքան էլ փորձենք քննադատել նրան, հանդիսանում է ժողովրդական իշխանություն, և միայն հայ ժողովրդին է վերապահված իր ներքին գործերին միջամտելու իրավունքը: Եվ դաշնակցականներին ուղղված յուրաքանչյուր քայլ պետք է համարվի ուղղված՝ ընդդեմ մեր կառավարության, և պետք է ժողովրդի կողմից գնահատվի որպես անկախ երկիրը ոչնչացնելու փորձ, որպես ժողովրդի անկախ լինելու կամքի դեմ թշնամական գործողություն: Հայաստանի և Ռուսաստանի միջև բարիդրացիական հարաբերությունները կարող են հենվել:

<sup>6</sup> Նույն տեղում, գ. 454:

1. Եթե Ռուսաստանը անվերապահորեն ընդունի Հայաստանի անկախությունը:

2. Մեզ վերադարձնի Զանգեզուրը և Ղարաբաղի հայկական մասը:

3. Դադարեցնի հարձակումները Հայաստանի վրա Ադրբեջանի կողմից:

4. Հրաժարվի Քեմալի հետ կնքած պայմանագրի այն կետերից, որոնք ուղղված են ընդդեմ Հայաստանի շահերի:

5. Լիովին հրաժարվի մեր գործերին խառնվելուց և այն տարրերի հետ համագործակցելուց, որոնց որպես մեր ներքին թշնամիներ կաթեցնում են մեր հանրապետության վրա:

Եթե սովետական Ռուսաստանը կընդունի մեր այս պահանջները, այդ դեպքում մենք մեզ մոտ կընդունենք սովետական իշխանության դիվանագիտական ներկայացուցչին»:

Մամուլի տեսություն մեջ նշված է, որ գրեթե նույն դիրքերից են հանդես եկել նաև ռամկավարները՝ «Հայաստանի ձայն», դաշնակցականները՝ «Հառաջ» թերթերում՝ ընդգծելով Զիչերինի անհամոզիչ խոսքը, «որի ամպագոռգոռ պարզամիտ արտահայտություններին լիովին հակասում է սովետական իշխանության վարած իրական քաղաքականությունը: Հայտարարում է, որ, իբր, Հայաստանի նկատմամբ տածում է ամենաջերմ զգացմունքները, մինչդեռ Քեմալ փաշայի հետ նրա դաշինքը խարդախ պայմանագիր է՝ ուղղված Հայաստանի դեմ: Սովետական Ռուսաստանի գործիչները, ավելի ճիշտ Քեմալ փաշայի բարեկամները, փաստորեն, նորահայտ իմպերիալիստներ են, որոնք նոր մահափորձ են նյութում հայ բանվորագյուղացիության նկատմամբ: Սովետական Մոսկվան, որը կեղծավորաբար խոսում է համաշխարհային պրոլետարիատի անունից, փաստորեն, վարում է արյունարբու իմպերիալիզմի քաղաքականություն, որը ոչնչով չի տարբերվում նախորդի՝ ցարիզմի քաղաքականությունից»<sup>8</sup>:

Մինչ Մոսկվան Քեմալի հետ ընկեր-բարեկամ էր խաղում, թուրք-թաթարները շարունակում են իրենց վայրագությունները հայ ազգաբնակչության նկատմամբ: Այդ են վկայում ՀՀԳ-ի ինչպես այդ օրերի, այնպես էլ տարեսկզբյան տեղեկագրերի բազմաթիվ նյութեր<sup>9</sup>:

... Ճնշելով Մայիսյան ապստամբությունը՝ Հայաստանի կառավարությունը շարունակում է երկրի վերաշինության ուղղված իր ձեռնարկումները: Հունիսի 10-ին ընդունվում է Հայաստանի անկախության փոխառության մասին օրենքը: 6 տոկոսով 20 մլն ամերիկյան դոլարի անվանական գումարի պետական փոխառությունը, ինչպես նշվել է օրենքում, նպատակ ունի ապահովել հանրապե-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում:

տուժյան արդյունաբերական ուժերը, տնտեսության վերականգնումը և երկրի թղթագրամների ֆոնդը:

ՀՀԳ-ն ընդգրկվում է այդ նախաձեռնությունում, պարբերաբար հանրությանը ներկայացնելով, թե ինչպես է իրականացվում պետական այդ կարևոր ձեռնարկը: Արդեն օգոստոսի 3-ի տեղեկագրում ներկայացվում է պետական փոխառությունը բաժանորդագրված մի շարք անձանց ու կազմակերպությունների ցուցակը: Բաժանորդագրությունը ընդհանուր գումարն արդեն հասել էր 37,5 մլն ռուբլու, որից 10 միլիոնը Երևանի քաղաքային ինքնավարության կողմից: Բաժումից ոմն Չիլինգարյան բաժանորդագրվել է 1,5 մլն, Խալափյան «Սագո» ֆիրման՝ 3 մլն ռուբլի:

Սակայն, ինչպես այս, այնպես էլ ուրիշ այլ ձեռնարկումներ մնում են անկատար. երիտասարդ հանրապետության շուրջ ստեղծված թշնամական օղակը գնալով սեղմվում է: Հայաստանի կառավարությունը ջանքեր է գործադրում պահպանելու իր իշխանությունը: Ներքին խռովություններին, բոլշևիկյան ճնշումներին ավելանում է նաև Թուրքիայի սանձազերծած նոր պատերազմը: Եվ դաշնակցական կառավարության վերջին կաբինետին վիճակված էր իշխանությունը հանձնել բոլշևիկներին, որոնց թիկունքում Ռուսաստանն էր, որի 11-րդ կարմիր բանակն արդեն երկրի սահմաններում էր:

Ինչ վերաբերում է ՀՀԳ-ին, ապա նրա աշխատակազմն ինչպես այդ դրամատիկ օրերին, այնպես էլ իշխանափոխության առաջին շաբաթներին շարունակել է իր գործունեությունը Հ. Քալանթարյանի ղեկավարությամբ՝ իր տեղեկագրերում վավերացնելով երկրի կյանքի ընդհանուր պատկերը: Այդուհանդերձ, լրատվական այդ մարմինը, որ Հայաստանի առաջին Հանրապետությանը ծառայել էր գրեթե երկուսուկես տարի, նույնպես ապրում է իր հոգեվարքը:

Ամփոփելով ՀՀԳ-ի աշխատանքն առաջին Հանրապետության օրոք՝ կարելի է ասել, որ այն եղել է հայ ժողովրդի պատմության մի փոքր ժամանակաշրջանի՝ 1919–1920 թթ. վավերագիրը:

1918 թ. հիմնադրված Հայաստանի հեռագրական գործակալությունը վավերագրողի ու տեղեկացնողի առաքելությունը հետագայում փոխանցեց իր իրավահաջորդին՝ Հայաստանի երկրորդ և երրորդ հանրապետություններում գործած պետական լրատվական գործակալությանը, որն այսօր էլ գործում է «Արմենպրես» անվամբ:

## СОЗДАНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ГОСУДАРСТВЕННОГО ИНФОРМАЦИОННОГО АГЕНТСТВА АРМЕНИИ (1918 – 1920 гг.)

ГРАЙР ЗОРЯН

Резюме

Законом, принятым Национальным советом Армении 18 декабря 1918 г., было основано первое армянское государственное

информационное агентство – Армянское телеграфное агентство (АрмТАГ). До этого информационное обеспечение независимой страны, с некоторыми ограничениями, осуществляла специальная служба – Информбюро, созданная 3 июля 1918 г. решением Национального совета Армении при армянской дипломатической миссии в Грузии и ставшая прототипом АрмТАГ-а, содействуя формированию последнего.

Нелегким был путь создания и становления АрмТАГ-а: свою деятельность оно развернуло в сложнейший для независимой Армении общественно-политический и социально-экономический период, в крайне неблагоприятных гуманитарных и материально-технических условиях. Тем не менее, благодаря последовательности правительства и усилиям преданных специалистов АрмТАГ-у удалось стать летописцем краткого промежутка истории армянского народа (1919–1920 гг.). В архивах агентства множество примечательных документальных материалов, представляющих судьбоносные для Первой Республики Армения геополитические события.

#### THE ESTABLISHMENT AND ACTIVITIES OF THE STATE MEDIA AGENCY OF ARMENIA (1918–1920)

HRAYR ZORYAN

##### Summary

The First Armenian State Media Agency – the Armenian Telegraphic Agency (ArmTAG) was founded by the law passed at the National Council of Armenia as of December 18, 1918. Before that, the special service – the Information Bureau, created adjunct to the Armenian Diplomatic Mission in Georgia by the decision of 3 July 1918 of the National Council of Armenia implemented the provision of media of the newly independent country with certain limitations and became the prototype of the ArmTAG, promoting the formation and establishment of the latter.

The State Media Agency implemented its activities during the public, political, social-economic hard period for Armenia, in the human, material, technical extremely scanty conditions. Nevertheless, due to the persistence of the government and the devoted specialists' efforts, the ArmTAG succeeded to become the chronicler of the history of the Armenian people for the short interval of 1918–1920. In its archives the Agency left factual remarkable numerous materials which present the geopolitical events of crucial importance for the First Republic of Armenia.

---

---

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
М. ГОРЬКОГО

## МАКСИМ ГОРЬКИЙ И АРМЯНСКАЯ ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ

РОБЕРТ БАГДАСАРЯН

В истории русско-армянских литературно-культурных и общественных отношений первой половины XX века великий русский писатель Алексей Максимович Пешков — Максим Горький (1868—1936) — мощная и знаковая фигура, без которой эти связи невозможно представить и оценить. По сути, Горький находился в авангарде этого благородного и плодотворного сближения российского общества с армянским, от него, собственно, и пошла советская летопись литературно-культурных отношений Армении и России.

Связи Горького с армянской литературой, представителями армянского народа и, в частности, интеллигенцией берут начало в 90-х годах XIX в. и продолжаются до конца его жизни. Он живо интересовался многими сторонами жизни армян — историей, культурой, экономикой, бытом и традициями. Выдающийся мастер прозы был знаком с рядом видных армянских писателей — А. Ширванзаде, В. Терьяном, А. Акопяном, Д. Демирчяном и др.

Горький был знаком с армянской литературой, естественно, в переводах, иногда и неудачных, и тем не менее, она его всерьез заинтересовала. Знакомство это зародилось еще в 1891—1892 гг. в Тифлисе, где жила в основном армянская элита Кавказа — видные писатели, известные публицисты, другие яркие деятели культуры.

В конце 90-х годов XIX в. и позднее армянская периодическая печать широко представляла творчество М. Горького на своих страницах. Журналы «Тараз» и «Лума» в 1900—1902 гг. печатают ряд переводов произведений Горького, появляются статьи литератора и общественного деятеля М. Берберяна, посвященные жизни и литературной деятельности русского писателя. К 1906 г. армянские читатели уже знали М. Горького по многим переводам его рассказов («Макар Чудра», «Челкаш», «Двадцать шесть и одна», «Старуха Изергиль» и др.). Произведения русского выразителя дум простых людей, поистине уникального пролетарского писателя, переводили Ов. Туманян, Нар-Дос, М. Арази и др.

Горькому были близки жизнь и интересы всех закавказских народов — ведь, живя некоторое время в Тифлисе, он сталкивался с проблемами, существовавшими здесь между людьми различных национальностей, разных слоев общества. Колониальная политика самодержавия — «разделяй и властвуй» — довела народы Закавказья до кровопролитных столкновений 1905—1906 годов. Царская администрация искусно инспирировала межнациональные конфликты, пытаясь таким образом сбить революционный подъем народных масс в разных частях огромной империи. Так, особого накала достигли противоречия между армянами и кавказскими татарами (азербайджанцами)...

М. Горький, одним из первых среди русских видных деятелей, публикует в 1905 г. пламенное письмо, в котором со свойственной ему решимостью резко бичует царизм, ввергнувший народы в бойню ради своих собственных шовинистических интересов. Это письмо является одним из блестящих дореволюционных выступлений Горького. Вот как отзывается в нем писатель о Закавказье: «...так горячо люблю эту прекрасную страну, олицетворение грандиозной красоты и силы, ее горы, окрыленные снегами, долины и ущелья, полные веселого шума быстрых, певучих рек, и ее красивых, гордых детей. Бывая на Кавказе, я всюду видел, как дружно и мирно работали рядом грузин с татаринком и армянином, как детски весело и просто они пели и смеялись, и так трудно поверить, что эти простые, славные люди ныне тупо и бессмысленно избивают друг друга, подчиняясь подстрекающей их злой и темной силе»<sup>1</sup>.

В статье «О кавказских событиях» (1905) Горький заклеил царское самодержавие, раскрыв сущность его политики, в частности, в разжигании армяно-татарской резни в Закавказье. Об этом русский писатель писал в памфлете «Русский царь» из цикла «В Америке» (1906): «Армяне на Кавказе перебиты руками верноподданных татар. Но этому событию был придан вид вражды национальной, и нужно было верить, что так оно и есть, что это — правда. Но как могло случиться, что армяне и татары, века прожившие вместе... вдруг сделались непримиримыми врагами? Что ж тут мудреного? ... Когда султан турецкий заставил курдов и своих солдат уничтожить армян — их уничтожили десятки тысяч ...»<sup>2</sup>.

Как видим, Горький следил не только за судьбой кавказских армян. Обеспокоенный положением западных армян, на рубеже

---

<sup>1</sup> М. Горький. Ранняя революционная публицистика. М., 1938, с. 117.

<sup>2</sup> Горький и Армения. Статьи, письма, воспоминания и «хроника». Ереван, 1968, с. 27.

1912–1913 годов он обратился к Ленину, среагировавшему в ответ письмом, в котором «вождь мирового пролетариата», в частности, заметил: «Насчет дашнаков я ничего не слыхал. Но считаю слухи вздорными (речь о возможном восстании армян под руководством партии Дашнакцутюн в Западной Армении: об этом сообщалось в статье «Турецкие армяне и Россия» в газете «Русское Слово» от 9 января 1913 г. – А. З.). Это правительством пущено, которое хочет скушать Западную Армению»<sup>3</sup>.

Национальный вопрос был одним из узловых идейных вопросов, сблизивших Горького с большевиками, – в осуществлении их национальной политики великий правдолюб искренне видел спасение всех культурных малых народов России, их светлое будущее. Впрочем, как известно, у писателя позднее были серьезные разногласия с Лениным, сильное разочарование его политикой.

... Вопросы изучения и распространения национальной литературы с давних пор занимали М. Горького. Еще в начале 1900-х годов он намеревался издавать на русском языке сборники литератур народов России. Осуществление этой программы с самого начала столкнулось с серьезными препятствиями, однако писателю все же удалось издать «Сборник армянской литературы» (Петербург, 1916). К участию в переводе материалов для книги Горький привлек видных русских поэтов и писателей. Насколько обширны были планы Горького в отношении издания армянской литературы, видно также из писем и встреч с В. Терьяном этого периода. Армянский поэт был основным помощником русского писателя при составлении и редактировании указанного сборника, довольно часто встречался и беседовал с Горьким об Армении, армянской литературе и искусстве.

Из произведений, помещенных в этой книге, самому Горькому больше всего нравилась пьеса драматурга Г. Сундукяна «Пэпо», над переводом которой он работал. Его скорее всего привлекла не мелодраматически-трагикомическая фабула сочинения из жизни хорошо знакомых ему тифлисских армянских низов, а классовая злободневность и заостренность произведения.

В русской, кавказской и особенно в армянской печати были помещены благожелательные статьи о «Сборнике армянской литературы» под редакцией Горького. Ведь книга действительно преследовала благородную цель – ознакомить российское общество с литературой одного из малых народов, живущего вместе с ним единой общественно-политической, экономической

---

<sup>3</sup> А. Закарян. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, 2016, с. 11.



и культурной жизнью, а в годы Первой мировой войны переживавшего кошмар Геноцида в Османской Турции ...

Выдающийся армянский романист А. Ширванзаде также был в контактах с русским писателем. Так, в письме Горькому от 26 января 1916 г. он восторженно отзываясь о его «Детстве» и благодарит за то «редкое духовное удовлетворение», которое доставила «чудная книга». Армянский писатель подчеркивает, что при чтении ее испытал такое «высокое художественное наслаждение ... какое может дать лишь гениальное творчество». Ширванзаде восхищен «общечеловечностью» и «чарующей искренностью» «великой книги» Горького. Тронутый вниманием романиста, Алексей Максимович отвечает теплым письмом: «Уважаемый собрат! Ваша похвала глубоко тронула меня своей искренностью, сердечно благодарю Вас! Знаю, что слова Ваши слишком лестны для меня, не сомневаюсь, что не заслужил такого отношения с Вашей стороны. Но Вы — писатель, человек, живущий всеми скорбями и радостями мира. Вы сами знаете, как ценно, как радостно знать, что Ваше слово понятно... Спасибо, что откликнулись, сердечно спасибо! Мне приятно сказать Вам, что я немного знаю Вас, — читал ваши вещи. А имя Ваше услышал впервые в 92 г. в Тифлисе, а затем в 97 г. — сидя в Метехском замке. Видите, мы старые знакомые. Желаю Вам всего доброго!»<sup>4</sup>.

После выхода в свет горьковского «Сборника армянской литературы» Ширванзаде приветствует издание в рецензии «Новая книга», особо акцентируя: «Не впервые произведения армянских писателей переводятся и издаются на русском языке, но впервые знаменитый русский писатель, а именно Максим Горький, не только сам, по собственной инициативе проявляет интерес к армянской изящной словесности, но и старается заинтересовать ею русское общество»<sup>5</sup>. Здесь же он лаконично характеризует творчество писателя в целом: «... Максим Горький не просто поэт, а исключительная творческая величина в России и первый по авторитету и популярности. Он единственный русский писатель после Толстого и Достоевского, который пользуется мировой славой, имя его известно в Европе так же хорошо, как и на родине, а может быть и более». Все еще находящийся под сильным впечатлением от горьковского автобиографического «Детства», Ширванзаде и в этой статье замечает: «... после романов Достоевского я не чувствовал в русской романистике такой глубины и красоты, как в этом произведении».

<sup>4</sup> Горьковские чтения. М. — Л., 1949, с. 495.

<sup>5</sup> «Մշակ» (Թիֆլիս), 1. VI. 1916:

М. Горький был одним из тех, кто одобрил составление и издание в том же 1916 г., уже в Москве, антологии «Поэзия Армении» под редакцией Валерия Брюсова. Ведь и это издание, предпринятое Московским Армянским комитетом, преследовало цель ознакомить «русский мир» с трагедией армян в Османской империи и на средства, вырученные от продажи сборника, материально помочь хлынувшим в Россию беженцам из Западной Армении. Именно Горький «вывел» армянских интеллектуалов В. Терьяна, А. Цатуряна, К. Микаэляна, П. Макинцяна и других, задумавших сборник армянской поэзии на русском языке, на В. Брюсова — как на переводчика и редактора уникального до сих пор издания.

Видный московский литератор, писатель, переводчик, общественно-культурный деятель К. Микаэлян в своей статье «Великий друг народов» писал о первой встрече с Горьким, собственных впечатлениях от русского писателя и его отношении к армянским интеллигентам. Микаэлян замечает: «... литературно-организационная сторона дела была еще не ясна: возьмутся ли русские поэты за перевод при совершенном незнании армянского языка, кого можно пригласить редактором сборника?»<sup>6</sup>. Его мучают сомнения: не было секретом отношение дореволюционных русских писателей к литературе так называемых «инородцев». Кто из них придавал серьезное значение ей, кто интересовался ею? Единственным, от которого можно было рассчитывать получить советы и поддержку, для молодых литераторов был Максим Горький, который тогда проживал в Финляндии. И молодые армянские энтузиасты отправляются к нему, всю дорогу волнуясь: как их примет русский писатель? К. Микаэлян делится воспоминаниями об этом событии: «... не прошло и нескольких минут, как исчезли последние остатки неловкости, перед нами сидел близкий и родной нам человек». Инициативу армянских литераторов писатель одобрил и более того: оказалось, что «аналогичные мысли были и у него, но только в более широких масштабах» — Горький предполагал выпустить ряд сборников национальной литературы (украинской, латышской, грузинской и т. д.), мотивируя это тем, что русские не знают культуру народов, которые разделяют политическую судьбу страны, народов древних, с устоявшимся моральным обликом, с вековой мудростью и культурой. Горький был убежден, что нужно «вливать эти ценности в русскую культуру — от этого она только выиграет», — пишет К. Микаэлян и продолжает: «Мы буквально были поражены его памятью, его знаниями, необъятной эрудицией, любовью

---

<sup>6</sup> К. Микаэлян. Великий друг народов. — «Литературная Армения», 1967, № 2, с. 93—94.

и уважением к литературе и культуре народов, о которых в то время никто не говорил. Обаятельным, необычайно обаятельным показался нам Горький»<sup>7</sup>.

В 1928 г. писатель с мировым именем посетил Армению, общался как с интеллигенцией, так и с простым народом. Вернувшись в Москву после поездки по Советскому Союзу, Горький в 1929 г. поместил свои путевые очерки в журнале «Наши достижения». Он писал также об Армении, о тех крупных успехах, которых добился армянский народ при новой власти во многих сферах — в экономике, образовании, науке, литературе, культуре и искусстве. В ярких красках описывал великий художник очаровавшую его природу Армении — дивные пейзажи Дилижана, озеро Севан и другие места. Горький констатировал: «У меня осталось самое прекрасное впечатление от поездки в Эривань и от объезда Армении. Армения — страна с большим будущим. Народ Армении производит впечатление энергичного народа, который, без сомнения, знает, что он делает, знает, какие задачи ему предстоит решать». Русский писатель восторгается: «Да, удивительно красиво. Кажется, что горы обняли и охраняют долину с любовью и нежностью живых существ. На высоте 1500 метров воздух необыкновенно прозрачен и как будто окрашен в голубой мягко сияющий тон. Мягкость — преобладающее впечатление долины. Глубокое русло ее наполнено пышной зеленью садов, и дома как бы тихо плывут в зеленых волнах ... Южное Закавказье ошеломляет разнообразием и богатством своих красок, эта долина — одна из красивейших в нем»<sup>8</sup>. И здесь же напоминает, что на красоту ее неустраимо падает мрачная тень воспоминаний о недавнем прошлом: «Меньше всего лирически прекрасная долина Дилижана должна бы служить рамой для воспоминаний о картинах кошмарных, кровавых преступлений. Но уже помимо воли память воскрешает трагическую историю Армении конца 19 — начала 20-х веков, резню в Константинополе, Сасунскую резню, «Великого убийцу», гнусное равнодушие христиан «культурной» Европы, с которым они относились к истреблению их «братьев во Христе», позорнейший акт грабежа самодержавным правительством церковных имуществ Армении, ужасы турецкого нашествия последних лет — трудно вспомнить все трагедии, пережитые этим энергичным народом. Удивительно быстро и ловко забывают факты такого рода господа «гуманисты», идеалисты, защитники «культуры», основанной на жадности, зависти, на рабстве и циническом истреблении народных масс. Ложь и лицемерие защитников этой «культуры по уши в

---

<sup>7</sup> М. Горький. Собр. соч. в 30-и тт., т. 17. М., 1952, с. 134.

<sup>8</sup> Там же.

крови и грязи» восходят до явного безумия, до преступления, которому нет достойной кары»<sup>9</sup>.

Таким образом, писатель не ограничивается лишь описанием природных красот Армении — его высокая гражданственность и острое общественно-политическое чутье позволяют выделить драматический образ армянского народа, перенесшего еще не так давно, на памяти самого Горького, ужасы своей новейшей истории.

... Горький, чей авторитет был непререкаем в советском обществе, придавал первостепенное значение подготовке и изданию в 30-е годы «Антологии армянской поэзии». Один из самых активных армянских участников подготовки книги К. Микаэлян в письме Горькому от 20 января 1936 г. сообщает, что в основу составляемого сборника армянской поэзии легла брюсовская антология. В ответном письме, от 17 апреля, русский писатель советует Микаэлян, чтобы не повторяться, несколько сократить заимствования из антологии под редакцией Брюсова. Горький, в частности, пишет: «... Насколько я смею судить ... о поэзии Армении в переводах на русский язык ... антология ... составлена весьма солидно. Она дает понять историю роста поэзии, дает представление о красоте и силе, об оригинальности ее строя и ее образности. Все это — так. Но Вы знаете, что хорошее нередко задерживает рождение лучшего, а полнота иногда превращается в нездоровую толщину, и поэтому я очень советую Вам еще раз посмотреть весь материал. 730 страниц стихов, это очень много, ведь придется еще дать предисловие ... Кроме предисловия следовало бы дать небольшую заметку об особенностях армянского стихосложения и маленькие биографии поэтов. Вообще хотелось бы видеть «Антологию» изданной образцово, чтобы типа этой книги придерживались бы и другие антологии...»<sup>10</sup>. Дело продвигалось весьма успешно не только в силу воодушевления, энтузиазма и энергичности армянских и российских литературных деятелей, но и благодаря заинтересованной поддержке высокого армянского и московского руководства. Армянское общество, как в Армении, так и в России, с нетерпением ждало новой, первой в советское время, встречи с армянской поэзией в переводах современных русских поэтов и переводчиков, нового представления богатейшей поэтической культуры Армении русскоязычной общественности огромной страны. Увы, радость и ожидания армян оказались преждевременными.

... Смерть Горького 18 июня 1936 г. повергла в шок всех армянских деятелей литературы — ведь русский писатель был

---

<sup>9</sup> Там же.

<sup>10</sup> Горький и Армения, с. 63.

действительно бескорыстным и искренним другом Армении и с ним связывалось немало дальнейших планов и литературно-общественных акций на благо армянской литературы в целом. Достаточно сказать, что «Антология армянской поэзии» под редакцией Горького после его смерти претерпела столь существенную переработку, была усердно «нашпигована» образцами второсортной, но «идеологически правильной» литературы в угоду времени и властям, что ставить его имя в изданный в 1940 г. сборник уже было неправомерным и вообще не имело смысла ...

Кончина большого друга армянского народа потрясла всех в стране, и Микаэлян откликается статьей «Борец за литературу братских народов» в годовщину смерти мастера пера. Автор в ней, в частности, пишет, что результаты советской национальной политики особенно чувствуются теми писателями из братских республик, литературная деятельность которых начиналась еще в условиях царской власти. «Ведь в то время, — отмечает Микаэлян, — издание какой-нибудь «инородческой» книги в переводе на русский язык было мучительным предприятием. Если какому-нибудь «фанатику» приходило в голову перешагнуть границы национальной замкнутости и познакомить со своей литературой русских читателей, то он должен был искать богатого «мецената» единоплеменника или обращаться к какой-нибудь «благотворительной» организации. И если армянская литература явилась исключением из этих мрачных «правил», то это произошло всецело благодаря инициативе и поддержке Алексея Максимовича Горького»<sup>11</sup>.

На смерть великого русского писателя откликнулись многие мастера армянской литературы. Е. Чаренц написал статью «Путь гениев и звезд (памяти Алексея Пешкова)», в которой, в частности, обрисовал Горького как «великого человека, гражданина», «шествующего по путям новой человеческой истины интеллектуального чудотворца с взглядом пророка ... которому предстояло обессмертиться в веках не феноменом, поднявшимся со дна социального океана, а родившимся из лона гениального русского народа гениальным писателем и великим гражданином, своим литературным талантом происходившим из величественного рода Пушкина и Толстого, последним органичным звеном в классической цепи русской литературы»<sup>12</sup>.

Теплыми воспоминаниями о встречах с Горьким в конце 20-х — начале 30-х годов окрашен, в частности, замечательный очерк о нем одного из классиков новой армянской литературы Д. Де-

<sup>11</sup> «Литературная газета» (М.), 18. VI. 1937.

<sup>12</sup> «Խորհրդային Հայաստան», 24. VI. 1936:

мирчяна<sup>13</sup>. У Горького, констатирует армянский писатель по имевшим место беседам, — «отменная память»: он, в частности, прекрасно помнит произведения и писателей, которые вошли в составленный и отредактированный им еще в 16-м году «Сборник армянской литературы». «Колоссально велик» диапазон интересов у этого «поглощенного тысячами забот и проблем человека», замечает Демирчян и вспоминает о встречах Горького с простыми тружениками — армянскими рабочими и крестьянами. В одной из таких поездок по Араратской долине русский писатель, находясь среди богатых виноградников, восхищенно взирал на царящий над равниной библейский Арарат и, рассказывая приехавшему с ним сыну Максиму о приставшем к горе легендарном Ноевом ковчеге, непринужденно восклицает: «Вот красота! Смотришь и прохладно становится; жары не чувствуешь и усталость проходит»...

В очерке Демирчян пишет также о деловых и творческих встречах Горького с интеллигенцией в Союзе писателей Армении в 1928 г. и позднее, на Первом Всесоюзном съезде советских писателей в Москве (1934), когда рассматривались как насущные проблемы, особенности и пути развития советской литературы в целом, так и конкретных национальных литератур. «Мои две встречи с Горьким — и по его простоте, и по его заботливому отношению к человеку, и по его широкой литературно-общественной заинтересованности — произвели на меня глубокое и неизгладимое впечатление», — замечает Демирчян. Завершаются воспоминания выразительным портретом великого русского писателя: «В этом человеке с грубой внешностью, с обликом труженика, в тонах его хриплого, низкого голоса и в движениях его костлявых и длинных рук было что-то удивительно культурное, какая-то приятная мягкость, показывающая, что это человек большой духовной культуры и ... настоящий человек! На лицо внешне казался холодным, даже неприветливым, но сердце, сердце было полно доброты — когда улыбался, глубокие морщины его бесстрастного лица и серые глаза наполнялись беспредельной добротой и красотой. А Лев Толстой говорил: кто улыбаясь становится красивее, — он добрый, настоящий человек!» И Горький был таким<sup>14</sup>.

М. Горький, писатель-гуманист XX века мирового масштаба, являлся одним из самых искренних друзей Армении и армянского народа.

<sup>13</sup> Դ. Դեմիրճյան. Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 434–437:

<sup>14</sup> Там же, с. 436–437.

## ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ՌՈՒՅԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## Ա մ փ ո փ ու մ

Ռուս մեծ գրող Ալեքսեյ Պեչկովի՝ Մաքսիմ Գորկու (1868–1936) ծանոթությունը Հայ ժողովրդի, մասնավորապես, մտավորականության հետ սկիզբ են առել XIX դարավերջին և շարունակվել մինչև կյանքի վերջը: Նրա ուշադրության կենտրոնում են եղել Հայ իրականության բազմազան իրողություններ՝ Անդրկովկասում 1905 թ. ծավալված Հայ-թաթարական ընդհարումները և այդ գործում ցարիզմի դերը, Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը, Օսմանյան Թուրքիայում Հայերի կոտորածները և այլն:

Մ. Գորկին մեծապես հետաքրքրված է եղել Հայ ժողովրդի պատմությամբ, գրականությամբ ու մշակույթով: Հայոց ցեղասպանության տարիներին նա հրատարակել է «Հայ գրականության ժողովածու»-ն (1916), արժեքավոր խորհուրդներով օգնել է Վ. Բրյուսովի խմբագրությամբ «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1916) անթոլոգիայի ստեղծմանը, ակտիվորեն մասնակցել է 1930-ական թվականներին պատրաստվող «Հայաստանի պոեզիայի անթոլոգիայի» աշխատանքներին:

1928 թ. ճանապարհորդելով Սովետական Միությունով՝ Մ. Գորկին այցելում է նաև Հայաստան, շփվում Հայ ժողովրդի ամենալայն խավերի հետ: 1929 թ. «Մեր ձեռքբերումները» ամսագրում հրատարակվում են նրա ճանապարհորդական ակնարկները, որոնցում խոսք կա Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների, երկրի չքնաղ բնության, նաև՝ ցարիզմի վարած հակահայ քաղաքականության, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության, «մարդասեր» Եվրոպայի անտարբեր վերաբերմունքի մասին:

Գրչի ականավոր վարպետը ծանոթ է եղել մի շարք նշանավոր Հայ գրողների, գրական-հասարակական գործիչների, արվեստագետների՝ Ալ. Շիրվանզադեի, Վ. Տերյանի, Հ. Հակոբյանի, Դ. Դեմիրճյանի, Կ. Միքայելյանի, Ալ. Սպենդիարյանի և այլոց հետ: Վերջիններս խոր ակնածանքով են խոսել նրա մասին:

Մ. Գորկու կապերը Հայաստանի և Հայ ժողովրդի հետ եղել են ամուր, բեղմնավոր ու փոխադարձ՝ ուրույն տեղ զբաղեցնելով բազմադարյան հայ-ռուս գրական-մշակութային հարաբերություններում:

## MAXIM GORKY AND THE ARMENIAN REALITY

ROBERT BAGHDASARYAN

## Summary

The relations of the Russian great writer Alexei Peshkov – Maxim Gorky (1868–1936) with the Armenian people, particularly with the intelligentsia began at the end of the 19th century and continued until his death. Various events of the Armenian reality in Transcaucasia – the 1905 Armenian–Tatar clashes and the role of Tsarism in it, the massacres of the Armenians in Ottoman Turkey, the situation in Western Armenia, etc., were at the center of his attention.

Maxim Gorky was greatly interested in the history, literature and culture of the Armenian people. In the years of the Armenian Genocide he published “Collection of the Armenian Literature” (1916), with his valuable advice assisted in the creation of the anthology “The Armenian Poetry from Ancient Times Until Nowadays” (1916) edited by Valery Brusov, actively took part in the works of the “Anthology of Armenian Poetry” prepared already in the 1930s.

In 1928 travelling throughout the Soviet Union, Maxim Gorky also visited Armenia and communicated with the broad circles of the Armenian people. In 1929 his travelling essays were published in the journal “Our Achievements”, where one can read about the achievements of Soviet Armenia, the wonderful nature of the country, as well as the anti-Armenian policy pursued by Tsarism, the Armenian Genocide in the Ottoman Empire and the indifferent attitude of the ‘humanitarian’ Europe.

The prominent master was familiar with a number of well-known Armenian writers, literary-public figures, artists, such as Alexander Shirvanzade, Vahan Teryan, Hakob Hakobyan, Derenik Demirchyan, Karen Mikaelyan, Alexander Spendiaryan and others. The latter talked about M. Gorky with deep affection.

Maxim Gorky’s ties with Armenia and the Armenian people were firm, fruitful and mutual, occupying a special place in the centuries-old Armenian-Russian literary-cultural relations.



ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՊԵՐ.  
Մ. ԳՈՐԿԻ ԵՎ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ-ռուսական մշակութային կապերի պատմության մեջ, անշուշտ, մեծ է հայ անվանի կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի դերը (1871–1928): Ծնված լինելով Ղրիմի Կախովկա ավանում և կյանքի մեծ մասն ապրելով հայրենիքից հեռու՝ (Հայաստան եկավ վերջին տարիներին՝ 1924–1928 թթ.), աշակերտելով ռուս մեծանուն կոմպոզիտոր, խմբավար ու մանկավարժ Ն. Ռիմսկի-Կորսակովին՝ նա չէր կարող չկրել ռուսական երաժշտության որոշակի ազդեցությունը: Շփումները հայտնի «Բելյաևյան խմբակի» անդամներ Վ. Ստասովի, Ս. Բլումենֆելդի, Ա. Գլազունովի, Ա. Լյադովի, Ն. Չերեպնինի, Ն. Ամանիի և մյուսների հետ նույնպես նպաստավոր էին այդ առումով: Այս երաժիշտներից մի քանիսը (Գլազունով, Չերեպնին, Լյադով, Ամանի) հետագայում դարձան նրա ընկերները: Իսկ Յալթայում ապրած տարիներին (1901–1916 թթ.) Սպենդիարյանն առիթ ունեցավ շփվելու նաև այնպիսի ռուս մտավորականների հետ, ինչպիսիք էին գրողներ Լ. Տոլստոյը, Մ. Գորկին, Ա. Չեխովը, երաժիշտներ Ֆ. Շալյապինը, Ա. Արենսկին, Մ. Գնեսինը և ուրիշներ: Իր երաժշտական ստեղծագործությունների համար Սպենդիարյանը հաճախ է թեմա ընտրել ռուս գրականությունից (հիշենք նրա մի շարք երկեր՝ «Աստվածային թռչնակ»<sup>1</sup>, «Պաղեստինի ոստը»<sup>2</sup>, «Չհնձած արտը»<sup>3</sup>, «Բեդա քարոզիչ»<sup>4</sup>՝ վոկալ-գործիքային երկերը, «Երեք արմավենի»<sup>5</sup> սիմֆոնիկ պատկերը, «Մենք կհանգստանանք»<sup>6</sup> և այլն): Այդպիսի մի անդրադարձ էր նաև ռուս նշանավոր գրող-հրապարակախոս Մաքսիմ Գորկու (Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեչկով՝ 1868–1936) բանաստեղծության հիման վրա 1902 թ. գրված «Չկնորսն ու փերին» («Рыбак и фея») (որոշ թարգմանություններ

<sup>1</sup> «Աստվածային թռչնակ»՝ վոկալ քառյակ դաշնամուրի նվագակցությամբ, խոսք՝ Ա. Պուշկինի, գրված՝ 1899 թ.:

<sup>2</sup> «Պաղեստինի ոստը»՝ վոկալ քառյակ նվագախմբի նվագակցությամբ, խոսք՝ Մ. Լերմոնտովի, գրված՝ 1901 թ.:

<sup>3</sup> «Չհնձած արտը»՝ էլեգիա երգչախմբի և բաս մեներգչի համար, խոսք՝ Ն. Նեկրասովի, գրված՝ 1902 թ.:

<sup>4</sup> «Բեդա քարոզիչը»՝ լեգենդ կոնտրալտոյի և նվագախմբի համար, խոսք՝ Յա. Պոլոնսկու, գրված՝ 1907 թ.:

<sup>5</sup> «Երեք արմավենի»՝ սիմֆոնիկ պատկեր՝ Մ. Լերմոնտովի համանուն բանաստեղծության թեմաներով, գրված՝ 1905 թ.:

<sup>6</sup> «Մենք կհանգստանանք»՝ մելոդեկլամացիա, խոսք՝ Ա. Չեխովի (Սոնյայի մենախոսությունը «Բեռի Վանյա» պիեսից), գրված՝ 1910 թ.:

րում «Զինորան ու հավերժահարսը» բալլադը՝ ձայնի (բաս) և նվագախմբի համար:

1902 թ. փետրվարին Մ. Գորկին իր առաջին կնոջ՝ Եկատերինա Պավլովնա Պեչկովայի և 5-ամյա որդու՝ Մաքսիմի հետ հանգստանում էր Ղրիմում: Նրանք ապրում էին Յալթայից ոչ հեռու՝ Օլեիզ ամառանոցում՝ նշենինների անտառակով շրջապատված փայտաշեն մի տանը: Գորկուն մշտապես այցելում էին այդ օրերին Ղրիմում հանգստացող այլ մտավորականներ՝ գրողներ Ի. Բունինը, Լ. Անդրեևը, Ն. Տելեչևը, երաժիշտներ Ֆ. Շալյապինը, Ս. Ռախմանինովը և ուրիշներ: Կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանը ևս որոշեց այցելել անվանի գրողին, մոտիկից ծանոթանալ ու գրուցել նրա հետ: Սիրողական երգչախմբի անդամ դուրսոր Ա. Ալեքսինի հետ նա կառքով Օլեիզ մեկնեց: Այդ օրը Գորկու հյուրերն էին նաև Լ. Անդրեևը, Ի. Բունինը, Ս. Սկիտալեցը և այլ մտավորականներ: Երիտասարդ կոմպոզիտորին Գորկին իր աշխատասենյակ հրավիրեց, գրուցեցին արվեստի, երաժշտության, Սպենդիարյանի ստեղծագործությունների մասին: Հայտնի է, որ նա բանաստեղծություններ քիչ էր գրում: Բայց, ինչպես տեղեկանում ենք Սպենդիարյանի դստեր՝ երաժիշտ, նկարիչ, գրող-հրապարակախոս Մարինա Սպենդիարովայի «Սպենդիարով» գրքից, այդ օրը նա Սպենդիարյանին է ներկայացրել «Փոքրիկ փերու և երիտասարդ Չաբանի մասին» հեքիաթի թեմաներով իր նոր գրած բանաստեղծությունը՝ առաջարկելով համապատասխան երաժշտություն գրել (բանաստեղծության մեջ փոխված է հերոսի անունը՝ Մարկո<sup>7</sup>): Նկարագրելով գրողի և երիտասարդ կոմպոզիտորի գրուցը՝ Մ. Սպենդիարովան գրում է.

«... Ալեքսեյ Մաքսիմովիչը մտազբաղ ասաց.— Ես բանաստեղծություններ առհասարակ չեմ գրում: Պուշկինից լավ չես գրի, իսկ վատ գրել՝ կնշանակի վիրավորել Պուշկինի հիշատակը: Պուշկինը բոլոր ուսու բանաստեղծներից առաջ անցավ երկու հարյուր տարով: Բայց վերջերս,— նրա դեմքին մեղավոր ժպիտ երևաց,— ես մեղանչեցի և գրեցի չափածո մի երկ՝ վալախյան հին լեգենդի թեմայով: Այն կոչվում է «Զինորան ու հավերժահարսը»: Եթե կհետաքրքրի Ձեզ, երաժշտություն գրեցեք»<sup>8</sup>:

Ինչ խոսք, Սպենդիարյանին այն հետաքրքրեց, ու ստեղծվեց համանուն երգ-բալլադը: Ինչպես հիշում է Ե. Պավլովնան, «Սպենդիարովը շատ շուտով մեզ ներկայացրեց պատրաստի բալլադը: Ալեքսեյ Մաքսիմովիչը նույնիսկ զարմացավ, որ նա այդպես արագ և միաժամանակ այդպես հաջող էր գրել: Հաջորդ անգամ նա մեզ մոտ էր եկել դուրսոր Ալեքսինի հետ, որն էլ կոմպոզիտորի նվագակցություններ երգեց բալլադը»<sup>9</sup>:

<sup>7</sup> Մ. Գորկու այս բանաստեղծությունը երկու անգամ թարգմանվել է հայերեն՝ «Վալախյան լեգենդ» վերնագրով (թարգմ.՝ Հովհ. Թումանյան և Ե. Չարենց):

<sup>8</sup> Մ. Սպենդիարով, Երևան, 1966, էջ 85:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

Մեծ գրողի և երիտասարդ կոմպոզիտորի հանդիպումներն ավելի հաճախակի դարձան. Սպենդիարյանի հրավերով Գորկին մի քանի անգամ հյուրընկալվեց Յալթայի նրանց շքեղ առանձնատանը: Նրա պատվին Սպենդիարովների տանը Յալթայի երաժիշտների մասնակցությամբ նույնիսկ համերգ կազմակերպվեց: Գրողին դուր եկավ, հատկապես, Բեթհովենի անվան քառյակի կատարումը<sup>10</sup>: Ստեղծագործական համագործակցությունն անվանի գրողի հետ, անկասկած, մեծ պատիվ էր երիտասարդ կոմպոզիտորի համար: Այդ են վկայում 1902 թ. փետրվարի 6-ին երաժշտական հրատարակիչ Վ. Բեսսելին գրած նրա նամակի հետևյալ տողերը. «... Ձեռնարկել եմ բասի կատարմամբ, նվագախմբի նվագացությամբ մի ստեղծագործություն գրելու աշխատանքները՝ Գորկու՝ դեռևս չհրատարակված պոետիկ բանաստեղծության հիման վրա (այդ բանաստեղծությունն անձամբ է ինձ հանձնել), բացի այդ՝ իմ «Պաղեստինի ոստը» քառյակի դաշնամուրային նվագակցությունը գործիքավորում եմ նվագախմբի համար»<sup>11</sup>:

Գորկին, հավանաբար, շատ էր հավանել Ալ. Սպենդիարյանի այս ստեղծագործությունը. գուցե դրա համար էլ հաճույքով նրան նվիրեց իր «Քաղքենիներ» գիրքն այսպիսի ընծայագրով. «Հիշատակ «Ֆեյայի մասին երգի» տաղանդավոր հեղինակ Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին: Մ. Գորկի»<sup>12</sup>: Նույնաբովանդակ մի ընծայագիր էլ կա Սպենդիարյանին նվիրած նրա լուսանկարի տակ՝ «Հիշատակ Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին: Մ. Գորկի»<sup>13</sup>:

«Ձկնորսն ու փերին» բալլադը համերգային կատարմամբ առաջին անգամ ներկայացվեց 1902 թ. ապրիլի վերջին՝ Յալթայում, դարձյալ դուրսը Ալեքսանդրի կատարմամբ և հեղինակի նվագակցությամբ արժանանալով երաժշտասեր հանրության ջերմ ընդունելությանը: Ահա թե ինչ ենք այդ մասին կարդում «НОВОСТИ» թերթի 1902 թ. ապրիլի 27-ի հրապարակման մեջ. «Մեզ Յալթայից գրում են. ապրիլի 21-ին Յալթայում, Հանրային ժողովի սրահում տեղի ունեցավ հայտնի դաշնակահար Ա. Բ. Գուլդենվեյգերի համերգը՝ յալթացի սիրող-երաժիշտների մասնակցությամբ: Գուլդենվեյգերի փայլուն և խորապես մտածված նվագի հետ, համերգն առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում նրանով, որ ծրագրում ընդգրկված էր Մ. Գորկու խոսքերով գրված պրն. Սպենդիարովի «Երգ փե-

<sup>10</sup> Տե՛ս Ը. Рацкая. Музыка в жизни и творчестве А. М. Горького. М., 1985, с. 54.

<sup>11</sup> Նամակի բնօրինակը պահվում է Սալտիկով-Շչեդրինի անվ. պետական հանրային գրադարանում (Ս. Պետերբուրգ), Վ. Բեսսելի ֆոնդում [կրկնօրինակը տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Երաժշտական բաժին՝ Ալ. Սպենդիարյանի ֆ., № 6]:

<sup>12</sup> Մ. Գորկու ընծայագրով գիրքը (հրատ. 1902 թ.) տե՛ս ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ալ. Սպենդիարյանի ֆ., № 2588:

<sup>13</sup> Լուսանկարը պահվում է Երևանի Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում (այսուհետև՝ ԱՍՏԹ), Ալ. Սպենդիարյանի ֆ., Մուսքի մատյան (այսուհետև՝ Մմ), № 53:

րու մասին» ռոմանսը: Պարզվեց, որ այդ ռոմանսն իսկապես շատ ինքնատիպ ու արտակարգ մի գործ է և այն կատարող պրն. Ալեքսի-նին պարտադրեցին կրկնել»:

Արդեն պրոֆեսիոնալ, հեղինակավոր երաժիշտների կատարմամբ ստեղծագործությունը հնչեց 1903 թ. ապրիլի 21-ին Ս. Պետերբուրգում՝ Ժողովրդական տան սրահում: Այդ համերգի առաջին բաժնում կատարվեց Պ. Չայկովսկու 6-րդ սիմֆոնիան, իսկ երկրորդ բաժնում հրաշալի նվագախմբի նվագակցությամբ ու անվանի դիրիժոր Ա. Ն. Շեֆերի ղեկավարությամբ երգիչ Ա. Պոռուբինովսկին ներկայացրեց Սպենդիարյանի երկու ստեղծագործությունները՝ «Չհնձած արտը» և «Զինորսն ու փերին»: Համերգն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Մ. Գոլդենբլումին՝ «НОВОСТИ» թերթի տպագրված հոդվածում այդ մասին, մասնավորապես, ասված է. «Ժողովրդական տան վերջին համերգի ժամանակ անչափ հաճելի տպավորություն թողեցին երիտասարդ սկսնակ կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյովի «Չհնձած արտը» և «Զինորսն ու փերին» ստեղծագործությունները: Հեղինակը մի քանի անգամ բեմ հրավիրվեց»: Համերգից և այդպիսի ընդունելությունից ոգևորված՝ Ալ. Սպենդիարյանն այդ մասին նամակով տեղեկացրեց Մ. Գորկուն՝ նրան ուղարկելով նաև ստեղծագործության առաջին հրատարակությունը (պարտիտուրը)<sup>14</sup>: Մեծանուն գրողին գրած կոմպոզիտորի նամակը ստորև ներկայացնենք ամբողջությամբ.

«Յալթա ապրիլ-մայիս 1903 թ.

Մեծարգո Ալեքսեյ Մաքսիմովիչ.

Այս նամակի հետ Ձեզ եմ ուղարկում նաև Ձեր բանաստեղծության հիման վրա գրված իմ բալլադի պարտիտուրը և կլավիրը:

Սույն թվականի ապրիլի 21-ին այդ բալլադը, նվագախմբի նվագակցությամբ, կատարվեց Պետերբուրգում՝ Նիկոլայ 2-րդ կայսեր Ժողովրդական տան սրահում կայացած համերգին: Երգեց այն շատ հմայիչ ձայնով մի երիտասարդ երգիչ՝ Ա. Պոռուբինովսկին: Նա բալլադն անչափ արտահայտիչ կատարեց և հանրության պահանջով կրկնեց այն:

Մեկ անգամ ևս երախտագիտությունս եմ հայտնում ձեզ, նրա համար, որ հնարավորություն տվեցիք ինձ գրելու իմ ստեղծագործություններից լավագույնը, որը հենց այդ պատճառով էլ թույլ եմ տվել ինձ ձոնելու ձեզ:

Անկեղծորեն Ձեզ նվիրված Ա. Սպենդիարյով»<sup>15</sup>:

<sup>14</sup> Ал. Спендиаров. Рыбак и фея. СПб., 1902.

<sup>15</sup> Նամակի սևագիր բնօրինակը տե՛ս ԳԱԹ, Ալ. Սպենդիարյանի ֆ., № 6ա:

Ալ. Սպենդիարյանի և Մ. Գորկու ստեղծագործական համագործակցությունը շարունակվեց նաև հետագայում: 1911 թ. Գորկու արձակ բանաստեղծության թեմաներով [հատված՝ Գորկու «Հովեկներ» («Дачники») պիեսից] Սպենդիարյանը գրեց իր «Էդելվեյս» մելոդեկլամացիան: Այն գործիքավորեց և հրատարակության պատրաստեց 1912-ի սկզբին Յալթայում: Կոմպոզիտորն այս ստեղծագործությունը նվիրել էր երգչուհի Մարիա Անդրեևնա Վեդրինսկայային, որն էլ եղավ առաջին կատարողը<sup>16</sup> (1914 թ. Պավլովսկում): «Էդելվեյս» առաջին անգամ հրատարակվեց (կավիրը) 1913 թ. Մոսկվայում (հրատ. Պ. Յուրգենսոնի):

Մ. Գորկու նկատմամբ Ալ. Սպենդիարյանի հարգանքն ու վստահությունն այնքան մեծ էր, որ նրան դիմում էր ոչ միայն ստեղծագործական բնույթի հարցերով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո մշակույթի գործիչների առջև ծագած որոշ խնդիրներ լուծելու, այդ հարցում իշխանությունների հետ համագործակցելու նպատակով Սպենդիարյանը դիմել է Գորկու աջակցությանը: Կոմպոզիտորի, բանաստեղծուհի Ս. Պարնոկի, դերասանուհիներ Լ. Էրարսկայայի և Ե. Բուսկովայի ստորագրությամբ 1921 թ. մարտի 23-ին Գորկուն ուղարկված նամակը դրա վառ վկայությունն է: Նամակագիրները մեծանուն գրողին խնդրում են միջնորդել, որպեսզի իրենց համար Սուդակում ստեղծագործելու բավարար պայմաններ ստեղծվեն<sup>17</sup>:

Եվ այսպես՝ մեր մշակույթի շատ այլ գործիչների պես Սպենդիարյանն էլ գնահատելի ներդրում է ունեցել ռուսական մշակույթի զարգացման գործում՝ նպաստելով հայ և ռուս ժողովուրդների կապերի ամրապնդմանը:

ЛИТЕРАТУРНО-МУЗЫКАЛЬНЫЕ ТВОРЧЕСКИЕ СВЯЗИ:  
М. ГОРЬКИЙ И АЛ. СПЕНДИАРЯН

ТИГРАН САРКИСЯН

Резюме

В истории армяно-российских культурных связей большую роль сыграл выдающийся армянский композитор Александр Спендиарян (1871–1928). Родился он в Крыму, в маленьком городке Каховка, жил и занимался творчеством там же (в Армению переехал в последние годы своей жизни, 1924–1928).

<sup>16</sup> Մ. Վեդրինսկայայի նամակներն Ալ. Սպենդիարյանին՝ այդ ստեղծագործությունը կատարելու ցանկության մասին տե՛ս ԳԱԹ, Երաստական բաժին, Ալ. Սպենդիարյանի ֆ., № 1270 և № 1272, Ալ. Спендиаров — письма. — Литературное наследство, кн. 2 (сост. К. Григорян). Ереван, 1962, с. 313–314, 318.

<sup>17</sup> Նամակի ձեռագիր ընդօրինակությունը տե՛ս ԱՍՏԹ, ֆ., Մմ, № 398: Բնօրինակը պահվում է Մոսկվայի Մ. Գորկու անվան թանգարանում:

В 1902 г., когда великий русский писатель-публицист М. Горький отдыхал в Крыму, Спендиарян несколько раз встречался с ним. Русский писатель жил недалеко от Ялты, в дачном местечке Олеиз. Когда Спендиарян приехал познакомиться с ним, Горький пригласил молодого композитора в свою рабочую комнату. Говорили они о музыке, о творческой деятельности Спендиаряна. Горький представил ему свою новую балладу «Рыбак и фея» и предложил написать музыку. Баллада понравилась армянскому композитору, и он написал романс «Рыбак и фея». Этот романс впервые был исполнен в Ялте в 1902 г., во время концерта известного пианиста А. Б. Гольденвейзера. Пел его солист ялтинского любительского хора доктор А. Алексин. Музыкантами-профессионалами романс был исполнен уже в 1903 г., во время симфонического концерта петербургского Народного дома. Пел его молодой артист А. Н. Порубиновский. Концерт произвел очень приятное впечатление, об этом была опубликована статья в газете «Новости» (27. 04. 1903).

Творческие связи между Горьким и Спендиаряном продолжались долгие годы. В 1911 г. композитор вновь обратился к произведениям русского писателя и написал мелодекламацию «Эдельвейс» (отрывок из пьесы Горького «Дачники»).

#### LITERARY-MUSICAL CREATIVE TIES: M. GORKY AND AL. SPENDIARYAN

TIGRAN SARGSYAN

##### Summary

The role of famous Armenian composer Alexander Spendiaryan (1871-1928) in the history of Armenian-Russian cultural relations was enormous. He was born in Crimea, lived and created in a small town (in the last years of his life, in 1924 – 1928, he moved and lived in Armenia).

In 1902, when Russian well-known writer and publicist M. Gorky had a rest in Crimea, Spendiaryan met him several times. Russian writer lived not far from Yalta, in the country house called Oleiz. When Spendiaryan went to meet him, Gorky invited the young composer to his workroom. They talked about music and the creative activity of Spendiaryan. Gorky presented him his new ballad “The Fisherman and the Fairy” and offered to compose music for it. The Armenian composer liked the ballad and composed the romance “The Fisherman and the Fairy”. This romance was first performed in Yalta in 1902 during the concert of famous pianist A. B. Goldenweiser. The soloist singer was doctor A. Aleksin – a member of amateur choir of Yalta. The romance was performed by professional musicians already in

1903 during the symphony concert at the People's House of St. Petersburg. It was sung by a young artist A. N. Porubinovsky. The concert made a very pleasant impression and an article about it was published in the newspaper "Novosti" (27.04.1903).

The creative ties between Gorky and Spendaryan continued for many years. In 1911 the composer again turned to the works of the Russian writer and composed melodeclamation "Edelweiss" (an extract of Gorky's play "Summerfolk").

ՌՈՒՄ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ  
(1914–1920 թթ.)

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայնորեն հայտնի են ոուս գրողների, գրական գործիչների և ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի բազմաբնույթ փոխառնչությունները: Դրա խոստովանությունները վկայություններն են հայ ժողովրդի պատմության ողբերգական ժամանակահատվածի՝ XX դարի 10-ական թվականների հետ կապված իրողությունները: Ստորև անդրադառնանք 1914–1920 թթ. Անդրկովկաս այցելած ոուս գրողների և հայ բանաստեղծի կապերին:

1914 թ. ապրիլի կեսերին Թիֆլիս կատարած այցելության ընթացքում՝ ոուս նշանավոր բանաստեղծ Կոնստանտին Բալմոնտի (1867–1942) պատվին վրաց հասարակայնությունը կազմակերպում է ճաշկերույթ, որին հրավիրվում է նաև Հովհ. Թումանյանը: Այդ օրն էլ նրանք ծանոթանում են, երկար զրուցում: Դրանից առաջ՝ 1890-ական թվականներին, ոուս բանաստեղծը թարգմանել էր Թումանյանի «Ախթամարը» և «Համերգը»:

1917 թ. ամռանը Կ. Բալմոնտը կրկին գալիս է Թիֆլիս՝ վրաց նշանավոր բանաստեղծ Տիցիան Տաբիձեի հետ: Հովհ. Թումանյանի մասին իր հուշերում վերջինս գրում է. «1917 թ. ամռան էր: Ես հենց նոր էի Մոսկվայից վերադարձել Թիֆլիս: Ինձ հետ ժամանել էր նաև Կ. Բալմոնտը: ... Հովհաննես Թումանյանին ես առաջին անգամ տեսա Վրացական ակումբի այգում, ընթրիքի ժամանակ, որը Բալմոնտի պատվին կազմակերպել էր Սանդրո Կանչելին:

Նա միանգամայն անկախ էր պահում իրեն և ետ չէր մնում Բալմոնտից էքսպրոմտներում, նույնիսկ ոուսերենով:

Մեկ ամիս անց «Слово» թերթում տպագրվեց Բալմոնտի բանաստեղծությունը՝ «Тебе, Ованес Туманян»<sup>1</sup>:

Ռուս բանաստեղծն ամբողջ ամռան անցկացնում է Անդրկովկասում, ապա՝ Կովկասյան հանքային ջրերում: Պյատիգորսկի «Провал» կոչված առողջարանում նա հանգստանում է հայ գրական-հասարակական մի շարք անվանի գործիչների, այդ թվում՝ Թումանյանի հետ: Երաժիշտ, մանկավարժ Ազատ Մանուկյանը «Դրվագներ

<sup>1</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Լ. Մ. Կարապետյան, Երևան, 1969, էջ 728:



Հովհ. Թումանյանի կյանքից» վերնագրով իր հուշերում գրում է. «Օգոստոսի 3-ն է: Հայտարարված է հայկական ճոխ երեկույթ Պյատիգորսկի քաղաքային ժողովարանի դահլիճում: Մասնակցում են Ամիրազոյի խմբից օպերային երգիչներ, քառաձայն խումբը իմ ղեկավարությամբ: Մեծ տառերով տպված է բանաստեղծ Բալմոնտի անունը...: Հովհաննեսի առանձին խնդիրքով բանաստեղծը հանձն էր առել մասնակցելու հայկական երեկույթին իր արտասանությամբ:

Երեկոն անցավ փայլուն հաջողությամբ: Բալմոնտի ելույթը հայ պոեզիայի մասին և արտասանություները Բրյուսովից՝ մեծ օվացիաներ առաջ բերեց: Հովհաննեսը չհամբերեց, բարձրացավ բեմ և իր վառվուռն ճառով և հետո էլ իր համբուլրով Բալմոնտի հետ խանդավառություներ առաջ բերեց դահլիճում: ... Համերգային բաժնից հետո կայացավ բանկետ, ուր ներկա էին բոլոր մասնակցողները: Հովհաննեսը նստել էր Բալմոնտի կողքին: Թամազա ընտրվեց Հովհաննեսը: ... Հուզումնալից խոսք ասաց Բալմոնտը, որը Հովհաննեսին համարեց ամենախոշոր բանաստեղծը»<sup>2</sup>: Երեկոյի ընթացքում Կ. Բալմոնտը հանպատրաստից Թումանյանին է նվիրում և կարդում այս բանաստեղծություներ՝ արժանանալով ջերմ ընդունելության:

Օ՛, Հովհաննես՛ս, մեր Թումանյա՛ն,  
Աստծո շնորհ դու հավիտյան,  
Փառքի շող ես դու ո՛չ միայն  
Բազմադարյան հողում հայկյան,  
Այլև փոել ես թալիսման  
Հեռաստանում ոռասատանյան,  
Ձկորցնելով ոգիդ սակայն,  
Պահել շուքդ արևելյան:  
Դու մեզ համար դարձար Իվան,  
Դարձար երգիչ մի մոգական,  
Իմ երգերը դարձրիր վառման,  
Երգո՛վ կառնենք ամեն սահման,  
Մեր հանգերը կզրնգան,  
Ու թե կանչի սև ագռավն այն,  
Կերգենք, չարը լինի՛ կործան:  
Մեր երգերն են անտակ օվկիան,  
Հենց որ շարժենք ցուպի նման  
Կոսկեզօծվի մուժն անսահման:  
Քեզ երկար կյանք, լո՛ւյս Թումանյան<sup>3</sup>:

... 1923 թ. հունիսի 9-ին Ա. Չոպանյանի հրավերով Կ. Բալմոնտը, ով 1920 թ. տարագրվել էր Ֆրանսիա, մասնակցել է Փարիզի Սորբոնի սրահի մեջ տեղի ունեցած գրական-գեղարվեստական մեծ

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 516–517:

<sup>3</sup> Ձոներ Թումանյանին, կազմող և խմբագիր՝ Գ. Խ. Դևրիկյան, Երևան, 1960, էջ 13:

երեկոյթի՝ նվիրված Թումանյանի հիշատակին և հարգանքի խոսք ասել: Մեծանուն ռուս բանաստեղծը պատմել է Թումանյանի հետ ունեցած իր հանդիպումների մասին, նշել՝ Թումանյանն իր ճանաչած արևելյան բանաստեղծների մեջ ամենից ինքնատիպն ու ամենից գունագեղն է<sup>4</sup>:

Ռուս նշանավոր գրող, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ և պատմաբան Վալերի Բրյուսովը (1873 – 1924), «Հայաստանի պոեզիան» ժողովածուի վրա ամիսների քրտնաջան աշխատանքից հետո, երբ այն արդեն մոտ էր ավարտին, 1916 թ. հունվարին կատարում է իր հայտնի ուղևորությունը Անդրկովկաս: «Հայ գրասերների ընկերություն» խորհրդի հրավերով գալով Բաքու՝ հունվարի 8-ին «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով դասախոսությունը կարդալուց հետո, «Հայ գրողների կովկասյան ընկերություն» հրավերով՝ Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ, հունվարի 12-ին ժամանում է Թիֆլիս:

Ն. Թումանյանն իր հուշերում գրում է. «Բրյուսովի գալու օրը... մի խումբ գրական-հասարակական գործիչներ հայրիկի առաջնորդությամբ գնացին կայարան: Բրյուսովը կնոջ՝ Յոաննա Մատվեենայի հետ էր. դիմավորեցինք ծաղկեփնջերով, ծանոթացանք: Եկանք «Гранд отель» հյուրանոցը...: Հայրիկը նախօրոք վերցրել էր երկու սենյականոց լավագույն համարն այդ առաջնակարգ հյուրանոցում: ... Հայրիկը նրանց ընթրիքի հրավիրեց մեր տուն: Մոտը փող չուներ, Մակինցյանից պարտք վերցրեց: Ցանն էլ նախօրոք ուզինք չէինք պատրաստել, բայց հայրիկը ամենայն հանգստությամբ հյուրերին ու դիմավորողներին ընթրիքի հրավիրեց: Գնացինք Պուշկինի փողոցի շուկան, գնումներ արինք, բերինք տուն: Ժամը 9-ին հյուրերը եկան: Երեկոն անցավ ջերմ ու հետաքրքիր»<sup>5</sup>: Թումանյանի բնակարանում հավաքվել էին հայ և վրացի գրական-հասարակական գործիչներ. սկսվում է զրույց գրական հարցերից, Բրյուսովի՝ Անդրկովկասից ստացած տպավորություններից: Թումանյանը ցույց է տալիս Սայաթ-Նովայի ձեռագիրը, որն անցնում է ձեռքից ձեռք, Բրյուսովը՝ Վ. Իվանովի թարգմանությամբ կարդում է հատվածներ «Անուշից»<sup>6</sup>: «Հովհաննես Թումանյանի մասին» իր հուշերում Դ. Դեմիրճյանը գրում է. «Մինչև Բրյուսովի գեկուցման երեկոն Թումանյանի տունը հանդիսավոր տեսք էր ստացել: Բրյուսովն այնտեղ էր լինում համարյա ամբողջ օրեր, Թումանյանը ծանոթացնում էր այցելուներին հյուրի հետ, ներկայացնում էր հայ գրողներին»<sup>7</sup>:

<sup>4</sup> Անդրկովկաս կատարած Կ. Բալմոնտի այցելությունների մասին մանրամասն տես Ա. Զաքարյան. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920), Երևան, 1984, էջ 47–52:

<sup>5</sup> Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 136:

<sup>6</sup> «Հորիզոն» (Թիֆլիս), 14. I. 1916, «Кавказское слово» (Тифлис), 14. I. 1916; «Армянский вестник» (М.), 1916, № 1, с. 22.

<sup>7</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 39:

Հունվարի 13-ին Արտիստական ընկերության դահլիճում Բրյուսովը հանդես է գալիս բանախոսությունով: Նույն օրը «Հորիզոնը» տպագրում է Թումանյանի «Ողջունում ենք» վերնագրով հոդվածը, որտեղ հանգամանորեն գնահատվում է ռուս բանաստեղծների, ի մասնավորի՝ Բրյուսովի ձեռնարկած մեծ ու շնորհակալ գործը: Ռուս գրողները, գրում է նա, «Հանում են, թեև փոքր, բայց հին, կուլտուրական ժողովուրդների հոգևոր գանձերը, հիացմունքով ցուցադրում՝ սեր ու հարգանք առաջ բերելով ոչ միայն ռուս հասարակության մեջ, այլ հենց էդ փոքր ժողովուրդների միջև միջնորդ հանդիսանալով, իրար հետ ծանոթացնում ու կապում փոխադարձ սիրո կապերով:

Եվ անկասկած, մեծապես շոյում է մեր ժողովրդի ազգային ինքնասիրությունը և մխիթարում է նրա վշտացած սիրտը, էս հարգանքով ու սիրով լիքը վերաբերմունքը՝ մեծ գրականության կողմից»:

Այս նույն գաղափարներով էր տոգորված Թումանյանի բացման խոսքը Բրյուսովի դասախոսությունից առաջ: Նրա հեղինակավոր հավաստումով՝ հայ ժողովրդի ազգային ծանր աղետի օրերին, երբ նա իրեն զգում է «Ֆիզիկապես անզոր ու տկար», հյուսիսից եկել է ռուս ճանաչված բանաստեղծ Բրյուսովը՝ խոսելու հայոց բանաստեղծության մասին, որը համարում է «հայ ազգի ազնվականության վկայական»: «Ողջունում եմ Ձեզ, որպես ռուսական գրականության խոշոր ներկայացուցիչ, – ասում է Թումանյանը, – և սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև – Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տոլստոյի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը: Մենք ինքներս մեր կողմից վաղուց ենք կապված ձեր գրականության հետ, այժմ է՛լ ավելի ուրախ ենք փոխադարձ կապի համար, որ հաստատում եք դուք, և աստված տա՝ դուք միակը չլինեք, որ ռուս բարձր մտավորականության կողմից գալիս եք մեզ մոտ սիրո ու հարգանքի խոսքերով»<sup>8</sup>: Այնուհետև Բրյուսովը կարդում է իր դասախոսությունը, որից հետո ի պատիվ նրա «Հայ գրողների կովկասյան ընկերությունը» Արտիստական թատրոնի ընդարձակ դահլիճում տալիս է հանդիսավոր ճաշկերույթ: Ներկա են լինում հայ, վրացի և ռուս մտավորականության, քաղաքի հասարակայնության ու հոգևոր դասի ներկայացուցիչներ, լրագրողներ, շուրջ 100 մարդ: Ճաշկերույթի կառավարիչ, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանի խոսքից հետո Թումանյանը կրկին ողջունում է ռուս գրականության այն ներկայացուցիչներին, որոնք «հայկական այս սարսափների օրերում, իրանց խորին ուշադրությունն են դարձրել նրա կուլտուրայի ուսումնասիրության վրա և այն ներկայացնում են ռուս մեծ ժողովրդին»: Այդ խոսքին Բրյուսովն արձագանքում է «մի զգայուն պատասխան ճա-

<sup>8</sup> Վ. Բրյուսով. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, կազմեց և ծանոթագրեց Ի. Ռ. Սաֆրազբեկյան, Երևան, 1967, էջ 250:

ուով», իր և իր գրչակիցների անունից խորին շնորհակալություն հայտնում այն վերաբերմունքի համար, որին արժանացել է իրենց կատարած գործը<sup>9</sup>: Ճաշացուցակը հայկական ոճով ձևավորել էր Փ. Թերլեմեզյանը: Նկարչի վկայությամբ՝ ընթրիքի միջոցին իրեն է մոտեցել Թումանյանը և հայտնել, թե Բրյուսովին անչափ դուր է եկել ճաշացուցակի ձևավորումն ու ցանկանում է իր հետ ծանոթանալ: Դրա մի նմուշը նվիրում են ուսու բանաստեղծին<sup>10</sup>:

«Բրյուսովյան շաբաթը Թիֆլիսում՝ տոնական շաբաթ էր»՝ իրեն հատուկ հակիրճությամբ այդպես է բնութագրել այդ օրերը Հովհ. Թումանյանը:

Բրյուսովի անդրկովկասյան ուղևորության մասին խոսելիս անհրաժեշտաբար հարկ է զգացվում անդրադառնալու Հովհ. Թումանյանի հետ նրա հանդիպումներին, փոխադարձ վերաբերմունքին ու փոխհարաբերություններին: Պատճառներից մեկը նախ այն է, որ նամակներում, հուշերում մի անգամ չէ, որ նշվում է, թե Բրյուսովը Թիֆլիսում ամենուրեք շրջապատված է եղել Թումանյանի հոգատարությամբ: Ն. Թումանյանի մտաբերումով՝ քաղաքում եղած օրերին նրանք հանդիպել են ամեն օր, շրջել, զրուցել: Առավել մանրամասն են Վ. Բրյուսովի կնոջ՝ Ի. Բրյուսովայի մտաբերումները: «Թումանյանի հետ Թիֆլիսում» վերնագրով հուշերում նա գրում է. «Թիֆլիսի հանդիպումների մասին եղած իմ բոլոր հիշողություններից Հովհաննես Թումանյանին վերաբերող հուշերս ամենապայծառն են: Բոլոր դեմքերը մթազնվել են անմոռաց բանաստեղծի անջնջելի կերպարի առաջ»<sup>11</sup>, – գրում է Բրյուսովյան թվարկելով հետաքրքիր նախաձեռնությունների, իրենց նկատմամբ դրսևորած ջերմ ուշադրության բազմաթիվ օրինակներ. Թումանյանը Բրյուսովներին դիմավորում է, ճանապարհում, նա Բրյուսովի դասախոսությունների, նրա պատվին ճոխ ընդունելությունների կազմակերպիչն է, Թումանյանն է նախաձեռնում այց Սայթ-Նովայի գերեզմանին, նա է նրանց ուղեկցում դեպի Ս. Դավթի լեռն ու Ս. Դավթի վանքը, որպեսզի ուսու բանաստեղծը խոնարհվի Գրիբոյեդովի շիրիմի առջև, Բրյուսովներին տանում է Թիֆլիսի հռչակավոր բուսաբանական այգին, միասին շրջում քաղաքում և նրա շրջակայքում: Թումանյանն է օգնում նրանց մեկնել Երևան: «Երբ մենք, վերադառնալով Երևանից, կրկին անգամ եկանք Թիֆլիս, Թումանյանն ու Բրյուսովը հանդիպեցին, համբուրվեցին որպես մերձավորներ, – գրում է Ի. Բրյուսովյան: – Մեծ դիտողականություն չէր պահանջվում նրանց դեմքերի վրա մի տեսակ առանձին զսպված, ջերմ զգացմունք տեսնելու համար»<sup>12</sup>: Նա նշում է, որ բանաստեղծները կարճ ժամանակում դարձել էին մերձավոր հարազատներ. դրա վկայություններից մեկն էլ նրանց ազատ, անկաշկանդ զրույցներն են եղել: Իսկ

<sup>9</sup> «Մշակ» (Թիֆլիս), 15. I. 1916, «Պայքար» (Թիֆլիս), 17. I. 1916:

<sup>10</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 567–568:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 694:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 695:

զրույցների բուն նյութը, մշտական առանցքը, բնականաբար, եղել է հայոց բանաստեղծութունը:

Այդ մասին Թումանյանը թողել է շատ ուշագրավ խոստովանություն՝ հուշելով նաև դրանց բովանդակությունը: Թումանյանի տողերից երևում է, որ Բրյուսովը, ծանոթանալով հայոց բանաստեղծությանն ու մշակութին, զարմանք է հայտնել, թե ինչպես է, որ ռուս հասարակայնությունն անտեղյակ է մնացել այդ գանձերին: Ի պատասխան՝ հայ մեծ բանաստեղծը տվել է ցարիզմի ազգահալած քաղաքականությունը մերկացնող իր հետևյալ բացատրությունը. «Ու մի օր էլ, խնջույքի մեջ, դիմելով նրան (Վ. Բրյուսովին – Ա. Ջ.), ես էսպես բացատրեցի նրա համար զարմանալի երևույթը, թե ինչպես է եղել, որ իրենք անծանոթ են մնացել մեր բանաստեղծությանը: Ասի՝ մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ոստիկաններ են ուղարկել, թե գնացեք գողեր բռնեցեք ու սրիկաներ... Ժանդարմներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք: Նրանք էլ եկել են – հեղափոխականներ են գտել: Եվ այլն և այլն... Բայց բանաստեղծներ չեն ուղարկել, թե գնացեք Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն որոնեցեք: Ահա՛, առաջին անգամն է ռուս բանաստեղծը գալիս մեզ մոտ հատկապես մեր բանաստեղծության համար: Առաջին անգամն են ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում – և գտնում են լիուլի, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան ...»<sup>13</sup>:

«Հայաստանի պոեզիայի» առաջաբանում Բրյուսովը խոստովանել է, որ անդրկովկասյան ուղևորության նպատակներից մեկն էլ եղել է հետևյալը. «Իմ փոքրիկ ուղևորությունը մի տեսակ ավարտեց Հայաստանին վերաբերող իմ աշխատանքների առաջին շրջանը՝ թույլ տալով, որ կենդանի տպավորություններով հաստատեմ կաբինետային նկատառումներս և հեղինակավոր անձանց քննադատությունները կամ հավանություններ ստուգեմ այն եզրակացությունները, որոնց հանգել էի ինքնուրույն աշխատելիս»<sup>14</sup>: «Հայաստանի պոեզիան» ամբողջացնելուց առաջ տեղում հայ բանաստեղծների հետ անմիջական շփումներով նա ճշտել է հայոց բազմադարյան բանաստեղծության գնահատության իր ընդհանուր ելակետերը, ինչպես և առանձին բանաստեղծների մասին իր տեսակետները:

Դ. Դեմիրճյանը գրում է, որ Թումանյանը երկյուղ էր կրում, որ «Հայաստանի պոեզիայի» պես «նոր և ուշագրավ» ձեռնարկը «կարող էր հանդիպել հայ մտավորականության որոշ մասի խեթ վերաբերմունքին», ուստի և մտավորականության շրջաններում, այդ օրերին «հանդիսավոր տեսք ստացած» իր տանը լայնորեն ներկայացնում է Բրյուսովին ու նրա գործը: Ինչ վերաբերում է «Հայաստանի պոեզիայի» նկատմամբ եղած տեսակետներին, ապա Դեմիրճյանի հավաստումով՝ «Թումանյանի և Բրյուսովի տեսակետները բռնում

<sup>13</sup> Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 339:

<sup>14</sup> Վ. Բրյուսով. նշվ. գիրք, էջ 35:

էին շատ բաներում: Դա մեր «Վերնատան» տեսակետներն էին: Այն, որ մեր գրականությունը հարատև աստղերը կարող են լինել միայն այն գրողները, հնագույն կամ նորագույն, որոնք ... տվել են համամարդկային գաղափարներ և պայքարել են գրական բարձր որակի համար: Հայ կլասիկների և գեղարվեստական արժեքների վերհանման խնդիրն էր ծեծվում»<sup>15</sup>:

Անառարկելի են հայ հին և միջնադարյան բանաստեղծների ու դասականների գնահատման բրյուսովյան չափանիշների, նրանց ստեղծագործության որակավորումների համընկնումները Թումանյանի կարծիքներին: Ինչպես օրինակ, Սայաթ-Նովայի վերաբերյալ համընկնում են անգամ նախասիրությունները: Այնպես որ միանգամայն իրավացի է Բրյուսովի գնահատողներից գրականագետ Ա. Տերտերյանը, երբ գրում է. «Հայտնի է, որ Բրյուսովը ո՛չ միայն լավ էր խոսում, այլև լավ էր լսում ... Լավ լսելու ընդունակություն ունենալով՝ Վ. Բրյուսովը սպունգի պես ծծել է այն ամենը, ինչ լսել էր մեր նշանավոր բանաստեղծներից հայ գրականության, հայ պատմության, հայ դիցաբանության խնդիրների վերաբերմամբ: Եվ այդ բոլոր լսածները, ո՛չ միայն Թումանյանի և Հովհաննեսիայանի հաղորդումները, այլև շատ ուրիշ հայ գործիչների հետ ունեցած շփումները իզուր չեն անցել Բրյուսովի համար: Նրա քննադատական կարծիքների մեջ կան շատ տեղեր, որոնք ցույց են տալիս, որ ոուս բանաստեղծը աշխատել է հանրագումարի բերել հայ առաջավոր հասարակության մեջ իշխող որոշ տեսակետները»<sup>16</sup>:

Կասկած չի կարող լինել, որ Թումանյանի ու Բրյուսովի զրույցներում միաժամանակ շոշափվել են գրականության առաքելության, բանաստեղծի կոչման և նման հարցեր՝ անշուշտ, կապված հատկապես պատերազմական իրադրության հետ: Թե ինչն է եղել նրանց փոխանակած մտորումների ոգին, պարզորոշ հուշում է Թումանյանի բանաստեղծությունը՝ նվիրված Բրյուսովին: Իր գեղարվեստական բնույթով այդ բանաստեղծությունը էպիկական շնչով հյուսված յուրատեսակ կոչ է՝ ուղղված «մարդկանց սրտերի» տիրակալներին՝ Բրյուսովի հետ միասին աշխարհի իր գրչեղբայրներին: Արժանապատվությամբ ներծծված մի կոչ, որ վերաճում է մարդկային սիրո ու եղբայրության, բարու, գեղեցիկի ու վեհ գործերի մրցակցության հրավեր-հանդեսի.

Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից,  
Կոչում դեպ բարին, դեպ վսեմն ու սեր  
Մեր ցավոտ սրտում զարթնում են նորից  
Երջանիկ կյանքի իղձեր ու հույզեր:

<sup>15</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 38–39:

<sup>16</sup> Ա. Տերտերյան. Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան, Երևան, 1944, էջ 34:

Աշխարհից աշխարհ թող ձեն տան իրար,  
Որոնք իշխում են մարդկանց սրտերին,  
Ազգերն ինչ ունեն ազնիվ ու պայծառ,  
Թող ի մի բերեն էս դառն օրերին:

Եվ թող սրտերի դաշըն կապեն կուռ,  
Ամուր շաղկապեն անսահման սիրով,  
Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,  
Կյանքը ջերմացնեն հոգեղեն հրրով:

Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝  
Թե ով ավելի ուժգին կըսիրի,  
Եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝  
Բարու, գեղեցկի ու վեհ գործերի:

Եվ բանաստեղծի խոհերն իմաստուն  
Քանզի խոսքեր չեն ապարդյուն ու սին,  
Եվ քանզի մարդը կարող է մարդուն  
Սիրել – երջանիկ ապրել միասին<sup>17</sup>:

Առաջին տողից վերջինը՝ բանաստեղծությունը ներթափանցված է համամարդկային սիրով և հույսերով, որոնց մասին բնաջնջման եզրին հասած հայ ժողովրդի բանաստեղծը խոսում է մարդկային սրտեր վարակող հոգեղեն անմիջականությունում ու ջերմությունում:

Նույնն է վկայում և Բրյուսովի «ձոնը» թումանյանին (թվագրված է 1916 թ., փետրվարի 25, Մոսկվա), որը վերը բերված բանաստեղծության ուղղակի պատասխանն է՝ դարձյալ սնունդ առած նրանց գրույցներից, խոհերից ու մտորումներից: Առաջին տողերից Պուշկինի՝ աքսորյալ դեկաբրիստներին հղած բանաստեղծության ռիթմերն հիշեցնող Բրյուսովի «ձոնը» մարմնավորում է հավատ, տոգորված է այն տրամաբանությունում, որ, ի վերջո, մութը կխոցվի, և աստեղագարդ երկնքի տակ կտոնվի եղբայրություն ու սիրո երազած հանդեսը:

Բախտի հատուցումը կգա՝ մի օր,  
Որ սպասել եք դարեր այսքան:  
Դու աստեղատուն հիմնեցիր նոր  
Երկնակամարում քո հայկական:

Թող փոքրիկ և մեծ աստղերը պարզ  
Շրջապատեն քեզ՝ մութը խոցած.  
Իսկ մենք կնայենք ոլորտն անհաս՝  
Քո պայծառ լույսով սքանչացած<sup>18</sup>:

<sup>17</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լրակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 1, Երևան, 1988, էջ 283:

<sup>18</sup> Վ. Բրյուսով. նշվ. գիրքը, էջ 22:

Իր երկերի չորս հատորի հետ Մոսկվայից Թիֆլիս առաքած այս «ձոնը» (բանաստեղծությունը որպես մակագրությունն Բրյուսովը գրել էր երկերի I հատորի վրա) թանկ էր ինչպես Թումանյանի, այնպես էլ նրա ժողովրդի համար, այդ ժողովրդին այն բերում էր ամենակարևորը՝ «բախտի հատուցման» հավատ:

Թումանյանը մոգական գրուցակից էր, նրա էպիկորեն հանդարտ խոսքն ուներ ազդեցության և համակումի ինքնաբուխ լիցք, որը տարբեր առիթներով խոստովանել է նաև Բրյուսովը: «Հայերին» բանաստեղծության ինքնագրին կից, որը գրել է հունվարի 23-ին, կարդում ենք. «Հովհաննես Թումանյանին այս բանաստեղծությունը՝ ոգեշնչված նրա գրույցներից, երախտապարտ հեղինակից»: Նամակներից մեկում էլ գրում է. «... իմ հիշողությունները մեր հանդիպման մասին մնում են և կմնան միշտ ինձ համար ամենաթանկագին հուշերի շարքում»<sup>19</sup>:

«Հայաստանի պոեզիան» ժողովածուում ամբողջության մեջ բնութագրելով Թումանյանին՝ Բրյուսովը գրում է. «Լեռնային Լոուու բնիկ, շատ կողմերից ինքնուս, հսկայական, բայց ոչ սիստեմատիկ ընթերցանության տեր, հայ հնաշխարհի սիրահարված և ժողովրդական կենցաղակերպին հոգով մոտիկ Թումանյանը կարծես մարմնացումն է հարավցու տիպի, որի մեջ հրաշագեղորեն միահյուսվում են երկու նախասկիզբ՝ քեֆն ու հանճարը: Այսօր համարյա թե նոր պոեզիայի «նահապետ», որովհետև բանաստեղծների նոր սերունդն արդեն կարողացել է աճել ու նոր իդեալներ բերել իր հետ, Թումանյանը Թիֆլիսի ամբողջ հայ գրական կյանքի կենտրոնն է: Թումանյանի՝ որպես բանաստեղծի, ժողովրդականությունը հսկայական է և առանձնապես աճում է այն բանի շնորհիվ, որ նա գրել է բազմաթիվ մանկական գրքեր՝ հեքիաթներ, առասպելներ, պատմվածքներ՝ մեծ մասամբ չափածո, որոնք ազահաբար կարդում են մանուկները: ... Եվ կարծես ողջ Թիֆլիսում չկա մի մարդ, որը չճանաչի բանաստեղծի բնորոշ, այնչեպ գլուխը ու չսիրի նրան որպես ազնիվ մարդու ու սքանչելի գրողի: ... Այլ ժողովրդի ընթերցողը ծանոթանալով Թումանյանի պոեմներին (օր. «Անուշ»-ին), ժամանակակից Հայաստանն ու նրա կյանքը ճանաչելու ավելի բան կստանա, քան կարող են տալ սոցիալական հետազոտությունների հաստ հատորները: Պոետը ցայտուն ու վառ գծերով վերստեղծում է հարազատ ժողովրդի կենցաղը, սակայն անում է դա արվեստագետի պես՝ կյանքի կոչելով ոչ այնքան անհատականացված, որքան տիպական անմոռանալի կերպարներ: ... Ամբողջովին վերցրած՝ Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան ու նոր, հարություն առած ու բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վարպետի ձեռքով»<sup>20</sup>:

1917 թ. հունվարին Վ. Բրյուսովը դասախոսություններով կրկին գալիս է Բաքու: Նրա ելույթները նախատեսված են եղել նաև Թիֆ-

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 220:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 120–122:



լիսում: Սակայն նախնական որոշումը փոխվել է: Շուտով Թումանյանին ուղղված նախ հեռագրով, ապա նամակով Բրյուսովը խնդրում է կամ դասախոսությունները չեղյալ համարել, կամ էլ՝ հետաձգել: «Ձգիտե՛մ՝ ինչպես ներողություն խնդրել Ձեզնից՝ Ձեզ պատճառածս գլխացավանքի համար – խոստանալով գալ Թիֆլիս, սակայն հետո ստիպված եղա հրաժարվել այդ պատվից ու բավականությունից, որովհետև, ճշմարիտն ասած, ես մեծ պատիվ եմ համարում դասախոսություն կարգալ Ձեր նախագահությամբ, և ինձ համար հսկայական հաճույք կլիներ նորից տեսնվել Ձեզ հետ և Թիֆլիսի այն ամբողջ շրջանի հետ, որն անցյալ տարի այնպես զրկաբաց ընդունեց մեզ՝ Ի. Մ. և ինձ, և որը մենք սրտանց սիրեցինք (Բրյուսովն այս անգամ ևս Բաքու էր եկել կնոջ հետ – Ա. Զ.)», – իր նամակում գրել է Բրյուսովը: Այնուհետև հանգամանորեն թվարկելով պատճառները՝ նա կրկին հավաստում է. «... ես Ձեզ ... պիտի խնդրեմ իմ այս մերժմանը վերաբերվել ներողամտությամբ և հավատալ, որ ինձ ամենից շատ վիշտ պատճառեց Ձեզ հետ տեսնվելու և նորից Թիֆլիսում լինելու երազանքից հրաժարվելը»<sup>21</sup>:

Վ. Բրյուսովը վերադառնում է Մոսկվա, և Թումանյանի հետ այլևս չի հանդիպում: «Մոսկվայում, Թումանյանի կյանքի վերջին տարում, նրանց միջև հանդիպում տեղի չունեցավ: Այդպես ստացվեց ամենից առաջ իմ մեղքով, – գրում է Ի. Բրյուսովան: – Ես հիվանդ Թումանյանին այցելեցի հիվանդանոցում՝ վերահաստությունից առաջ: Տեսնելով իմ դիմաց ամեն ինչով աշխուժորեն հետաքրքրվող մարդու, ես չկարողացա երևակայել, որ նրա օրերը հաշված են: Ե՛ս հորդորեցի Բրյուսովին հետաձգել հանդիպումը մինչև Թումանյանի առողջանալը»<sup>22</sup>:

Թումանյանի մահվան առիթով Բրյուսովը գրում է «Հովհաննես Թումանյանի մասին (1869 – 1923)» վերնագրով հոդված: «Հայաստանը ողբում է իր ժողովրդական բանաստեղծ Հովհաննես Թումանյանի վաղաժամ մահը, – մասնավորապես ասված է հոդվածում: – ... Թումանյանը «ռուսական օրիենտացիայի» համոզված կողմնակից էր ... Մի անգամ, երբ ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության ժամանակ պատգամավորներ էին հավաքվել հայկական բոլոր գաղութներից (Վենետիկ և այլն) և ընտրությունից հետո եղավ ընկերական խնջույք, նրա «Թամազան» (նախագահ) ընտրվեց դարձյալ Հովհաննես Թումանյանը և հետո նրան, հանաքով, անվանում էին «ամենայն հայոց Թամազա»: ... Հայաստանի Սովետական կառավարութունը ժողովրդական բանաստեղծին նյութական միջոցներ տվեց մեկնելու Մոսկվա ու Գերմանիա՝ բուժվելու, բայց նրա կյանքն արդեն վերջացած էր, և մարտի 23-ին նա վախճանվեց մոսկովյան մի հիվանդանոցում: Հուղարկավորության ծախսերը նույնպես իր վրա վերցրեց հայկական կառավարութունը: Բանաստեղծի աճյունը փոխադրվելու է իր հայրենի Դսեղ գյուղը՝ լեռնային Լոռի,

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 221–222:

<sup>22</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 695:

և պոետի գերեզմանը շրջապատվելու է այն բնությամբ, այն իրադրությունում, որ այնքան լավ ճանաչում էր նա, այնպես սիրում էր և այնքան վարպետությունը պատկերել է իր բանաստեղծական գործերում»<sup>23</sup>:

Թումանյանի և Բրյուսովի բարեկամությունը շարունակվում է փոխանցվելով Բրյուսովի այրուն և Թումանյանի ժառանգներին<sup>24</sup>:

Թերեքի կազակ, ռուսական բանակի գնդապետ, ապա գեներալ-մայոր, Վանի ջոկատի, այնուհետև Կովկասյան Կարգ բանակային կորպուսի հրամանատար, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը (1871 – ?) եղել է վառ անհատականություն՝ իր մեջ համակցել է գինվորականին, բանաստեղծին և հասարակական գործչին բնորոշ գծեր: Կովկասից ռուսական բանակի հեռանալուց հետո մնալով Անդրկովկասում, ապրելով Թիֆլիսում, նա ախտիվորեն մասնակցել է գրական, հասարակական-քաղաքական կյանքին, մասնավորապես՝ հայ հասարակայնությունը հուզող կարևոր հարցերի ու խնդիրների լուծմանը: Բարեկամական, ընկերական մտերիմ հարաբերություններ է ունեցել, աշխատել է հայ մշակույթի, գրականության, հասարակական-քաղաքական, գինվորական բազում նշանավոր գործիչների հետ: Առանձնապես մտերիմ է եղել Թումանյանի հետ:

Արտավազը Թումանյանը Հովհ. Թումանյանին Վանից Թիֆլիս ուղարկած 1916 թ. մարտի 26 թվակիր նամակում գրում է. «Հայրիկ ջան, Երևի արդեն լսած կլինես գեներալ Կուլեբյակինի մասին: Երեկ մեզ մոտ էր ընթրիքին և ծանոթացանք: 50 անց մի ուրախ և պատկառելի պարզ մարդ է:

Կարդաց բավականաչափ ոտանավորներ, ապա առանձնապես իմ խնդրանքով կարդաց «Ախթամարը»: «Ախթամարի» մեջ էլ մի քանի կտորներ կան, որ շատ վարպետորեն, կենդանի է գրած:

Մոտը մի քանի հաստ տետրակներ ունեք, և մեծ մասը հայկական ոգով է գրած:

Մինչև ուշ գիշեր հետաքրքրություններ լսում էինք գեներալ-պոետի արտասանությունները:

Ընթրիքից հետո, գնալիս ինքը հանեց մի ուրիշ տետրակ և տվեց ինձ կարդալու՝ «Մհերի դուռն» էր: Իրոք շատ հաջող կտորներ կան և նմանություններ քո «Դավթին»: Բայց մարդը ասում է՝ չեմ կարդացել, երեկ ընթրիքին քո կենացը առաջարկեց ի դեմս ... որդու:

Խնդրեց, որ վաղը, այսինքն էսօր, վերադարձնեմ «Մհերի դուռը»: Հենց գնում եմ մոտը»<sup>25</sup>:

<sup>23</sup> Վ. Բրյուսով. նշվ. գիրքը, էջ 193–196:

<sup>24</sup> Անդրկովկաս կատարած Վ. Բրյուսովի այցելությունների, «Հայաստանի պոեզիան» ժողովածուի մասին մանրամասն տե՛ս А. Закарян. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, 2016.

<sup>25</sup> Թումանյանի ընտանիքի նամակներին, կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյան, Երևան, 2002, էջ 80:

Ի դեպ, 1917 թ. «Վերաշինություն» հայկական կոմիտեն հրատարակել էր Կուլեբյակի «Մհերի դուռը: Վանի արձագանքները» գիրքը: «Մհերի դուռը» «Սասնա ծռեր» էպոսի Սասունցի Դավթին և Փոքր Մհերին վերաբերող ավանդավեպի մշակումն էր: Գիրքը, նրան կցված ծանոթագրությունները հետաքրքրություն են ներկայացնում Կովկասյան ճակատի, հատկապես Վանի իրադարձությունների վերակենդանացման առումով:

1917 թ. հունվարի 10-ին գորավարը Թումանյանին է նվիրել իր գիրքը՝ «Гребеничка в плену. Казачья старина» (Վաղդիկավկաս, 1913), հետևյալ ընծայագրով՝ «Սրտանց Հայաստանի բանաստեղծ Հովհաննես Թումանյանին՝ հեղինակ Ալեքսանդր Կուլեբյակիինից: 10/1 1917. Թիֆլիս»:

Ա. Կուլեբյակինը քաջատեղյակ է եղել Թիֆլիսի գրական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Դրա մասին են վկայում, մասնավորապես, Թումանյանին գրած նրա նամակները: Այսպես, 1917 թ. հունվարի 29-ին պոետ-գեներալը գրում է. «Բավականություն կհանդիպեի Ձեզ հետ, սակայն, ցավոք, առայժմ ոչ մի կերպ չեմ կարողանում ժամանակ գտնել: Վաղը ցանկանում եմ գնալ Իգոր Սևերյանինի վերջին երեկոյին, որպեսզի նրա մասին ունենամ սեփական պատկերացում ... Թվում է, չեմ լսելու Վ. Բրյուսովին ... Առողջ եղեք: Բարևներ Ձեր ընտանիքին: Կինս խոնարհվում է Ձեր առաջ: Անկեղծորեն՝ Ձեր Ա. Կուլեբյակին»<sup>26</sup>: Նույն թվականի փետրվարի 28-ի նամակում էլ գրում է. «... Ցավում եմ, որ քիչ հանդիպեցինք: Այսօր մեկնում եմ Իգորի: Վանի մասին բանաստեղծությունների գիրքը (խոսքը «Մհերի դուռը: Վանի արձագանքները» գրքի մասին է – Ա. Զ.) շուտով լույս կտեսնի: Կցանկանայի անձամբ ծանոթանալ Վ. Յա. Բրյուսովի հետ, բայց չգիտեմ, կհաջողվի ինձ Ձատիկին գալ. կախված է մեր զինվորական գործերից: Բարևներ Ձեր ընտանիքին: Կինս խոնարհվում է Ձեր առաջ: Ամենայն բարիք: Անկեղծորեն՝ Ձեր Ա. Կուլեբյակին»<sup>27</sup>:

Այդ ժամանակաշրջանում Կուլեբյակինը գրում է 6 մասից բաղկացած «Մասիսի խաչը: Երկու լեզենդ» («Крест Масиса. Две легенды») ստեղծագործությունը, որը նվիրում է Թումանյանին՝ հետևյալ ընծայագրով. «Բարի հիշատակ սրտանց հարգող Հայաստանի բանաստեղծ Հովհաննես Փաղեկիչ Թումանյանին՝ հավատարիմ հեղինակից: Ա. Կուլեբյակին: 9. IV. 1917 Թիֆլիս»<sup>28</sup>:

1917 թ. կեսերին հիմնավորվելով Թիֆլիսում՝ Կուլեբյակինը հաճախակի այցելում է Թումանյանին: «Հովհաննես Թումանյանի մասին» հոշերում Դ. Դեմիրճյանը գրում է. «Նրա (Թումանյանի – Ա. Զ.) հետ բարեկամական կամ այլ կապեր ունեին ժամանակի բոլոր քաղաքական, կուլտուրական, առևտրական, էլ չեմ ասում արվեստի

<sup>26</sup> А. Закарян. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003, с. 210.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 31:

ու գրականության մարդիկ: Պակաս չէին և գինվորականները վերջին տարիներին: Նրան էր դիմում գնդապետ թե՞ գեներալ Կուլեբյակինը, որ Վանի ճակատում սկսել էր ծանոթանալ հայկական հնությունների և հայերի հետ, սկսել էր պոեմներ գրել Վանա կյանքից»<sup>29</sup>:

Ջալալ Տեր-Գրիգորյանը (Սալլյումյան) իր հուշերում գրում է. «Թումանյանի մոտ հաճախ պատահել եմ նաև գեներալ-մայոր Ա. Պ. Կուլեբյակինին ... իհարկե, ոչ իբրև գեներալ, այլ որպես բանաստեղծ: Նա շատ բարձր էր գնահատում մեր բանաստեղծին, ջերմ հարգանքով էր վերաբերվում նրան և իր «На нэ» պոեմը («Ахлатская поэма», որ սպազորված էր Բաթումում հրատարակված ... «Джейран» ժողովածուում) նվիրել է Թումանյանին: Զրույցն Ալեքսանդր Կուլեբյակինի հետ նույնպես զուտ գրական բնույթ էր կրում: Մի անգամ Թումանյանը կարգաց իր թարգմանած «Ջրահեղձը», չհայտնելով, որ դա Պուլչիինի «Утопленник»-ն է: Կուլեբյակինը, որ հայերեն չգիտեր, 2–3 տուն լսելուց հետո իսկույն ասաց.

– Դա Պուլչիինի «Утопленник»-ն է:

Նա, իհարկե, այդ բանը հասկացավ չափից, ուրիշից ու համապատասխան արտասանությունից: Այնուհետև զրույցը շարունակվեց Պուլչիինի շուրջը: Թումանյանն ասում էր, որ ուղևորները նրանից ավելի տաղանդավոր բանաստեղծ չեն ունեցել մինչև հիմա: Կուլեբյակինը համաձայն էր, որ Պուլչիինը հիրավի մեծ բանաստեղծ է, բայց նրանից ավելի մեծը եղել է, և կարծես սպասում էր, որ մենք նշենք Պուլչիինից ավելի մեծ այդ բանաստեղծին: Մենք գլխի չընկանք, թե ո՛ւմ է ակնարկում Կուլեբյակինը. և նա նշեց «Слово о полку Игореве» XII դարում ստեղծված պոեմի անհայտ հեղինակին»<sup>30</sup>:

Հիշենք նաև Ն. Թումանյանի վկայությունը. «Առավոտը (1919 թ. հունվարի 13-ին – Ա. Զ.) հայրիկի մոտ եկան Ֆրանսիական հյուպատոս Պոլ Դյուբուան և գեներալ Կուլեբյակինը»<sup>31</sup>:

Կուլեբյակինն ակտիվ մասնակցություն է ունեցել Թումանյանի ծննդյան 50-ամյակին նվիրված բոլոր միջոցառումներին: Շփվելով Թումանյանի հետ, նաև նրա միջոցով ծանոթանալով հայ ժողովրդին ու նրա մեծ վշտին՝ Կուլեբյակինը հավատում էր հայ ժողովրդի վերածննդին, նրա վառ ապագային: Դրա վկայությունն ու ապացույցն է «Հովհաննես Թումանյանին. սոնետ-ակրոստիքոս» վերնագրով խորհմաստ բանաստեղծությունը, որը պոետ-գեներալը կարգացել է՝ 1919 թ. փետրվարի 20-ին՝ Թումանյանի ծննդյան 50-ամյակին նվիրված «Բանաստեղծների համաքարտության» 24-րդ նիստին.

<sup>29</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 37:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 409:

<sup>31</sup> Ն. Թումանյան. նշվ. գիրքը, էջ 173:

Հայոց բանաստեղծ, քո հոգում բարի  
Որքա՛ն թախիժ կա, որքա՛ն կշտամբանք.  
Վերջապես աստված ժողովուրդներին  
Հանգի՞ստ կառաքի, թե՞ միայն փորձանք:

Թեև վերքդ խոր, բայց կապաքինվի,  
Ու սրտերի մեջ կշողա նոր լույս,  
Մի հուր սրբազան, երբ հիսուն տարի  
Արդեն քեզ համար երազ է և հույս:

Նայիր, աշխարհը անտառ է մի մուխ,  
Յուրաքանչյուր թուփ շիրիմ է ասես:  
Ահա շողում է երկինքը կապույտ.

Նոր մի Հայաստան կշողա վառման,  
Ի՛նչ հեռաստան է բացվում, Հովհաննե՛ս:  
Ներշնչվի՛ր. մարդկանց պե՛տք է Թումանյան<sup>32</sup>:

Ն. Թումանյանն իր հուշերում՝ 1919 թ. դեկտեմբերի 24-ի տակ գրում է. «Երեկոյան հյուրեր շատ կային՝ պրոֆ. Տոտոյանը, Լիսիցյանը, Գորոզեցիին կնոջ հետ, Կուլեբյակիներ և ուրիշներ: Այդ երեկո հայրիկն իր նոր քառյակներից մի քանիսը կարդաց: Տպավորությունն ուժեղ էր, բոլորը հավանել էին: Հետո ինքը սկսեց խոսել քառյակների մասին»<sup>33</sup>:

Անշուշտ, Թումանյանի հետ Կուլեբյակիների հենց նման հանդիպումներն ու զրույցներն են նպաստել քառյակների հանդեպ վերջինիս անթաքույց հետաքրքրության դրսևորմանը, որոնց թարգմանություններով նա զբաղվել է լրջորեն: Այսպես, Թումանյանին հասցեագրած և վերը հիշատակված 1917 թ. հունվարի 29-ի թվակիր նամակի հետ նրան է ուղարկում Օմար Խայամից թարգմանած 66 քառյակ՝ ընծայագրով. «Հովհաննես Ֆադեևիչ Թումանյանին՝ նրան հարգող հեղինակից: Ա. Կուլեբյակին: 29/1 1917 թ.»:

Պոետ-գեներալը, ինչպես ասվեց, մշակել է հայ ժողովրդական էպոսը, անդրադարձել լեգենդներին, կատարել թարգմանություններ Թումանյանի գործերից: «Տողացի ու բառացի» թարգմանել է նրա «Վերջին օրը» ստեղծագործությունը:

Կուլեբյակիին ամենակտիվ մասնակցությունն է ունեցել 1918 թ. նոյեմբերի 21-ին Թիֆլիսում ստեղծված «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին: Գործի նախանձախնդիրը Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդն էր՝ Թումանյանի գլխավորությամբ: Հանձնաժողովը նաև նյութեր էր հավաքում պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մասին: Կուլեբյակիներ

<sup>32</sup> Ձոներ Թումանյանին, էջ 18:

<sup>33</sup> Ն. Թումանյան. նշվ. գիրքը, էջ 216:

գլխավորել է հանձնաժողովի չորս բաժիններից երկրորդը՝ ռազմապատմականը: Հանձնաժողովի գործունեությունը հետ կապված թուամանյանին բազմաթիվ նամակներ է հասցեագրել: Այսպես, 1919 թ. փետրվարի 5-ին գրած նամակում, մասնավորապես, ասում է. «... Հայ ժողովրդի համար անհրաժեշտ է, որպեսզի Փարիզի հաշտության համաժողովում բոլոր ազգերի և համաշխարհային պատմության առջև նա կարողանա ներկայացնել փաստական ապացույցներ իր ակտիվ, արյունով և անհամար զոհերով հաստատված մասնակցությունը համաշխարհային պատերազմին՝ մեզ դաշնակից պետություններին կազմում, նույնիսկ երբ նա բացարձակապես միայնակ մնաց այդ անհավասար պայքարում»<sup>34</sup>:

1919 թ. հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետության նախարարապետ Ալ. Խատիսյանին հասցեագրած նամակում Կուլեբյակինի կատարած հսկայական աշխատանքի մասին թուամանյանը գրում է. հունվար ամսից ի վեր հանձնաժողովը Փարիզի խորհրդաժողովում հայկական պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանին այլ նյութերի թվում հանձնել է «Մի մասը (314 էջ) այն գեկուցումից, որ պատրաստել է հանձնաժողովի գրնվորական մասի վարիչ գեներալ Կուլեբյակինը հայերի մասնակցության մասին համաշխարհային պատերազմում»<sup>35</sup>:

1919 թ. մարտի 31-ին թուամանյանին հասցեագրած նամակում Կուլեբյակինը հանգամանորեն ներկայացնում է Ֆինանսական սղություն պատճառով բաժնի աշխատանքների «ճգնաժամային» վիճակը<sup>36</sup>: Ի վերջո, հենց դա էլ հնարավորություն է չտվեց, որ հանձնաժողովն ավարտին հասցնի իր առջև դրած խնդիրները:

Կուլեբյակինի և թուամանյանի հետագա փոխհարաբերությունների մասին հայտնի է հետևյալը. 1921 թ. մայիսի 11-ին թուամանյանին հասցեագրված նամակից պարզ է դառնում ռուս գեներալի ճակատագիրը: «Դուք, հավանաբար, արդեն գիտեք, որ ես 1920 թ. ապրիլի 28-ին Բաքվում ձերբակալվել եմ, — գրում է Կուլեբյակինը, — իսկ հոկտեմբերի 24-ից գտնվում եմ Մոսկվայում: Մինչև 1921 թ. ապրիլի 23-ը նստել եմ Կոմիտեի դամբարանում, իսկ հետո փոխադրվել եմ Բրեստյան հիվանդանոցը, № 2 պալատ (պրեսնենսկիյ Կամերկուլեթսկիյ վալ, 39) ... Անընդհատ խոստանում են ազատել, բայց առայժմ նստած եմ»<sup>37</sup>: Ազատվելուց հետո Կուլեբյակինը վերադառնում է Թիֆլիս՝ ընտանիքի մոտ, որտեղ էլ ապրում և ստեղծագործում է: Հենց այդ ընթացքում թարգմանում է թուամանյանի քառյակներից 30-ը: 1923 թ. ապրիլի 12-ին, հայ բանաստեղծի մահից 20 օր անց, նա գրանք նվիրել է թուամանյանի ընտանիքին՝ հետևյալ ընծայագրով. «Բարի հիշատակ սրտանց սիրելի մարդու՝ Հայաստանի

<sup>34</sup> А. Закарян. Александр Кулебякин и Армения, с. 219.

<sup>35</sup> Հոփ Հ. Թուամանյան. ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 324:

<sup>36</sup> А. Закарян. Александр Кулебякин и Армения, с. 229—230.

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 55:

բանաստեղծ Հովհաննես Ֆաղեկիչ Թումանյանի՝ ինձ համար թանկագին ընտանիքին. 12/IV. 1923 թ. Թիֆլիս»<sup>38</sup>:

1916 թ. ապրիլի սկզբին ոռւս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին (1884–1967), իբրև Համառուսաստանյան քաղաքների միության գործիչ և «Ռուսակոյե սլովո» թերթի թղթակից, գործուղվում է Կովկասյան ռազմաճակատ, ժամանում Թիֆլիս: Քաղաքների միության բաժանմունքում նշանակում ստանալով Վան՝ նա պատահաբար ծանոթանում է Թումանյանի հետ, որը մեծ չափով կանխորոշում է նրա հետագա գործունեության ուղղվածությունն Արևմտյան Հայաստանում, ապա՝ Անդրկովկասում:

Ապրիլի 13-ի երեկոյան Ս. Գորոդեցկին Թումանյանի հարկի տակ ծանոթանում է նրա բազմաճյուղ ընտանիքի անդամներին, մտերիմ զրույցի բռնվում բանաստեղծի հետ: Զրույցի նյութը հայ ժողովրդի ճակատագիրն էր, նրա ցավերն ու տառապանքները, հավատը Ռուսաստանի հանդեպ, որ «խորաթափանց ու ցոլուն» աչքերի տխրությամբ պատմում-ներկայացնում է Թումանյանը, ավելացնելով «Ցարերին պետք է Հայաստանն առանց հայերի: Նրանց, բայց ոչ ոռւս ժողովրդին...»<sup>39</sup>:

Զրույցը բոլոր տեսակետներից Գորոդեցկու վրա թողնում է անջնջելի տպավորություն, տրամադրում անկեղծ, անկաշառ բարեկամություն: «Ես հիանալի զրուցակիցներ շատ եմ ճանաչել, բայց Թումանյանն, – գրում է նա, – ուներ այնպիսի հրաբորբոքություն, այնպիսի անկեղծություն, որ նրա հետ զրուցելը գեղարվեստական հաճույք էր: Նա կարծես թե բացում է իր հոգու դռները և զրուցակցին հրավիրում չթաքնվել իրենից: Դե ո՞նց կարելի էր թաքնվել ուղիղ քեզ հառված այդ պայծառ ու շիտակ հայացքից»<sup>40</sup>:

Թումանյանը որպես զրուցակից պարզ, անկեղծ ու խորաթափանց էր՝ ինչպես իր ստեղծագործություններում, և բնորոշ է, երբ Գորոդեցկին մտահոգություն է հայտնում, թե բանաստեղծի համար ի՞նչ ներշնչանք կարելի է գտնել ավերված Վանում, պատասխանում է գեղագիտական նույնօրինակ խորաթափանց դատողությամբ. «Պոեզիան հենց կյանքի ճանաչողությունն է որ կա: Այլապես նա պետք էր: Դուք կտեսնեք զարհուրելի կյանք, ժողովրդի կյանք՝ հասած մահվան եզրին: Գրեք էն մասին, ինչ կտեսնեք, էդ էլ կլինի պոեզիա»<sup>41</sup>:

Հայնսիրտ, «հոգու դուռը» բաց այդ անկեղծությունը էլ առաջին իսկ հանդիպումից Թումանյանը նվաճում է Գորոդեցկու սիրտն ու

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 56: Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում Ա. Կուլեբյակինի գործունեության մասին մանրամասն տե՛ս մեր «Александр Кулебякин и Армения» գիրքը:

<sup>39</sup> Ս. Գորոդեցկի. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1980, էջ 127:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 126–127:

Հոգին: Հայ բանաստեղծի օջախից նա հեռանում է «ցնցված ու թևավորված» և անմիջական տպավորություններ գրում ու ապրիլի 14-ին թումանյանին է տանում նրան նվիրված «Հայաստան» բանաստեղծությունը.

Ինչպես անհայտ կնոջ դեմ, խորհրդավոր ու անբիծ,  
Քո դեմ կանգնել եմ բախտի սարսուռով մի առանձին,  
Եվ վախենում է պոկվել առաջին բառն իմ շուրթից,  
Եվ աչքերս են շվարում թախանձանքով առաջին:  
Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,  
Ուզում եմ, որ իրար դեմ բացվեն դռները ոսկի,  
Ով Հայաստան, արյունով, կրակով ես տանջում քեզ,  
Ես ուզում եմ սիրել քեզ ու խորհուրդը քո խոսքի: ...<sup>42</sup>

Հետևությունն այն է, որ այդուհետև իր անելիքն ու ասելիքը անբաժան են լինելու Հայաստանից, նրա պատմական ճակատագրի խորհուրդներից, որ խոստովանում է, թե՛ «... իմ ճամփան պարզ դարձավ ինձ համար»<sup>43</sup>: Եվ, իրավ, Գորոդեցկու հետագա ողջ գործունեությունը դրա վառ վկայությունն է:

... Ծանոթությունը հայ մեծ բանաստեղծի հետ Գորոդեցկու վրա թողել է անջնջելի տպավորություն: Այդ մասին են վկայում 1916 թ. ապրիլի 24-ին Խոյից թումանյանին հասցեագրած նամակի հետևյալ տողերը. «Հոգուս մեջ ինչ-որ մի նոր երգ է ծայր առնում, որի սկիզբը դրվեց Թիֆլիսում, Ձեր հյուրընկալ տանը»<sup>44</sup>:

... Հայտնի է, որ Հովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու հարաբերությունները բարեկամական էին, մտերմիկ, նրանց միջև կար հոգևոր կապ: Դա ընկերություն էր՝ լուսավորված ռուս և հայ ժողովուրդների պատմական փորձությունների խոր գիտակցությամբ: Հենց դա էլ կազմում է երկու բանաստեղծների այն տարիների հասարակական ու հրապարակախոսական գործունեության առանցքը, հիմքը և մեծ իմաստ հաղորդում դրան: Այդ տեսակետից ուշագրավ է Հովհ. Թումանյանի «Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն» հոդվածը: Հայ բանաստեղծն այն գրել է 1918 թ. հունվարի 3-ին՝ Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռանալու առնչությամբ՝ անհանգստացած բախտի քմահաճույքին թողնված հայերի դրուժյամբ: Ս. Գորոդեցկին հունվարի 10-ին հանդես եկավ թումանյանի «խոր ու հուզիչ հարցերին» տված պատասխան խոսքով: Իր «Պատասխան Հովհաննես Թումանյանին» հոդվածում նա «անողոք անկեղծությամբ» գրում է. «Ես մեծ սիրով վերցնում եմ գրիչը, որպեսզի պատասխանեմ Ձեզ: ... Ձեր նամակը ես ընդունում եմ որպես Հայաստանի և Ռուսաստանի բարեկամության և եղբայրության ակտ՝ հաստատված բանակների և հեղափոխության արյամբ: ... Կովկասը չի

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 284:



կարող ապրել առանց Ռուսաստանի, ինչպես և Ռուսաստանը առանց Կովկասի...»<sup>45</sup>:

Հովհ. Թումանյանի նամակը և Ս. Գորոդեցկու պատասխանը լայն արձագանք գտան հայ, ռուս և վրացի մտավորականության շրջանում, բանավեճ՝ մամուլում:

... Թումանյանի հետ կայացած առաջին հանդիպումներից հետո մեկնելով Արևմտյան Հայաստան՝ Ս. Գորոդեցկին առիթ էր ունեցել հենց այնտեղ ծանոթանալու նրա ստեղծագործությանը: Ծանոթացնողը Թումանյանի որդին էր՝ արդեն իսկ Վանում գտնվող Արտավազը: Գորոդեցկու հետ զբաղվելով որբահավաքման աշխատանքով՝ նա ազատ ժամերին նրան սովորեցնում էր հայերեն, նրա համար կարդում էր հոր ստեղծագործությունները և ռուսերեն վերապատմում դրանց բովանդակությունը: Գորոդեցկու ծանոթությունը Թումանյանի ստեղծագործությանն այնուհետև շարունակվում է թիֆլիսում: Նա սկսում է թարգմանել Թումանյանի գործերից՝ «Համերգ», «Անդարձ ճամփորդներ», «Անիծած հարսը», «Վրաստանի բանաստեղծներին», «Փարվանա», ապա քառյակները, որոնք ռուս բանաստեղծի խոստովանությամբ Թումանյանը շատ հաճախ կարդացել ու թարգմանել է իր համար: «...քնքշորեն ուղղում էր ինձ, – գրում է նա, – վախենալով դիպչել ինքնասիրությանս», քանի որ՝ «Այն ժամանակ ես թարգմանել չէի կարողանում, առանձնապես արևելյան նրբին ձևով»<sup>46</sup>:

Խորին ակնածանքով ու անկեղծությամբ Գորոդեցկին մշտապես հավաստում էր, թե իր վրա Հովհ. Թումանյանն ազդել է իրենց «անձնական բարեկամության ամբողջ ուժով»: Իսկ 1947 թ. վերաբերող «Զրույց Հովհաննես Թումանյանի հետ» բանաստեղծության մեջ նա ուղղակի ասում է.

... Լաց ու ծիծաղի այս քաղաքի մեջ,  
Կանգնած կապտագորշ Քուռի ափերին,  
Ես ամենից շատ նրան եմ սիրել  
Այդ ջահել հոգով ծեր մարգարեին<sup>47</sup>:

Ի դեպ, Թումանյանը 1918 թ. հունվարի 29-ին Գորոդեցկու կնոջը նվիրել է մի սրտառուչ բանաստեղծություն՝ «Տիկին Նիմֆա Գորոդեցկուն» վերնագրով, որը գրել է «Փարվանա» պոեմի ռուսերեն հրատարակության շապիկի վրա<sup>48</sup>:

... 1918 թ. մարտի սկզբին ամբողջանալով ձևավորվում և լույս է տեսնում Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակը» գրքույկը, որ Թումանյանին նվիրել է ահա այսպիսի մակագրությամբ. «Զեզ եմ նվիր-

<sup>45</sup> «Кавказское слово», 10. I. 1918.

<sup>46</sup> Ս. Գորոդեցկի. նշվ. գիրքը, էջ 142:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>48</sup> Բանաստեղծությունը տե՛ս Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, էջ 299–300, «Ars» (Тифлис), 1918, № 1, с. 28.

րում, լուսավոր բարեկամ, այս գիրքը ոչ միայն այն պատճառով, որ մինչև սրտիս խորքը հմայված եմ Ձեր անձնավորությամբ, այլև այն պատճառով, որ Ձեր անունը գաղափար է, իմ հայրենիքի բարեկամությամբ հայոց հարության գեղեցիկ գաղափարը»<sup>49</sup>:

Հուզիչ է և Ֆորդացի վրայի նրա ընծայագիրը.

«Из горнила бедствий  
Армении вынес я  
Надежду на ее воскресение.  
Благословен день, когда  
Оно свершится.

Ованесу Туманяну

Сергей Городецкий 1918. III. 6»<sup>50</sup>.

1918 թ. դեկտեմբերի 3-ին տեղեկանալով Արտավազդի և նրա ընկերների ողբերգական մահվան մասին՝ Գորոզեցիին ցավով գրում է Թումանյանին. «Հենց հիմա Վարդգեսը (Ահարոնյան – Ա. Զ.) «Հորիզոնից» տխուր տողեր թարգմանեց մեր ընդհանուր բարեկամների, որոնց թվում և Ձեր նրբագեղ սևաթույր աղավնու – Արտիկի՝ մարտում զոհվելու մասին: Արցունքները պարուրում են աչքերս. ես նրան սիրում էի որպես արյունակից եղբոր, սակայն իմ վիշտը թվում է փոքրիկ մի մթնշաղ Ձեր վշտի ահռելի գիշերի հանդեպ:

Պիտի չկարողանամ մխիթարել Ձեզ, հերոսի հորը, սակայն այնքան մոտ եմ կանգնած Ձեր կողքին և Ձեզ հետ միասին նայում եմ դատարկված աշխարհին ու սպասում այն պահին, երբ Ձեզ հետ միասին մեր հայացքը կդարձնենք դեպի հավերժական աստղեր, որտեղ այժմ գտնվում է Արտիկի հոգին»<sup>51</sup>:

1919 թ. փետրվարից մարտ՝ ավելի քան մեկ ամիս տևողությամբ, հայ գրական կյանքում տեղի է ունենում հիշարժան իրադարձություն. մեծ շուքով նշվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թիֆլիսի ողջ հասարակայնությունը՝ հայ, վրացի, ռուս, բուն խանդավառությամբ ու սիրով տոնում են մեծ քաղաքացու հոբելյանը: Բազմապիսի նախաձեռնություններով հոբելյանին իր մասնակցությունն է բերում նաև Ս. Գորոզեցիին՝ միաժամանակ ներկա գտնվելով այլևայլ կարգի բոլոր միջոցառումներին: «Զակավկազսկոյե սլովո» թերթի փետրվարի 23-ի համարում գետեղված է նրա «Իմաստուն և հեզ» հոդվածը: «... այդ օրը (Թումանյանի ծննդյան օրը – Ա. Զ.), – գրում էր Գորոզեցիին, – տոնն է բազում միլիոնների, և ոչ միայն հայերի, այլև բոլոր անդրկովկասցիների ... քանի որ Հովհաննես

<sup>49</sup> Ս. Գորոզեցիի. նշվ. գիրքը, էջ 128:

<sup>50</sup> Личная библиотека Ованеса Туманяна в Ереване. Библиографическое описание. Кн. 2. Книги на русском языке, ч. 1, А–М. Ереван, 1989, с. 215.

<sup>51</sup> Ս. Գորոզեցիի. նշվ. գիրքը, էջ 285–286:

Թումանյանը իր ամբողջ երգով, իր ողջ գործով քարոզել է համամարդկային գաղափարների առաջնությունը ազգային հանդեպ:

Հասկանալ Հովհաննես Թումանյանին՝ նշանակում է հասկանալ Հայաստանը՝ խաղաղ երկրային կյանքի նրա վաղեմի գաղափարներով, բնության ու մարդկանց համագործակցություն մեջ հովվերգական կյանքի նրա ձգտումով, հակառակ պատմության ողբերգական ընթացքի»:

Թումանյանի հոբելյանական օրերին ռուս բանաստեղծն արձանագրում է. «Հայկական տոնը տոնակատարություն դարձավ ամբողջ Անդրկովկասի համար:

... Հովհաննես Թումանյանը հասավ այն պահին, երբ ազգերի համերաշխությունը նրա քարոզը դարձավ օրվա նշանաբան»<sup>52</sup>:

1919 թ. հոկտեմբերի սկզբներին, հանգամանքների բերումով, Բաքու փոխադրվելով, մշտական բնակություն հաստատելով այնտեղ, Գորոդեցկին, սակայն, ժամանակ առ ժամանակ եղել է Թիֆլիսում, այցելել Թումանյանին: Ն. Թումանյանի հուշերից տեղեկանում ենք, որ 1920 թ. հունվարի 1-ին Գորոդեցկին հյուր է եղել իրենց ընտանիքում՝ իր հետ ունենալով հայ բանաստեղծի քառյակների ռուսերեն թարգմանությունները<sup>53</sup>:

Հունվարի 15-ին Բաքվի Հայկական թեմական տան դահլիճում տեղի է ունեցել ռուս բանաստեղծի «Կյանքը և մահը Հովհ. Թումանյանի պոեզիայում՝ ըստ նրա «Քառյակներ» նոր գրքի» թեմայով դասախոսությունը:

... Երկար տարիներ Գորոդեցկին աշխատել է Թումանյանի մասին ակնարկ-հուշ գրելու վրա: «Այն, ինչ գրում եմ Հովհաննես Թումանյանի մասին դիսերտացիա չէ, հուշագրում չէ, այլ միայն լիրիկական դիմանկար, համարյա թե արձակ ու չափածո պոեմ, որի մեջ ամփոփում եմ և անձնական հիշողություններ, և նրա ստեղծագործության մասնակի վերլուծություն, և հատվածներ օրագրերից»<sup>54</sup>, – գրել է ռուս բանաստեղծը «Հովհաննես Թումանյան: Լիրիկական դիմանկար»-ում, որը հրատարակել է 1958 թ.:

... Հովհ. Թումանյանի մահվանից մեկ օր առաջ՝ 1923 թ. մարտի 22-ին, Գորոդեցկին այցելել է ծանր հիվանդ բանաստեղծին Մոսկվայի Օցոլա փողոցի վրա գտնվող հիվանդանոցում: Հանդիպումը ջերմ էր ու սրտառուչ: «Հովհաննես Թումանյան» վերնագրով մահախոսականում նա գրում է. «Հ. Թումանյանի անունը հուշակված է ամեն տեղ, ուր հնչում է հայ լեզուն: Հայկական բանաստեղծության համար նա արել է նույնը, ինչ որ Պուշկինը մեր գրականության համար: ... Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը տանջում էր նրան ամբողջ կյանքում: ... պատերազմի տարիներին կիսում էր գաղթականների վշտերն ու տառապանքները, գլխավորում հայերին

<sup>52</sup> «Закавказское слово» (Тифлис), 7. III. 1919.

<sup>53</sup> Ն. Թումանյան. նշվ. գիրքը, էջ 227:

<sup>54</sup> Ս. Գորոդեցկի. նշվ. գիրքը, էջ 119:

օգնելու գործը: ... Հ. Թումանյանի երգերը դեռ երկար կապրեն հայ և միջազգային պոեզիայի մեջ»<sup>55</sup>:

Թումանյանի թաղման օրը՝ 1923 թ. ապրիլի 15-ին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված «Եղբայրության շաղախը» հոդվածում, բնութագրելով մարդ և քաղաքացի Թումանյանին, նրա «հոգեկան հմայքը», որով մեծ պոետը կապում էր իրար հետ ամեն ազգի ու ցեղի մարդկանց, Չարենցը մտաբերում է Գորոզեցի կարծիքը: «Ես երբեք չեմ մոռանա, – գրում է նա, – ուս պոետ Սերգեյ Գորոզեցի ու խոսքերը Թումանյանի մասին՝ ասված Մոսկվայում, գրողների մի ինտիմ շրջանում:

«Թիֆլիսում լինել և չճանաչել Թումանյանին, նշանակում է Մոսկվա լինել, բայց և չտեսնել Իվան Մեծի զանգատունը»<sup>56</sup>:

1920 թ. ապրիլ-մայիս ամիսներին Թիֆլիսում է եղել արձակագիր Բորիս Լազարևսկին (1871–1936): Ուկրաինացի պատմաբանի որդի, Կիևի համալսարանում կրթություն ստացած Լազարևսկին գրում էր պատմվածքներ գլխավորապես սիրային ապրումների թեմաներով՝ Չեխովի հետևություններ և հաճախ ընդօրինակելով Չեխովին, իհարկե, երբեք չմերձենալով մեծ գրողի գեղարվեստական – գաղափարական ընդհանրացումներին: Նա իրեն համարում էր կանացի սեռի հոգեբան-մասնագետ, որը վկայում են և նրա գրքերի վերնագրերը. «Վենյա (մի կանացի հոգու պատմություն)», «Կնոջ հոգին» և այլն: Իր այդ նախասիրությունները էլ նա ներկայանում է Թիֆլիսում: Ապրիլի 29-ին կոնսերվատորիայի լեփ-լեցուն դահլիճում Բ. Լազարևսկին կարդում է դասախոսություն «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով: Դասախոսություն առաջ բերած հետաքրքրությունն այնքան էր մեծ, որ կրկնվել է մայիսի 2-ին: Հենց այդ օրը Լազարևսկին այցելել է Հովհ. Թումանյանին: Վկայությունը Թումանյանների ընտանեկան արբանոցում նրա ձեռքով գրված տողերն են. «Միրելի՛ պոետ: ... Հայաստանը կհանգստանա այն ժամանակ, երբ սերը մերձավորի հանդեպ ֆիզիցիայից կդառնա իրականություն...»

Այդ մեծ գործում պետք է հսկայական դեր խաղան ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՆԱՅՔ և բանաստեղծները»<sup>57</sup>:

Կասկած չի կարող լինել, որ Լազարևսկու դասախոսությունը, երևի թե հենց մայիսի 2-ին, ունկնդրել է Թումանյանը, որի տեղական մտահոգություններից մեկն էլ, ինչպես հայտնի է, հայ կանանց կրթության ու դաստիարակության, նրանց հասարակական գործու-

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>56</sup> Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում Ս. Գորոզեցի կու գործունեությունը մասին մանրամասն տե՛ս Ա. Չաքարյան. Սերգեյ Գորոզեցիին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, А. Закарян. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916 – 1921 гг.). Ереван, 2015.

<sup>57</sup> Այբուբեն պահվում է Հովհ. Թումանյանի տուն-թանգարանում՝ Թումանյանների ընտանեկան արխիվում: Տե՛ս նաև՝ Ա. Չաքարյան. Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Երևան, 2004, էջ 12:

նեոլոգիան հարցն էր: Հավանաբար, հենց դասախոսությունից հետո էլ, իր սովորություն համաձայն, Թումանյանը նրան հրավիրել է տուն, սեղանի շուրջ շարունակելով գրույցը հայ կանանց դարավոր տառապանքների, բնավորության, առաքինությունների մասին: Այդ գրույցի ոգով էլ շարադրված են *Լազարևսկու տողերը*<sup>58</sup>:

*Ամփոփենք. խնդրո առարկա ժամանակահատվածում ողու գրողների, գրական գործիչների ստեղծագործական առնչությունները, մարդկային պարզ ու անմիջական շփումները Հովհ. Թումանյանի հետ կրել են մշտական և գործուն բնույթ: Դա մեծապես պայմանավորված է եղել նաև Հովհ. Թումանյանի՝ հայ ժողովրդի ողբական կողմնորոշման համոզված ջատագով լինելով:*

РУССКИЕ ПИСАТЕЛИ И ОВАНЕС ТУМАНЯН  
(1914 – 1920 гг.)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

В трагическое для армянского народа время, 10-е годы XX века, творческие связи и простое, непосредственное человеческое общение русских писателей, литературных деятелей — К. Балмонта, В. Брюсова, А. Кулебякина, С. Городецкого, Б. Лазаревского — с великим армянским поэтом Ованесом Туманяном в Закавказье носили постоянный и действенный характер. Это во многом было обусловлено тем, что Туманян был убежденным поборником русской ориентации армянского народа.

RUSSIAN WRITERS AND HOVHANNES TUMANYAN  
(1914–1920)

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

In the 10s of the XX century – during the tragic period for the Armenian people, the creative ties and simple, direct human relations with the Russian writers, literary figures K. Balmont, V. Brusov, A. Kulebyakin, S. Gorodetsky, B. Lazarevsky with the prominent Armenian poet Hovhannes Tumanyan in Transcaucasia were of permanent and efficient character. This was conditioned with the fact that Tumanyan was a convinced adherent of the Russian orientation among the Armenian people.

<sup>58</sup> Բ. Լազարևսկու մասին առավել մանրամասն տե՛ս մեր «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին» գիրքը:

---

---

## II

### ՊՈԼՍԱՅԱՅ ՄԱՍՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՄՔԵՐԸ (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)

#### ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայ պատմագիտության մեջ մասոնության թեման ամենաքիչ ուսումնասիրվածներից մեկն է: Հայ մասոնների կամ ազատ որմնադիրների մասին Ռ. Բերբերյանի<sup>1</sup>, Հ. Պերպերյանի<sup>2</sup>, Ա. Ֆեներճյանի<sup>3</sup>, Ա. Բեյլերյանի<sup>4</sup> հոգվածները, Հ. Սիրունու ուսումնասիրության մի մասը<sup>5</sup> և Օ. Ժամկոչյանի Ֆրանսերեն աշխատությունը<sup>6</sup> հիմնականում նվիրված են Օսմանյան կայսրությունում հիմնված Հայախոս չորս օթյակներին և, հատկապես, Կ. Պոլսի «Սեր» օթյակին: Ռուսական օթյակներին անդամագրված մի խումբ Հայ մասոնների մասին տեղեկանում ենք Ն. Բերբերովայի ուսումնասիրությունից<sup>7</sup>: Առայսօր մեզ չատ քիչ բան է Հայտնի Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրներում Հայկական օթյակների և ոչ Հայախոս օթյակների անդամ Հայազգի ազատ որմնադիրների մասին: Այս իմաստով մասոնության սկզբնավորումից մինչ օրս ազատ որմնա-

---

<sup>1</sup> Ռ. Բերբերեան. Հայ մասոնները եւ «Սեր» օթեակը Պոլսոյ մէջ. – «Հայրենիք» (Բոստոն), 1937, մարտ, թիվ 5, էջ 74–85, ապրիլ, թիվ 6, էջ 124–133, մայիս, թիվ 7, էջ 122–133, հունիս, թիվ 8, էջ 128–133, հուլիս, թիվ 9, էջ 114–119:

<sup>2</sup> Հ. Պերպերեան. Առաջին ազատ-որմնադիրները Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ. – «Կեանք եւ Արուեստ» (Փարիզ), 1936, փետրվար, թիվ 2, էջ 41–43:

<sup>3</sup> Ա. Ֆէնէրճեան. Ազատ որմնադիրութիւնը մօտաւոր Արեւելքի մէջ. – «Կեանք եւ Արուեստ», Տարեգիրք, Ե տարի, 1935, էջ 73–81, 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 225–229, նոյնի՝ Ազատ որմնադիրութիւնը Հայոց մէջ. – «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 92–101, նոյեմբեր, թիվ 11, էջ 96–100, 1955, փետրվար, թիվ 2, էջ 79–84, ապրիլ, թիվ 4, էջ 100–101, հունիս, թիվ 6, էջ 90–95, հուլիս, թիվ 7, էջ 95–97, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94–100, դեկտեմբեր, թիվ 12, էջ 75–81, 1956, հունվար, թիվ 1, էջ 88–91:

<sup>4</sup> Ա. Պէյլէրեան. Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ Հայկական «Սեր» օթեակը ԺԹ դարուն. – «Հայկազեան Հայագիտական Հանդես» (Պէյրութ), 2001, էջ 143–183:

<sup>5</sup> Տե՛ս Յ. Ծ. Սիրունի. Պոլիս եւ իր դերը, երրորդ Հատոր, Անթիլիաս, 1987, էջ 197–217:

<sup>6</sup> Տե՛ս Օ. Դամգոցյան. Les Francs-Maçons Arméniens et la Constitution de l'Arménie ottomane Constantinople, 1863, Paris, 2017.

<sup>7</sup> Н. Берберова. Люди и ложи. Русские масоны XX столетия. Нью-Йорк, 1985, М., 1997.

դիրների օթյակների շարքերը համալրած հայ նշանավոր և բարձր-աստիճան մասոններին բացահայտելը մեր պատմագիտությունն առաջնահերթ խնդիրներից է:

Հայությունն առաջին առնչությունները մասոնություն հետ վաղեմի պատմություն ունեն և վերաբերում են XVIII դարին: Ըստ Լոնդոնում լույս տեսնող «St. James's Evening Post» թերթի՝ 1738 թ. մայիսին Կ. Պոլսից ստացված մի նամակ հայտնում էր, որ մինչ այստեղ մասոնական օթյակների ստեղծումը՝ դրանք ավելի վաղ, միմյանց հաջորդելով, հիմնվել են Չմյուռնիայում և Հալեպում<sup>8</sup>: Էդինբուրգի «Cannangate» օթյակի 1762 թ. արձանագրություններից մեկը վկայում է, որ «Անգլիայի Մեծ Օթյակը» Մերձավոր Արևելքում, Հալեպում և Պարսկաստանում մասոնությունը տարածելու նպատակով չորս մեծ վարպետ է նշանակել, որոնցից մեկը հայագրի Դիոնիսիոս Մանասն էր: Այդ օթյակները համախմբող մարմինը կոչվում էր «All Armenia in the East» («Ամբողջ Հայաստանն Արևելքում»), որը 1805 թ. հետո այլևս չի հիշատակվում<sup>9</sup>: Չնայած այս առանձին փաստերին, մասոնությունը հայության շրջանում հիմնականում տարածում գտավ 1850-ական թվականներին՝ Օսմանյան կայսրությունում, որը համընկավ ազգային սահմանադրական շարժման հետ: Դրան նպաստեցին մասոնական օթյակների նախաձեռնությունները 1848–1852 թթ. եվրոպական մի շարք երկրներում տեղի ունեցած հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարն ու ազգային միավորման և սահմանադրական շարժումները<sup>10</sup> (դրանք, ինչպես հայտնի է, ընթացան XVIII դ. ֆրանսիական մեծ հեղափոխություն «ազատություն, հավասարություն, եղբայրություն» մասոնական կարգախոսով<sup>11</sup>), ինչպես նաև 1856 թ. սկիզբ առած թանգրիմաթի երկրորդ փուլը և «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ պետությունների քաղաքականությունը:

Օգտվելով Թուրքիայում իրականացվող բարեփոխումների քաղաքականությունից՝ Եվրոպայի մասոնական գլխավոր երկրներ Անգլիայի և Ֆրանսիայի մեծ օթյակները ձեռնամուխ եղան մասոնությունն տարածմանը օսմանահպատակ քրիստոնյա ժողովուրդների շրջանում: Մասոնությանն անդամագրված արևմտահայերը հիմնականում Եվրոպայում ուսանած, «իսկապես կրթված», 1848 թ. ֆրան-

<sup>8</sup> «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 128, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 144:

<sup>9</sup> Բ. Բերբերեան. նշվ. աշխ. – «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 128, Օ. Јамгосуан. նշվ. աշխ., էջ 53:

<sup>10</sup> Sե'ս Ж. Вейл. История республиканской партии во Франции с 1814 по 1870 гг. М., 1906, с. 57; П. Ланин. Тайные пружины истории. – «Молодая гвардия» (М.), 1991, № 8, с. 252; История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 3. М., 1938, с. 349; Дж. Ридли. Фри-масоны. Пер. с англ. М., 2007, с. 252–257.

<sup>11</sup> Л. А. Пименова. Идея свободы во французской революции XVIII века. – «Новая и новейшая история», 1992, № 1, с. 62.

սիական հեղափոխությունների ազատամտական գաղափարներով տոգորված և «ազգային ոգով ներշնչված մարդիկ էին»<sup>12</sup>: Նրանք «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով»<sup>13</sup> հայրենի Կ. Պոլիս և Զմյուռնիա վերադարձած մի խումբ հայ երիտասարդ մտավորականներ ու «եվրոպականացած» վաճառականներ էին: Եվրոպական երկրներում մասոնների հետ բազմաթիվ շփումներ ունեցած այդ լուսավորյալ երիտասարդները և Եվրոպայի ու Փոքր Ասիայի միջև իրենց ունեցած «ընդարձակ վաճառականական յարաբերություններով կամուրջ ճառագայթ»<sup>14</sup> և «իբր միջնորդ կարևոր դեր խաղացած»<sup>15</sup> հայ վաճառականները դարձան արևմտահայ ազգային սահմանադրական շարժման հիմնական գաղափարախոսները, գործիչները ու մասոնությունից տարածման ջատագովներն ու ազատ որմնադիրների օթյակների հիմնադիրները: Այդ երիտասարդների մի մասը մասոն ձեռնադրվել էր դեռևս Եվրոպայում գտնված տարիներին, ովքեր հետագայում դարձան հայ մասոնությունից նշանավոր դեմքերը: Նրանցից երիտասարդ Ստեփան Ոսկանյանը (1825–1901) մասոնների հետ կապեր ուներ դեռևս 1846 թվականից՝ Փարիզում ուսանելու տարիներից: Այստեղ նա «Արչալույս Արարատյան» թերթի խմբագիր Ղուկաս Պալտազարյանի երաշխավորությամբ սովորում էր Սեն Բարբի վարժարանում, այնուհետև Սորբոնի համալսարանում, որտեղ լսում էր նշանավոր պատմաբաններ Վիկտոր Կուզենի, Ժյուլ Միմոնի, Ժյուլ Միշլեի, Էդգար Բինեի, լեհ բանաստեղծ Ադամ Միցկևիչի դասախոսությունները և աշխատակցում «Le National» թերթին<sup>16</sup>: 1848 թ. փետրվարի Փրանսիական հեղափոխությունից ավագանում մկրտված, դրա «շնչով տոգորուն»<sup>17</sup>, «առաջադիմութեան անձնուէր գինուոր»<sup>18</sup> Ստ. Ոսկանյանը մի խումբ ուսանողների հետ հանուն Փրանսիացիների ազատության մարտնչել էր Փարիզի բարիկադների վրա, առաջիններից մեկը զենքը ձեռքին թագավորական թյուրիքի պալատը «մտնելու պատիվը ունեցել»<sup>19</sup>, իսկ 1849 թ. հունիսին մասնակցել ուսանողների հակակառավարական ցույցին, որի համար երկու ամիս բանտարկվեց<sup>20</sup>:

<sup>12</sup> Ա. Ալպոյաճեան. Զմյուռնիո տպարանները. – ՊԲՀ, 1964, № 2, էջ 78:

<sup>13</sup> Ա. Ֆէնէրճեան. Ազատ որմնադրությունը հայոց մէջ. – «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 92:

<sup>14</sup> Ա. Ֆէնէրճեան. Հայ ազատ որմնադրական օթեակներ թուրքիոյ մէջ. – «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:

<sup>15</sup> Ա. Ալպոյաճեան. Պատմութիւն հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարհի տարբեր մասերը, հ. Գ, մաս Բ, Երևան, 2017, էջ 85:

<sup>16</sup> Հ. Ասատուր. Դիմաստուներներ, Կ. Պոլիս, 1921, էջ 105, Յ. ձ. Սիրունի. նշվ. աշխ., երկրորդ հատոր (1800–1900), Պէյրութ, 1970, էջ 373:

<sup>17</sup> Հ. Ասատուր. նշվ. աշխ., էջ 114:

<sup>18</sup> Լ. Է. Ստեփան Ոսկան. – «Մուրճ» (Թիֆլիս), 1901, նոյեմբեր, թիվ 11, էջ 117:

<sup>19</sup> «Արևմուտք» (Փարիզ), 1859, թիվ 17, էջ 131:

<sup>20</sup> Տե՛ս Լ. Է. Ստեփան. նշվ. աշխ., էջ 117–121, Հ. Ասատուր. Դիմաստուներներ, էջ 106, Յ. ձ. Սիրունի. նշվ. աշխ., երկրորդ հատոր, էջ 374, «Մասիս» (Կ. Պոլիս), 1859, հունիսի 25, թիվ 387:



Ստ. Ոսկանյանը «Եվրոպայի ազատական պայքարին մասնակցելը յետոյ 48-ի Ֆրանսական յեղափոխութեան մէջ, այդ պայքարն առաջին անգամ մտցնողը եղավ հայութեան խավարչտին շրջանակում»<sup>21</sup>: Միշտ Իտալիան սիրող, «Իտալիան իր արիւնաթաթաւ ճակատով նկուն ազգերի» համար «իբրև կենդանի պատկեր»<sup>22</sup> համարող Ստ. Ոսկանյանն իտալական “Liberta” («Ազատութիւն») օթյակի անդամ էր<sup>23</sup>: Իտալիային «իր ուժը ի սպաս դրած»<sup>24</sup> Ստ. Ոսկանյանը մտերիմ կապեր ուներ իտալական ազատագրական պայքարի ղեկավարներէից Սարդինական թագավորութեան վարչապետ մասոն կոմս Կամիլո Կավուրի<sup>25</sup> հետ, ում անձնական քարտուղարն էր, նրա և Հունաստանի արտաքին գործերի նախարարի զավակների ուսուցիչը<sup>26</sup>: «Իմաստասէր և գիտուն» Ստ. Ոսկանյանը «մեծ իմացականութեան և սկզբունքի տէր մարդ էր, դժբաղտաբար իր գաղափարները կանխահաս էին և անհարմար ժողովուրդին պէտքերուն և ապրած միջավայրին»<sup>27</sup>:

Երևելի մասոն լինելուց զատ Ստ. Ոսկանյանը «Հայ հրապարակագրութեան հիմնադիրն էր, Ֆրանսիական քաղաքակրթութեան ամէնէն ազնիվ տարրերով կազմուած մաքուր և ուժեղ միտք մը, շիտակ, աննկուն ու հստակ նկարագիր մը»<sup>28</sup>: Փարիզում նրա հրատարակած «Արևելք» և «Արևմուտք» հանդեսները, Թուրինում՝ “L’Italie” («Իտալիա»), իսկ Զմյուռնիայում՝ “La Reform” («Ռեֆորմ») Ֆրանսերեն թերթերը «ճշմարտութեան երեսը չէին թքնում կամ մրտտում»<sup>29</sup>, իսկ հայրենասիրական ոգով գրված ստեղծագործությունները դարձան 1850–1860-ական թվականների հայ հրապարակախոսութեան և գեղարվեստական արձակի արժեքավոր նմուշներ:

1840-ական թվականների սկզբում Փարիզում գտնված տարիներին Ֆրանսիական “La Perséverante Armitié” («Հարատևող բարեկամութիւն») օթյակին անդամագրվել էին դիվանագետ Հակոբ Կրճիկյանը (1806–1865) և պոլսահայ հայտնի դրամատեր, վաճառական Միքայել Երամյանը, ով 1859 թ. դարձավ Զմյուռնիայում ստեղծված «Հոմեր» թիվ 806 օթյակի հիմնադիրներից մեկը<sup>30</sup>: Հ. Կրճիկյանը օս-

<sup>21</sup> Ա. Չօպանեան. Դեմքեր.– «Անահիտ» (Փարիզ), 1903, հունիս–հուլիս, թիվ 6–7, էջ 85–86:

<sup>22</sup> «Արևմուտք», 1859, թիվ 17, էջ 131–132:

<sup>23</sup> «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 82–83:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 84:

<sup>25</sup> П. Ланин. Նշվ. աշխ., էջ 252:

<sup>26</sup> Վ. Զարդարեան. Յիշատակարան, առաջին հատոր, Կ. Պոլիս, 1910, էջ 148, Հ. Ասատուր. Դիմաստուներ, էջ 112, Լ է օ. Նշվ. աշխ., էջ 170:

<sup>27</sup> Հ. Ասատուր. Դիմաստուներ, էջ 115, «Լոյս» (Կ. Պոլիս), 1908, թիվ 2, էջ 63:

<sup>28</sup> «Անահիտ», 1903, հունիս–հուլիս, թիվ 6–7, էջ 85:

<sup>29</sup> Գ. Գալեմքեարեան. Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, 1893, էջ 156:

<sup>30</sup> «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79, Ա. Պէլլէրեան. Նշվ. աշխ., էջ 151, 155, Օ. Դամոցյան. Նշվ. աշխ., էջ 64:

մանյան բարենորոգումների հռչակագրի՝ թանգիմաթի հեղինակ, «Երիտասարդ թուրքերի ռահվիրա»<sup>31</sup>, Լոնդոնում մասոն ձեռնադրված<sup>32</sup>, երկար տարիներ Ֆրանսիայում ու Անգլիայում թուրքիայի դեսպան, այնուհետև արտաքին գործերի նախարար Ռեշիդ փաշայի երկարամյա մերձավոր օգնականը, թարգմանն ու խորհրդականն էր<sup>33</sup>: Սորբոնի համալսարանում ուսանած, Ֆրանսիական ազատամտական գաղափարների ջատագով Հ. Կրճիկյանը «եվրոպական զարգացման առաջին օսմանյան պաշտոնյան էր»<sup>34</sup>: Նա գործնական մասնակցություն է ունեցել Ռեշիդ փաշայի հեղինակած թանգիմաթի կազմման գործում: Պոլսահայությունը շրջանում սահմանադրությունից հաղափարն առաջինը հղացած «նշանավոր հայ»<sup>35</sup> Հ. Կրճիկյանն առաջադեմ երիտասարդ մտավորականներ և իր հաղափարական համախոհներ Սերովբե Վիչենյանի, Նահապետ Ռուսինյանի, Նիկողայոս Պալյանի հետ դեռևս 1840-ական թվականներին ձեռնամուխ եղավ արևմտահայ ազգային սահմանադրական շարժմանը՝ դառնալով «ամենէն կարևոր դեր ունեցողներէն ... և ժամանակին ամենէն յառաջընթաց մտաւորականներէն մէկը»<sup>36</sup>: Նրա անմիջական ջանքերով ու միջնորդութեամբ սուլթան Աբդուլ Մեջիդը 1847 թ. Կ. Պոլսի հայ համայնքին շնորհեց «Ազգային կանոնադրություն», որը դարձավ «ազգային սահմանադրութեան տիրապէս սկզբնավորութիւնը»<sup>37</sup>: 1847 թ. Հ. Կրճիկյանը ստանձնեց Կ. Պոլսի Գերագույն ժողովի լոգոֆեթի հատուկ և գործադիր պաշտոնը, որը նրան հնարավորություն էր տալիս միջնորդի դեր կատարել Բարձր դուռնի հետ հարաբերություններում<sup>38</sup>: Մատուցած դիվանագիտական ծառայությունների համար նա ստացել է էֆենդի տիտղոս, պարգևատրվել ազամանդակուռ Օսմանիե և Մեջիդիե պատվանշաններով<sup>39</sup>:

<sup>31</sup> Ե. Թոփչեան. Երիտասարդ թուրքիան և հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 232:

<sup>32</sup> Ա. Պէլլէրեան. նշվ. աշխ., էջ 151:

<sup>33</sup> Յ. Ճ. Սիրունի. Թանգիմաթ և հայերը. – ՊԲՀ, 1966, № 4, էջ 53–56, «Մասիս» (Կ. Պոլիս), 1865, հոկտեմբեր 30, թիվ 713, Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 104:

<sup>34</sup> Ա. Ալպոյաճեան. Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը: Ընդարձակ օրացոյց ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1910:

<sup>35</sup> «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1902, հոկտեմբեր, թիվ 10, էջ 326:

<sup>36</sup> Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 103, 104:

<sup>37</sup> Մ. Օրմանեան. Ազգապատում, հ. Գ, մասն Ա, Պէյրութ, 1961, էջ 3814:

<sup>38</sup> Ա. Պէրպերեան. Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 321, Սարուխան. Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը թուրքիայում 1860–1910, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 243, Հ. Ասատուր. Կոստանդնուպոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, Ստանպուլ, 2011, էջ 190–191, Ե. Թոփչեան. նշվ. աշխ., էջ 235, Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 104–105:

<sup>39</sup> Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 106:

1854 թ. փետրվարին Լոնդոնում անգլիական “Jordan” («Հորդանան») թիվ 201 օթյակին անդամագրվել էին փաստաբան Սերովբե Ազնավուրը (1814–1890) և խմբագիր-հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանը (1818–1895): Նրանք միաժամանակ Մանչեսթրի “Odd Fellows” օթյակի անդամ էին<sup>40</sup>: Խ. Ոսկանյանը թանգրիմաթի դարաշրջանի հայ փայլուն մտավորականներից է և արևմտահայ պարբերական մամուլի պատմութայն կարևոր դեմքերից մեկը: 1840–1841 թթ. նա Կ. Պոլսում հրատարակեց «Ազդարար Բյուզանդյան» հայերեն առաջին թերթը: Առաջադիմական և լուսավորական գաղափարներ տարածող այդ պարբերականի նշանաբանն էր՝ «Ազգի մը լուսավորութիւնը գիտութենէն ու կրթութենէն կուգա»<sup>41</sup>: Անգլիայում մասոն ձեռնադրվելուց հետո Խ. Ոսկանյանը Ս. Ազնավուրի հետ փորձեց Լոնդոնում բացել Արևելյան թանգարան, իսկ հետագայում գործունեություն ծավալեց ԱՄՆ-ում: 1868–1874 թթ. նա Թուրքիայի գլխավոր հյուպատոսն էր Նյու Յորքում, որտեղ Օսմանյան կառավարութայն անունից բանակցում էր “Winchester Arms” զինագործական ընկերութայն հետ գենք գնելու հարցով<sup>42</sup>:

Անգլիայում կրթություն ստացած և մասոն ձեռնադրված Ս. Ազնավուրը XIX դարի հայ ազատ որմնադիրների ընկերութայն, թերևս, ամենաերևելի դեմքն է: Նա ոչ միայն մի քանի օթյակների բարձրաստիճան մասոն էր, այլև՝ մասոնական գաղափարախոսութայն գլխավոր տարածողներից ու քարոզիչներից մեկը Թուրքիայում: «Հայ ազատ որմնադրութեան ռահվիրա»<sup>43</sup> Ս. Ազնավուրը Կ. Պոլսում գործող անգլախոս և Ֆրանսախոս մասոնական յոթ օթյակներից հինգի հիմնադիրներից էր<sup>44</sup>: Որպես մասոն նա մեծ հեղինակություն էր վայելում ազատ որմնադիրների շրջանում և «կարկառուն դեմք էր Պոլսոյ և Զմյուռնիոյ մէջ»<sup>45</sup>: Նա սերտ կապեր ուներ անգլիական ու Ֆրանսիական մի շարք օթյակների և բարձրաստիճան մասոնների, այդ թվում՝ Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Բուլվեր Լիթոնի հետ: Ս. Ազնավուրի մասոնական բուռն գործունեութայն շնորհիվ Թուրքիայում երիտասարդ ազատ քարտաշների մի ամբողջ սերունդ ձևավորվեց: Նրանց թվում էր նաև իր տղան Անտուան Ազնավուրը (1844–1867), ով մի քանի օթյակների անդամ էր և «Արևելքի միություն» օթյակի վարպետ<sup>46</sup>:

1856 թ. նոյեմբերի 25-ին Կ. Պոլսում Ս. Ազնավուրը երիտասարդ

<sup>40</sup> Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 58, «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 83, 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93, Ա. Պէյլէրեան. Նշվ. աշխ., էջ 151:

<sup>41</sup> Տե՛ս «Ազդարար Բյուզանդեան» (Կ. Պոլիս), 1840, թիվ 1:

<sup>42</sup> Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 58:

<sup>43</sup> Յ. Ճ. Սիրունի. Նշվ. աշխ., երրորդ հատոր, էջ 208:

<sup>44</sup> «Հայրենիք», 1954, դեկտեմբեր, թիվ 12, էջ 95:

<sup>45</sup> «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79, Ա. Պէյլէրեան. Նշվ. աշխ., էջ 161:

<sup>46</sup> Ա. Պէյլէրեան. Նշվ. աշխ., էջ 176, 178, «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 84:

վաճառական Կոզմա Աղջիկյանի հետ, ով Մանչեսթրի “Integrity” («Ուղղամտություն») թիվ 168 օթյակի անդամ<sup>47</sup> էր, մասնակցեց “Oriental” («Արևելյան») թիվ 687 անգլախոս առաջին կանոնավոր մասոնական օթյակի հիմնադրմանը<sup>48</sup>: Կ. Աղջիկյանը տասը տարի անց դարձավ նաև հայկական «Սեր» օթյակի հիմնադիրներից մեկը<sup>49</sup>: Ս. Ազնավուրը շուտով «Արևելյան» օթյակում դարձավ բարձրաստիճան մասոն, որին հետագայում անդամագրվեցին ևս 15 հայ ազատ որմնադիրներ: 1859 թ. “Oriental” օթյակում մասոն ձեռնադրվեց վաճառական Գրիգոր Մանասը, իսկ 1860 թ.՝ Սրապիոն Հեքիմյանը, Սերովբե Թագվորյանը և Միքայել Ալիշանը<sup>50</sup>: Նրանցից զրամատուրգ և դերասան Ս. Հեքիմյանը (1832–1892) դարձավ “Oriental” օթյակի վարպետ<sup>51</sup>: Նա 1865–1868 թթ. պոլսահայ առաջին արհեստավարժ «Արևելյան թատրոնի» ղեկավարն էր, հայ ազգային բեմի վերածնունդի ջատագովը, ում համոզմամբ ազգին կրթելու լավագույն միջոցը թատրոնն էր: Նրա բեմադրությունները ոգևորություն էր ընդունել է ոչ միայն հայ հանրությունը, այլև թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, նույնիսկ սուլթան Աբդուլ Մեջիդը<sup>52</sup>: Ս. Հեքիմյանը պատմական մի շարք դրամաների, գրականությունը և թատրոնին նվիրված բազմաթիվ հոդվածների հեղինակ էր, բանաստեղծ ու թարգմանիչ<sup>53</sup>: Մեծ համբավ ունենալու պատճառով ժամանակակիցները նրան համեմատում էին Շեքսպիրի, Կորնելի և Ալֆրեդի հետ<sup>54</sup>:

Հրապարակախոս Ս. Թագվորյանը հայ ազատագրական պայքարի աչքի ընկնող գործիչներից էր, զինված ապստամբություն ծրագրի հեղինակ: Նա 1862 թ. Զեյթունի ապստամբության անհաջողությունից հետո այն համոզմանն էր, որ ազգի ընտրանուն համախմբել և կազմակերպել կարող է միայն մասոնությունը: Արևմտահայությունից ազատագրության հարցում դրսի ուժերին ապավինող Ս. Թագվորյանը Միքայել Նալբանդյանի միջոցով կապ էր հաստատել եվրոպա-

<sup>47</sup> Ա. Պէյլէրեան. Նշվ. աշխ., էջ 151, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 60:

<sup>48</sup> «Կեանք եւ Արուեստ», 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 225, «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 128:

<sup>49</sup> «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 74:

<sup>50</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78, «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 128:

<sup>51</sup> Ա. Պէյլէրեան. Նշվ. աշխ., էջ 178, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 60:

<sup>52</sup> Հ. Ստեփանյան. Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012, էջ 506:

<sup>53</sup> Տե՛ս Գ. Ստեփանյան. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմություն, հ. 1, Երևան, 1962, էջ 292–297, Հայ նոր գրականությունից պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 458–459:

<sup>54</sup> Ա. Այվազեան. Սրապիոն Հեքիմեան. – «Թատրոն» (Թիֆլիս), 1899, թիվ 1, էջ 1:

կան մասոնությունների գաղափարական համախոհներ, ովքեր հեղափոխականներ Ալեքսանդր Գերցենի, Նիկոլայ Օգարյովի<sup>55</sup> և իտալական ազատագրական պայքարի ղեկավարներից բարձրաստիճան մասոն Ջուզեպպե Մացցինիի հետ<sup>56</sup>: Փարիզում գտնված ժամանակ Ս. Թագվորյանը շփվում էր ֆրանսիական հանրապետականների հետ, որոնց երաշխավորությունը անդամագրվեց «Les Vrais Amies» օթյակին, կապեր հաստատեց ֆրանսիական արմատական քաղաքական գործիչներ, մասոններ Լեոն Գամբեթայի, Ժյուլ Գավրի և Շառլ Ֆլոբերի հետ<sup>57</sup>: Ս. Թագվորյանը 1860 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում սահմանադրականներ Մ. Աղաթոնի, Հ. Շիշմանյանի նախաձեռնությամբ և Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Մ. Մամուրյանի, Ա. Հայկունու, Մ. Պեշիկթաշլյանի ու Հ. Սվաճյանի մասնակցությամբ, ովքեր մասոն էին կամ հետագայում անդամագրվեցին մասոնությունը, ստեղծեցին «Սեր և միություն» նշանաբանով գործող «Բարեգործական ընկերություն»<sup>58</sup>: Ս. Թագվորյանը 1862 թ. հիմնված մանչեսթրյան «Odd Fellows» մասոնական օթյակի «Հայկ» կամ «Օրիոն» մասնաճյուղի և 1866 թ. կազմավորված «Սեր» օթյակների հիմնադիրներից էր: Հ. Սվաճյանի բնութագրմամբ «Հասակը կարճ, բայց միտքը երկար» Ս. Թագվորյանը ոչ միայն ազգային եռանդուն գործիչ էր, այլև բարձրաստիճան մասոն, օթյակի վարպետ<sup>59</sup>:

Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդ վաճառական Միքայել Ալիշանը հայ նշանավոր բանաստեղծ, բանասեր ու պատմաբան Ղևոնդ Ալիշանի զարմիկն էր: Նա հետագայում դարձավ բարձրաստիճան մասոն, ձեռնադրվեց օթյակի վարպետ, իսկ 1866 թ. մասնակցեց «Սեր» օթյակի հիմնադրմանը<sup>60</sup>: «Oriental» թիվ 687 օթյակի երևելի անդամներից էին նաև Օսմանյան բանկի տնօրեն Պերճ Բերեսթեճյանը և Կ. Պոլսում Սերբիայի դեսպանատան առաջին

<sup>55</sup> Տե՛ս Ա. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 444, 445:

<sup>56</sup> Զ. Մացցինին (1805–1872) եվրոպայում հայտնի բարձրագատիվ մասոն էր, «Երիտասարդ Իտալիա» մասոնական օթյակի հիմնադիրը և բավարական իլլյումինատների առաջնորդը (տե՛ս Ю. М. Гоголицин. Тайные общества в истории человечества, или кто правит миром. Ростов-на-Дону, 2010, с. 139–140; П. Ланин. Նշվ. աշխ., էջ 252; Օ. Փ. Соловьев. Масонство далекое и близкое.— «Новая и новейшая история», 1992, № 4, с. 76):

<sup>57</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 130:

<sup>58</sup> «Հանդես ամսօրեայ», 1952, հունվար-մարտ, թիվ 1–3, էջ 145–148, «Հայտարարություն բարեգործական ընկերությունից հայոց» (Կ. Պոլիս), 1860, էջ 14–15:

<sup>59</sup> «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 77, 83, Ա. Պէյլերեան. նշվ. աշխ., էջ 152, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 60:

<sup>60</sup> Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 60, Ա. Պէյլերեան. նշվ. աշխ., էջ 152:

Թարգման Թադևոս Թերխանը<sup>61</sup>:

1857 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Պոլսում հիմնված Ֆրանսախոս “L’Etoile du Bosphore” («Բոսֆորի աստղ») օթյակի հայտնի հայ անդամներից էին օսմանյան բանակի սպա Միհրան Մարաշյանը և 1884 թ. այդ օթյակում վարպետի աստիճան ստացած Հովհաննես Արշակունին<sup>62</sup>: 1862 թ. հունվարի 25-ին Մանչեսթրում գործող “Odd Fellows” մասոնական օթյակը Կ. Պոլսում Անգլիայի դեսպան բարձրապատիվ մասոն Հենրի Բուլվեր Լիթոնի<sup>63</sup> նախաձեռնությամբ ստեղծեց «Հայկ» կամ «Օրիոն» անվանումով մասնաճյուղ, որն արտաքուստ հանդես էր գալիս որպես բարեգործական ընկերություն: Այս օթյակի ճանաչված դեմքերից էին Սերովբե Ազնավուրը և Սերովբե Թազվորյանը: «Հայկ» օթյակը Կ. Պոլսում մի շարք բարեգործություններ իրականացրեց, աղքատներին օգնություններ տրամադրեց, իսկ «Արևելյան թատրոնում» մասոնական արարողակարգով հանդիսություն կազմակերպեց և բեմադրեց Վիկտոր Հյուգոյի «Անջելո» պիեսը<sup>64</sup>:

1861 թ. նոյեմբերի 9-ին Կ. Պոլսում հիմնված անգլախոս “Bulwer” («Բուլվեր») թիվ 891 օթյակի երևելի հայ անդամներից էին Կ. Պոլսի առևտրի պալատի հիմնադիրներից Սենեքերիմ Մանուկյանը և հայտնի թատերական գործիչ Հակոբ Վարդովյանը<sup>65</sup>:

Սենեքերիմ Մանուկյանի (1824–1908) գլխավորած առևտրական պալատը մասնաճյուղեր ուներ Մանչեստրում և Բաղդադում: Նա միաժամանակ հայտնի բարերար էր, 1868–1871 թթ. «իրական բարիք մ'եղաւ» Կ. Պոլսի ազգային հիվանդանոցին, ինը տարի շարունակ «գրեթէ միայնակ վարեց»<sup>66</sup> հիվանդանոցի հոգաբարձուների խորհուրդը, որի «պարտականութիւնները ծայրաստիճան խոհականութեամբ վարեց»<sup>67</sup>: Նրա գլխավորած խորհրդի մեջ մտնում էին նաև մասոններ Մկրտիչ Սղաթոնը, Հակոբ Նորատունկյանը և Սերովբե Վիչենյանը<sup>68</sup>:

Հակոբ Վարդովյանը (1840–1898) իր ժամանակի մեծագույն բեմադրիչներից էր, Կ. Պոլսում մեծ ճանաչում ունեցող եվրոպական

<sup>61</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78–79, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 151–152, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 59–60:

<sup>62</sup> Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 77–78, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 152:

<sup>63</sup> Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 57, 65, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 153, «Հայրենիք», 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 80:

<sup>64</sup> «Մասիս» (Կ. Պոլիս), 1862, հունվարի 30, «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 94:

<sup>65</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 79, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 154, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 62:

<sup>66</sup> Բ. Քէչեան. Պատմութիւն Սուրբ Փրկչի Հիւանդանոցին Հայոց Ի Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս, 1888, էջ 237, Մ. Օրմանեան. Ազգապատում. Գ. հատ., մասն Ա, էջ 4433–4435:

<sup>67</sup> Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առջին հատոր, էջ 75:

<sup>68</sup> Բ. Քէչեան. նշվ. աշխ., էջ 224–225:

տիպի «Օսմանիե» թատրոնի հիմնադիրը: Նրա «անխոնջ ու անվհատ աշխատութեան շնորհիվ»<sup>69</sup> «Արևելյան թատրոնի» դերասաններից 1868 թ. կազմված կոլեկտիվը տասը տարի շարունակ Արևելքի ամենամեծ ու կայուն ծրագրով գործող թատերախումբն էր: Վարդուկյան թատրոնը Կ. Պոլսում ապրող թուրքերի, հայերի, հույների, հրեաների, բուլղարների և այլոց հոգևոր մերձեցման կենտրոնն էր<sup>70</sup>: Այն իր արհեստավարժությամբ և գեղարվեստական բարձր մակարդակով 1876 թ. զարմացրել ու հիացրել էր անգլիական հայտնի դիվանագետ և քաղաքական գործիչ լորդ Սոլսբերիին: Առանց Հ. Վարդուկյանի հազիվ թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան<sup>71</sup>:

1862 թ. նոյեմբերի 24-ին Կ. Պոլսում հիմնվեց ֆրանսախոս «L'Union d'Orient» («Արևելքի միություն») օթյակը, որի հիմնադիրներից էին թատերական գործիչ Սրապիոն Հեքիմյանը, վաճառականներ Հովհաննես Խուրտաճյանը, Միքայել Ալիշանը, Գալուստ Էքիզյանը, ռուսական հյուպատոսարանի թարգման, «Իտալիա» օթյակի անդամ Հաբեթիկ Նեվրուզյանը<sup>72</sup>: Նրանց միացած, բոլորի կողմից «երկար տարիներ խիստ հարգված» Ս. Ազնավուրը 1863 թ. դեկտեմբերի 29-ին ընտրվեց օթյակի վարպետ<sup>73</sup>: Գիսաստղի նման կարճատև կյանք ունեցած այս օթյակին անդամագրվեցին մի խումբ երևելի արևմտահայեր՝ հիմնականում պետական պաշտոնյաներ ու մտավորականներ: Նրանցից էին ծովային նախարարութայն թարգմանիչներ Թորոս բեյ Գիսակը և Հովսեփ Վարդանյանը, պետական խորհրդի անդամ Հովհաննես Նուրյանը, կրթութայն նախարարութայն պաշտոնյա Հարություն Սարաֆյանը, ֆինանսների նախարարութայն խորհրդական Տիրան Ալի(ե)քսանյանը, դիվանագետներ Հարություն Տատյանը և Էլիաս Չայանը, ճարտարագետ Ներսես բեյ Տատյանը, սեղանավորներ Մարտիրոս Մյուհենտիսյանը, Պոլ Կամալիկը, Ժողեֆ Իսկենտերյանը, հայտնի վաճառական Հարություն (Արթին) Նորատունկյանը, ուսուցիչ Հովսեփ Իսկենդերյանը, փաստաբան Ավետիս Քոլոլյանը, բանկիր Մկրտիչ Փիշմիշյանը, Անթուան Ազնավուրը, Վինսենթ Շիրաջյանը<sup>74</sup> և այլ անվանի հայեր: Այս մասոններից Թորոս բեյ Գիսակը (1825–1873) ծառայությունը սկսել է արքունի նավատորմում, որպես առաջին թարգման, իսկ 1865 թ. դարձել այդ հաստատութայն դիվանագետը: 1869–1873 թթ. եղել է Մովսիսյան նախարարութայն առաջին թարգմանը: Ունեցել է միրալայի զինվորական աստիճան և բեյի տիտղոս<sup>75</sup>:

<sup>69</sup> Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 254:

<sup>70</sup> Գ. Ստեփանյան. նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1969, էջ 7–9:

<sup>71</sup> Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 73, 516:

<sup>72</sup> «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 92–94, Ա. Պէլլէրեան. նշվ. աշխ., էջ 157, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 80, 90:

<sup>73</sup> Ա. Պէլլէրեան. նշվ. աշխ., էջ 157–158, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 81, 85:

<sup>74</sup> Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 80–83, Ա. Պէլլէրեան. նշվ. աշխ., էջ 157–158, «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 91:

<sup>75</sup> Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 309, 347:

Հովսեփ Վարդանյանը (Հովսեփ Վարդան փաշա, 1815–1879) բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, տաղանդավոր գրող, պատմաբան, «հռչակավոր գիտնական և քաղաքագետ»<sup>76</sup>: Փայլուն կրթություն ստացած Հ. Վարդանյանը 25 տարի պաշտոնավարել է զինվորական ասպարեզում, եղել է օսմանյան ծովային ուժերի գլխավոր թարգմանիչ, արքունի նավարանի թարգմանիչ և այդ ծառայությունների համար ստացել բեյի տիտղոս: 1858 թ. Հ. Վարդանյանն Անտոն Յավեր Թնկերյանի և Առաքել Նուպարյանի հետ արևմտահայերի շրջանում առաջինն է ստացել փաշայի տիտղոս: Նա արևմտահայ «այն նշանավոր անձերէն մեկն էր»<sup>77</sup>, ով Օսմանյան կայսրությունում վարել է քաղաքական տարբեր պաշտոններ, մասնակցել արևմտահայերի ազգային և օսմանյան սահմանադրությունների մշակման աշխատանքներին: Հ. Վարդանյանը մեծանուն խմբագիր և հրատարակիչ էր, «Օսմանեան խմբագրութեան մէջ առաջինը»<sup>78</sup>: 1853–1877 թթ. նա հրատարակել է հայատառ թուրքերեն «Մէճմուլայի հավատիս» («Ծաղկաքաղ լուրերի») պարբերականը, իսկ 1877–1885 թթ. խմբագրել «Թէրճիմանը և Ֆքեար» («Թարգման մտածումների») թերթը: Գրել է «Ազգայի» և «Շատախոսը» վեպերը, «Նապոլեոնի պատմությունը» վեցհատոր աշխատությունը: Հրատարակել է 1863 թ. Ազգային սահմանադրությունը և «Սահմանադրական ճշմարտութիւններ եւ անոնց պարտադրութիւնները» աշխատանքը<sup>79</sup>:

Հովհաննես Նուրյանը (1839–1899) բարձրաստիճան պաշտոնյա է դարձել 1863 թ., ընտրվել Պետական խորհրդի անդամ: Նա օսմանյան «Կարմիր կիսալուսնի» հիմնադիրներից է, որի ստեղծումն իրականացրել է Կայսերական բժշկական ընկերության նախկին նախագահ Հայկ Պարոնիկ Մաթևոսյանի հետ: 1855–1887 թթ. Հովհ. Նուրյանը Կ. Պոլսի խորհրդարանական հանձնաժողովի անդամ էր<sup>80</sup>:

Տիրան բեյ Ալի(ե)քսանյանը (1814–?) «Արևելքի միություն» օթյակի բարձրապատիվ մասոններից էր, ուներ վարպետի աստիճան<sup>81</sup>: Նա օսմանյան բարձրաստիճան պաշտոնյա էր, փոստ-հեռագրական ծառայության վերահսկիչ, ֆինանսների նախարարության խորհրդի անդամ: 1853 թ. օսմանյան կառավարության թույլտվությամբ և Հովհաննես էֆենդի Թնկերյանի (1788–1868) մասնակցությամբ հիմնադրել է կապիտալիստների միությունը: Բարձր դուսնը մատուցած

<sup>76</sup> Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 135:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 136:

<sup>78</sup> «Մասիս», 1879, թիվ 2290, «Հանդէս ամսօրեայ», 1890, մարտ, թիվ 3, էջ 63:

<sup>79</sup> Վ. Զարդարեան. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 135–136, Գ հատոր, Գահիրե, 1934, էջ 7–23, 8–24, Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 85–87:

<sup>80</sup> Մ. Օրմանեան. Ազգապատում, հ. Գ, մասն Ա, էջ 4438–4439, Ա. Ն. Մեղպուրեան. Հայ և ծագումով հայ բժիշկներ, Ստանպուլ, 1950, էջ 181, Օ. Դամգոցյան. նշվ. աշխ., էջ 83:

<sup>81</sup> Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 178:



ծառայությունների համար նրան շնորհվել է բեյի տիտղոս: Տ. Ալի(ե)քսանյանը ծավալել է նաև դիվանագիտական գործունեություն, եղել է դեսպանատան քարտուղար, իսկ 1862 թ. Բելգիայում Թուրքիայի դեսպանն էր<sup>82</sup>:

Բարձր դուան բարձրաստիճան պաշտոնյա և դիվանագետ Հարություն փաշա Տատյանը (1830–1901) Օսմանյան կայսրության արքունի վառուդապետ, Կ. Պոլսի Հայոց ազգային հոգևոր ու գերագույն ժողովների և եվրոպական մի շարք երկրների ընկերությունների անդամ, հայտնի բարերար Հովհաննես բեյ Տատյանի (1798–1869) «ամենէն տաղանդաւոր որդին էր»<sup>83</sup>: Փարիզի Սենթ Բարբ և Լուի լը Գրան քոլեջներում ու Սորբոնի համալսարանում կրթություն ստացած Հարություն-Գարեգինը (Արթին փաշա) ավելի քան 30 տարի պաշտոնավարել է արտաքին գործերի նախարարությունում՝ զբաղեցնելով «բացառիկ դիրք»<sup>84</sup>: Սկսած 1860 թ. դիվանագիտական առաքելություն է իրականացրել Օդեսայում, Փարիզում, Իսպանիայում, ավելի ուշ՝ Բուլղարիայում: Հ. Տատյանը թեպետ արտաքին գործերի նախարարության խորհրդական էր, սակայն «տարիներով ինքն էր վարում Տաճկաստանի արտաքին քաղաքականությունը»<sup>85</sup>: «Կարմիր սուլթան», հայ ժողովրդի դահիճ Աբդուլ Համիդ 2-րդը նրան էր վստահում դիվանագիտական կարևոր բանակցություններում որպես առաջին դեմք և դրանց կազմակերպիչ հանդես գալու իրավունքը: Հ. Տատյանը «քաղաքագիտական բարձր հանճարով օժտված, դիվանագիտական գրութեանց քաջավարժ հեղինակ» էր: Նա մեծ հեղինակություն, հարգանք, պատիվ և բարձր անուն ուներ ոչ միայն Բարձր դուան և հայություն շրջանում, այլև «Արքունական, պետական, դեսպանական և եվրոպական շրջանակներում մէջ»<sup>86</sup>: Դրա առհավատչյան Փարիզում դեսպան եղած ժամանակ պարբերաբար այցելություններն էին Ֆրանսիայի կայսրուհուն, նրան շնորհած Օսմանյան կայսրության բարձր պարգևները, փաշայի տիտղոսը, վեզիրի աստիճանը, եվրոպական բազմաթիվ երկրների միապետներից ստացած շքանշաններն ու պատվանշանները<sup>87</sup>: Հ. Տատյանը «միջազգային համբավ վայելող պետական մեծ դեմք էր», միաժամանակ «ճշմարիտ ազգասեր հայ»<sup>88</sup>: Իրեն «օսմանեան պաշ-

<sup>82</sup> Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 155, 231, 256, 266, 699:

<sup>83</sup> Թ. Ազատեան. Տատեան գերդաստանը եւ իր ականավոր դէմքերը, Իսթանպուլ, 1952, էջ 10:

<sup>84</sup> Աննա Նակիպ Պոլթրոս Ղալի. Տատեանները (Ընտանեկան յուշեր), Գահիրէ, 1981, էջ 19:

<sup>85</sup> Մ. Ջերագ. Կենսագրական միւսոններ, Պարիս, 1929, էջ 63, «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 1927, մարտ, թիվ 11, էջ 325:

<sup>86</sup> Մ. արքեպիսկոպոս Օրմանեան. Խոհք եւ խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 429–430:

<sup>87</sup> Թ. Ազատեան. նշվ. աշխ., էջ 10, Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 207:

<sup>88</sup> Թ. Ազատեան. նշվ. աշխ., էջ 11:

տոնատար և Հայու զավակ»<sup>89</sup> համարող Հ. Տատյանը գործնական ու օգտակար ծառայություններ մատուցեց հայ համայնքին՝ անդամակցելով Կենտրոնական ուսումնական խորհրդին, այնուհետև վարելով ատենապետի պաշտոնը քաղաքային ժողովում: Հակառակ իր զբաղեցրած պաշտոնների «ծայրահեղ նրբությունը»՝ Հ. Տատյանը «բազմիցս ծառայություններ մատուցեց ազգին՝ վտանգելով իր կեանքը»<sup>90</sup>:

Հարուժյուն փաշայի ավագ եղբայր Ներսես Խոսրով բեյ Տատյանը (1825–1872) իր ուսյալ հոր հետ եղել էր Եվրոպայում, կրթություն ստացել Փարիզում: Նա բացառիկ տաղանդի տեր ճարտարագետ էր, փայլուն մեխանիկ, կամուրջների ու խճուղիների շինարարությունից փորձառու մասնագետ: Մտնելով պետական ծառայության՝ Ն. Տատյանը Զեյթինբուռուի ձուլարանի վերատեսուչն էր, Թուզլախանի գործարանների տնօրենը: Նա մի քանի գյուղերի հեղինակ էր, գրել է ուշագրավ գրքեր մեխանիկայի ու շերամապահությունից մասին<sup>91</sup>:

Դիվանագետ էլիաս (Եղիազար) Չայանը (1840–1902) Օսմանյան կայսրության ամենահարգված քաղաքական դեմքերից մեկն էր: Մայրական կողմից նրա պապը արքունի անվանի վառուդապետ Հովհաննես Տատյանն էր: Է. Չայանը 1876 թ. ծառայության է անցել Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 1896 թ. եղել է Պետական խորհրդի անդամ, 1897 թ. գլխավորել հայկական հիվանդանոցի հոգաբարձուների խորհուրդը, արժանացել առաջին աստիճանի Մեջլիսի և Օսմանիե պատվանշանների<sup>92</sup>:

Փաստաբան Ավետիս Քոլոլյանը Ներքին գործերի նախարարության իրավախորհրդատու էր, էգեյան կղզիների քրեական դատարանի դատավոր<sup>93</sup>:

«Արևելքի միություն» օթյակի անդամ էին արևմտահայ մտավորականների մի ամբողջ փայլուն սերունդ՝ լրագրող-հրատարակախոս, «Մասիս» թերթի երկարամյա խմբագիր Կարապետ Յուլիանյանը, ճանաչված բժիշկներ Գրիգոր Մոզյանը, Ստեփան բեյ Արսլանյանը, Նահապետ Խուսիսյանը, Հովսեփ Շիշմանյանը (Մերենց), Բարունակ բեյ Ֆերուհյանը, Բրթիկյանը (Բրթիկյանը), Միքայել Խորասանճյանը և ուրիշներ<sup>94</sup>:

<sup>89</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 63, «Հայաստանի կոչնակ», 1927, մարտ, թիվ 11, էջ 326:

<sup>90</sup> Աննա Նալիպ Պոլսրոս Ղալի. նշվ. աշխ., էջ 19:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 18, Թ. Ազատեան. նշվ. աշխ., էջ 12–13:

<sup>92</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 173, Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 262, 266, 285, 314, Օ. Դամգոցյան. նշվ. աշխ., էջ 84:

<sup>93</sup> Օ. Դամգոցյան. նշվ. աշխ., էջ 81, Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 320, 328:

<sup>94</sup> Ա. Պէլլէրեան. նշվ. աշխ., էջ 175, Օ. Դամգոցյան. նշվ. աշխ., էջ 82–83:

Հասարակական, քաղաքական գործիչ, արևմտահայ ազատական հոսանքի պարագլուխ Կ. Յուլիանյանը (1823–1904) XIX դարի «ամենն կարկառուն դեմքերէն մեկն» էր, ով իր արգասաբեր գործունեությամբ 50 տարի շարունակ «լրագրական ասպարեզին մէջ պատուաւոր դիրք մը գրաված եւ մեծապես սատարած է աշխարհաբար լեզուի յառաջացմանը»<sup>95</sup>: 1848 թ. Փարիզի Առևտրական բարձրագույն վարժարանի շրջանավարտ Կ. Յուլիանյանը հաճախեց նաև Քոլեժ դը Ֆրանսի և Սորբոնի համալսարանի դասախոսություններին ունկնդրելով ժյուլ Միշլեին<sup>96</sup>: 1852 թ. Պետրոս ամիրա Խորասանճյանի և Հակոբ Կրճիկյանի առաջարկությամբ ու «ազգայնոց յորդորանօքն ու ձեռնտուութեամբ»<sup>97</sup> ստանձնեց Կ. Պոլսի պատրիարքարանի «Հայաստան» թերթի հրատարակությունը, որն անվանեց «Մասիս»: Նա 32 տարի «բարձր ու վսեմ» պահեց «խմբագրի կոչումը»<sup>98</sup>, պատվով կատարեց թերթի խմբագիր-հրատարակչի պարտականությունները՝ այդ ասպարեզում ձեռք բերելով «արդյունավոր և պատվավոր դիրք» և պոլսահայության համակրանքը: «Յառաջադիմասէր և ազատամիտ» Կ. Յուլիանյանը մշտապես հանդես էր գալիս որպես «ազգային իրավունքների ու շահերի ջերմ պաշտպան»<sup>99</sup>: Լինելով իր ժամանակի և գործի մարդը՝ Կ. Յուլիանյանն Արշակ Ալպոյաճյանի բնութագրմամբ՝ «ամէն բանէն ավելի» երկու կարևոր ծառայություն մատուցեց հայությանը՝ իր տեական հրատարակած թերթով և աշխարհաբարը զարգացնելով: Դրանով նա «դարձավ անմոռանալի անուն ... հայ լրագրութեան, հայ դպրութեան և գրականութեան մէջ»<sup>100</sup>: Կ. Յուլիանյանը «իբրև լեզուի վերանորոգիչ ... կատարեց իւր պարտքը, ... լրագրական լեզու ստեղծեց, ձեռք գայն, զօրութիւն տուաւ լեզուին»<sup>101</sup>: Նա իբրև թարգմանիչ առաջնակարգ տեղ է գրավում հայ գրականության մեջ՝ իր կատարած մոտ 50 հատոր թարգմանություններով: Կարևոր դեր է խաղացել մանավանդ հայոց լեզվի «մշակման տեսակետով» և ընդմիջտ պիտի հիշվի մեր գրական տարեգրության մեջ «իբր երախտավոր մը ժիւ դարու վերջին կէսին»<sup>102</sup>: Կ. Յուլիանյանը միաժամանակ լուրջ դերակատարում ունեցավ ազգային սահմանադրական շարժման մեջ և սահմանադրության մշակման գործում: Վարեց ազգային բազմաթիվ պաշտոններ, քանիցս ընտրվեց երեսփոխան, Սահմանադրական ժողովի անդամ, մասնակցեց քաղաքական ժողովի աշխատանքներին:

Ստ. Ա.(ր)սլանյանը (1822–1902) Բ. Քրթիկյանի և Կ. Յուլիանյանի

<sup>95</sup> Վ. Զարգարեան. նշվ. աշխ., էջ 85:

<sup>96</sup> Հ. Ասատուր. Դիմաստուներ, էջ 47:

<sup>97</sup> Գ. Գալեմքեարեան. նշվ. աշխ., էջ 126:

<sup>98</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 127:

<sup>99</sup> Վ. Զարգարեան. նշվ. աշխ., էջ 86:

<sup>100</sup> «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1904, թիվ 2370–2374:

<sup>101</sup> Ա. Պիպեռեան. Ճաշակ արդի հայ մատենագրութեան, հ. Ա, Կ. Պոլիս, 1910, Վ. Զարգարեան. նշվ. աշխ., էջ 88–89:

<sup>102</sup> Հ. Ասատուր Դիմաստուներ, էջ 62:

Հետ սովորել էր Սկյուտարի վարժարանում<sup>103</sup>, այնուհետև փայլուն ավարտել Գալաթասարայի զինվորական բժշկական վարժարանը: Որպես լավագույն շրջանավարտ, սուլթան Աբդուլ Մէջիդի հրամանով 1847 թ. ուղարկվել է Վիեննա՝ կրթությունը շարունակելու: Այստեղ բժշկագիտության դոկտորի աստիճան ստանալուց հետո 1848 թ. օգոստոսին վերադարձել է Կ. Պոլիս և 30 տարի շարունակ դասավանդել կայսերական զինվորական բժշկական բարձրագույն վարժարանում: Եղել է Բեյլերբեյի զինվորական հիվանդանոցի տնօրեն, 1870 թ. ստացել հազարապետի աստիճան, ընտրվել Սպարապետության բարձրագույն խորհրդի ատենապետ, տասը տարի աշխատել ռազմական նախարարութայնում: Որպես արքունի բժիշկ-թիկնապահ ընկերակցել է մեծ եպարքոսին, 1870 թ. ստացել փաշայի տիտղոս, դարձել կայսերական բժշկական միության անդամ և զինվորական բժշկական ժողովի նախագահ: Արժանացել է թուրքական և օտարերկրյա մի շարք պատվանշանների ու շքանշանների<sup>104</sup>: Ստ. Ա(ր)սլանյանը 1850-ական թվականներից սկսած ծավալել է ազգանպաստ գործունեություն: 1853 թ. ընտրվել է առաջին ուսումնական խորհրդի անդամ, 1857 թ.՝ Հասքեոյի վարժարանի հոգեբարձու, 1858 թ.՝ Ազգային գերագույն ժողովի ատենադպիր: Նա սահմանադրական շարժման ակտիվ գործիչներից է, 1863 թ. ընտրվել է Սահմանադրական գործադիր հանձնաժողովի ատենապետ, 1866 թ.՝ Սահմանադրական կանոնագրի վերաքննության հանձնաժողովի անդամ: 1875–1880 թթ. ընտրվել է Քլաքսին ժողովի ատենապետ<sup>105</sup>: Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի և բժիշկ, մասոն, հասարակական գործիչ Սերովբե Վիչենյանի (Սերվիչեն) խնդրանքով ռուսական պետության ուշադրությունը հրավիրել է Հայկական հարցի վրա, ջանացել 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրում ներառել 16-րդ հոդվածը: Ընտրվել է ազգային երեսփոխան, Ազգային ընդհանուր և Քաղաքացիական ժողովների ատենապետ<sup>106</sup>:

Փարիզի Սենտ Բարբ վարժարանի և Սորբոնի համալսարանի շրջանավարտ, բժշկագիտության դոկտոր Ն. Ռուսինյանը (1819–1876) «օտարին ծառայել է ավելի, ուզեց իր ազգին ծառայել»<sup>107</sup>, ուստի վերադարձավ Կ. Պոլիս: Նա Սերվիչենի երաշխավորությամբ մի քանի տարի Թուրքիայի մեծ եպարքոս Փոլատ փաշայի անձնական բժիշկն էր ու խորհրդականը<sup>108</sup>, զինվորական բժշկական վարժարանի դասախոս: Կայսերական բժշկական ժողովի անդամ Ն. Ռուսինյանը լայն ճանաչում ուներ որպես «պարկեշտ և բազմահմուտ անձ»<sup>109</sup>: Նա ամենից առաջ ազգային գործիչ էր, օրենսդիր, բանաստեղծ, փի-

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>104</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 108–111, 115:

<sup>105</sup> Նույն տեղում, էջ 112–113:

<sup>106</sup> Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 401–402, 705:

<sup>107</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 69:

<sup>108</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 129:

<sup>109</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 69:

լիստիա, թարգմանիչ, քան «ընտիր բժիշկ»<sup>110</sup>: 1840–1849 թթ. Փարիզում ուսանելու տարիներին Ն. Ռուսինյանը կարդացել էր մասուններ Օ. Թիերի, Ֆ. Մինիեի, Ֆ. Գիզոյի, Ա. Լամարթինի, Ֆ. Կուզենի, Վ. Հյուգոյի, Պ. Բերանտեի և նշանավոր այլ հեղինակների գործերը, ովքեր «քաղաքական ամպիրոնին վրայէն գաշխարհ թնդացրին իրենց խոսքերով»<sup>111</sup>: 1848 թ. Ֆրանսիական հեղափոխության ազդեցությունների տակ «ազատասեր ու ազգասեր դարձած»<sup>112</sup> ու «անոր հրաշալի և օգտավետ արդիւնքը զգացած»<sup>113</sup> երիտասարդ Ն. Ռուսինյանն իր համախոհների հետ 1849 թ. ստեղծեց «բարձր ու վսեմ նպատակ» հետապնդող «Արարատյան» ընկերությունը<sup>114</sup>: Վերադառնալով Կ. Պոլիս նա Ն. Պալյանի, Սերվիլենի, Կ. Յուլիանի, Հ. Կրճիկյանի ու այլոց հետ «բոլորովին նոր գիտություններ և նոր գաղափարներով»<sup>115</sup> կանգնեց արևմտահայ ազգային սահմանադրական շարժման ակունքներում: «Բարձր մտայնությամբ օժտված», «գերազանցապես գաղափարի մարդ» Ն. Ռուսինյանը «օրէնսդրի դէպ կատարեց, իբր Ազգային սահմանադրության հեղինակներեն»<sup>116</sup>: Նա 1853 թ. Կ. Պոլսում հիմնված «Ուսումնական խորհրդի» նախագահն էր, իսկ 1859–1860 թթ. Սահմանադրության հանձնաժողովի անդամ<sup>117</sup>: Խմբագրեց Սահմանադրության նախագիծը և ներքին Կանոնագիրը, որը «ծափերով ընդունեցին»<sup>118</sup>: 1863 թ. նա Ազգային ժողովի երեսփոխան էր, ապա ատենապետ, ուսմ պարտականությունները փայլուն կատարելու համար նրան պատրիարք Ն. Վարժապետյանն անվանում էր «հայոց Սուրեն»<sup>119</sup>, իսկ Մ. Չերազը՝ «Ազգային ժողովների նեստոր»<sup>120</sup>: Հայոց նոր լեզու մշակելու կողմնակից Ն. Ռուսինյանը «նորաբանութիւններու հնարամիտ, հազվագիւտ վարպետ էր, աննման նոր բառեր կերտող հնարիչ»<sup>121</sup>, ուսմ ստեղծած տասնյակ բառեր գործածական են առայսօր: Գրականության սիրահար Ն. Ռուսինյանի համար Ֆրանսիական նշանավոր գրողներ Վ. Հյուգոն, Ա. Լամարթինը և Ա. Մյուսեն «կազմում էին երրորդություն, որոնց նա երկրպագու էր»: Ա. Լամարթինի մահից հետո նա հայացնում էր նրա անունը՝ արտաբերելով «Լամ-առ-դին, այսինքն՝ կու լամ անոր

<sup>110</sup> Ա. Մեղպուրեան. նշվ. աշխ., էջ 132:

<sup>111</sup> Ն. Ռուսինեան. Դասագիրք փիլիսոփայութեան, Պոլիս, 1879, էջ 2:

<sup>112</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 71:

<sup>113</sup> «Հայաստանի կոչնակ», 1927, թիվ 11, էջ 329:

<sup>114</sup> Ա. Մեղպուրեան. նշվ. աշխ., էջ 124:

<sup>115</sup> «Մասիս», 1892, դեկտեմբերի 5, թիվ 3971:

<sup>116</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 63, 69:

<sup>117</sup> «Մասիս», 1853, դեկտեմբերի 23, թիվ 51, 1859, դեկտեմբերի 24, թիվ 413, 1860, մայիսի 26, թիվ 433:

<sup>118</sup> Հ. Ասատուր. Դիմաստուներներ, էջ 67, Ա. Մեղպուրեան. նշվ. աշխ., էջ 126:

<sup>119</sup> Ա. Թևոսյան. Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը, Երևան, 1970, էջ 68:

<sup>120</sup> «Նոր-Դար» (Թիֆլիս), 1876, 16/28 դեկտեմբեր, թիվ 1926:

<sup>121</sup> Ա. Մեղպուրեան. նշվ. աշխ., էջ 128, 132, Հ. Ասատուր. Դիմաստուներներ, էջ 64–65:

դիակին վրայ»<sup>122</sup>: «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» մասոնական գաղափարի շերմեռանդ ջատագով Ն. Ռուսինյանի «Հավատքը Ֆրանսիայի 1789-ն էր: Անոր սկզբունքները կուզեր ծավալել հայոց մէջ»<sup>123</sup>: Նա ֆրանսիական մեծ հեղափոխությունից հանրապետական օրացույցը կիրառելու կողմնակից էր, որի ամիսների անունները թարգմանեց «ճարտարապետությունը և գեղեցիկ կերպով»<sup>124</sup> բանաստեղծական հնչեղ և գյուլթիչ հայերենով: Հայություն անկախությանն ու ազատությանն անվերապահորեն հավատող Ն. Ռուսինյանի հայերենասիրական «Կիլիկիա» բանաստեղծությունից հիման վրա ստեղծված «Երբոր բացուին դռներն յուսոյ» երգը «հետեւողութիւն մ'է ֆուանսերէն երգի մը, որոյ նօսմանտի բառը Կիլիկիայի փոխած մէջ»<sup>125</sup>:

Հ. Շիշմանյանը (Ծերենց, 1822–1888) հայ հանրությանն առավելապես հայտնի է որպես գրող և հրապարակախոս, պատմավեպերի հեղինակ: Եվրոպական փայլուն կրթություն ստացած, Վենետիկի Մխիթարյան վարժարանը, Սորբոնի և Պիզայի համալսարանների բժշկական ֆակուլտետն ավարտած Հ. Շիշմանյանը բժշկությունից առավել զբաղվել է գրականությամբ, համարվել եվրոպական ազատամտական գաղափարների ջատագով: Նրա մասոնական գաղափարական աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը, որի ականատեսն է եղել, և իտալական ազգային-ազատագրական պայքարը: 1849 թ. Ծերենցը Փարիզում Ն. Ռուսինյանի, Ն. Պալյանի, Հ. Պեյրանի, Հ. Արզումանի, Խ. Պարտիզպանյանի և այլոց ջանքերով կազմակերպեց «Արարատյան» ընկերություն, որը նպատակ էր հետապնդում «սատարել Հայաստանի յառաջադիմությունը»<sup>126</sup>: 1853 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ ազգասեր Հ. Շիշմանյանը մասնակցել է արևմտահայ ազգային սահմանադրական շարժմանը, պայքարել դավանաբանական վեճերի դեմ, դարձել հակահասունյան շարժման պարագլուխ: Նա մասոնական ուղղվածություն ունեցող Կ. Պոլսի «Բարեգործական ընկերության» հիմնադիրներից մեկն է, զբաղվել հայության ազատագրական շարժման հարցերով, հարել Հ. Սվաճյան – Մ. Նալբանդյան խմբին: 1870-ական թվականներին ակտիվ աշխատակցել է Կ. Յոթնյանի «Մասիս», Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ», Ղ. Պալտազարյանի «Արշալույս Արարատյան» պարբերականներին: Որպես մասոն՝ Ծերենցի քաղաքական երազանքն էր XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների ու հեղափոխությունից գաղափարների հիման վրա տեսնել այնպիսի պետական համակարգ, որտեղ կգործեր

<sup>122</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 73:

<sup>123</sup> «Գեղունի» (Վենետիկ), 1906, էջ 44:

<sup>124</sup> «Հանդէս ամսօրեայ», 1902, ապրիլ, թիվ 4, էջ 104–105, Ա. Մեզուրեան. նշվ. աշխ., էջ 127:

<sup>125</sup> Մ. Չերազ. նշվ. աշխ., էջ 72:

<sup>126</sup> «Հայաստանի կոչնակ», 1927, թիվ 11, էջ 329, «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա), 1850, հունիսի 28, էջ 366:

Հասարակության բոլոր դասերի «բարոյական միասնության» դաշինքը<sup>127</sup>: Եղիա Տեմիրճիպալյանի կարծիքով Մերենցը գերազանց մասնագետ էր, իսկ ըստ Գրիգոր Օտյանի՝ «հմուտ և ազգասեր հայ»<sup>128</sup>:

Բ. Ֆ. Քրիստիանը (1824–1869) Սկյուտարի ճեմարանում սովորել է Ստ. Ա(ր)սլանյանի, Կ. Յուլիանյանի, Հ. Պեյրանի, Ա. Ֆրենկյանի հետ<sup>129</sup>: Նա Ստ. Ա(ր)սլանյանի հետ նաև զինվորական բժշկությունն ուսանած առաջին հայերից է<sup>130</sup>: 1847 թ. սուլթանի հրամանով որպես բժիշկ-ուղեկցորդ ծառայել է Բաղդադի նահանգապետի մոտ, 1852–1855 թթ. եղել է Մանասթրի զինվորական հիվանդանոցի բժշկապետ, 1856 թ. ընտրվել Կայսերական բժշկական միության անդամ: 1865 թ. Բ. Ֆերուհիսանը ստացել է գնդապետի կոչում և բեյի տիտղոս, պարգևատրվել երրորդ աստիճանի Մեջիդիե պատվանշանով: «Ազատամիտ, հոգեկան և բարոյական ընտիր ձեռքերով օժտուած»<sup>131</sup> Բարունակ բեյը 1867 թ. վարել է Կ. Պոլսի Սբ. Փրկիչ առաջին ազգային հիվանդանոցի տնօրինությունը: Իր գաղափարակից և սրտակից բարեկամներ Հ. Տատյանի, Գ. Օտյանի, Գ. և Մ. Աղաթոնների, Ն. Ռուսինյանի, Կ. Յուլիանյանի հետ ակտիվորեն մասնակցել է ազգային սահմանադրություն մշակելու աշխատանքներին և իր ստորագրությամբ հաստատել 1860 թ. սահմանադրությունը<sup>132</sup>: Անդամակցել է պատրիարքարանի աշխարհիկ խորհրդի գործունեությանը, 1862–1863 թթ. և 1867 թ. ընտրվել Ազգային ընդհանուր ժողովի, Սահմանադրական առաջին ուսումնական խորհրդի ատենապետ<sup>133</sup>:

Գրիգոր Մոզյանը (1830–1882) մեծ բարերար, ուսումնասեր մեկենաս Գևորգ բեյ Երեմյանի օգնությամբ 1854 թ. Փարիզում կրթություն ստացավ և բժշկության դոկտորի աստիճանով վերադարձավ Հայրենի Կ. Պոլիս: 1856 թ. նա ընտրվեց Կայսերական բժշկական ընկերության անդամ: 1860 թ. պատրիարքարանի Գերագույն ժողովը Միքայել Խորասանճյանի հետ նրան ընտրեց Սբ. Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի անդամ: 1864 թ. Սերվիլենի կարգադրությամբ և իր համաձայնությամբ նախ երեք ամիս Սբ. Փրկիչ հիվանդանոցում անվճար աշխատեց որպես բժիշկ, 1866 թ. դարձավ այդ հիվանդանոցի վիրաբուժական բաժնի ղեկավար, իսկ 1867 թ. սկզբից մինչև 1868 թ. մարտը՝ բժշկապետ (գլխավոր բժիշկ): «Այս մեծագնիվ և բազմահմուտ բժիշկը» 1873 թ. կրկին «գրեթե անձնուիրբար» ստանձնեց հիվանդանոցի բժշկապետի «բազմաչար-

<sup>127</sup> Ռ. Ն ա ն ու մ յ ա ն. Մերենց, Երևան, 1961:

<sup>128</sup> Ա. Մ ե գ պ ու ը ե ա ն. նշվ. աշխ., էջ 147:

<sup>129</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 98:

<sup>130</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 99:

<sup>131</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 102:

<sup>132</sup> Վ. Զ ա ռ դ ա ռ ե ա ն. նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 24, Ա. Մ ե գ պ ու ը ը ե ա ն. նշվ. աշխ., էջ 100–101:

<sup>133</sup> Ա. Մ ե գ պ ու ը ը ե ա ն. նշվ. աշխ., էջ 100–103, Հ. Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 381, «Մասիս», 1859, դեկտեմբերի 24, թիվ 413:

չար պաշտոնը»<sup>134</sup>: Մասոնական Համեստ գործունեությունն ծավալած Գ. Մոզյանը «բարեսիրտ, ազգասեր, աղքատներու և դժբախտներու անարծաթ ու անձնուներ բժիշկ էր, միշտ իր զգայուն սիրտը տրամադրած թշուառներու սփոփանքին»<sup>135</sup>:

Մ. Խորասանճյանը (1835–1903) արևմտահայ շատ մասոնների նման նույնպես կրթությունն է ստացել Փարիզում, սովորել նախ՝ Կոնդորսե վարժարանում, ապա 1859 թ. ավարտել Սորբոնի Համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1860 թ. վերադարձել է Կ. Պոլիս, մեծ համբավ ձեռք բերել իբրև «ախտորոշիչ բժիշկ, փորձառու դարմանող, վստահելի խորհրդական»<sup>136</sup>: Նշանակվել է «Թայրի Բահրի» ռազմանավի բժիշկ՝ դեր-գնդապետի աստիճանով: 1865–1866 թթ. գլխավորել է Կ. Պոլսի Սբ. Փրկիչ Հիվանդանոցը, 1866 թ. ընտրվել է Կայսերական բժշկական միություն անդամ, իսկ 1870 թ.՝ Լուսավորությունից և գիտությունից վարչության, նաև՝ Գիտական ընդհանուր միության խորհրդի անդամ: 1894 թ. Աբդուլ Համիդ 2-րդի անձնական բժիշկն էր, իսկ 1898 թ.՝ Կայսերական բժշկական միության նախագահ: Մ. Խորասանճյանը հրատարակել է իրեն առաջարկված գինավորական բույր կոչումներից, պարգևատրվել Օսմանյան կայսրությունից մի շարք շքանշաններով: Նա «բժշկական մեծ կարողություն ու գնահատելի տաղանդի» տեր «ներհմուտ բժիշկ էր, որ իրավամբ կը կոչուներ բժիշկներու բժիշկ»<sup>137</sup>: Ժամանակակիցները նրան անվանում էին «ամենէն նշանավոր հայ բժիշկ», «իր ժամանակի լավագույն և գիտնականագույն բժիշկներէն մեկը»<sup>138</sup>: Երեսուն տարուց ավելի պրոֆեսորի պաշտոն է զբաղեցրել Կայսերական գինավորական բժշկական բարձրագույն վարժարանում<sup>139</sup>: Մինչև կյանքի վերջը Ետիպուլե Հիվանդանոցի հոգաբարձուներից էր, որի համար իր միջոցներով դեղատուն կառուցեց: Այդ «պարգասէր, բարեգութ, ազնիվ բնավորութեամբ, բազմակողմանի ազնուական ձիրքերով, պաշտոնական շրջանակներու մէջ ընկերային բացառիկ յատկութեամբ օժտուած» մարդը գործընկերներին մշտապես քաջալերող, «անոնցմէ սիրուած և գնահատուած փայլուն դեմք մը եղած է»<sup>140</sup>: Ամուսնացած էր Սերվիլիենի աղջկա՝ Մարիի հետ, բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանի քենակալն էր: Մի քանի օտար լեզուների տիրապետող Մ. Խորասանճյանը «հիշատակելի անուն» էր որպես բժիշկ և մասոն: 1866 թ. անդամագրվելով մասոնությունը՝ երկու տարի անց դարձավ բարձրաստիճան մասոն ընտրվելով օթյակի վարպետ<sup>141</sup>:

<sup>134</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 152:

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 151–152, Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, 1912, էջ 328, Ս. Փրկիչ Ընդհանուր Տարեցոյց, Պոլիս, 1926, 1927, էջ 279:

<sup>136</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 181:

<sup>137</sup> Ս. Փրկիչ Ընդհանուր Տարեցոյց, Կ. Պոլիս, 1904, էջ 421:

<sup>138</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 188:

<sup>139</sup> Նույն տեղում, էջ 178–185, Հ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 406–407:

<sup>140</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 185:

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 186:



1864 թ. Կ. Պոլսում Սերովբե Ազնավուրի մասնակցությամբ ստեղծվեց «Italia» («Իտալիա») օթյակը, որին անդամագրվեցին մի քանի ճանաչված հայ գործիչներ<sup>142</sup>: 1866 թ. փետրվարի 22-ին Կ. Պոլսում Ս. Ազնավուրի նախաձեռնությամբ և 18 հայ ազատ քարտաշների մասնակցությամբ հիմնվեց հայ մասոնության պատմության մեջ ամենանշանավոր հայախոս «Սեր» օթյակը: Հիմնադիր անդամներից Ս. Ազնավուրը մի քանի օթյակների անդամ էր, թատերական գործիչ Ս. Հեքիմյանը և վաճառական Մ. Ալիշանը ներկայացնում էին «Արևելյան» օթյակը, իսկ վաճառական Կ. Աղջիկյանը՝ «Ուղղամտություն» օթյակը: Մյուս հիմնադիրները՝ պետական պաշտոնյաներ է. Չալանը, Հ. Սարաֆյանը, Թ. Գիսակը, Տ. Ալի(ե)քսանյանը, բժիշկներ Ստ. Ա(ր)սլանյանը, Բ. Ֆերուհյանը, խմբագիր Կ. Յուլիսյանը, հաշվապահ Ա. Ազնավուրը, ուսուցիչ Ժ. Իսկենդերը, առևտրականներ Հ. Նեվրուզյանը, Հ. Նորատունկյանը, Վ. Շիրաջյանը, սեղանավորներ Մ. Մյուսեմիսյանը և Պ. Կամալիկը «Արևելքի միություն» օթյակի անդամ էին<sup>143</sup>: Մարտի 2-ին «Սեր» օթյակի շարքերը համալրվեցին վաճառականներ Մ. Փիշմիշյանը, Գ. Էքիզյանը, ճարտարագետ Ն. բեյ Տատյանը, բժիշկներ Հ. Շիշմանյանը, Գ. Խարտաշյանը, փաստաբան Ա. Քոլոլյանը, թարգմանիչ Հ. Նեվրուզյանը, արվեստագետ Վ. Փափագյանը<sup>144</sup>:

«Սեր» օթյակի հիմնադիր նիստում օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ ընտրվեց Ս. Ազնավուրը, մեծ Վերահսկող՝ Ժ. Իսկենդերը, Կրտսեր Վերահսկող Պ. Կամալիկը, ատենախոս՝ Մ. Ալիշանը, քարտուղար՝ Ս. Հեքիմյանը, քննիչ՝ Գ. Էքիզյանը և գանձապետ՝ Հ. Նորատունկյանը<sup>145</sup>: «Սեր» օթյակին անդամագրվեցին նաև «Արևելքի միություն» օթյակի երևելի ղեմքերից Կայսերական բժշկական ընկերության անդամներ Ն. Ռուսինյանը, Մ. Խորասանյանը, Գ. Մոզյանը, Հ. Նուրյանը, ճարտարագետ Ն. Տատյանը: Որոշ ժամանակ անց այս օթյակում ազատ որմնադիր ձեռնադրվեցին բժիշկներ Մ. Ռափ(ֆ)աելյանը, Գ. Թագվորյանը, փաստաբաններ Ռ. Պուլկուրյանը, Գ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, դատավոր Տ. Յուսուֆյանը<sup>146</sup>:

«Սեր» օթյակում մասոնության շարքերը համալրած 24 բժիշկներից Միքայել Ռափ(ֆ)աելյանը (1833–1881) նույնպես կրթություն է ստացել Փարիզում, 1862 թ. ավարտել է Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1864 թ. որպես բժիշկ աշխատել է էտրիզու-

<sup>142</sup> Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 161:

<sup>143</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73–75, «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 77, ապրիլ, թիվ 6, էջ 128, 1955, հունիս, թիվ 6, էջ 90–94, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 166–167, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 91:

<sup>144</sup> Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 166:

<sup>145</sup> «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, Օ. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 92–93:

<sup>146</sup> «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 7, էջ 95–96, Ա. Պէյլէրեան. ԺԹ դարու հայկական «Սեր» օթյակի անդամ ազատ-որմնադիրներու ընդհանուր ցուցակ. — «Հայկազեան հայագիտական հանդես», 2003, էջ 423:

լե հիվանդանոցում: Հետագայում այս պաշտոնում միմյանց փոխարինելով՝ երեքական ամիս անվճար աշխատել են մասոններ Գ. Մոզյանը, Մ. Խորասանճյանը և Հ. Նուրիճյանը: 1868 թ. մարտին Մ. Ռափ(Փ)աելյանն ընտրվել է Կայսերական բժշկական ընկերություն անդամ, եղել է Աղքատախնամ ընկերության հիմնադիր անդամ, ընտրվել առաջին Հոգաբարձություն ատենապետ: 1879–1880 թթ. գլխավորել է Սբ. Փրկչի հիվանդանոցը<sup>147</sup>:

Հովսեփ Նուրիճյանը (1827–1898) տասը տարի Վիեննայի Մխիթարյանների մայրավանքում ուսանելուց հետո կրթությունը շարունակել է Ֆրանսիայում: 1863 թ. Փարիզում ստանալով բժշկագիտություն ղոկտորի աստիճան՝ վերադարձել է Կ. Պոլիս, համալրել «Սեր» օթյակի շարքերը և իր ազատ որմնադիր եղբայրների օրինակով աշխատել Սբ. Փրկչի հիվանդանոցում: «Ներհուն գրագետ» Հ. Նուրիճյանը 1867 թ. ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ, երեք տարի եղել այդ ընկերության նախագահը<sup>148</sup>:

Գևորգ Թագվորյանը (1820–?) պոլսահայ մի խումբ մասոն բժիշկների նման բժշկական բարձրագույն կրթություն է ստացել Փարիզում, 1855 թ. ավարտել Սորբոնի համալսարանը: 1859 թ. հուլիսից պաշտոններ է վարել Ետիգուլե Սբ. Փրկչի հիվանդանոցում<sup>149</sup>:

Հմուտ իրավաբանի համբավ վաստակած «Սեր» օթյակի անդամ Տիգրան Յուսուֆյանը Առևտրական ատյանի դատարանի անդամ էր և այդ պաշտոնում 1888 թ. ստացել է Mûtemayiz Sâniye աստիճան: 1901 թ. որպես Վճռաբեկ դատարանի անդամ ստացել է Ulây-I Sâni աստիճան<sup>150</sup>:

1867 թ. փետրվարի 7-ին «Սեր» օթյակին անդամագրվել է հայ բողոքական ազգապետ Ղազարոս Տավուտը, հունիսի 24-ին պալատական հայթայթիչ, գյուղատնտեսական բանկի խորհրդի նախագահ, ազգային մի շարք միությունների վարչության անդամ և բարեգործ Սիմոն Մաքսուտ բեյը<sup>151</sup>:

«Սեր» օթյակի կյանքում կարևոր իրադարձություն էր 1867 թ. մարտի 21-ին նշանավոր բանաստեղծ և թատերագիր XIX դարի «ամենէն ազգանուէր գործիչ»<sup>152</sup> Մկրտիչ Պեշիկթաշլյանի (1825–1868) մասոն ձեռնադրումը, որին օթյակի ղեկավարությունը որոշել էր «տալ յատկապես հանդիսավոր կերպարանք»<sup>153</sup>: Մասոնական արարողություններ կատարված ձեռնադրման ընթացքում հնչեց ավս-

<sup>147</sup> Բ. Քէչեան. նշվ. աշխ., 1888, էջ 165–166, 246, Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 215–216:

<sup>148</sup> Ա. Մեզպուրեան. նշվ. աշխ., էջ 229, 323–324:

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>150</sup> Հ. Մտեփանյան. նշվ. աշխ., էջ 319, 321, 328:

<sup>151</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 122–123, Օ. Դամոցյան. նշվ. աշխ., էջ 98–99, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 168:

<sup>152</sup> Վ. Զարգարեան. նշվ. աշխ., Դ հատոր, Գահիրէ, 1935, էջ 15–135:

<sup>153</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 123:

տրիացի նշանավոր երգահան Վ. Մոցարտի<sup>154</sup> մասոնական գաղափարախոսությունը գրված «Միություն երգը», որը սկսած XIX դարից կատարվում էր եվրոպական մասոնական օթյակներում: Օթյակի անդամներից մեկն առաջին անգամ կատարեց Մ. Պեչիկթաշլյանի «Տուր ձեռքդ ինձ, եղբայր եմք մեք» բանաստեղծության հիման վրա գրված երգը, որը հետագայում կատարում էին հայկական մասոնական բոլոր օթյակներում՝ որպես օրհներգ<sup>155</sup>: Երաժշտությունը, որն իր վրա կրում է ֆրանսիական «Մարսելիեզի» ազդեցությունը, գրել է իտալացի երգահան Կառլո Ֆոսթինին<sup>156</sup>: «Սեր» օթյակի անդամները նեցուկ եղան իրենց հիվանդ եղբայր Մ. Պեչիկթաշլյանին, ում ապաքինման համար որոշ գումար հավաքեցին, իսկ Ս. Հեքիմյանն իր «Սմբատ» ողբերգության առաջին ներկայացման ամբողջ հասույթը նվիրեց իր վաղեմի ընկերոջը<sup>157</sup>:

«Սեր» օթյակի սիրված դեմքերից մեկը դերասան և դրամատուրգ, պատմական մի քանի ողբերգությունների հեղինակ Ռոմանոս Աետեֆճյանն (1837–1905) էր<sup>158</sup>: Օթյակի հանձնարարությունը նա 1867 թ. փետրվարի 28-ին Մ. Նալբանդյանի մահվան տարելիցի կապակցությամբ Կ. Պոլսի «Արևելյան թատրոնում» հանդիսություն կազմակերպեց և ճառ արտասանեց: Այնուհետև բեմադրվեց նրա «Վարդան Մամիկոնյան փրկիչ հայրենյաց» ողբերգությունը՝ Տիգրան Չուխաշյանի երաժշտությամբ: Մ. Նալբանդյանի մահվան տասնամյակի կապակցությամբ Ռ. Աետեֆճյանի այս ողբերգությունը կրկին բեմադրվեց «Արևելյան թատրոնում»<sup>159</sup>:

1876 թ. «Սեր» օթյակին անդամագրվեց Փարիզում իրավական և քաղաքական փայլուն գիտելիքներ ստացած Սորբոնի համալսարանի շրջանավարտ Գաբրիել Նորատունկյանը<sup>160</sup> (1852–1936): Նա ժա-

<sup>154</sup> Վոլֆգանգ Ամադեյ Մոցարտը (1756–1791) հայտնի մասոն էր: 1784 թ. Վիեննայում նա համալրել էր երգահան Ֆրանց Յոզեֆ Հայդնի “Zur Wahren Eintracht” («Ճշմարիտ ներդաշնակություն») օթյակը: Մոցարտը մասոնական թեմաներով մի քանի ստեղծագործություններ է գրել, այդ թվում՝ նշանավոր «Կախարդական ֆլեյտա» օպերան (տե՛ս F. Smith. Broder Mozart of Vienna, London, 1975, pp. 37–75; J. Webb. Joseph Haydn, Freemason and Musician, London, 1982, pp. 83–106; Д. Ридли. Фри-масоны. М., 2007, с. 141–142, 148–150):

<sup>155</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 122–123, հունիս, թիվ 8, էջ 129–133, հուլիս, թիվ 9, էջ 117, 1955, հունիս, թիվ 6, էջ 95, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 9:

<sup>156</sup> Մ. Մոցարտյան. Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 183:

<sup>157</sup> «Հայրենիք», 1937, հունիս, թիվ 8, էջ 117–118:

<sup>158</sup> «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 130, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 102:

<sup>159</sup> Գ. Ստեփանյան. Նշվ. աշխ., էջ 300–302, 341:

<sup>160</sup> «Հայրենիք», 1855, հուլիս, թիվ 7, էջ 96, Ա. Պէյլէրեան. Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սեր» օթեակը ժԹ դարուն, էջ 170, Օ. Jamgocyan. Նշվ. աշխ., էջ 102:

մանակի ամենաազդեցիկ ազգային գործիչներից էր, պետական հայտնի պաշտոնյա և դիվանագետ, ով սկսած 1875 թ. դիվանագիտական տարբեր պաշտոններ է զբաղեցրել Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում: 1906 թ. նա նշանակվել է առևտրի և հանրային շինությունների նախարար, իսկ 1912–1913 թթ.՝ արտաքին գործերի նախարար: Պարզևատրվել է Օսմանյան կայսրության մեծագույն պարզևներով, եվրոպական մի շարք երկրների բազմաթիվ պատվանշաններով, ընտրվել է Ֆրանսիայի և Գերմանիայի ակադեմիաների անդամ: Գ. Նորատունկյանն ակտիվորեն զբաղվել է Կ.Պոլսի հայ համայնքի կյանքով, 1886 թ. ընտրվել է պատրիարքարանի խորհրդի անդամ և կրթական հանձնաժողովի նախագահ, իսկ 1894 թ.՝ Ազգային ժողովի ատենապետ: 1922–1923 թթ. Լոզանի դազաթնաժողովում Պողոս Նուբարից հետո գլխավորել է Ազգային պատվիրակությունը, հանդես եկել Թուրքիայում հայկական օջախ ստեղծելու պահանջով<sup>161</sup>: Գ. Նորատունկյանը բարձրապատիվ մասնակց էր, օթյակի վարպետ: Փարիզում դիվանագիտական գործունեություն իրականացնելու տարիներին նախաձեռնել էր Ֆրանսիական «La clement Amite» («Բարեգթություն - բարեկամություն») օթյակի հիմնադրումը: 1913 թ., մշտապես բնակվելով Փարիզում՝ ակտիվ գործունեություն էր իրականացնում ֆրանսիական մասունների հետ<sup>162</sup>:

«Սեր» օթյակի անդամներից Հաբեթիկ Նեվրուզյանը 1878 թ. Սան Ստեֆանոյի ուղևորական բանակցությունների ժամանակ իբրև թարգման ընկերակցեց Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին, ով հայություն պահանջը ներկայացրեց մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովին<sup>163</sup>:

30 տարիների ընթացքում «Սեր» օթյակին անդամագրված 162 հայերի մեջ գերակշռություն էին կազմում վաճառականները, դրամատերերը, սեղանավորներն ու ոսկերիչները: Նրանցից վաճառական Հարություն (Արթին) Նորատունկյանը 1876 թ. փետրվարին ընտրվեց օթյակի Գերհարգելի վարպետ<sup>164</sup>: Լեոն Փափագյանը օսմանյան գանձապետարանի տնօրենն էր<sup>165</sup>: Հովհաննես և Սերովբե Կապամաղյանները հայտնի էին բամբակի առևտրով ու բանկում ունեցած դրամագլխով, իսկ Մարտիկ Կապամաղյանը 1870-ական թվականներին օսմանյան ոսկերչական ընկերության ղեկավարն էր: Պողոս, Հարություն և Սարգիս Ֆենդեկլյանները գործարանատերեր էին, ձեռնարկություն ունեին անգամ Մանչեսթրում<sup>166</sup>: Վաճառա-

<sup>161</sup> Հ. Ստեֆանյան. նշվ. աշխ., էջ 264–265:

<sup>162</sup> Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 170, O. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 102:

<sup>163</sup> Մ. Օրմանեան. Ազգապատում, հ. Գ, մասն Բ, Պէյրութ, 1961, էջ 4341–4344, Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 170:

<sup>164</sup> Ա. Պէյլէրեան. նշվ. աշխ., էջ 170:

<sup>165</sup> «Հայրենիք», 1855, հուլիս, թիվ 7, էջ 96:

<sup>166</sup> O. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 104:

կան, Կայսերական պալատի մատակարար, «Սեր» օթյակի անդամ Արթին Ասլանյանը<sup>167</sup> 1909 թ. ծովեզրյա Սիրքեճի թաղում մի քանի սեղանավորների հետ բացեց առաջին հայկական անանուն առևտրական բանկը՝ «Օսմանյա թիջարէթ բանկասը»՝ Թագվոր Սուքիասյանի տնօրինությամբ: 1910 թ. սեպտեմբերին Ա. Ասլանյանը վաճառականներ Հեթում Սեթյանի, Արսեն Արսենյանի, բանկիրներ Կարապետ Թահաբուրբուրունյանի և Մկրտիչ Մանուկյանի հետ հիմնադրեցին «Օսմանյան առևտրական ընկերությունը»՝ տարբեր ապրանքների ներմուծման և արտահանման նպատակով<sup>168</sup>:

Պոլսահայ հարուստ դրամատեր Մկրտիչ Թաքաթլյանը մեծ պանդոկներ, ռեստորաններ և շքեղ հյուրանոցներ ուներ Բոսֆորի ափին<sup>169</sup>: Նրա ռեստորանում էին տեղի ունենում օսմանյան Մեջլիսի պատվո ճաշերությունները: 1906 թ. նա Բերայի Սբ. Երրորդություն եկեղեցուն նվիրեց դրան կից գտնվող իր երկու շենքերը<sup>170</sup>:

1908 թ. Կ. Պոլսում կազմավորված «La Turguie» («Թուրքիա») թիվ 1049 օթյակի հիմադիրներից էին Սերովբե Ազնավուրը և ատամնաբույժ Եղիա Հոշյանը, ով նույնպես մեծ ներդրում ունի մասնություն տարածման գործում: Նա 1909 թ. Կ. Պոլսում իտալացի մասոնների օգնությամբ հիմնեց իտալախոս «Calcedonia» («Քաղքեղոնիա») օթյակը: Ե. Հոշյանը միաժամանակ 1909 թ. հիմնված «Թուրքիայի Մեծ Արևելք» օթյակի Գերհարգելի Վարպետ էր, 33-րդ ամենաբարձր աստիճանի մասոն: Մասոնությունը մատուցած ծառայությունների համար Ե. Հոշյանին ծերություն օրերին ֆինանսապես աջակցում էին Փարիզի «France Armenie» օթյակը և Էդինբուրգի «Շոտլանդական մեծ օթյակը»<sup>171</sup>: Այս օթյակի բարձրապատիվ անդամներից էր Միքայել Նորատունկյանը, ով նույնպես Գերհարգելի Վարպետ էր, 33-րդ աստիճանի մասոն<sup>172</sup>:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հայ ազատ որմնադրությունը «կրկին փյունիկի նման հոգի առավ Թուրքիոյ մէջ»<sup>173</sup>: 1918 թ. դեկտեմբերի 4-ին Կ. Պոլսում հիմնվեց հայկական թվով չորրորդ «Հայաստան» թիվ 1185 մասոնական օթյակը: Դրա հիմնադիրները Կ. Պոլսում գործող թուրքական «La Turguie» («Թուրքիա») թիվ 1049 և անգլիական «Ashton Eagerton» օթյակի հայ անդամներն էին՝ թվով 10 հոգի: Օթյակի հիմնումը տեղի ունեցավ «Թուրքիա» թիվ 1049 օթյակի քարտուղար Արմենակ Ֆեներճյանի գրասենյակում: Ընտրվեց օթյակի ղեկավարություն հետևյալ կազմով. Գեր-

<sup>167</sup> «Հայրենիք», 1855, հուլիս, թիվ 7, էջ 96:

<sup>168</sup> Հ. Մ տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 166, 177:

<sup>169</sup> «Հայրենիք», 1855, հուլիս, թիվ 7, էջ 98, O. Jamgocyan. նշվ. աշխ., էջ 105:

<sup>170</sup> Հ. Մ տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 248, 253:

<sup>171</sup> «Հայրենիք», 1855, դեկտեմբեր, թիվ 12, էջ 75, «Կեանք եւ արուեստ», 1935, էջ 80:

<sup>172</sup> Ա. Պ է յ լ է ր ե ա ն. նշվ. աշխ., էջ 173:

<sup>173</sup> «Հայրենիք», 1855, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94:

Հարգելի Վարպետ՝ Թորգոմ Պոյաճյան, Մեծ Վերահսկող՝ Երվանդ Մսրյան, Կրտսեր Վերահսկող՝ Պողոս Ալան, քարտուղար՝ Արմենակ Ֆեներճյան, գանձապետ՝ Երվանդ Բեքմեզյան<sup>174</sup>:

1915 թ. հայոց եղեռնագործության ժամանակակիցներ ու ակա-  
նատեսներ հայ ազատ որմնադիրները քաջատեղյակ էին, որ հայութ-  
յան զանգվածային կոտորածների գլխավոր գաղափարախոսները և  
կազմակերպիչները Թալեաթի գլխավորած «Երիտասարդ Թուրքիա»  
և «Թուրքիայի Մեծ Արևելք» մասոնական օթյակների բարձրաստի-  
ճան անդամներն էին, որոնք «Միություն և առաջադիմություն»  
կուսակցության պարագլուխներից էին<sup>175</sup>: Մեծ եղեռնի զոհերից էին  
«Սապահ» թերթի խմբագիր Գերհարգելի Վարպետ Տիրան Բելեկյա-  
նը<sup>176</sup>, թուրքական օթյակների անդամ, Մեջլիսի պատգամավոր Գրի-  
գոր Զոհրապն ու դաշնակցական գործիչ Վարդգես Սերինգյուլյա-  
նը<sup>177</sup>: Ելնելով այս իրողությունից՝ «Հայաստան» օթյակի ղեկավար-  
ները 1919 թ. հունիսի 26-ին որոշեցին, որ թուրքական տարբեր օթ-  
յակներին անդամակցած առաջին երեք աստիճան ունեցող հայերը,  
ինչպես նաև «Թուրքիայի Մեծ Օթյակի» մասոնները չեն կարող ան-  
դամակցել իրենց օթյակին: «Հայաստան» օթյակի անդամներին ար-  
գելվում էր մասոնական որևէ գործողություն և հարաբերություն  
ունենալ թուրքական օթյակների հետ<sup>178</sup>: «Հայաստան» օթյակը հայ  
ազատ որմնադրության պատմության մեջ առաջին օթյակն էր, որն  
իր գործունեությունն իրականացնում էր հայոց եռագույն դրոշի  
ներքո<sup>179</sup>: Օթյակն ունեցել է վեց Գերհարգելի վարպետներ՝ Թորգոմ  
Պոյաճյան, Մինաս Մարտիրոսյան, Արմենակ Ֆեներճյան, Տիգրան  
Պարսամյան, Վահե Հինդլյան, Լևոն Ճգնավորյան<sup>180</sup>, ովքեր «խիստ  
փայլուն գործունեություն»<sup>181</sup> ծավալեցին:

1925 թ. «Հայաստան» օթյակի փակվելուց հետո Կ. Պոլսում այլևս  
հայկական նոր ազատ որմնադիրների որևէ ընկերություն չստեղծ-  
վեց: Չնայած դրան՝ պոլսահայ մասոնները խոր հետք թողեցին  
արևմտահայության հասարակական, քաղաքական, մշակութային և

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>175</sup> Տե՛ս H. C. Armstrong. Gray Wolf. The Life of Kemal Atatürk. New York, 1961, p. 20; В. Кряжин. Политические группировки Турции. Младотурки. — «Новый восток» (М.), 1923, № 1, с. 35; Թ. Բինոն. Հայերու բնաջնջումը. Գերմանական մեթոդ — թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 49, Բ. Մեվլանգադե. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ քաղաքականությունը, Բեյրութ, 1968:

<sup>176</sup> «Հայրենիք», 1855, դեկտեմբեր, թիվ 12, էջ 81:

<sup>177</sup> Զ. Կիրակոսյան. Երիթթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 323–324, գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 74:

<sup>178</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 96:

<sup>179</sup> Նույն տեղում, 97:

<sup>180</sup> Նույն տեղում, էջ 98:

<sup>181</sup> «Կեանք եւ արուեստ», 1935, էջ 78:

կրթական կյանքում: Եվրոպական լուսավորության, առաջընթացի և ազատամտության գաղափարներով ոգևորված հայ ազատ որմնադիրները «լուսավոր փարոսներ եղան Մերձաւոր Արեւելքի մահմետական ովկէանոսի մէջ»<sup>182</sup>: Պոլսահայ մասոններն ազգային սահմանադրական շարժման հիմնական գաղափարախոսները, կազմակերպիչներն ու գործիչներն էին, ովքեր պայքարում էին ազգային ստրկամտության, ներքին կյանքի կռիվների ու երկպառակության դեմ: Նրանց գործունեության միջոցներն ազնիվ էին, իսկ նպատակը՝ վսեմ, քանզի հիսուն տարուց ավելի ջանում էին անձնական կատարելագործման միջոցով վերափոխել արևմտահայությանը, նրանց մեջ սերմանել միության, եղբայրության, փոխադարձ օգնության, հանդուրժողականության, ազատության և հավասարության վեհ գաղափարները: Այս ուղղությամբ նրանց ջանքերն ու գործունեությունն անհետևանք չմնացին: Կ. Պոլսի ազատ որմնադիրների՝ տիեզերական եղբայրության, մարդկային համերաշխության, բարոյականության և համբերատարության գաղափարները շարունակում են կենսական մնալ նաև մեր օրերում՝ աշխարհասփյուռ հայության շրջանում: Դրա առհավատչյան աշխարհի տարբեր երկրներում և Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող հայկական մասոնական բազմաթիվ օթյակներն են:

ВИДНЫЕ ПРЕДСТАВИТЕЛИ КОНСТАНТИНОПОЛЬСКОГО  
АРМЯНСКОГО МАСОНСТВА  
(Вторая половина XIX в. — начало XX в.)

ФЕЛИКС МОВСИСЯН

Резюме

Масонство среди армян Константинополя получило широкое распространение во второй половине 1850-х годов, когда начался второй этап Танзимата, а основные масонские центры — Англия и Франция — предприняли политику «европеизации» Турции. Принятые в масонство константинопольские армяне, в основном, были молодыми представителями интеллигенции и европеизированного купечества, получившие образование в Европе, пропитанные либеральными идеями французской революции 1848 года и вдохновленные национальным духом. Распространение масонских идей среди константинопольских армян совпало с национальным конституционным движением западных армян, главные представители которого одновременно были и основателями первых масонских лож.

<sup>182</sup> «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93:

В конце 1850-х годов группа видных константинопольских армян была принята в англоязычную ложу «Oriental» («Восток») и франкоязычную ложу «L'Etoile du Bosphore» («Звезда Босфора»), а в 1862 году — в англоязычную ложу «Bulwar» («Булвер»). Известными представителями франкоязычной ложи «L'Union d'Orient» («Восточный Союз»), основанной в 1862 году, были высокопоставленные должностные лица Османской империи — Овсеп-паша Вардамян, Арутюн-паша Татян, Тиран-бей Аликсаян, а также редактор Карапет Ютучян, именитые врачи Степан-паша Арсланян, Микаэл-бей Хорасанчян, Наапет Русинян Церенц и другие. Многие представители интеллигенции и купечества вступили в основанную в Константинополе в 1866 году самую знаменитую армянскую ложу «Сер» («Любовь»). Великие Мастера этой ложи — Серовбе Азнавур, Пол Гамалик и Арутюн Норатунян — вели плодотворную деятельность. Егия Гошян был одним из основателей италиязычной ложи «Calcedonia» («Калцедония») и Великим Мастером ложи «Великий Восток Турции». Видными деятелями армянской ложи «Айастан» («Армения») № 1185, основанной в 1918 г., были Торгом Пояджян, Минас Мартиросян, Арменак Фенерджян и другие. Ряды этой ложи пополнило большое число западноармянских государственных, общественных деятелей, представителей интеллигенции и купечества, восемнадцать из которых были ее членами с момента основания.

PROMINENT FIGURES OF THE ARMENIAN MASONS  
OF CONSTANTINOPLE

(The second half of the XIX – the beginning of the XX cc.)

FELIX MOVSISYAN

Summary

The masonry was widely spread among the Armenians of Constantinople in the second half of the 1850s, just when the second stage of Tanzimat (Ottoman reform movement) began, England and France as basic masonic centres, tended to “europeanize” Turkey. The masonry-admitted Armenians of Constantinople were mainly European-educated young intellectuals and “europeanized” merchants, imbued with the liberation ideas of the 1848 French Revolution as well as inspired by national spirit. The dissemination of the masonic ideas among the Armenians of Constantinople coincided with the Western Armenian Constitutional Movement, the greatest figures of which were founders of the first masonic lodge at the same time.



At the end of 1850 a group of prominent Armenians of Constantinople were admitted by the anglophone lodge of “Oriental” and francophone lodge of “L’Etoile du Bosphore” (“The Star of Bosphor”) and by the anglophone lodge “Bulwer” in 1862. The most famous representatives of the francophone lodge “L’Union d’Orient” were high-ranking officials of the Ottoman Empire. Many representatives of intellectuals and merchantry–Hovsep Pasha Vardanyan, Haroutyun Pasha Talyan, Tiran Pasha Aliksanyan, editor Karapet Jutuchyan, famous doctors Stepan Pasha Arslanyan, Michael Bey Khorasanchyan, Nahapet Rusinyan, Tserents and others made up the staff of the most celebrated Armenian “Ser” (“Love”) masonic lodge founded in Constantinople in 1866. The Great Masters of this lodge Serovbe Aznavour, Paul Gamalik and Haroutyun Noratounkyan took an active part in the activities of the organization. Yeghia Hoshyan was one of the founders of “The Great East of Turkey” lodge. Torgom Poyachyan, Minas Martirosyan, Armenak Fenerchyan and some others were figures of the Armenian “Hayastan” (“Armenia”) №1185 lodge founded in Constantinople in 1918. A great number of Western Armenian public figures, intellectuals and merchants were also admitted by the same lodge, 18 of which were members from the moment of its foundation.

---

---

«ԿԱՐՄԻՐ ՄՈԾԱԿ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԱՅ  
ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ (1926–1927 թթ.)

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ

Խորհրդային Հայաստանում նախապատերազմյան տարիներին հրատարակված երգիծական պարբերականները կարճ կյանք են ունեցել, քանի որ նման հրատարակությունները չէին խրախուսվում: Սա կարելի է փաստել այդ շրջանում լույս տեսած երգիծական թերթերի հրատարակման տարեթվերով (1928–1953 թթ. Խորհրդային Հայաստանում երգիծական պարբերական չի հրատարակվել):

Այդպիսի կարճակյաց պարբերականների թվին է պատկանում «Կարմիր մոծակ» երգիծաթերթը, որի հիմնադիրը Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանում երգիծական պարբերականներ հրատարակելու բնագավառում գործուն մասնակցություն ցուցաբերած Էդուարդ Խոճիկն (Խոճիկյան) էր (1900–1961): Նա սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև ուսանել սկզբում Մոսկվայի Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում, ապա՝ Երևանի պետական համալսարանում (երկուսում էլ ուսումը կիսատ է թողել): 1924 թ. մարտին Երևանում նրա խմբագրությունը ընդամենը մեկ համար հրատարակվելուց հետո դադարեցվել էր «Զուռնա» երգիծաթերթի տպագրությունը:

1925 թ. ամռանը Մոսկվայից Երևան վերադառնալուց հետո է. Խոճիկը ձեռնամուխ եղավ կիսատ մնացած նախաձեռնության կյանքի կոչմանը՝ «Զուռնա» երգիծական թերթի հրատարակության վերսկսմանը: Խորհրդային գրաքննության ծալքերում խուսանավելու համար նա հաջողված քայլ կատարեց. դա պարբերականի անվանման «Զուռնա»-ից «Կարմիր մոծակ» անցումն էր<sup>1</sup>: Նպատակահամար դիտվեց վերցնել տարածված «կարմիր» հավելումը՝ իբրև խորհրդային կառավարության քաղաքականությանը հետևելու թափանցիկ ակնարկ:

1920-ականներին Խորհրդային Հայաստանում գործող կարգի համաձայն՝ նոր պարբերական հրատարակելու համար նախապես պետք էր ստանալ Հայգլավիտի թույլտվությունը: Վերջինս, իր հերթին, հարցը համաձայնեցնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի հետ:

«Կարմիր մոծակ»-ի անդրանիկ համարի նախնական տարբերակը պատրաստելուց հետո, համաձայն գործող կարգի, է. Խոճիկը 1926 թ. մարտի երկրորդ կեսին դիմեց Հայգլավիտին՝ երգիծական երկչաբաթաթերթ (խմբագիրներ՝ Ա. Երզնկյան և է. Խոճիկ) հրատարակելու

---

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան» (Երևան), 13. I. 1926:

խնդրով: Դիմումատու ընդգծել էր, որ պարբերականի նպատակն էր լինելու խորագանել Խորհրդային Հայաստանի իրականությունների քննարկման կողմերը (դրա ապացույցն էր նաև նորաստեղծ թերթի անվանումը)՝ «ամրապես կանգնած լինելով խորհրդային դիրքորոշման վրա»<sup>2</sup>: Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև իրական չեզոք պարբերականի հրատարակությունը թույլ չէր տրվի, իսկ ընդդիմադիր հրատարակության մասին խոսք անգամ չէր կարող լինել: «Կարմիր մոծակ»-ի առաջնային խնդիրներից էր հայտարարվում արտասահմանի հակախորհրդային ուժերին (առանձնապես դաշակցականներին, էսէռներին ու մենչևիկներին) «սուր ծաղրի» ենթարկելը:

Հավանություն տալով առաջարկին՝ 1926 թ. մարտի 19-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար և ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ Ա. Շահսուվարյանին ուղղված «միանգամայն գաղտնի» նշագրումով գրությունը Հայգլավիտի նախագահ Ս. Մելիքսեթյանը խնդրում էր քննարկել երգիծաթերթի հրատարակությունը թույլատրելու դիմումը և համապատասխան հրահանգ տալ<sup>3</sup>: Թեև փաստաթղթի վրա կատարած մակագրությունը Ա. Շահսուվարյանը համաձայնություն է տվել այն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղարության նիստում քննարկելուն, այդուհանդերձ 1926 թ. նիստերում նման հարց չի լսվել<sup>4</sup>: Հավանաբար, «Կարմիր մոծակ»-ի հրատարակությունը թույլ տալու խնդիրը նրա հավանությունը, տարածված կարգի համաձայն, քննարկվել է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի հերթական նիստում<sup>5</sup>:

1926 թ. ապրիլի 7-ին արդեն տպագրված էր ու Պետհրատի կենտրոնական էքսպեդիցիայի միջոցով, նաև թերթերի կրպակներում վաճառվում էր «Կարմիր մոծակ»-ի անդրանիկ համարը: Արդյունավետ «գովազդային արշավ»-ի որդեգրած սկզբունքին հավատարիմ՝ «Խորհրդային Հայաստան»-ում հրատարակված երգիծաթերթի ծանուցումներում ընդգծվում էր, որ պարբերականի տպաքանակը սահմանափակ լինելու պատճառով ուղացողը կզրկվի այն ձեռք բերելու հնարավորությունից: «Բաժանորդներն ապահով են, բոլորը ապահովագրվեցեք բաժանորդագրվելով»<sup>6</sup>, – կոչ էր արվում ընթերցողներին:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Փ. 1, ց. 6, գ. 265, թ. 30:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, գ. 12:

<sup>5</sup> Մեր փորձերը՝ ՀԱԱ Հայկոմկուսի Կենտկոմի ֆոնդում գտնելու այդ նիստի արձանագրությունը, հաջողությամբ չպսակվեց. մամուլի բաժնի կոլեգիայի նիստերի արձանագրությունները պարունակող արխիվային գործի մեջ բացակայում է 1927 թ. մարտի 8 – հունիսի 4-ի միջակայքում կայացած թիվ 5 նիստի արձանագրությունը (ՀԱԱ, Փ. 1, ց. 6, գ. 255): Այն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը հաստատել է ապրիլի 20-ին (նույն տեղում, գ. 12, թ. 29 շրջ.): Կարելի է ենթադրել, որ երգիծաթերթի հրատարակությունը հավանության է արժանացել մամուլի բաժնի կոլեգիայի նշյալ նիստում:

<sup>6</sup> «Խորհրդային Հայաստան», 7, 9. IV. 1926:

Թեև Հայգլավիտին ուղղված թերթի հրատարակությունը սկսելու թույլտվության դիմումում նշված է, որ այն լինելու է երկչաբաթաթերթ, երգիծաթերթի հինգ համարները տպագրվել են անկանոն պարբերականությամբ: «Կարմիր մոծակ»-ի առաջին և երկրորդ համարներում խմբագրակազմի անդամներ են նշվում Ա. Երզնկյանը և է. Խոճիկը (ինչպես նշված էր Հայգլավիտին ուղղված դիմումում): Երրորդ և չորրորդ համարներն իբրև պատասխանատու խմբագիր ստորագրել է է. Խոճիկը: Վերջին համարի դեպքում նշված է «խմբագրական կոլեգիա»<sup>7</sup>: Թերթի աշխատակիցների թվում էին՝ Էդուարդ Խոճիկը, Արամայիս Երզնկյանը («Մոծակ»), Դերենիկ Դեմիրճյանը, Աշոտ Աթանասյանը («Սալ-Ման»), Գուրգեն Մահարին («Գուրիս»), Մուշեղ Բագրատունին («Փալանդուզ Մկո»), Հակոբ Աղաբաբը («Ակոփ Բեժանիչ»), Հրաչյա Աճառյանը («Մանուկ աղա»), Պարույր Հարությունյանը («Լուռ-Կամսուս»), Սարգիս Մելիքսեթյանը, «Ն. Անունյան»-ը, «Վարդ Կամսար»-ը, Թիֆլիսից՝ «Ճանճունի»-ն և ուրիշներ, որոնք հիմնականում ներկայանում էին իրենց գրական ծածկանուններով<sup>8</sup>: Ենթադրելի է, որ թերթում տպագրված անստորագիր նյութերի մեծ մասի հեղինակը է. Խոճիկն է: Հրատարակված բոլոր հինգ համարների կազմերը ձևավորել է ճանաչված երգիծանկարիչ Միքայել Արուտչյանը (1897–1961), ով եղել է թերթի գեղարվեստական մասի վարիչը: Հենց նա ու Վահրամ Գայֆեճյանն են թերթում տպագրված հիմնական երգիծանկարների հեղինակները: Պարբերականի բոլոր համարները, գործող կարգի համաձայն, գրաքննություն են անցել և ստացել Հայգլավիտի թույլտվությունը: Այս մասին նշված է երգիծաթերթի վերջին էջերում: Թերթի 1926 թ. չորս համար (համապատասխանաբար 2000, 4000, 2500 և 3000 տպաքանակով) հրատարակվել է Պետհրատի երկրորդ տպարանում (Երևան), իսկ 1927 թ. թիվ 1-ը՝ Երևանի «Հերմես» մասնավոր հրատարակչության տպարանում (3000 տպաքանակով): Տարեկան բաժանորդագիրը ԽՍՀՄ տարածքում 6 ռ. էր, արտասահմանում՝ 6 դոլար<sup>9</sup>: Պարբերականի հատավաճառի գինը, ինչպես նշված է 1926 թ. մայիսի 1-ին արդեն վաճառքի հանված «Կարմիր մոծակ»-ի 2-րդ համարի լույսընծայումն ավտոդ հերթական գովազդներում, 20 կոպեկ էր՝ «Լավ ընդունելությունը և շատ տարածումն ու եղած պահանջը բավարարելու համար»<sup>10</sup>: Այն իր բաժանորդներն ուներ նաև Հայաստանից դուրս: Բաժանորդագրության վճարներն ուղարկվում էին Երևանի Պետհրատի կենտրոնական էքսպեդիցիայի միջոցով:

<sup>7</sup> «Կարմիր մոծակ» (Երևան), 1926, № 1, էջ 15, № 2, էջ 15, № 3, էջ 15, № 4, էջ 13, 1927, № 1, էջ 6:

<sup>8</sup> Ծածկանունների հիմնական մասի վերծանումը տե՛ս Բ. Մ. Հովակիմյան. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

<sup>9</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 2:

<sup>10</sup> «Խորհրդային Հայաստան», 27, 29. IV, 1. V. 1926:

Սկզբում թերթը նույնիսկ մշտական խմբագրատուն չուներ: «Սալ-Մանը» «Թե ինչպես գտա «Մոծակ»-ի խմբագրատունը» ֆեյլիտոնում պատկերավոր գրում է, որ թերթի խմբագրությունը է. խոնկիկի թղթապանակն էր. «Հա՛ խոնկիկը, հա՛ նրա պորտֆեյլը, հա՛ «Մոծակ»-ի խմբագրատունը. դրանք հոմանիչներ են»<sup>11</sup>: Արդեն մայիսի վերջ – հունիսի սկզբին «Աբովյան 22» հասցեում սկսեց գործել թերթի մշտական խմբագրատունը: Մայիսի 29-ով թվագրվող երգիծաթերթի ֆինանսական փաստաթղթերից մեկում նշված է, որ 25 ո. գումարով խմբագրության պատվերով ցուցանակ էր պատրաստվել<sup>12</sup>:

Երգիծաթերթի առաջին համարը սկսվում է Մ. Արուստյանի «Կարմիր մոծակի պարադը» երգիծանկարով, իսկ առաջնորդողում է. խոնկիկն ընթերցողին իրագեկում է՝ թերթը թեև «մոծակ» է, սակայն նման չէ այլ «մոծակներին», որոնք զբաղված են միայն «հիվանդություններ տարածելով»: Այս մոծակը «կարմիր» է և ինքն էլ է խայթում ու առաջացնում դողերոցք, սակայն իր հիմնական նպատակն է դրանով բուժել մյուս մոծակների խայթոցներից վարակվածներին<sup>13</sup>: Այսպիսի մուտքը հատուկ էր խորհրդային շատ երգիծաթերթերի<sup>14</sup>: Ինչպես թերթի անվանման մեջ կարմիր գույնն օգտագործելը, այնպես էլ իր ուղղվածության վերաբերյալ ընթերցողի հետ երկխոսելու հիմնական մեթոդը խորհրդային երկրներում լույս տեսնող բազմաթիվ երգիծաթերթերի կողմից օգտագործվող նույնանման հնարքների գրեթե ամբողջական կրկնությունն է:

Հետաքրքիր են թերթի հայտարարությունները: Երգիծանքի միջոցով գովազդը «Կարմիր մոծակ»-ի հաջողություններից է: Ասվածի ցայտուն օրինակ է բաժանորդների թիվն ավելացնելու մտահոգությունամբ տպագրված հայտարարությունը, որն իրականում թերթը գնելու կոչ է: Համոզված հայտարարելով, որ բոլոր գրագետ մարդիկ արդեն բաժանորդագրված են «Կարմիր մոծակ»-ին՝ թերթը կարեկցում է թեկուզ այն մեկ «դժբախտին», ով պատահաբար «մոռացել է» բաժանորդագրվել, սակայն այդ մեկի համար էլ ինքը պատրաստ է կրկնելու հայտարարությունը<sup>15</sup>: Ապա թերթի տիրաժի վաճառքով մտահոգված՝ «Բոլորին, բոլորին, բոլորին» իր «առաջարկությունն» է ներկայացնում թերթից «ձրիաբար օգտվելը» կանխելու և սահմանափակելու նպատակով. «Մի օրինակ «Կարմիր մոծակ»-ը մի մար-

<sup>11</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 2, էջ 6:

<sup>12</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), է. խոնկիկի ֆ., գ. 258, թ. 8:

<sup>13</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 2:

<sup>14</sup> Ի դեպ, գրեթե նույն ձևակերպմանն ենք հանդիպում 1921 թ. ապրիլ – հունիսին Մաթևոս Դարբինյանի խմբագրությանը թիֆլիսում հրատարակված «Կարմիր աբլոր» երգիծաթերթի անդրանիկ համարի առաջնորդողում («Կարմիր աբլոր», 10. IV. 1921, № 1, էջ 1):

<sup>15</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 2:

դու, շատ-շատ՝ մի ընտանիքի»<sup>16</sup>: Հետաքրքրական է, որ պարբերականի խմբագրակազմը հետևողական էր ընտրած ռազմավարությունից հարցում, երբ ավելի ուշ «սպառնում էր»։ «Զրիաբար թերթից օգտվողների ազգանունն ուղարկել խմբագրությունս»<sup>17</sup>: Երգիծաթերթի հայտարարություններից մեկում էլ գոհունակության շեշտադրմամբ նշվում է. «Սենսացիա. Գորիս – մի մարդ իր ոտքով գնաց խանութ և «Կարմիր մոծակ» գնեց»<sup>18</sup>:

Հայտարարություններում թերթի «խայթոցին» են ենթարկվել թատրոնը, կինոն, բժշկությունը, գրականությունը և շատ այլ ասպարեզներ: Հետաքրքիր մի փաստ. թերթում տպագրված հայտարարություններից մեկում ծաղրի էր ենթարկվում 1926 թ. Երևանի համալսարանի հրատարակչության լույս ընծայած անվանի լեզվաբան Հր. Աճառյանի «Հայերենի արմատական բառարան»-ի առաջին հատորը՝ բնորոշվելով իբրև այբբենական կարգով դասավորված ստերի հավաքածու<sup>19</sup>: Եվ, որ ամենահետաքրքիրն է, այդ ստղերի հեղինակն ինքն է՝ Հր. Աճառյանը: Ինչպես արդեն նշվել է, նա երգիծաթերթում հանդես էր գալիս «Մանուկ աղա» ծածկանունով: Ասվածի հաստատումն է նաև այն, որ երգիծաթերթի առաջին և երկրորդ համարներից հոնորար ստացած հեղինակների շարքում թվարկվում է նաև Հր. Աճառյանը<sup>20</sup>:

Թերթի ծաղրի հիմնական թիրախը խորհրդային հասարակության արատավոր երևույթներն էին, որոնք արմատախիլ անելուն ուղղված գործիքներից պետք է լինեին «Կարմիր մոծակ»-ը: Դա էր նաև այն հիմնական կետերից մեկը, որը, իբրև իրական նպատակ, առերևույթ հուշակել էր խորհրդային իշխանությունը և կարծես արձանագրել որպես թերթի խայթող ազատության ակնհայտ սահման:

Կատարելով խոստումը՝ երգիծաթերթն իր էջերում արտացոլել է խորհրդային հասարակության տարբեր շերտերի հավաքական կերպարները՝ դիպուկ ծաղրանկարների, մականունների, խոսակցական բառապաշարի տիպիկ ամբողջության մեջ: Այսպես, ընթերցողի հետ զրուցում էին թերթի «մոտ աշխատակից» հիշատակվող Դ. Դեմիրճյանի կերտած «Գրանիտ ընկերություն» երգիծական ստեղծագործության հերոսները, որոնցից մեկը հենց հեղինակն էր, մյուսը՝ նրա ընկեր «Մուկուզը», «Չղային բարեկամը», ով բոլոր աշխատավայրերից «կրճատվում էր», «տատանվող ինտելիգենտը», «որը որ ըոպեին ինչ մտքի վրա կանգնած է լինում, այդ ըոպեին ճիշտ այդ միտքն է պաշտպանում», «Միշտ Ոսկեբերանը», ով «դժվար էր խոսում և խոսելիս էլ ոչինչ չէր հասկացվում» և «Ոսկեբերան» էր անվանվում, ո-

<sup>16</sup> Նույն տեղում, № 2, էջ 2: Նաև՝ «Խորհրդային Հայաստան», 1. V. 1926:

<sup>17</sup> «Խորհրդային Հայաստան», 18. VII. 1926:

<sup>18</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 3, էջ 15:

<sup>19</sup> Նույն տեղում, № 1, էջ 14:

<sup>20</sup> ԳԱԹ, է. Խոնդիրի ֆ., գ. 258, թ. 1-2:

րովհետև ... նրա բոլոր ատամները ոսկուց էին<sup>21</sup>: Երգիծանքի են արժանացել Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի անդամները, կարծես կարևորվում էր միայն նրանց քանակական բազմությունը: Սուր ծաղրի են ենթարկվել կոոպերացիան, մասնավոր առևտուրը, անազնիվ հոգևորականները: Այդ տարիներին Խորհրդային Հայաստանում մեծ թափ հավաքող հակակրոնական պայքարը, բնականաբար, դրսևորվել է նաև «Կարմիր մոծակ»-ի էջերում:

Ինչպես սպասելի է, պարբերականի ծաղրի առաջնային թիրախներից էր Հայաստանի Հանրապետության օրոք կառավարող կուսակցությունը՝ Հ. Յ. Դաշնակցությունն ու նրա աչքի ընկնող գործիչները: Հայկական երգիծական գրականությունն ուսումնասիրած խորհրդահայ գրականագետը հատուկ ընդգծում է, որ «Բուն Հայաստանում երգիծանքի մտրակն ուղղված էր երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի ներքին և արտաքին թշնամիների դեմ»<sup>22</sup>: Իսկ այս ձևակերպման տակ առաջին հերթին նկատի էր առնվում ՀՅԴ-ն: 1920-ականներին Խորհրդային Հայաստանում հրատարակված պարբերականների «պարտականություններից» էր նախկին իշխանություններին, կառավարող կուսակցությանը և, ընդհանրապես, «հին իրականությունը» քննադատելն ու սուր ծաղրի ենթարկելը, Դաշնակցության դեմ տարվող գաղափարական, քաղաքական և քարոզչական պայքարում սեփական ներդրումն ունենալը: Ավետիս Ահարոնյանը և նրա գործունեությունը Ֆրանսիայում, Ալեքսանդր Խատիսյանը, Ռուբեն Դարբինյանն անողոք ծաղրի են ենթարկվել ինչպես «Կարմիր մոծակ»-ի երգիծանկարներում, այնպես էլ՝ հոդվածներում ու հայտարարություններում<sup>23</sup>:

Հայ երգիծանքի նահապետ Հակոբ Պարոնյանը թերթի կողմից արժանացել է մեծ ակնածանքի ու գնահատանքի: «Կարմիր մոծակի» 4-րդ համարն ամբողջությամբ նվիրված է Պարոնյանի մահվան 35-ամյակին: Համարի առաջին էջին մեծ երգիծաբանի Մ. Արուտչյանի հեղինակած նկարն է: Վերջին էջում նույնպես նա է՝ այս անգամ արդեն իր ամենահայտնի «Մեծապատիվ մուրացկաններ»-ի կերպարներով շրջապատված: Համարում տեղ են գտել Հ. Պարոնյանի կենսագրությունը և ստեղծագործություններից հատվածներ՝ համեմատված «մոծակական» մեկնաբանություններով<sup>24</sup>: Խմբագրության նախաձեռնությամբ 1926 թ. դեկտեմբերի 24–31-ին Երևանում անցկացվել է «Պարոնյանական շաբաթ», որի ժամանակ տեղի են ունեցել երգիծաբանին նվիրված գրական մի շարք երեկոներ, ընթերցումներ, դասախոսություններ<sup>25</sup>:

<sup>21</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 6:

<sup>22</sup> Ս. Բողոսյան. Սովետահայ երգիծանքը քսանական թվականներին, Երևան, 1963, էջ 8:

<sup>23</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 1, էջ 3, № 2, էջ 12, № 3, էջ 11, 15 և այլն:

<sup>24</sup> Նույն տեղում, № 4, էջ 1–16:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 14:

Երգիծաթերթի համարների ուսումնասիրությունից հստակ երևում է, որ այն ուշադիր էր ինչպես խորհրդային իրականությունը բնորոշ բացասական երևույթների նկատմամբ, այնպես էլ տիպիկ հայ իրականության իրադարձություններն էր ներկայացնում ու մեկնաբանում «խայթելով» երևացող և աներևույթ անհարթ անկյունները:

Առկա փաստաթղթերը վկայում են, որ «Կարմիր մոծակ»-ի խմբագրակազմը երբեմն գրաքննությունը շրջանցելու փորձեր է կատարել: Այսպես, 1926 թ. հունիսի 17-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ազդեցության ու պրոպագանդայի բաժնին ուղղված «միանգամայն դադտնի» նշագրումով գեկուցագրում Հայգլավլիտի նախագահ Ս. Մելիքսեթյանը, իր հատուկ ընդգծմամբ, «թյուրիմացություններից կանխորեն խուսափելու համար» տեղեկացնում էր, որ «Կարմիր մոծակ»-ի 3-րդ համարի նկարների մակագրությունները տպագրվել են առանց իրենց իմացության: Նաև շեշտում էր, որ թերթի տվյալ համարի առաջին նկարի բովանդակությունը և կից մակագրությունը չեն համապատասխանում նախապես խմբագրության իրազեկած բանավոր հայտարարությանը, «որով իմաստը բոլորովին այլ պիտի լիներ, քան այն, որ տպված է»<sup>26</sup>:

Այս առթիվ պետք է ընդգծել, որ թերթի տվյալ համարի առաջին էջում Մ. Արուտչյանի հեղինակած «Դեպի կուրորտները» երգիծանկարում պատկերված է, թե ինչպես են հիվանդ, սովալլուկ տեսքով, ցնցոտիներով, կմախքների նմանվող հիվանդները երկաթուղային կայարանում ճանապարհում հանգստի մեկնող առողջ, պարարտ տեսքով, գեղեցիկ հագնված տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Նկարի տակ մակագրված էր. ««Հիվանդներին» «առողջները» ճանապարհ են գցում», իսկ բազմակետերից հետո կարդում ենք. «Մենք աշխարհքի խորթ զավակն ենք, մեզ փայ չկա կուրորտից» ձևակերպումը<sup>27</sup>: Այն կարծես ցույց է տալիս խորհրդային Հայաստանի իրականության մամուլում տպագրելու համար, մեղմ ասած, ոչ նպատակահարմար կողմը, ինչը, փաստորեն, հակասում էր պետության կողմից քարոզվող սոցիալական արդարության, հավասարության գաղափարներին: Վերոհիշյալ գեկուցագրում նաև տեղեկացվում էր, որ նման անթույլատրելի արարքի համար Հայգլավլիտի կողմից հատուկ զգուշացում էր ստացել ոչ միայն երգիծաթերթի խմբագրակազմը, այլև Պետհրատի երկրորդ տպարանի վարիչը (վերջինն անուշադրության էր մատնել մինչ այդ Հայգլավլիտի կողմից տպարանների վարիչներին արված կարգադրությունը՝ առանց վարչության թույլտվության որևէ պարբերական չտպագրել)<sup>28</sup>:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 68:

<sup>27</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 3, էջ 1: Այս տողերն Ավ. Իսահակյանի «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ ու ցավ...» սկսվածքով բանաստեղծության (1898 թ.) հայտնի քառատողի շնչով էր կառուցված (Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973, էջ 88):

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 68:



Այսպիսի փաստերը, թերթի փաստացի խմբագիր ու հրատարակիչ է. *Խոճիկի ըմբոստ կեցվածքը*, նաև երգիծաթերթի էջերում տեղ գտնող սուր քննադատական նյութերն ու երգիծապատկերները չէին կարող անհետևանք մնալ. Խորհրդային Հայաստանում հետզհետե թափ հավաքող մամուլի պետական-կուսակցական վերահսկողությունն ու զրաքննությունը չէր պատրաստվում երկար հանդուրժել «Կարմիր մոծակ»-ի «խայթոցները»: Առանձնապես ընդունելի չէր թերթի պատասխանատու խմբագրի պաշտոնում է. Խոճիկի գործունեությունը:

Երգիծաթերթի ու իր գլխին կուտակվող սև ամպերի դեմ պայքարելով է. Խոճիկը ծրագրեր էր կազմում ոչ միայն 1927 թ. պարբերականի հրատարակությունը շարունակելու, այլև գործունեության ու յորտն հականորեն ընդլայնելու մասին:

«Կարմիր մոծակ»-ի 3-րդ համարում տպագրված հայտարարությունը ծանուցում է, որ ծրագրվում էր 1926–1927 թթ. թատերական շրջանում Երևանում հիմնել «Կարմիր մոծակ» սատիրայի թատրոն: Այդ առթիվ թերթի խմբագրությունը երգիծական բովանդակություններ պիեսների մրցույթ էր հայտարարել, որի մրցանակակիրները դրամական պարգևների էին արժանանալու<sup>29</sup>: Թատրոնը, համաձայն նախնական ծրագրի, նախատեսում էր մեկ ամսվա ընթացքում բեմադրել 12, վեց ամսում՝ 72 ներկայացում<sup>30</sup>: Նշենք, որ նման թատրոնի կազմակերպման փաստը հաստատող կոնկրետ վկայություն մեզ հայտնի չէ:

Թերթի 3-րդ համարից ընթերցողը նաև իրագեկվում էր, որ խմբագրությունը նախատեսում է «մոտիկ ապագայում» հանրամատչելի երգիծական գրքույկներով հրատարակել հայ և օտար երգիծաբանների (Հակոբ Պարոնյան, Երվանդ Օտյան, Դերենիկ Դեմիրճյան, Լեո Կամսար, Վահան Թոթովենց, Փալանդուզ Մկո, Էդուարդ Խոճիկ, Էդգար Պո, Մարկ Տվեն, Օ. Հենրի, Միխայիլ Զոլջենկո և ուրիշներ) ստեղծագործությունները<sup>31</sup>: Իսկ թերթի 4-րդ համարի նախավերջին էջում նշվում էր, որ 1927 թ. երգիծաթերթը «Երգիծաբանական գրադարան» մատենաշարով 24 գրքույկ է տպագրելու, ուր տեղ էին գտնելու վերը թվարկված և այլ գրողների երգիծական ստեղծագործություններ: Այսինքն, պարբերականի յուրաքանչյուր համարին գուգահեռ նախատեսվում էր հրատարակել մատենաշարի մեկ գրքույկ: Բացի այդ, ծրագրվում էր 1927 թ. վերջին հրատարակել 1928 թ. երգիծական օրացույց, որը տրվելու էր թերթի և մատենաշարի 1927 թ. տարեկան բաժանորդներին<sup>32</sup>:

<sup>29</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 3, էջ 10: Նաև՝ «Խորհրդային Հայաստան», 6. VII. 1926:

<sup>30</sup> ԳԱԹ, է. Խոճիկի ֆ., գ. 258, թ. 4:

<sup>31</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 3, էջ 14:

<sup>32</sup> Նույն տեղում, № 4, էջ 15: Նաև՝ «Խորհրդային Հայաստան», 21. XII. 1926:

Հայգլավլիտի վերը հիշատակված զգուշացումը, բնականաբար, անհետևանք չէր կարող մնալ. 1926 թ. հուլիսի կեսերին թերթի 3-րդ համարի հրատարակությունից<sup>33</sup> հետո հերթական 4-րդ համարի տպագրությունն անորոշ ժամանակով հետաձգվեց: Այս ընթացքում «Կարմիր մոծակ»-ի հավատարիմ ընթերցողները նամակներով գնդակոծում էին խմբագրությունը: Երկարատև լուսությունից հետո է. Խոճիկը լավատեսական նոտաներով հայտարարություն տեղադրեց «Խորհրդային Հայաստան»-ի 1926 թ. սեպտեմբերյան համարներից մեկում ուղղված երգիծաթերթի ընթերցողներին, բաժանորդներին ու գործակալներին, որտեղ պարզաբանվում էր, որ «մի շարք անհարթությունների» պատճառով «Կարմիր մոծակ»-ի հերթական համարն ուշանում է, ապա վստահաբար պնդում էր՝ մոտ ապագայում պարբերականի հրատարակությունը վերջնականապես կկանոնավորվի: Հայտարարության՝ հաջորդ տողերից ակնառու է թերթի ֆինանսական ծանր կացությունը, քանի որ գործակալներից խնդրվում էր հայտնել, «թե տեղերում քանի օրինակ «Կարմիր մոծակ» է տարածվում»<sup>34</sup>: Եվ միայն նոյեմբերի սկզբներին ընթերցողը տեղեկացավ, որ ամսվա վերջին հրատարակվելու է երգիծաթերթի երկար սպասված 4-րդ համարը (այն ամբողջությամբ նվիրված էր լինելու Հ. Պարոնյանի մահվան 35-ամյակին)<sup>35</sup>:

Զրկված լինելով պետական աջակցությունից՝ «Կարմիր մոծակ»-ը գտնվում էր նյութական ծանր դրություն մեջ, քանի որ պարբերականի եկամուտը գոյանում էր համարների վաճառքից, գովազդային հայտարարություններից, մասնակիրորեն նաև խմբագրության կազմակերպած միջոցառումներից: Հրատարակիչներն ազատ դրամագլուխ չունեին: Վերը նշվածով է պայմանավորված այն հանգամանքը, որ երգիծաթերթի անդրանիկ համարի հրատարակությունից հետո խմբագրակազմը հնարավորություն չի ունեցել անմիջապես վճարել հեղինակների հոնորարները: Միայն 2-րդ համարի տպագրությունից ու մասնակի վաճառքից հետո են թերթի առաջին երկու համարների հեղինակները հունիսի 5–10-ի միջակայքում ստացել իրենց հասանելի գումարները: 1-ին համարի հոնորարի գումարը եղել է 177 ռ., երկրորդինը՝ 198 ռ.: Ամենամեծ հոնորարը ստացել է նկարիչ Մ. Արուտչյանը (1-ին համարից ստացել է 89, 2-ից՝ 109 ռ.)<sup>36</sup>: Սա պատահական չէր. Մ. Արուտչյանի երգիծանկարները «Կարմիր մոծակ»-ի հաջողության գրավականներից էր:

Թերթի հրատարակության ծախսերը հոգալու նպատակով 1926 թ. վերջին խմբագրություն կողմից «Մամուլ» անվանումով մասնավոր հրատարակչություն բացելու փորձ կատարվեց, որը նախատեսում էր հրատարակել «Կարմիր մոծակ» երգիծաթերթը, վերջինի հավելված «Երգիծաբանական գրադարան»-ը, նաև՝ մանկական պատկերա-

<sup>33</sup> «Խորհրդային Հայաստան», 18. VII. 1926:

<sup>34</sup> Նույն տեղում, 4. IX. 1926:

<sup>35</sup> Նույն տեղում, 3, 4, 7. XI. 1926:

<sup>36</sup> ԳԱԹ, է. Խոճիկի ֆ., գ. 258, թ. 1–2:

զարդ գրքեր, պիեսներ ու գրական-քննադատական աշխատություններ: Այս փորձը հաջողություն չունեցավ:

«Կարմիր մոծակը», ըստ երևույթին, շատ էր ջանացել խորհրդային իրականության արատների իր փնտրտուքում և, ի թիվս պախարակելի երևույթների, տեսել էր նաև խորհրդային հասարակության աչքին սպիտակ ներկայացվող, սև կողմերը: Դրանով է բացատրվում, որ 1926 թ. դեկտեմբերի 21-ին կայացած Հայգլավլիտի կոլեգիայի նիստում երգիծաթերթի 1927 թ. վերահրատարակման դիմումի քննարկումը սպասվածից շատ ավելի խնդրահարույց ստացվեց՝ դառնալով նրա ընթացքն ընդհատելու նախապայմաններից: Որոշման մեջ տեղ էր գտել նաև պարբերականի համար դատավճիռ դրույթը, թե «Կարմիր մոծակ»-ի 1926 թ. հրատարակության ընթացքում «խորհրդային երգիծական թերթերին պատշաճ կերպով» խմբագրական աշխատանքը չի իրականացվել: Ուստի՝ թերթի խմբագրությանը հրահանգվեց 1927 թ. սկզբից խմբագրական «ուժեղացնել»՝ 2-ի փոխարեն դարձնելով 3 հոգի: Ընդգծվում էր, որ խմբագրական կոլեգիայի անդամ Ա. Երզնկյանն աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով (հանրապետության հողագործության ժողկոմն էր) խմբագրական աշխատանքին ակտիվորեն չի մասնակցում: Ավելին, թերթի պատասխանատու խմբագրի պաշտոնի համար է. Խոճիկի թեկնածուությունը հարմար չէր դիտվում: Այս մասին Հայգլավլիտը դեկտեմբերի 24-ին տեղեկացրեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնին՝ համապատասխան հրահանգ ստանալու համար, որը պետք է կիրառվեր թերթի 1927 թ. վերահրատարակության ժամանակ<sup>37</sup>:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի 1927 թ. հունվարի 10-ի նիստում քննարկվեց «Կարմիր մոծակ»-ի վերահրատարակման հարցը: Ընդունված որոշման մեջ Հայաստանում երգիծական պարբերականի հրատարակությունը «նպատակահարմար և անհրաժեշտ» էր համարվում պայմանով, որ հրատարակիչը համաձայնի խմբագրական-հրատարակչական կոլեգիա կազմել հետևյալ գործիչների մասնակցությամբ՝ Արամայիս Երզնկյան (պատասխանատու խմբագիր), Էդուարդ Խոճիկ, Սուսիկ Ասլիբեկյան (Հայկական հրաձգային դիվիզիայի քաղաքական բաժնի «Կարմիր զինվոր» թերթի պատասխանատու խմբագիր), Սարգիս Մելիքսեթյան և Աշոտ Հախումյան (Լենինականի գավառապետարան)<sup>38</sup>: Ինչպես տեսնում ենք, փորձ էր կատարվում է. Խոճիկին երկրորդ պլան մղել և, թերթի խմբագրականում նոր անդամներ ընդգրկելով, թուլացնել նրա ազդեցությունը: Նկատենք, որ է. Խոճիկը «Կարմիր մոծակ»-ի համար ավելին էր, քան սոսկ խմբագիրը կամ հրատարակիչը: Նրա գերմարդկային ջանքերի շնորհիվ էր պատրաստվում ու տպագրվում երգիծաթերթը: Ուստի՝ Խոճիկին խմբագրի պաշտոնից ազատելը կարելի է նույնացնել պարբերականի հրատարակությունը կասեցնելու հետ:

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 265, թ. 127:

<sup>38</sup> Նույն տեղում, ց. 7, գ. 261, թ. 1:

Ահա այսպիսի ողբասականից հետո 1927 թ. հունվարի կեսերին լույս տեսավ «Կարմիր մոծակ»-ի նոր համարը, որը դատապարտված էր վերջինը լինելու: Այն սովորականից ավելի փոքրածավալ էր (ընդամենը 7 էջ), հրատարակութայն էր ստորագրված «խմբագրական կոլեգիայի» կողմից: Ի տարբերություն նախորդ համարների, որոնք հրատարակվել էին Պետհրատի երկրորդ տպարանում, այս մեկը տպագրվել էր «Հերմես» մասնավոր հրատարակչությունում: Բացաված է, որ Պետհրատը խուսափել էր «ոչ ցանկալի» պարբերականը տպագրել:

«Կարմիր մոծակ» պարբերականի և նրա «Երգիծաբանական գրադարան» մատենաշարի բաժանորդները պարբերականի համարի հետ ստացան նաև մատենաշարի № 1 գրքուկը (տպագրված կրկին «Հերմես»-ի կողմից)<sup>39</sup>: Դատելով գրքուկին՝ Հայգլավիտի թույլտվության համարից (897բ) այն (ի տարբերություն թերթի) տպագրության էր թույլատրվել 1926 թ. դեկտեմբերի վերջին: Գրքուկում տեղ էր գտել Հ. Պարոնյանի 5 ստեղծագործություն («Պատիկ քիթ և ֆրանսերեն լեզու», «Ապրիլ մեկ», «Անհատական կարծիք», «Բարև և մնաք բարյավ», «Մարդ հանձնարարելու նոր եղանակ մը»)՝<sup>40</sup>:

Իշխանությունների որոշ ներկայացուցիչների կողմից «Կարմիր մոծակ»-ի միանշանակ չընդունվելը, պարբերականի հրատարակության կողմնակիցների և հակառակորդների միջև ընթացող աներևույթ ու բացահայտ պայքարն արտացոլված է նոր համարի կազմին Մ. Արուտչյանի հեղինակած «Երկրորդ տարվա դռանը» երգիծանկարում և կից բավական խոսուն մակագրությունում. «Մի խումբ. – Վայ ես սրա ... Տո բա ասում էին էլ չպիտի ... Չէ, սրանից ազատում չունենք ... Ճղենք ... Բայց ու՞ր ...: Ուրիշ խումբ. – Կեցցե՛ն՛ե՛, «Կարմիր մոծակ»-ը, խայթն է սրում 1927 թվի համար ... Մեր բանը աջա, ով կողի հաչա ... Ուրեմն ախպեր սա կա ու կմնա հավիտյանս, հավիտենից ... Ամենն»<sup>41</sup>: Հաջորդ օրերի իրադարձությունները ցույց տվեցին, որ խմբագրակազմը ժամանակից շուտ էր ոգևորվել, քանի որ «Մոծակն» իզուր էր «խայթը» սրում. սա նրա վերջին «խայթոցն» էր:

Հրատարակվելուց հետո «Կարմիր մոծակ»-ի 1927 թ. անդրանիկ համարն անմիջապես համապատասխան «ուշագրության» արժանացավ: Հունվարի 19-ին կայացած Հայգլավիտի կոլեգիայի նիստում, որին մասնակցում էին Լուսավորության ժողովմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության (քաղլուսգլխվար) նախագահ Կարո Ղազարյանը, Հայգլավիտի նախագահ Սարգիս Մելիքսեթյանը, գրաքննիչ Վաղարշակ Այվազյանը, Հայաստանի արտակարգ հանձնաժողովի քաղաքական վերահսկիչ Արամ Գևորգյանը, Կ. Ղազարյանի ներկայացմամբ քննարկվեց երգիծաթերթի նոր հա-

<sup>39</sup> «Կարմիր մոծակ», 1927, № 1, էջ 4:

<sup>40</sup> Հ. Պարոնյան. Պատիկ քիթ և ֆրանսերեն լեզու. – «Կարմիր մոծակ»-ի «Երգիծաբանական գրադարան», № 1, Երևան, 1927:

<sup>41</sup> «Կարմիր մոծակ», 1927, № 1, էջ 1:

մարը թույլատրելու հարցը: Կոլեգիայի որոշմամբ «Կարմիր մոծակ»-ի 1927 թ. առաջին համարի տպագրությունը թույլ տալու, երգիծաթերթի առնչությամբ Հայգլավիտի կոլեգիայի որոշումները (հավանաբար, նկատի է առնվում 1926 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը) խախտելու համար Ս. Մելիքսեթյանը նկատողության արժանացավ: Իբրև հիմնավորում՝ շեշտվում էր, որ պարբերականի «հրատարակման համար համապատասխան կարգադրություն չի եղել»<sup>42</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ս. Մելիքսեթյանի «մեղքն» այն էր եղել, որ Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի հունվարի 10-ի որոշումից անմիջապես հետո թույլատրել էր «Կարմիր մոծակ»-ի հրատարակությունը (այն ունի թույլտվություն՝ № 13բ)՝ չսպասելով Կենտկոմի քարտուղարության կողմից Մամուլի բաժնի կոլեգիայի որոշման հաստատմանը: Նա, հավանաբար, ենթադրել է, որ Մամուլի բաժնի կոլեգիայի որոշումը նույնությամբ կհաստատվի (ինչպես սովորաբար լինում էր): Սակայն այս անգամ այդպես չեղավ. հունվարի 24-ին տեղի ունեցած Կենտկոմի քարտուղարության նիստում որոշվեց. ««Կարմիր մոծակ» երգիծական ամսագրի հրատարակման հարցը թողնել բաց»<sup>43</sup>:

Փաստորեն, Հայգլավիտի նախագահը երգիծաթերթի հրատարակությունը թույլ տալու հարցում իսկապես «չտապել էր», կարող էր որոշիչ դեր ունենալ պարբերականի ու նրա խմբագրի նկատմամբ Ս. Մելիքսեթյանի անհատական վերաբերմունքը: Ինչպես արդեն հիշատակվել է, նա թերթի հոդվածագիրներից էր. «Ֆոտո-գիծ» խորագրի ներքո թերթի 2-րդ համարում հրատարակվել է նրա «Ճամփուլ նոթեր» խորագրով համեմատաբար ընդարձակ ակնարկը<sup>44</sup>: Լինելով զգուշավոր անձ՝ «Կարմիր մոծակ»-ի 3-րդ համարի երգիծանկարների դեպքում խմբագրության՝ գրաքննությունը շրջանցելու փորձից հետո նա երգիծաթերթում այլևս հոդված չի տպագրել՝ չնայած թերթի 4-րդ համարում հիշատակվում է մշտական աշխատակից երգիծաբանների թվում<sup>45</sup>: Ս. Մելիքսեթյանը և է. Խոսրոպեյանը ընկերական ջերմ հարաբերություններ են ունեցել, ինչի վկայությունն է Խոսրոպեյանի մահվան տասնամյակի առթիվ նրա հրատարակած հուշերը<sup>46</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ս. Մելիքսեթյանը կողմնակից է եղել «Կարմիր մոծակ»-ի տպագրության շարունակմանը, ինչի ապացույցն է մշտական աշխատակիցների թվում նրա ընդգրկված լինելը, առավել ևս, պարբերականի վերջին համարի հրատարակության թույլտվության փաստը: Նա այդ կարգադրությունն արել էր՝ առանց Հայգլավիտի կոլեգիայում հարցը կրկին քննարկելու և, հավանաբար, հետա-

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 266, թ. 12: Այս արձանագրությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժնին է ուղարկվել հունվարի 25-ին (նույն տեղում, թ. 11):

<sup>43</sup> Նույն տեղում, գ. 33, թ. 9:

<sup>44</sup> «Կարմիր մոծակ», 1926, № 2, էջ 10–12:

<sup>45</sup> Նույն տեղում, № 4, էջ 15:

<sup>46</sup> «Ջահակիր» (Կահիրե), 12. VIII. 1971:

գայում արդարացել, թե կոլեգիայի նիստերի միջակայքում է նման որոշում կայացրել և առաջիկա նիստին սպասելու ժամանակ չի եղել: Կարծում ենք, սրանով է պայմանավորված, որ կոլեգիայի 1927 թ. հունվարի 19-ի նիստում որոշվել է հաճախակի՝ շաբաթը մեկ անգամ նիստեր գումարել, իսկ անդամներին հանձնարարվել՝ «լուրջ հարցերը անցկացնել կոլեգիայով»<sup>47</sup>: Հասկանալի է, այս վերջին դրույթն ուղղված էր Ս. Մելիքսեթյանին ու նրա «սեպարատ գործունեությունը» կանխելուն, քանի որ Հայգլավլիտի նախագահը համարձակություն էր ունեցել շեղվել հանրապետությունում գոյություն ունեցող խաղի կանոններից:

Հայգլավլիտի կոլեգիայի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունում որոշումները դատավճռի նշանակություն ունեցան «Կարմիր մոծակ»-ի համար. երգիծաթերթի հրատարակությունն ընդհատվեց: Փաստորեն, ՀՍԽՀ և ՀԿ(բ)Կ ղեկավարները հակված էին նույնիսկ մասնակի զիջման գնալ թերթի հրատարակիչներին (ինչպիսին կլինեին Հայգլավլիտի կոլեգիայի 1926 թ. դեկտեմբերի 21-ի և Կենտկոմի մամուլի բաժնի կոլեգիայի 1927 թ. հունվարի 10-ի որոշումների կենսագործումը)՝ պարբերականի հետագա հրատարակման նպատակով:

«Կարմիր մոծակ»-ի հրատարակությունը դադարեցվեց այն ժամանակ, երբ արդեն ճանաչում էր ձեռք բերել, իր շուրջը խմբել ժամանակի տաղանդավոր երգիծաբաններին, իսկ համարները տարածվում էին ոչ միայն խորհրդային Հայաստանում, այլև՝ նրա սահմաններից դուրս (պարբերականի համարներ են պահվում նույնիսկ Փարիզի Նուբարյան գրադարանում): Հանրապետությունից դուրս պարբերականը գործակալներ ուներ Թիֆլիսում, Բաթումում, Սուխումում, Թելավում, Ախալցխայում, Ստեփանակերտում, Բաքվում, Ռոստովում, Մայկոպում, Գրոգնիում, Սոչիում, Կրասնոդարում, Լենինգրադում, նաև՝ երկաթուղային տարբեր կայարաններում<sup>48</sup>: Այն խորհրդային Միության սահմաններում հրատարակվող միակ հայալեզու երգիծաթերթն էր: «Կարմիր մոծակ»-ից ընդհատումից հետո խորհրդային Հայաստանում ավելի քան քառորդ դար երգիծական պարբերական չի հրատարակվել: Միայն Ի. Ստալինի մահվանը հաջորդող մասնակի ազատության շրջանում ԽՍԿԿ Կենտկոմի թույլտվությամբ 1954 թ. Երևանում սկսվեց հրատարակվել հանրահայտ «Ողնի»-ն:

САТИРИЧЕСКАЯ ГАЗЕТА «КАРМИР МОЦАК» И СОВЕТСКАЯ  
АРМЯНСКАЯ ЦЕНЗУРА (1926 – 1927 гг.)

АМО СУКИАСЯН, НАРИНЕ ЕРАНОСЯН

<sup>47</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 266, թ. 12:

<sup>48</sup> «Կարմիր մոծակ», 1927, № 1, էջ 7:

## Резюме

Одной из неотделимых и важных составляющих армянской периодической печати советского периода является сатирическая пресса. Самая известная сатирическая газета Советской Армении – «Кармир моцак» («Красный комар») издавалась в 1926–1927 гг. Она интересна как с содержательной, так и структурной точек зрения, богата остроумными карикатурами, рекламными объявлениями, фельетонами и юмористическими стихами. «Кармир моцак» смело критиковала отрицательные стороны советской действительности. Газета пыталась обходить цензуру, что и стало для нее роковым. После выхода в свет всего лишь пяти номеров усиливающаяся в Советской Армении цензура в январе 1927 года прекратила издание газеты.

## THE SATIRICAL PAPER “KARMIR MOTSAK” AND THE SOVIET ARMENIAN CENSORSHIP (1926–1927)

HAMO SUKIASYAN, NARINE YERANOSYAN

## Summary

Satirical papers were indispensable and important components of the Armenian periodical press of the Soviet era. The most popular satirical paper “Karmir Motsak” (“Red Mosquito”) was published in Soviet Armenia in 1926–1927. It is interesting in terms of structure and content and is full of caricatures, advertisements and announcements distinguished with the ingenuity and satire, felietones and satirical poems. “Karmir Motsak” boldly mocked the negative aspects of the Soviet reality making an attempt to avoid the censorship, which became fatal for the newspaper. In January 1927, after having published only five issues, the printing of the journal was interrupted by the censorship growing stronger in Soviet Armenia.

---

---

XIX ԴԱՐԱՎԵՐՁԻ ՀԱՅ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

XIX դ. 80–90-ական թվականները բեկումնային են Ռուսական կայսրության ծայրամասային շրջանների, այդ թվում՝ Արևելյան Հայաստանի կյանքում: Սոցիալական ու քաղաքական զարգացումները փոխում են հասարակական հարաբերությունների բնույթը, ավանդական բարքերի հիմքերն աստիճանաբար խարխլվում են, կյանքի ու առօրյա կենցաղի բոլոր ոլորտներում սկսում են գործել հասարակական բարոյականության նոր չափանիշներ: Այս ամենը չէր կարող իր հետքը չթողնել հոգևոր միջավայրի վրա: Սոցիալական ու ազգային-քաղաքական կյանքի՝ միմյանց հաջորդող իրադարձություններն արագ արձագանք են գտնում հասարակական մտքի բոլոր բնագավառներում, գաղափարական հին հոսանքները նոր ժամանակների ոգուն համապատասխան վերանայումներ են կատարում, ձևավորվում են նորերը, աշխուժանում է մամուլը՝ ընդառաջ գնալով տեղեկատվության՝ օրեցօր աճող հասարակական պահանջին: Պատմական այդ գործընթացներն աչքի էին ընկնում ներքին բարդություններով ու հակասություններով, որոնք աննկատ չէին մնում գրական մտավորականության միջավայրում: 1893 թ. Շիրվանզադեն «Լրագրային դիտողություններ» հոդվածում նկատում է. «Ռուսահայերի օրեցօր զարգացող հասարակական կյանքը առաջին պլանի վրա էր քաշում հարցեր, որոնք պահանջում էին իրենց մանրամասն ուսումնասիրությունն ու լուրջ մշակումը մամուլի էջերում»<sup>1</sup>: Արևելահայության խնդիրներին ավելանում էր նաև արևմտահայության մղձավանջային կացությունը սուլթան Համիդի բռնատիրության պայմաններում, որը համազգային մտահոգությունների տեղիք էր տալիս հայ մտավորականության շրջանում:

Ժամանակի հայ հասարակական գլխավոր հոսանքներից (ազգային-պահպանողական և առաջադիմական) յուրաքանչյուրն ազգային-հասարակական առաջընթացի նոր ծրագրեր էր առաջադրում՝ օգտագործելով զանգվածային տեղեկատվության բոլոր հնարավորություններն ու միջոցները: Հասարակական միտքն առաջնորդողի դեր են ստանձնում «Մշակ», «Մուրճ», «Արձագանք», «Աղբյուր», «Նոր-Դար» և այլ պարբերականներ, որոնցից յուրաքանչյուրն իր դիրքորոշումն ուներ նորածագ խնդիրների վերաբերյալ, բայց համընդհանուր շահագրգռությունը նույնն էր՝ ետ չմնալ ժամանակից:

---

<sup>1</sup> Շիրվանզադե. Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1962, էջ 132:



Մամուլի մշակութային քաղաքականության մեջ առաջնային տեղերից մեկը, անշուշտ, պետք է զբաղեցնեն ժամանակի գրականությունը ու քննադատությունը աղերսովոլ խնդիրները<sup>2</sup>: Մտահոգիչ իրողություն էր, սակայն, որ հոգևոր մշակույթը, մասնավորապես, գրականությունը հայտնվել էին հասարակական հոսանքների գաղափարական տարածայնությունների կիզակետում, և հաճախ այդ կաղապարներից ձերբազատվելը դժվարագույն խնդիր էր դառնում ստեղծագործողի համար: Դա ժամանակի մտավոր շարժման բուն էությունը որոշող հանգամանք էր, որ տասնամյակներ անց պիտի արձանագրեին գրականության պատմաբանները: «Գրականությունը ենթարկված մնաց հասարակական հոսանքների և սրանց սպասարկող մամուլի ազդեցությունը, – գրում է Ս. Սարինյանը: – Որքան էլ գրականությունը ճեղքում էր հասարակական հոսանքների գաղափարական կապանքները, որքան էլ գրողներն իրենց արվեստը դուրս էին բերում մամուլի այս կամ այն ուղղության նեղ սահմաններից, այսուհանդերձ, գրական կյանքը, գրական շարժումը գրողների աշխարհայացքային կողմնորոշումներն ու հասարակական հայեցողությունը մի ինչ-որ չափով ենթակա էր մնում այն մտայնությունը, ինչ պարտադրում էր տվյալ հասարակական հոսանքի ու մամուլի ուղղությունը»<sup>3</sup>:

Եթե գրականության համար այնքան էլ հեշտ չէր ձերբազատվել գաղափարական կաշկանդումներից, շատ ավելի դժվար պիտի լիներ դա գրաքննադատության համար: Կուսակցական կամ, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, «թայֆայական» կողմնակալությունը քննադատությունը գրեթե զրկել էր գրական արժեքները ըստ էության գնահատելու հնարավորությունից, մասնավորապես եթե նկատի ունենանք, որ այդ բնագավառը շատ կողմերով կայացման և ինքնագիտակցման ընթացքի մեջ էր: Իրենց կոչման ու պատասխանատվության գիտակցությունն ունեցող գրողները, իհարկե, գնում էին իրենց ճանապարհով՝ հավատարիմ արվեստի ազատության անձեռնմխելի օրենքին: «Գրականությունը բարձր է ամեն մի կուսակցությունից ..., – գրում է Շիրվանզադեն: – Կուսակցական այն նեղ, սահմանափակ և անհամբերող ուղղությունը, որ տիրում էր մեր մամուլի մեջ, միանգամայն թշնամի է գուտ գրականությանը»<sup>4</sup>: Ինչ էլ լիներ, սակայն, քննադատության մեջ արմատացած այդ բարքերը իրենց հոգեբանական ազդեցությունը չէին կարող չթողնել գրողների

<sup>2</sup> XIX դ. 90-ական թվականների գրաքննադատության պատմական-հասարակական հիմքերի մանրակրկիտ քննությունը, ժամանակի հայտնի դեմքերի քննադատական հայացքների վերլուծությունը տրվել է «Հայ քննադատության պատմություն» աշխատության 2-րդ հատորի առաջին մասում (Երևան, 1998, էջ 5–183), «Հայ նոր գրականության պատմություն» աշխատության 4-րդ հատորի «Ներածություն» բաժնում (Երևան, 1972, էջ 5–123), Հ. Թամրազյանի «Հայ քննադատություն» Գ գրքում, (Երևան, 1992):

<sup>3</sup> Հայ քննադատության պատմություն, հ. 2, էջ 6:

<sup>4</sup> Շիրվանզադե. նշվ. աշխ., էջ 132:

վրա, ինչի առիթով բազմիցս խոստովանել են Հովհ. Թումանյանը և ուրիշներ:

Լեոն Թումանյանի մասին հուշերում բավական բացորոշ և հանգամանալից է ներկայացնում ստեղծված միջնորդը՝ ընդգծելով, որ Թիֆլիսում հրատարակվող 5–6 պարբերականներից յուրաքանչյուրը, մեկուսացած մյուսներից, իր շուրջն էր հավաքում կողմնակիցների որոշակի խմբեր: Նրանց միավորողը, սակայն, միայն գաղափարի կամ համոզմունքի ընդհանրությունը չէր: «Այն ժամանակ գոյություն ունեին միայն երկու խոշոր ուղղություններ՝ առաջադիմական և պահպանողական, — բացատրում է հուշագիրը: — Նրանց մեջ գոյություն ունեւր անհաշտ թշնամություն, որ արգելում էր որևէ մերձեցում նույնիսկ մասնավոր անձնական հարաբերությունների հողի վրա: Այդ դեռ հասկանալի էր: Տարօրինակն այն էր, որ սառնություն, առանձնացում, մինչև իսկ սաստիկ թշնամություն նկատվում էր նաև միևնույն ուղղության պատկանող շրջանների մեջ»<sup>5</sup>:

Լեոն ստեղծված «Թայֆայական» միջնորդի պատճառը համարում է այն, որ ժամանակի գրական ասպարեզի միակ տերը դարձել էր հրապարակախոսությունը, որին «դեռ շարունակում էր ստրկացած մնալ» «բուն գրականությունը»: «Բանաստեղծը, վիպագրողը, թատերագրողը, քննադատը չէին կարող անկախ ու ազատ ստեղծագործական գոյություն պահպանել՝ առանց լրագրողի կամ օրագրողի հովանավորության, առանց որևէ լրագրի կամ ամսագրի թևի տակ մտնելու»<sup>6</sup>: Այդ մասին կա նաև Թումանյանի վկայությունը 1892 թ. Ա. Աբովյանին գրած նամակներից մեկում. «Որ փողոցովն անց ես կենում, հարցնում են՝ «ընչական ես»: Ջարմանալի է. այս մարդիկը կարծում են, թե ոչ թե թերթն է պատկանում մարդկանց, այլ մարդիկ թերթին, այնպես, ինչպես անասունները արածացնողին: Բան է, թե որ քեզ ցույց տվիր մի հարցում համակիր մի որևէ թերթի, էգուց այդ թերթի խմբագիրը մի հիմար բան արավ — քեզ վրա են ծիծաղում. ի՞նչ լողիկա. կարծես ես խմբագրի կամքը լինեմ կամ գիտությունը»<sup>7</sup>: Գրողը և նրա գործը գնահատվում էին ոչ թե ըստ իրենց իրական արժանիքների, այլ՝ թե ո՞ր հոսանքի համակիրն է, ո՞ր խմբակցությունն է պատկանում կամ ի՞նչ թերթի է աշխատակցում:

Ինչպես նկատեցինք, գեղարվեստական գրականությունը, այնուամենայնիվ, ինչ-որ կերպ կարողանում էր շրջանցել կուսակցական-գաղափարական նեղմտությունը: Քննադատության համար այդ հնարավորությունը գրեթե չկար. այս կամ այն պարբերականին աշխատակցող քննադատը, նույնիսկ եթե չէր էլ պատկանում նրա դավանած ուղղությանը, հաճախ ստիպված էր ընդունել խմբագրություն պայմանները: Այսպիսով՝ ստեղծագործությունն «արժեքավոր-

<sup>5</sup> Լ. Ե. Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1985, էջ 420:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 420–421:

<sup>7</sup> Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 9, Երևան, 1997, էջ 102:

վում» էր ոչ թե ըստ գեղագիտության հաստատված օրենքների, այլ ըստ քննադատի սուբյեկտիվ կամքի:

Ստեղծված պայմաններում գեղարվեստական գրականությունը, կարելի է ասել, հայտնվել էր հրապարակախոսության ուստայնում. հայտնի գրողները հարկադրված էին զբաղվել նաև հրապարակախոսությամբ՝ ինչ-որ չափով կանխելու համար գրականության անվան տակ հրամցվող գրությունների հոսքը: Ընթերցող հասարակությունը կարգում էր առավելապես անճաշակ, գեղարվեստական արժեքից զուրկ գործեր (անհամեմատ քիչ էին անվանի գրողների այն ստեղծագործությունները, որոնք մաս-մաս տպագրվել են այս կամ այն պարբերականում), կենցաղային և հասարակական ճղճիմ պատմություններ: Անհրաժեշտ էր լուրջ հրապարակախոսությամբ բարձրացնել տպագիր խոսքի արժեքը, որ կարող էր կրթել մի ողջ սերունդ: Տպագրված նյութերի բովանդակային, գեղարվեստական ու գաղափարական կողմերի ներդաշնակ գոյակցությամբ միայն կարելի էր հասնել ցանկալի նպատակին: Պատահական չէ, որ Շիրվանզադեն ոգևորված ողջունում էր գրական հանդեսների ծնունդը. «Այդ հանդեսները շատ գործ ունեն կատարելու, և առաջին նրանց գործը պիտի լինի՝ հոգալ հայի գրականական ճաշակի կրթության մասին, աշխատել բացատրել հային, թե ինչ է իսկական գրականություն ասած բանը: Իսկ դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է միանգամայն ընդմիջտ երես դարձնել այն սխալ և վնասակար ուղղությունից, որին հետևում են մեր պարբերական օրգանները գրականության վերաբերմամբ»<sup>8</sup>:

Մտավորականության նոր սերունդը ոչ միայն բարձրաձայնում է գրականության «ազատագրման» և առողջ քննադատության անհրաժեշտության մասին՝ տարբեր առիթներով անդրադառնալով այս և գրականությանն ու քննադատությանը վերաբերող այլ խնդիրների, այլև ձեռնարկում է գործնական քայլեր՝ առաջադիր հարցերի շուտափուլ լուծման համար:

Ըստ հուլիսյան՝ 1890-ական թվականները հայ մշակութային կյանքում ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում տեղի է ունենում գրականության և քննադատության «տարանջատում» հասարակական-քաղաքական հոսանքներից: Իհարկե, որոշակի ժամանակ էր պահանջվում լիարժեք կերպով ձերբազատվելու վերջիններիս ազդեցությունից:

Գիտակցական իմաստավորմամբ հայ կյանքում գրականությունն աստիճանաբար ձևավորվում է իբրև հոգևոր կեցության առանձին բաղադրիչ՝ ինքնաբերաբար ենթադրելով մեկ այլ անկախ միավորի՝ քննադատության գոյությունը: Անցումային ինքնորոշումների գրեթե նույն ճանապարհն է սկսում անցնել քննադատությունը, որ փորձում է գատորոշել իր ուսումնասիրության տիրույթը, առարկան, խնդիրները, յուրացնել գրականագիտության կարևորագույն

<sup>8</sup> Շիրվանզադե. նշվ. աշխ., էջ 156:

դրույթները, արվեստի տարբեր ճյուղերին վերաբերող այս կամ այն հարցը մեկնաբանել տեսական որոշակի հիմնավորմամբ ու փաստարկումներով: Հասկանալի է՝ գրականությունն իր զարգացման ընթացքում քննադատության առջև դնում է նորանոր խնդիրներ, հարկադրում դիմել նոր մոտեցումների, հարցադրումների, մեթոդների: Ընդառաջելով այս պահանջներին՝ քննադատությունն աստիճանաբար ձեռք է բերում ժանրային բազմազանություն, գրական երկերի գեղագիտական գնահատման նոր չափանիշներ, գրական դպրոցների, ուղղությունների, հոսանքների բավարար իմացություն, մասնագիտական բառապաշար և այլն: Առանձին հակում է նկատվում դեպի գեղագիտության՝ իբրև տեսական իմացության ինքնուրույն բնագավառի ուսումնասիրությունը: Նորովի ընթերցվում և վերլուծվում են համաշխարհային մեծության փիլիսոփաների, գեղագետների, գրականության տեսաբանների աշխատությունները: Գրական հանդեսների էջերում թարգմանաբար բերվում ու մեկնաբանվում են Արիստոտելի, Գ. Լեսսինգի, Գ. Հեգելի, Հ. Տենի, Վ. Բեխինսկու և այլոց գեղագիտական հայացքները, դրանց աղերսներով ուղիներ մատնանշվում հայ գրականության զարգացման, դրա հետ կապված տարբեր խնդիրների լուծման համար:

Սակայն դեռ առկա էր մնում քննադատության գործառույթային այն կարևոր հարցը, թե անջատվելով հրապարակախոսությունից ու դիդակտիկայից և ինքնորոշվելով՝ քննադատությունը պետք է շարունակի՞ նաև հասարակական գաղափարախոսի գործառույթը, թե՞ զբաղվի միայն գեղագիտական խնդիրներով: «Հայ քննադատական միտքը զգաստ գտնվեց հասարակական դերի իր կոչումը ըմբռնելու հարցում, — գրում է Ս. Սարինյանը: — «Արվեստը արվեստի համար» սկզբունքը չգայթակղեց նրան, և նա գտավ իրեն այն ուղիներում, ուր հայ գրականությունը պիտի հանձնառեք հասարակական կյանքը հուզող հարցերին պատասխան որոնելու խնդիրը: Գիտական քննադատության այն պահանջը, որ ամբողջ սրունքամբ առաջադրում էին ժամանակի գրագետները, ենթադրում էր էսթետիկական գիտության սկզբունքների հիմնավոր յուրացում, հայ գրականության գեղագիտական օրինաչափությունների տեսական և պատմական իմաստավորում, գեղարվեստական ձևի ու բովանդակության հարցերի միասնական, հարակցված վերլուծություն»<sup>9</sup>: Այս բացատրությունը լիովին արտացոլում է ստեղծված իրավիճակը: Ժամանակն իր պահանջն էր թելադրում ինչպես գրականությանը, այնպես էլ քննադատությանը. երկուսն էլ, ձգտելով գեղեցիկի հավերժական կատարելատիպին, միաժամանակ չէին կարող չկրել նաև ժողովրդի պատմական ճակատագրի բեռը, գեղագետ լինելով հանդերձ, դատապարտված էին նաև գաղափարախոս լինելու:

<sup>9</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, էջ 52:

Սակայն որքան էլ տեսականորեն և գաղափարապես որոշակի դրական տեղաշարժեր նկատվեին այդ բնագավառում<sup>10</sup>, միևնույնն է, հասարակական ու գեղագիտական առաքելության խոր գիտակցությունը գինված քննադատության գոյավորման համար պահանջվում էր ժամանակ: «Մեր գրականության ոչ մի թերություն այնքան զգալի չէ, – գրում է Շիրվանզադեն, – որչափ զգալի է անաչառ ու անկեղծ քննադատության կատարյալ բացակայությունը: Մենք չենք խոսում կատարյալ քննադատության մասին, որ յուր ուժով ղեկավարում է գրականությունը, մտքեր և գաղափարներ է ներշնչում նորան, շատ անգամ նոր ուղղություն տալիս կամ, կարճ ասած, յուր ետևից է տանում գրականությունը: Այդ տեսակ քննադատություն, պարզ է, որ մենք չունենք և գուցե երկար ժամանակ ևս չպիտի ունենանք ... Մեր խոսքը այն հասարակ, առօրյա մատենախոսության մասին է, որ առանց կրքի պարզում է երևան եկող գրքերի նշանակությունը ընթերցողների համար, մատնացույց է անում նորարարական գործունեությունները և պակասությունները. մի խոսքով՝ քայլ առ քայլ ընթանում է ժամանակակից գրականության հետ»<sup>11</sup>:

Շիրվանզադեն, Իհարկե, չի ընդունում այն կարծիքը, թե քննադատությունը գրականության «ղեկավարն է»: Կարևորելով քննադատության դերը հատկապես գրական երկերի բովանդակության բացահայտման գործում՝ գրողը պնդում է, որ «կրիտիկան» պետք է առաջնորդվի հոսանքների ներազդեցությունից զերծ, միայն վերլուծության օբյեկտիվ չափանիշներով: Արձանագրելով իրական վիճակը՝ նա նաև որոշակի պահանջներ է ներկայացնում քննադատությանը՝ օբյեկտիվություն գրական արժեքները գնահատելիս, քննության գիտական սկզբունք, որ կարող է առաջնորդող դեր կատարել նաև գեղարվեստական մտածողության առաջընթացի համար:

Արդեն զգացվում էր, որ քննադատության դերի ու նշանակության մասին ձևավորվում է կարծիքների մի ուշագրավ հավաքածու, որում կարևորագույնն այն հիմնական դրույթն է, թե քննադատությունն անհրաժեշտ բաղադրիչ է գրականության զարգացման, արվեստի մեջ գեղեցիկը, արժեքավորը, ճշմարիտը բացահայտելու համար: Հավասարարժեք էին դիտվում գրվածքի թե՛ գեղագիտական, թե՛ բովանդակային կողմերը, որոնց քննությանն էլ կոչված էր քննադատությունը:

Կարևորվում է նաև քննադատության՝ տարերային ու չհամակարգված վիճակից կանոնակարգված օբյեկտիվ չափորոշիչների բերելու ձգտումը: «Գրականությունն էլ դեռ չի քննադատված, դեռ

<sup>10</sup> Ր ա Ֆ Ֆ ի. Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը».— Ր ա Ֆ Ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 387–455, Լ ե ո. Կրիտիկան մեր մամուլի մեջ.— «Մշակ» (Թիֆլիս), 30. VIII., 31. VIII. 1883, Գ. Ե ն գ ի բ ա ը յ ա ն. Հ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» մի քննադատության առիթով.— «Արձագանք» (Թիֆլիս), 1887, № 45, էջ 708–711, Շ ի ը վ ա ն գ ա դ ե. Ի մ կրիտիկոսներին.— Շ ի ը վ ա ն գ ա դ ե. նշվ. աշխ., էջ 114–125 և այլն:

<sup>11</sup> Շ ի ը վ ա ն գ ա դ ե. նշվ. աշխ., էջ 46:

չի գնահատված, – գրում է Թումանյանը իր հոդվածներից մեկում, – չի որոշված, թե սա ով է, ինչ արժեք ունի, կամ մյուսն ինչու է մեծ հռչակված: Հետևաբար, երբ ամեն բան՝ և կյանքի պատմությունը, և գրական քննադատությունը դեռ չունենք, ամեն մարդ ինչ որ խոսի, մանավանդ թուուցիկ մի հայացքով, միշտ կլինի պակասավոր և ամեն մեկի հայացքն ու կարծիքը տարբեր կլինի մյուսից»<sup>12</sup>: Պատահական է, որ տարբեր առիթներով իրենց քննադատներին պատասխանելիս Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Վ. Փափագյանն ընդգծում էին փաստերի սուբյեկտիվ, կամայական ու ինքնաբավ մեկնաբանությունները, վերլուծությունների մեթոդական հիմքերի բացակայությունը:

Վերևում ասվածը չի նշանակում, անշուշտ, թե հրապարակում առհասարակ չկային բանիմաց, իրենց կոչումը խորապես գիտակցող քննադատներ. խոսքը վերաբերում էր միայն քննադատության ընդհանուր վիճակին: Կային առանձին անհատներ, որոնք ոչ միայն լրջորեն ու անկողմնակալ էին նվիրված իրենց գործին, այլև նրբորեն զգում էին գրական կյանքի զարկերակը, տեսնում էին պահի գերխնդիրն ու պատշաճ արձագանքում դրան:

90-ական թվականների քննադատության առանցքային հարցերից է դառնում, օրինակ՝ գեղարվեստական մեթոդների, գրական դպրոցների զարգացման տրամաբանական հաջորդայնության գիտական իմաստավորումը: Սկսում է գիտակցվել, որ գրականության զարգացման շղթայի որակական փոփոխությունները նախևառաջ պայմանավորված են պատմական առաջընթացի բնականոն օրենքով և բնավ էլ այս կամ այն բանաստեղծի անհատական հետաքրքրությունների և նախասիրությունների արգասիք չեն: «Կյանքը ոչ միայն ոգևորում է գրողներին, նյութ է մատակարարում գրականությանը, այլև զարգացնում է տաղանդներ, ստեղծում է շկոլաներ ... Վերջիններիս զարգանալը և կամ ոչնչանալը կախված է հասարակական իրեալների հարատև կամ կարճատև լինելուց: Կորչում է շկոլայի երևան գալու շարժառիթը՝ ընկնում, անհետանում է և շկոլան»<sup>13</sup>, – գրում է Մ. Բերբերյանը:

1896–1897 թթ. «Նոր-Դար»-ում տպագրվում է Մ. Աբեղյանի «Գրական դպրոցներ» ստվարածավալ ուսումնասիրությունը, որտեղ տեսաբանի մեծ հմտությամբ նա հայ ընթերցողին ծանոթացնում է գրական մի քանի հայտնի դպրոցների և ուղղությունների: Ներկայացնելով Ֆրանսիական գրականության պատմության ուրվագիծը՝ Աբեղյանն աղերսներ է տանում հայ գրականության զարգացման հետ, հիմնավորում է ռոմանտիզմի ձևավորման օրինաչափ բնույթը XIX դ. հայ գրականության մեջ: Սակայն ժամանակն առաջադրում է իր պահանջները, և քննադատության կողմից ռեալիզմի մուտքը գրականություն ընդունվում է իբրև անխուսափելի իրողություն: «Գրական դպրոցների պատմական հաջորդափոխության օրենքի

<sup>12</sup> Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1950, էջ 89:

<sup>13</sup> «Նոր-Դար» (Թիֆլիս), 4. III. 1892:

տրամաբանությունը հայ քննադատական միտքը ճիշտ տեղում գտավ՝ հիմնավորելու ռեալիզմի հաղթանակի փաստը հայ գրականության մեջ, — արձանագրում է Ս. Սարինյանը: — Գրականությունը մինչ այդ զբաղվել է գաղափարախոսությունում, այժմ անհրաժեշտ է փոխադրել այն հասարակական կյանքը վերլուծելու, քննելու, կյանքի իրական պատկերը ներկայացնելու ուղիների վրա»<sup>14</sup>:

Գեղարվեստական նոր մեթոդը, որ ենթադրում էր կյանքի իրական պատկերի արտացոլում, տարբեր դրսևորումներ ու մարմնավորում է ստանում հայ գեղարվեստագետների կողմից՝ կախված նրանց տաղանդից, գեղագիտական հայացքներից և կյանքի էական կողմերը տեսնելու ու ներկայացնելու ունակությունից:

Գրական քննադատության կարևորությունը սկսում էր հասարակական գիտակցության կշիռ ձեռք բերել, և ժամանակի գրեթե բոլոր գրական ու ոչ գրական հայտնի պարբերականները՝ «Մուրճ», «Աղբյուր», «Տարագ», «Նոր-Դար», «Մշակ», «Արձագանք» և այլն, իրենց էջերը լայնորեն բացում են քննադատության առջև: Գրական կյանքի մեծ ու փոքր երևույթները հավասարապես արժանանում են ուշադրության: Գրախոսականներով, վերլուծական հոդվածներով ու քննական տեսություններով պարբերաբար հանդես են գալիս ոչ միայն մասնագետ քննադատները, այլև գրողները: Տպագրվում են մի շարք մատենախոսություններ՝ նվիրված Ռ. Պատկանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Լեոնցի, Ալ. Ծատուրյանի, Հովհ. Թումանյանի, Վ. Փափագյանի, Լ. Մանվելյանի, Շիրվանզադեի և այլոց ստեղծագործություններին: Քննադատության ասպարեզում հայտնի անուններ են դառնում Ավ. Արասխանյանը, Լեոն, Ալ. Քալանթարը, Եղ. Մաղաթյանը, Մ. Բերբերյանը, Գ. Ենգիբարյանը, Ն. Աղբալյանը և այլք: Իհարկե, քննադատներից և իբրև քննադատ հանդես եկող գրողներից յուրաքանչյուրն ուներ գրական կյանքի իր նախընտրած բնագավառը, իր գեղագիտական նախասիրություններն ու արժեքային համակարգը: Սակայն մոտեցումների ու հարցադրումների բազմազանության մեջ, այնուամենայնիվ, կային նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մտահոգություններ: «Այդ բոլորի մեջ առանձնանում էին հատկապես մի քանի հարցեր, — նկատում է Հ. Թամրազյանը: — Նոր շրջանում գաղափարներն առաջ էին գալիս ուրույն կտրվածքով, գեղարվեստական հատկանիշներին անպայման միաձուլյալ, հրապարակախոսությունը տեղի էր տալիս ճշմարիտ արվեստի առաջ: Այս անհրաժեշտ կապի քննության բովում ծագում էին ազգային բնույթի և բովանդակության, ժողովրդայնության, ազգային և համամարդկային առնչության հարցերը, առաջ էին մղվում նոր չափանիշներ»<sup>15</sup>: Այլ խոսքով՝ ռեալիստական մեթոդի առաջադրած գաղափարայնության ու ժողովրդայնության հետ առաջնային էր դառնում գեղարվեստական արժեքայնության սկզբունքը, որ ենթադրում էր բանաստեղծական և վիպական կառույց-

<sup>14</sup> Հայ քննադատության պատմություն, հ. 2, էջ 11:

<sup>15</sup> Հ. Թամրազյան. նշվ. աշխ., էջ 472:

ների մեջ վերլուծական հայացք իրականության հանդեպ, իրադրությունների հոգեբանական հիմնավորվածությունն ու այլն:

Սակայն, ինչպես նկատում է Ս. Հարությունյանը, «90-ական թվականների հայ բանաստեղծության հաստատուն վերելքը գրական քննադատության մեջ միատեսակ չէր արձագանքվում: Գրական տարբեր երևույթները գրաքննադատության մեջ առաջ էին բերում մտքերի բախում, հաստատումներ ու մերժումներ»<sup>16</sup>: Իրապես, քննադատությունը, հասարակական ճանաչում և համեմատաբար ազատ ասպարեզ ստանալով, դեռևս տարբերայնորեն էր օգտվում ստեղծված պայմաններից, սկզբունքի և մեթոդի հստակ գիտակցված հետևողականության տարրեր հազվադեպ էին նկատվում քննադատական հոդվածներում, ու եթե միևնույն ստեղծագործությունը հաճախ տրամագծորեն հակառակ գնահատականների էր արժանանում, դա հետևանք էր որքան խմբակային կողմնակալության, նույնքան էլ՝ գեղագիտական հստակ չափանիշերի բացակայության:

Այսպես՝ 1887 թ., երբ լույս է տեսնում Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, գրականասեր հասարակության կողմից ընդունվում է անվերապահ ոգևորությունը, քանի որ բանաստեղծը 60–70-ական թվականների քաղաքացիական քնարերգության հրապարակախոսական պաթոսի փոխարեն ընթերցողի առջև բաց էր անում անմիջականորեն մարդկանց հոգու հետ խոսող զգացմունքների և խոհերի, «սրտի խոսքերի» մի նոր աշխարհ՝ հայոց հին ու նոր երգի սահմանագծին, ինչպես նրա քնարերգությունը պատկերավոր բնութագրել է Ավ. Իսահակյանը<sup>17</sup>: Բայց ահա քննադատության վերաբերմունքը միանշանակ չէր: 1887 թ. հուլիսի 19-ին «Արձագանքում» տպագրվում է Գ. Ենգիբարյանի գրախոսությունը, որում նա փորձում է գտնել այն առաջատար տրամադրությունները, որոնք ձևավորում են բանաստեղծի քնարական աշխարհը: Հովհաննիսյանի բանաստեղծության կարևոր «արժանավորություն» համարելով մաքուր ու մշակված լեզուն, իսկ գլխավոր արժանիք՝ անկեղծությունն ու պարզությունը՝ գրախոսը որոշակի ընդհանրություններ է տեսնում Սմ. Շահազիզի քնարերգության հետ և բացատրում. «Երկուսն էլ վերացական են, երկուսի էլ ոտանավորները բխել են ոչ թե կյանքի կենդանի հոսանքի ազդեցության տակ, այլ դատողության անմիջական զգացմունքի արգասիք են»: Քննադատի գիտարկումը, իհարկե, որոշ հիմք ունի, բայց բացատրությունը տեղին չէ, քանի որ Հովհաննիսյանի քնարերգությունն անմիջականորեն արձագանքում էր հենց «կյանքի կենդանի հոսանքին»: Ընթացիկ քննադատությունը դեռ լիովին չէր կարող գիտակցել գրապատմական այն դերը, որ վերապահված էր նրա այդ ժողովածուին. դա պետք է ցույց տար բանաստեղծության զարգացման բուն ընթացքը:

<sup>16</sup> Հայ քննադատության պատմություն, հ. 2, էջ 54:

<sup>17</sup> Ա. Վ. Իսահակյան. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977, էջ 44–49:



Հովհ. Հովհաննիսյանի ժողովածուի շրջադարձային նշանակութ-  
յան կռահումին ավելի մոտ է Ղ. Աղայանի գրախոսականը: Գրախո-  
սը նկատում է, որ «Հովհաննիսյանի ոտանավորները ճշմարիտ բա-  
նաստեղծության դրոշմ են կրում իրանց վրա»<sup>18</sup>, քանի որ ժողովրդի  
սրտի «թարգմանն» են ու «հայտարարը»: Դիտողությունները վե-  
րաբերում են առավելապես բանաստեղծությունների լեզվին ու ո-  
ճին. «Թերություններ են բառերի դասավորության խրթնաձևութ-  
յունը, գրություն բուն ոճը, «և»երի անտեղի և հաճախ գործածութ-  
յունը, և բայրոնական մեղամաղձությունը, որ պ. Շահագիզյանի ժա-  
մանակակից բանաստեղծներին էր հատուկ ... Բանաստեղծական  
գրվածքին խրթնաձևությամբ վսեմություն տալն արհեստական է.  
ասացվածն ինքը պետք է վսեմ լինի յուր ամենամերկ պարզության  
մեջ, ինչպես Հերկուլեսի մերկ անդրիանդը: Ճշմարիտ բանաստեղ-  
ծությունը չպարանքի թշնամի է, նա սիրում է պարզը, բնականը»<sup>19</sup>:  
Արդեն ուրվագծվում է բանաստեղծությանը ներկայացվող նորա-  
գույն պահանջներից մեկը, որ առավել հստակ ձևակերպվում է մի  
քանի տող հետո. «Լավ բանաստեղծը յուր լեզվով, յուր ոճով, յուր  
երևակայությամբ մի ամբողջ ժողովուրդ է: Ժողովուրդը կփոխվի,  
կանհետանա, բայց ճշմարիտ բանաստեղծի գրվածքը կմնա դարերով  
և կպատկերացնե անցած գնացած ժողովրդի հոգեկան և մտավոր  
աշխարհը»<sup>20</sup>:

Ղ. Աղայանի այս հոդվածը քննադատության թիրախ է դառնում  
«Արձագանքի» 1887 թ. № 45-ում՝ Գ. Ենգիբարյանի «Հ. Հովհաննիս-  
յանի «Բանաստեղծությունների» մի քննադատության առիթով»  
հոդվածում: Բարձր գնահատելով Աղայանի գրական վաստակը՝ նա  
ամենայն լրջությամբ «մեղադրում է» նրան ոչ խորքային քննութ-  
յան, լեզվի վերաբերյալ մակերեսային դիտողությունների համար.  
«Առանց առաջնորդող գաղափարների, առանց տեսական գիտութ-  
յան, առանց պատմական աշխարհայեցողության գրականական  
քննադատություն գրել ոչինչ միտք չունի, և ավելի լավ է բոլորո-  
վին չգրել, քան թե թուղցիկ, դեսից-դենից, Ավետարանից, հեքիա-  
թից, Նարեկից ու Այսմավուրքից քաղել գրականական քննադա-  
տության չափսը կամ կրիտերիան ... Ամեն գիտություն յուր գիտա-  
կան ճշմարտությունները ու միջոցները ունի, որոնցով չափում են  
այդ տեսակ հեղինակությունների արժանավորությունները և թե-  
րությունները»:

Այն պահանջները, որ Գ. Ենգիբարյանը ներկայացնում է քննա-  
դատությանը, սկզբունքորեն, իհարկե, ճիշտ են: Բայց նա չի նկա-  
տում կամ չի ուզում նկատել, որ Աղայանի նկատառումներն էլ ու-  
նեին իրենց հիմքը, որ բխում էին գրականության պատմության  
փորձից և հեռանկարային միտումներ էին դրսևորում ժամանակա-  
կից գրական գործընթացներում: Հովհաննիսյանի լեզվի և ոճի մա-

<sup>18</sup> «Աղբյուր» (Թիֆլիս), 1887, № 10, էջ 92:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 90–91:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 91–92:

սին Աղայանի դիտողությունները, որ, ինչպես երևում է Ենգիբարյանի շարադրանքից, բավական նյարդայնացրել են նրան, քանի որ ինքը բարձր էր գնահատել հենց Հովհաննիսյանի լեզուն, համահունչ էին այդ միտումներին: Ըստ էության, գործ ունենք գրական քննադատության երկու տիպերի մշտագո հակամարտության հետ. մեկը ստեղծագործությունը դիտում ու գնահատում է ինքն իր մեջ՝ գրականության գործնական փորձի շրջանակներում, մյուսը՝ գեղարվեստական մանրամասների տեսական իմաստավորմամբ: Առաջին դեպքում չի բացառվում սուբյեկտիվ տպավորականության, երկրորդ դեպքում՝ կաղապարային կաշկանդվածության վտանգը:

Ղ. Աղայանը «Աղբյուրի» 1887 թ. № 12-ում (էջ 120) հանդես է գալիս մի փոքրիկ պատասխանով՝ խուսափելով բանավեճից:

Մեկ ամիս անց՝ 1888 թ., նույն ամսագրի առաջին և երկրորդ համարներում Ս. Մանդինյանը ներկայանում է «Նոր բանաստեղծ» ծավալուն հոդվածով: Հոդվածագիրն ինքնաբերաբար թե որոշ նկատառումով կենտրոնանում է Հովհաննիսյանի բանաստեղծությունների բուն տեքստային վերլուծությունների վրա՝ շրջանցելով հայոց նոր բանաստեղծության զարգացման շղթայում դրանց գրապատմական նշանակության խնդիրը: Նրա վերլուծությունները թեև մեծ մասամբ կրում են սուբյեկտիվ-տպավորական բնույթ, այնուամենայնիվ, շեշտելով անհատի ներաշխարհի, մարդկային ապրումների ու մտածությունների անձնականացված քնարական արտահայտություններն այդ բանաստեղծություններում, անուղղակիորեն մերձենում են դրանց նորարարական նշանակության բնութագրին: Հրեթաղս նկատենք, որ հետագայում ևս, մանավանդ խորհրդային տարիներին, Հովհաննիսյանի քնարագրությունը վերլուծվում էր առավելապես հենց այս եղանակով:

Որքան ժամանակ էր անցնում, այնքան երիտասարդ բանաստեղծի երախայրիք ժողովածուի թողած առաջին տպավորությունը տեղի էր տալիս ավելի սթափ ու սառնասիրտ գնահատականների առջև: Գրքույկի լույս տեսնելուց երկու տարի էլ չանցած՝ դրա մասին ուշագրավ քննություն է կատարում Ալ. Քալանթարը: «Մուրճի» 1889 թ. № 7-ում, հետագարձ հայացք նետելով Հովհաննիսյանի բանաստեղծություններին, մատնանշում է դրանց թե՛ արժանիքները, թե՛ թերությունները (ի դեպ, Աղայանի նման Քալանթարը ևս Հովհաննիսյանի լեզվում նկատում է խրթնաբանություններ և արհեստականություն): Մեծածավալ հոդվածն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ. «... Հովհաննիսյանը հեղինակելու, հորինելու արհեստը մշակել է կատարելապես, որ նա իբրև առաջին գրական փորձ տվել է աչքի ընկնող գրքույկ ... Չպետք է ծածկենք, սակայն, որ պ. Հովհաննիսյանը ո՛չ մի նոր ուղղություն չի մտցրել մեր բանաստեղծական գրականության մեջ, ո՛չ մի նոր, ինքնուրույն խնդիր չէ դնում մեր առաջ, նա չէ գործում մի հայտնի գաղափարով տողորվածի տպավորություն և այդ պատճառով չէ կապում հասարակությունը յուր հետ որոշ հարաբերություններով. մինչդեռ այն առարկաները,

որոնք նորա գրելու նյութերն են, և այն ոճը, որ բանաստեղծը գործ է ածում ոտանավորների մեջ, ցույց են տալիս, որ նա ձգտում է լինել հասարակական շահերի ջատագով» (էջ 1093):

Քալանթարն իր դիտողություններում նկատում է, որ նա «չէ կապում հասարակությունը յուր հետ որոշ հարաբերությունով», այսինքն՝ նրա բանաստեղծություններն իր ժամանակին չարժանացան համաժողովրդական ճանաչման, իբրև նորություն՝ ընդունվեցին առավելապես մտավորականության շրջանում: Հետագայում ևս, ինչպես ցույց է տալիս գրաքննադատության պատմությունը, Հովհաննիսյանի քնարերգությունը չկարողացավ ժամանակի քննությունը բռնել, և նա հայ գրականության մեջ մնաց իբրև մի քանի գողտրիկ ստեղծագործությունների հեղինակ: Դա, իհարկե, ունի իր պատճառները, որոնց քննությունը գրականագիտական կարևոր խնդիր է և սպասում է իր ուսումնասիրողին: Բայց ահա այն դիտողությանը, թե նա «ոչ մի նոր ուղղություն չի մտցրել մեր բանաստեղծական գրականության մեջ», չի կարելի համաձայնել: Գրականության պատմությունը, ինչպես հայտնի է, ցույց տվեց հակառակը: Պատկանյանի ու Շահազիզի ժամանակներն արդեն անցել էին, բանաստեղծական նոր խոսքի շունչը թևածում էր մթնոլորտում: Հովհաննիսյանը զգաց ժամանակի շնչառությունը և արձագանքեց դրան: Նրան վիճակված էր ճանապարհ բացողի առաքելությունը, շարունակողները պիտի լինեին նրա հետևորդները՝ Թումանյան, Իսահակյան և ուրիշներ:

Առհասարակ ժամանակի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան հայտնի հանդեսներում և թերթերում սկսում են ավելի հաճախակի արծարծվել գրականությանն ու քննադատությանն առնչվող տեսական և գործնական բազմաթիվ հարցեր՝ առիթ տալով ուշագրավ բանավեճերի: Այդ տեսակետից բավական հետաքրքիր և սուր հարցադրումներ են արվում Շիրվանզադե – Գր. Արծրունի, Ա. Չոպանյան – Ա. Արասխանյան, Ա. Անտոնյան – Ա. Արասխանյան, Ն. Աղբալյան – Հովհ. Շահնազարյան և այլ բանավիճային հոդվածներում: Նկատենք, որ այդ բանավեճերում, անկախ իրարամերժ հայեցակետերից, ուրվագծվում են քննադատությանը ներկայացվող պահանջներ, որոնց միավորումից ու համակարգումից, ի վերջո, պետք է ձևավորվեր հայ դասական քննադատության ամբողջական և համալիր տեսությունը:

Մեր նպատակից դուրս է այդ բանավեճերի հանգամանալից քննությունը, սակայն դրանցից մի երկուսին անդրադառնալը կարող է ինչ-որ չափով լույս սփռել գրաքննադատական մտքի ձևավորման ոչ հարթ ու միատարր ընթացքի վրա:

Այսպես՝ 1897 թ. սեպտեմբերին Մոսկվայում տպագրվում է «Նոր-Փորձ» գրական-հասարակական վեցամսյա հանդեսը, որի առաջնորդողում խմբագիր Հովհ. Շահնազարյանն ամսագրի գլխավոր նպատակը համարում է հայ գրականությունը քննադատական հոդվածներով հարստացնելը. «Ձիք առաջադիմող գրականություն առանց

քննադատական ճյուղի: – Չկա կրիտիկա, բացակայում են կրիտիկոսներն, և գրականությունը կմնա անտեր, ինչպես նաև ընդհանուր առաջացող մեջ առանց դեկավարի: Գրականության աճելու, զարգանալու, առաջադիմելու գլխավոր պայմանը կրիտիկան է»<sup>21</sup>: Խմբագիրը, գրական կյանքում վճռական կարևորություն տալով քննադատության դերին, շտապում է ավելացնել, որ հայ իրականության մեջ դեռևս չկա բարձրակարգ, կատարյալ քննադատություն, եղածներն էլ հասարակ գրախոսականին «մոտեցող նկատողություններ» են, մի մաս էլ՝ որոշակի «չկոլայից գուրկ» հոգվածներ՝ գրված առանց «նախապատրաստության»: Այնուամենայնիվ, ըստ նրա, թեկուզև այդ վիճակով կրիտիկան գրականության առաջընթացը պայմանավորող գործոն է:

Հաջորդ՝ հոկտեմբեր ամսին, «Մուրճի» № 10-ում տպագրվում է խմբագիր Ա. Արասխանյանի՝ հանդեսի գործունեությունը նվիրված հոդվածը: «Մուրճի» խմբագիրը, ինչպես սովորաբար նման դեպքերում, այս անգամ էլ բավական ցավագին է ընդունում իր ամսագրի կողքին գրական նոր հանդեսի հրապարակ գալը, ամեն կերպ ընդգծում է «Մուրճի» աննախընթաց դերը քննադատության՝ իբրև ինքնուրույն բնագավառի կայացման գործում՝ հանդեսին աշխատակցող քննադատներից հիշելով Եղ. Մաղաթյանի և Ն. Աղբալյանի անունները: Սակայն գրական կյանքում քննադատության դերի մասին Արասխանյանի պատկերացումները հակառակն տարբերվում են Շահնազարյանի տեսակետից: «Մուրճի» խմբագիրը, իհարկե, չի թերագնահատում օբյեկտիվ և բանիմաց քննադատության կարևորությունը գրականության զարգացման համար, բայց առաջնությունը, այնուամենայնիվ, տալիս է բուն գրականությանը. «Կրիտիկան կարող է զարգանալ, երբ նա զբաղվի այն կյանքով, ինչ կյանք որ ներկայացնում է այդ գրականությունը» (էջ 1426): Սա կարևոր դիտարկում է երկու առումով: Նախ՝ որ առանց զարգացած գրականության չի կարող լինել զարգացած քննադատություն. մշակութային կյանքի այս երկու ոլորտները փոխկապակցված են: Եվ երկրորդ՝ որ իսկական քննադատության խնդիրը միայն գրական երկերի առավելություններն ու պակասությունները ցույց տալը չէ. նա գրողից ոչ պակաս պետք է ուսումնասիրած լինի այն կյանքն ու միջավայրը, որտեղից ստեղծագործողը քաղում է իր նյութը: Միայն այս դեպքում քննադատությունը կարող է ուղենշային դեր կատարել գեղարվեստական գրականության համար:

Մշակույթի պատմությունը ցույց է տալիս, որ գրական քննադատության կոչման ու խնդիրների շուրջ նման ասուլիսները ժամանակ առ ժամանակ նորոգվել են ընդհուպ մինչև մեր օրերը: Կարելի է հիշել, օրինակ՝ անցյալ դարի 60–70-ական թվականների բավական բուռն բանավեճերը, որտեղ գլխավոր խնդիրն էր՝ քննադատությունը հոգևոր կյանքի ինքնուրույն բնագավառ է, թե միայն սպասար-

<sup>21</sup> «Նոր-Փորձ» (Մոսկվա), 1897, № 1, էջ 1:

կու դեր ունի գրականության պատմության մեջ: Բայց միշտ այդպիսի դեպքերում հարցը լուծում է ինքը՝ մշակութային կյանքի գործնական ընթացքը:

Բայց XIX դարի 90-ական թվականներին ինչպես զարգացման նոր փուլ թեև կոխած բանաստեղծությունը, այնպես էլ քննադատությունը դեռ որոնումների մեջ էին: «Մուրճը» ժամանակին հայտնի այն եզակի պարբերականներից էր, որոնք իրենց գրական քաղաքականությունը և գործնականում այս կամ այն չափով մերձենում էին քննադատության՝ իբրև մտավոր մշակույթի ինքնակա բնագավառի սկզբունքային ըմբռնումին: Դա այսպես թե այնպես ընդունում էին նաև Արասխանյանի հանդեսի ինչպես համակիր, այնպես էլ հակառակորդ քննադատները: Ա. Չոպանյանը, օրինակ, «Անահիտ» հանդեսի № 5-6-ում տպագրում է ««Մուրճը» և ռուսահայ արդի գրականությունը» հոդվածը՝ նվիրված ամսագրի 10-ամյա գործունեությունը, որտեղ քննադատաբար մատնացույց է անում «ահագին դէպ մը անմարսելի ուսումնասիրություննց, ծանրատաղտուկ վէպերու եւ անհամ բանաստեղծութեանց» (էջ 178) առկայությունը, թարգմանական երկերի սակավությունը, լեզվի ու ոճի ինչ-ինչ պակասություններ, այնուամենայնիվ, ըստ պատշաճի է գնահատում հանդեսի բազմամյա վաստակը:

Արասխանյանը, իհարկե, անպատասխան չի թողնում Չոպանյանի դիտողությունները: ««Մուրճը» և արևելյան հայոց արդի գրականությունը (պատասխան պր. Ա. Չոպանյանին)» մեծածավալ հոդվածում ուշագրավ են հատկապես նրա դատողությունները հանդեսի էջերում թարգմանությունների սակավության մասին Չոպանյանի դիտողության կապակցությամբ. «Մի ամսագրի դերը այդպիսի գործքերի (Շեքսպիրի, Շիլլերի երկերը – Ե. Մ.) վերաբերմամբ պիտի կայանա երևցածը գնահատելու, որ ասել է թե քննադատության մեջ: Բնավ հարկ չկա, որ մի ամսագիր անպատճառ ինքը տպագրե այդպիսի գործքեր. բավական է, եթե ամսագիրը նկատե, ճանաչե, և ոչ թե նախանձող լինի այլուր երևցածներին: Մի ամսագրի արժեքը գեղեցիկ գրականության վերաբերյալ չպիտի չափել նրանով, թե ինքը որքան կատարյալ գործքեր տպեց, այլ նրանով, թե որքան նա յուր հայացքներով ու ճանաչողության ուժով նպաստավոր ու դրդիչ եղավ կատարյալի երևան գալուն ու հաստատվելուն, և թե որքան նա կարողացավ արգելք լինել գրական որոմի չքանալուն»<sup>22</sup>:

Նախ, «Մուրճի» էջերում թարգմանությունների սակավությունը, որի մասին ակնարկում է Չոպանյանը, ամենևին էլ ինչ-որ ծրագրային քաղաքականության հետևանք չէր, ինչպես, ասենք, ժամանակին Գ. Արծրունին «Մշակում» բանաստեղծություններ չէր տպագրում. դա ավելի շուտ «Մուրճի» խմբագրի պահանջկոտության մասին էր խոսում, որովհետև նա միշտ էլ իր հանդեսի էջերում կարևոր տեղ է տվել որակյալ թարգմանություններին: Կարելի է հիշել պեր-

<sup>22</sup> «Մուրճ» (Թիֆլիս), 1899, № 4-5, էջ 487:

ճախոս մի փաստ. դեռևս 1895 թ., երբ երիտասարդ Թումանյանն առաջարկում է «Մուրճում» տպագրել իր «Բորչավում» ակնարկը, Արասխանյանը նրան պատասխանում է. «Դուք իբրև հոգևածագիր հայտնի չեք, «Շիլիոնի կալանավորը» տվեք»<sup>23</sup>: Արասխանյանը երիտասարդ բանաստեղծի թարգմանությունների բարձր որակի մասին որևէ կասկած չուներ, ուստի պատրաստակամ էր տեղ տալ նրան իր հանդեսի էջերում:

Արասխանյանի դատողություններում ավելի սկզբունքային է այն, որ նա թարգմանությունների տպագրությունից կարևոր է համարում համաշխարհային գրականության հանրաճանաչ արժեքները քննական հայացքով հանրությանը ներկայացնելը և դրանով գեղեցիկի ճանաչողությունն ու ճաշակ ձևավորելը: Իսկ դա գրական քննադատության առաջնային խնդիրներից է, դրանով է, որ նա պիտի կարողանա «նպաստավոր ու դրդիչ» լինել «կատարյալի երևան գալուն ու հաստատվելուն» և «գրական որոմի չքանալուն»: Այդ նպատակն էր հետապնդում նաև «Մուրճի» էջերում հաճախակի տպագրվող «ահագին դեզը անմարսելի ուսումնասիրությունց», ինչպես դրանք որակում է Չոպանյանը վերոհիշյալ հոդվածում:

Ուրիշ ուղղություն է ստանում Ա. Արասխանյանի բանավեճը արևմտահայ մեկ այլ քննադատի՝ Ա. Անտոնյանի հետ: Բանավեճի սկզբնառիթմը վերջինիս՝ 1899 թ. «Մասիս» № 10-ում տպագրած «Ռուսահայ գրականությունէն» հոդվածաշարի՝ Ալ. Ծատուրյանին նվիրված հոդվածն է: Հեղինակն անվերապահ քամահրանքով է արտահայտվում ռուսահայ բանաստեղծների հասցեին: Նրանցից առանձնացնում է միայն Հ. Հովհաննիսյանին՝ նկատելով, որ նրա «ոտանավորները նույնիսկ դեռ այսօր պատվավոր կերպով կրնան մրցիլ նորագույններու արտադրությունց հետ և արվեստի տեսակետով ալ մեծ մասամբ կրնան յաջողած կտորներ համարուիլ»<sup>24</sup>: Առանց այլևայլության Թումանյանի ստեղծագործությունները համարում է «աստիճանական անկում մը Յովհաննիսյանի բանաստեղծություններէն ետքը»<sup>25</sup>, այն դեպքում, երբ հրապարակի վրա էին բանաստեղծի երկու ժողովածուները, որ լայն ճանաչում էին բերել նրան: Իսկ Ալ. Ծատուրյանի ինքնուրույն և թարգմանական գործերից զիջողաբար միայն մեկ-երկուսն է համարում հաջողված:

Ա. Արասխանյանին, բնականաբար, չէր կարող անտարբեր թողնել արևմտահայ մտավորականի այդ քամահրական վերաբերմունքը մի ամբողջ բանաստեղծական մշակույթի հանդեպ: Նա «Մուրճի» նույն համարում՝ զանազան լուրերի բաժնում, անդրադառնալով Ա. Անտոնյանի հոդվածին, վիճարկում է հատկապես «ճանաչված» հասկացությունից անտոնյանական ըմբռնումը՝ առաջադրելով սեփական

<sup>23</sup> Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 9, էջ 150:

<sup>24</sup> «Մասիս» (Կ. Պոլիս), 1899, № 10, էջ 306:

<sup>25</sup> Նույն տեղում: Ի դեպ, այստեղ Ա. Անտոնյանը Հովհ. Թումանյանին շփոթում է ժամանակի հայտնի մանկավարժ, բանաստեղծ Հարություն Թումանյանի հետ:

նկատառումներ. «Ճանաչվածը նա է, ով ա) ունի յուր կողմը ընթերցող հասարակություն, որը հետաքրքրություն է ցույց տալիս դեպի գրողը և ուրեմն սպասում նորա հաջորդ գրվածքներին, բ) համակրողների մեծ կամ փոքր խումբ, գ) գրողների իրենց կարծիքը իրենց ճյուղի մեջ ընկերակից համարվել կամեցողների մասին: Այդ երեք կարևորություն ունեցող հանգամանքները, առայժմ միացրած են իրենց վրա, այս տասը տարում հրապարակ եկած բանաստեղծներից արևելյան հայոց մեջ, միմիայն սոքա՝ Հովհաննես Հովհաննիսյան, Ալ. Ծատուրյան, Լևոն Մանվելյան, Հովհաննես Թումանյան, Շանթ, Ավ. Իսահակյան և Դերենիկ Դեմիրճյան. հարկավ, իրարից շատ տարբեր իրենց ներքին արժանավորություններով, բայցևայնպես իրենց ունեցածովը՝ ընդհանրությունից ճանաչված, վերը հիշած պայմանների մտքով»<sup>26</sup>:

«Մասիսի» քննադատն անարձագանք չի թողնում մարտահրավերը և հանդեսի 1899 թ. № 13–14-ում, շարունակելով իր «Ռուսահայ գրականութենէն» հոդվածաշարը, հերթական հոդվածում՝ այս անգամ նվիրված Հար. Թումանյանին, Արասխանյանի առաջադրած՝ ճանաչվածության այս երեք պայմանները համարում է «տարրական»՝ ձեռնպահ մնալով հիշված անունների վերաբերյալ կարծիք հայտնելուց՝ արևելահայ բանաստեղծությունը, ինչպես ինքն է ստում, լիարժեք ուսումնասիրած չլինելու պատճառով: Չի հապաղում, սակայն, ավելացնել, որ այդ ընտրյալները՝ մինչ այդ պահը իր ընթերցած կտորներից և ոչ մի բան չի արդարացրել «բանաստեղծ» տիտղոսը:

Արասխանյանն անմիջապես արձագանքում է «Հանրային և գրական քննադատությունը. պատասխան Արամ Անտոնյանին» հոդվածով, որտեղ հիմնականը վիճարկումն է Անտոնյանի այն մտքի, թե բանաստեղծին պետք է նախևառաջ ճանաչի քննադատը, ոչ թե առաջարկված եռաչափը: Արասխանյանն առարկում է, թե շատ դեպքերում ընթերցողի կարծիքը, մանավանդ երբ հասարակական բնույթ է ստանում, կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ քննադատի համար: Իբրև օրինակ հիշում է Խ. Աբովյանին. նրա անվան շուրջ արդեն 40–50 տարի է, ինչ հասարակությունն ունի իր անբեկանելի կարծիքը, այնինչ քննադատությունը նոր-նոր է միայն անդրադառնում նրան: «Գրական քննադատությունը ինքը մեծ օգուտներ է քաղում հասարակության մեջ արդեն հաստատված, որ ասել է թե՛ հավաքական քննությունը գոյացած կարծիքից, մեկնաբանում է Արասխանյանը. — գրական քննադատությունը չի կարող զանց առնել այն տպավորությունը, որ քննադատվող հեղինակը արել է ընթերցողների վրա: Գրական քննադատը շատ կետերում ոչ այլ ինչ է, բայց եթե հաջող կերպով բանաձևողը ընդհանրություն կողմից գիտակցություն բերած մտքերի»<sup>27</sup>:

<sup>26</sup> «Մուրճ», 1899, № 4–5, էջ 564:

<sup>27</sup> Նույն տեղում, № 7–8, էջ 895:

Արասխանյանի այս և հետագա դատողությունների մեջ նկատելի են քննադատության՝ որպես գրական զարգացումներում ինքնորոշված երևույթի թերագնահատման երանգներ: Բայց դա բացատրելի է բանավիճային միջոցառումների լարվածությամբ: Չպետք է մոռանալ, որ, ինչպես հաճախ է պատահում գրականության պատմության մեջ, մասնավոր հարցի շուրջ բանավեճերը վերածվում են ավելի ընդհանրական սկզբունքային բախումների՝ հանգեցնելով նաև որոշ ծայրահեղությունների: Տվյալ դեպքում բախվում էին արևելահայ ու արևմտահայ մշակութային փոխհարաբերության երկու հակադիր տիպեր: Մեկը գրական արժեքների գնահատման մեջ առաջնային նշանակություն էր տալիս համաժողովրդական ճանաչմանը, մյուսը ավելի համեստ դեր էր վերապահում ժողովրդին:

Անկախ բանավիճային սրացումներից՝ Արասխանյանը՝ որպես կրթված, գրականության պատմությանը լավատեղյակ մտավորական, էր կարող վերջիվերջո չընդունել, որ՝ «Մեծ կրիտիկոսները՝ որպես մեծ խելքերը, կարողանում են մոտավոր սերունդների վերաբերմունքը կանխատեսել և կամ մի մտքի կամ մի ձևի արժեքը տևողականության տեսակետից որոշել բավական ճշտությամբ: Այդպիսիները նաև հազվագյուտ մեծ կրիտիկոսներ են»<sup>28</sup>:

Ա. Անտոնյանը վերը հիշված հոդվածում վերահաստատում է արևմտահայ միջավայրում ընդունված միտքը, թե արևելահայերը բանաստեղծության մեջ միայն միտք են որոնում, ուստի ցանկացած միտք՝ արտահայտված չափածո տողերով, համարում են բանաստեղծություն:

Հ. Ճաղարբեգյանը, Ա. Ծատուրյանի բանաստեղծություններին նվիրված իր գրախոսության սկզբում, առարկելով պոլսեցի քննադատին, փորձում է հիմնավոր բացատրություն տալ երևույթին՝ գրականության դերի ու նշանակության վերաբերյալ ժամանակին որոշակի շրջաններում ընդունված և իր համար ընդունելի պատկերացումների համատեքստում: Գրականության մեջ, ըստ Ճաղարբեգյանի, էական նշանակություն ունի գաղափարը. «Միտք տալ, զգացմունքներ շարժել, գործի հրավիրել, ահավասիկ ինչ բաների վրա ենք ուղիղ դարձրել մենք՝ ուսաստացի: «Արվեստը արվեստի համար» տեսությունը մեզ համար մի անհասկանալի, եթե կողքին նույնիսկ ծիծաղելի պահանջ է: Ամեն ինչ, այդպես և գրականությունը, այդպես և նրա բանաստեղծական ճյուղը կյանքի վրա ազդելու, առաջադիմության մղելու, բարոյապես բարձրացնելու գործին պիտի ծառայեն»<sup>29</sup>:

Լեոն «Թե՛ լեզուն և թե՛ ուղղությունը» հոդվածում փորձում է հստակություն մտցնել վերոնշյալ բանավեճի էություն մեջ. «... Այսօր մենք յուրաքանչյուր բանաստեղծության, յուրաքանչյուր գեղարվեստական գրվածքի մեջ որոնում ենք նախևառաջ միտք, գաղափար՝ շատ անգամ ուղղություն չգարձնելով արտաքին ձևի,

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 897:

<sup>29</sup> «Լուսն» (Տիփսիս), գիրք Բ, հուլիս, 1899:



լեզվի, ոճի վրա: Արևմտյան հայերը այդ կողմից մեր հակոտնյաներն են: Նրանք պահանջում են ամենից առաջ ձև, ոճ, իսկ գաղափարականությունը, միտքը նրանց համար մեծ նշանակություն չունի: Այստեղից ահա արևմտյան և արևելյան հայերի միջև եղած անընդունակ պետք. մենք չենք հավանում արևմտյանների գրվածքները՝ տեսնելով նրանց մեջ լուրջ բառակույտեր, իսկ նրանք չեն հավանում մեզ, որովհետև մենք քարոզներ ենք տալիս անճաշակ ոճով, աղքատ լեզվով»<sup>30</sup>:

Լեոն պարզապես ներկայացնում է բանավեճերի թեժ բովում թրծված իրավիճակը: Իրականում ո՛չ արևելահայ գրողներն էին անտեսում ձևը՝ առաջնությունը տալով գաղափարին, ո՛չ էլ արևմտահայ գրողների ձևապաշտությունն էր նշանակում առհասարակ բովանդակության շրջանցում: Խնդիրն այն էր, թե կողմերից յուրաքանչյուրը բանաստեղծական ձևի հիմքում լեզվական ի՛նչ քաղաքականություն էր ընդունում:

Այսպիսով՝ XIX դարավերջի հայ իրականության մեջ նշանավորում են քննադատության պատմության զարգացման մի նոր շրջափուլ, որ բնորոշվում է մի շարք տեսագործական խնդիրների առաջադրմամբ, դրանց լուծմանը միտված կոնկրետ քայլերի ձեռնարկմամբ: Իբրև հետազոտության առանձին բաժին՝ քննադատությունը գրեթե որոշակիացնում է իր էական գործառույթները՝ դրանով իսկ հաստատուն հիմքերի վրա դնելով գրաքննադատության գիտականացումը:

## ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКИ КОНЦА XIX ВЕКА

ЕВА МНАЦАКАНЯН

### Р е з ю м е

В истории армянской литературной критики 90-е годы XIX века ознаменовали новый этап развития, характеризующийся тем, что был выдвинут ряд теоретически-практических вопросов. Новое поколение интеллигенции (А. Ширванзаде, Г. Енгибарян, А. Арасханян, А. Чопанян, А. Антонян, Н. Агбальян и другие) не только провозглашает необходимость здоровой критики, но и предпринимает практические шаги в этом направлении. Формируется интересная палитра мнений о роли и значении критики, в которой основным тезисом является то, что критика — необходимый элемент для развития литературы, выявления прекрасного, ценного, истинного в искусстве. И художественная, и содер-

<sup>30</sup> «Մշակ», 29. VI. 1899:

жательная сторона рассматриваются как равноценные составляющие литературного произведения. Критика как отдельная исследовательская область почти полностью определяет свои основные функции, тем самым ставит на прочные основы свою научность.

## THE TENDENCIES OF DEVELOPMENT OF ARMENIAN LITERARY CRITICISM AT THE END OF THE XIX CENTURY

EVA MNATSAKANYAN

### S u m m a r y

The 90s of the 19th century were significant as the start of a new stage of development in the history of Armenian literary criticism characterized by the rise of several theoretical and practical issues. The new generation (Shirvanzade, G. Yengibaryan, A. Araskhanyan, A. Chopanyan, A. Antonyan, N. Aghbalyan and others) of intelligentsia not only stressed the importance of healthy criticism, but also initiated practical steps towards that direction. A very interesting set of opinions about the role and importance of criticism was developed, where the main thesis was the principle that criticism was a necessary component in the development of literature, and in revealing the truth, the beauty and the valuable in art. As components of literary compositions equal value was given to both the content and the aesthetics. Criticism as a separate sphere of research is to almost fully define its basic functions, hereby creating a sustainable basis for bringing criticism to the field of science.

---

---

ԱՐԴՈՒԼ ՀԱՄԻԴ II ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(Ուրվագիծ)

ՏԱԹԵՎԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ

Սուլթան Աբդուլ Համիդ II իշխանությունը եկավ իր եզրը՝ Մուրադ V-ի գահընկեցությունից հետո՝ 1876 թ. օգոստոսի 31-ին: Օսմանյան կայսրությունը, որը երեք ամսում երեք սուլթան էր փոխել, գտնվում էր ծանր վիճակում: Արդեն ակնհայտ էր դարձել թանգիմաթյան քաղաքականության անարդյունավետությունը քաղաքական, վարչական, ֆինանսական և մյուս բոլոր ոլորտներում: Պետական գանձարանը, որը Ղրիմի պատերազմի շրջանից սկսած արտաքին պարտքերը չէր կարողանում վճարել, սնանկ էր, Բալկաններում ապստամբությունները հետևում էին իրար, եվրոպական մեծ պետությունները պայքարում էին կայսրության դեմ՝ սպասելով «հիվանդ մարդու» վախճանին:

Նման պայմաններում գահ բարձրանալով՝ Աբդուլ Համիդը սկսեց երկրի առաջ ծառայած բազում խնդիրների լուծման համար ելքեր փնտրել: Իր կառավարման առաջին շրջանում՝ մինչ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Համիդն առաջնորդվում էր թանգիմաթյան և, մասամբ էլ, «Նոր օսմանների» գաղափարախոսությունից: Իշխանության առաջին 2 տարին սովորելով «սուլթանական խաղի կանոնները»՝ նա սկսեց ձևակերպել սեփական սկզբունքները, հավաքել իր սեփական կադրերը<sup>1</sup>: Հատկանշական է, որ 1876 թ. մինչև 1882 թ. կայսրությունում քսաներեք սադրազամ (մեծ վեզիր) փոխվեց<sup>2</sup>: Այս փաստը պատմաբանների մի մասը կապում է Համիդի հիվանդագին կասկածամտության, մյուս մասը՝ առողջ զգուշավորության հետ: Աբդուլ Համիդ II կառավարման շրջանն ուսումնասիրած հեղինակներից շատերը փորձել են տալ սուլթանի բնավորության վերլուծությունը: Նրանց մեծ մասի կարծիքով՝ հատկապես գահ բարձրանալուն հաջորդած իրադարձությունները հոգեբանական տեսանկյունից դժվար են եղել նրա համար<sup>3</sup>: Որոշ ուսումնասիրողներ սուլթանի վարած քաղաքականությունը և գործելաոճը փորձում են կա-

---

<sup>1</sup> G. Çetinsaya. II. Abdülhamidin İç Politikası: Bir Dönemlendirme Denemesi.– “Osmanlı Araştırmaları”, XLVII, İstanbul, 2016, s. 357.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 359:

<sup>3</sup> A. KIRMIZI. Sultan II. Abdülhamidin Kişiliğinde Süreklilik ve Kopuş.– “Sultan II. Abdülhamid ve Dönemi”, İstanbul, 2012, s. 17–30.

պել մանկության ու պատանեկության տարիներին նրա կյանքում տեղի ունեցած իրադարձությունների հետ<sup>4</sup>:

Ռուս-թուրքական պատերազմում կրած պարտությունը Համիդին ստիպեց վերանայել իր մոտեցումները, հրաժարվել նախկին գործելաոճից և Թանզիմաթի սկզբունքներից արմատապես տարբերվող ուղի որդեգրել: Անշուշտ, այս անցումը միանգամից չեղավ, «միջանկյալ» ժամանակաշրջանը տևեց մինչև 1882 թ.: Իր ներքին քաղաքական ուղենիշերը ձևակերպելուց բացի, սուլթանն այս շրջանում փորձում էր լուծում տալ Բեռլինի խորհրդաժողովի արդյունքում առաջացած խնդիրներին: Հաշվի առնելով մեծ տերությունների հակասությունները՝ նա հնարավորինս երկարաձգում էր բանակցային գործընթացը և հանձնվում միայն այն դեպքում, երբ նրանք անցնում էին ուժի ցուցադրմանը կամ ռազմական սպառնալիքով հանդես գալիս: Օրինակ՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանում նախատեսված բարեփոխումների գործընթացը հետևողականորեն ձգձգելով՝ նա ամեն զնով խուսափեց դրանց իրագործումից: Բրիտանացի պատմաբան, քաղաքագետ Ջեյմս Բրայսը գրում է, որ հայություն բնաջնջման ծրագիրը Համիդը «հղացել է» Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո<sup>5</sup>:

Նույն ժամանակաշրջանում սուլթան Աբդուլ Համիդը սկսեց ազատվել Թանզիմաթյան շրջանի գործիչներից: Որոշ փաշաներ աքսորվեցին կայսրության ծայրամասեր կամ նշանակվեցին նահանգապետեր, ոմանք էլ, և առաջին հերթին իր նախաձեռնողականությամբ հայտնի Միդհատ փաշան, սպանվեցին:

1880-ականների սկզբին Աբդուլ Համիդի իշխանություն անցումային շրջանն ավարտվեց. նրա հիմնական քաղաքական սկզբունքներն ու ուղենիշերը վերջնականապես հստակեցվեցին: Նրա խոսքերով իր միակ նպատակը «պետություն և ժողովրդի երջանկությունն ու բարեկեցությունն է և իսլամի պահպանումը»<sup>6</sup>: Այս առումով, ըստ Համիդի, պետությունն ու հայրենասերները երկու պարտավորություն ունենին՝ դեմ կանգնել երկրի տարածքային ամբողջականությանը վնասող ցանկացած բանի և ապահովել երկրի հարատևումը, ուժն ու հարստությունը, ժողովրդի երջանիկ, անվտանգ և խաղաղ կյանքը<sup>7</sup>: Այս նպատակներն իրագործելու համար, սուլթանի համոզմամբ, անհրաժեշտ էր առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

ա) պահպանողականություն. քաղաքական տեսանկյունից Աբդուլ Համիդը հավատում էր պահպանողականությանը, դեմ էր լիբերալիզմին: Այս մասին է վկայում նրա պատասխանը բրիտանացի

<sup>4</sup> E. Pears. Life of Abdul Hamid, New York, 1917, p. 7.

<sup>5</sup> Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 67:

<sup>6</sup> İ. M. K. İnâl. Son Sadrazamlar, Cilt 3, İstanbul, 1982, s. 1299.

<sup>7</sup> İ. M. K. İnâl. Son Sadrazamlar, Cilt 2, İstanbul, 1982, s. 678 – 680.

խորհրդարանական Բարտլեթի՝ ժողովրդին ազատություն չտալու մասին հարցին. «Ազատությունը սուր դաշույն է: Ժողովուրդն էլ անգրագետ է: Եթե դաշույն ունենան, իրար կկոտորեն»<sup>8</sup>:

բ) Ինքնակալություն. դեմ լինելով ազատությանն ու ազատականացմանը՝ սուլթանը, բնականաբար, դեմ էր նաև խորհրդարանական կարգին: Նա բացարձակ միապետության կողմնակից էր:

գ) Կենտրոնամետություն. ըստ Համիդի, օսմանյան հողերի բարգավաճման գրավականը կենտրոնամետության ավանդույթներն էին: «Տեղական ինքնակառավարումը» համարելով բոլոր դժբախտությունների աղբյուր՝ նա բացարձակ վերահսկողություն էր սահմանել Բարձր Դուռնի նկատմամբ: Անձամբ էր հստակեցնում և վերահսկում քաղաքական բոլոր որոշումների կայացման ու իրականացման գործընթացն ամենափոքր մանրամասներով: Ժամանակի հետ սուլթանի վերահսկողության տակ անցան ոչ միայն ներքին և արտաքին քաղաքականությունը, այլ զինվորական ու քաղաքացիական բոլոր կառույցները, մարմինները և պաշտոնյաները:

դ) Պանիսլամիզմ. սուլթան Աբդուլ Համիդը կրոնամոլ էր ու մեծ կարևորություն էր տալիս քաղաքական և սոցիալական գործառույթներում իսլամի ուժին, մուսուլմանների միությունն ու համախմբվածությունը:

ե) Բարեփոխություն. քանի որ Օսմանյան կայսրությունը եվրոպական երկրներից հետ է իր զարգացման մակարդակով՝ սուլթան Համիդը գիտակցում էր՝ բարենորոգումները կայսրության հարատևման համար պարտադիր պայմաններ են:

զ) Ստատուս-քվոյի պահպանում. Աբդուլ Համիդի ռեժիմի կարևոր առանձնահատկություններից էր նաև «զգուշավոր լինելը»: Կայսրության թուլությունը հաշվի առնելով՝ նա նախընտրում էր ռիսկի չգնալ, ստատուս-քվոն չխախտել, առճակատվելու փոխարեն փոխգիշում որոնել: Պալատական գլխավոր գրագիր Թահսին փաշան գրում է, որ «սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության գերակա մեթոդներն էին «գեոստրատեգիայի առիթ չտալը» և «վերքը չփորփրելը»<sup>9</sup>:

Աբդուլ Համիդի կառավարման հաջորդ տասնամյակը (1881–1891 թթ.) համարվում է իսաղաղության տասնամյակ: 1878–1882 թթ. պլանավորված բոլոր նախաձեռնությունները կյանքի կոչվեցին առկա ֆինանսական հնարավորությունների սահմաններում: 1878 թ. վերջին Թունիսցի Հայրեզդին փաշայի սադրազամության օրոք սկսվեց և հետագայում սադրազամ Քյուլջուք Սաիդ փաշայի ժամանակ որոշ հապաղումներով շարունակվեցին արդարադատության ոլորտի բարեփոխումները: Ռազմական բարեփոխումները սկսվեցին 1880 թ. և նոր թափ ստացան 1882 թ. գերմանացի զինվորական

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 678:

<sup>9</sup> Sultan Abdülhamid: Tahsin Paşa'nın Yıldız Hatıraları, İstanbul, 1990, s. 207.

պատվիրակությունների ժամանակից հետո: 1880-ականներին արագորեն ընթանում էին նաև կրթության ոլորտի ծախսատար, բայց կարևոր բարենորոգումներ:

1890-ականների երկրորդ կեսին սկսեց ուժեղանալ քաղաքական ընդդիմությունը: 1897 թ. թուրք-հունական պատերազմում տարած հաղթանակն Աբդուլ Համիդ II հնարավորություն ընձեռեց դուրս գալ քաղաքական խոր ճգնաժամից և նշանավորվեց մի քանի առումով: Նախ, Աբդուլ Համիդը հեղինակություն ձեռք բերեց և՛ կայսրության ներսում, և՛ մեծ պետությունների մոտ, և՛ մուսուլմանական աշխարհում: Անկյունաքարային կարելի է համարել 1900 թ. սեպտեմբերի 1-ին Աբդուլ Համիդ II գահակալության 25-ամյակի տոնումը, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1897 թ.: Հոբելյանի առիթով սկսվեց Հիջազի երկաթգծի կառուցումը<sup>10</sup>:

Մի քանի տարվա խաղաղությունից հետո, սակայն, տիրող կարգերից հպատակների դժգոհությունը<sup>11</sup>, հարկային բեռի ծանրությունը, գնալով վատթարացող տնտեսական պայմանները, «Համիդիե» խմբերի ճնշումներն աստիճանաբար հանգեցրին ճգնաժամի նոր սրմանը և պատճառ դարձան 1908 թ. Աբդուլ Համիդի գահընկեցության:

Աբդուլ Համիդ II կառավարման տարիները բնութագրվում են հատկապես ոչ մուսուլմանների հանդեպ հալածանքների ուժեղացմամբ: Առօրյա կյանքում սովորական դարձան պաշտոնյաների կամայականությունները. կյանքի և ունեցվածքի երաշխիքները գրեթե ամբողջովին վերացվեցին: Հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանության քաղաքականությունն էլ է պետական հիմքերի վրա դրվել և սկսել իրագործվել սուլթան Աբդուլ Համիդի օրոք: 1895-ին Հայկական հարցի մասին հոգվածով հանդես եկած անգլիացի հեղինակ Վալտեր Հարրիսը համոզված էր, որ 1890-ական թվականների սկզբներից կյանքի կոչված «Համիդիե» գնդերի ավերիչ արշավանքները Բ. Դուան նպատակային քաղաքականության հիմքն էին և պետք է ստիպեին հայերին հեռանալ հայրենի երկրից<sup>12</sup>: Համիդն ազգային հարցի լուծման ուղին տեսնում էր միայն զանգվածային կոտորածների և ֆիզիկական ոչնչացման միջոցով: Թեև, ի պատասխան թուրքական իշխանությունների դաժան ճնշումների, հայերը դիմում էին ինքնապաշտպանության, 1894–1896 թթ. կոտորվեց շուրջ 300 հազար հայ, նույնքան օսմանահպատակ հայ քաղաքացի տարագրվեց երկրից, մի հսկայական զանգված էլ հարկադրաբար կրոնափոխվեց՝ փրկելու համար կյանքը<sup>13</sup>:

<sup>10</sup> G. Çetinsaya. II. Abdülhamidin İç Politikası: Bir Dönemlendirme Pe-nemesi, s. 391.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 397:

<sup>12</sup> Զ. Կիրակոսյան. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երևան, 1982, էջ 12:

<sup>13</sup> Լ. Մկրտչյան. Արևմտահայության ցեղասպանության արդուլհամիդյան քաղաքականությունը. — Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Երևան, 2001, էջ 67:

Աբդուլ Համիդ II` երեսուներեք տարի տևած գահակալությունն օսմանյան պատմության ամենահակասական շրջաններից է, որի ուսումնասիրումը տարիներ շարունակ եղել և այժմ էլ մնում է ոչ միայն թուրք, այլև՝ օտար պատմաբանների հետաքրքրության ծիրում: Հիմա էլ պատմաբանները, ծայրահեղությունից ծայրահեղություն ընկնելով, նրան մերթ «կարմիր սուլթան» և «բռնապետ» են որակում, մերթ «մեծ տիրակալ» հռչակում:

Համիդի անվան հետ են կապվում օսմանյան պետության առաջին սահմանադրության հռչակումն ու խորհրդարանի ձևավորումը, երկաթուղու, տրամվայի և հեռագրական համակարգի ներդրումը, կրթության, առողջապահության համակարգերում մի շարք բարեփոխումներ: Սրա հետ մեկտեղ նրա կառավարման տարիները բնորոշվում են պաշտոնյաների ու մտավորականության գործունեությունից տոտալ վերահսկմամբ, հետախուզական ցանցի, լրտեսների ու մատնիչների ակտիվ գործունեությամբ, սահմանադրությունից հրաժարմամբ և խորհրդարանի ցրումով:

Ուշագրավ է, որ Համիդի գործունեությունը հակասական գնահատականների է արժանացել դեռ նրա սուլթանության ժամանակներից: Այսպես, օսմանյան պաշտոնական թերթերում և արտասահմանում լույս տեսնող ընդդիմադիր թերթերում ներկայացվող Համիդի կերպարները խիստ տարբերվում էին: Իշխանության կողմից գրաքննվող թերթերը ներկայացնում էին անթերի սուլթանի կերպար<sup>14</sup>: Ավելին, նա մեղալիներ, պարզեներ ու ֆինանսական միջոցներ չէր խնայել նաև արտասահմանում անձամբ իր և օսմանյան պետության անունը բարձր պահելու համար<sup>15</sup>: Մի կողմից պայքար էր մղվում սուլթանին ու կայսրությունը նվաստացնող հրապարակումների դեմ, մյուս կողմից քայլեր էին ձեռնարկվում աշխարհի ամենատարբեր անկյուններում բնակվող մուսուլմանների շրջանում օսմանյան սուլթանի՝ որպես խալիֆի, դերի բարձրացման ուղղություններ: Այս ամենն այնքան լայն շրջանակ էր ընդգրկել, որ նույնիսկ Համիդին գովաբանող հողվածներ էին տպվում նորզելանդական թերթերում:

Ակտիվ գործում էր նաև սուլթանին ընդդիմադիր ճամբարը: Մասնավորապես, ժնևում տեղակայված երիտթուրքական թերթերն ակտիվորեն աշխատում էին նրան՝ որպես բացասական կերպար, ներկայացնելու ուղղությամբ<sup>16</sup>: Ժնևում տպագրվող “Beberuhi” երգիծական ամսագրի 1898 թ. մարտի 1-ի համարում տպագրված տոնական շնորհավորանքում խմբագրությունը սուլթան Համիդին մաղթում

<sup>14</sup> S. Yazıcı. Sultan II. Abdülhamid Örneğinde Tarihsel Algılamının Değişimi.– “Journal of History Studies”, Vol. 6, Issue 5, 2014, s. 237.

<sup>15</sup> S. Deringil. İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876–1909), İstanbul, 2002, s. 146.

<sup>16</sup> M. Göçmen. İsviçre’de Jöntürk Basını ve Türk Siyasal Hayatına Etkileri, İstanbul, 1995, s. 171–173.

էր «մեկ կիլոգրամ դինամիտի պայթյուն», իսկ վերջին էջում նա պատկերված էր ավանակի տեսքով<sup>17</sup>: Իշխանության գալուց հետո էլ երիտթուրքերը տարբեր հարթակներում նրան ներկայացնում էին որպես բռնապետ, բռնակալ, իսկ իթթիհադականների բոլոր անհաջողություններն ու պարտությունները կապվում էին նրա թողած ժառանգության հետ: Օրինակ՝ 1914 թ. Կոլումբիայի համալսարանում ատենախոսություն պաշտպանած Ահմեդ էմին Բեյը գրում է, որ երկրորդ սահմանադրության հռչակումից հետո պարզ դարձավ համիդյան թուրքիայի իրական վիճակը. «... բռնապետական իշխանության վրայից ծածկոցը հանելուն պես շատ տխուր պատկեր է ի հայտ գալիս: Քաոսի, հետընթացի, կործանման պատկեր»<sup>18</sup>:

Հանրապետության գոյության առաջին տասնամյակներին՝ 1920–1940-ական թվականներին, պատմագիտությունը՝ որպես կարևորագույն ոլորտ, գտնվում էր նախագահ Մուսթաֆա Բեմալի անմիջական վերահսկողության տակ: Մի քանի տարվա ընթացքում ստեղծվեց թուրքիայի նոր, ոչ օբյեկտիվ, քեմալիզմի դրույթներին համապատասխանող պատմություն: Հաշվի առնելով թուրքիայի Հանրապետության առաջին երեք նախագահների «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ լինելու փաստը՝ տարիներ շարունակ նոր օսմանների ու երիտթուրքերի դեմ պայքար մղած Աբդուլ Համիդը դրական վերաբերմունքի չէր կարող արժանանալ: Նույնիսկ ժամանակի առաջադեմ լրագրողներից Իսքենդեր Ֆահրեթինի հեղինակած «Աբդուլ Համիդը և Աֆրոդիտեն» վեպի տողատակերում է բացերբաց երևում սուլթանին ժլատ, հավակնոտ և դաժան ներկայացնելու միտումը: 1929 թ. մայիսի 12-ից «Աքչամ» թերթում լույս տեսնող վեպի գլուխներից մեկում սուլթանը, իմանալով, որ նոր հարձը՝ Մելահաթը, իր պես սիրում է մայրամուտը դիտել, ասում է. «Ես երբեք նոր ծնվող, կյանք առնող բաները չեմ հավանում: Ես ուզում եմ, որ ամեն ինչ իմ աչքի առջև մարի, խորտակվի»<sup>19</sup>:

Աբդուլ Համիդի անձի նկատմամբ այս բացասական մոտեցումներում փոփոխությունները սկսվեցին 1950 թ. Դեմոկրատական կուսակցության իշխանության գալուց հետո: Ի տարբերություն քեմալականների, իսլամի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ունեցող այս կուսակցության կառավարման օրոք օսմանագիտական ուսումնասիրությունների համար նոր դաշտ բացվեց: Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի մասին քննարկումների ակտիվացմանը

<sup>17</sup> “Beberuhi”, 1 Mart 1898, s. 1–2. *Տե՛ս նաև՝* S. Tiken. Cenevre’de Bir Jön Türk Mizah Gazetesi: Tokmak.–“A. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi”, № 54, Erzurum, 2015, s. 408.

<sup>18</sup> A. Emin. Development of Modern Turkey as Measured by Its Press, New York, 1914, p. 15.

<sup>19</sup> “Akşam”, 14 Mayıs 1929, s. 6.



նպաստեց նրա դատեր՝ Այշե Օսմանօղլուի հուշերի տպագրումը<sup>20</sup>: Դրանից ոգեշնչվելով՝ «Մեծ արևելք» թերթի լրագրող Իսմաիլ Համի Դանիշմենդը հանդես եկավ «Սուլթան Համիդի անմոռանալի ծառայությունները» հոդվածով, որը, ըստ էության, մարտահրավեր էր Աբդուլ Համիդի գործունեության «դասական» դարձած գնահատմանը<sup>21</sup>:

Սուլթանի կերպարի ընկալման փոփոխությունը միտված հաջորդքայլը դարձավ Նեջիփ Ֆազլի Քըսաքյուրեքի՝ 1965 թ. տպագրված «Հզոր տիրակալ» գիրքը: Աշխատության նախաբանում Քըսաքյուրեքը նշում է, որ հղումների կարիք չի զգում. ոչ ոքի չի պատրաստվում ապացուցել իր գրածների օբյեկտիվությունը<sup>22</sup>: Թեև այս գիրքը երկար տարիներ ակադեմիական պատմագրության կողմից չէր ընդունվում, սակայն՝ որպես գիտահանրամատչելի աշխատություն, կարևոր ազդեցություն ունեցավ հասարակական կարծիքի փոփոխության վրա: Իսկ գրքի վերջին՝ «Հասկանալ Աբդուլ Համիդին նշանակում է հասկանալ ամեն ինչ» նախադասությունը դարձավ և այժմ էլ շարունակում է մնալ թուրք պատմաբանների մի ամբողջ սերնդի գլխավոր կարգախոս:

Հարկ է նշել, որ պատմաբանները 1950-ական թվականների հարբերական ազատականացման մթնոլորտում սկսել էին բավական չեզոք գնահատականներ տալ Համիդի գործունեությանը: Այսպես, հայտնի պատմաբան էնվեր Զիյա Քարալն իր աշխատություններում Աբդուլ Համիդի ժամանակաշրջանը թեև բռնապետական է անվանում, սակայն նաև շեշտում է, որ սխալ է սուլթանին հայտնի անուններով («կարմիր սուլթան», «մարդասպան») կոչել: Քարալը գրում է, որ Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին առկա խնդիրները սուլթանի մեղքով չեն առաջացել, շատ ավելի վաղուց են գոյություն ունեցել, կայսրության անկումն ու ազգային-ազատագրական շարժումների տարածումն էլ անխուսափելի են եղել: Ըստ Քարալի՝ սուլթանն էլ իր մեղքի բաժինն է ունեցել, սակայն նրա գործունեությունը գնահատելիս պետք է հաշվի առնել Օսմանյան կայսրությունում առկա տնտեսական խնդիրները, միջազգային ճնշումները, ազգային շարժումները, երկրի ներքին իրավիճակը<sup>23</sup>:

Մեկ այլ հայտնի թուրք պատմաբան Իլբեր Օրթայլն նշում է, որ Աբդուլ Համիդը, իսկապես, թուրքական տիրակալ էր և դա նրա գիտակցության մեջ էր. «Ուներ պատասխանատվության մեծ զգացում և մոսսուլմանին վայել արժանիքներ: Թուրքերի նկատմամբ յուրահատուկ սիրով էր լցված»<sup>24</sup>:

<sup>20</sup> A. O s m a n o ğ l u. Babam Sultan Abdülhamid, İstanbul, 1960.

<sup>21</sup> Y. K. Necefzade. Sultan İkinci Abdülhamid ve İttihad-ü Terakki, İstanbul, 1967, s. 101.

<sup>22</sup> N. F. K ı s a k ü r e k. Ulu Hakan II. Abdülhamid Han, İstanbul, 1965, s. 6–8.

<sup>23</sup> E. Z. K a r a l. Osmanlı Tarihi, Cilt IV, Ankara, 1962, s. 562, 576–577.

<sup>24</sup> İ. O r t a y l ı, İ. K ü ç ü k k a y a. Cumhuriyet'in İlk Yüzyılı (1923–2023), İstanbul, 2013, s. 22.

Նմանատիպ գնահատական է տալիս նաև պատմաբան Յըլմազ Օզթունան՝ նշելով, որ «սուլթանը պետությունը փողոցում չէր գտել, և որ պետությունը նրան սահմանադրականները չէին հանձնել: Անձնապես տեր էր կայսրությանը, ինչպես որ անձամբ կառավարում էր, այնպես էլ պատասխանատվություն էր կրում»<sup>25</sup>:

Աբդուլ Համիդի գործունեության վերագնահատման գործում կարևոր է էնգին Դենիզ Աքարլի ատենախոսությունը<sup>26</sup>: Չժխտելով, որ Համիդը խիստ մեթոդներ է կիրառել՝ Աքարլին Քարալի պես ևս նշում է, որ դրանք օբյեկտիվ իրականության թելադրանքն են եղել<sup>27</sup>:

Ն. Ֆ. Քրսաքյուրեքի, է. Դ. Աքարլի աշխատություններով սկիզբ առած վերոնշյալ նոր մոտեցումներն իրենց հետագա զարգացումը ստացան 1980-ականներին ասպարեզ դուրս եկած հեղինակները՝ Շյուքրու Հանիօղլուի, Գյոքհան Չեթինսայայի, Ազմի Օզջանի, Ալի Բիրինջիի, Թուֆան Բուզփրնարի և այլոց հոդվածներում: Ինչպես և իր նախորդները՝ Չեթինսայան գրում է, որ թուրք պատմաբաններն այսօրվա Թուրքիայի խնդիրների տեսանկյունից են նայում XIX դ. Օսմանյան կայսրությանը, սակայն այն ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունից քաղաքապես, տնտեսապես ու սոցիալապես տարբեր մի պետություն էր<sup>28</sup>: Ավելին, նա հակահամիդյան տրամադրություններով հայտնի գործիչներին կոչ է անում բերել Համիդին չընդունելու պատճառները, և ոչ թե պարզապես ասել՝ «չեմ հավանում» նրա համակարգը, քանի որ նման ձևակերպումները պատմագրության տեսանկյունից անընդունելի են<sup>29</sup>:

Ուշագրավ է, որ անկախ քաղաքական կողմնորոշումներից ու հակասություններից՝ Համիդի քաղաքականությունը փոքրամասնությունների հանդեպ գրեթե միշտ արժանացել է թուրք պատմաբանների հավանությանը: Տարբեր գաղափարների հարող թուրք գիտնականներ հայերի նկատմամբ նրա ողջ գործունեությունը՝ «Համիդի» գնդերի ստեղծումից մինչև կոտորածների կազմակերպումը, համարում են «ընդունելի և հայերի ապստամբություններով պարտադրված» երևույթ: Այս առումով բացառություն են Սելիմ Դերինգիլի աշխատությունները, որոնցում Համիդի քաղաքականության ընդհանուր գծերին հավանություն տալուն զուգահեռ, նա

<sup>25</sup> Sıkı M. Armağan. Abdülhamid'in Kurtlarla Dansı 1, İstanbul, 2012, s. 32.

<sup>26</sup> Engin Deniz Akarli. The Problems Of External Pressures, Power Struggles, And Budgetary Deficits In Ottoman Politics Under Abdulhamid II (1876–1909): Origins And Solutions, Doktora Tezi, Princeton University, Department of History, 1976.

<sup>27</sup> S. Yazıcı. Նշվ. աշխ., էջ 244:

<sup>28</sup> G. Çetinsaya. “Abdülhamidi Anlamak”: 19. Yüzyıl Tarihçiliğine Bir Bakış.– “Sosyal Bilimleri Yeniden Düşünmek”, İstanbul, 1998, s. 142.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 140:

քննադատում է հայերի և քրիստոնյաների նկատմամբ սուլթանի վերաբերմունքը<sup>30</sup>:

Իսլամամետ «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո (2002 թ.) սկսվեց Աբդուլ Համիդի գործունեության վերարժեքման նոր փուլ: Այժմ Թուրքիայի՝ Մ. Քեմալի հռչակած աշխարհիկության սկզբունքներից հեռանալու համատեքստում Համիդը իսլամի և, մասնավորապես, խալիֆայության ինստիտուտի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար վերածվում է խորհրդանշական պատմական կերպարի: Նա դառնում է հանրամատչելի պատմագրության, պատմական-գեղարվեստական վեպերի և ֆիլմերի կիսադիցական հերոս: Զուգահեռ ավելանում է Համիդին նվիրված գիտական աշխատությունների քանակը, նրա կյանքն ու գործունեությունը դառնում են տարբեր նախագծերի, գիտաժողովների, քննարկումների թեմա: Մեջբերենք Մուսթաֆա Արմաղանի վերջին տարիներին շատ մեծ ճանաչում ստացած «Փայլերի հետ Աբդուլ Համիդի պարը» երկհատորյակից մի հատված. «Պատմության կարևորագույն դեմքերի անծայրածիր աշխարհները հասկանալը լույս է սփռում անցյալի, ներկայի ու ապագայի վրա...: Նրա (Աբդուլ Համիդի. – Տ. Հ.) աննմանությունը բխում է այն փաստից, որ նրանից առաջ նվազագույնը մեկ դար նման սուլթան չէր եղել և նրանից անմիջապես հետո եկողներն էլ սարսափներ բերեցին: Այժմ կամաց-կամաց Աբդուլ Համիդի իրական դեմքը բացահայտվում է: Ինչպես կասեր Նիզամեթթին Նազիֆը, Աբդուլ Համիդը սկսում է նորովի փայլատակել»<sup>31</sup>:

Այսպիսով, Աբդուլ Համիդ II կերպարի՝ արհեստականորեն դրական լույսի ներքո պատկերումը, տասնամյակների պատմությունն ունեցող մեղադրանքներից հրաժարվելը հանգեցնում են անհիմն իդեալականացման ու քննադատական մոտեցումների նվազման: Նման քայլերի արդյունքում Համիդը վերածվում է անձեռնմխելի, երբեմն նույնիսկ անիրական թվացող պատմական հերոսի, ով քննադատության ենթակա չի կարող լինել:

ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА АБДУЛА ГАМИДА II И ЕЕ  
ОСВЕЩЕНИЕ В ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ  
(Очерк)

ТАТЕВИК АКОБЯН

Резюме

33-летнее правление Абдула Гаида II является одним из самых противоречивых периодов османской истории, анализ кото-

<sup>30</sup> S. Deringil. The Armenian Question Is Finally Closed: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895–1897.– “Comparative Studies in Society and History”, Cambridge, 2009, Vol. 51, Issue 2, p. 351.

<sup>31</sup> M. Armağan. Նշվ. աշխ., էջ 30:

рого продолжает оставаться в сфере интересов не только турецких, но и иностранных исследователей. До сих пор одни историки характеризуют его как «красного султана и тирана», а другие считают «великим правителем». Интересно, что, независимо от политической ориентации и существующих противоречий, практически все турецкие историки дают позитивную оценку политике Абдула Гамида по отношению к национальным меньшинствам, в особенности армянам. Искусственно созданный положительный образ султана и отказ от многолетних обвинений в его адрес приводят к необоснованной идеализации и сокращению критических подходов. В результате, Абдул Гамид II превращается в неприкосновенного, иногда даже кажущегося почти не-реальным героя, критика в адрес которого просто невозможна.

THE INTERNAL POLICY OF ABDUL HAMID II AND ITS  
INTERPRETATION IN THE TURKISH HISTORIOGRAPHY  
(Outline)

TATEVIK HAKOBYAN

S u m m a r y

Abdul Hamid II's 33-year reign was one of the most contradictive periods of the Ottoman history which analysis is still within the frame of interest of not only Turkish, but also foreign scholars. Until now, some historians describe him as "red sultan and tyrant" while others call him "great ruler". It is noticeable that despite of political orientations and contradictions nearly all Turkish historians approve Abdul Hamid's policy against national minorities, particularly Armenians. The artificially created positive image of the Sultan and denial of decades-long accusations cause unfounded idealization and the reduction of critical approaches. As a result, Abdul Hamid II becomes untouchable and sometimes even a seeming unreal historical hero who cannot be criticized.

---

---

ԲԻԹԼԻՍԻ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
(1880-ական թվականներ – 1914 թ.)

ՌՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

Այն տարածքից, որտեղ 1870-ական թվականների վերջերին ստեղծվեց Բիթլիսի նահանգը, հայերի արտագաղթն ու պանդխտության մեկնելը դարերից եկող երևույթներ էին, սակայն 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո դրանք նոր թափ ստացան՝ պայմանավորված հետզհետե վատթարացող քաղաքական ու տնտեսական պայմաններով: Պանդխտությանն ու արտագաղթին նպաստող քաղաքական գործոններն էին՝ օսմանյան իշխանությունների և տեղի քրդական ցեղերի՝ հայերի նկատմամբ հետզհետե ուժեղացող հալածանքները՝ կոտորածները, հարստահարությունները (բռնություններ, սպանություններ, հրդեհումներ, հայերին պատկանող ունեցվածքի, անասունների կողոպուտ), օրինական ու ոչ օրինական հարկահանությունը, հողագրկման և ունեգրկման գործընթացները, ու այս ամենի արդյունքում՝ հայերի ընդհանուր անապահովության վիճակը: Նշված գործոնները մեծ դեր ունեցան, հատկապես, սուլթան Աբդուլ Համիդ II կառավարման տարիներին (1876–1909 թթ.) տեղի ունեցած ջարդերի և հայերի նկատմամբ քրդերի հարստահարությունների՝ նրա կողմից փաստացի քաջալերման արդյունքում:

Բիթլիսի նահանգից արտագաղթի և պանդխտության տնտեսական պատճառներն էին՝ երկրամասի աստիճանաբար խորացող ընդհանուր սոցիալ-տնտեսական թերզարգացածությունը, դրանից բխող՝ հողագործության ու անասնապահության ցածր եկամտաբերությունը: Քաղաքական գործոններով էր հատկապես պայմանավորված հայերի տեղաշարժ-արտագաղթի գործընթացը, տնտեսական գործոններով՝ պանդխտության երևույթը:

Դեպքերին ժամանակակից, ծնունդով մշեցի Սարգիս Բդեյանը, ի մի բերելով Տարոնից և ընդհանրապես Բիթլիսի նահանգից արտագաղթի և պանդխտության պատճառները, արձանագրում է. «Շատեր որեւէ պատճառով մը կը կորսնցնէին իրենց ունեցածը, կամ սալաֆի<sup>1</sup> պատճառով, կամ տոկոսով պարտքի տակ կ'իյնային, կամ երկրագործութենէ անպակաս փորձանքներու կ'ենթարկուէին. ինչպէս՝

---

<sup>1</sup> Սալաֆ՝ հողի զրավադրում: Դրա մասին մանրամասն տե՛ս Գ. Տեր-Կարապետեան. Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պոլիս, 1911, էջ 28–29:

մարախ, տաւարի ցաւ, երաշտ, և այլն, և յուսահատ վիճակի մը մէջ կը ստիպուէին դիմելու պանդխտութեան: Իսկ 1890 էն յետոյ, գաղթականութիւնը ընդհանուր երեւոյթ դարձաւ, ամենամեծ մասով՝ երկրէն հեռանալու, փախչելու դիտաւորութեամբ, հարստահարութենէ ազատելու, իր կեանքը փրկելու համար»<sup>2</sup>:

Դրա հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ 1908 թ. երիտթուրքական հեղափոխութիւնից հետո երկրում սահմանադրական կարգերի հաստատման, աբդուլհամիդյան ճնշումների միջնորդութիւնով և արեւմտահայ հասարակական-քաղաքական կյանքի որոշակի աշխուժացման պայմաններում, արտագաղթի ու պանդխտութիւնի գործընթացներին զուգահեռ նկատվեցին դեպի Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներ հայրենադարձութեան միտումներ, հատկապէս, Կովկաս պանդխտութեան մեկնած և/կամ արտագաղթած հայերի շրջանում:

Ստորև փորձենք դիտարկել 1880-ական թվականներից 1914 թ. Բիթլիսի նահանգի հայ բնակչութեան միգրացիոն գործընթացների երեք դրսևորումները՝ արտագաղթ, արտագնա աշխատանքի մեկնում (պանդխտութիւն) և ներգաղթ (հայրենադարձութիւն)<sup>3</sup>:

#### Ա. Արտագաղթ

Ինչպէս արդեն նշեցինք, Բիթլիսի նահանգի հայերի տեղաշարժագաղթերը պայմանավորված էին և՛ քաղաքական, և՛ տնտեսական պատճառներով: Եթէ քաղաքական պատճառները, հատկապէս, իրենց ամբողջ ուժգնութեամբ դրսևորվեցին Աբդուլ Համիդի իշխանութեան տարիներին՝ մինչև 1908 թ., ապա տնտեսական գործոնները դեր ունեցան ուսումնասիրութեան ամբողջ ժամանակաշրջանում:

Այսպէս, 1890-ական թվականներին Արեւմտյան Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Հենրի Լինչը արձանագրում էր, որ Բիթլիսի նահանգից հայերի արտագաղթի թափը փոփոխական է իր ուժգնութեամբ՝ կախված այն բանից՝ բերքը լավ է, թե՞՞ աղետալի, իսկ քրդերը քաջալերված են, թե՞՞ զսպված: Նա նշում էր, որ նահանգում իր մնալու ժամանակ բազմաթիվ շրջանների հայ գյուղացիներ ջանքեր էին գործադրում իրենց պարտքերը մարելու և երկրից հեռանալու թույլտվութիւն ստանալու ուղղութեամբ<sup>4</sup>:

Աշխարհագրական առումով կարելի է առանձնացնել Բիթլիսի նահանգի հայ բնակչութեան գաղթի երեք ուղղութիւններ՝ ներնահանգային, հարևան նահանգներ, Օսմանյան կայսրութեան այլ շրջաններ և դեպի արտերկիր: Հայ բնակչութեան զանգվածային

<sup>2</sup> Ս. Բդէեան, Մ. Բդէեան. Հարազատ պատմութիւն Տարօնոյ, խմբ. Ադան Տարօնեցի, Գահրիէ, 1962, էջ 29:

<sup>3</sup> Թեև պետք է ընդունել, որ սկզբնաղբյուրներում ոչ միշտ է առկա գաղթի և պանդխտութեան երևոյթների տարանջատումը:

<sup>4</sup> Տե՛ս H.F.B. Lynch. Armenia: Travels and Studies, Volume II: The Turkish Provinces, London, 1901, p. 426.

ներնահանգային և դեպի հարևան նահանգներ շարժ է նկատվում, հատկապես, Սասունի՝ 1894 և 1904 թթ. ապստամբությունների և համիդյան կոտորածների ժամանակ, երբ սեփական կյանքը փրկելու նպատակով փախուստի էին դիմում ու փախստական դառնում, օսմանյան բանակի պատժիչ գործողությունների թիրախ՝ հայաբնակ բնակավայրերի հայերը: Ներնահանգային շարժերը, որպես կանոն, կարճաժամկետ բնույթ ունեին. կոտորածների դադարից և հարաբերական անդորրի հաստատումից հետո բնակչության մեծ մասը վերադառնում էր լքված բնակավայրեր<sup>5</sup>:

Ավելի տևական էր քրդերի սիստեմատիկ հարստահարությունների հետևանքով իրենց բնակավայրը թողած հայերի արտագաղթը: Քրդերից պաշտպանություն գտնելու նպատակով հայ բնակչությունը տեղափոխվում էր կամ տվյալ շրջանի կենտրոնական բնակավայր, կամ հարևան՝ ավելի խոշոր հայկական բնակավայրեր, կամ նահանգի սահմաններից դուրս դեպի երկրի հյուսիս-հյուսիսարևելյան շրջաններ՝ էրզրումի նահանգի՝ Բիթլիսի նահանգին սահմանակից (հատկապես Խնուս) և/կամ Ռուսաստանին մոտ շրջաններ (Բալաքետի գավառ), կամ արտերկիր՝ Ռուսաստան ու ԱՄՆ<sup>6</sup>:

1880–1890-ական թվականներին հայերի կողմից լքվեցին Բիթլիսի նահանգի տասնյակ բնակավայրեր: Այսպես, 1902 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի կարգադրությամբ Օսմանյան կայսրության, այդ թվում՝ Բիթլիսի նահանգի հայկական թեմական իշխանությունների կողմից անցկացված հայ բնակչության «վիճակագրության» տեղեկանքներում և տեղեկագրերում իրենց հայ բնակչությունից զուրկ էին նշվում Խուսի հետևյալ 14 բնակավայրը՝ Գործվար, Պարծղենք, Տափ, Սխուրս, Կոտրչկանք, Փիրիվանք, Ռաբաթ, Փարիզանք, Հավաստիկ, Դառնճի կհոռ, Խիվերք,

<sup>5</sup> Այսպես, բրիտանական դիվանագիտական զեկուցագրերից մեկում նշվում է, որ 1894 թ. Սասունի ապստամբության ժամանակ Տալվորիկի փախստական հայերն ապաստան էին գտել Փսանքի հայկական գյուղերում, անգամ Դիարբեքիրի նահանգում և արդեն 1895 թ. գարնանը սկսել էին վերադառնալ իրենց հայրենի բնակավայրեր (տե՛ս Turkey №1 (1895), Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey Events at Sassoon, and Commission of Inquiry at Moush – presented to both Houses of Parliament by Command of Her Majesty; September 1895, London, 1895, p. 132): Բրիտանացի դիվանագետ, Սասունի դեպքերը քննող հանձնաժողովում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Համոնդ Սմիթ Շիֆլին հաղորդում է, որ 1895 թ. ամռան դրությամբ ջարդի ընթացքում ավերված Սասունի Տալվորիկի, Վերին Գավառի, Գավառի և Շատախի քսանչորս հայաբնակ գյուղեր էին վերադարձել 6.000–7.000 սասունցի հայեր (նշված շրջանների բնակչության թիվը նախքան Սասունի ինքնապաշտպանական մարտերը, ըստ նույն հեղինակի, մոտ 10.000 շունչ էր) (նույն տեղում, էջ 204):

<sup>6</sup> Բիթլիսի նահանգից հայերի՝ քրդական ճնշումներից փրկվելու նպատակով ռուսական սահմանին մոտ տեղափոխվելու փաստն արձանագրում է Հ. Լինչը (տե՛ս H.F.B. Lynch. Նշվ. աշխ., էջ 426):

Թաղ, Խաչթաղ, Ակներ<sup>7</sup>: Գենջի գավառակում որպես «այժմ քրդաբնակ» էին նշվում հետևյալ ութ բնակավայրը՝ Հովիտ, Շարկիր, Կինճ, Քարուտ, Վերսըք, Կարմիր վանք, Բողքար, Ավերբերդ<sup>8</sup>: Սղերդի գավառի Սղերդի գավառակում նախկինում հայաբնակ էր նշվում Փաթան գյուղը, էրուհի գավառակում՝ 17 բնակավայր (Միլիանս, Փլվելա, Պեշի, Տերե Սերե, Կովիթա, Չարխիա, Կուրճիտա, Քերի, Տերե Հասթա, Գավլե Շուխա, Ավանս, Թերհան, Շերիքա, Հրելա, Քիաշե, Նիտ, Քելհոք), Շիրվանի գավառակում 1895 թ. կոտորածների արդյունքում հայաթափված և 1902 թ. դրությամբ տաճկաբնակ էին նշվում 21 բնակավայր (Տարզըն, Շրմելան, Պեյթհարուն, Տեր Բապան, Սեմատար, Մուրատ, Պեմլա, Կունտո, Ներպան, Հավել, Ռրճլե, Ռրճլախ, Հարոնք, Սոգ, Սեֆոր, Փուլ, Մեզրե, Ղարուե, Սաբ, Ֆելունա, Ալենգա): Խարզանի գավառակում հիշատակվում է 28 հայաթափված բնակավայր (Հըլլար, Բեյթ Համմ, Սալաց, Սուլան, Թափի, Կանըշըրք, Ղարֆաս, Տերբեսա, Պաճըֆթ, Մելքա, Տելան, Պաշտըրմ, Հաֆըզ, Գանիգուլ, Զենկովիլ, Կուլամասի, Ճըմզարկ, Սեյտ Մերիամ, Մերճե, Մելհա, Կըրկուրգ, Տուվիք, Բզեզի, Բիրհապիպ, Սըլեվանք, Սեր Խոշի, Գայնտար, Գոմըք)<sup>9</sup>:

Համիդյան կոտորածների տարիներին մեծապես տուժեց Խիզանի գավառակի հայ բնակչությունը: Ըստ Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի՝ 1895 թ. դեկտեմբերի 19-ի տեղեկագրի՝ Խիզանի գավառակի Խիզանի շրջանի գյուղերում կոտորածներին զոհ էր գնացել 400, Սպարկերտի շրջանում՝ 298, Ստորին Կարկառում՝ 68 հայ<sup>10</sup>: Կողոպտվեցին Խիզանի գավառակի հայաբնակ գյուղերի մեծ մասը, 29 հայաբնակ գյուղերի հայ բնակչությունը բռնի մահմեդականացվեց<sup>11</sup>:

<sup>7</sup> Տե՛ս «Վիճակագիր Մշոյ Առաջնորդական բոլոր թեմին – վարժարանաց, եկեղեցեաց, վանորէից, վկայարանաց, շէն եւ աւեր (ի դաշտ Մշոյ եւ շրջակայս) – Մատրանց, Նուիրական տեղեաց, բնակչութեան Աւանայ եւ Շինից եւ Եկեղեցական պաշտօնեից Հավաքեալ ըստ հրահանգի Ազգ. Պատրիարքարանի 1902 Յունվ. 5 եւ Յունիս 21 թիւ Շրջաբերական Գրութեանցն Գեր. Պատր. Փոխանորդ Տ. Խոսրով ծ. վրդ. Պէհրիկեան».– Է. Յ. Դաշնակցութեան Բոստոնի արխիվ, Անձնական գրութիւններ, Տէր-Կարապետեան Գեղամի (Տատրակ) Փ., պահ. 16, դ. 1, էջ 153:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 180:

<sup>9</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, Փ. 412, ց. 1, դ. 1856, թ. 4, 5, 7, 8–12 («Վիճակագրութիւն Սղերդի եւ իր թեմերուն, 12 մարտ, 1902»): Բնակավայրերի անունների գրությունը տալիս ենք ըստ սկզբնաղբյուրի: Համեմատութեան համար՝ Սղերդի, Բարվարի, Շիրվանի, էրուհի հայաբնակ բնակավայրերի ցուցակը տե՛ս Գ. Մ. Բաղալյան. Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները.– «Վէմ համահայկական հանդես» (Երևան), Ը (ԺԴ) տարի, 2016, թիվ 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ XIX–XXIX:

<sup>10</sup> Տե՛ս «Արարատ» (Էջմիածին), ԻԹ տարի, 1896, փետրվար, էջ 246:

<sup>11</sup> Տե՛ս Մշո թեմի առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի՝ 1895 թ. դեկտեմբերի 26-ով թվագրված տեղեկագիրը.– Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և



Այս աղետն էլ ավելի խթանեց գավառակից հայերի՝ ներքին (դեպի Մուշ, Մանազկերտ և Բուլանըխ) ու արտաքին (դեպի Ռուսաստան) արտագաղթը, գործընթաց, որը սկիզբ էր առել դեռևս XIX դարի կեսերից և չդադարեց մինչև Մեծ եղեռնը<sup>12</sup>:

Ինչպես Արևմտյան Հայաստանի այլ նահանգների, այնպես էլ Բիթլիսի նահանգի հայ բնակչության մշտական արտագաղթի հիմնական ուղղություններն էին Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ռուսական կայսրությունը: Բիթլիսի նահանգից հայերի՝ դեպի ԱՄՆ արտագաղթին նպաստեցին XIX դ. կեսերին Մուշ և Բիթլիս քաղաքներում ավետարանական համայնքների հաստատումն<sup>13</sup> ու ամերիկյան բողոքական միսիոներների կրթական գործունեությունը<sup>14</sup>: Բիթլիսում հաստատված ամերիկյան միսիոներներից մեկը 1887 թ. թվագրված իր զեկուցագրում նշում էր, որ բողոքական ուսումնական հաստատությունների հայ ուսանողներից և ուսուցիչներից շատերը մեկնում են ԱՄՆ՝ Կալիֆորնիայում փող վաստակելու ակնկալիքով. «Այստեղի խեղճ, ծեծված մարդկանց կարծիքով գնացողները մեծ կարողություն տեր են դառնում կամ աներևակայելի մեծ աշխատավարձ են ստանում: Երևակայությունը գրգռող վառ պատմությունները քաջալերում են երիտասարդների մեջ արտագաղթը, ինչին նպաստում է նաև նրանց կողմից անգլերենի իմացությունը»<sup>15</sup>:

Աբդուլ Համիդի վարչակարգը շատ դեպքերում ձգտում էր խոչընդոտել հայերի՝ դեպի ԱՄՆ արտահոսքը՝ երկյուղ կրելով, որ նրանցից ոմանք ԱՄՆ քաղաքացիություն ձեռք բերելուց հետո կարող են վերադառնալ և հեղափոխական գործունեություն ծավալել՝ որպես ԱՄՆ քաղաքացիներ օժտված լինելով համապատասխան անձեռնմխելիությամբ<sup>16</sup>: Հայերի արտագաղթը դեպի ԱՄՆ սահմանափակելու քայլերից էր 1892 թ. կեսերին Օսմանյան Թուրքիայի նավահանգիստներ ճանապարհորդական թույլտվությունների՝ թեսքերենների, տրամադրելու կարգի խստացումը<sup>17</sup>: Բիթլիսի նահանգից

նյութերի ժողովածու: Կազմ., խմբ. և առաջաբ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991, էջ 131–135:

<sup>12</sup> Տե՛ս նաև Գ. Մ. Բաղալյան. *Նշվ. հոդվ.*, էջ VII–XIX:

<sup>13</sup> 1855 թ.՝ Մուշում (տե՛ս Կ. Սասունի. Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 304), 1864 թ.՝ Բիթլիսում (տե՛ս R. Mirak. *Torn Between Two Lands, Armenians in America, 1890 to World War I*, Cambridge, Massachusetts, 1983, p. 42):

<sup>14</sup> Նշված ժամանակաշրջանում Բիթլիս քաղաքում գործում էին ավետարանական համայնքին պատկանող երկու գիշերօթիկ վարժարան՝ նախատեսված առանձին աղջիկների ու տղաների համար, ինչպես նաև՝ ամերիկյան որբանոց [կրթարանների ցանկը տե՛ս Յուզարձան Հայ ավետարանականաց և ավետարանական եկեղեցիոյ (Քննական ծանօթութիւններով), գրեց՝ վեր. Կ. Պ. Ատանալեան, Ֆրեզնո, Կալիֆորնիա, 1952, էջ 472–474]:

<sup>15</sup> R. Mirak. *Նշվ. աշխ.*, էջ 42:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 46:

Հայերի արտագաղթը դեպի ԱՄՆ աճի միտումներ դրսևորեց 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո, երբ վերացվեցին երկրից դուրս մեկնելու՝ արգելահամրության վարչակարգի կողմից սահմանափակումները<sup>18</sup>:

Դեպի ԱՄՆ և Ռուսաստան հայերի արտագաղթը մեծ ծավալներ ընդունեց հատկապես համրության կոտորածների տարիներին: 1894–1896 թթ. Այսրկովկասի տարածք ներգաղթեցին հազարավոր արևմտահայեր: 1896 թ. միայն Կարսի մարզում գաղթականների ընդհանուր թիվը կազմում էր 12.334 շունչ՝ հիմնականում էրզրումի և Վանի նահանգների՝ Ռուսական կայսրությանը սահմանամերձ շրջաններից հայեր<sup>19</sup>: Գաղթական այս բազմությունը մեջ, անշուշտ, պատկանելի թիվ պետք է կազմեին նաև Բիթլիսի նահանգի արևելյան շրջաններից (Մանազկերտ, Բուլանըխ) հայ փախստականները:

Արգել Համրդի վարչակարգի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության՝ Վանի և Բիթլիսի նահանգների հայ բնակչության համար ժողովրդագրական հետևանքների ամփոփ պատկերն է տալիս դեպքերին ժամանակակից, 1895–1899 թթ. Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս Վ. Մակսկին. «1894–1896 թթ. Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններում տեղի են ունեցել բավականին էական փոփոխություններ բնակչության տեղաշարժի մեջ: Հազարավոր հայեր գնացել են մասամբ Ռուսաստան, մասամբ Պարսկաստան, մասամբ վերաբնակվել են մի կազախից (գավառակ–Ռ. Թ.) մյուսը: Ինձ հայտնի են ընտանիքներ, որոնք անգամ տեղափոխվել են Ամերիկա: Որոշ կազաներ գրեթե ամբողջությամբ զրկվել են իրենց նախկին հայ բնակչությունից, որի փոխարեն մասամբ այլ կազաներից, մասամբ այլ վիլայեթներից և մասամբ անգամ Պարսկաստանից տեղափոխված քրդեր են հայտնվել»<sup>20</sup>:

Բ. Հայ արական բնակչության արտագնա աշխատանքի մեկնելը (պանդխտություն)

Վերն արդեն նշել ենք, որ Բիթլիսի նահանգից հայ արական բնակչության արտագնա աշխատանքի մեկնելու (պանդխտության) երևույթը գլխավորապես պայմանավորված էր տնտեսական գործոններով:

<sup>18</sup> Տե՛ս Մ. Բդէեան, Մ. Բդէեան. *նշվ. աշխ.*, էջ 28:

<sup>19</sup> Տե՛ս А. Амбарян. Численность и национальный состав «временно-проживающих» в Закавказье и Восточной Армении в 1914 г. — «Вестник общественных наук» АН АрмССР, 1979, № 8, с. 38. Տե՛ս նաև Մ. Մալխասյան. *Կարսի մարզի բնակչությունը, երևան, 2015*, էջ 32:

<sup>20</sup> В. Т. Маевский. Военно-Статистическое описание Вансаго и Битлиссаго вилаетовъ. Статистическій очеркъ. Тифлисъ, 1904, с. 194.

Նահանգի հայ բնակչության գլխավոր զբաղմունքը գյուղատնտեսությունն էր: Հողագործությունը ու անասնապահությունը զբաղվող հայերի մեծ մասը գտնվում էր ծանր պարտքերի տակ, և պանդխտությունը դիտվում էր դա թոթափելու հիմնական միջոցներից մեկը: «Տարօնցի հայք ամենն ալ գրեթէ պարտուց տակ ընկճուած են, ստակի տէր մարդ դժուարին է գտնել մէջերնին, իրենց պարտք ընդհանրապէս տաճիկներու և քրդերու է ծանր տոկոսով»<sup>21</sup>, – նշվում է 1890-ական թվականներին վերաբերող մի վկայության մեջ: Որպես պարտքի կուտակման պատճառ՝ առանձնացվում էին «երկրագործութեան անյաջողութիւնները և հարստահարութիւնները»<sup>22</sup>: Հայը դիմում էր պանդխտության «...պարտքէն ազատելու և ապրելու ճար մը գտնելու յուսով, ուր կամ ...կը մեռնի կամ քանի մը տարիէն կը վերադառնայ քիչ ստակով և կամ ձեռնունայն, և պանդխտութիւնը, որուն արդէն վարժուած կըլլայ, երկրագործութենէն լաւ համարելով՝ նորէն շուտով կը վերադառնայ, մինչև որ պանդխտութեան գոհ ըլլայ»<sup>23</sup>:

Պանդխտության պատճառների մեջ իրենց դերն էին խաղում նաև սուբյեկտիվ գործոններ՝ արագ և գյուղատնտեսության զբաղմունքի համեմատ՝ ավելի հեշտ եկամուտ ստանալու ձգտումը: «Գիւղացին ամբողջ տարին կ'աշխատէր և հազիւ կրնար հագուստի մը գինը ճարել և իր ընտանիքի անդամներուն մերկութիւնը ծածկել, մինչդեռ տեսաւ, որ ոմանք Պոլիս կ'երթան, անկից Աթենա, կամ ուրիշ տեղ մը և օրական 10–20 դրուշ կը շահին: ... Ան հաշիւ չ'ըներ թէ մարդը կըրնայ գործ չըգտնել, կըրնայ հիւանդանալ, կըրնայ որեւէ դժուարութեան հանդիպիլ...»<sup>24</sup>, – գրում է Ս. Բդեյանը:

Հայտնի գրող և հրապարակախոս Բաֆֆին դեռևս 1875 թ. հետևյալ կերպ էր նկարագրում երևույթը. «Գաղթականութեան հարցը ամենագլխաւոր տեղն է բռնում Տաճկաստանի հայերի վիճակի մէջ: Ամեն տարի հազարաւոր երիտասարդներ Վանից, Մուշից, Բաղեշից, Կարինից և այլ գաւառներից դիմում են դէպի Կ. Պոլիս իրենց ընտանիքի համար ապրուստ շահելու: Այդ հոսանքը գնալով աւելի ընդարձակ քանակութիւն է ստանում, քանի նոյն երկրներում ժողովրդի ապրուստի հնարները դժուարանում են»<sup>25</sup>:

Բիթլիսի նահանգից պանդխտության հիմնական ուղղություններն էին Կովկասը, որտեղ գնում էին նահանգի արևելյան շրջաններից հայերը, Պոլիսն ու Զմյուռնիան՝ նահանգի արևմտյան շրջանների հայերի նախընտրելի ուղղությունն էր, Կիլիկիան և Հալեպը՝ այդ

<sup>21</sup> Մշոյ աշխարհ. – «Լուսնայ» (Տիփլիս), 1899, № 1, էջ 122:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>24</sup> Տե՛ս Ս. Բդեյան, Մ. Բդեյան. նշվ. աշխ., էջ 28:

<sup>25</sup> «Մշակ» (Թիֆլիս), 16. I. 1875:

ուղղութիւններով էլ մեծ էր Սասունի ու Սասունից հարավ ընկած այլ շրջանների հայութեան հոսքը<sup>26</sup>:

Մշեցի և սասունցի պանդուխտները, չլինելով որևէ արհեստի տեր, որպես ոչ որակյալ աշխատուժ, իրենց պանդխտութեան վայրերում ներգրավված էին ամենաձանր աշխատանքների մեջ՝ հիմնականում ծառայելով որպես բեռնակիրներ մայրաքաղաքի և ծովեզրյա առևտրային այլ քաղաքների նավահանգիստներում, օրավարձու բանվորներ՝ փոներում ու ջրաղացներում (Հալեպ), երկաթգծի շինարարութեան մեջ (Կիլիկիա) և այլն:

Մուշի տարբեր բնակավայրերից պանդխտութեան աշխարհագրութեան մասին պատկերացում է տալիս Ս. Բդեյանի հուշերից հետևյալ հատվածը. «Այդ շրջանին զանազան կեդրոններու մէջ, բեռնակրութեան որոշ դիրքեր Մշեցոց ձեռքը մնացած էին: ... Պոսոյ մաքսատան բանուորներուն մէջ մեծ թիւ մը կը կազմէին Մշեցի ջրհանկիրները և անուն հանած էին իրենց կռուազանութեամբ: ... Շատ մը վաճառատուններու պահապաններն էին Մշեցիները: Իզմիրի մէջ, կարգ մը հայ վաճառականներու քով՝ նորէն Մշեցիներ տեղաւորուած էին իբրեւ բեռնակիր և պահապան: Սպարթայի, Սիվրիսարեանի, Պաքըրճեանի, եւ այլն, խաներուն մէջ բաւական թիւով խափուղցիներ, Արաղցիներ կ'աշխատէին: Էտիրնէ, քանի մը շոգեշարժ ջրաղացներու մէջ կ'աշխատէին Արտօնքցիներ, Խարսեցիներ, Վարդենիսցիներ: Տէտէաղաճ, իբրեւ նաւահանգիստ, բաւական թիւով գիւղացիներ կ'աշխատէին: Հոս աւելի յարմար գետին մը գտան՝ ընտանիքով հաստատուելու համար: ... Շատերը ցրուած են Պուլկարիոյ զանազան քաղաքները և կայարանները, ուր որ կրցած են գործ գտնել: ... Նոյնպէս մեծ թիւով Մշեցիներ կը գտնուէին Ռումանիոյ Կալաց, Իպրայիլ և Ճորճովա քաղաքներուն մէջ»<sup>27</sup>:

Պանդուխտները, որպես կանոն, իրենց կյանքն անցկացնում էին ծայրահեղ թշվառութեան մեջ՝ կենցաղային տարրական պայմաններից զուրկ նկուղային կացարաններում՝ հաճախ իրենց տալով գինեմոլութեան, ծխամոլութեան ու խաղամոլութեան: Նման ապրելակերպը, անշուշտ, հանգեցնում էր պանդուխտների բարձր մահացութեան մակարդակի: Այսպես, 1900-ական թվականների սկզբներին Հալեպում սասունցի պանդուխտների կյանքը նկարագրող մի վկայութիւնում կարդում ենք. «Սասունցիք փոռներու վատառողջ միջնորդներն տակ կեդտոտ ու անխնամ կեանք մը վարող դժբախդ արարածներէ կազմուած են, որոնք հակառակ իրենց զօրաւոր հսկայ

<sup>26</sup> Դեպի Հալեպ սասունցիների պանդխտութեան մասին մանրամասն տե՛ս Վ. Քէշիշեան. Սասուն-Հալեպ պատմական առնչութիւններ. սասունցիներ Հալեպի մէջ. – «Հայկազեան Հայագիտական Հանդէս» (Պէյրութ), հ. ԻԴ, 2004, էջ 93–138: Տե՛ս նաև՝ L. Vahram Shemassian. The Sasun Pandukhts in Nineteenth-Century Aleppo. – Armenian Baghesh/Bitlis and Taron/Mush, R. Hovannisian (ed.), Costa Mesa, Calif., 2001, pp. 175–189.

<sup>27</sup> Ս. Բդէեան, Մ. Բդէեան. նշվ. աշխ., էջ 27–28:

կազմին, հետզհետե կը ծիւրին ... եւ անհամար զոհեր կուտան, իսկ նիւթապէս ալ իրարու դէմ մրցելով իրարու կը վնասեն եւ շահածնին եւս վաշխառուներու քսակը կը լեցնեն ... այս խեղճերը իրենց տգիտութեան հետ խաղամոլ, ծխամոլ ու գինեմոլ ալ են»<sup>28</sup>:

Հալեպ պանդխտութեան մեկնած սասունցիները «գետնափոր նկուղներու տամուկ անկիւնները կեանք վարելով, տարածամ կը զառամին ու կը կորսնցնեն իրենց առողջութիւնը»: Որպէս հետեւանք՝ նրանց մահվան տարիքի միջին թիվը 27-ից չէր անցնում<sup>29</sup>:

Պանդխտութիւնը բազմաթիւ դժվարութիւններով ուղեկցվող զբաղմունք էր: Պանդուխտի վաղվա օրվա անորոշութեանն ու մտահոգութեանը գումարվում էր անվտանգութեան ի սպառ բացակայութիւնը: Նրանցից շատերը ճանապարհին հարձակման էին ենթարկվում, ձերբակալվում, սպանվում, վիրավորվում: Մանավանդ վտանգավոր էր ուս-թուրքական սահմանն անցնելը, ինչը շատերին չէր հաջողվում, և ամիսներ շարունակ նրանք մուրացկանի վիճակում թափառում էին սահմանամերձ շրջաններում: Պանդխտութեանից վերադարձողներին սպառնում էր ճանապարհին ոչ միայն կողոպտվելու, իրենց վաստակած փողից, այլ հաճախ նաև կյանքից զրկվելու վտանգը: Բազմաթիւ պանդուխտներ այդպէս էլ չէին կարողանում կամ չէին ուզում վերադառնալ՝ համալրելով նահանգից ընդմիջտ հեռացած հայերի թիվը<sup>30</sup>:

Բիթլիսի նահանգից հազարավոր հայերի համար պանդխտութեան հիմնական ուղղութիւններէից էր Կ. Պոլիսը: Անվանի հայագետ Հրաչյա Աճառյանի տվյալներով՝ Սկյուտար թաղամասի հայ բնակչութիւնն ի սկզբանէ կազմված էր Մուշից գաղթած հայերից<sup>31</sup>:

XIX դարի 90-ական թվականներին Կ. Պոլսի մեջ կար 60.000 հայ գաղթական, որոնք, ըստ իրենց նախկին բնակչության վայրերի, մասնաբաժնային էին տարբեր զբաղմունքների մեջ: Այսպէս, ակնեցի հայերի հիմնական զբաղմունքն էր սեղանագործութիւնը, վանեցիները՝ բեռնակրութիւնն ու խոհարարութիւնը, մշեցիները՝ բեռնակրութիւնը, կեսարացիները՝ որմնադրութիւնը և ներկարարութիւնը, սեբաստացիները՝ բաղնեպանութիւնը, երզնկացիները՝ սուրճի վաճառքը<sup>32</sup>:

Կ. Պոլիս մեկնած պանդուխտներից շատերը ծայրահեղ թշվառ կյանք էին վարում, սովի, զրկանքների և հիվանդութիւնների զոհ

<sup>28</sup> Տե՛ս Վ. Քէշիշեան. նշվ. հոդվ., էջ 128:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Ս. Պողոսյան. Պատմագիտական ուսումնասիրութիւններ: Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 1, Երևան, 2008, էջ 315–316:

<sup>31</sup> Հր. Աճառյան. Հայ գաղթականութեան պատմութիւն, Երևան, 2002, էջ 631:

<sup>32</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև Ս. Բդէեան, Մ. Բդէեան. նշվ. աշխ., էջ 27:

էին դառնում մայրաքաղաքի քարվանսարանների, բաղնիքների ու սրճարանների նկուղների «մուխ և գաղջ պատերի մեջ»<sup>33</sup>:

Հայ համալները՝ որպես Կ. Պոլսի հայ բնակչության առավել անպաշտպան և խոցելի խումբ, Բանկ Օտոմանի գրավման գործողութ-յունից հետո՝ 1896 թ. օգոստոսի 26–29-ին, մայրաքաղաքում տեղի ունեցած ջարդերի հիմնական թիրախներից էին՝ տալով մեծ թվով զոհեր: Դեպքերին ժամանակակից գերմանացի լրագրող Մագդա Նեյմանը գրում է. «Համալները Բիթլիսի, Վանի, Խարբերդի վիլայեթների հողագործ բնակչության թարմ ուժերն էին, որոնք քրդերի ճնշումների և թուրք պաշտոնյաների գոփողականության հետևանքով կտրվել են իրենց սնող հողից: Ամեն տարի հազարներով նրանք ձգտել են Կոստանդնուպոլիս, Ջմյուռնիա և եվրոպական ու ասիական Թուրքիայի այլ ծովեզրյա քաղաքներ՝ ծանր ֆիզիկական աշխատանքով վարձատրվելու նպատակով ... 1896 թ. Կոստանդնուպոլսում համալների կոտորածից հետո, թուրքերը ստիպված էին նրանց (առժամանակ – Ռ. Թ.) փոխարինել քրդերով»<sup>34</sup>:

Մուշից մեկնած պանդուխտները երկար ժամանակ՝ երբեմն վեցյոթ և ավելի տարիներ, չէին վերադառնում հայրենի բնակավայրեր, հաճախ իրենց մասին չէին տեղեկացնում անգամ սեփական ընտանիքներին: Տեղական հայ եկեղեցական կառույցները քայլեր էին ձեռնարկում՝ խնդրին լուծում տալու համար: Այսպես, 1899 թ. Մշո վիճակի առաջնորդական տեղապահ Բաբկեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյանը շրջաբերական նամակով հատուկ դիմում է գա-վառից երկար ժամանակով բացակա հայ պանդուխտներին՝ նրանց հորդորելով սեփական որպիսություն մասին լուր ուղարկել իրենց կանանց: Շրջաբերականում ասվում էր, որ եթե երեք ամսվա ընթացքում պանդուխտները նման նամակներ չուղարկեն, ապա տեղապահն իրեն իրավունք է վերապահելու անգամ նրանց կանանց արտոնել վերստին ամուսնանալ<sup>35</sup>:

Բիթլիսի նահանգից հայերի արտագաղթի և պանդուխտության ամբողջական վիճակագրություն գոյություն չունի: Առկա են տվյալներ առանձին բնակավայրերից, լավագույն դեպքում՝ առանձին գավառակների հայաբնակ գյուղերից պանդուխտների թվի վերաբերյալ: Այսպես, 1883 թ. Արևմտյան Հայաստանի նահանգներով ճանապարհորդած հայ ազգագրագետ և մանկավարժ Մանուել Միրախորյանը նշում է, որ Մշո դաշտի խոշոր հայկական բնակավայրերից մեկից՝ Խասգյուղից, Կ. Պոլիս էր պանդխտել մոտ 400 մարդ (գյուղում նա հաշվում է 300 տուն հայ), իսկ համաձայն 1913–1914 թթ. Կ.

<sup>33</sup> Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Երևան, 2003, էջ 117:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 116:

<sup>35</sup> Տե՛ս «Արեւելեան մամուլ» (Ջմյուռնիա), 15. XI. 1899 («Ընկեցիկ անայր կիներ»): Արձագանքելով խնդրին՝ 1900 թ. սկզբին «Մշեցի պանդուխտներու լքեալ կիները» հոդվածով է հանդես գալիս նաև ծնունդով մշեցի, անվանի մտավորական Գեղամ Տեր-Վարապետյանը [տե՛ս «Ծաղիկ» (Կ. Պոլիս), 14. I. 1900, 15. I. 1900]:

Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարի<sup>36</sup> տվյալները՝ խոսքից պանդուխտների թիվը 380 էր (340 տուն հայ)<sup>37</sup>: 1880-ական թվականների վերջերին միայն Հունաստանի Կորնթոսի պարանոցի ջրանցքի կառուցման աշխատանքներում ներգրավված էր 2.000–3.000 մշեցի պանդուխտ<sup>38</sup>:

Մեծ եղեռնի նախօրյակին Բիթլիսի նահանգից պանդխտության ծավալների մասին պատկերացում են տալիս Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1913–1914 թթ. կազմակերպված մարդահամարի տվյալները: Հարցաթերթի հարցերից մեկը վերաբերում է պանդուխտների թվին: Նույն հարցաթերթի «ընդհանուր ծանոթություն» սյունակում առաջարկվում էր նաև նշել, թե հատկապես որ երկրներում են գտնվում տվյալ շրջանից պանդուխտները: Համաձայն հավաքված տվյալների՝ Մուշի գավառի Սասունի գավառակում հաշվառվել էր 706 պանդուխտ, որպես պանդխտության վայր գրեթե բացառապես նշվել էր Հալեպը<sup>39</sup>:

Բիթլիսի գավառի Բիթլիսի և Խլաթի գավառակներում հաշվառվել էր 4.449 պանդուխտ (համեմատության համար՝ նույն տարածքում մարդահամարի ընթացքում հաշվառված առկա ընդհանուր բնակչության թիվը 35.776 էր, այսինքն՝ պանդխտության մեջ էր գտնվում Բիթլիսի և Խլաթի գավառակների հայ բնակչության շուրջ 10 %-ը և, համապատասխանաբար, քանի որ պանդխտության էին դիմում գրեթե բացառապես տղամարդիկ, հայ արական բնակչու-

<sup>36</sup> «Մարդահամար» եզրույթն օգտագործում ենք որոշակի վերապահությամբ՝ հետևելով սկզբնաղբյուրին: Օսմանյան կայսրությունում ինչպես օսմանյան կառավարության, այնպես էլ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից անցկացվող բնակչության հաշվառման միջոցառումները չեն համապատասխանում ժամանակակից մարդահամարներին ներկայացվող պահանջներին (միասնական ծրագիր, ընթացակարգ, միաժամանակություն, ընդգրկվածություն և այլն):

<sup>37</sup> Տե՛ս Մ. Միրախորեան. Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Մասն Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 45–46, տե՛ս նաև Հայ Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) Նուբարյան գրադարանի արխիվ (Փարիզ), APC/BNu, DOR 3/3, f. 58: 1913 թ. հայկական մամուլում շրջանառվող մեկ այլ տվյալով խոսքից պանդուխտների թիվը շուրջ 600 էր՝ 400 տուն հայ բնակչության պայմաններում (տե՛ս «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանի «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը» ակնարկը, «Արօր. միամսեայ հանդէս. Ընդհանուր գրական, գիտական-ժողովրդական եւ խաղաղասիրական», IV տարի, 1913 թ. դեկտեմբեր, էջ 77):

<sup>38</sup> Տե՛ս Մ. Բդէեան, Մ. Բդէեան. նշվ. աշխ., էջ 27:

<sup>39</sup> Տե՛ս ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 45–48: Համեմատության համար նշենք, որ 1880 թ. Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ կատարված մարդահամարի տվյալներով Հալեպում կար 303 սասունցի պանդուխտ (տե՛ս Վ. Քէչիչեան, նշվ. հոդվ., էջ 114): Ծնունդով սասունցի Մկրտիչ քահանա Մուրադյանը 1910 թ. գրած «Սասունցիները Հալեպի մեջ» հոդվածում մոտ 4.000 սասունցի պանդուխտ է հաշվում Հալեպում և շրջակայքում (նույն տեղում, էջ 127):

յան շուրջ 20 %-ը): Նշված տարածքի համար որպես պանդխտության երկրներ նշվում էին Ռուսաստանը և ԱՄՆ<sup>40</sup>:

Բուլանըխի գավառակում 1913–1914 թթ. մարդահամարի տվյալներով գրանցվել էր 5.691 պանդուխտ (հայ բնակչության ընդհանուր թիվը՝ 24.476 շունչ): Որպես պանդխտության վայր նշվում էր բացառապես Ռուսաստանը<sup>41</sup>:

1913–1914 թթ. մարդահամարի ընթացքում Մուշի գավառակում (մոտավորապես համապատասխանում էր Մշո դաշտի տարածքին) գրանցվել էր 3.026 պանդուխտ (առկա հայ բնակչության թիվն ըստ նույն տվյալների՝ 65.441 շունչ): Պանդխտության աշխարհագրությունը խայտաբղետ էր՝ ինչպես երկրի ներքին շրջաններ՝ Կ. Պոլիս, Հայեպ, Իզմիր, Խնուս, Կարին, այնպես էլ արտերկիր՝ Ռուսաստան, ԱՄՆ, Ռումինիա<sup>42</sup>:

Գենջի գավառի Խուլփի գավառակում (Խիանքի և Խուլփի գյուղախմբեր) 1913–1914 թթ. մարդահամարի տվյալներով հաշվառվել էր 405 պանդուխտ (հաշվառված առկա հայ բնակչության թիվը՝ 8.316 շունչ): Այսինքն՝ պանդխտության մեջ էր շրջանի հայ արական բնակչության շուրջ 10 %-ը: Որպես պանդխտության վայր գրեթե բացառապես նշվում էր Հայեպը, առանձին դեպքերում՝ Կարինը և Դիարբեքիրը («Տիգրանակերտ»)<sup>43</sup>:

Վերոնշյալ տվյալների հիման կարելի է ենթադրել, որ Մեծ եղեռնի նախօրյակին պանդուխտ էր Բիթլիսի նահանգի Բիթլիսի և Մուշի գավառների ընդհանուր հայ բնակչության շուրջ 7–8 %-ը կամ հայ արական բնակչության շուրջ 14–15 %-ը: Հաշվի առնելով, որ աղբյուրները չեն հաղորդում Սղերդի գավառի հայ բնակչության շրջանում պանդխտության երևույթի տարածված լինելու մասին, և մարդահամարի հարցաթերթերում նշված գավառից պանդուխտների թվաքանակի վերաբերյալ տվյալները բացակայում են, ապա նշված գավառի հայ բնակչության թվի ավելացմամբ պանդխտության տոկոսային հարաբերակցությունն ամբողջ Բիթլիսի նահանգի հայ բնակչության համեմատ պետք է մի փոքր նվազ լինի՝ 12–13 %<sup>44</sup>:

<sup>40</sup> ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 48–52.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 55–59:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>44</sup> 1913–1914 թթ. Հայոց պատրիարքարանի մարդահամարների տվյալների հիման վրա Ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն Գևորգյանի կատարած հաշվարկով Բիթլիսի նահանգի Բիթլիսի և Մուշի գավառներից Մեծ եղեռնի նախօրյակին պանդուխտ էր 15.307 հայ, իսկ առկա հայ բնակչության թիվը 196.840 շունչ էր (տե՛ս R. H. Kevorkian, P. B. Paboudjian. Les Armeniens dans l'Empire Ottoman a la veille du genocide, Paris, 1992, pp. 59–60): Համապատասխանաբար, պանդուխտ էին նշված տարածքի ընդհանուր հայ բնակչության մոտ 7 %-ը և արական սեռին պատկանող հայ բնակչության մոտ 14 %-ը:



Գ. Ներգաղթի (Հայրենադարձության) միտումները 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում իշխանություն եկած երիտթուրքերը վերականգնում են դեռևս 1876 թ. ընդունված սահմանադրության գործողությունը, ինչպես նաև քայլեր են ձեռնարկում Աբդուլ Համիդի վարչակարգի «զուլումի» քաղաքականության որոշ տարրեր վերացնելու, հասարակական-քաղաքական կյանքն ազատականացնելու ուղղությամբ: Արևմտահայության օգտին անցկացվում են որոշ բարելավումներ. վերացվում է Արևմտյան Հայաստանում հաստատված արտակարգ ռեժիմը, որը սահմանափակում էր հայերի՝ գավառից գավառ, գյուղից քաղաք տեղափոխվելու, արտերկիր մեկնելու իրավունքը, թույլատրվում է կոտորածների ու հալածանքների հետևանքով երկրից փախած հայերին վերադառնալ, բանտերից և աքսորավայրերից արձակվում են բազմաթիվ հայ կալանավորներ, դադարեցվում է հայդուկների հետապնդումը, ինչի շնորհիվ շատերը դուրս են գալիս թաքստոցներից ու վերադառնում իրենց տները, մեծացվում են հայերի ներկայությունն և կշիռը տեղական կառավարման մարմիններում և այլն<sup>45</sup>:

Մնունդով մշեցի, դեպքերին ականատես Միսակ Բդեյանը, անշուշտ, որոշակի չափազանցություններ, հետևյալ կերպ է նկարագրում 1908 թ. սահմանադրության հռչակումից հետո առաջ եկած նոր իրողությունները. «Մշոյ գաւառի ամբողջ հայութիւնը լայն շունչ մը առաւ. այլեւս չկային նախկին հարստահարութիւնները, տուրքերու ապօրինի գանձումները, ժանտարմներու վատ արարքները, միւլթազմծիներու կողմէ գիւղերու թալանումը, խաֆիրութեան»<sup>46</sup> տուրքը ... հայութիւնը, որ իր հոգեվարքի վերջին օրերը կ'ապրեր, նորէն սկսաւ վերակենդանանալ, իր աշխատունակութեամբ, տոկունութեամբ և ջանասիրութեամբ, դեռ մէկ երկու տարի չանցած, ամէն բանի տէր դարձաւ»<sup>47</sup>:

Աբդուլ Համիդի իշխանության տարիներին քրդերի միջոցով հայերին զսպելու քաղաքականության հետևանքով, քաղաքականութ-

<sup>45</sup> Տե՛ս Ա. Ս. Համբարյան. Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 20–21: Տե՛ս նաև Վ. Բայբուրդյան. Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 608:

<sup>46</sup> «Խաֆիրը» կամ «խաֆիրությունն» առաջացել է արաբերեն խաֆիր կամ դաֆիր բառից, որ նշանակում է պահապան: Դրա էությունն այն էր, որ մի դեպքում գյուղացիներն էին դիմում ազաններին կամ քուրդ ցեղապետներին՝ խնդրելով պաշտպանություն կողմնակի հարձակումներից, պարտավորվելով, որ կվճարեն դրա համար, մի այլ դեպքում ազաններն իրենք էին իրենց հայտարարում գյուղացիներին կողմնակի հարձակումներից պաշտպանողներ և այդ պաշտպանության համար ստիպում էին նրանց վճարել զանազան տուրքեր [տե՛ս Ա. Ս. Համբարյան. Սոցիալական տերմիններն Արևմտյան Հայաստանում (XIX դար – XX դարի սկիզբ).– ՊԲՀ, 1992, № 2–3, էջ 137–138]:

<sup>47</sup> Ս. Բդեյան, Մ. Բդեյան. նշվ. աշխ., էջ 269:

յուն, որով քուրդ ցեղապետերին փաստացի արտոնվում էր անպատիժ գործել հայերի նկատմամբ ցանկացած ապօրինություն, քրդերին հաջողվել էր տիրանալ հայերին պատկանող բազմաթիվ վարելահողերի, քրդացնել բազմաթիվ հայկական բնակավայրեր, դրամի շորթման ռեժիմ հաստատել Բիթլիսի նահանգի առանձին շրջանների հայկական գյուղերի նկատմամբ: Երիտթուրքական հեղափոխությունից հետո քուրդ ցեղապետերը՝ որպես Աբդուլ Համիդի «հետադիմական» ռեժիմի հենարան ուժ, որոշ չափով կորցրին իրենց նախկին արտոնյալ կարգավիճակը: Զգալիորեն թեթևացավ նահանգի հայերի նկատմամբ նրանց լուծը:

Վերոնշյալ գործընթացների հետևանքով սկսեցին Արևմտյան Հայաստան վերադառնալ նախկինում Բալկանյան երկրներում և Կովկասում հանգրվանած տարագիրներից շատերը: Համաձայն Բիթլիսում Ռուսաստանի հյուպատոս Վ. Շիրկովի 1909 թ. սեպտեմբերի գեկուցագրի՝ 1909 թ. սկզբներին արդեն Տարոն էր վերադարձել մոտ 5.000 մարդ: Հյուպատոսը նաև նշում էր, որ Ռուսաստանից Թուրքիա վերադարձող հայերի քանակն աստիճանաբար մեծանում է<sup>48</sup>: Ըստ մամուլում հրատարակված տվյալների՝ 1909 թ. սեպտեմբերի դրությամբ Արևմտյան Հայաստան էր հայրենադարձվել մոտ 20.000–25.000 վանեցի ու մշեցի հայ<sup>49</sup>:

Սկսեցին աստիճանաբար Բիթլիսի նահանգ վերադառնալ նաև քրդերի ճնշումների հետևանքով ներքին տեղահանված, այսինքն՝ հարևան նահանգներում ապաստան գտած որոշ հայեր: Մասնավորապես, այդ երևույթի մասին իր նոթերում արձանագրում է 1910 թ. սեպտեմբերին Խուսթ-Բոնաշենի գյուղերով ճանապարհորդած Արշակ Սաֆրաստյանը, ով այդ ժամանակ զբաղեցնում էր Դիարբեքիքում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսի պաշտոնը<sup>50</sup>: Այսպես, նա նշում է, որ Խուսթ-Բոնաշենի շրջանի Գեղոնք (Գելոնք) բնակավայրում 1907 թ. գրեթե հայ չէր մնացել, սակայն 1910-ին իր այցելությունից ժամանակ գյուղը համեմատաբար շեն էր և բարգավաճ: Գյուղի հայ մեծավորի խոսքերով՝ շուտով գյուղ պետք է վերադառնային նախկինում Խնուս փախած չորս ընտանիք<sup>51</sup>:

<sup>48</sup> Տե՛ս Ա. Ս. Համբարյան. նշվ. աշխ., էջ 20–21:

<sup>49</sup> Տե՛ս «Վաթանը ձեզ կանչում է».- «Հորիզոն» (Թիֆլիս), 4. IX. 1909:

<sup>50</sup> Տե՛ս Ա. Սաֆրաստյան. Խոյթ-Բոնաշեն գաւառները. ուղեւորական տեղեկագրութիւններ.- «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1933, Խէ տարի, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 612 («Սահմանադրութենէն ի վեր զգալապէս թեթեւցած էր Շէկօցի եւ Խուսթեցի աշիրէթների լուծը այս (նկատի ունի Խուսթ-Բոնաշենի թաղվորձոր հայաբնակ բնակավայրը – Ռ. Թ.) եւ շրջակայ հայ գիւղերի վրայէն, եւ ցիրուցան գաւառացիները տակաւ կը վերադառնային իրենց հողերի վրայ»): Դրա հետ պետք է արձանագրել, որ քրդերի կողմից հայկական գյուղերի ասպատակումները և հարստահարությունը չէին վերացել. Ա. Սաֆրաստյանն իր նոթերում նշում է նման մի քանի օրինակներ:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 613:

Իր բնակչությունը սկսել էր վերականգնել և նույն շրջանի Լորտնձոր (Լողրձոր) բնակավայրը: Եթե 1907 թ. Ա. Սաֆրաստյանի այցելության ժամանակ այնտեղ կար ընդամենը 7 տուն հայ, ապա 1910-ին գյուղի հայ տների թիվը հասել էր 23-ի: «Այժմ սահմանադրութենէն յետոյ վերադարձած էին փախստականներ եւ դեռ պիտի գային ուրիշներ»<sup>52</sup>, – հաղորդում է հեղինակը:

Դրա հետ մեկտեղ 1912 թ. հոկտեմբերին Տարոնի թեմի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը տեղի հայության վիճակին նվիրված իր զեկուցագրերից մեկում արձանագրում էր. «Օսմանեան սահմանադրութեան հռչակումը որքան որ մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ բոլոր հայերու կողմանէ՝ սակայն անոր արդիւնքը չեղաւ այն, ինչ որ կ'ակնկալէր ճշուած ժողովուրդը. իրաւ է, մէկ երկու տարի մասնակի խաղաղութիւն մը և ապահովութիւն տիրեց ու երթևեկութիւնները դիւրացան, բայց հիմնական բարենորոգում մը և բարեկարգութիւն մը երբէք չգործադրուեցաւ և մեր թեմի մութ անկիւնները, ինչպէս են Սասուն, Խոյթ, Բռնաչէն, Մօտկան և այլն, նոյն իսկ ենթարկուած մնացին հնէն ի վեր տիրող բռնութեանց ներքև և որ աստիճան մը աւելի ծանրացաւ. որովհետև ի լուր սահմանադրութեան ճշուածները շարժում մ'ըրին անոնց լուծը թօթափելու, սպանութիւններ, առևանգութիւններ և աւարառութիւններ ու գողութիւններ շարունակուեցան և չարագործները մնացին անպատիժ»<sup>53</sup>:

Բիթլիսի նահանգ վերադարձող հայերը բախվեցին մի շարք խնդիրների, որոնցից ամենակարևորն ու սուրը հողայինն էր՝ աբդուհամիդյան բռնաճշումների տարիներին քուրդ և թուրք խոշոր հողատերերի կողմից տարբեր ճանապարհներով հայերից խլված հողատիրները հետ ստանալու հարցը: «Հայերը բռնութեան շրջանին ոչ միայն կողոպտած էին, ոչ միայն հազարաւոր պատուական կեանքեր գոհուած էին, այլ Համիտի հայաջինջ քաղաքականութենէն քաջալերուած թուրք ու քիւրտ պէյեր ու աղաներ հայերու կալուածներ յափշտակած էին. դիւղ չկայ, որ այդ գրկանքին ենթարկուած չըլլար: ... Այս մասին մանաւանդ անտանելի է այն հայերու վիճակը, որոնք ժամանակին սուրէ և հուրէ փախչելով գաղթած էին աստ ու անդ. մեծ մասը ոռոսական հողի վրայ ապաստանած ու սահմանադրութեան լուրը առնելով վերադարձած էին հայրենիք. ասոնք մինչև այսօր էլ չկրցան ձեռք ձգել իրենց կալուածները ու կը մնան երեսի վրայ դռնէ դուռ թափառական, ոչ վարելահող ունեն և ոչ

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 615: Հայերի ներգաղթի մասին հեղինակն արձանագրում է նաև Խոյթ-Բռնաչէնի թաղավանք և Շամեանք բնակավայրերի մասին խոսելիս (տես Ա. Սաֆրաստյան. Խոյթ-Բռնաչէն գաւառները. ուղեւորական տեղեկագրութիւններ. – «Հանդէս ամսօրեայ», 1934, ԽԸ տարի, մայիս-հուլիս, էջ 308):

<sup>53</sup> «Հողային խնդիրը Տարօնում (Քաղուածք մի զեկուցագրից)». – «Արարատ» (էջմիածին), 1913, Տարի ԽԷ, հունվար, համար Ա, էջ 90: Տե՛ս նաև Հ. Մ. Պողոսյան. Սասունի պատմութիւն, Երևան, 1985, էջ 288:

տուն–բնակարան, ոչ ոք կը գլխայ անոնց արտասուքներուն»,<sup>54</sup> – գրում էր Ն. Խարախանյանը:

Թեպետ Օսմանյան կայսրության հայերի առջև ծառայած բազմաթիվ խնդիրները մնում էին չլուծված՝ ամեն դեպքում կենտրոնական իշխանությունների կողմից սխտեմատիկ հալածանքների թուլացման փաստը դրական ազդեցություն ունեցավ այդ թվում՝ նաև ներգաղթի (հայրենադարձության) միջոցով Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի աճի վրա:

1914 թ. փետրվարի 8-ին ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիրը, որով նախատեսվում էր բարենորոգումներ իրականացնել Օսմանյան կայսրության արևելյան հայաբնակ նահանգներում: Այդ համաձայնագրի դրույթների կյանքի կոչելը, անշուշտ, բարելավելու էր հայության կացությունը և դրանով նպաստելու էր դեպի Բիթլիսի նահանգ հայերի հայրենադարձության միտումների ամրապնդմանը: Սակայն հայտարարված բարեփոխումներն այդպես էլ մնացին թղթի վրա. երիտթուրքական կառավարությունն Առաջին աշխարհամարտի բռնկումից անմիջապես հետո չեղյալ հայտարարեց բարեփոխումների համաձայնագիրը՝ մեկնարկ տալով Օսմանյան կայսրությունում հայ բնակչության բնաջնջման միջոցով Հայկական հարցի վերջնական լուծման իր ծրագրին:

ИЗ ИСТОРИИ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ АРМЯНСКОГО  
НАСЕЛЕНИЯ БИТЛИССКОГО ВИЛАЙЕТА  
(1880-е годы — 1914 г.)

РОБЕРТ ТАТОЯН

Резюме

Миграционные процессы армянского населения Битлисского вилайета Западной Армении за период с 80-х гг. XIX века до начала Первой мировой войны в 1914 г. характеризуются массовым внутренним и внешним оттоком армян. Главными причинами эмиграции битлисских армян были систематические преследования со стороны османских властей и местных курдских племен — погромы, убийства, общая незащищенность, двойное налоговое бремя, включающее в себя как законное налогообложение, так и незаконные поборы, случаи захвата земельных наделов и собственности.

<sup>54</sup> «Հողային խնդիրը ճարօնում (Քաղուածք մի գեկուցագրից)», էջ 90–91: Երիտթուրքական հեղափոխությունից հետո արևմտահայության կողմից առաջ քաշած հողային խնդրի մասին մանրամասն տե՛ս Գ. Տեր – Կարապետեան. նշվ. աշխ. (Բիթլիսի նահանգում հողի գրավման օրինակները՝ էջ 8–28): Տե՛ս նաև Հ. Մ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 283–290, Ա. Ս. Համբարյան. նշվ. աշխ., էջ 48–105:

Распространение получил также процесс отъезда армянского мужского населения Битлисского вилайета на заработки (пандхтутюн). Главными направлениями рабочей миграции битлисских армян являлись столица и прибрежные города Османской империи, Алеппо, Киликия, сопредельные страны — Российская империя (Восточная Армения и Кавказ), Греция, Румыния. Все большие темпы набирал процесс рабочей миграции в направлении США. Миграция рабочей силы была обусловлена главным образом экономическими причинами: общей экономической отсталостью региона и низкой производительностью земледелия и скотоводства — главных отраслей занятости армянского населения Битлисской провинции.

Вместе с этим, после Младотурецкой революции 1908 г. в атмосфере восстановления конституционного порядка, ослабления антиармянских репрессий эпохи правления султана Абдул-Гамида и оживления западноармянской общественно-политической жизни, параллельно с процессами эмиграции, наблюдалась и определенная тенденция к возвращению в родные места битлисских, ванских и эрзерумских армян, в особенности тех, кто ранее эмигрировал в Восточную Армению и на Кавказ.

FROM THE HISTORY OF THE MIGRATION PROCESSES OF THE  
ARMENIAN POPULATION OF BITLIS VILAYET  
(1880s – 1914)

ROBERT TATOYAN

S u m m a r y

The migration processes of the Armenian population of Bitlis vilayet of Western Armenia in the period from the 1880s until the eve of the First World War in 1914 are characterized by mass internal and external outflow of Armenians. The main causes of emigration of the Armenians were systematic persecutions by the Ottoman authorities and local Kurdish tribes—pogroms, killings, general insecurity, legal and illegal taxation, as well as cases of land-grabbing and deprivation of property.

The process of labor migration (pandkhtutyun) of the Armenian male population from Bitlis vilayet also became widespread. The main directions of the labor migration of the Bitlis Armenians were the capital and coastal cities of the Ottoman Empire, Aleppo, Cilicia, and the neighboring countries: the Russian Empire (Eastern Armenia and the North Caucasus), Greece, and Romania. The process of labor migration to the United States was gaining momentum. The labor migration was mainly due to economic reasons: the region's overall economic backwardness and low productivity

of agriculture and cattle breeding which were the main areas of employment of the Armenian population of the Bitlis province.

At the same time, after the 1908 Young Turk Revolution, in the climate conducive to the restoration of constitutional order, the easing of the anti-Armenian repression during the rule of Abdul Hamid, and the revival of the Western Armenian public and political life, parallel with the processes of emigration a definite trend emerged towards the return of the Bitlis, Van and Erzurum Armenians, especially those who previously emigrated to Eastern Armenia and the Russian Caucasus, to their home areas.

---

---

ՄԱԼԱԹԻԱ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԱՐԱՆԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ  
(1835–1870-ական թվականներ)

ԱՐՓԻՆԵ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

Մալաթիա գավառը գտնվում էր Արևմտյան Հայաստանի հարավային հատվածում, այն նախկինում մաս էր կազմել Մարաշի էյալեթի<sup>1</sup>, ապա՝ Դիարբեքիրի վիլայեթի: 1882–1883 թթ. սկսած գավառը մտնում էր նորաստեղծ Խարբեռզի նահանգի մեջ: Գավառն ընդգրկում էր Փոքր Հայքի հարավային ու արևելյան շրջանները, նաև պատմական Կոմմագենեի տարածքը (Հյուսնի Մանսուր, Պեհեսնի, Սամոսատ):

Մալաթիայի վերաբերյալ հաղորդումներ կան ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Նախ անդրադառնանք օտար աղբյուրներին: Գավառի հայաշատ կենտրոնը Մալաթիա քաղաքն էր, որը հայտնի էր պողատու այգիների առատությամբ, գեղեցիկ բնապատկերներով: Բնակավայրի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հրատարակել 1838–1839 թթ. Մահմուդ II սուլթանի կողմից թուրքական բանակի խորհրդատու նշանակված գերմանացի զինվորական, գեներալ Ֆելդմարշալ Հ. Մոլտկե Ավագը: Նա անձամբ եղել է Մալաթիայում, որի մասին էլ հիշատակել է 1841 թ. գերմաներեն լեզվով լույս տեսած նամականիում՝ «Նամակներ 1835–1839 թթ. Թուրքիայում տիրող իրավիճակի և իրադարձությունների վերաբերյալ»<sup>2</sup>: Մալաթիան, ըստ նրա, հազվագյուտ, շատ ջրառատ բնակավայր էր<sup>3</sup>, ինչը նպաստում էր, որ մշակվող այգիներն առանձնանային իրենց բերրիությամբ: Մալաթիայի գեղեցկության, այգիների տված առատ բերք ու բարիքի մասին Մոլտկեն գրում է 1838 թ. սեպտեմբերի 2-ի նամակում<sup>4</sup>: Հարկ է նշել, որ Մալաթիայի բազմատեսակ մրգերն ու բանջարեղենն արտահանվում էին այլ վայրեր:

1840 թ. է վերաբերում անգլիացի աշխարհագրագետ, ճանապարհորդ Ու. Էինսվորթի ուսումնասիրությունը<sup>5</sup>, որը ևս եղել է Մալաթիայում: Նա գրում է, որ Մալաթիան ուներ 500 տուն, որոնցից ա-

---

<sup>1</sup> Վարչական միավոր Օսմանյան Թուրքիայում, հետագայում՝ վիլայեթ, որը համապատասխանում է նահանգին:

<sup>2</sup> H. Von Moltke. Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1841.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 300:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 306:

<sup>5</sup> W. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea, and Armenia, vol. I. London, 1840.

մեն երկրորդն ավերված էր: Քաղաքը շրջապատված էր քանդվող աշտարակներով, պարիսպների ավերակներով<sup>6</sup>: Հեղինակը, թերևս, խոսում է հին Մալաթիայի մասին: Բանն այն է, որ XIX դ. վերջերին հիշատակվող Մալաթիան գավառի կենտրոնական բնակավայր է դարձել ավերի ուշ, քան բուն՝ հին Մալաթիան: Հին Մալաթիան հիշատակվում է նաև որպես էսկիշեհիր, այն այլ բնակավայր էր, թեև գտնվում էր նոր քաղաքի հարևանությամբ: Ինչ վերաբերում է նոր Մալաթիա բնակավայրին, ապա այն նախապես անվանվում էր Ասփուզի: Վերջինս գտնվում էր պտղատու այգիների մեջ և Մալաթիայի բնակիչների ամառանոցն էր: Էրզրումում անգլիացի հյուպատոս Ջ. Բրանտը գրում է, որ Մալաթիայի բնակիչները տարվա ընթացքում Ասփուզիում ապրել են 7 ամիս, ապա ձմեռել՝ Մալաթիայում: Ամռան ընթացքում Մալաթիան դատարկվում էր, մնում էին մի քանի պահակներ: Մալաթիան ու Ասփուզին միասին որպես մեկ բնակավայր, ըստ Բրանտի, ունեին 3923 ընտանիք, որից 2800-ը՝ թուրք, 1123-ը՝ հայ<sup>7</sup>: 1835 թ., երբ Բրանտն այցելել է Մալաթիա, Ասփուզին դեռևս ծառայում էր որպես ամառանոց:

Մալաթիա քաղաքի և շրջակա բնակավայրերի բնակիչների խաղաղ կյանքն էապես փոխվում է պատերազմական իրադրություն պայմաններում: Խոսքը եգիպտոսի և Օսմանյան կայսրության միջև 1839–1841 թթ. ծավալված երկրորդ պատերազմի մասին է: Թուրքական զորքը 1838–1839 թթ. ձմեռն անցկացնում է Մալաթիայում: Բնակչությունը չի կարողանում վերադառնալ քաղաք և մնում է ամառանոցում՝ Ասփուզիում: 1838 թ. դեկտեմբերի 8-ի մտերիմներին գրած նամակում Հ. Մուլտկեն, անդրադառնալով այս խնդրին, հայտնում է, որ հնարավոր չէր զորքի և բնակչության կեցությունը նույն բնակավայրում համատեղել, հետևաբար, որոշվել է Մալաթիան վերածել զորանոցի, իսկ բնակչությունը պետք է մնար ամառանոցում<sup>8</sup>: Սա է պատճառը, որ տարիների ընթացքում, երբ արդեն զորքը հեռացել էր, հին քաղաքը վերածվում է ավերակների, իսկ քանդված տների շինանյութի մի մասը բերվում է Ասփուզի: Այսպիսով, հին քաղաքի հաշվին նորն է մեծացել ու բարգավաճել:

Ըստ Հ. Մուլտկեի՝ 1839 թ. Մալաթիա քաղաքն ուներ 12000 բնակչություն<sup>9</sup>: Այս տվյալը գրեթե համընկնում է Էինսվորֆի վկայություն հետ, որի համաձայն՝ քաղաքի բնակչությունը 1840 թ. հաշվվում էր մինչև 11000 շունչ, որից 8000-ը՝ մահմեդական, 3000-ը՝ հայ<sup>10</sup>: Նշենք, որ բնակչության թվաքանակը վերոհիշյալ տվյալներ

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>7</sup> J. Brant. Journey through a part of Armenia and Asia Minor in the year 1835.– “Journal of the Royal Geographical Society of London”, vol. 6, 1846, p. 211.

<sup>8</sup> H. Von Moltke. Նշվ. աշխ., էջ 332:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> W. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, pp. 255 – 256.



րից կարող էր ավել լինել, քանի որ հին քաղաքում դեռևս կարող էին բնակիչներ լինել, բացի այդ, պատերազմական իրավիճակում հնարավոր չէր ավելի ստույգ հաշվարկել բնակչության քանակը:

Ռուս զինվորական, գեներալ Ե. Չիրիկովը ևս հաստատում է, որ Հին Մալաթիան բնակիչների կողմից վերջնականապես լքվել է 1838 թ., երբ Հաֆեզ փաշան, պարտվելով Նիսիբի մոտ, իր զորքի հետ հանգրվանել է այստեղ<sup>11</sup>: Դաժան ձմռան ընթացքում զինվորները քանդել և որպես վառելանյութ են օգտագործել քաղաքի շուրջ 200 տները: Ե. Չիրիկովը գրում է, որ հին քաղաքից դեպի հարավ 2 ժամ հեռավորության վրա, գտնվող Ասփուզին դարձել է բնակիչների համար հիմնական բնակավայր և ստացել Նոր Մալաթիա անունը<sup>12</sup>: Հետագայում արդեն այս բնակավայրը հիշատակվում է ուղղակի Մալաթիա: Պատերազմի տարիներին ինչպես Մալաթիայում, այնպես էլ Ասփուզիում տարածված էին հիվանդությունները: Եինսվորֆը վկայում է, որ միայն մի աշնան ընթացքում զինվորներից 400-ը մահացել են<sup>13</sup>: Բրանտը ևս հավաստում է, որ ժանտախտը, խոլերան և քրոչերի ասպատակությունները բերում են բնակչության նվազեցմանը. հետևաբար, ըստ հեղինակի, Մալաթիայի ընդարձակ ու բերրի դաշտը վերածվում էր գրեթե ամայի ու անմշակ տարածքի<sup>14</sup>: Այնուամենայնիվ, խաղաղության վերահաստատման պայմաններում բնակչությունը հետզհետե անցնում է բնականոն կյանքի և Նոր Մալաթիան կրկին վերականգնում է իր բարգավաճ դիրքը: 1840-ականներին, ըստ Չիրիկովի, այստեղ արդեն բնակվում էր մինչև 1500 տուն բնակիչ, որից հայեր էին 500 տունը<sup>15</sup>:

1830-ականների վերջերին Մալաթիա է այցելել նաև Ֆրանսիացի հնագետ, ճարտարապետ Շ. Թեքսիեն: Նա գրում է, որ Մալաթիան ուներ 30000 բնակիչ, հայերը կազմում էին 1200 տուն<sup>16</sup>: Շ. Թեքսիեն Մալաթիայի բնակչության մեջ նաև հաշվել էր քաղաքում կայանած զորքին, նրանց ընտանիքների անդամներին:

1850-ական թվականներից Մալաթիան հայտնվում է բողոքական միսիոներների և կաթոլիկ քարոզիչների տեսադաշտում. հետևաբար, հատկապես, հայ բնակչության թվաքանակի, նրանց զբաղմունքի

<sup>11</sup> Путевой журналъ Е. И. Чирикова, русского комиссара - посредника по турецко-персидскому разграничению 1849—1852. Записки Кавказского отдела Императорского русского географического общества. СПб., 1875.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ XXXV:

<sup>13</sup> W. Ainsworth. Notes on a Journey from Kaisariyah, by Malatiah to Bir or Birehjik, in May and June 1839.—“Journal of the Royal Geographical Society of London”, vol. 10, 1841, p. 321.

<sup>14</sup> J. Brant. Նշվ. աշխ., էջ 211:

<sup>15</sup> Путевой Журналъ Е. И. Чирикова, с. XXXV—XXXVI.

<sup>16</sup> Ch. Texier. Asie Mineure: Description géographique, historique et archéologique des provinces et des villes de la Chersonnése d'Asie. Paris, 1862, p. 589.

վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում միսիոներների տարբեր գրառումներում: Մասնավորապես, «The Missionary Herald» ամսագրի մի քանի համարներում տեղեկություններ կան Մալաթիա գավառի որոշ բնակավայրերի, այդ թվում՝ Մալաթիա քաղաքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Այսպես, 1852 թ. դրությամբ Մալաթիա քաղաքում ապրում էր 7000 հայ<sup>17</sup>: Այնթափում աշխատող միսիոներ Բ. Շնայդերը 1861 թ. գրում է, որ Մալաթիան մեծ ու գեղեցիկ քաղաք էր, ուներ 8000 հայ և մի քանի հազար «կղլբաշ» բնակչություն<sup>18</sup>: Ամերիկացի միսիոներ Ս. Ռիչարդսոնը, ով աշխատում էր Արաբկիրում, 1862 թ. հաղորդում է՝ Մալաթիայում ապրում էր 8000–10000 հայ և 40000 քուրդ ու թուրք բնակիչ<sup>19</sup>:

Մալաթիայում ավետարանական եկեղեցին հիմնվել է 1863 թ. 5 անդամով: Ամերիկացի միսիոներ Ջ. Բարտոնը գրում է, որ այդ շրջանում բողոքականները մայր եկեղեցու կողմից ենթարկվում էին մեծ հալածանքների. նրանք քարկոծվում էին, ժամերգության վայրերն ու տները «նզովվում էին, երեսաները փողոցներում ծեծվում էին, անգամ մահացածներին մերժվում էր թաղման տեղ տալ»<sup>20</sup>: Հետագա տարիներին արդեն իրավիճակը հանդարտվում է, աճում է բողոքականությունը ընդունած հայերի թվաքանակը: Նրանք հիմնում են կրթարաններ, զբաղվում նաև կանանց ու աղջիկների կրթության խնդրով: 1866 թ. Մալաթիայում բացվում է ավետարանական երկսեռ վարժարանը<sup>21</sup>: Նկատենք, որ մինչ այդ 1856–1860 թթ., Մալաթիայի Ս. Աստվածամայր եկեղեցու հարևանությունում կառուցվել էր Սահակյան մայր վարժարանը, իսկ 1872–1873 թթ. Ս. Հարություն եկեղեցու հարևանությունում բացվում է Ներսեսյան վարժարանը, 1875 թ. Ս. Երրորդություն եկեղեցու մոտ՝ Արամյան վարժարանը<sup>22</sup>: Նշենք, որ 1860–1870-ականների ընթացքում ինչպես ինքնաբերական, Ակնում, Արաբկիրում, այնպես էլ Մալաթիա քաղաքում որոշակի աշխուժություն և կրոնական, կրթական կյանքի զարթոնք էր նկատվում, ինչին, հայտնի փաստ է, նպաստում էին նաև բողոքական քարոզիչները:

Գ. Սրվանձտյանցը ևս արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մալաթիայի վերաբերյալ: Նա գրում է, որ Մալաթիայում չկային հարուստ դրամատեր հայեր, չկային նաև կարիքավորներ, այլ կային մարդիկ, որոնք «իրենց մեծամեծ տներով, ընդարձակ այգեստաններով, ծառաստաններով, և քիչ մը շահով երջանիկ կը կարծեին

<sup>17</sup> «The Missionary Herald», 1852, December, p. 359.

<sup>18</sup> «The Missionary Herald», 1861, December, p. 364.

<sup>19</sup> «The Missionary Herald», 1862, November, p. 351.

<sup>20</sup> «The Missionary Herald», 1892, February, p. 64.

<sup>21</sup> Ա. Ալպոյաճեան. Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրուիթ, 1961, էջ 725:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 707, 713–714:

ինքզինքնին»<sup>23</sup>: Հավելենք, որ Գ. Սրվանձտյանցի բերած տեղեկությունները վերաբերում են 1870-ական թվականների վերջերին:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ, ամենայն հավանականությամբ, Մալաթիա քաղաքում 1870-ականների դրությամբ, հաշվվում էր շուրջ 1500 տուն կամ մոտ 10000 հայ բնակիչ:

Ու. Էինսվորֆն իր աշխատանքում նաև անդրադառնում է Մալաթիա գավառի մի քանի հայաբնակ բնակավայրերի, բերում բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ: Մասնավորապես, Պեհեսնի գյուղաքաղաքում, որը հեղինակը նշում է Պեսնի ձևով, 1830-ականների վերջերին բնակվում էր 2500 տուն մահմեդական, 250 տուն հայ բնակիչ<sup>24</sup>: “The Missionary Herald” ամսագրի 1852 թ. համարներից մեկում նշվում է, որ Բեսնեն (Պեհեսնի) ունի շուրջ 1000 հայ բնակիչ, ըստ միսիոներների վկայության՝ այստեղ արդեն զգացվում էր կրոնական զարթոնքի սկիզբը: Նույն համարում անդրադարձ կա նաև Մալաթիա քաղաքի հայ բնակչության թվաքանակի մասին, որը հաշվվում էր 7000 հոգի<sup>25</sup>:

Հյուսնի Մանսուր ավանում (Ադիաման), ըստ Ու. Էինսվորֆի, 1840 թ. ապրում էր 800 տուն մահմեդական, 300 տուն հայ բնակիչ<sup>26</sup>: “The Missionary Herald” ամսագրի 1852 թ. համարներից մեկում տպված միսիոներների տեղեկագրում նշված է, որ Հյուսնի Մանսուրն ունի 2000 հայ բնակիչ<sup>27</sup>: Տվյալներ կան, որ XIX դ. կեսերին այստեղ են հաստատվել նաև գաղթականներ: Մասնավորապես, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև ԳԱԹ) Ս. Հայկունու ֆոնդում պահվում է մի տեղեկագիր, որի համաձայն՝ Ալաշկերտի Ամատ գյուղից մի խումբ գաղթականներ երկար դեգերումներից հետո՝ 1850 թ., ի վերջո, հաստատվել են Հյուսնի Մանսուրում կամ նրա հարակից գյուղերից մեկում<sup>28</sup>: Ըստ Մալաթիայի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններից հեղինակ Կարապետ քահանա Պեննեյանի՝ Հյուսնի մանսուրցիներն ավելի եռանդուն էին կրթական, ազգային գործերում, քան՝ մալաթիացիները<sup>29</sup>:

Գերգեն (Կարկառ) գյուղում, ըստ Ու. Էինսվորֆի, 1839–1840 թթ. ապրում էր 150 տուն բնակիչ, որից 25 տունը հայեր էին<sup>30</sup>: Չնայած

<sup>23</sup> Գ. Սրվանձտեանց. Թորոս աղբար, հ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 309:

<sup>24</sup> W. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, p. 265.

<sup>25</sup> “The Missionary Herald”, 1852, December, p. 359.

<sup>26</sup> W. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, p. 267.

<sup>27</sup> “The Missionary Herald”, 1852, December, p. 359.

<sup>28</sup> ԳԱԹ, Ս. Հայկունու ֆ., վ. 69, թ. 1:

<sup>29</sup> Կ. քահանա Պեննեյան. Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը եւ Գրիգոր Խանձեանի Մալաթիոյ գաւառաբարբառը, [Հալեպ, 1942], էջ 223:

<sup>30</sup> W. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia p. 276.

փոքր թվաքանակին՝ հայերն այստեղ ունեին եկեղեցի ու քահանա: Մալաթիայի տարածքում Ու. Էինսվորֆը հիշատակում է նաև Օլդիշ գյուղը, որն ուներ 40 տուն հայ և նույնքան էլ՝ քուրդ բնակչություն<sup>31</sup>:

Գրեթե նույն ժամանակահատվածին՝ 1847 թ. է վերաբերում Աբդուլ Մեջիդ սուլթանի երրորդ սենեկապետ Րադուպ բեյի հետ Բաբելոն ճանապարհորդած բժիշկ Բ. Ֆերուհիանի հիշատակությունը Հեքիմ Խան բնակավայրի մասին, որը, ըստ հեղինակի, ուներ 200 տուն քուրդ և 20 տուն հայ բնակիչ<sup>32</sup>: Մի փոքր այլ տվյալի ենք հանդիպում Ե. Չիրիկովի գրառումներում, ըստ որի՝ 1849–1850 թթ. Հեքիմ Խանն ուներ 150 տուն բնակիչ, որից հայ էր 40 տունը<sup>33</sup>: Ջ. Բրանտի տվյալներով էլ՝ 1835 թ. Հեքիմ Խանն աղքատիկ, փոքրիկ քաղաք էր, ուներ մոտ 250 թուրք և 35 հայ ընտանիք<sup>34</sup>:

Ըստ որոշ աղբյուրների՝ Հեքիմ Խանը նախկինում ունեցել է սովոր հայ բնակչություն, սակայն նրանց մի մասը փոխադրվել է այլ բնակավայր, մյուսներն էլ իսլամացել են: Այս բնակավայրի հայաթափման մասին բողոքական քարոզիչ, պատվելի Ջ. Բաջերը գրում է. «Մեծ էր մեր հիասթափությունը, երբ, հասնելով Հեքիմ Խան, լսեցինք, որ քրիստոնյաների մեծ մասն իրենց հարևան մահմեդականների կողմից շարունակվող բռնությունների պատճառով ստիպված են եղել լքել բնակավայրը: Այստեղ մնացել է 12–40 հայ ընտանիք, որոնց վիճակը խոսում է նրանց կեղեքումների մասին»<sup>35</sup>: Պեննեյանը ևս անդրադարձել է Հեքիմ Խան բնակավայրի հայ բնակչությանը, մասնավորեցնելով, որ իր աշխատանքը պատրաստելուց (20-րդ դ. սկիզբ) 50–60 տարի առաջ նրանց մի մասը գաղթել է Մալաթիա, Սեբաստիա, Յոզղատ, Կյուրին և այլ բնակավայրեր<sup>36</sup>:

Ըստ Ե. Չիրիկովի՝ 1849–1850 թթ. Աղջա Դադ գավառակի Հասան Չելեբի բնակավայրը 70 տուն ունեցող գյուղ էր<sup>37</sup>, ցավոք Չիրիկովը չի հստակեցնում հայերի թվաքանակը:

Ընդհանրապես, բնակչության տեղաշարժերը հատուկ էին նաև Մալաթիայի գավառի հայությունը, հետևաբար, կային բնակավայրեր, որոնք նախկինում մեծ կենտրոններ են եղել, սակայն ժամանակի ընթացքում վերածվել էին փոքրաթիվ հայություն գյուղական բնակավայրերի: Կ. Պեննեյանը հիշատակում է Քեսու, Անսուր գյուղերը, որոնք ժամանակին եղել են քաղաքատիպ ավաններ, սակայն XIX դ. վերջերին դարձել են փոքրաթիվ հայ բնակչությամբ գյուղ

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>32</sup> Բ. Ֆերուհիան. Ճանապարհորդություն ի Բաբելոն ընդ Հայաստան, յամի Տեառն 1847, Տպագրութիւն ի վանս Ս. Աստուածածնի ՅԱրմաչ, 1876, էջ 40:

<sup>33</sup> Путевой Журналъ Е. И. Чирикова..., с. XXXIV.

<sup>34</sup> J. Brant. Նշվ. աշխ., էջ 212:

<sup>35</sup> G. Badger. The Nestorians and their Rituals, vol. 1. London, 1852, p. 32.

<sup>36</sup> Կ. քահանա Պէննէեան. նշվ. աշխ., էջ 234:

<sup>37</sup> Путевой Журналъ Е. И. Чирикова..., с. XXXIV.

ղեր: Մասնավորապես, Քեսուղի հայերի մի մասը գաղթել էր Պեհեսնի, իսկ Անսուրի հայտնի գերդաստաններից հաստատվել էին Մալաթիա քաղաքում<sup>38</sup>:

Հայ բնակչության տեղաշարժերի պատճառները մի քանիսն էին, հիմնականը, սակայն, մահմեդական բնակչության կողմից ճնշումներն էին, որոնց տեղի տալով՝ բնակչության մի հատված հեռանում էր ծննդավայրից: Նախկինում հայաշատ գյուղական բնակավայրերից մի քանիսը դարձան ամբողջությամբ քրդաբնակ կամ թրքաբնակ, ինչպես Աղջա Դաղի, Պեհեսնիի ու մյուս բնակավայրերի բազմաթիվ գյուղեր: Ա. Ալպոյաճյանի կարծիքով, մասնավորապես, Աղջա Դաղի շրջանի քրդերն իսլամացած հայեր էին<sup>39</sup>: Այդ մասին է վկայում նաև Գ. Սրվանձտյանցի հիշատակությունը, ըստ որի՝ Աղջա Դաղի ձորերում և բլուրներում գտնվում էին բազմաթիվ խաչքարեր ու շինությունների ավերակներ<sup>40</sup>: Հարկ է նշել, որ Պեհեսնիի հայերի մի ստվար հատվածը, թեև պահում էր հայ ինքնությունը, այնուամենայնիվ, թրքախոս էր՝ զրկված եկեղեցի զնալու, քահանա ունենալու հնարավորությունից<sup>41</sup>:

Հայ բնակչության նկատմամբ իրականացվող հալածանքները, կրոնական ճնշումների գործելակերպը շարունակական բնույթ էր կրում և ընդգրկում էր Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ բնակավայրերը: 1878 թ. օգոստոսի 29-ին «Մշակ»-ում հրատարակվում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից 1876 թ. կազմված պաշտոնական տեղեկագիրքը գավառական հարստահարությունների վերաբերյալ, որում, ի թիվս այլ ճնշումների ու հալածանքների, հիշատակվում է Մալաթիա գավառում Մուսթաֆա բեկի՝ հայերի նկատմամբ ունեցած մոլեռանդ վերաբերմունքը, ինչպես նաև՝ մահմեդականների կողմից շան վզից խաչ կախելու և քաղաքի փողոցներում ու շուկաներում ման տալու նվաստացուցիչ իրողությունը:

Կրոնական, ազգային հալածանքները, ինչպես հայտնի է, բնորոշ էին Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ բնակավայրերի հայությունը: Հետևաբար, Մալաթիա գավառում ևս բազմաթիվ բնակավայրեր հայաթափ էին լինում, որոշներում էլ հայերը ենթարկվում էին իսլամացման, ոմանք էլ հարկադրաբար բնակություն էին հաստատում այլ վայրերում:

<sup>38</sup> Կ. քահանա Պէսնէեան. նշվ. աշխ., էջ 228, 233:

<sup>39</sup> Ա. Ալպոյաճեան. նշվ. աշխ., էջ 459:

<sup>40</sup> Գ. Սրվանձտեանց. նշվ. աշխ., էջ 321:

<sup>41</sup> Կ. քահանա Պէսնէեան. նշվ. աշխ., էջ 227:

АРМЯНСКИЕ НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ ОБЛАСТИ МАЛАТИЯ  
(1835–1870-е годы)

АРПИНЕ БАБЛУМЯН

Резюме

Область Малатия, которая в 1882–1883 гг. была присоединена к провинции Харберд Западной Армении, включала южную и восточные части Малой Армении, а также историческую территорию Коммагена.

В 1870-е годы некоторые иностранные ученые, военные, миссионеры путешествовали по территории Малатии и в своих мемуарах и книгах описывали населенные пункты региона, приводили данные о жизни и численности армян. В частности, немецкий генерал - фельдмаршал Х. Мольтке старший рассматривает обстоятельства переселения населения старого города Малатия в дачный участок Аспузи. Аспузи переименовали в Малатию, а старый город упоминается как Эскишеир.

Интересные факты приводятся также в дневниках британского географа, путешественника У. Ейнсворфа, русского генерала Е. Чирикова, в воспоминаниях американских миссионеров С. Ричардсона, Дж. Бартона и других.

Об исламизации и переселениях армянского населения данного региона приводятся ценные сведения и в исследованиях армянских авторов, в частности, священников Г. Срвандзтянца и К. Пеннеяна.

По данным иностранных и армянских источников, в 1835–1870-е годы в городе Малатия проживало около 1500 домов или 10 000 душ армян.

THE ARMENIAN SETTLEMENTS OF MALATIA REGION  
(1835–1870s)

ARPINE BABLUMYAN

Summary

Malatia district, which was joined to Kharberd province of Western Armenia in 1882–1883 included also the southern and the eastern parts of Lesser Armenia as well as the historical territory of Commagene. Travelling in the mentioned territory in the 1870s several foreign scientists, military men and missionaries described the settlements of the region in their

memoirs and books providing data about the amount of Armenian population and their life. A German Generalfeldmarschall H. von Moltke wrote about the circumstances of resettlement of population from an old town Malatia to summer cottages named Aspuzi. Aspuzi was renamed into Malatia while the old town was mentioned as Eskisheir.

There are also interesting facts described in the diaries of British geographer, traveler W. Ainsworth, Russian general E. Chirikov, in the memoirs American missionaries such as S. Richardson, J. Barton and others.

Armenian sources, particularly the studies of priests G. Srvandztyants, Kh. Penneyan also mentioned some valuable facts about islamization and resettlements of Armenians in Malatia region.

According to foreign and Armenian sources about 1500 houses or about 10000 Armenians lived in Malatia town in the 1835–1870s.

ԽԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՐԱՑՈՒՄԸ ԴԱՐԱԲԱՂՈՒՄ ԸՍՏ  
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ

ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1805 թ. Ռուսաստանին միացումից հետո Արցախ–Ղարաբաղում ծավալվող իրադարձությունները նոր բովանդակություն ստացան: Ուշագրավ է, որ թե՛ ռուսական արքունիքը և թե՛ ռուսական հպատակություն ընդունած Իբրահիմ խանն այս կարգավիճակը ժամանակավոր էին համարում: Եվ եթե ռուսական իշխանությունների համար պարզից էլ պարզ էր, որ Իբրահիմ խանը միայն ռազմական ուժի ճնշման պայմաններում ստիպված եղավ ընդունել ռուսական հպատակություն, ապա Ղարաբաղի խանի համար այդ պարտադրանքը բացառապես ժամանակ շահելու նպատակ ուներ: Ավելին՝ նա քաջ գիտակցում էր, որ ռուս-պարսկական գլխավոր բախումը դեռ առջևում է: Հետևաբար, ռուսական կառավարությունը, հաշվի առնելով ռուս-պարսկական հակամարտության հետագա խորացման հեռանկարը, շարունակում էր Ղարաբաղը համարել առաջնակարգ մարտավարական նշանակություն ունեցող տարածք: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Երևանի և Նախիջևանի խանությունները դեռևս անհաղթահարելի էին մնացել ռուսական զենքի համար: Ուստի, կասկածից վեր էր, որ ռազմաքաղաքական հարմար իրավիճակում ցարական կառավարությունն անդրադառնալու էր Ղարաբաղի կարգավիճակի փոփոխությանը: Այդ տեսանկյունից խնդրի առնչությամբ աղբյուրագիտական կարևոր տեղեկություններ է հաղորդում ռուսական նշանավոր «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր»<sup>1</sup> ժողովածուն:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերն ուսումնասիրելիս ամենից առաջ աչքի է զարնում այն իրողությունը, որ ռուսական կառավարությունը բոլոր հիմքերն ուներ մահմեդական կառավարման այս ձևը Ղարաբաղում վերացնելու համար: Հնագրական հանձնաժողովի բազմաթիվ փաստաթղթեր վկայում են ռուսական արքունիքի հանդեպ Ղարաբաղի մահմեդական կառավարիչների և տեղի փոքրաթիվ թաթարական բնակչության կողմից նյութված դավերի մասին: Կոմս Ի. Գուդովիչին ուղղված գնդապետ Ա. Ասեկի 1809 թ. մարտի 5-ի զեկուցագրից մեջբերումն ասվածի ապացույցն է. «Պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ... փոստային կայաններում նշանակված հեծյալ երեք թաթարները փախել են... 5 օր շարունակ ռուս սպաներին թողնելով միայնակ: ... փետրվարի վերջերին Տերտերի (Թարթառ) կայանից թղթապանակներով հանդերձ

<sup>1</sup> «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» ժողովածուն [Акты Кавказской археографической комиссии (այսուհետև՝ АКАК)] հրատարակվել է Թիֆլիսում, 1866–1904 թթ. տասներկու հատորով (վեցերորդը բազկացած է երկու մասից):



դուրս եկած թաթարներին իբր անհայտ չարագործները թալանել են. խլել են նրանցից ձիերին և երեք ծրար, սակայն հաջորդ օրն իսկ այդ թղթապանակները գտնվել են ճանապարհից...»<sup>2</sup>:

Այդուհանդերձ, ռուսական տիրապետության հաստատմամբ Ղարաբաղում իրավիճակը փոխվում է: Ցարական արքունիքը կտրուկ քայլերի է դիմում՝ հասկացնելով, որ այլևս չի հանդուրժելու մահմեդական տիրակալների անգործությունը, երբ տեղական հայ բնակչությունն ամենատարբեր առիթներով ճնշվում ու հարստահարվում էր: Սկզբում ռուսական հրամանատարությունը հաջողությամբ լուծեց բազում իրեն դավաճանած իբեհայի խանի խնդիրը. խանին «պատժելու» գործը հանձն առավ և իրագործեց ռուսական բանակի մայոր Դ. Լիսանևիչը: 1806 թ. հունիսի 14-ի գիշերը իբրահիմ խանը սպանվեց:

Նրան ասպարեզից հեռացնելուց հետո Ղարաբաղի կառավարումը հանձնվեց խանի որդիներից Մեհտի Ղուլի աղային. նրան տրվեց գեներալ-մայորի աստիճան և կայսր Ալեքսանդր I-ի 1806 թ. սեպտեմբերի հրովարտակով հաստատվեց որպես Ղարաբաղի կառավարիչ. «Սուլնով հանձնարարում եմ ձեզ կառավարել Ղարաբաղի ժողովրդին արդարամտությամբ և հեզությամբ...», — ասվում էր ռուս տիրակալի հրովարտակով<sup>3</sup>: Եվ այդուհանդերձ, հարկ է նշել, որ ռուսական արքունիքը, հաշվի առնելով նախկինում խանական տան երկակի պահվածքը, նրա հանդեպ հենց սկզբից որդեգրեց կոշտ դիրքորոշում: Այս առումով Մեհտի Ղուլի խանին ուղղված Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ա. Տորմասովի ներքոբերյալ նամակը բավական ուշագրավ է. «15 սեպտեմբերի 1810 թվական: ... այս ամռան ընթացքում դուք այնքան թույլ գտնվեցիք Նորին Մեծությունը ծառայելու գործում, որ ես ստիպված եմ հիշեցնելու ձեր պարտականությունների մասին և ասել ճշմարտությունը: Նորին Մեծությունը ձեզ հանձնելով խանությունը, ոչ այլ իրավունքով, քան ձեզանից սպասելու անսահման եռանդ... սակայն դուք առայժմ ոչնչով չեք համապատասխանում այդ ակնկալիքներին, քանի որ ես արդեն տեղեկացված եմ, որ չնայած մեր բազում զգուշացումներին, դուք Մեղրի եք ուղարկել 40 աղքատներից և անորակ ձիերից կազմված հեծյալներ: Գիտեմ նաև, որ դուք հոգ չեք տարել անհրաժեշտ ուղեկալներ և հսկիչներ տեղակայելու համար: Հարցնում եմ ձեզ. ո՞վ կարող է տանել ձեր այդ անհոգությունը: Ձեզ վստահված ժողովուրդը ձեզանից ամենաարթուն հոգատարությունն էր պահանջում: Եվ այն ինչ տեղի է ունենում այժմ, երբեք չի եղել Ղարաբաղի քաջարի ժողովրդի կյանքում, որոնց հանդեպ անգամ Պարսկաստանն էր հարգանք տածում, իսկ հարևանները սարսափի մեջ էին, այժմ գտնվում են թույլ վիճակում, քանի որ 30 կամ 40 ավազակներ անարգել մուտք են գործում Ղարաբաղի խորքերը և անպատիժ վերադառնում են իրենց թալանի հետ, սպանում

<sup>2</sup> АКАК, т. III. Тифлис, 1869, док. 640. Рапорт полк. Асьева гр. Гудовичу, от 5-го марта 1809 года, 43 — Шуша, с. 347—348.

<sup>3</sup> АКАК, т. III, док. 613. Высочайшая грамота ген-м Мехти-Кулиаге, от сентября 1806 года, с. 336.

են անօգնական դարաբաղցիներին և գերի են տանում: Նրանք պարզապես դարձել են ձեր անգործություն զոհը»<sup>4</sup>:

Նամակն իր բովանդակությամբ, անշուշտ, աննախադեպ էր. այդպիսի բովանդակությամբ նամակներ ժամանակին Պ. Յիցիանովն էր գրում Մեհտի Ղուլի խանի հորը Իբրահիմ խանին: «Հարգված անձնավորություններից շատ անգամ եմ խորը զայրույթով տեղեկացել (խոսքը, անշուշտ, հայ մելիքների մասին է – է. Հ.), որ դուք բազմիցս ասել եք, թե Նորին Մեծությունը ձեզանից հարկ է վերցնում և այդ պատճառով ուսուսական գործերը չեն պաշտպանում Ղարաբաղը: Ասացեք խնդրեմ, ի՞նչ եք արել դուք և այդ դեպքում ինչի՞ համար եք կրում խանի կոչումը: Արդյո՞ք միայն հարկ հավաքելու համար և ուրիշ ոչնչի՞...», – ասվում էր Ա. Տորմասովի նամակում<sup>5</sup>: Այն, որ Մեհտի Ղուլի խանը խորամանկության և զանազան մեքենայությունների առումով, ոչնչով չի տարբերվել իր հորից, ակնհայտ իրողություն էր. «Մեհտի Ղուլի խանը Թիֆլիսում երդում տվեց Ռուսաստանին հավատարիմ հպատակություն ցույց տալու համար և վերադարձավ Շուշի՝ գրեթե իսկույն այդ երդումը դրժելու համար: Նա իր հոր հարազատ ժառանգն էր՝ նույնպես անգույթ, նույնպես խորամանկ և ուխտագանց: Ռուսների վերաբերմամբ նրա անբարյացակամ, նույնիսկ թշնամական տրամադրությունն ակներև էր ամենքի համար»<sup>6</sup>, – գրում է Լեոն: Ուստի, երբ կոմս Ի. Գուդովիչին լուրեր են հասնում, որ հարկերից խուսափելու նպատակով Ելիզավետպոլի թաթարները Մեհտի Ղուլի խանի գաղտնի հանձնարարականով ընտանիքներով գալիս և բնակություն էին հաստատում Ղարաբաղում, բնականաբար, վայելելով խանի հովանավորությունը, ֆելդմարշալը խստորեն հրամայում է «անմիջապես հետ ուղարկել այդ ընտանիքներին իրենց բնակության նախկին վայրերը և այլևս նրանց չընդունել...»<sup>7</sup>:

Եվ ուսուսական իշխանություններն առժամանակ ստիպված էին հանդուրժել Մեհտի Ղուլի խանի կամայականությունները, սակայն մեր շեշտադրումն այլ խնդրի հետ է կապված և այն կրկին վկայում է հայ բնակչության հանդեպ Ղարաբաղի մահմեդական տիրակալների անգործության մասին, որի արդյունքում երկրամասը գնալով հայաթափվում էր: Իսկ ասվածը հաստատող վավերագրերը կարելի է գտնել Կովկասի հնագրական հանձնաժողովի գրեթե յուրաքանչյուր հատորում: Այսպես, օրինակ, 1811 թ. ապրիլի 29-ին Մեհտի Ղուլի խանին ուղղված գեներալ Ա. Տորմասովի նամակում կարդում ենք. «Տեղեկությունները, որ հասնում են ինձ Բարձրագույնի կողմից ձեզ վստահված խանությունից, միայն տհաճություն են պատճառում: Ես կրկին տեղեկություն եմ ստացել, որ պարսիկ ավազակների խումբը թալանել և ավերել է Ղարաբաղի երեք գյուղեր՝ Բայանդուրը, Խազնավարը, Խանազանը, և իրենց հետ տարել են այդ գյուղերի

<sup>4</sup> АКАК, т. IV. Тифлис, 1870, док. 845. Письмо ген. Торماسова к Мехти-Кули-хану, от 15-го сентября 1810 года, 921, с. 565.

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Լեոն. Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1984, էջ 366:

<sup>7</sup> АКАК, т. IV, док. 856. Письмо ген. Тормасова к Мехти-Кули-хану, от 29-го апреля 1811 года, № 408, с. 571.

բոլոր բնակիչներին»<sup>8</sup>: Ճիշտ է, նամակի շարունակության մեջ ուսուցանողը Ղարաբաղի կառավարչից խիստ տոնով պահանջում է «հուսալի միջոցներ ձեռնարկել» ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար, սակայն որքանով նկատեցինք, թալանված և ավերված գյուղերը բացառապես հայկական են եղել: Իսկ ամենից ողբերգականը, իհարկե, հայկական գյուղերի բնակչության գերեզմարումն էր և բուն ուժով իրենց տներին ու օրրաններից օտարումը: Այդ ամենը, բնականաբար, տեղի հայության մասով անպայման բացասական հետևանքների էր բերելու՝ փոխելով Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը: Եվ գաղտնիք չէ, որ այս հարցը բազմիցս շահարկվում է ներկայիս ադրբեջանական պատմաբանների կողմից: Նրանցից մեկը Բաքվի պետական համալսարանի պրոֆեսոր Ջամիլ Հասանյուն է: «Դատելով վիճակագրական տվյալներից, — գրում է նա, — Ղարաբաղի մարզում 1823 թ. կար 600 բնակավայր, որից 450 մահմեդական էին և միայն 150-ն էին գրանցված որպես հայկական: Դատելով վստահություն վայելող այս աղբյուրից 1823 թ. Ղարաբաղի մարզում ապրում էր 20.095 ընտանիք, որոնցից 15.729-ը մահմեդական էին, իսկ 4.366 (21,7 %) հայկական: Ղարաբաղում իրական վիճակի մասին նկարագրված է 19-րդ դարի ուսուցանող պաշտոնական հրատարակություններում»<sup>9</sup>:

Ադրբեջանական ներկայիս պատմաբանները (իսկ Ջամիլ Հասանյուն ոչնչով չի տարբերվում իր գործընկերներից) օտար ընթերցողներին մոլորեցնելու համար վկայակոչում են ուսուցանող աղբյուրները, այդ թվում՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը: Սակայն, որքան էլ մեր «հարևան» երկրի պատմաբանները «հաստատեն», թե, իբր, Ղարաբաղում չի եղել և հայկական որևէ գյուղ ու ավան, որ դրանք ընդամենն թաթարական բնակավայրեր են եղել, հիասթափեցնենք վերջիններին, քանզի Կովկասի հնագրական հանձնաժողովի հրատարակած վավերագրերն այդ իրավունքը մեզ լիովին ընձեռում են:

1810 թ. հունիսի 11-ին կոմս Ն. Ռումյանցևին ուղղված գեներալ Ա. Տորմասովի գեկուցագրում կարդում ենք. «Ղարաբաղից գնդապետ Ասեկից ստացվել է տեղեկություն, որ Արաքսից այն կողմ երևացել է թշնամու 200 հոգանոց հեծելազոր... նրանք որոշել են թալանել հայկական ձարտար գյուղը (ընդգծումը մերն է — է. Հ.), որը տեղի բնակիչների շնորհիվ կանխվեց. երրորդ խումբը հարձակվեց առևտրական քարավանի վրա, որը դուրս էր եկել Շուշիից դեպի Նուխի, սպանվել է երեք հայ (ընդգծումը մերն է — է. Հ.), վերավորվել է մեկը, իսկ երեքին գերի են վերցրել: Թալանել էին ողջ ապրանքների կեսը, տարել 7 ձի...»<sup>10</sup>: Կասկած չի կարող լինել, որ աղբ-

<sup>8</sup> АКАК, т. IV, док. 859. Письмо ген. Торماسова к Мехти-Кулихану, от 319-го мая 1811 года, № 565, с. 572.

<sup>9</sup> Д. Гасанлы. Карабах: поиск исторической правды. — «Кавказ и глобализация» Лулео, 2010, т. IV, выпуск 3—4, с. 143. <http://cyberleninka.ru/article/n/karabah-poisk-istoricheskoy-pravdy>. կայքէջ

<sup>10</sup> АКАК, т. IV, док. 1441. Отношение ген. Тормасова к гр. Румянцеву, от 11-го июня 1810 года, № 91, с. 944.

յուրում հստակ է հայկական գյուղում և Ղարաբաղում հայ առևտրականների, նրանց քարավանների գոյության փաստը:

Անշուշտ, XVIII դ. վերջից սկսած պատմական հանգամանքներից թելադրված, հայերի մի մասը ստիպված եղավ թողնել հայրենի եզրերը, շատ դեպքերում էլ «աշխատասեր և ընդունակ» այդ բնակչության հանդեպ առանձին հետաքրքրություն էր ցուցաբերում ռուսական կառավարությունը, սակայն Կովկասի հնագրական հանձնաժողովի արխիվային վավերագրերում հանդիպող փաստաթղթերը մեզ այլ բան են հուշում. ռուսական արքունիքին, այդուհանդերձ, ամենից մտահոգողը տարածաշրջանի խաղաղ հպատակեցումն է եղել՝ անկախ ժողովրդագրական հանգամանքներից: Այսպես, 1809 թ. մայիսի 3-ին Ելիզավետպոլից գեներալ Ա. Տորմասովին ուղղած գեներալ Պ. Նեբելսոնի գեկուցագրում կարդում ենք. «Գնդապետ Ասենն ապրիլի 30-ի գեկուցագրում ինձ է փոխանցել Նազար Ալի խանի նամակը, որում գրում է, որ նա ցանկություն է հայտնել ընդունել ռուսական հովանավորություն և համառուսական կայսրի հպատակությունը, ուստի խնդրում է թույլատրել իր անվտանգ անցումը Արաքս գետից Ղարաբաղի տիրույթ: Անցումը նրան թույլատրվել է և ինչպես հաղորդում է գնդապետ Ա. Ասենը, դա տեղի է ունեցել Ջևադի մատույցներում»<sup>11</sup>:

Հաղորդագրությունը, իհարկե, առանձնահատուկ չես համարի՝ նկատի ունենալով ռուսական կառավարությանն ուղղված հարյուրավոր նման փաստաթղթերի առկայությունը Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում: Սակայն մահմեդական այդ տիրակալները հպատակություն էին խնդրում ռուսական կառավարությունից ոչ միայն իրենց ընտանիքների, այլև իրենց ենթակա ողջ բնակչության համար: Ուստի, գործընթացն ինքնին ժողովրդագրական առումով լուրջ վտանգ էր պարունակում, եթե չասենք ավելին. այդպիսի մի քանի տիրակալների անցումը Ղարաբաղ, բնականաբար, պետք է իր կողմը թեքեր ժողովրդագրության նժարը. «Ես այս ամենի մասին գեկուցելով՝ չեմ կարող ուշադրությունից դուրս թողնել և այն, որ այդ Նազար Ալի խանը և Արաջ Ուլլա խանը, որոնք ներկայումս գտնվում են Շահ – գաղեի մոտ (խոսքը պարսից շահի մասին է – է. Հ.), արդեն թույլտվություն են խնդրել, որպեսզի իրենց ժողովրդի հետ միասին ժամանեն Ղարաբաղ (ընդգծումը մերն է – է. Հ.): Իմ ներկայացմամբ 1808 թ. դեկտեմբերի 20-ին գեներալ-ֆելդմարշալ կոմս Գուդովիչը ընդունեց նրանց հպատակությունը կայսրությանը, նրանց ընդունեց հարգանքով և հրամայեց տարածք տրամադրել Ղարաբաղում իր ժողովրդի հետ միասին և նրանց Արաքսի անվտանգ գետնանցման համար հատկացրեց 100 եգեր (ռուսական բանակում վերջիններս հայտնի են եղել որպես ռուսական հետապնդող ջոկատներ և հաճախ նրանց անվանում էին որսորդներ – է. Հ.)»<sup>12</sup>: Կարծում ենք, որ այս փաստաթուղթը բացահայտում է ինչպես Ղարաբաղում ռուսական քաղաքականության հետևանքներ

<sup>11</sup> АКАК, т. IV, док. 815. Рапорт ген-м. Небольсина ген. Торماسову, от 3-го мая 1809 года, № 127. Елисаветополь, с. 547 – 548.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 548:

րը, այնպես էլ՝ երկրամասում ժողովրդագրական պատկերի փոփոխման պատճառները:

Այդ ընթացքում՝ 1804–1813 թթ., ռուս-պարսկական առաջին պատերազմը մոտենում էր ավարտին և Գյուլիստանում 1813 թ. սկսված բանակցություններում քննարկման գլխավոր առանցքներից մեկը Ղարաբաղի հարցն էր: Պարսկական արքունիքը, ի վերջո, հասկացավ, որ Այսրկովկասում խանությունների հետ բերման գործընթացն այս փուլում արդեն ավարտված է: Ռուսական բանակների հաղթանակները ստիպեցին Պարսկաստանին հաշտվել ստեղծված իրավիճակի հետ, թեպետ այնպիսի խոշոր խանություններ, ինչպիսիք Երևանն ու Նախիջևանն էին, դեռևս շարունակում էին մնալ պարսկական տիրապետության տակ: Մեր կարծիքով, Ռուսաստանի կողմից հաշտության բանակցությունների գնալը պայմանավորված էր ոչ միայն Ֆրանսիայի դեմ ծավալված ռազմական գործողությունների հանգամանքով: Ռուսաստանն այդ պատերազմում արդեն հասել էր իր նպատակին. հաջողվել էր Պարսկաստանից «պոկել» եթե ոչ Երևանին հավասար, ապա Երևանի խանությունը գրեթե չզիջող այնպիսի խանություններ, ինչպիսիք էին Ղարաբաղը, Շաքին, Շիրվանը, Բաքուն: Այս իմաստով Ղարաբաղի խանության գրավումը Ռուսաստանի համար հանգրվանային նշանակություն ունեցավ. թվարկած խանությունների մեջ Պարսկաստանն առավել կարևորություն էր տալիս հատկապես Ղարաբաղի խանությանը՝ այն համարելով պարսկական տիրապետության կենտրոնական տարածք՝ Անդրկովկասում իր դիրքերն ապահովելու համար, նույնիսկ՝ Երևանից առավել: Հաստատվում է նաև այն իրողությունը՝ Ղարաբաղից սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը և որ Շուշիի ու ողջ Ղարաբաղի գրավումը կարևորվեց պարսից արքունիքի համար:

Ուստի, կրկինք, ռուս-պարսկական հակամարտության հետագա խորացման հեռանկարը հաշվի առնելով՝ ռուսական կառավարությունը շարունակում էր Արցախին հատկացնել առաջնակարգ մարտավարական նշանակություն: Պատերազմի ավարտին ռուսական հրամանատարությունը հաջողվեց ռազմական նկատելի ուժեր կուտակել Ղարաբաղում: Գեներալ-լեյտենանտ, իշխան Դ. Օրբելյանուն ուղղված 1813 թ. հունիսի 7-ի գեկուցագրում կառավարչի պաշտոնում Ա. Տորմասովին փոխարինած գեներալ Ն. Ռտիչչևը տեղեկացնում էր. «Ղարաբաղում գործերի տեղակայումը համարում եմ անհրաժեշտ և կարևոր. վրացական գրենադերական, Կրասնովի 3-րդ և Պոպովի 16-րդ կազակական գնդերը գտնվում են Աղօղյանում և Ղարաբաղը Արաքսի կողմից պաշտպանում են պարսիկների հարձակումներից... Եգերական գնդի երկու գումարտակ այժմ տեղակայված է Խոջալու գետի մոտակայքում և շահավետ դիրքում է: Երրորդ գումարտակի երկու դասակները տեղակայված են Շուշիի բերդում, երկու դասակ էլ անհրաժեշտ դիրքեր է գրավել Գորիսում, Խնձորեսկում և Տաթևում՝ Նախիջևանի կողմից պարսիկների հարձակումները կանխելու նպատակով... Այդպիսով, գործերի նման տեղաբաշխումը բավական արդյունավետ է և առանց անհրաժեշտություն այն տեղաշարժել չի կարելի: Եվ եթե այդպիսի անհրաժեշտություն առա-

Ղանա, խնդրում եմ ինձ հաղորդել տեղաշարժման պատճառների մասին»<sup>13</sup>:

Հասկանալի է՝ Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո խանական կառավարումն այլևս չէր կարող բավարարել ռուսական կառավարությանը, որն արդեն, կարծես թե, «հոգնել էր» խանների հանդեպ մշտատե հսկողությունից: Ուստի, մահմեդական տիրակալների հերթական դավադրության բացահայտումից հետո ինքնակալին առաջարկվում է վերացնել խանական կառավարումը Ղարաբաղում:

Գործընթացի սկիզբը դնում է Շաքիի խանությունը: «Շաքիի խանի դավաճանությունը մեզ նվիրեց նրա հարուստ տիրույթները, գլխավոր քաղաքը գրավվեց մեր զորքերի կողմից, խանը փախել է Պարսկաստան: Այնտեղ մտցվել է ռուսական կառավարում»<sup>14</sup>, – նշվում էր Կովկասի նոր կառավարիչ Ա. Երմոլովի՝ կայսրին ուղղված 1817 թ. գեկուցագրում: Հաջորդը Ղարաբաղի խանությունն էր. «Նույն կերպ էլ մեզ դավաճանեց Ղարաբաղի խանը, սակայն սպանվեց (խոսքը Իբրահիմի մասին է – է. Ն.), նրանից հետո մնացին նրա որդիները, որոնք մեզ հավատարմության երդում տվեցին: Ֆելդմարշալ, կոմս Ի. Գուդովիչը նրա որդիներից Մեհտի Ղուլիին խանի իրավունք տվեց, սակայն նա զավակ չունեց և առողջական տեսակետից բավականին թույլ էր: Մյուս ժառանգորդը, նրա հարազատներից գնդապետ Ջաֆար Ղուլի աղան է, որը 1812 թ. մեզ դավաճանեց և փախավ Պարսկաստան. ավելին, մեր դեմ հանեց պարսկական հեծելազորը, հարձակվեց և կործանեց մեր սակավաթիվ գումարտակը: ... այս խանությունը, որը կարևոր է մեզ համար և հարուստ է, պետք է կառավարվի ռուսական օրենքներով... ուստի տեղեկացնելով Ձեզ այս մասին, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ գնդապետ Ջաֆար Ղուլի աղային չհաստատել որպես Ղարաբաղի խանությունից ժառանգորդ և ... ես համոզիչ պատճառներ կգտնեմ թույլ չտալու համար նրա կառավարումը»<sup>15</sup>: Ինչպես տեսնում ենք, Ղարաբաղի մահմեդական բոլոր տիրակալներն էլ Իբրահիմից սկսած, մշտապես դավաճանել են ռուսական կառավարությանը: Այս հանդուրժողականությունը մեկ նպատակ էր հետապնդում. քանի դեռ Անդրկովկասում ռուս-պարսկական հակամարտությունն իր հանդուրժողականությամբ չէր ստացել, ռուսական արքունիքը ստիպված էր հանդուրժել վերջիններիս բացահայտ երկակի դիրքորոշումը՝ հակառուսական երկրորդ ճակատ չբացելու համար: Ռուսական հրամանատարության համար այս համատեքստում կարևորը հպատակ խաների միջև հակասությունների խորացումն էր, ինչը, թերևս, ռուսներին հիմնականում, հաջողվում էր:

Կայսերն ուղղված հաջորդ գեկուցագրում արդեն (1817 թ. մարտի 4) Ա. Երմոլովը մանրամասն ներկայացնում էր Ղարաբաղի կարևորությունը ռուսական կայսրության համար: «Ղարաբաղի խանությունը հարուստ ու բերրի հողեր ունի և 1806 թ. սկսած

<sup>13</sup> АКАК, т. V. Тифлис, 1873, док. 533. Предписание ген. Ртищева ген.-л. Орбеляни, от 7-го июня 1813 года, № 368, с. 453 – 454.

<sup>14</sup> АКАК, т. VI. Тифлис, 1874, ч. I, док. 1264. Всеподанный рапорт ген. Ермолова, от февраля 1817 года, с. 835.

<sup>15</sup> Նույն տեղում:

մինչև 1813 թ. դարձել է պարսիկների կողմից անընդհատ հարձակումների թատերաբեմ և բավական ավերածություններ է կրել: 1805 թ. սկսած, երբ այս մարզը դարձավ Ռուսական կայսրության անբաժան մաս, իր մեջ ընդգրկում էր ավելի քան 10 հազար ընտանիք, սակայն 1812 թ. մարդահամարի ժամանակ Ղարաբաղում հաշվում էր ընդամենը 3.080 ընտանիք, որոնց մեծ մասը տարագրվել և զրկվել էին իրենց ունեցվածքից, մեծ մասը թշնամու կողմից գերեվարվել է կամ ինքնակամ հեռացել են՝ փրկելու համար իրենց ընտանիքները...»<sup>16</sup>:

Զեկուցագրից դժվար չէ կուսել, որ Ղարաբաղից հեռացածները բացառապես հայկական ընտանիքներ էին և հայկական բնակչութունը, քանի որ տեղի հայությունը, ինչպես հաստատում են նաև ռուսական հրամանատարության նախորդ զեկուցագրերը, մշտապես ենթարկվել է կրկնակի հարստահարման ինչպես պարսիկների, այնպես էլ տեղական մահմեդական խաների կողմից: Ուստի, այստեղ պետք է փնտրել նաև Ղարաբաղի հայության թվաքանակի նվազման պատճառներն իր հայրենիքում, որն ամեն անգամ դրոշակ են դարձնում մեր դեմ ադրբեջանցի պատմաբանները՝ առանց պատմական հանգամանքները հաշվի առնելու: Ակնհայտ է նաև, որ հեռացող տարրը միմիայն հայությունն է եղել, որը մշտապես գտնվել է հարստահարվողի դերում և ամենօրյա հարձակումների թիրախ է դարձել մահմեդական իշխանությունների համար: «Իմ նախորդներ կոմս Տորմասովը, մարկիզ Պաուլուչչին և գեներալ Ռտիչչևը իրենց բազում նամակներում հորդորել են Ղարաբաղի ներկայիս տիրակալ գեներալ-մայոր Մեհտի Ղուլի խանին, որպեսզի նա հոգ տանի տեղի ժողովրդի կարիքների մասին: ... Սակայն դրանք բոլորն էլ այդպես էլ մնացել վերջինիս կողմից արված խոստումների մեջ... Ժողովուրդը բավական աղքատ վիճակում է, առաջին անհրաժեշտությունն ապրանքների բավարարման կարիք կա: Կառավարության շահերից ելնելով, կարծում եմ, այս հանգամանքը բացառել չի կարելի, քանի որ տեղի բնակչությունը իրենց հավատարիմ է և հաճույքով է կատարում իր պարտականությունը...»<sup>17</sup>, – ասվում էր կայսրին ուղղված Երմոլովի զեկուցագրում: Ուստի թաթար-մահմեդականները ոչ մի պատճառ չունեին հեռանալու իրենց ազգակից կառավարողներից, երկրորդ՝ Ա. Երմոլովի և ոչ մի զեկուցագրում թաթար բնակչության հավատարմության մասին հաստատում չկա:

Այդուհանդերձ վերոհիշյալ 1804–1813 թթ. պատերազմի ավարտից հետո կայսր Ալեքսանդր I-ն անմիջապես արձագանքում է Ղարաբաղում խանական կառավարման ավարտի մասին Երմոլովի զեկուցագրին և Ֆինանսների նախարարին ուղղված 1817 թ. հուլիսի 4-ի իր ուղերձում արդեն հանձնարարում էր. «Ներել Ղարաբաղի բնակչության 34.872 չմուծած չեքվոնեցը և այդ մասին հայտարարել ողջ Ղարաբաղում, որպեսզի բնակիչները լիովին զգան կառավարության ուշադրությունը, մյուս կողմից, որպեսզի խանը նրանցից այլևս հարկեր չպահանջի իր սեփական օգուտների համար և

<sup>16</sup> АКАК, т. VI, док. 1265. Всеподанный рапорт ген. Ермолова, от 4-го марта 1817 года, с. 836.

<sup>17</sup> Նույն տեղում:

ընդհանրապես, այսուհետև բոլոր պարտականությունները զրվում են գեներալ-լեյտենանտ Ա. Երմոլովի վրա՝ որպես տեղի կառավարիչ»<sup>18</sup>։ Ավելին, ռուսաց ցարին ուղղված Ա. Երմոլովի 1820 թ. ապրիլի 12-ի գեկուցագրում հանդիպում ենք փնտրված հետևյալ մտքին. «Ղարաբաղի տիրակալների հարստությունը գոյացել է այն ունեցվածքից, որը նրանք ուժով վերցրել են երկրի տեղաբնիկ բնակչությունից (ընդգծումը մերն է – Է. Հ.), և որոնց ենթարկել են գենքի ուժով...»<sup>19</sup>։ Ինչպես ասում են, ավելին ասել հնարավոր չէ։ Հետևենք գեկուցագրի շարունակությունը. «Ոչ վաղ անցյալում Ղարաբաղը կառավարվել է Հայ մելիքների կողմից, որոնց միջև ծագած անհամաձայնություն պատճառով (այստեղ արդեն հնարավոր չէ չհամաձայնել ռուս գեներալի այս մտքի հետ – Է. Հ.) երկիրը հանձնեցին այլազգիների տիրապետությանը և ներկայիս խանը մահմեդական այդ տիրապետության միայն երրորդ կողմն է, ռուսի դժվար չէ նկատել, որ վերադարձվող ունեցվածքը միմիայն իսկական սեփականատիրոջը հանձնել է նշանակում (ընդգծումը մերն է – Է. Հ.)»<sup>20</sup>։ Այժմ մանրամասնենք գեկուցագրի այս վերջին մասը. եզրակացությունն առաջին. և՛ գեկուցագիրը, և թե՛ դրա հեղինակը ռուսական սովորական պաշտոնյա չէ, որ հարևան երկրի «գործընկերները» մեզ հանդիմանեն կողմնակալության մեջ. հեղինակը Կովկասի կառավարիչն է՝ իր ողջ պատասխանատվությամբ։ Եզրակացություն երկրորդ. գեկուցագիրն ուղղված չէ ռուս սովորական պաշտոնյայի, որ մեզ կրկին չմեղադրեն «ինչ-որ աննշան» գեկուցագրի մեջ. այն անմիջականորեն ուղղված է ռուսաց տիրակալին և այստեղ չստուգված տեղեկություններ հաղորդելը ոչ միայն անհնարին էր, այլև գրեթե բացառված էր, այն էլ պատմական տեղեկությունների հարցում։ Չմոռանանք նշել, որ գրեթե 100 տարի էր, ինչ գոյություն ունեցող Ռուսաստանի գիտությունների ակադեմիան և արդեն ձևավորվել էր կովկասագիտական պատկառելի գրականություն։ Ուստի, եզրակացությունը մեկն է՝ Ղարաբաղի հայկականության հարցում ռուսական աղբյուրները, անկասկած, միասնական կարծիք ունենին։

Բնականաբար, Մեհտի Ղուլի խանը իր հերթին հասկացել էր, որ կառավարման օրերը հաշված են Ղարաբաղում, ռուսի արագորեն նախապատրաստում է իր փախուստը դեպի Պարսկաստան։ Ի դեպ, այդ մասին գեներալ Ա. Վելյամինովին տեղեկացնում է Վ. Մադաթովը՝ 1822 թ. նոյեմբերի 21-ի գեկուցագրում. «Շտապում եմ տեղեկացնել, որ Մեհտի Ղուլի խանն այսօր վաղ առավոտյան իր 15–20 ծառաների հետ միասին փախել է սահմանից այն կողմ։ Բեկերից ումանք նրա հետ են եղել, սակայն ծառաները հազիվ թե հետևեին նրան։ Նա հեռացել է առանց գումարի և աննշան ունեցվածքով, որը մշտապես նրա հետ է, ռուսի կարծում եմ, որ փախել է այն մտավախությունից, որ պատասխանատվության կենթարկվի ժողովրդի հանդեպ գործադրած ճնշումների համար, որոնք բազմությունը գա-

<sup>18</sup> АКАК, т. VI, док. 1266. Высочайшее повеление министру финансов, от 4-го июля 1817 года, — С.-Петербург, с. 837.

<sup>19</sup> АКАК, т. VI, док. 1273. Всеподанный рапорт ген. Ермолова, от 12 апреля 1820 года, с. 840.

<sup>20</sup> Նույն տեղում։



լիս էին ինձ մոտ իրենց բողոքներով: Խանի փախուստի մասին՝ որ նա այլևս Ղարաբաղում չի հայտնվելու, իմ կողմից հայտնվել է ժողովրդին, լուրը բավական ուրախությամբ ընդունվեց նրանց կողմից...»<sup>21</sup>: Ղարաբաղի տիրակալը փախել էր՝ թողնելով ողջ կանանոցը և հարազատ քույրերին: Ավելին, նույն Ա. Վելյամինովին ուղղված իշխան Վ. Մաղաթովի գեկուցագիրը հայտնում է, որ վերջինս Պարսկաստան էր փախել Տերտերի ճանապարհով, Շահ Բուլաղի ուղեկալի կողքով և «սահմանին մոտ հանդիպելով Կոլանինների 18 քոչվոր ընտանիքների, հարկադրանքով նրանց ևս իր հետ տարել է Պարսկաստան: Փախստական բեկերի ունեցվածքն արդեն բռնագրավված է...»<sup>22</sup>:

Ղարաբաղի խանի փախուստն այն վերջին կաթիլն էր, որին սպասում էր կառավարութունը Ղարաբաղը ռուսական անմիջական ենթակայության տակ դնելու համար: Համապատասխան հրամանագիրն իրեն ուշացնել չտվեց. 1822 թ. նոյեմբերի վերջին հրապարակվում է գեներալ Ա. Երմոլովի ուղերձը Ղարաբաղի ժողովրդին, որում ազդարարվում էր. «...Ղարաբաղի խանությունն այս ժամանակից սկսած անցնում է ռուսական կառավարության անմիջական ենթակայության տակ: Խանական իշխանությունը հավերժ վերացվում է և այս հողի անհրաժեշտ կառավարման համար իմ կողմից շուտով կողարկվի հատուկ պաշտոնյա»<sup>23</sup>: Իհարկե, Ա. Երմոլովը նաև շտապում է հանգստացնել ռուսական կառավարությանը հավատարիմ բեկերին և բնակիչներին, որ նրանց «սեփականատիրական իրավունքները կմնան անձեռնամխելի»<sup>24</sup>:

Կայսր Ալեքսանդրին ուղարկած իր գեկուցագրում Ա. Երմոլովը միաժամանակ «բացահայտում է» Ղարաբաղի տիրակալի փախուստի իրական դրդապատճառները և առաջին հերթին նշում նրա անմարդկային վերաբերմունքը ժողովրդի հանդեպ: «Ղարաբաղի խանության բնակիչների դժգոհությունը, որոնց կառավարում էր Մեհտի Ղուլի խանը, — ասվում էր գեկուցագրում, — իր պարտականությունները կատարում էր չափազանց վատ, իրեն ներշնչել էր որպես մեծ իշխանության տեր, սակայն, վախենալով կառավարության հանդեպ ունեցած իր պատասխանատվությունից, որոշեց փախուստի դիմել Պարսկաստան, որի հետ, ինչպես պարզվել է, վաղուց արդեն գաղտնի հարաբերություններ ուներ և այնտեղ պատվարժան ընդունելության է արժանացել: Նրա գլխավոր վախն այն էր, որ խանության բնակիչների գումարները, որոնք Ն.Մ.Կ. կողմից ներվել էին, խանը շարունակել էր նրանցից հարկեր գանձել և մսխել էր պետական գանձարան ուղարկելու փոխարեն»<sup>25</sup>:

<sup>21</sup> АКАК, док. 1293. Донесение кн. Мадатова ген-л. Вельяминову от 21-го ноября 1822 года. № 916, с. 848.

<sup>22</sup> АКАК, док. 1297. Рапорт ген. Мадатова ген-л. Вельяминову от 28-го ноября 1822 года. № 966, с. 850.

<sup>23</sup> АКАК, док. 1299. Прокламация ген. Ермолова жителям Карабагского ханства, от ноября 1822 года, с. 850.

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> АКАК, док. 1301. Всеподданный рапорт ген. Ермолова, от 14 декабря 1822 года, с. 850.

Անշուշտ, ռուսական կառավարությունը չէր հանդուրժելու Ղարաբաղի մահմեդական կառավարչի այսօրինակ ապօրինությունները, ուստի Մեհտի Ղուլի խանը, քաջ գիտակցելով, շտապել էր օր առօրե ճողոպրել Պարսկաստան: Ադրբեջանցի պատմաբանները փորձում են չքմեղացնել Մեհտի Ղուլի խանին և այդ ամենի մեղավոր են համարում Ա. Երմոլովին ու Վ. Մադաթովին: «1816 թ. Կովկասում գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Ա. Երմոլովը իր կառավարման առաջին իսկ օրից չէր վստահում ադրբեջանական ժողովրդին նրա մեջ տեսնելով որպես պոտենցիալ թշնամի, – գրում է Բաքվի պետական համալսարանի պրոֆեսոր Զամիլ Հասանլուն: – Այս պատճառով նա ուղիներ էր որոնում խանությունից ձեռնարկված համար. ադրբեջանցիները ամեն ինչ կարող էին դառնալ անկախության համար պայքարի կազմակերպիչ: Հյուսիսային Ադրբեջանում Երմոլովի ներկայացուցիչ հայ գեներալ Վ. Մադաթովն այդ գործում ակտիվորեն օգնում էր նրան և թեպետ դանդաղ, սակայն հետևողականորեն նրանք իրականացնում էին իրենց ծրագրերը»<sup>26</sup>:

Շուտով լուծվում է նաև Իբրահիմ խանի վերջին ժառանգորդի՝ Զաֆար Ղուլի աղայի հարցը. դեռևս գնդապետի աստիճան ունեցող Ղարաբաղի խաների այս վերջին ժառանգորդը Երմոլովի հրամանով հեռացվում է Ղարաբաղից և Թիֆլիս հասնելուն պես աքսորվում է Ռուսաստան՝ Սիմբիրսկ: Ավելին՝ Կովկասի կառավարչապետը հատուկ կարգադրություն է անում մայրը Նազարովին, որպեսզի վերջինս «խիստ զգոնություն և վերահսկողություն ցուցաբերի նրա հանդեպ կովկասյան գիծը անցնելու ողջ ճանապարհին: Հաշվի առնելով նրա նախորդ փախուստները, անթույլատրելի է դրա կրկնությունը»<sup>27</sup>:

Ահա այսպիսի վախճան ունեցավ Ղարաբաղում խանական կառավարումը, որը ռուսական արտաքին քաղաքական և ռազմական հաղթանակ լինելուց բացի, նշանակալի իրադարձություն էր Արցախի հայության համար, որոնք մեծապես տուժել էին խանական դաժան կառավարումից՝ իր անդառնալի հետևանքներով: Ուստի, այն, որ ռուսական պաշտոնական փաստաթղթերում տվյալ երկրամասը դիտվում է բացառապես հայության հայրենիք, երկու կարծիք լինել չի կարող: Մեջբերենք Կովկասի կառավարիչ, գեներալ Ա. Երմոլովի 1822 թ. դեկտեմբերի 29-ին պարսկական թագաժառանգ Աբաս-Միրզային ուղղված նամակից. «Ժամանելով Ղարաբաղ՝ իմ ենթականերից ամեն օր տհաճ լուրեր եմ ստանում սահմանում տիրող իրավիճակի մասին... Ղարաբաղի նախկին խան Մեհտիի փախուստից հետո խանությունը շատ բնակիչներ, որոնք նրա օրոք չէին ցանկանում վերադառնալ, այժմ վերադառնում են իրենց հայրենիքը (ընդգծումը մերն է – Է. Հ.), որը նախատեսված է մեր բարձր երկու երկրների կողմից հաստատված համաձայնագրով, սակայն փախստական խանի եղբայր Աբդուլ-Ֆեթհ խանը արդեն սահմանին հե-

<sup>26</sup> Д. Гасанлы. *Նշվ. աշխ.*, էջ 141:

<sup>27</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1302. Письмо ген. Ермолова к ген-л. Вельяминову, от 26-го декабря 1822 года. – Шуша, с. 851.

տապնդում է մեր նախկին բնակիչներին»<sup>28</sup>: Կրկենք, որ Արցախում պարսիկ խաների հալածանքների հիմնական ու գլխավոր զոհը տեղի հայությունն էր. որևէ կասկածի տեղիք չպետք է տրվի: Ուրեմն՝ ուսու գեներալի և կառավարչի նամակում հայրենիք ասվածը վերաբերում է բացառապես հայ բնակչությանը: «1822 թ. Մեհտի Ղուլի խանի և նրա մերձավորների Պարսկաստան փախչելուց հետո, — գրում է պատմաբան Վ. Բալայանը, — Ղարաբաղի խանությունը ... լուծարվեց և վերակազմվեց Ղարաբաղի նահանգի, որն անմիջապես կառավարվում էր ուսուական կառավարութայան կողմից: Նահանգն իր հերթին բաժանվեց գավառների: Վարչական պաշտոններից հեռացվեցին խանական շրջանի նախկին պաշտոնյաները, իսկ մահալների կառավարիչներ նշանակվեցին ուսու աստիճանավորներ: Քաղաքական այս գործընթացներով սկսվեց Ղարաբաղի պատմութայան նոր շրջանը»<sup>29</sup>:

Ռուսական տիրապետութայան վերջնական հաստատումից հետո Արցախում կատարվեցին սոցիալ-տնտեսական բնույթի բարեփոխումներ, որոնց նպատակը մի կողմից խանական կառավարման հետևանքների վերացումն էր, մյուս կողմից երկրամասի բնակչության համար տնտեսական զարգացման բարենպաստ պայմանների ստեղծումը:

## КОНЕЦ ХАНСКОГО ПРАВЛЕНИЯ В КАРАБАХЕ ПО МАТЕРИАЛАМ АКТОВ КАВКАЗСКОЙ АРХЕОГРАФИЧЕСКОЙ КОМИССИИ

ЭДУАРД ОГАНЕСЯН

### Резюме

После присоединения к России в 1805 г. события в Карабахе приобрели новое содержание. Принимая во внимание перспективу дальнейшего углубления российско-персидского конфликта, российское правительство продолжало придавать Карабаху стратегическое значение. Вместе с тем, после окончания российско-персидской войны 1804 — 1813 гг. русское правительство приступило к изменению статуса Карабаха: для этого у российского правительства были достаточные основания. Постоянные нарушения законов со стороны местных магометанских правителей и их предательства стали главной причиной ликвидации ханского правления в Карабахе. По особому распоряжению правителя Кавказа генерала А. Ермолова в ноябре 1822 г. ханскому правлению в Карабахе пришел конец. Это событие положитель-

<sup>28</sup> АКАК, т. VI. Тифлис, 1875, ч. II, док. 505. Письмо ген. Ермолова к Аббас-Мирзе, от 29-го декабря 1822 года, с. 272.

<sup>29</sup> Վ. Բալայան. Արցախի պատմությունը հնագրից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 206:

но восприняло армянское население, веками поработенное несправедливым правлением карабахских ханов. В этом отношении материалы, содержащиеся в «Актах Кавказской археографической комиссии» имеют особую источниковедческую значимость.

#### ABOLISHMENT OF THE KHAN RULE IN KARABAKH BASED ON ACTS OF CAUCASIAN ARCHAEOGRAPHIC COMMISSION

EDUARD HOVHANNISYAN

##### S u m m a r y

After joining Russia, the events in Karabakh acquired a new quality and content. Taking into account the prospect of further deepening of the Russian-Persian conflict, the Russian government continued to allocate strategic importance to Karabakh. After the Russian-Persian War in 1804–1813 the Russian government undertook changing the status of Karabakh: Russian government had sufficient grounds to act so. Constant violation of laws by local muslim rulers and their betrayals became the main reason for the abolishment of the khan rule in Karabakh. Under the special directive of the Viceroy of the Caucasus General A. Yermolov, as of November 1822 the khan rule in Karabakh came to an end. This event was positively perceived by the Armenians of Karabakh, who suffered for centuries under the unjust rule of the Karabakh khans. From this view, the materials in the “Acts of Caucasian Archaeographic Commission” have a particular source-study significance.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱԾՈՒԹՅԱՆ  
ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց լեզվի զարգացման միջինհայերենյան փուլը պատմահասարակական բարդ հանգամանքներում է ձևավորվել: Ըստ հայերենի գիտական շրջանաբաժանման՝ այն ընդգրկում է XII–XVI դարերը<sup>1</sup>: «Միջին հայերեն» եզրույթն առաջինը կիրառություն մեջ է դրել հայագետ Յ. Կարստը<sup>2</sup>, և այն գիտական շրջանառություն մեջ է մինչ օրս: Մեկ այլ հայագետի՝ Ղ. Հովնանյանի ուսումնասիրության մեջ «միջին հայերեն» եզրույթի փոխարեն կան այլ որակումներ՝ «միջին օղակ», «միջին ճյուղ»<sup>3</sup>:

Միջին հայերենը եղել է հասարակական զանազան խավերի հաղորդակցման լեզու: Այս հանգամանքը վկայում է, որ այդ գրախոսակցական լեզուն ունի տարբեր որակներ: Այս առումով ամենակարևորը և խնդրահարույցը տարածք առ տարածք, դար առ դար ի հայտ եկող լեզվական (բարբառային) զգալի տարբերություններն են: Հր. Աճառյանն այդ ոչ միատարրությունը ներկայացրել է այսպես. «... միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր, որ պետականություն չնորհիվ բարձրացավ գրականության: Ուրիշ բարբառների հետքեր երևան են գալիս տարբեր վայրերում գրված գրքերի և արձանագրությունների մեջ»<sup>4</sup>:

Միջին հայերենում բարբառային տարբերակվածությունը լեզվական զանազան դրսևորումներով ու փուլերով է ներկայանում: Ըստ լեզվական փաստերի՝ միջին հայերենի կազմավորման սկզբնական շրջանում այն թույլ արտահայտվածություն է ունեցել, հետագայում խորացել ու վերաճել է առանձին տերիտորիալ (տարածքային) բարբառների տարբերակման: Վաղ շրջանում ընդամենը նկատելի են այդ բարբառային իրողությունների սաղմերը, որոնք հետագայում ավելի որոշակի և ընդգծված արտահայտվածություն են ձեռք

<sup>1</sup> Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 26:

<sup>2</sup> J. Kartst. Historische Grammatik der Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, S. 13.

<sup>3</sup> Տե՛ս Ղ. Հովնանյան. Հետազոտությունք նախնեաց ուսմկորէնի վրայ, մասն առաջին, Վիեննա, 1897, էջ 47–48:

<sup>4</sup> Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 253:

բերում: Ըստ այդմ՝ միջին հայերենի տարբերակների առանձնացման գործում պետք է կարևորություն ստանան միջին հայերենով ստեղծագործող հեղինակների բնակության բուն վայրերի ճշգրտումն ու որոշումը: Այսպիսի աշխատանքը կօգնի լեզվական համակարգերի գործառնման հստակ բաշխում կատարել և միջինհայերենյան շրջանում գործառած բարբառների տարածման սահմաններ որոշել: Նման մոտեցումը կարևոր է, քանի որ միջին հայերենով ստեղծագործող հեղինակներն իրենց ստեղծագործություններում կամա թե ակամա ներկայացրել են իրենց բնակավայրերի (միջավայրի) խոսակցական լեզուները:

Միջին հայերենի յուրահատկությունների մասին հայոց լեզվի պատմաբան Ռ. Ղազարյանը գրել է. «... իբրև լեզվի զարգացման մի նոր որակ, միջին հայերենին ընդհանրապես բնորոշ է լեզվական ձևերի ու կառույցների խիստ բազմազանությունը՝ հիմնականում պայմանավորված միջնադարյան գրավոր տարբեր աղբյուրներում միջինհայերենյան և գրաբարյան բազմաբնույթ իրողությունների գիրկընդխառն գործածությունը և բարբառային տարրերի փոխներթափանցությունը»<sup>5</sup>: Լեզվական այդ տարբերությունների կամ «գիրկընդխառն» վիճակի ճշգրտումը և այդ համակարգերի միմյանցից սահմանազատումն ունի սպառիչ հիմնավորումների անհրաժեշտություն: Լեզվական այդ տարբերությունները համակարգված չեն ու ցաքուցրիվ են, ուստի՝ ենթակա են բացարձակ և հարաբերական վերականգնումների: Այս առումով միջին հայերենի առանձնահատկություններն ուսումնասիրած, ոլորտի տեսաբան Մ. Մարգարյանը գրել է. «... միջին գրական լեզվի պատմության համար խիստ կարևոր է նրա բարբառների ճանաչումն ու քննությունը, որովհետև բարբառների ճանաչմամբ հնարավոր կլինի որոշել գրական լեզվի և նրա բարբառների կապի աստիճանը, գրական լեզվի միասնական կամ ոչ միասնական լինելու իրական հիմքերը»<sup>6</sup>:

Հայ իրականության մեջ միջին հայերենը հետաքրքրությունների մեծ շրջանակ է պարունակում: Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներով զբաղված գրեթե բոլոր երախտավորները՝ Ա. Այտընյանը, Ղ. Հովնանյանը, Հր. Աճառյանը, Յ. Կարստը, Մ. Աբեղյանը, Ս. Ղազարյանը, Գ. Ջահուկյանը, Ռ. Ղազարյանը, Հ. Մուրադյանը, Մ. Մարգարյանը, Լ. Հովսեփյանը և այլք, փաստել են, որ միջին հայերենը երբեք չի եղել լեզվական միասնական նորմաներով, միատարր որակներով ներկայացող լեզու: Միջին հայերենի նորմավորման օրինաչափությունների մասին Գ. Ջահուկյանը գրում է. «Եթե գրաբարի սկզբնական և նոր գրական հայերենների վերջին փուլերը բացահայտորեն նորմավորված և միասնական գրական լեզուներ են,

<sup>5</sup> Ռ. Ղազարյան. Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, 2001, էջ 3-4:

<sup>6</sup> Մ. Մարգարյան. Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII-XIV դարեր).- Լեզվի և ոճի հարցեր, III, Երևան, 1975, էջ 212:

ապա միջին հայերենի պատմությունն ողջ ընթացքում այդպիսի բացահայտորեն նորմավորված և միասնական վիճակ դժվար է արձանագրել. նրան հատուկ են ձևերի բազմազանությունը և բազմիմաստությունը»<sup>7</sup>: Որպեսզի ցույց տա միջին հայերենի լեզվական միասնական համակարգերի բացակայությունը, Հ. Մուրադյանը միջին հայերենի գրավոր հուշարձանների լեզվական տվյալների հիման վրա վերականգնում է բաղաձայնական չորս համակարգ՝ ա) բուն միջին հայերենին վերագրվող եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությունը, բ) գրաբարատիպ և արևելահայ գրականի տիպի, գ) Մշո և Կարնո բարբառների տիպի, դ) արևմտահայ գրական լեզվի երկաստիճան խլազուրկ<sup>8</sup>:

Լ. Հովսեփյանը, նկարագրելով XIII դ. հայերեն ձևագրերի հիշատակարանների լեզուն, փաստում է, որ միջին հայերենն ունի բավական խայտաբղետ պատկեր: Ըստ հետազոտողի՝ միջին հայերենն իր նորմավորմամբ ու միօրինականացմամբ չի հասնում գրաբարին, չի հաղթահարում նույնիմաստ քերական ձևերի բազմազանությունը, իսկ խոսակցական լեզուն տարբերակային է «... խոսակցական լեզուն արդեն ի հայտ էր բերում բարբառային զգալի տարբերություններ»<sup>9</sup>:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միջին հայերենը միատարր չի եղել գրեթե ամենուր հայախոս և ոչ մի վայրում: Տարածքային տարբեր միավորներից մեզ հասած լեզվական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակավայրերն ունեցել են բարբառային կայուն օրինաչափություններ: Հիշատակենք մի քանի լեզվական վկայություններ: Հնչյունական համակարգ. այ>ա, եա>ե՝ մէկ այլ>մէկալ, փայտ>փատ, ցորեան>ցորեն և այլն (Կիլիկյան հայերեն), այ>է, եա>ե՝ հայրենիք>հէրէնիք, այլ>էլ, իւրեանց>իրենց և այլն (Կը ճյուղ), այ>է, իւ>ու, եա>ե՝ այրկան>երկան, դիւր>դուր, ածեալ>ածել և այլն (Լ ճյուղ): Ձևաբանական համակարգ. հոգնակի թվի հոլովում ու հոլովիչով սֆոնֆնի> սֆոնֆնոյ («դեղափոշի») և այլն (Լ ճյուղ), հոգնակի թվի հոլովում ու ու հոլովիչներով հակթեր>հակթերոյ, կողեր>կողերուն և այլն (Կիլիկյան հայերեն), հոգնակի թվի հոլովում ու հոլովիչով իշան>իշանուն, թոռներ>թոռներուն և այլն (Կը ճյուղ)\*: Հենց այս լեզվական երևույթներն են հանգեցնում լեզվական որոշակի տարբերությունների և ընդհանրությունների առաջացման, որոնց համամասնությունը, բնականաբար,

<sup>7</sup> Գ. Զահուկյան. Միջին հայերենը որպես լեզվական որակ. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, № 1, էջ 16:

<sup>8</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 123:

<sup>9</sup> Լ. Հովսեփյան. ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, էջ 10–11:

\* Լեզվական օրինակները տրվում են ըստ Մ. Մարգարյանի «Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII–XIV դարեր)» աշխատության մեջ վերականգնված տվյալների:

տարբեր է: Նկատի առնելով լեզվական ընդհանրությունները՝ Մ. Մարգարյանը գրում է. «... միջին հայերենի տերիտորիալ տարբերակների միջև ընդհանրությունները պայմանավորված են նաև լեզվի զարգացման այդ փուլին հանգող ներքին տենդենցների նկատելի համընթացությամբ, մի հանգամանք, որը հիմնականում արդյունք է հին հայերենի բարբառային առումով առավել միասնության»<sup>10</sup>:

Միջին հայերենի բարբառային տարբերակվածությունը լավագույնս գնահատում է Մ. Աբեղյանը: «Գուսանական ժողովրդական տաղեր» աշխատության մեջ նա վերլուծում է միջնադարում ժողովրդական («աշխարհական») մտածողության ակունքներում ծնունդ առած հայրենիների և անտունիների լեզվական որակները. «... այդ գուսանական ժողովրդական տաղերը հորինված են զանազան դարերում և այլևայլ տեղերում, և դրանց հեղինակները յեղել են զանազան բարբառներով խոսող մարդիկ: Բնականաբար այդ փոքրիկ յերգերի լեզուն միակերպ չի. դրանց մեջ յերեման են գալիս նաև տարբեր բարբառների ձևեր: Ապա՝ քանի վոր դրանք ապրել են բերանացի, դրանց լեզուն ևս, ինչպես ժողովրդական յերգերի լեզուն ընդհանրապես, միշտ յենթակա յէ յեղել փոփոխության, միշտ վերանորոգվել է: ... Այսպէս՝ նույն բառերը գործածված գտնում ենք տարբեր ձևերով՝ օնքներ, ունքեր, ուներ, յուներ. այլ, ալ, էլ. այն, ան, էն. կայր, կար, կէր. ոտից, ոտվնու. անկաւ, ինկաւ, ընկաւ. տեսանել, տեսնուլ. ելանել, ելնել, ելնուլ. չեմ ի սիրել, չեմ սիրել, չեմ սիրեր և այլն: Յերբեմն այսպիսի տարբեր ձևեր կան վոչ միայն վարիանտների, այլ և միևնույն հայրենի մեջ. հին ձևի հետ նորը, մի բարբառային ձևի կողքին մի ուրիշ բարբառինը: Դա առաջանում է նրանից, վոր այս ամենը կատարվել է բնական ճանապարհով, առանց վորևէ դիտավորության, անզգալիորեն»<sup>11</sup>: Ըստ էության, Մ. Աբեղյանն իր վերլուծություններում լեզվական ցայտուն վկայություններով ներկայացնում է միջինհայերենյան շրջանում բարբառների տարբերակային արտահայտվածությունը:

Ըստ մեր դիտարկումների՝ միջին հայերենի շրջանում ի հայտ եկած տարածքային տարբերակների առաջացմանը նպաստել են պատմահասարակական մի շարք գործոններ: Այսպես՝

ա) պետություն ու պետականություն չունենալը. պետական, վարչական, տնտեսական համակարգերի բացակայությունը միջին հայերենի շրջանում խաթարել էր միասնական կենսագործունեությունը և զարգացումը: Այս հանգամանքները խորացնում են լեզվական համակարգերի տարբերակվածությունը՝ նպաստելով առանձին տարածքների ոչ միասնական զարգացմանը: Ինչպես գիտենք, այս ժամանակահատվածում հայ ժողովուրդը մասնատված էր ու երկփեղկված: Կիլիկիայում ստեղծվել էր հայկական անկախ թագավորություն, պատմական Հայաստանի հյուսիսային, արևելյան նա-

<sup>10</sup> Մ. Մարգարյան. նշվ. աշխ., էջ 220:

<sup>11</sup> Մ. Աբեղյան. Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 19–20:



Հանգները Զաքարյան իշխանների տնօրինության ներքո էին, իսկ Հայաստանի մեծագույն մասը կենտրոնական ու հարավային շրջանները, սելջուկ-թուրքերի լծի տակ էր: Կիլիկյան թագավորության անկախության ժամանակահատվածում XIII դ. կեսերին, սկսվում է հայ ժողովրդի երկատման մյուս էտապը: Մոնղոլական պետության հրոսակների հարձակումները մեծ ծավալներ են ստանում: Քաղաքական ու տնտեսական նման պայմաններում պատմական Հայաստանը պահպանում էր կիսանկախ վիճակ, իսկ Կիլիկյանում հայկական պետության գոյությունը տնտեսական և մշակութային առաջընթացի ու վերելքի չնչին հնարավորություններ էր ստեղծում:

բ) Լեզվական տարբերակների առաջացման համար կարևոր նախադրյալներ են միջին հայերենի շրջանում կատարված զանգվածային գաղթերը բուն Հայաստանից դեպի Կիլիկիա, Ասիայի ու Եվրոպայի զանազան երկրներ<sup>12</sup>, ինչպես նաև՝ լեզվական այլ հանրույթների՝ սելջուկ-թուրքերի ու թաթար-մոնղոլների ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ<sup>13</sup>: Այսպիսի իրավիճակը նպաստում է, որ հայախոս հանրույթներն աստիճանաբար մեկուսանան իրարից, կենսագործունեություն ծավալեն լեռնային տարբեր անմատչելի գոտիներում և մեկուսի հովիտներում: Գոյացած և աստիճանաբար գոյացող լեզվական «կղզյակներում» տերիտորիալ (տարածքային) միավորների առաջացումը լեզվի բնականոն փոփոխությունների հիմք է դառնում: Ա. Այտրնյանը միջին հայերենի լեզվական տարբերակների առաջացման հիմքում էական է համարում հարատև գաղթերը՝ իր տերմինավորմամբ «Գաղթականություն»-ը: Նա գրել է. «Ի՞նչ է ուրեմն գաղթականութեանց՝ ընդհանուր լեզուին վրայ ազդեցությունը. եթէ ոչ՝ ազգին բաժանմունքներովը լեզուի ալ նորանոր բաժանմունք յառաջ բերել»<sup>14</sup>, ապա եզրակացնում է՝ «Մենք մինչեւ գաղթականութեանց սկիզբները՝ շատ թեթեւ ու կիսակատար գաղափար մ'ունինք Հայաստանի գալառականներուն վրայ. բայց ինչպէս Անեցոց եւրոպական հատուածը, նոյնպէս դէպ ի արեւելք եւ հիւսիս անցնողներն՝ որ արդեն ասկէ քանի մը դար յառաջ ալ իրենց հիմնական լեզուն կը խօսէին, եւ իրարմէ տարբեր տարբեր լեզուներ ու-

<sup>12</sup> Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1–2, Երևան, 2003, հ. 3, Երևան, 2013, Ա. Ալ պ օ յ ա ճ ե ա ն. Պատմություն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, Բ, Փահիրէ, 1955, Գ, Երևան, 2017, Հր. Ա ճ ա ո յ ա ն. Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, նաև՝ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1959, էջ 13:

<sup>13</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, հ. 4, Երևան, 1972, նաև՝ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, Գ (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության), Երևան, 1977, նաև՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 7–39, մասն Բ, Երևան, 1958, էջ 7–33:

<sup>14</sup> Ա. Այտրնեյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 165:

նէին, իւրաքանչիւր իրենց հին գաւառականն առած ելած են Հայաստանէն: Ասիկա բաւական է ցուցընելու թէ գաղթականութեանց սկիզբներէն յառաջ Հայաստանի (եւ Կիլիկիայի) աշխարհիկ լեզուն քանի մը տեսակ էր»<sup>15</sup>:

Ա. Այտընյանի արտահայտած տեսակետը մեկ դար անց ընդունելու կարևորել է նաև Գ. Ջահուկյանը: Հայերենի զարգացման միջին-հայերենյան շրջանում լեզվական համակարգերի պարզեցման ու տարբեր ձևերի ազատ գործածություն, գուգաձևությունների ու անմիօրինակությունների առատությունը, այլև նորանոր տարածքային տարբերակների առաջացումը, ըստ Գ. Ջահուկյանի, պայմանավորվում է հայ ժողովրդի վայրից վայր տեղաշարժերով. նրա՝ «Բարբառային տարբերություններն այս շրջանում նշանակակից չափով աճում են՝ տերիտորիալ առանձնացման և աշխարհի տարբեր մասերում հայկական գաղութներ հաստատելու ուժեղացող պրոցեսների հետ կապված: Գծազրվում են ժամանակակից բարբառային տարբերությունների սաղմերը»<sup>16</sup>:

դ) Լեզվական նախադրյալները նույնպես առանցքային են միջին հայերենի տարածքային տարբերակների ձևավորման համար: Այստեղ կարևոր են մի քանի հանգամանքներ՝ ա) լեզվի՝ որպես բնական զարգացող օրգանիզմի փոփոխությունների ենթարկվելը ժամանակի ընթացքում, բ) հին լեզվական որակներին նոր լեզվական որակներով փոխարինելը կամ հնի և նորի միաժամանակ, համատեղ գործածությունը, գ) թեքական (համադրական) բնույթ ունեցող հին հայերենի աստիճանական պարզեցումը, նրա բարդ համակարգի քայքայումը, գերազանցապես կցական մասնիկավորում ունեցող, վերլուծական տիպի լեզու դառնալը: Մ. Մարգարյանն իրավացիորեն գրում է. «... միջին հայերենի տերիտորիալ տարբերակների միջև ընդհանրությունները պայմանավորված են նաև լեզվի զարգացման այդ փուլին հանգող ներքին տենդենցների նկատելի համընթացությունով, մի հանգամանք, որը հիմնականում արդյունք է հին հայերենի բարբառային առումով առավել միասնություն»<sup>17</sup>: Ղ. Հովնանյանը, հետազոտելով XII–XVII դարերում ստեղծված «ռամկօրէն մատենագրութիւնը» իր ուսումնասիրություններում կարևորում է «նախնեաց ռամկօրէն»-ի դարից դար օրինաչափ փոփոխությունների ենթարկվելու և միջին դարերում ստեղծված գրականությունը հին ու նոր լեզուների միջև «միջին օղակ» լինելու հանգամանքը՝ «... բնական անցքն է միոյն առ միւսն»: Փորձելով գնահատել ժամանակի խոսակցականների գրականության լեզու դառնալու հանգամանքը, նա գրել է. «Բայց իրօք եւ արդեամբք կայ այս երկրորդ (միջին) ճիւղը, որ կարծուածէն ընդարձակ է, եւ ըստ բաւականին հետաքրքրական: Վերջին 6–7 (ժԲ–ժԷ) դարուց մէջ թէպէտ գտնուած են ոչ սակաւք,

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 45:

<sup>17</sup> Մ. Մարգարյան. նշվ. աշխ., էջ 220:

որ իւրաքանչիւր ժամանակի զրաբարով գրած են, բայց բազմա-  
գոյնք ռամկօրէն կամ՝ ռամկախառն բարբառով վարուած են: Արդ  
ասոնց գրուածոց մի մասը պահուած է, եւ այս է՝ որ Ռամկօրէն մա-  
տենագրութիւն կը կոչենք»<sup>18</sup>:

Յ. Կարստը, նույնպէս կարեւորելով լեզվի զարգացման բնական օ-  
րինաչափութիւնները, միջին հայերենի լեզվական նախադրյալների  
ձևավորման հարցում հիշատակում է հետևյալ հանգամանքները.  
«Միջին հայերեն մենք անվանում ենք անցման փուլը հին և նոր  
հայերենի միջև, երբ հին հայերենը հնչյունաբանական առումով  
կորցրել է իր նախնական ամբողջականութիւնն ու ենթարկվել նկա-  
տելի փոփոխութիւնների: Դրանք են՝ ա-ի կորուստը միջին վան-  
կում, երկբարբառները՝ արդեն հիմնականում ավարտված պարզեցու-  
մը և բաղաձայնների երկրորդ հայկական տեղաշարժը: Ձևաբանա-  
կան առումով տեղի են ունենում, համաբանութիւն սկզբունքով  
պայմանավորված, նկատելի նորագոյացութիւններ: Միջին հայերե-  
նի շրջանը տեղում է մոտավորապէս Ժ դարից մինչև ԺԵ դարը, երբ  
սկսվում է նոր հայերենի շրջանը, որի լեզուն նույնպէս որոշ հատ-  
կանիչներով տարբերվում է միջին հայերենից»<sup>19</sup>:

Կարծում ենք՝ հայերենի բարբառների առաջացման, ձևավորման  
և կազմավորման համար քննարկման ենթարկվող պատմահասարա-  
կական ու լեզվական նախադրյալներից բացի կարևոր են նաև բնա-  
կլիմայական պայմանները: Պատմական Հայաստանի լեռնային գո-  
տիներով հարուստ լինելը տարածքային տարբերակների առաջաց-  
ման և դրանց գոյութիւնը հիմնավորող կարևորագույն հանգա-  
մանքներից է: Բնակլիմայական պայմանների պատճառով է նաև, որ  
լեզվական հանրութիւններն ապրում են միմյանցից մեկուսացած, լեզ-  
վական առանձին «կղզյակներում»:

Ինչպէս տեսանք, միջին հայերենի բարբառային տարբերակվա-  
ծութիւն լեզվական և պատմահասարակական նախադրյալները  
գլխավորապէս պայմանավորված են Հայ ժողովրդի հարատև տեղա-  
շարժերով, ոչ միասնական սոցիալ-տնտեսական ու քաղաքական  
զարգացման ընթացքով, ինչպէս նաև՝ միմյանցից մեկուսացած ապ-  
րելակերպով:

Կատարված վերլուծութիւնները ցույց են տալիս, որ միջին հայե-  
րենի շրջանում հայերենի մի շարք բարբառների գոյութիւնը՝  
դրանց վերջնական ձևավորումն ու կազմավորումը, ուղղակիորեն  
վերոբերյալ փաստերով և հանգամանքներով են պայմանավորված:  
Արդյան լեզվաբանական վերականգնումներով վիճարկման ենթակա  
չէ, որ միջին հայերենի շրջանում եղել են հայերենի բազմաթիվ  
բարբառներ: Սակայն մոտավոր է ճշգրտված կամ գրեթե ճշգրտված  
չէ, թե որ վայրում ինչպիսի որակական հատկանիշներ ունեցող բար-  
բառներ են եղել, կառուցվածքային ինչպիսի առանձնահատկութ-

<sup>18</sup> Ղ. Յո վ ն ան ե ան. նշվ. աշխ., էջ 47–48:

<sup>19</sup> Յ. Կարստ. Կիլիկյան հայերենի պատմական քերականութիւն,  
Երևան, 2002, էջ 13:

յուններ ու համակարգեր են ունեցել: Միջինհայերենյան բազմաբնույթ լեզվական նյութերի և աղբյուրների քննությունն արդիական է ու կարոտ նորովի լուսաբանման: Հետազոտություններով կորոշվեն տարածքային տարբերակների սահմանները և բնակավայրերի լեզվական համակարգերը: Միջին հայերենով ստեղծագործած հեղինակների տարածքային (արեալային) պատկանելությունը՝ արդեն իսկ վերականգնված և վերականգնելի, կօգնի տալ վերոնշյալ հարցերի պատասխանները: Ի դեպ, կատարվելիք վերականգնումներում պետք է մեծ կարևորություն ստանան նաև վիմական ու ոչ վիմական արձանագրություններով ավանդված լեզվական փաստերը\*:

Եղած լեզվական հատկանիշների հիման վրա բնակավայրերի ու առանձին շրջանների լեզվական համակարգերի ու բարբառային համայնապատկերի բացարձակ կամ մոտավոր վերականգնումներով հնարավոր կլինի որոշել լեզվական տարբերակների միմյանցից սահմանազատումը: Մ. Մուրադյանն այս առումով գրել է. «Հնարավոր է դառնում պարզել այս կամ այն վայրի գրավոր կամ գրական միջին հայերենին ինչ իրողություններ են բնորոշ, դրանցից որոնք են բարբառային, որոնք միջին գրական, որոնք գրաբարյան, ինչ առնչություն, ինչ զանազանություն կա տարբեր վայրերի միջին հայերենում»<sup>20</sup>: Մեզ ավանդված լեզվական իրողությունների հաշվառումը, դասդասումը, ինչպես նաև տարատեսակ լեզվական բաց օղակների վերականգնումները հնարավորություն կընձեռեն նոր լույսի ներքո վերջնական գնահատական տալ միջին հայերենում եղած ոչ միայն լեզվական տարբերակների, այլև գրական լեզվի ու բարբառների տարբերակման և միմյանցից տարանջատման ենթադրյալ, հիպոթեզային դրույթներին:

Քննարկման ենթակա չէ այն, որ միջին հայերենում կան լեզվական տարբերակների հիմնականում երկու դրսևորում՝ միջին հայերենի գրական տարբերակներ, որը, ի դեպ, հետազոտական այլ խնդիր է, և միջին հայերենի խոսակցական տարբերակներ: Խոսակցական տարբերակների գոյությունը վկայությունը, ինչպես Ղ. Հովնանյանն էր մատուցում, «ռամկօրէն գրականութիւնն» է: Այս գրականության տվյալները, մեր խորին համոզմամբ, մեծ կարևորություն ունեն միջինհայերենյան լեզվական տարբերակների վերականգնումը կատարելու հեռանկարում, քանի որ կենդանի, խոսակցական լեզվի ու նրա տարբերակների ներթափանցումները լավագույնս երևում են այդ ստեղծագործություններում:

\* Որպես տարածքային վերականգնումների համար օգտագործելի գիտական աղբյուր կարող ենք հիշատակել Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (5-14-րդ դդ.)» աշխատությունը (Երևան, 1970):

<sup>20</sup> Մ. Մ ար գ ար յ ան. նշվ. աշխ., էջ 215:

ЯЗЫКОВЫЕ И СОЦИАЛЬНО-ИСТОРИЧЕСКИЕ  
ПРЕДПОСЫЛКИ ДИАЛЕКТНОЙ ВАРИАТИВНОСТИ  
СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

ГАРИК МКРТЧЯН

Резюме

Среднеармянский язык не был гомогенным практически нигде, и устойчивые диалектные закономерности существовали на разных территориях. В языковых и социально-исторических предпосылках вариативности среднеармянского языка основная роль принадлежит следующим факторам: а) отсутствие государства и государственности, нецелостный процесс социально-экономического развития; б) непрерывная дислокация и миграция армянского народа; в) естественные закономерности развития армянского языка; г) природно-климатические условия.

LINGUISTIC AND SOCIO-HISTORICAL PREREQUISITES OF MIDDLE  
ARMENIAN DIALECTIC DIFFERENTIATION

GARIK MKRTCHYAN

Summary

Middle Armenian was never homogeneous almost anywhere and had stable dialectical patterns existed in different places. The main role in the linguistic and socio-historical prerequisites of the Middle Armenian dialectic differentiation belong to the following factors: a) absence of state and statehood, incomplete process of socio-economical development, b) constant incessant dislocation and emigrations of Armenian people, c) natural patterns of the development of Armenian language, d) natural-climatic conditions.

## ԱՐԻԱՆՈՍԻ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Մ. Թ. II դարի հույն պատմիչ Արիանոսի տեղեկություններից մեկը՝ մ. թ. ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում հայերի մասնակցությունը մասին, հայագիտության մեջ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել<sup>1</sup>: Նա գրում է, որ Գավգամելայի ճակատամարտում «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաոստեսը»<sup>2</sup>: Արիանոսի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Գավգամելայի ճակատամարտում պարսկական բանակին օգնություն էկած այլ ցեղերի և ժողովուրդների զորամասերը<sup>3</sup> հիմնականում ղեկավարել են համապատասխան սատրապները, ընդ որում՝ բացառությամբ մեկ իրողության, մնացած բոլոր ղեկավարները այս կամ այն զորամասը գլխավորել է մեկ հոգի, այսինքն՝ տվյալ երկրի կամ ժողովրդի սատրապը. հնդիկների, բակտրիացիների և սոգդերի առաջնորդն էր Բակտիրայի սատրապ Բեսը, սակերի առաջնորդն էր Մավակը, արաքոսիացիների և, այսպես կոչված, լեռնային հնդիկների առաջնորդն էր Արաքոսիայի սատրապ Բարսանեսթեսը, արիացիներին՝ Արիայի սատրապ Սատիբարզանեսը, պարթևների, վրկանների և տապուրների առաջնորդն էր Թրատաթերնեսը, մարերի հրամանատարն էր Ատրոպատեսը (մարերի հետ էին կաղուսիները, աղվանները և սակեսիները), Կարմիր ծովին սահմանակից ցեղերին՝ Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսն ու Օրքսիները, սուսիանների և ուքսերի հրամանատարն էր Օքսաթրը, Բուպարեսն առաջնորդում էր բաբելոնացիներին, որոնց հետ էին «արտաքսվածները»՝ կարիացիները և սիրտակենները, կապադովկիացիներին՝ Արիակեսը, Կելեսիրիայի և Միջագետքի ասորիներին առաջնորդում էր Մագալոսը<sup>4</sup>: Ինչ-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 506, Հ. Մանանդյան. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 95, Ս. Կրկյաշարյան. Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI – մ. թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 73, Լ. Շահինյան. Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող վահեի մասին. – ՊԲՀ, 1973, № 4, էջ 172–178, Ա. Մովսիսյան. Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V–III դարերի պատմության շուրջ. – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIX, Երևան, 2014, էջ 85–87:

<sup>2</sup> Arrian. Anabasis Alexandri, with an English translation by E. H. Robson, Cambridge-Massachusetts-London, vol. I, 1967, III, 8, 5, p. 246.

<sup>3</sup> Տե՛ս նաև Դիոդորոս Միլիթիացի. Պատմական գրադարան, Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան 1985, էջ 94:

<sup>4</sup> Arrian. III, 8, 3–6, pp. 244, 246.

պես տեսնում ենք, պարսկական բանակին օգնության եկած զորամասերի հրամանատարները, ըստ ցեղային բաժանման սկզբունքի, եղել են սատրապները, իսկ բանակի ցեղային բաժանումն իր հերթին համապատասխանում էր Աքեմենյան տերության վարչական բաժանմանը: Պարսկական բանակի կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարմանալիորեն միայն հայերն են ունեցել երկու առաջնորդ. ինչպե՞ս է բացատրվում այս հանգամանքը: Մեկ այլ դեպքում էլ նշեցինք, որ Կարմիր ծովին սահմանակից ցեղերին առաջնորդում էին Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսը և Օրքսսինեսը, ինչը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրը եղել է իր ցեղի կամ երկրի սատրապը, սակայն պատմիչն անվանապես չի հիշատակում նրանց ենթակայություն տակ գտնվող ցեղերին ու ժողովուրդներին:

Արիանոսը մեկ այլ տեղում նշում է, որ Գավգամելայի ճակատամարտին հայկական և կապադովկիական զորամասերը գտնվել են կողք կողքի՝ պարսկական բանակի աջ թևում, որն էլ շատ ուժեղ դիմադրություն է ցույց տալիս մակեդոնական բանակին, և միայն Ալեքսանդրի միջամտության շնորհիվ է հաջողվում պարտության մատնել աջ թևին<sup>5</sup>:

Մ. թ. I դարի հռոմեացի պատմիչ Ռուփոսը Գավգամելայի ճակատամարտում հիշատակում է Փոքր Հայքի ու Մեծ Հայքի հայերին՝ 40000-անոց հետևազորով և 7000-անոց հեծելազորով՝ չնչելով վերջիններիս առաջնորդներին<sup>7</sup>: Փաստորեն, Ռուփոսը չի հիշատակում Օրոնտեսին և Միթրաուստեսին (Միհրվահիշտ), սակայն Արիանոսի հիշատակած ամբողջական, այսինքն՝ չտարբերակված հայերին Ռուփոսը բաժանել է երկու մասի՝ Փոքր ու Մեծ Հայքի հայերի: Ստացվել է այնպես, որ Օրոնտես-Երվանդ Գ-ն համարվել է Մեծ Հայքի կառավարիչը, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքի<sup>8</sup>: Ժամանակին Ս. Կրկյաշարյանն այն միտքն էր հայտնել, որ նշված զորահրամանատարներից մեկն առաջնորդում էր հայկական յոթհազարանոց հեծե-

<sup>5</sup> Արիանոս. Ալեքսանդրի արշավանքը.՝ Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 101, 105–106:

<sup>6</sup> Հնարավոր է, որ հայկական բանակի թիվը վերաբերում է Խոսի ճակատամարտին (տես Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298 թ., կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, Երևան, 2007, էջ 262):

<sup>7</sup> Rufus Curtius Quintus. History of Alexander, with an English transl. by John C. Rolfe, Cambridge-Massachusetts-London, vol. I, 1971, III, II, 6, p. 72; IV, XII, 10; 12, p. 272.

<sup>8</sup> Ս. Կրկյաշարյան. նշվ. աշխ., էջ 73, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 506, Ա. Մովսիսյան. նշվ. աշխ., էջ 85–87: Ըստ Լ. Շահինյանի՝ Խորենացու հիշատակած Վահեն (Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, էջ 86) նույնանուն է Միթրաուստես-Միհրվահիշտին՝ Մեծ Հայքի թագավորին, որի մահից հետո Օրոնտեսը, հավանաբար, Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվում է ամբողջ Հայաստանի սատրապ (տես Լ. Շահինյան. նշվ. հոդվ., էջ 172–178):

լազորը, իսկ մյուսը՝ 40 հազարանոց հետևակը<sup>9</sup>: Իհարկե, նման կարծիքը հնարավոր է, սակայն Օրոնտեսը և Միթրաոուսեսը միայն գործարարներ չէին և վերևում, համեմատելով մյուս գործարարների կարգավիճակը, նրանք ևս պետք է սատրապներ լինեին:

Արիանոսի «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաոուսեսը» արտահայտությունը մոտ է նաև Քսենոփոնի այն տեղեկությունը, երբ վերջինս հայտնում է, որ հունական գործի մուտքը Հայաստան փորձում են արգելել Օրոնտասի ու Արտուխասի «արմենները և մարդերն ու խալդայները վարձկան»<sup>10</sup>: Մարդերի ու խալդայների վարձկան լինելու հարցն արդեն քննարկել ենք մեր մի այլ աշխատությունում<sup>11</sup>, ուստի մեզ համար անհրաժեշտ է պարզել, թե ով էր Արտուխասը: Օրոնտասը Հայաստանի սատրապն էր, իսկ Արևմտյան Հայաստան վարչական միավորի հյուպարքոսը Տիրիբազոսն էր<sup>12</sup>: Հայաստանի սատրապ և միաժամանակ թագավոր<sup>13</sup> Օրոնտաս-Երվանդի կողքին հիշատակվող Արտուխասը, անկասկած, նշանավոր մեկը պետք է լիներ: Մեր կարծիքով, Արևմտյան Հայաստան հյուպարքիայի հիշատակությունն ինքնըստինքյան ենթադրում է Արևելյան Հայաստան հյուպարքիայի գոյությունը, որի հյուպարքոսն էլ Արտուխասն էր: Հետևաբար, Արիանոսի «հայերին ղեկավարում էին Օրոնտեսը և Միթրաոուսեսը» և Քսենոփոնի «Օրոնտասի և Արտուխասի արմենները» ձևով նման տեղեկությունները ցույց են տալիս, որ երկու դեպքում էլ գործ ունենք վարչական կառավարման առկայությունը պայմանավորված իրողության հետ, երբ հայկական գործարարներն առաջնորդում են սատրապն ու վերջինիս ենթակա հյուպարքոսը:

Ռուփոսի կողմից Փոքր Հայքի հիշատակությունը կարևոր է այն առումով (անկախ այն հանգամանքից, որ Եփրատից արևմուտք ընկած տարածքը մ. թ. I դարի պատմիչին հայտնի էր Փոքր Հայք անվանումով), որ նշված տարածքն ավելի լայն ընդգրկմամբ՝ Պակտյունիկե անվան տակ, Դարեհ Ա-ի ժամանակներից մտնում էր XIII սատրապության կազմի մեջ<sup>14</sup>: Եփրատից արևմուտք ընկած տարածքը՝ միլիդոուսներ-մելիտինեցիների անվան տակ մ. թ. ա. V դարի վեր-

<sup>9</sup> Ս. Կրկյաչարյան. *նշվ. աշխ.*, էջ 74: Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 504:

<sup>10</sup> Քսենոփոն. *Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկյաչարյանի, Երևան, 1970, էջ 89, Հ. Մանանդյան. *նշվ. աշխ.*, էջ 374: Ս. Կրկյաչարյանի թարգմանությունն ավելի ճիշտ է արտահայտում հունարեն բնագրի իմաստը, քան թե ռուսերեն և անգլերեն թարգմանությունները (տես Xenophon. Anabasis. Греческая история. Пер. С. Лурье. М., 2010, IV, III, 4, с. 90; Xenophon. Anabasis, with an English translation by Carleton L. Brownson, vol. III, Books I-VII, Cambridge-Massachusetts-London, 1980, IV, III, 4, p. 278):

<sup>11</sup> Հ. Խորիկյան. *Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն)*, Երևան, 2014, էջ 54–55:

<sup>12</sup> Քսենոփոն, էջ 81, 93, 197:

<sup>13</sup> Հ. Խորիկյան. *նշվ. աշխ.*, էջ 58–59:

<sup>14</sup> Հերոդոտոս. *Պատմություն ինը գրքից*, թարգմ. Ս. Կրկյաչարյանի, Երևան, 1986, III, 93:



Ղին, ըստ բաբելոնական փաստաթղթերից մեկի, գտնվում էր Հայաստանի սատրապուլթյան կազմում<sup>15</sup>:

Արիանոսի՝ վերը մեջբերված խնդրո առարկա հատվածը հետաքրքիր է նաև այն առումով, որ պատմիչի երկու՝ հայերին և Կարմիր ծովին սահմանակից ցեղերին վերաբերող տեղեկությունների համեմատությունը, իրոք, ցույց է տալիս, որ միաժամանակ հիշատակվող սատրապները եղել են տարբեր ժողովուրդների կամ վարչական միավորների սատրապներ: Արդեն նշեցինք, որ Կարմիր ծովին սահմանակից ցեղերի սատրապները եղել են Օկոնտոբատեսը, Արիոբարզանեսը և Օրքսինեսը, այսինքն՝ այս իրողությունը, որ վերջիններս առանց որոշակի անվանական նշման եղել են սատրապներ, համարելի է Օրոնտեսի ու Միթրաուստեսի՝ հայերի սատրապներ լինելու հիշատակությունը: Ընդ որում, նկատենք նաև, որ Օկոնտոբատեսի և Օրոնտեսի առաջինը հիշատակվելը խոսում է հենց նրանց սատրապներ լինելու մասին, իսկ Արիոբարզանեսը, Օրքսինեսն ու Միթրաուստեսը սատրապների ենթականերն էին՝ հյուպարքոսները:

Համեմատություն համար նշենք, որ Հերոդոտոսը ևս XIII սատրապուլթյան կազմում արմեններ-հայերին հիշատակում է ընդհանրական ձևով<sup>16</sup>: Ընդ որում, հունարեն բնագրի Ἀρμενίων-ը թարգմանվում է նաև Արմենիա<sup>17</sup>, ավելի ճիշտ Արմենիաներ, ինչը հնարավոր է, եթե նկատի ենք ունենում հետագայում Մեծ ու Փոքր Հայքերի հիշատակությունը, սակայն, մեր կարծիքով, մ. թ. ա. VI դարավերջին Փոքր Հայքի գաղափարը դեռևս չկար: Հերոդոտոսի տվյալ կոնտեքստում արմեններ-հայեր թարգմանությունն ավելի ճիշտ է այն առումով, որ հույն պատմիչը կամ նրա աղբյուրը սատրապուլթյանների ցանկը հիշատակում է հիմնականում ըստ ցեղերի ու ժողովուրդների կազմի: Ամեն դեպքում Հայաստանը Հերոդոտոսի համար մեկ ընդհանուր երկիր է<sup>18</sup>, ինչը երևում է նաև «Անաբասիս»-ի<sup>19</sup> և «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններից<sup>20</sup>:

Այսպիսով, Արիանոսի և այլ անտիկ հեղինակների տեղեկությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Գավգամելայի ճակատամարտում հիշատակված Օրոնտեսը Հայաստանի սատրապն էր, իսկ Միթրաուստեսը՝ Եփրատից արևմուտք ընկած Պակտյուլիկի հյուպարքոսը:

<sup>15</sup> Մանրամասն տե՛ս Н. К h o r i k y a n. The Administrative Division of the 13<sup>th</sup> Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II.— «Метаморфозы истории». Псков, 2017, вып. 10, с. 174—180. Հմմտ. Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 84—85:

<sup>16</sup> Հ եր ո դ ո տ ո ս, III, 93:

<sup>17</sup> Геродот. История в девяти книгах. Перевод и примечания Г. Стратановского. Л., 1972, III, 93, с. 168; Herodotus. With an English translation by A. D. Godley, vol. II, Books III—IV, New York, London, 1928, III, 93, p. 120.

<sup>18</sup> Հ եր ո դ ո տ ո ս, I, 180, 194, V, 52:

<sup>19</sup> Ք ս ե ն ո փ ո ս, էջ 81:

<sup>20</sup> Xenophon. Cyropaedia, vol. I, with an English translation by W. Miller, Cambridge-Massachusetts-London, 1960, III, II, 18; 24, pp. 258, 262.

## ОБ ОДНОМ СВЕДЕНИИ АРРИАНА

ОГАННЕС ХОРИКЯН

## Резюме

Одно из сведений греческого историка II века нашей эры Арриана об участии армян в битве при Гавгамелах в 331 г. до н. э. стало причиной разных толкований в арменоведении. Историк пишет, что во время битвы при Гавгамелах «над армянами начальствовали Оронт и Мифравст». Сравнение сведений Арриана и других античных авторов показывает, что вышеупомянутый в битве при Гавгамелах Оронт был сатрапом Армении, а Мифравст — гиппархом Пактиике, находящегося западнее Евфрата.

## ON AN INFORMATION OF ARRIAN

HOVHANNES KHORIKYAN

## Summary

One of the testimonies of the Greek historian Arrian of the 2nd century AD referring to the participation of Armenians in the Battle of Gaugamela gave rise to various disagreements in Armenology. The historian writes that in the Battle of Gaugamela “Armenians were lead by Orontes and Mithraustes”. The comparison of the evidence by Arrian and other ancient authors shows that Orontes mentioned in the Battle of Gaugamela was the Satrap of Armenia, and Mithraustes was the Hyparch of Pactyica spreading to the west of the Euphrates.

СУРМА ТУМАНЯН. «И только через много лет...» или «в поисках прошлого». СПб., изд-во «Человек», 2017, 128 с.

В деле освещения малоизвестных подробностей жизни и творческой деятельности великого армянского поэта Ованеса Туманяна особую, исключительную ценность представляют воспоминания членов его семьи. Каждая публикация, статья, тем более, книга фактически является первоисточником. Весомый вклад в литературоведение внесли «Воспоминания и беседы» дочери Туманяна Нвард, а позднее — книги Ирмы Сафразбекян «Переписка семьи Туманяна» и «Страницы жизни семьи Туманяна». Для многих эти книги стали настольными, без них не может обходиться ни один туманяновед. И вот недавно мемуарная литература о Туманяне пополнилась новым изданием.



В Санкт-Петербурге увидела свет книга внучки поэта Сурмы Туманян «И только через много лет...» или «в поисках прошлого». Сурма — единственная дочь Арега Туманяна, самого младшего из сыновей поэта.

Автор воспоминаний — не литературовед и не историк, она — офтальмолог, кандидат медицинских наук, один из ведущих специалистов в мире по проблеме слабовидения, но для мемуарной литературы самым важным является ценность передаваемой информации, ее насыщенность архивными документами, то есть фактография. С. Туманян пишет о своем отце, пишет живо и непосредственно, повествуя о наиболее примечательных страницах жизни Арега Туманяна, чем существенно дополняет историю семьи поэта.

В результате долгих и скрупулезных исследований С. Туманян сделала ряд важных уточнений, начиная от даты рождения отца (27 ноября 1900 г.) и кончая определением места и времени его ареста, расстрела и захоронения.

В первой главе своих воспоминаний автор представляет детство и юность Арега. Самоочевидно, что в формировании его характера и мировоззрения большую роль сыграли известные деятели армянской литературы и искусства, сплотившиеся вокруг Туманяна и его «Вернатуна», а позднее — вокруг Кавказского

общества армянских писателей. В становлении личности Арега непереоценимую роль сыграли также исповедуемые в тифлисской гимназии Ст. Лисициана непреходящие нравственные и эстетические ценности и уникальная личная библиотека Ов. Туманяна, насчитывавшая около десяти тысяч книг.

В гимназические годы Арега Туманяна больше всего привлекали история и литература. Он учился на отлично и, по определению Ст. Лисициана, «был гордостью гимназии» (с. 12). Тем не менее, Арег проучился в гимназии одиннадцать лет. Причина длительности срока обучения была более чем уважительная. Это было роковое и судьбоносное для армянского народа время. 22 декабря 1917 г. полководец Андраник обратился к армянскому народу с воззванием, на которое первым откликнулся Ов. Туманян. Уже на следующий день в тифлиских газетах было опубликовано открытое письмо поэта народному полководцу, герою национально-освободительного движения, в котором говорилось: «У меня четверо сыновей, всех четырех отдаю в распоряжение правительства, Национального совета и твое, а четыре мои дочери с готовностью берутся за любую работу в тылу, делают все, что умеют. У меня, несомненно, нет ничего, кроме этого, следовательно, я ничего не пожалею, лишь бы нам удалось ... отодвинуть надвигающуюся опасность и защитить наши священные права и свободы»<sup>1</sup>. Понятно, что после такого публичного обещания своего отца Арег не мог посещать гимназию и, еще не достигнув призывного возраста, в первые месяцы 1918 г. он отправился на фронт, доблестно сражался и даже был награжден Георгиевским крестом за бои в окрестностях Эрзрума.

Во второй главе — «Немного о творчестве» — С. Туманян касается литературного творчества своего отца: поэмы «Дорога желтой коммуны», незавершенной пьесы «Красный Октябрь», незавершенной повести о бакинских комиссарах и английской интервенции, легенды об ашуге Имерлане, незавершенного исследования о жизни и творчестве Ов. Туманяна, лирической поэмы «Узоры Чжин-Чжоу», которую Арег посвятил жене.

В декабре 1922 г. Арег Туманян вместе с сестрами Ашхен и Нвард сопровождал уже неизлечимо больного отца в Берлин. Однако физическое состояние поэта было настолько плохим, что от этой поездки пришлось отказаться и остаться в Москве, где Туманяна поместили в больницу. Арег находился рядом с отцом до самого последнего мгновения его жизни. А после смерти поэта он выкрал его сердце. В письме брату Амлику Арег пишет: «... выкрал сердце отца. Нужно быть очень дерзким, чтобы вык-

---

<sup>1</sup> Հ ո վ Տ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 10, Երևան, 1999, էջ 281–282:

расть то сердце, которое обнимало весь мир ... но я не устоял. Пусть сердце моего святого отца будет в нашем доме. Они собирались выбросить, разве мог я это вынести? Ведь у меня тоже есть сердце»<sup>2</sup>.

... Каждая строка книги С. Туманян дышит неизбывной болью за отца, поскольку в последние дни своей земной жизни он был лишен какой-либо возможности увидеться с родными и близкими — такая форма изоляции имела емкую и суровую формулировку: «...без права переписки». Единственными свидетелями его тяжких дум и нравственных мучений в предшествовавшие расстрелу дни и ночи были тюремные стены.

Одним из важных достоинств книги является то, что впервые вниманию читателя представляются туманяноведческие исследования Арега. Его стремление изучить жизнь и творчество своего великого отца было обусловлено не только зовом крови, но и совершенно беспочвенными обвинениями литературоведа, переводчика и общественно-политического деятеля П. Макинцяна в адрес Ов. Туманяна. В своем выступлении по поводу 60-летия Туманяна критик обвинял Поэта всех армян в национализме, гайдукизме, религиозности, отсутствии революционности, а также в том, что он в своих произведениях не воспевал пролетариат. В ответ на эти обвинения Арег отметил, что Ов. Туманян является общенациональным поэтом, поэтом всего армянского народа. Таким поэтом для России был Пушкин, для Украины — Шевченко, для Польши — Мицкевич, для Грузии — Чавчавадзе и Церетели. «Кто может считаться общенациональным поэтом? Тот, кто унаследовал все культурное богатство своего народа, в лучших формах, наилучшим языком, пропустил через свой творческий многогранник все проявления этого народа или нации... Ов. Туманян националистом никогда не был, — утверждал Арег. — Он не позволял себе оскорбительных высказываний в адрес других народов ... В чем должен проявляться национализм?.. Некоторые, показывая себя интернационалистами, полагают, что тот, кто любит свой народ, тот и националист. Это верно, если любовь к своему народу питается его ненавистью к другому, но если любить свой народ и при этом уважать другие народы, то это не национализм. Это патриотизм в сочетании с терпимостью» (с. 50–51).

Собрав огромный материал о литературном наследии поэта, Арег Туманян собирался представить его в тринадцати главах своего исследования. Он намеревался также составить подробную летопись-хронику жизни отца. По его убеждению, Туманян

---

<sup>2</sup> *Թումանյանի ընտանիքի նամականի (Կազմ. և ծանոթ. Ի. Սաֆրազբեկյանը), Երևան, 2009, էջ 130:*

был подлинным поэтом и великим гражданином, поэтом-гражданином, подобным которому во всем объеме не были ни Пушкин, ни Толстой, ни другие. «Как общественный деятель он сравним с Чернышевским, а как поэт — с Пушкиным. Соединив их, можно получить Туманяна» (с. 49–50).

К сожалению, Арегу так и не довелось завершить свое исследование. Какая-то часть рукописной биографии поэта хранится у С. Туманян, однако многие страницы утеряны во время обыска в квартире Арега. Именно благодаря сохраненным Арегом записям до нас дошли некоторые из важных и ценных мыслей Ов. Туманяна.

... Примечательна творческая история одного из четверостиший Туманяна, точная дата написания которого оставалась неизвестной. Оно изложено в письме Арега, адресованном сестре Ашхен и датированном 25 декабря 1930 г. Речь идет о четверостишии «*Մանուկ օրից սար ու ձորին եւ մնացի մոտ ընկեր*» («Близким другом гор, долин я остался с детских лет»). Составители как первого, так и второго академического издания сочинений поэта, не располагая никакими сведениями о времени создания четверостишия, ошибочно помещали его среди произведений 1919 г. Между тем С. Туманян, основываясь на материалах личного архива своего отца, делает очень важное для туманяноведения уточнение, согласно которому Арег Туманян записал это стихотворение в начале 1923 г., в московской больнице, где доживал свои последние дни смертельно больной поэт. По поводу четверостишия между отцом и сыном состоялась небезынтересная беседа. Ов. Туманяну записанный текст не понравился, и он заметил: «Во сне я создавал больше и гораздо лучше, чем наяву, но все это я не записывал. Одна из причин в том, что хотел остаться единственным их читателем» (с. 56).

В последних главах рецензируемой книги — «Московский период» и «Конец счастья» — представлен краткий очерк непродолжительной жизни Арега и ее трагический финал. Для того, чтобы рассказать о подробностях расправы карательной системы государства над ее отцом, С. Туманян пришлось изучить дело Арега Туманяна в архивах Федеральной службы безопасности России, а также материалы Национального архива Армении.

Из книги С. Туманян мы узнаем, что Арег Туманян еще 17-летним юношей увлекся идеями революционного переустройства мира и 16 июня 1917 г. по рекомендациям С. Орджоникидзе и М. Цхакая вступил в организацию большевиков. Он познакомился и сблизился с А. Микояном, в дальнейшем завел дружеские отношения с А. Мясникяном, С. Кировым и другими известными государственными деятелями. А. Микоян познакомил Арега с самим Сталиным, представив его как весьма подготовленного и

перспективного молодого человека. Забегая вперед, скажем, что ни коммунистические убеждения, ни дружба с Микояном не спасли Арега Туманяна от сталинских репрессий. Когда впоследствии Микояна спрашивали, почему он не вступился за троих сыновей Туманяна или хотя бы за своего друга Арега перед Сталиным и даже не попытался их спасти, Микоян отмалчивался, уходил от ответа. Вдова Туманяна Ольга хотела встретиться с ним и вымолить спасение для сыновей, но он счел целесообразным просто уклониться от встречи. Когда годы спустя О. Туманян спросила Микояна, как он мог допустить гибель трех сыновей, он ответил: «Спрашивайте меня о чем угодно, но только не об этом» (с. 60). Добавим к сказанному, что впоследствии Микоян приложил большие усилия, чтобы открыть в Ереване Музей Ованеса Туманяна.

В последние годы своей жизни Арег Туманян занимал довольно высокие должности и в связи с новыми назначениями переехал в Москву. Он, в частности, был избран членом правления всесоюзной Торговой палаты и назначен ее ответственным секретарем, а вскоре стал начальником отдела Совнаркома торговли. До 1937 г. занимал ряд других столь же высоких и ответственных должностей. При этом жил с семьей в съемной квартире, и его начальство узнало об этом совершенно случайно. Когда в 1931 г. родилась дочь Сурма, кроваткой для нее служила корзина для белья, а пеленками и распашонками — материнские рубашки.

Арега Туманяна арестовали 4 июня 1937 г. В рабочем кабинете его правительственной дачи произвели обыск. Увидев альбомы по искусству, представитель НКВД обвинил его в увлечении женщинами легкого поведения. Арега увезли в «черном воронке», а жену и маленькую дочку в другой машине перевезли в коммунальную квартиру. 6-летняя Сурма больше никогда не видела отца. В ее памяти сохранились только его ласковые руки и прощальный поцелуй. Спустя четыре месяца арестовали также мать Сурмы Амалию и сослали в лагерь АЛЖИР (Акмолинский лагерь для жен изменников Родины). После ареста матери Сурму поместили в детский приют, и только три недели спустя старшая дочь Туманяна Ашхен нашла и перевезла ее в Тифлис, к бабушке Ольге, которая на протяжении девяти лет заменяла ей мать.

В тюрьме Арега Туманяна допросили через десять месяцев после ареста, и допрос этот оказался единственным. На столе лежал заранее заполненный протокол допроса. Обвинения не отличались оригинальностью: активное участие в антисоветской «правой» террористической организации, связь с английской разведкой и пантюкистской националистической террористи-

ческой организацией. Приговор также был составлен заранее. Его собственноручно утвердил Генеральный прокурор страны А. Вышинский. 10 июня 1938 г. был составлен большой список, в который входили 89 видных государственных деятелей (Арег Туманян был 70-м); в четырехдневный срок список «благополучно» согласовывается с Политбюро. Как и многие другие, Арег своей вины так и не признал, а в последнем слове попросил послать его дело на дополнительное расследование. В этой просьбе ему было отказано. Приговор был приведен в исполнение в тот же день: Арег Туманян был расстрелян на дачном участке наркома внутренних дел Г. Ягоды. А 17 лет спустя, в 1955 г., решением новой военной коллегии Верховного суда СССР он был реабилитирован за отсутствием состава преступления.

Обобщая вышесказанное, можно утверждать что книга воспоминаний С. Туманян стала еще одним краеугольным камнем в здании туманяноведения.

СУСАННА ОВАНЕСЯН




---

---

СУСАННА ОВАНЕСЯН. Ованес Туманян в годы Первой мировой войны. Ереван, изд-во «Гитутюн» НАН РА, 2018, 619 с.

Недавно на стол читателя легла книга Сусанны Ованесян «Ованес Туманян в годы Первой мировой войны». Эта прекрасно оформленная, объемная монография вышла в свет при содействии Всеармянского фонда арменоведческих исследований. Издана она на русском языке (переводчик — Гурген Баренц), что важно отметить, ибо всем своим содержанием, огромным богатством изложенных в ней фактов и событий она выходит за национальные рамки и поднимает вопросы, актуальные и в наши дни.



Жизнь и творчество Туманяна всегда привлекали к себе литературоведов и критиков, и армянское туманяноведение — довольно богатая страница в истории нашей культуры. Казалось бы, что нового можно еще сказать в этой области? Но выясняется, что можно. Неоспоримым доказательством этого является и новый труд С. Ованесян. На сегодня она — самый активный, самозабвенно преданный своей работе туманяновед, автор уже нескольких монографий о Поэте всех армян.

Рецензируемая книга отличается прежде всего своей научной фундаментальностью. Помимо огромного количества использованной здесь опубликованной литературы — не только литературоведческой, но и исторической — монография значительно обогащена ранее не известными широкому читателю документальными материалами. Автором использованы не только архивы, хранящиеся в Доме-музее Туманяна и в Музее литературы и искусства им. Е. Чаренца (фонд самого поэта, фонд Кавказского общества армянских писателей, фонды других поэтов, общественных и культурных деятелей). С. Ованесян ссылается также на фонды Матенадарана, материалы Национального архива Армении, Центрального госархива Российской Федерации. Кроме того, автором тщательно изучена периодическая печать отражен-

ного в монографии отрезка времени. Все это сообщает изложению неоспоримую научную ценность. Исследовательскую работу С. Ованесян можно сравнить с трудом археолога, который производит раскопки во всех предполагаемых местах для достижения поставленных научных целей. И в результате этих «раскопок» перед читателем встает живой образ Туманяна, воскрешают дни и часы его жизни.

Примечательно, что, хотя монография, судя по ее названию, посвящена жизни и деятельности поэта в годы Первой мировой войны, однако начинается она с изложения в первой главе предвоенного периода (1912–1914 гг.). И характерно, что именно в этой главе уже раскрывается уникальность туманяновской личности. Да, Туманян был великим поэтом. Но сколько своего драгоценного времени он растрчивал не на творчество! С 1912 года он руководил Кавказским обществом армянских писателей в Тифлисе. Эта культурно-организационная работа отбирала у него немало сил; кроме того, на его плечах лежала забота о материальной помощи писателям и поэтам — членам общества ... А скольких нервов стоила ему разгоревшаяся полемика с редактором газеты «Мшак» Амбарцумом Аракелян! «В публицистическом наследии писателя дискуссионные, полемические статьи, направленные против А. Аракеяна, — отмечает С. Ованесян, — навсегда останутся как решительный протест гениальной личности против посредственности, отравляющей его жизнь, против серости и малодушия, зависти и лжи, фальсификации и брани, против ничем не обоснованных нападок» (с. 78–79).

В данной главе автор приводит огромное множество фактов (на основе разных писем, документов, прошений, сохранившихся в архивах), когда к Туманяну обращались за помощью едва знакомые или вовсе незнакомые люди с самыми различными просьбами, отнюдь не только литературными: к примеру, найти работу или назначить кому-то стипендию, устроить ребенка в Нерсисянскую духовную гимназию и даже освободить от воинской службы. Это свидетельство того, что люди воспринимали Туманяна не только как поэта, но и как близкого, отзывчивого человека, который их поймет, обязательно откликнется, поможет. И он добровольно, по зову души и сердца постоянно взваливал на себя тяжкий груз житейских забот стольких людей, по возможности облегчая им этот груз. Именно эта черта удивительной, неповторимой натуры Туманяна поэтически обобщена в одном из его четверостиший 1917 года:

*Зачем бегу, зачем себе я лгу,  
Что от людей куда-то убегу?  
Я связан с ними тысячами нитей,  
Не разделить их боли не могу!*  
(пер. Н. Гребнева)<sup>1</sup>

В следующих шести главах монографии перед нами предстает живой образ поэта в годы Первой мировой войны. С. Ованесян как нельзя полнее раскрывает четыре года туманяновской жизни — с 1914 по 1917-й, отмеченные каждодневной готовностью делать все возможное и невозможное для своего народа. Это и его роль в формировании армянских добровольческих отрядов в самом начале войны; и первое посещение Западной Армении в ноябре-декабре 1914 года (здесь щедро использованы дневниковые записи поэта); активное участие в работе Общества помощи беженцам; деятельность председателя Кавказского общества армянских писателей после Геноцида в апреле 1915 года; вторая поездка Туманяна в Западную Армению, в Ван в июне 1915 года, в самый разгар зверского уничтожения турками армян на всей территории Османской империи.

Детально запечатленные автором дни пребывания Туманяна в Ванском вилайете не могут не навести читателя на мысль: ведь он ежеминутно рисковал своей жизнью. И действительно, поэт не однажды чудом спасался от смерти. Но в том-то и дело, что для Туманяна патриотизм никогда не был отвлеченным понятием. Об этом — вся четвертая глава книги, рассказывающая о том, как, вернувшись из Вана и будучи больным, поэт, прервав лечение, едет в Эчмиадзин, чтобы позаботиться о собравшихся там из Васпуракана беженцах и сиротах ... Действенность его патриотизма, можно даже сказать, уникальность еще нагляднее проявились в конце 1917 года, когда русская армия стала покидать Кавказский фронт, и вновь со всей остротой стал вопрос выживания армянского народа. Полководец Андраник обратился к своим соотечественникам с призывом (в тифлисской газете «Айастан» от 22 декабря 1917 г.), заканчивающимся словами: «Спешите все, кто умеет чувствовать и осознавать угрожающую родине опасность, спешите защищать границы родины и народ» (с. 555). Как отмечает С. Ованесян, Туманян был первым, кто публично откликнулся на этот призыв, и целиком приводит открытое письмо поэта Андранику, опубликованное на следующий же день. Что не может не поразить в этом письме? То, что во имя спасения родины и народа поэт готов был жертвовать ... и

---

<sup>1</sup> Ов. Туманян. Избранные произведения в 3-х тт., т. 1. Ереван, 1969, с. 137.

своими детьми. «Дорогой Андраник, — пишет Туманян, — в этот ужасный час каждый человек должен принести на жертвенный алтарь все, что у него есть и что он может, — чтобы предотвратить надвигающуюся опасность и достичь желанного мира.

У меня четыре сына, и все четверо — в распоряжении правительства страны, Национального совета и в твоём личном распоряжении, а четверо моих дочерей готовы выполнять в тылу любую работу, на которую будут способны.

У меня, конечно же, дороже детей нет ничего, следовательно, я ничего не пожалел, лишь бы мы смогли со всеми честными народами и свободолюбивыми душами отбить надвигающуюся опасность и защитить священные для нас права и свободу» (с. 556).

Это письмо не нуждается ни в каких комментариях, оно вызывает лишь удивленное восхищение и преклонение перед памятью Туманяна — уникального патриота и гражданина. Читая книгу, мы убеждаемся, что слова поэта в письме Андранику не были лишь словами. «Восемь детей Туманяна (Седа и Тамар были еще маленькими, им было 12 и 10 лет), — пишет С. Ованесян, — присоединились к той всенародной патриотической стихии, которая объединила их отца и близкого друга их семьи — великого полководца Андраника Озаняна» (с. 557). Автор в отдельной главе рассказывает о каждом из сыновей поэта, сражавшихся в Западной Армении (только Амлик как рядовой оказался в Александрополе), о гибели, вероятнее всего, в марте 1918 года Артавазда — одного из самых одаренных детей поэта. «Мировая война, — пишет С. Ованесян, — погромы, резня, Геноцид, смерть двух братьев почти лишили поэта сил, однако трагическая гибель сына окончательно подкосила его, и он после этого никогда уже не мог оправиться от боли» (с. 578).

В образе Туманяна, документально воссозданном в книге, поражает еще и то, что в эти страшные годы, пережив столько личных потерь, он неустанно продолжал заниматься не только национально-общественной, но и культурно-организационной деятельностью, выкраивая время и для творчества. Этому посвящена шестая глава монографии. Автор подробно характеризует публицистические статьи Туманяна, написанные по зову времени, относящиеся к современным политическим событиям и судьбе армянского народа (очень ценно, что в книге нашли место и отдельные наброски и дневниковые записи поэта, впервые опубликованные лишь в конце прошлого столетия, в 10-томном академическом собрании сочинений). Отдельный раздел здесь отведен художественному творчеству Туманяна: ведь именно в эти годы им был создан целый ряд поэтических шедевров. Это, во-первых, посвященное жертвам Геноцида «Поминование» (в рус-

ских изданиях стихотворение публикуется и под названием «Оплакивание»). Заметим, что народный поэт Осетии Н. Джусойты, прочитав в конце 1960-х гг. это стихотворение в переводе Н. Гребнева, охарактеризовал его как «величаво-скорбный шаракан, поминальную песню невероятной силы, подобную хору древнегреческой трагедии»<sup>2</sup>. С. Ованесян обращается и к стихотворению «С отчизной», и к другим стихотворениям, переводам, выполненным в эти годы. Особый раздел отведен четверостишиям, в которых читателю открываются вся мудрость, беспредельность философской глубины поэтического мира Туманяна, выраженные в отточенной форме. Выделив характерные мотивы четверостиший, созданных в годы Первой мировой войны, автор монографии подчеркивает, что в целом ряде этих образцов отразилась скорбь поэта, обусловленная и личными потерями, в первую очередь, трагической гибелью сына Артавазда, ставшего жертвой Геноцида. «Однако поэт сумел возвыситься над своей болью и потерей, — пишет автор, — и его личное горе перерастает в обобщенное выражение общечеловеческого страдания» (с. 509). Этот раздел С. Ованесян завершает четверостишием, написанным 2 февраля 1918 года, где, по ее словам, «выражена мысль, которая является заветной мечтой для каждого армянина, выжившего в условиях выпавших на его долю страшных, нечеловеческих испытаний. Четверостишие это понятно каждому нормальному человеку, мечтающему о мире, где нет места войне, где людям не нужно ненавидеть друг друга, о мире, в котором можно найти покой и чистоту» (с. 510):

*О чем я думаю, что нужно мне?  
Мне б уголок от шума в стороне,  
Где род людской без войн, вражды и злобы  
Я мог бы видеть в тихом детском сне!*

(пер. Н. Гребнева) (с. 511).

Шестая глава интересна и тем, что здесь образ Туманяна предстает перед читателем еще и в совершенно ином ракурсе — литературного критика: в страшные годы, занимаясь устройством беженцев и сирот, он находит время, чтобы изучить русские переводы Кучака и Саят-Новы для готовящейся в Москве к изданию под редакцией В. Брюсова антологии «Поэзия Армении», и пишет об этом статью. Целый раздел этой главы посвящен пребыванию русского поэта в Тифлисе. С. Ованесян отмечает, что Брюсов все это время был неразлучен с Туманяном и что ар-

---

<sup>2</sup> Н. Г. Джусойты. Он смотрел на мир, как солнце. — Туманян — 100. Юбилейная летопись. Ереван, 1974, с. 348.

мянский поэт произвел неизгладимое впечатление на чету Брюсовых. Характерны в этом плане приведенные в книге слова Иоанны Матвеевны Брюсовой: «Из всех моих воспоминаний о тифлисских встречах самыми яркими являются воспоминания, относящиеся к Ованесу Туманяну. Все лица помутнели перед неизгладимым образом незабываемого поэта ... Вообще серьезный и задумчивый Туманян умел быть очень любезным и сердобольным человеком, заботливым отцом (любил гордиться своими детьми), и одновременно самым остроумным собеседником...» (с. 454). А сам Брюсов, как известно, свое отношение к Туманяну как к поэту и человеку выразил в посвященных ему стихах, написанных уже после возвращения в Москву, 25 февраля 1916 года. Напомним последние строки этого посвящения:

*Пусть звезды малые и крупные  
Тебя кропят, пронзая тьму:  
Мы смотрим в сферы недоступные,  
Дивясь сиянью твоему!* (с. 452).

И время не только не стерло, не затемнило правоту брюсовских строк, а напротив, еще более высветлило их: сегодня мы еще глубже понимаем, что личность Туманяна — это действительно «сферы недоступные», и сияние этой личности становится все ярче ... Это чувство не покидает при чтении книги Сусанны Ованесян.

МАГДА ДЖАНПОЛАДЯН

ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ. ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ (Յամբարձուն Պոյաճեան),  
Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016, 248 էջ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո հայ պատմագիտական մտքի զարգացման համար լայն ասպարեզ բացվեց: Հատկապես կարևորվեցին հայ ազգային-ազատագրական շարժման և նրա հետ առնչվող հիմնահարցերը: Դրանց հետ կապված լուրջ ուսումնասիրություններ կատարվեցին թե՛ մայր հայրենիքում, թե՛ Սփյուռքում:



Սփյուռքում ապրող հեղինակներից մեկը Եղիկ Ճերեճյանն է, որն արդեն վերադարձել է հայրենիք: Նա ծնվել է 1975 թ. Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա ուսումնառությունը շարունակել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտում: Վերադառնալով Բեյ-

րութ՝ զբաղվում է իր մասնագիտական գործով, միաժամանակ աշխույժ դերակատարություն ստանձնում ազգային-հասարակական-քաղաքական կյանքում: Իր արմատներով հնչակյանության հետ կապված լինելով՝ նա ստանձնում է տարբեր պարտականություններ Ս. Դ. Հնչակյան կուսակցության գործունեության տարբեր ոլորտներում: Աշխատում է «Արարատ» օրաթերթի խմբագրությունում և առանձին խմբագրում է «Արարատ»-ի երիտասարդական պարբերաթերթը: 1992–2009 թթ. իրարահաջորդ չորս անգամ ընտրվում է Լիբանանի խորհրդարանի պատգամավոր՝ մայրաքաղաք Բեյրութից: Այդ ընթացքում բազմիցս մասնակցում է միջխորհրդարանական և միջպետական բանակցությունների տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հայ դատի, հայոց ազգային-ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության զանազան հիմնահարցերի շուրջ մասնակցել է մի շարք գիտաժողովների, բանախոսություններով հանդես եկել հայկական գաղթօջախներում: Մինչ օրս հրատարակել է հետևյալ գրքերը. «Արիւնոտ գոյերթի վկաներ» (1989 թ.), «Հայկական ցեղասպանությունը ճիշ մըն է մարդկության խղճին դէմ» (1995 թ., արաբերեն), «Փանթուրանիզմը» (1998 թ.), «Պանդուխտ» (1999 թ.), «1912-ի օսմանեան ընտրությունները և արևմտահայությունը» (2007 թ.), «Յակերթի ճամբու կերտիչներէն» (2014 թ.):

Սույն գրքերի շարքը վերջերս լրացվեց «Մեծն Մուրատ (Համբարձուն Պոյաճեան)» աշխատությանը, որը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ

պատմության ինստիտուտում գործող «Մեսրոպ Արք. Աշճեան» գիտական մատենաշարով:

248 էջ ընդգրկող աշխատությունը բաղկացած է գլուխներից, նախաբանից ու վերջաբանից, անձնանունների, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերից:

Նախաբանի հեղինակ՝ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, բարձր գնահատելով սույն աշխատության արժանիքները, նշում է, որ Եղ. Ճերեճյանը իր առջև դրված խնդիրը հաջողությամբ հաղթահարել է և ընթերցողի գրասեղանին է դրել նորություններով հարուստ, ամբողջական մի ուսումնասիրություն: Աշխատությունը, իրոք, հաջողված կարելի է համարել գիտական ու տեսական մի շարք առումներով և բաղադրիչներով: Նախևառաջ պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է տալ, ներկայացնել այդ ժամանակաշրջանի ամբողջական ճշմարտացի խճապատկերը և իր հերոսին, նրա ողջ գործունեությունը քննել ու քննարկել վերոնշյալի հիման վրա՝ իր էական կապերով և հարաբերություններով:

Եղ. Ճերեճյանը բոլոր առումներով հավատարիմ ու հարազատ է մնացել պատմական իրողություններին և ճշմարտությանը: Ցանկացած վիճահարույց կամ քիչ լուսաբանված հարց քննելիս և պարզաբանելիս առաջնորդվել է պատմական օբյեկտիվության չափանիշներով՝ երբեք տուրք չտալով անձնական կամ կուսակցական կողմնակալությունը:

Առաջին գլխում փաստառատ ներկայացված է աշխարհագրական, պատմական և ընտանեկան այն միջավայրը, որը ծնունդ է տվել Մեծն Մուրատ պատմական անհատի ձևավորմանն ու զարգացմանը: Պոյաճյանների ընտանիքում դաստիարակվեցին հայ ազատագրական շարժման երևելի անուններ: Ավագ եղբայրը՝ Մարտիրոս Պոյաճյանը (մականունը՝ Ժիրայր), Ֆիդայական շարժման առաջամարտիկներից է, «Զելլօ» հայտնի հայդուկային խմբի հիմնադիրներից, ով հայրենասեր և մարտունակ սերունդ նախապատրաստելու գործում վիթխարի ջանքեր է գործադրել Կիլիկիայի ու Փոքր Հայքի տարբեր շրջաններում: Կրտսեր քույրը՝ Հայկանուշը, նույնպես վաղ հասակում ակտիվ դերակատարություն է ստանձնում ազգային-ազատագրական և հեղափոխական շարժման մեջ:

Երկրորդ գլխում ներկայացված է Մուրատի աստիճանական ներգրավումը Կ. Պոլսում հետզհետե թափ առած հեղափոխական շարժման մեջ, որում նա վերջնականապես թրծվում է որպես երգվյալ հեղափոխական և այդ ճանապարհից չի շեղվում մինչև իր կյանքի ավարտը:

Երրորդ գլխում ներկայացված է Մուրատի ակտիվ ու առաջնորդող դերակատարությունը Սասունի 1894 թ. ապստամբական մաքառումներում: Հեղինակը համոզիչ փաստերով վկայակոչում է, որ 1894 թ. սկզբներից Սասնո շրջանի հեղափոխական-կազմակերպչական աշխատանքն ամբողջապես կենտրոնանում է Մուրատի ուսե-



րին: Սասնո ապստամբութեան ընթացքը տրվում է քննական բոլոր մանրամասնութիւններով ու վերլուծութիւններով: Ընդ որում՝ վիճահարույց տեսակետները քննվում են տարբեր դիտանկյուններից: Հեղինակը Մեծն Մուրատին դիտարկում է որպէս Սասնո ապստամբապետ: Սասնո հերոսական ընդվզումից հետո Մուրատի անունը դառնում է հայ ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ. «Այդ պայքարին իրենց իսկական թէ՛ յեղափոխական ծածկանուններով մէկէ աւելի անձնուրաց Մուրատներ մասնակցած են: Ժողովուրդը սովորաբար այդ Մուրատները իրարմէ զանազանած է անոնց ծննդավայրերով՝ Սեբաստացի Մուրատ (Խրիմեան), Խորախոնցի Մուրատ (Տէրտերեան), Ցրօնքցի Մուրատ (Պետրոսեան), Չաքարեան Մուրատ եւ ուրիշներ: Սակայն Հաճնցի Մուրատի պարագային նախընտրած է զայն տարբերել այլ ձևով՝ Մեծն Մուրատ: Միակ պատուանշանը՝ զոր Մուրատ երբեքից ստացած է իր կեանքի ընթացքին (ընդգծումը մերն է – Ա. Կ.)» (էջ 68):

Չորրորդ գլխում ներկայացված է հայ ազատագրական շարժման ծանր, հուսահատական շրջանը, երբ մոլեգնում էր համիդյան բիրտ ուժի մի անսանձ կամայականութիւնը, երբ հայ հեղափոխականներին փտեցնում էին բանտերում և աքսորավայրերում՝ ենթարկելով անօրինակ կտտանքների ու տանջանքների: Այդ ահաւոր չարչարանքներին ենթարկվեց նաև Մուրատը՝ հատկապէս Բաղէշի բանտում: Սակայն անգամ այդ ծանրագույն բռնարարքները չեն հուսահատեցնում հայ հեղափոխականին:

Բազմապիսի փաստերի ու այլևայլ նյութերի օգնութեամբ պարզաբանվում է Մուրատի՝ դեպի աֆրիկյան Տրիպոլի աքսորումը և այնտեղից նրա փախուստի կազմակերպման մանրամասնութիւնները: Արդեն այդ ժամանակ նա այնպիսի փառք և համբավ ուներ հայութեան մեջ, որ իր անվանը ձոնում էին նորանոր ոտանավորներ ու երգեր:

Մեծն Մուրատն է նա, – Մեծ աւետաբեր,  
 Մեծ գաղափարի մարտիկն անվեհեր,  
 Փշրած բռնութեան ժանտ, անարգ շղթան՝  
 Նոր կեանք աւետում թշուառ հայութեան (էջ 95):

Հինգերորդ գլխում տրված է Մուրատի արտասահմանյան գործունեութեան համապարփակ պատկերը, նրա գաղափարաքաղաքական պայքարը երիտթուրքերի դեմ, այցելութիւնները Եգիպտոսի, ԱՄՆ-ի ու Կանադայի հայկական գաղութներ և անդուլ ջանքերը հայ քաղաքական ուժերի միջև ներքին համերաշխութեան միջնորդութեամբ: Այս առումով գրքում եղած մեջբերումներից ներկայացնենք Մուրատի գրչին պատկանող հետևյալ վկայակոչումը. «Չկայ, չկայ փրկութիւն ուրիշէն, մենք զմեր փրկութիւնը ոչ միայն մենք պիտի յուսանք, այլ համոզուած պիտի լինինք, որ մեզ փրկելու ոյժը, գորութիւնը ունինք: Ահա ինքնավստահութիւնը,

ահա համոզումը, որ ամենօրեայ կեանքի մտածումը պիտի կազմէ: Եթե մենք զմեզ փրկելու, մենք զմեզ ազատելու ճարը, միջոցը, ոյժը ունինք, հապա ինչու՞ չենք ազատուիր» (էջ 106):

Սույն մտածումները վկայում են Մուրատ հեղափոխական գործչի գաղափարական բարձր պատրաստվածութեան և հասունութեան մասին:

Հաջորդ գլուխներում («Վերագարձ դէպի Կ. Պոլիս», «Օսմանեան խորհրդարանի անդամ», «ՄԴՀԿ է. Համագումարը և քսան կախաղանները», «Մուրատի նահատակութիւնը») բազմակողմանիորեն ու բազմաբովանդակ ներկայացված են մեծ հեղափոխականի գործունեութիւնը որպէս կուսակցական ու գաղափարական մարտիկ, նրա խորհրդարանական համարձակ գործունեութիւնն օսմանյան պառլամենտում, ազգային-քաղաքական գործունեութեան հիմնական անդրադարձները 1909–1914 թթ. և ողբերգական մահվան հանգամանալից նկարագրութիւնը:


Աշխատութեան բոլոր գլուխներում հեղինակը մեկ առ մեկ ներկայացնում, քննում և հերքում է թուրքական պաշտոնական պատմագրութեան ու նրան ձայնակցող մամուլի հնչեցրած կարծիքները և տեսակետները Մուրատի կյանքի ու գործի, ինչպէս նաև հայ հեղափոխական շարժման կարևորագույն ու կնճռոտ հարցերի և հարցականների վերաբերյալ:

Հնչակյան կուսակցութեան և նրա ակնառու գործիչների գործունեութեան անաչառ հետազոտող Եղ. Ճերեճյանի սույն աշխատութիւնը գիտական բարեխղճութեամբ և պատասխանատվութեամբ գրված գործ է, որն իր մնայուն տեղը կունենա հայ պատմագիտութեան կարևոր արժեքների շարքում: Այն նաև արժանի լուսապսակ է հայ հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժմանը մեծ ծառայութիւններ մատուցած հնչակյան հերոսի անմարելի հիշատակին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ. 1937 թվականը Հայաստանում: Քննական դիտարկումներ քաղաքական բռնաճնշումների 80-ամյա տարեկիցի առիթով, *Երևան, «Զանգակ» հրատ., 2017, 96 էջ:*

Չարիքի կրկնությունը բացառելու, այն վերացնելու և արմատախիլ անելու համար նախ պետք է բարձրաձայնել դրա մասին, ներկայացնել դրա ողջ հրեշավորությունը, թույլ չտալ, որ այն ջնջվի սերունդների հավաքական հիշողությունից: Այս, և ոչ միայն այս, իմաստով արժեքավոր է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Արարատ Հակոբյանի ներկայացվող գիրքը:



Աշխատությունը բաղկացած է «Մուտք»-ից, տասներեք բաժիններից և «Ամփոփում»-ից:

«Մուտք»-ում հեղինակը շարադրել է աշխատությունը գրելու շարժառիթները:

Իր կատարած ուսումնասիրության մեջ Ա. Հակոբյանը ցույց է տվել, որ 1937 թ.

քաղաքական բռնաճնշումների գլխավոր ճարտարապետը միայն Ի. Ստալինը չէր, ինչպես ընդունված է կարծել, քանի որ դրանք սկիզբ են առել խորհրդային պետության ստեղծման առաջին խսկ օրերից. հեղինակը բացահայտել ու ներկայացրել է դրանց իրական պատճառներն ու նպատակները: Պատասխանել է այն հարցին, թե ինչու հենց Ստալինի ղեկավարման շրջանում բռնաճնշումները նման մեծ ծավալներ ընդունեցին: Խոսել է հետստալինյան շրջանի քաղաքական հետապնդումների ու հալածանքների, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի ու նրա ղեկավար առաջին դեմքերի՝ բռնաճնշումների գործում ունեցած դերակատարություն և անմիջական մասնակցություն մասին:

Պատմաբանն անդրադարձել է խնդրո առարկա հիմնահարցի պատմագրությունն ու հասարակական ընկալումներին, ինչպես նաև դրա հետազոտության դժվարություններին: Ներկայացրել է քաղաքական բռնաճնշումների մոտավոր ծավալների վերաբերյալ գիտական ու հասարակական շրջանակներում արդեն քաղաքացիություն ստացած, հրապարակված տարբեր տվյալներ ու գնահատականներ:

Հեղինակը քննություն է առել խորհրդային ժամանակաշրջանի քաղաքական բռնաճնշումների պատմության ուղղությամբ խորհրդային ու հետխորհրդային պատմագրություն մեջ արված հետազո-

տուլթյան և այդ բռնաճնշումների պատմության նկատմամբ եղած հետաքրքրությունների տարբեր աստիճանների, ուսումնասիրությունների տարբեր փուլերի ու հաճախականություն, գիտական և հասարակական շրջանակներում նշված պատմական իրողությունների ունեցած ընկալումների հարցերը: Ներկայացրել է բռնաճնշումների նկատմամբ մեղանում եղած հանրային ու քաղաքական հետաքրքրությունների պակասի պատճառները: «Հարկ է նշել, – գրում է ուսումնասիրողը, – որ քաղաքական բռնաճնշումների պատմության վերհանումն ու գնահատումը ոչ միայն զուտ պատմագիտական, այլ նաև քաղաքական կարևորություն հարց է: Սա նաև խորհրդային-կոմունիստական 70-ամյա վարչակարգի օրինականության, մարդասիրության, բարոյականության ու քաղաքական մշակույթի չափման ու գնահատման խնդիր է» (էջ 21):

Ա. Հակոբյանը ներկայացրել է Խորհրդային Միությունում եղած վախի մթնոլորտը և մատնությունների մեխանիզմը, ցույց տվել Ստալինի դերը դրանց ստեղծման ու ձևավորման գործում: Խոսել է ձերբակալությունների և մեղադրանք ներկայացնելու «հիմքերի» ու մեթոդաբանության մասին:

Անդրադարձել է նաև խորհրդային իշխանությունների կողմից հետապնդում – հալածանք – բռնաճնշումների ընթացքում Խորհրդային Հայաստանի հայության հատվածների արևելահայության ու արևմտահայ գաղթականության հանդեպ ցուցաբերված որոշակի խտրականության մասին, բացահայտել դրա պատճառները: Ցույց է տվել հարցաքննությունների և մեղադրանք ներկայացնելու մեխանիզմները, նշել հարցաքննությունների արձանագրությունների նմանությունը:

Առանձին քննության նյութ է դարձել հատկապես կուսակցական-պետական, գիտության, գրականության և արվեստի ձերբակալված գործիչներից Ն.Գ.Կ. և Պետքաղվարչության քննչական մարմինների կողմից ցանկալի ցուցմունքների կորզման մեթոդների ու եղանակների հարցը: Այս հարցի հետ կապված՝ հեղինակը գրում է. «Բանտարկյալներից կորզված ցուցմունք-խոստովանությունները գրառված են այդ մարդկանց այժմ կարճված ու գաղտնագերծված անձնական գործերում: Այդ բոլոր գործերը քաղաքական, հոգևոր, բարոյական, մտավոր ու ֆիզիկական առումներով խեղված մարդկանց ճակատագրերի պատմություն է (տարեգրություն), նման Ա. Դանթեի պատկերած մարդկային կատակերգության երկին» (էջ 49):

Հեղինակն անդրադարձ է կատարել դատավարություն անցկացնող դատական ատյաններին, խոսել «1934 թ. դեկտեմբերի 1-ի օրենք»-ի և Հայաստանում դրա գործադրման մասին: Ա. Հակոբյանն իր կողմից դիտարկված, կարճված և գաղտնագերծված գործերից բերել է մի քանի առավել բնորոշ դրվագներ [առանձին կտորներ Գուրգեն Խորենի Գումեդեի (Մելիք – Դադայան) դատավարություններից]՝ ցույց տալու համար, թե ինչպես են ընթացել դատավարությունները:

Գրքույկում անդրադարձ կա նաև բռնաճնշումների ենթակա մարդկանց ձերբակալությունների խմբաքանակների (լիմիտ) պլանավորմանը: Հետազոտողը շարադրել է իր նկատառումներն Ա. Ամատունու գործի վերաբերյալ՝ ևս մեկ անգամ ի ցույց դնելով նշված շրջանի քաղաքական բռնությունների պարագոքսը, անհեթեթությունն ու զավեշտը:

Հեղինակն աշխատության մեջ բերել է մի դրվագ ՀՅԴ ճանաչված գործիչ, ՀՅԴ բյուրոյի անդամ, Հայաստանի առաջին Հանրապետության ներքին գործերի և Ֆինանսների ու արդարադատության նախարար Աբրահամ Գյուլխանդանյանի եղբոր՝ Անդրեյ (Անդրյուշ) Գյուլխանդանյանի դատական գործից:

Պատմաբանը մի քանի դիտարկում է արել ՀԽՍՀ ՆԳՎԿ Եռյակի դատավարությունների վերաբերյալ: Պատկերացում է տվել Եռյակի անցկացրած նիստերում լսված գործերի բնույթի մասին, բերել մի քանի ամփոփիչ թվեր դատական լսումներից ու դատավճիռներից:

Ա. Հակոբյանը համառոտ անդրադարձել է նաև անցյալ դարի 30-ական թվականների քաղաքական հետապնդումների ենթարկվածներին՝ հատկապես մտավորականներին:

«Ամփոփում»-ը բովանդակում է համապատասխան եզրահանգումներ:

Աշխատանքում բերված են բազում փաստական տվյալներ: Ընդ որում՝ բռնադատվածներից առավել զանգվածային են եղել եռյակների կողմից անցկացված դատավարությունները:

Այսպիսով, աշխատությունն ամբողջության մեջ բնութագրելով կարող ենք արձանագրել, որ գիտական շրջանառության մեջ դրված կարճված ու գաղտնազերծված արխիվային վավերագրերի ու նյութերի, ինչպես նաև ներկայիս իրողությունների լույսի ներքո հեղինակն իր կատարած քննական դիտարկումներով համակողմանի ու ամփոփ ներակայացրել է խորհրդային պետությունը՝ հատկապես 30-ական թվականներին պատած, հիրավի, մարդկային ու քաղաքական աղետի վերածված և «ստալինյան» անվանումը ստացած բռնաճնշումների իրական ու անաչառ պատմությունը, «որը ուսանելի փորձ ու դաս պետք է լինի ինչպես ներկայիս բռնակալական հակումներ ունեցող իշխանավորների, այնպես էլ ժողովրդավարական երկրների, քաղաքացիական հասարակության, ներկա և ապագա սերունդների համար» (էջ 84), – գրում է հեղինակը:

Գրքույկը յուրօրինակ հարգանքի տուրք է անցյալ դարի 30-ականների դժոխային երկրորդ կեսի, մասնավորապես, 1938 թ. մեծ ոճրին զոհ գնացածների հիշատակին:

ՀՐԱԶՅԱ ԲԱԼՈՅԱՆ

---

---

ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ. Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Յնդկահայոց երգվածքում, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 529 էջ:*

Արդի երաժշտագիտության կարևորագույն և հրատապ խնդիրներից մեկը XVIII–XIX դարերում ձևավորված հայ հոգևոր երգեցողության դպրոցների ուսումնասիրությունն է, էջմիածնի, Կոստանդնուպոլսի, Վենետիկի, Երուսաղեմի և Նոր Զուղայի (կամ հնդկահայոց) երգվածքների համակողմանի հետազոտումն ու դրանց բնորոշ առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև այդ երգվածքները ներկայացնող մեղեդիների դիտարկումը Ութձայն համակարգի շրջանակներում: Այս ամենի նպատակը հայ հոգևոր երաժշտության՝ մինչ այժմ հայտնի ձայնագրությունների դարձվածաբանական բազային շտեմարանի ստեղծումն է, ինչն էլ, իր հերթին, խաղաղիտության բնագավառում տարվող աշխատանքների նախահիմքերից մեկն է:

Հայ երաժշտագիտության առջև ծառայած առաջնահերթ խնդիրների խոր գիտակցությունը է արվ. թ. Գայանե Ամիրաղյանը ձեռնամուխ եղել Նոր Զուղայի կամ հնդկահայոց երգվածքի սույն ուսումնասիրությունը: Հեղինակն արդի հայ երաժշտագիտության թեև երիտասարդ, սակայն արդեն վաղուց կայացած և իր ուրույն տեղը գրաված առաջատար դեմքերից է՝ օժտված պրոֆեսիոնալիզմով, մասնագիտական բարձր պատրաստվածությունը, լայն մտահորիզոնով: Նա բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է, զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, Վիեննայի Մոնոդիայի ուսումնասիրության ընկերության անդամ է:

Գ. Ամիրաղյանի աշխատության մեջ առաջին անգամ համապարփակ ներկայացվում է Նոր Զուղայի երգվածքը էմի Աբգարի ձայնագրությամբ, բացահայտվում է դրա պատմական արժեքը, դերն ու նշանակությունը հայ հոգևոր երգեցողության համակարգում: Հեղինակն ուսումնասիրել է ահռելի բնագրային նյութ՝ XIX դարավերջին և XX դարասկզբին տպագրված հայտնի ժողովածուներից մինչև XXI դարասկզբը հարատևած դեռևս անհայտ ձայնագրությունները՝ իր հիմնական նպատակը համարելով Ութձայն համակարգի՝ հնարավորինս համակողմանի ուսումնասիրումը Նոր Զուղայի երգվածքում, նրա ինքնատիպ ոճական գծերի վերհանումը՝ կիրառելով հայ երաժշտագիտության մեջ մշակված մեթոդաբանությունն ու հիմնարար տեսական դրույթները: Գիտական շրջանառության մեջ են դրվել է. Աբգարի ձայնագրած «Պատարագի» մեղեդիների՝ Կոմիտաս Վարդապետի կատարած մշակումների նոր տարբերակները,

որոնք հայտնաբերվել են հետազոտողի ջանքերի շնորհիվ, ինչպես նաև Փարիզի Նուբարյան գրադարանում հանգրվանած՝ Է. Աբգարի հրատարակած «Պատարագամատոյցի» մինչ այժմ անհայտ հատորը՝ Կոմիտասի նշագրումներով: Այս նորագյուտ նյութերի հիման վրա արված դիտարկումները թույլ են տվել ուսումնասիրողին կարևոր եզրահանգումներ կատարել նորջուղայական երգվածքի մասին՝ փաստելով վերջինիս ոճական անաղարտությունն ու ամբողջականությունը, հարազատությունն ազգային հոգևոր երգարվեստի ոգուն:

Առաջին գլխում («Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքի ձևավորումը. պատմական ակնարկ») պատմական, հուշագրական ու այլ գրականությունից քաղված տեղեկությունների և փաստերի հիման վրա ընթերցողին է ներկայացվում Նոր Ջուղայի գաղթօջախի և հայոց թեմի հիմնադրման, հոգևոր երգվածքի ձևավորման, Է. Աբգարի գործունեության ու նրա կողմից Նոր Ջուղայի հոգևոր երգերի գրառման մասին բովանդակալից պատմական ակնարկը: Երկրորդ գլուխը («Ութձայն համակարգը արգարյան գրառումներում. քննահամեմատական ակնարկ») հիմնարար ուսումնասիրություն է նորջուղայական շարականների մասին: Կիրառելով համալիր և համեմատական-վերլուծական մեթոդները՝ Գ. Ամիրադյանը, ըստ ձայնեղանակային բնորոշ հատկանիշների, մանրագնին քննության է առել Է. Աբգարի ձայնագրած բազմահատորյակի բոլոր 121 նմուշները:

Առաջնորդվելով նախապես մշակված, հստակ դասակարգումներով՝ հեղինակը հետևողականորեն բացահայտել է Աձ-Դկ (մայր և դարձվածք), ստեղի շարականներում, ինչպես նաև՝ սկսվածքներում, «Փառք», «Այժմ և միշտ» հատվածներում դրսևորված մի ամբողջ շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են դրանց ձայնակարգային նկարագրին և ինտոնացիոն զարգացմանը, բնորոշ մեղեդիական դարձվածքներին, այդ թվում՝ մեղեդիական ոճերին, ինչպես նաև՝ սկսող, հանգչող, հարաբերական ավարտի ու վերջավորող դարձվածքներին: Կարևոր նորամուծություն է այն, որ ձայնեղանակներին բնորոշ հիմնական գործառութային աստիճանները քննելիս՝ դիմող, հանգչող, գործածվող, վերջավորող ձայների հետ մեկտեղ ուսումնասիրողը կիրառել է սկզբնավորող ձայնի, ինչպես նաև՝ հարաբերական ավարտի հնչյունի գործառությունները: Դիտարկման առանձին նյութ են դարձել միջձայնեղանակային դարձվածաբանական կապերը, ձայնեղանակային բնորոշ թռիչքները, նորջուղայական երգվածքի ռիթմական նկարագրի ինքնատիպ դրսևորումներին մեկը՝ տրիոլային ռիթմը: Առանձին ենթագլխով անդրադարձ է կատարվել նաև շարականների վանկաչափական առանձնահատկություններին:

Երրորդ գլխում («Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքի այլ ձայնագրություններ») նույն մեթոդաբանությամբ է քննված տարբեր աղբյուրներից ժողովված նորջուղայական 82 շարական:

Գ. Ամիրաղյանի գնահատմամբ՝ Նոր Ջուղայի երգվածքը Հայ հոգևոր երգարվեստի մեծարժեք և ինքնատիպ դրսևորումներից է, որ ճյուղավորվել է հոգևոր երգեցողության կենտրոնական՝ էջմիածնական ավանդույթից: Այս համատեքստում հետազոտողը նորջուղայական նմուշները մեկ առ մեկ բաղդատել է Նիկողայոս Թաշճյանի ձայնագրած «Ձայնագրեալ Շարական հոգևոր երգոց» հատորի նմուշների հետ և համեմատական-քննական հանգամանալի վերլուծությունների ընթացքում ստացված արդյունքների հիման վրա կազմել նորջուղայական և էջմիածնական երգվածքները ներկայացնող ձայնեղանակային-դարձվածաբանական շտեմարաններ (գետեղված է Հավելված 3-ում): Ըստ էության, առաջին անգամ գիտական լայն շրջանառության մեջ է դրվել Ն. Թաշճյանի գործածած բնորոշ մեղեդիական դարձվածքների՝ ընդարձակ ու կանոնակարգված ցանկը, որը հիմնարար նշանակություն ունի և լայնորեն կիրառելի է Հայ հոգևոր երգեցողության բոլոր երգվածքների համեմատական ուսումնասիրության գործընթացում: Այսպիսով, խնդրո առարկա աշխատությունը ոչ միայն Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքի ամբողջական և լիակատար պատկերումն է՝ բնորոշ օրինաչափություններով հանդերձ, այլ, փաստորեն, ներառում է նաև հեղինակի՝ զուգահեռաբար կատարած հետազոտությունը հենց բուն էջմիածնական եղանակների մասին:

Գիրքը ներառում է նաև բազմաթիվ հավելվածներ, որոնցում ի մի են բերված Գ. Ամիրաղյանի կատարած մանրախույզ աշխատանքի արդյունքները: Առանցքային կարևորություն ունի Հավելված 2-ը, որում ամփոփված են Ութձայն համակարգի հնչյունաշարերն ըստ Նոր Ջուղայի երգվածքի՝ հանգես Հայ երաժշտագիտության մեջ արդեն գոյություն ունեցող թաշճյանականի: Ուշարժան են նաև Նոր Ջուղայի և էջմիածնի երգվածքներում առկա՝ ձայնեղանակային առնչություն ունեցող համանուն շարականների (Հավելված 4), ինչպես նաև նորջուղայական երգվածքը ներկայացնող՝ այլազան սկզբնաղբյուրներից քաղված ձայնագրությունների ամբողջական բնագրերը (Հավելված 5), որոնց մի մասի վերծանությունը կատարել է հեղինակը: Առանձին ցանկով տրված են ձայնեղանակային բնորոշ թռիչքները (Հավելված 6), նաև՝ դիտարկված բոլոր շարականները (Հավելված 7):

Գ. Ամիրաղյանի՝ «Ութձայն համակարգը Հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքում» աշխատությունը նոր խոսք է հոգևոր երգվածքների ուսումնասիրության պատմության մեջ, որում, առաջին անգամ հայ երաժշտագիտության մեջ, ներկայացված է հոգևոր երգեցողության հինգ ճյուղավորումներից մեկն իր համակողմանի և լիակատար քննությամբ: Աշխատությունն արժևորվում է գիտական բարձր մակարդակով, շարադրանքի լեզվաճանաչական անաղարտությամբ, գիտական պատշաճ ապարատով, ինչպես նաև՝ գրականության բազմաբնույթ ու ներկայանալի ցանկով: Մեկ անգամ ևս շեշտելով խնդրո առարկա աշխատության




անուրանալի արժանիքները՝ այն համարում ենք լուրջ ներդրում հայ երաժշտագիտության մեջ և չափանմուշ՝ մնացյալ երգվածքների առնչությամբ կատարվելիք ուսումնասիրությունների համար:

Վկայակոչելով ավետարանական հայտնի խոսքը՝ «Զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք» (Մտթ. 20:16), լիահունչ ենք, որ Գ. Ամիրաղյանն իր գիտական ներուժն այսուհետ ևս ի սպաս կդնի հայրենի երաժշտագիտության առաջընթացին:

ԱՍՏՂԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 462 էջ:*

Հեքիաթը՝ մշտապես հաստատագրված բնագիր չունեցող, տարբեր փոփոխակներով ավանդված մի բարդ ու առեղծվածային բանահյուսական վաղնջատեքստ է, որի բառալեզվային շերտերում թաքնված են թագիտակցության նախնական պատկերացումներն ուսումնասիրողից պահանջում են նորովի մոտեցումներ և վերլուծություններ: Մեզանում հեքիաթների նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է վերջին տարիներին, սակայն դրանց ուսումնասիրությունն անհրաժեշտ ծավալով ու մակարդակով չի իրականացվել: Անհրաժեշտ է նշել, որ մեր օրերում արդիական ու հրատապ են ոչ միայն XIX դարի երկրորդ կեսերից գրառված ու հրատարակված հայկական հեքիաթների համակարգված քննությունը, այլև ծիսապաշտամունքային, կրոնաառասպելաբանական իրողությունների բացահայտումները:



սակայն վաղնջատեքստ է, որի բառալեզվային շերտերում թաքնված են թագիտակցության նախնական պատկերացումներն ուսումնասիրողից պահանջում են նորովի մոտեցումներ և վերլուծություններ: Մեզանում հեքիաթների նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է վերջին տարիներին, սակայն դրանց ուսումնասիրությունն անհրաժեշտ ծավալով ու մակարդակով չի իրականացվել: Անհրաժեշտ է նշել, որ մեր օրերում արդիական ու հրատապ են ոչ միայն XIX դարի երկրորդ կեսերից գրառված ու հրատարակված հայկական հեքիաթների համակարգված քննությունը, այլև ծիսապաշտամունքային, կրոնաառասպելաբանական իրողությունների բացահայտումները:

Այս առումով ուշադրավ է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսությունից տեքստաբանությունից բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Թ. Հայրապետյանի «Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ» մենագրությունը, որի փաստական նյութը հայկական վաղնջական հեքիաթներն են ու վիպապատմական բանահյուսությունը:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության ու համառոտագրությունների ցանկերից և երկու հավելվածից, ինչպես նաև՝ նյութին առնչվող նկարներից:

Ներածությունում ներկայացված են ուսումնասիրության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, դրանց իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հեքիաթները վերլուծությունների բացահայտումները:

յան են ենթարկվել հեքիաթագիտության տարբեր ուղղությունների ու մոտեցումների համադրմամբ, արդի հայ բանագիտության մեջ ընդունված պատմահամեմատական և կառուցվածքաբանական վերլուծության սկզբունքներով: Առաջադրված խնդիրների հետ կապված՝ որոշ դեպքերում աշխատության մեջ կիրառվել է հոգեվերլուծական և խորհրդանշանների նշանաբանական (սեմիոտիկ) վերլուծության մեթոդը: Ամփոփ անդադարձ է կատարվել ենթագիտակցական արքետիպերով պայմանավորված հրաշապատում հեքիաթների բանահյուսական մոդելին, որը պատվում է խորհրդանշիչի ու առասպելի շուրջ, ինչն էլ հետագայում իրապատում դիպաչարերում կարող է վերափոխվել փոխաբերության (մետաֆոր), մերվել «իրականության գիտակցման» հեքիաթային մոդելին: Պատահական է, որ այսօր մշակութային տարաբնույթ երևույթների արմատները հետազոտողները փորձում են որոնել հեքիաթներում:

Մենագրության առաջին գլուխը վերնագրված է «Հայկական հրաշապատում հեքիաթների նյութական-բնակազմական հիմքերը», որը բաղկացած է չորս ենթաբաժնից: Այս գլխում քննարկվել են հայկական հեքիաթներում առկա նվիրագործման բնակազմական առարկաների, տեղեկատվական-տարածաժամանակային, բուժման ծիսահմայական, կենսաֆիզիկական, առասպելաբանական, ինչպես նաև՝ տոմարական-աստղաբաշխական պատկերացումները:

Երկրորդ գլուխը՝ «Ծիսաառասպելաբանական մոտիվները հայկական հրաշապատում հեքիաթներում և ժողովրդական հնագույն վեպերում» ունի յոթ ենթաբաժին, որտեղ քննվել են վիպապատմական բանահյուսության վաղնջական առասպելները, որոնք էդիպյան մոտիվի, կարմիր կովի, հրաշապատում հեքիաթների զուգահեռ այլ սյուժեներով տարածված են եղել Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններում:

Երրորդ գլուխը կրում է «Անձանոթ աշխարհների ու առարկաների այլաբանական ընկալումը հայկական հրաշապատում հեքիաթներում» վերնագիրը. այն բաղկացած է յոթ ենթաբաժնից, որտեղ բացահայտվում են օտար-անձանոթ աշխարհների մշակութային յուրացման սյուժեներն ու մոտիվները, հրաշապատումի հերոսների անվանադրության, ծիսական մրցությունների, ամուսնության, գահաժառանգման, իշխանության և պտղաբերության վաղնջական պատկերացումները:

Գրքում առաջին անգամ հայ բանագիտության մեջ քննության են առնվում մեր ժողովրդական հեքիաթների և հին ու նոր էպոսների՝ «Վիպասանքի», «Պարսից պատերազմի», «Տարոնի պատերազմի» ու «Սասնա ծռերի» մեջ արտացոլված խորհրդանշային ցուցիչների նյութական-բնակազմական հիմքերը և վերջիններիս սերտորեն առնչվող արբունքի նվիրագործման ծեսի (initiatio) ու տիեզերակառույցի՝ Երկինք-Երկիր-Ստորերկրյաք արքետիպային ընկալումները: Դրանով իսկ բացահայտվում են բանահյուսության այդ տեսակների այն նախաչերտերը, որոնց ծալքերում թաքնված են հայկական

արխայիկ հրաշապատումի և վիպական հուշարձանների ծագման ու սկզբնավորման արմատները: Հեղինակն առաջադիր խնդիրներն ըստ արժանավույն ներկայացնելու նպատակով՝ շրջանառության ոլորտ է ընդգրկել տարբեր փոփոխականերով ավանդված բարդ ու առեղծվածային վաղնջատեքստեր (արքիտեքստ), որոնց խորհրդանշային ցուցիչներն ու նախակերպարները (արքետիպեր) բացահայտվում են անծանոթ աշխարհների ու առարկաների այլաբանական ընկալման ու մշակութային յուրացման համատեքստում: Դրանք, ի դեպ, Թ. Հայրապետյանի կողմից ամենայն մանրամասնությամբ քննության են ենթարկվել միջազգային հեքիաթանյութի ուսումնասիրության շրջանակներում: Իսկ հայկական հեքիաթների թեմատիկ փոխառնչություններն ուղեկցվել են 2004 թ. լույս տեսած՝ Ֆիննական դպրոցի պատմաաշխարհագրական մեթոդի ներկայացուցիչ Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տեսակները» եռամաս նշացանկով, որի առաջին մասը նվիրված է կենդանական, հրաշապատում, կրոնական և իրապատում հեքիաթներին, երկրորդ մասը՝ երգիծական հեքիաթներին ու գրույցներին, երրորդ մասը՝ նշացանկի հավելվածն է: Վերոնշյալ եռամաս նշացանկը վերահրատարակվել է 2011 թ. Հելսինկիում (H.-J. Uther. The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, II, III, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011), որը գիտական շրջանակներին ցայսօր հայտնի է Աարնե-Թոմփսոն-Ութեր (ATU) անունով, և մեթոդական հիմքի վրա այժմ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնում համակարգվում է հայկական հեքիաթների բանահյուսական ժառանգությունը (ղեկավար ու պատասխանատու խմբագիր՝ Թ. Հայրապետյան):

Հեքիաթը, լինելով բանավոր ավանդության տեսակներից մեկը, ստեղծվում է բնօրրանում, որը և հիմք է բացահայտելու ժողովրդի կողմից հնուց ի վեր ավանդված պատկերացումների համալիրը՝ հավատալիքները, ծեսերը, նիստուկացը: Թ. Հայրապետյանը բացահայտել է բանավոր ավանդության մեջ կենցաղավարող հեքիաթի ժանրի տարբերակիչ մոտիվներով համալրված վիպապատմական պատկերացումների այլաբանական ընկալումներն ու խորհրդանշային ցուցիչները:

Հրաշապատում և կենդանական հեքիաթները հեղինակը քննել է իբրև բանավոր ավանդության նախնական տեսակներ, որոնք իրենց մեջ ներառում են մարդկության վաղ մտածողության գիտակցական ու ենթագիտակցական շերտերը (արքետիպերը): Հետազոտության մեջ հրաշապատում հեքիաթների հերոսների (հաճախ անանուն) ու նրանց հնագույն նախակերպարների ընդհանրությունը մեկնաբանվել է հեքիաթի ծագումնաբանական վաղեմությամբ, հերոսների սեռատարիքային պատկանելությամբ, սոցիալական կարգավիճակով, զբաղվածությամբ և դրանից բխող համապատասխան գործառույթներով: Հրաշապատում հեքիաթների օրինակով հեղինակը բացահայտել է նվիրագործման խորհրդանշակարգում խաղարկվող օրգանա-

կան ծագմամբ բնակազմական առարկաների [մարգարիտ, սադափ (գաղտակուր), մարջան (բուստ, կորալ)], երկրաբանական (ոսկի, արծաթ) ցուցիչների, տոմարական-աստղաբաշխական պատկերացումների ազգամշակութային հիմքերը, այնկողմնային (մենտալ) աշխարհի տարածաժամանակային, քրոնոտոպային միավորները («աչքը թարթելը, թուքը չորանալը») և այլն, աշխարհագրական, տեղագրական անորոշությունները, տիեզերքի նորոգման կատարածաբանական, հեքիաթային ժամանակի մեծ ու փոքր բաղադրիչների մոդելավորման բանահյուսական ղրսևորումները:

Քննություն ենթարկելով հայկական հեքիաթներում և վիպապատմական ավանդության մեջ կենցաղավարվող բուժման ծիսահմայական, առասպելաբանական ու կենսաֆիզիկական ցուցիչները՝ թ. Հայրապետյանը վերհանել է մեր հին և նոր ժողովրդական վեպերի («Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» ու «Սասնա ծռեր») և ժողովրդական հեքիաթներին բնորոշ հավաքական վաղնջատիպերը:

Թ. Հայրապետյանը, հրաշապատում հեքիաթները քննախույզ վերլուծության ենթարկելով, հաշվի է առել հայկական հեքիաթների հնարավոր բոլոր տարբերակները: Հեքիաթների և վիպապատմական բանահյուսության ուսումնասիրության բացահայտել է ղրանցում առկա ինքնության ղրսևորումները, պատմահասարակական հարաբերությունների ու սովորությունների վերապրուկները: Դրանց օգնությամբ հասարակության լայն շերտերի համար հասկանալի է դառնում, անշուշտ, հազարամյակների խորքից մեզ հասած խորհրդանիշների բարդ բովանդակությունը: Հեղինակը շրջանառության ոլորտ է ընդգրկել հայկական վաղնջական հեքիաթները (հրաշապատում և կենդանապատում), մասնավորապես «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական բազմահատոր հրատարակության, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի, «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատորները, Եր. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» եռահատորը:

Գիրքն ավարտվում է երկու հավելվածով. առաջինը նվիրված է հայ ժողովրդական հեքիաթների գրառման ու գիտական հրատարակության հարցերին, երկրորդը՝ հայ ժողովրդական հեքիաթների սյուլթենների ու տիպերի համացույցի նախնական տարբերակին՝ ըստ Աարնե-Թոմփսոն-Ուլթերի հեքիաթների տիպերի միջազգային նշանակի, ինչպես նաև հայկական հեքիաթների տպագիր աղբյուրներից քաղված տարբերակների ստեղծման, ընդհանուր սխեմայի կազմման և ըստ սյուլթենների ու տիպերի սեղմագրերի դասակարգման:

Գրքի պատասխանատու խմբագիր Ս. Հարությունյանը մենագրության սկզբնաղբյուրային, գիտավերլուծական կարևորությունն արժևորել է հետևյալ կերպ. «Հարկ եմ համարում մատնանշել, որ թամար Հայրապետյանը թե՛ ազգային և թե՛ միջազգային նյութի ընդգրկման ու քննության ընթացքում հանդես է բերել պատշաճ

գիտակցություն, նյութի ճիշտ ըմբռնման, եզրահանգման և գնահատումների համոզիչ կարողականություն, որոնք պայմանավորում են աշխատության գիտական արժեքը և պատիվ են բերում հայ բանագիտությանը» (էջ 457):

Հաշվի առնելով թ. Հայրապետյանի հետազոտության կարևորությունն ու ավանդը հայ բանագիտության մեջ՝ շահեկան կլիներ, որ թ. Հայրապետյանի հետազոտությունը թարգմանվեր օտար լեզվով և հասանելի լիներ միջազգային բանագիտական հանրությանը:

ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՅԱՆՋԱՆՅԱՆԻ  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ  
(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

Մեծ է ահադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի վաստակը Հայ բանասիրության, բանագիտության և արևելագիտության բնագավառներում: Նա մեր ավագ սերնդի շատ ներկայացուցիչների համար եղել է հոգատար խորհրդատու և անփոխարինելի ուսուցիչ: Վաստակաշատ հայագետն իր կյանքը նվիրել է Հայ մշակույթին և գիտությանը՝ պատմությանը թողնելով բացառիկ արժեք ներկայացնող աշխատություններ:



Կ. Մելիք-Օհանջանյանը ծնվել է 1893 թ. փետրվարի 20-ին (նոր տոմարով՝ մարտի 4-ին) Հայաստանի Մեղրու շրջանի Կալեր գյուղում, Աղաբեկ Մելիք-Օհանջանյանի բազմամյա ընտանիքում: Տասը տարեկան հասակում նրան տեղափոխում են Գանձակ՝ իրավաբան հորեղբայր Փարսադան Մելիք-Օհանջանյանի մոտ, որը և ստանձնում է նրա խնամակալությունը՝ ընդունել տալով տեղի Տղայոց գիմնազիան:

1911 թ. հորեղբոր ջանքերով Կարապետն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի Դասարանական բաժինը, որտեղ հայոց լեզվի և գրականության ուսուցիչը՝ հայտնի մտավորական Կարապետ Կուսիկյանը, նրան կողմնորոշում է դեպի հայագիտությունը: Այնուհետև նա իր ուսումը շարունակում է նույն Լազարյան ճեմարանի Արևելագիտության մասնագիտական դասարանում՝ ունկնդրելով հայտնի արևելագետներ՝ Ագաթանգեղոս Կրիմսկուն, Ալեքսանդր Վեսելովսկուն, Վլադիմիր Գորդլևսկուն, հայագետ Կարապետ Կոստանյանին և այլ մեծերի:

1913 թ. հայ գրերի գյուտի 1500-ամյա տոնակատարության առթիվ ճեմարանում կազմակերպված գիտական նստաշրջանում Կ. Մելիք-Օհանջանյանն աչքի է ընկնում իր ընթերցած ծավալուն զեկուցումով: Մեկ տարի անց՝ 1914 թ., պրոֆեսոր Կոստանյանի հանձնարարությամբ նա շարադրում է «Մամիկոնյանների նախարարական տոհմը՝ ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» անդրանիկ գիտական ուսումնասիրությունը, որն արժանանում է Լազարյան ճեմարանի գիտական խորհրդի հատուկ մրցանակին՝ չորս ամսվա գիտական գործուղում Գերմանիայում, և Կայսերական հնագիտական ընկերության Մոսկվայի բաժանմունքի կողմից ընտրվում է ընկերության թղթակից անդամ:

1914 թ. երիտասարդ Կ. Մելիք-Օհանջանյանը մեկնում է Գերմանիա: Սակայն շուտով սկսվում է Առաջին աշխարհամարտը, և նա ստիպված չորս ամսվա փոխարեն Բեռլինում մնում է վեց տարի: Այնտեղ նա բնակվում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանի տանն ու մտերմանում նրա հետ, ծանոթանում է Հայտնի արևելագետներ Յոզեֆ Մարկվարտի, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հետ, որոնց աջակցությամբ դառնում է Բեռլինի Համալսարանի արևելագիտության և փիլիսոփայության ֆակուլտետների ազատ ունկնդիր:

Բեռլինում նա ծանոթանում է նաև գերմանացի հայտնի գրող ու հրապարակախոս Արմին Վեգներին, որը պատերազմի ընթացքում ծառայել էր Օսմանյան կայսրությունում գործող գերմանական բանակում, ահանատես էր դարձել ցեղասպանություն զոհ դարձած արևմտահայության անասելի տառապանքներին և բազմաթիվ դրվագներ գաղտնի լուսանկարել: Պատմափաստագրական բացառիկ արժեք ներկայացնող այդ լուսանկարներն Ա. Վեգները ցուցադրել է Բեռլինում իր հրապարակային ելույթների ընթացքում՝ դատապարտելով ոչ միայն երիտթուրք պարագլուխներին, այլև՝ մեղսակից կայսերական Գերմանիայի կառավարությունը: Երիտասարդ Կարապետը մշտապես գործուն մասնակցություն է ունեցել այդ միջոցառումների կազմակերպմանը:

Հարուստ գիտելիքներ ամբարած՝ 1920 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը, ղեկավարելով մեկ ու կես հազարից ավելի հայ ռազմագերիների տունդարձը, ծանրաբեռնված Հայաստանի համար պարենային նպաստների մեծ բեռով վերադառնում է Երևան: Նախ աշխատում է հանրապետության կրթության և արվեստի նախարարությունում, որտեղ ծանոթանում է Եղիշե Չարենցին ու Նիկոլ Աղբալյանին, ապա՝ դասավանդում Տղաների գիմնազիայում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Կ. Մելիք-Օհանջանյանը վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ Հայկական կարմիր բանակի քաղլուսվարչության կրթական բաժնի պետ և «Կարմիր բանակ» թերթի խմբագիր, հանրապետության գիտական առաջին հաստատության՝ Էջմիածնի մատենադարանի տնօրեն, Հայաստանի ժողովրդական համալսարանում լուսժողովուրդի լրագոր ներկայացուցիչ՝ միաժամանակ Երևանի պետական համալսարանում ու Երևանի պետական մանկավարժական ինստիտուտում հայ գրականության և գերմաներենի դասախոս: 1930-ական թվականներին Կ. Մելիք-Օհանջանյանը շարունակել է պատասխանատու պաշտոններ վարել՝ Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար, Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի տնօրեն, Հայ գրականության և ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ և այլն: Գիտական ու վարչական գործունեության ընթացքում Կ. Մելիք-Օհանջանյանն իրեն դրսևորել է քաղաքացիական բարձր հատկանիշներով, նպաստել նոր սերունդների մասնագիտական զարգացմանը:



1934 թ. Երևանում լույս է տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» ու հայ մատենագիտությունից մեջ» արժեքավոր ուսումնասիրությունը: 1935 թ. Հայաստանի լուսժողովումատին առընթեր գործող պետական գիտ-խորհուրդը, գնահատելով Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական-մանկավարժական վաստակը, նրան շնորհում է գիտահետազոտական ինստիտուտների իսկական անդամի և պրոֆեսորի կոչում:

Տակավին 1931 թ. Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Եղ. Չարենցը, ստանալով Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանի հանձնարարությունը, առաջարկել էր մեծ հայագետ Մանուկ Աբեղյանին հրատարակության պատրաստել «Սասնա Շուեր» ազգային վեպի պատումների գիտական համահավաքը: Վերջինս, ստանալով Կ. Մելիք-Օհանջանյանի հետ համագործակցելու համաձայնությունը, սկիզբ է դնում ազգանպաստ այդ մեծ գործին: 1932 թ. վեպի նոր պատումներ հայտնաբերելու նպատակով Կ. Մելիք-Օհանջանյանը կազմակերպում և ղեկավարում է Նյուլթական կուլտուրայի պատմության ինստիտուտի բանահյուսական արշավախումբը: Նա Թալինում, Վեդիում և Աշտարակում երեք տարվա եռանդուն ու տքնաջան աշխատանքով հայտնաբերում և բարբառագիտական սկզբունքներով գրի է առնում ութը նոր արժեքավոր պատումներ, որոնք համալրելով անցյալում այլոց գրառած պատումներին, Կ. Մելիք-Օհանջանյանը Մանուկ Աբեղյանի ընդհանուր ղեկավարությամբ ու համագործակցությամբ, սկսում է «Սասնա Շուեր» դյուցազնավեպի պատումների գիտական համահավաքի կազմման դժվարին, բայց շնորհակալ աշխատանքը: 1936 թ. լույս է տեսնում կոթողային այդ հրատարակությունից Ա հատորը, 1944-ին Բ, 1951-ին Բ հատորի երկրորդ մասը:

1936 թվից երկրում սկսվում են քաղաքական բռնաճնշումները, որոնց ենթարկվում է նաև պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանը: Նրան, իբրև քաղաքականապես անհուսալի տարրի և դասախոսի, հեռացնում են համալսարանից: Ապա մի խումբ պրոֆեսորների հետ 1937 թ. հուլիսի 25-ին նրան ձերբակալում են իբր դաշնակցական ընդհատակյա կազմակերպության կենտկոմի անդամ լինելու և խորհրդային կարգերի դեմ ակտիվ աշխատանք ծավալելու մեղադրանքով: Գերմանիայում նրա երկար մնալն ու օտար լեզուների իմացությունը ևս դառնում է «հանցանք» ու նրան մեղադրում են որպես Գերմանիայի և Անգլիայի լրտեսի: Չորսուկես տարի տևող հարցաքննություններն ուղեկցվում էին անասելի կտտանքներով: 1941 թ. ամռանը Կ. Մելիք-Օհանջանյանը դատապարտվում է հինգ տարվա սիբիրյան աքսորի, որի չորսուկես տարին հարցաքննություններով արդեն լրացել էր: 1942 թ. օգոստոսին նա ազատվում և վերադառնում է, բայց նրան արգելում են բնակվել Երևանում, որտեղ արդեն վախճանվել էր կինը, և երկու զավակները մնացել էին անխնամ: Նա ստիպված գոյատևում է Կիրովականում (Վանաձոր), ապա՝ Քանաքեռում: Այդ տարիներին նա իր և զավակների ապրուս-

տը հայթայթում է թարգմանություններ կատարելով: 1944 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու միջնորդությամբ նա վերադառնում է Երևան: Սակայն այդ բոլորը բավական չէր. 1946 թ. Կ. Մելիք-Օհանջանյանին դարձյալ աքսորում են, և միայն ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Անաստաս Միկոյանի պաշտոնական միջնորդությամբ նրան իրավունք է տրվում իր զավակների հետ բնակվել Երևանում:

Այդ թոհուրոհից հազիվ մի փոքր խաղաղված Կ. Մելիք-Օհանջանյանը վերսկսում է իր գիտական պրպտումները Մատենադարանում և հայտնաբերում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկու պատառիկ, որոնք, բանասիրական ուսումնասիրության ենթարկելով, հրատարակում է: Բացի այդ, մի խումբ հեղինակների հետ կազմում է «Ընտիր էջեր հայ գրականության» (1946 թ.) ժողովածուն: Նույն տարում Կ. Մելիք-Օհանջանյանն աշխատանքի է ընդունվում Ակադեմիայի գրականության ինստիտուտում ավագ գիտաշխատողի պաշտոնում, որտեղ նրան հանձնարարում են երեք ասպիրանտների (Պարույր Սևակի, Գևորգ Աբգարյանի և Խաթակ Գյուլնազարյանի) գիտական ղեկավարությունը: Միաժամանակ նա դասավանդում է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտում և կրկին նվիրվում իր տարերքին: Լույս է տեսնում նրա «Միթրա Միհրը Սասնա Ծռերի մեջ» (1946 թ.) արժեքավոր ուսումնասիրությունը:

Կ. Մելիք-Օհանջանյանի նախաձեռնությամբ սկսվում են Հայ Հին գեղարվեստական արձակի բնագրերի հավաքման և ուսումնասիրման խոշոր ծրագրի աշխատանքները: Այդ գործին անմնացորդ նվիրվելու նպատակով նա հրաժարվում է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի դասախոսություններից:

1947 թ. լույս է տեսնում ժրջան գիտնականի նոր ուսումնասիրությունը՝ «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» աշխատությունը: Սակայն ստեղծագործական այդ եռուն շրջանը ևս ընդհատվում է: 1948 թ. Հայաստանում ծավալված «Բուրժուական միասնական հոսանքը» հայտնի մտավորականների՝ Ա. Տերտերյանի, Վ. Ռչտունու, Մ. Ներսիսյանի ու այլոց հետ մեղադրվում է նաև Կ. Մելիք-Օհանջանյանը, և որպես անվստահելի տարրի նրան ազատում են Գրականության ինստիտուտի աշխատանքից: Գործազուրկի տագնապն ստիպում է նրան կրկին թարգմանություններով պահել իր ընտանիքի գոյությունը:

1950-ական թվականներին սկսվում է խրուլչովյան բարեփոխումների շրջանը: Անցյալում քաղաքական մեղադրանքով դատապարտված միլիոնավոր քաղաքացիների հետ արդարացվում է նաև Կ. Մելիք-Օհանջանյանը: 1958 թ. սեպտեմբերին Թբիլիսիում գումարված Անդրկովկասի զինվորական կոլեգիայի տրիբունալի նստաշրջանում, որի օրակարգն էր 1937 թ. քաղաքական բռնություններ իրականացրած նախկին պաշտոնյաների դատավարությունը, Կ. Մելիք-Օհանջանյանը

Ջանյանը, որպես հրավիրված մեղադրող կողմ, իր դառը կյանքի բազմաթիվ փաստերի հիման վրա համարձակելով է ունենում հիացնելով ներկաներին: Նա նաև կուսակցական տարբերատյաններին ուղղված իր դիմումներով կարողանում է 1937 թ. անմեղ զոհված իր մի շարք ընկերներին հետմահու արդարացնել: Այնպես, որ Կ. Մելիք-Օհանջանյանն իր ազնվատոհմ ծագման բարձր գիտակցությունամբ էր պահում նաև քաղաքացու իր արժանապատվությունը:

Երկրի քաղաքական-հասարակական կյանքի պայմանների աստիճանական բարվոքման հետ խաղաղվում են նաև մեծ գիտնականի չարհրկված միտքն ու հոգին, և նա կրկին նվիրվում է իր նախասիրած ասպարեզին՝ հայ հին ձեռագիր հուշարձանների ուսումնասիրման և հրատարակություն կարևոր գործին:

1957 թ. Գրականության ինստիտուտը լույս է ընծայում Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրություն և ծավալուն գիտական առաջաբանով «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» արժեքավոր ժողովածուն, որի բնագրերը պատրաստել էին Մայիս Ավդալբեկյանը, Մանիկ Միրոջյանը և Արմիկ Սրապյանը:

Սակայն հայ պատմագիտության ասպարեզում Կ. Մելիք-Օհանջանյանի մեծագույն ներդրումը եղավ XIII դարի նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» քննական բնագրի հրատարակությունը (1961 թ.)՝ երեսուն ձեռագրերի և երեք տպագիրների համեմատական բաղադրություն: Աշխատության ներածականում հեղինակը ներկայացրել է Կիրակոս Գանձակեցու ապրած ժամանակաշրջանը, նրա կյանքն ու գործը, նրա շարադրանքի աղբյուրագիտական հենքը և գեղարվեստական առանձնահատկությունները:

1962 թ. Շավարշ Սմբատյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի թարգմանություն և լույս է տեսնում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ուսերեն թարգմանությունը, որին կցված էր նաև Կ. Մելիք-Օհանջանյանի «Կորյունը և նրա «Վարք Մաշտոցին»» ընդարձակ ուսումնասիրությունը: Մեծ գիտնականի նպատակն էր ուսուցիչական ընթերցողներին ներկայացնել հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը: Անխոնջ գիտնականի անմնացորդ նվիրվածությունը հայրենի մշակույթին և այն օտարներին ներկայացնելու նրա ջանքերը բարձր է գնահատվել, ու նրան շնորհվել է Հայաստանի գիտություն վաստակավոր գործչի պատվավոր կոչում (1962 թ.), պարգևատրվել է կառավարական պատվոգրով (1963 թ.), իսկ 1965 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Հանրագիտարանային գիտելիքների տեր գիտնական Կ. Մելիք-Օհանջանյանը շարունակել է պրպտումներ կատարել Մատենադարանի ձեռագրատանը և հայտնաբերել մինչ այդ անտիպ մնացած երկու ձեռագիր. առաջինը՝ եվրոպական միջնադարյան գրականության մեջ տարածված «Պատմություն Փարէզի և Վեննայի» Հովհաննես Տերզնցու (1567 թ.) ասպետական սիրավեպի հայկական տարբերակը և

երկրորդը՝ Խաչատուր Եվդոկացու (1611 թ.) չափածո ոճով գրված «Պատմութիւն Վենետիկ քաղաքի» գույգ բնագրերը, որոնք վերծանել, համադրել է, օժտել գիտական հարուստ ծանոթագրություններով և պատմաճանաչողական կարևոր արժեք ներկայացնող ծավալուն ներածական ուսումնասիրությամբ, որտեղ հանգամանորեն լուսաբանել է երկու ձեռագրերի հեղինակների կյանքի ու գործի վերաբերյալ մանրամասներ:

Մեծ է նաև Կ. Մելիք-Օհանջանյանի վաստակը թարգմանության բնագավառում: Օտար լեզուների իր բացառիկ իմացությամբ նա գիտական ու գեղարվեստական բնագրերի բարձրարվեստ թարգմանիչ էր: Բացի Կորյունի «Վարք Մաշտոցի» թարգմանությունից, նա ուսեսերեն է թարգմանել նաև մեծ հայագետ Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության» առաջին հատորը (1947 թ.), սկսել է ուսեսերեն թարգմանել նաև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը», որը մնացել է անավարտ:

Տակավին 1950-ական թվականներին բազմավաստակ գիտնականը, բարձր գնահատելով «Սասնա Շուեր» դյուցազնավեպում արտահայտված համամարդկային գաղափարները, մտադրվել էր վեպի ընտիր պատումները թարգմանել ուսեսերեն. այդ գաղափարը խրախուսել էր Հ. Օրբելին, և Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրինությունը պայմանագիր էր կնքել թարգմանչի հետ: Կ. Մելիք-Օհանջանյանը մասնագիտական բարձր մակարդակով իրագործել էր վեպի ընտիր բարբառային տասը պատումների ուսեսերեն թարգմանությունը՝ այն օժտելով ծավալուն գիտական ուսումնասիրությամբ և հարուստ բառարանով: Ի դեպ, կատարելության ձգտող գիտնականն ամենայն ջանասիրությամբ աշխատել էր այդ բառարանի յուրաքանչյուր բառահոգվածի վրա, որոնք իրենց բնույթով ընդարձակ ծանոթագրություններ են:

Այդ վիթխարի աշխատությունը թեպետ բարձր էր գնահատվել և՛ Երևանում, և՛ Մոսկվայում, սակայն անհայտ պատճառներով մնացել էր անտիպ՝ հակառակ նրա դուստր՝ վաղամեռիկ Լուսիկի, բազմաթիվ դիմումների:

Կ. Մելիք-Օհանջանյանի անունն արդեն հայտնի էր դարձել աշխարհով մեկ որպես հայ էպոսագիտության մեծագույն գիտակի: Տարբեր երկրներից նրան էին դիմում «Սասնա Շուեր» վեպի թարգմանությամբ զբաղվող շատ ու շատ գիտնականներ, ինչպես Լեոն-Ջավեն Սյուրմելյանը՝ ԱՄՆ-ից, Իգոր Սիկիրիցկին՝ Լեհաստանից, Բորիս Կաբուրը՝ էստոնիայից, որոնք նրա մասնագիտական խորհրդներով են շարունակել իրենց թարգմանությունները, իսկ Ֆրանսերենի թարգմանիչ, հայտնի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին իր թարգմանությունը լույս ընծայելուց հետո ժամանել է Երևան, այն նվիրել մեծ գիտնականին և սիրով լսել նրա կարծիքը:

Իսկական ժողովրդագետ-գիտնական Կ. Մելիք-Օհանջանյանի անմիջական թելադրանքով և Հայաստանի գրողների միության վարչության միջնորդությամբ 1962 թ. Երևանում շիրմաքար-հուշար-

ձան է կանգնեցվել «Սասնա Ծռերի» լավագույն բանասաց, ալաշ-կերտցի Մանուկ Թորոյանի գերեզմանին: Այդ բացառիկ միջոցառման շնորհիվ հայ ժողովուրդն իր երախտագիտությունն էր հայտնում մեր ազգային վեպը ստեղծող, դարեր շարունակ սերնդից սերունդ բանավոր փոխանցող մեր վարպետ բանասացների հիշատակին:

Տարիներ անց՝ 2004 թ., ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի, նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի միացյալ ուժերով ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ լույս է տեսնում «Сасунские удалцы» հայ ժողովրդական վեպի ինը ընտիր պատումների Կ. Մելիք-Օհանջանյանի ուսերեն թարգմանությունը՝ Հակոբ Կոջոյանի դասական նկարագրաբան կազմով, Սարգիս Հարությունյանի և Ազատ Եղիազարյանի խմբագրությամբ:

Սակայն, ինչպես ժողովուրդն է ասում, «Արյունը ջուր չի դառնում»: 2008 թ. ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի եղբոր թոռան՝ Վահան Մելիք-Օհանջանյանի սրտացավ նախաձեռնությամբ «Էդդիտ-Պրինտ» հրատարակչատունը լույս է ընծայում մեծ գիտնականի տարիների ընթացքում խնամքով ու հոգու թրթիռով թարգմանած «Սասնա Ծռեր» վեպի ինը բարբառային պատումների հայերեն, գուգահեռ՝ ուսերեն բարձրարվեստ թարգմանությունն արդեն մեծադիր շքեղ հրատարակությամբ, Մելիք-Օհանջանյանի ծավալուն գիտական ուսումնասիրությամբ, արժեքավոր բառարանով և խորեն Հակոբյանի նորովի նկարագրողումներով:

Նույն Վ. Մելիք-Օհանջանյանը նաև Փրանսերեն թարգմանել է տվել «Սասնա Ծռեր» վեպի այդ բարբառային ինը պատումները Մատենադարանի հնագույն աշխատակից Աիդա Չարխչյանի շնորհալի թարգմանությամբ և 2015 թ. լույս ընծայել երկկեզվյա (հայերեն, գուգահեռ՝ Փրանսերեն) դարձյալ մեծադիր ու նկարագրաշքեղ հատորը:


Ըստ այս խոշոր ծրագիրը նախաձեռնող Վ. Մելիք-Օհանջանյանի, «Սասնա Ծռերի» օհանջանյանական փրկված ինը պատումների և Առաջաբանի տարբեր լեզուներով թարգմանությունների գործընթացը լինելու է շարունակական՝ նպատակ ունենալով աշխարհի տարբեր ժողովուրդներին հասանելի դարձնել հայ ազգային դյուցազնավեպը:

Այդ նույն մտասևեռումով Վ. Մելիք-Օհանջանյանը նախաձեռնել է նաև Կ. Մելիք-Օհանջանյանի 1966 թ. հրատարակած «Պատմութիւն Փարէզի և Վեննայի» Փրանսիական միջնադարյան ասպետական սիրավեպի հայերեն՝ գուգահեռ Փրանսերեն թարգմանությունը կրկին Ա. Չարխչյանի բարձրարվեստ թարգմանությամբ՝ ճոխացված Փրանսիական միջնադարյան մանրանկարչության նմանարկությամբ կատարված և ցարդ անտիպ մնացած նկարագրողումներով:

Բացի այդ, ՀՀ ԳԱԱ նախագահության միջնորդությամբ Երևանի քաղաքապետարանը Կ. Մելիք-Օհանջանյանի ապրած տան՝ Կիւլյան

Թիվ 5 շենքի ճակատին առաջիկայում կտեղադրի մեծ գիտնականին նվիրված հուշաքար:

ՀՀ ԳԱԱ նախագահության ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանի ջանքերով վերջերս կազմակերպվել է երկօրյա գիտական նստաշրջան՝ նվիրված բազմավաստակ գիտնական Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 125-ամյակին, որպեսզի դույզն չափով մեղմվի այն ցավն ու տառապանքը, որը մեծ գիտնականը տասնամյակներ շարունակ լռելյայն տարել էր, փոխարենը՝ արարելով իր մեկը մյուսից արժեքավոր ու կոթողային աշխատությունները:



Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանն իր ասպիրանտ Կ. Ավագյանի հետ:

Մեծ գիտնականի՝ Կ. Մելիք-Օհանջանյանի հետ կապված ես ևս ունեմ անջնջելի հուշեր: Այդ 1958 թ. էր, երբ ես գերազանցությամբ հանձնել էի ասպիրանտուրայի ընդունելության քննությունները և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրինության հանձնարարականով ներկայացա ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանին, որպեսզի ստանձնի նաև իմ գիտական ղեկավարությունը: Նա ընթերցեց տնօրինության գրությունը և, գլուխը բացասաբար շարժելով, ասաց. «... Ես չա՛տ ժամանակ եմ կորցրել որպես բռնադատված, ինձ շատ տանջանքների են ենթարկել: Տե՛ս, — և ցույց տվեց ճակատի խոշոր սպին, որը վերից վար կիսում էր նրա խելացի ճակատը, — Ազգային անվտանգության նկուղում իմ գլխին տոպրակ են հագցրել, և իմ ուսանողը, որը դարձել էր ԿԳԲ-ի աշխատակից, սկսեց երկաթյա ձողով անխնա խփել գլխիս: Ես հազիվ կարողացա հարցնել. «Տղա ջա՛ն, մի՞թե ես սա եմ քեզ սովորեցրել»: Եվ նա սառնասրտորեն պատասխանեց. «Ես հանձնարարություն եմ կատարում»: Այնպես որ, ես ժամանակ չունեմ, ես պետք է կենտրոնանամ և աշխատեմ: Նոր ասպիրանտ չեմ կարող ընդունել. արդեն երեք ասպիրանտ ունեցել եմ՝ Պ. Սևակին, Գ. Աբգարյանին և Խ. Գյուլնազարյանին: Այնպես որ՝ չե՛մ կարող ...»:

Ես, ընկճված ու գլխիկոր հրաժեշտ տալով, դուրս էի գալիս, երբ, ձայնը բարձրացնելով, հարցրեց.  
— Իսկ որե՛ք բան արե՞լ ես...  
Իր հարցից ոգևորված պատասխանեցի.  
— Այո՛, իհարկե՛, — և պայուսակիցս սկսեցի մեկ առ մեկ հանել ու ցույց տալ աշակերտական առանձին տետրերի մեջ Մուսա լեռան խրթին բարբառով իմ գրառած ժողովրդական բանահյուսության

Մեծ գիտնականի՝ Կ. Մելիք-Օհանջանյանի հետ կապված ես ևս ունեմ անջնջելի հուշեր: Այդ 1958 թ. էր, երբ ես գերազանցությամբ հանձնել էի ասպիրանտուրայի ընդունելության քննությունները և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրինության հանձնարարականով ներկայացա ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանին, որպեսզի ստանձնի նաև իմ գիտական ղեկավարությունը: Նա ընթերցեց տնօրինության գրությունը և, գլուխը բացասաբար շարժելով, ասաց. «... Ես չա՛տ ժամանակ եմ կորցրել որպես բռնադատված, ինձ շատ տանջանքների են ենթարկել: Տե՛ս, — և ցույց տվեց ճակատի խոշոր սպին, որը վերից վար կիսում էր նրա խելացի ճակատը, — Ազգային անվտանգության նկուղում իմ գլխին տոպրակ են հագցրել, և իմ ուսանողը, որը դարձել էր ԿԳԲ-ի աշխատակից, սկսեց երկաթյա ձողով անխնա խփել գլխիս: Ես հազիվ կարողացա հարցնել. «Տղա ջա՛ն, մի՞թե ես սա եմ քեզ սովորեցրել»: Եվ նա սառնասրտորեն պատասխանեց. «Ես հանձնարարություն եմ կատարում»: Այնպես որ, ես ժամանակ չունեմ, ես պետք է կենտրոնանամ և աշխատեմ: Նոր ասպիրանտ չեմ կարող ընդունել. արդեն երեք ասպիրանտ ունեցել եմ՝ Պ. Սևակին, Գ. Աբգարյանին և Խ. Գյուլնազարյանին: Այնպես որ՝ չե՛մ կարող ...»:

Ես, ընկճված ու գլխիկոր հրաժեշտ տալով, դուրս էի գալիս, երբ, ձայնը բարձրացնելով, հարցրեց.

— Իսկ որե՛ք բան արե՞լ ես...

Իր հարցից ոգևորված պատասխանեցի.

— Այո՛, իհարկե՛, — և պայուսակիցս սկսեցի մեկ առ մեկ հանել ու ցույց տալ աշակերտական առանձին տետրերի մեջ Մուսա լեռան խրթին բարբառով իմ գրառած ժողովրդական բանահյուսության

նյութերը՝ հեքիաթներ, ավանդույթյուններ, զրույցներ, ծիսական, հարսանեկան, կենցաղային ու այլ երգեր, առակներ, առածներ, ասացվածքներ, օրհնանքներ, անեծքներ և այլն:

Կ. Մելիք-Օհանջանյանը վեր կացավ, մոտեցավ ինձ, տետրերից մեկը վերցրեց ու սկսեց լուռ ընթերցել և գլխով իր համաձայնությունն ու հիացմունքն արտահայտել:

Ապա հարցրեց. — Իսկ ո՞վ է քեզ խորհուրդ տվել, որ գրի առնես այդ դժվար բարբառով:

— Ո՛չ ոք, ես ինքս, քանի որ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը նշել էր, որ կիրիկյան բարբառներն ուսումնասիրելու համար ինքը բանահյուսական նյութեր չի ունեցել: Ուստի ես սկսեցի որոնել, գտնել բնիկ կիրիկիացի մուսավեռացիներին և նրանցից գրի առնել տարբերույթ նյութեր:

— Իսկ ո՞վ է քեզ ասել, որ ումլաուտավոր (կետավոր) տառերով գրի առնես:

— Հարգարժան պրոֆեսսոր, Ձեր և Մանուկ Աբեղյանի ջանքերով լույս տեսած «Սասնա Շուեր» դյուցազնավեպի երեք ստվար հատորներն ինձ համար բարբառագիտական տառադարձության ուղեցույց են դարձել ...

— Ապրե՛ս, որ ամենադժվար բարբառով ինքնուրույն սկսել ես գրի առնել, այն էլ՝ գիտական ճիշտ տառադարձությամբ: Ուրեմն, ես կդառնամ նաև քո գիտական ղեկավարը: — Եվ ժպտալով, ուսիս թեթև խփելով, բացականչեց. «Վերժինե՛, վերջի՛նն ես ...»:

... Ես երջանիկ եմ, որ լսել եմ իմ գիտական ղեկավար, ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի արժեքավոր խորհուրդները, զգացել եմ նրա հայրական հոգատարությունը: Նա ապագա մտավորականի միտքն ու հոգին կերտող վարպետ-ճարտարապետ էր:

Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանն իր ապրած 77 բեղուն և արգասավոր տարիների ընթացքում համալրեց մեր դասական հայագիտության կարկառուն ներկայացուցիչների շարքը: Նա սերունդներին և պատմությանը թողեց մնայուն արժեք ներկայացնող կոթողային աշխատություններ և ազնիվ ու անմոռաց հուշեր ...

Խորին երախտագիտություն և լուռ խոնարհո՛ւմ նրա անմահ հիշատակին:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԵՐԵՄՅԱՆ  
(Ծննդյան 110-ամյակի առթիվ)

Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին Թիֆլիսում: Արդեն պատանեկության տարիներին նա ցուցաբերում էր որոշակի հակումներ դեպի հասարակական գիտությունները:



Քսանամյա Երեմյանն ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Առաջին գիտական քայլերը կատարելով Հակոբ Մանանդյանի ղեկավարությամբ՝ Ս. Երեմյանը բացահայտեց իր պատմաբան-աշխարհագրագետի ձիրքը, պատրաստեց մի թեզ՝ Անդրկովկասի առևտրական ուղիները IV դարում համաձայն հռոմեական ճանապարհացույց «Պետինգերյան քարտեզի» ու հեղինակակցեց անվանի գիտնականին իր առաջին քարտեզով («Հայաստանի հին ճանապարհները Artaxata – Satala և

Artaxata – Tigranocerta»)¹: Այդ ժամանակ ակադեմիկոս Նիկողայոս Մառի ջանքերով արդեն ձևավորվել էր հայ հնագիտական դպրոցը, և նրա սաներից Աշխարհբեկ Քալանթարը 1931 թ. ձեռնամուխ եղավ Հայոց հին մայրաքաղաք Վաղարշապատի հնագիտական ուսումնասիրությանը. Ս. Երեմյանն էլ դարձավ արշավախմբի մասնակիցներից մեկը:

Հետհամալսարանական կրթությունը Ս. Երեմյանը ստացավ 1932 թ.՝ ընդունվելով ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի «Կովկասագիտական ինստիտուտի» ասպիրանտուրան: Նրա գիտական ղեկավարությունը ստանձնեց ակադեմիկոս Ն. Մառը: Այս անվանի արևելագետի նախաձեռնությամբ հիշյալ ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողը 1935 թ. գործուղվեց Լենինգրադ՝ պատմագիտության դարբնոց՝ ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտ՝ ավարտելու համար իր կովկասագիտական ուսումնասիրություններից մեկը: Եվ նույն 1935 թ. նա, պաշտպանելով «Քարթլիի (Արևելյան Վրաստանի) ֆեոդալական կազմավորումները մարդպանական շրջանում» թեմայով ատենախոսությունը, ստացավ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1936 թ.):

¹ Հ. Մանանդյան. Հայաստանի հին ճանապարհները. – «Տեղեկագիր գիտությունների և արվեստի ինստիտուտի», 1931, № 5, ներգիրք՝ 86 և 87 էջերի միջև:



Սա մի ժամանակ էր, երբ նորաստեղծ Խորհրդային Միությունը կառուցում էր կոմունիստական գաղափարախոսություն վրա խարսխված իր ազգային քաղաքականությունը՝ առաջ մղելով հին ու նոր ձևավորվող ազգերի, ազգությունների համահարթեցման սկզբունքը: Այս ոգով պետք է շարադրվեին նաև Անդրկովկասի ժողովուրդների պատմությունները: Ս. Երեմյանին հանձնարարվեց «ՍՍՀՄ պատմություն» առաջին բազմահատորյակի համար գրել Հայաստանի և Ադվանքի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև XI դարը: Նա տեքստին հավելեց Հայաստանի և Կովկասի պատմական մի շարք քարտեզներ: Նույն՝ 1935 թվականից, Ս. Երեմյանը Լենինգրադի պետական համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետներում դասավանդում էր հայ ժողովրդի պատմություն: 1938-ից նա ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր:

1941 թ., հրավեր ստանալով ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղից՝ ԱՐՄՖԱՆ-ից, Ս. Երեմյանը տեղափոխվեց Երևան և աշխատանքի անցավ Պատմության ինստիտուտում (որպես գիտնական քարտուղար), ուր գործեց մինչև կյանքի վերջը: 1941–1942 թթ. նա ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր: Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո, արդեն լիարժեք կարգավիճակ ստացած ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի համակարգում սկսված վերակառուցումների ընթացքում՝ Պատմության ինստիտուտում կազմավորվում էին առանձին սեկտորներ կամ բաժիններ: Ս. Երեմյանը գլխավորեց Հին և միջին դարերի (1964 թվականից՝ Միջին դարերի, 1971-ից՝ Հին դարերի) պատմության բաժինը: Ստալինյան տասնամյակներին, անգամ հետո էլ՝ ազգային պատմությունն ուսումնասիրելը հնարավոր էր միայն գաղափարախոսական որոշակի կարծրատիպերի շրջանակներում, որոնցից դուրս գալը գիտնականի համար դժվար, նույնիսկ վտանգավոր էր:

1953 թ. Մոսկվայում Ս. Երեմյանը «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով պաշտպանեց դոկտորական ատենախոսություն, ապա ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ու նշանակվեց Պատմության ինստիտուտի տնօրեն (1953–1959 թթ.): Նա մինչև 1960-ականների վերջը ստացել էր գիտնականի համար հնարավոր գրեթե բոլոր պաշտոններն ու կոչումները (1963 թ. ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1965–1968 վարում էր ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը), սակայն նախևառաջ գիտնական էր ու մանկավարժ: Գիտության կենտրոններում անցկացրած տարիներին սեփական դիտարկումներից, գիտական տարբեր գազաթափոցներում խոշոր մասնագետների հետ ունեցած շփումներից՝ Ս. Երեմյանը գիտակցում էր կենդանի և մեռած, արևելյան ու եվրոպական լեզուների կարևորությունը հայագիտության առաջընթացի համար: Գիտնականի շուրջ խմբված երիտասարդ պատմաբանները, արևելագետներն ու

Հնագետները ռուսաստանյան կենտրոններում տիրապետեցին ասորերենին, հունարենին, պարսկերենին, արաբերենին, թուրքերենին, ինքնուրույն ուսումնասիրելու համար օտար սկզբնաղբյուրները և երկաթե վարագույրի մյուս կողմում ստեղծվող օտարալեզու հարուստ պատմագիտական շտեմարանը:

Ս. Երեմյանը Երևանում էլ իր եռանդն ու գիտելիքները հաղորդում էր տարբեր բուհերի ուսանողներին: Ապա նրանց մի մասը հմուտ ղեկավարի օժանդակությամբ մուտք գործեց գիտություն (մոտ քառասուն դիսերտանտներ ու ասպիրանտներ):

Խորհրդային Միության կառավարական և կուսակցական շքանշաններն ու մեդալները նոմենկլատուրայի մեջ ներառված անձանց համար պարտադիր դրեսկոդ էին, որոնց նկատմամբ Ս. Երեմյանն անտարբեր էր՝ նվիրելով իր ժամանակի մեծ մասը պատմագիտության տարբեր ասպարեզներին. հայագիտություն, վրացագիտություն, կովկասագիտություն, բյուզանդագիտություն, պատմական աշխարհագրություն: Նախորդ դարի ընթացքում տակավին նոր էին ձևակերպվում ու մշակվում հին և միջին դարերի պատմության մի մեծ շարք հարցադրումներ ու խնդիրներ, որոնց լուծման դեկը Ս. Երեմյանի ձեռքում էր: Դրանցից էին՝ հայ ժողովրդի կազմավորումը, սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը, հայ-վրացական, հայ-բյուզանդական առնչությունները, կովկասագիտությունը, Հայաստանի ու Անդրկովկասի պատմական աշխարհագրությունը: Ընդ որում՝ գիտնականը հավասարապես խորացած էր շուրջ երեսուն դարի ձգվածություն ունեցող հիշյալ հարցերից յուրաքանչյուրի մեջ՝ իր վճռական խոսքն ասելով նշված ասպարեզներից յուրաքանչյուրում:

Տասնամյակներ շարունակ Ս. Երեմյանը հետազոտեց հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հիմնախնդիրը: Պատմական սկզբնաղբյուրների, հին լեզուների, պատմական գործընթացների իմացություն շնորհիվ վաստակաշատ ակադեմիկոսը ներկայացրեց հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած և այս երկարատև գործընթացում տարբեր ազդեցություն ու ներդրում ունեցած բազադրիչների աշխարհագրության, միավորման մեխանիզմի, դրա պատճառների և ժամանակային շրջանակների մասին մի հայեցակարգ: Ընդ որում՝ հայ ժողովրդի էթնոգենեզի խնդիրներում եվրոպական գիտություն մեջ գերիշխում էր միգրացիոն մոտեցումը: Գիտնականը կարծում էր, որ ավելի ճիշտ է ունենալ սեփական ժողովրդի պատմական ուղեծրի վերաբերյալ թեկուզ մասամբ թերի մի տեսություն, քան թե բավարարվել օտարերկրյա արևելագետների գիտական մշակումներով. միևնույն ժամանակ պատրաստ էր օգտվել նրանց գաղափարներից<sup>2</sup>:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Ի. Մ. Дьяконов. Предыстория армянского народа: история Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., хурриты, лувийцы, протоармяне. Ереван, 1968.

Ս. Երեմյանն առաջադրեց Հայոց կազմավորման չորս փուլերի տեսութիւնը (ավելի ճիշտ՝ վարկածը)<sup>3</sup>: Փուլերից յուրաքանչյուրում (որոնք սկսվելով մ. թ. ա. II հազ. կեսերին՝ ավարտվեցին մ. թ. ա. I հազ. կեսերին) կազմավորման հետզհետե ավելի ուժգին ծավալվող ու որակապես հարստացող գործընթացի շարժիչ էր դառնում Հայկական լեռնաշխարհի չորս տարածաշրջաններից մեկը՝ համապատասխանաբար՝ 1) Հայասան, 2) Արմե-Շուպրիան, 3) Վանա լճի ավազանը և 4) Արարատյան դաշտը: Իր թերութիւններով հանդերձ՝ Ս. Երեմյանի վարկածը ամրագրեց մի կարևոր երևույթ. լեռնաշխարհի ցեղերի ու ցեղային միութիւնների միավորումը հանգեցրեց Հայկական լեռնաշխարհում առաջին ժողովրդի՝ Հայ ժողովրդի առաջացմանը, հետևաբար, հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկ (ավտոխտոն) ժողովուրդ են:

Ս. Երեմյանի գիտական հետաքրքրութեան մյուս վեկտորը հին Հայաստանի հասարակական կարգն էր: Խորհրդային պատմագիտութիւնը, որն ուներ շեշտված սոցիալ-տնտեսական կողմնորոշում, մարդկութեան առաջընթացը տեսնելով դասակարգային պայքարի արդյունքում ծնված նոր հասարակարգերի հաղթանակի մեջ, պնդում էր, որ հին Արևելքի զարգացած երկրներն ու հասարակութիւններն իրենց քաղաքական, տնտեսական և հասարակական հաստատութիւններով ներգործում էին հարևանների համապատասխան կառուցյաների վրա՝ արագացնելով նրանց վերափոխումը: Ս. Երեմյանն այս աքսիոմը 1930-ական թվականներից հիմք դարձնելով նորովի ներկայացրեց հին Հայաստանի հասարակարգը: Երկրագործութեան, անասնապահութեան, արհեստների, առևտրի ու առևտրական ուղիների քննութեամբ գիտնականը վերականգնեց Հայաստանի տնտեսութեան համայնապատկերը: Սա ծայրաստիճան դժվարին գործ էր, եթե ի նկատի առնվի, որ ուսումնասիրողների տրամադրութեան տակ եղած հնագիտական նյութերի հավաքածուն դեռ աղքատ էր, իսկ բուն տեղական գրավոր սկզբնաղբյուրները, բացառութեամբ Վանի թագավորութեան շրջանի՝ աննշան:

Ս. Երեմյանը ցույց տվեց, որ հին Հայաստանում կողք կողքի գործում էին հասարակութեան առանցքը կազմող ազատ համայնականների ինստիտուտը և լայնորեն տարածվող մասնավոր տնտեսութիւնները՝ դաստակերտներն ու ազարակները, որոնք հիմնականում կիրառում էին ստրուկների աշխատանքը<sup>4</sup>:

<sup>3</sup> Առավել ծավալուն և մշակված այս տեսութիւնը տե՛ս Ս. Ս. Երեմյան. Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը. — ՊԲՀ, 1970, № 2, էջ 26–56:

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, Ս. Т. Еремян. Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху. — «Известия АН АрмССР, общественные науки», 1948, № 11, с. 33–73; Ն ու լ յ ն ի՝ О рабстве и рабовладении в древней Армении. — «Вестник древней истории», 1950, № 1, с. 12–26; Ն ու լ յ ն ի՝ Ստրկատիրութեան յուրահատկութիւնները հին Հայաստանում. — «Լենինյան ուղիով», 1970, № 6, էջ 90–98:

Ստրկատիրական բնույթի ներկայացվեց նաև Հայաստանի պետական կառուցվածքը: «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով դոկտորական ատենախոսություն և այլ ուսումնասիրությունների էջերում Ս. Երեմյանն որակապես սահմանազատեց հին Հայաստանի ու միջնադարյան կամ ֆեոդալական Հայաստանի հասարակարգերը: Վանի թագավորությունը, որի ժառանգորդը և իրավահաջորդն անտիկ Հայաստանն էր, ճանաչվեցին որպես Խորհրդային Միության տարածքում երբեմնի եղած հնագույն ստրկատիրական երկրներ: Երևանն էլ դարձավ Միության տարածքում հիմնադրված հնագույն քաղաքը:

Ֆորմացիոն ջրբաժանի մյուս կողմում ավատատիրական կարգերը որդեգրած Հայաստանն էր: Եվ Ս. Երեմյանը ֆեոդալիզմի ծագման խնդրին նվիրեց մի շարք ուսումնասիրություններ<sup>5</sup>: Հայ պատմագրություն մեջ ֆեոդալական հարաբերությունների ձևավորման հարցի վերաբերյալ մինչ այդ տիրապետում էր ահադ. Հ. Մանանդյանի վարկածն այն մասին, որ ֆեոդալիզմը բնորոշ էր արդեն հին Հայաստանին: Ս. Երեմյանը, ֆեոդալիզմի առաջացումը պայմանավորելով ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի հետ, պնդեց, որ մ. թ. III – IV դդ. Հայաստանում աներկբա գերիշխում էր ֆեոդալական արտադրանական: Մասամբ նաև համաձայնելով Հ. Մանանդյանի տեսակետին Ս. Երեմյանն ընդգծեց, որ ստրկատիրություն ընդերքում, մ. թ. I դարերից սկսած, հասարակության զարգացումը Հայաստանում դրսևորվեց ֆեոդալական տարրերի աստիճանական հանդես գալով և ծավալումով: Զուգահեռներ տեսնելով Եվրոպայի հասարակությունների ու Հայաստանի միջև՝ Ս. Երեմյանը սրա կողքին նաև նկատեց, որ Հայաստանի ծայրամասերում որտեղ ստրկությունն ավելի թույլ էր արտահայտված, նախնադարյան-համայնական հասարակարգը և շահագործման նահապետական եղանակները պարզապես փոխարինվեցին վաղ ֆեոդալականներով. դիցուք, հասարակության զարգացումն այստեղ ընթացել է ուղիղ ճանապարհով՝ նախնադարյան համայնական հասարակարգից դեպի ֆեոդալիզմը: Խնդրի հետևողական զարգացումը հանգեցրեց միջնադարյան Հայաստանի պատմության պարբերացմանը: Տարակարծությունները նահանջեցին, երբ լույս տեսավ Ս. Երեմյանի «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման փորձ»-ը<sup>6</sup>: Այն Հայաստանում ֆեոդալական հասարակարգի սկզբնավորումը սանդղակի վրա իջեցրեց մինչև III – IV դարերը՝ հակա-

<sup>5</sup> Տե՛ս, *օրինակ*, С. Т. Еремян. Раннефеодальные государства Закавказья в Сасанидский период. — История СССР с древнейших времен до образования древнерусского государства. М. — Л., 1939, с. 101 — 168; Ս. Երեմյան. Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Հայաստանում. — Հայ ժողովրդի պատմություն, մաս 1, Երևան, 1951, էջ 76–89:

<sup>6</sup> С. Т. Еремян. Опыт периодизации истории Армении эпохи феодализма. — «Вопросы истории», 1951, № 7, с. 52 — 73.

ուակ բեկերը բերելով մինչև XIX դարի սկիզբ:

Ըստ այդմ՝ Հայաստանում Ֆեոդալական հասարակութունը, զարգացած այլ երկրների նմանությամբ, անցել էր երեք հիմնական փուլեր՝ վաղ Ֆեոդալիզմը (IV–IX դդ.), զարգացած Ֆեոդալիզմը (IX–XIV դդ.) և Ֆեոդալիզմի քայքայման ժամանակաշրջանը (XIV – XVIII դդ.): Այս փուլերից վերջինը, հեղինակի կարծիքով, բնորոշվում էր արտաքին ուժերի տիրապետության ազդեցությամբ ընթացող տեղաշարժերով, որոնց հետևանքով զարգացած Ֆեոդալական հարաբերությունները փոխարինվեցին քոչվորական կիսանահապետական հարաբերություններով: Ֆեոդալիզմի պատմության պարբերացման Ս. Երեմյանի սխեման ընդունվեց ու հիմք հանդիսացավ դրանից դեպի ավելի վաղ դարերը գնացող պատմական փուլերի և մշակույթի պարբերացման համար (Գ. Տիրացյանի և Բ. Առաքելյանի պարբերացումը)<sup>7</sup>:

Ս. Երեմյանը, իր հերթին, զբաղվում էր միջնադարին նախորդող դարաշրջանների Հայաստանի ու Անդրկովկասի քաղաքական պատմության և մշակույթի հարցերով, մասնավորապես, Աքեմենյան (մ. թ. ա. VI– IV դդ.), հելլենիստական (մ. թ. ա. III– I դդ.) ու հռոմեական (մ. թ. I– IV դդ.) ժամանակաշրջաններով:

Ս. Երեմյանի քննության առարկաներ էին նաև վաղ միջնադարում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, Բագրատունյաց օրոք Հայոց պետականության վերականգնումը, հայ հին և միջնադարյան մշակույթը: Դասական պատմագիտության բարձունքներում կանգնած նախորդների՝ Ն. Մառի, Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Հ. Օրբելու արժանի հետնորդը՝ Ս. Երեմյանը, իր պատմական ուսումնասիրություններում Հայաստանը և մյուս երկրները տեսնում էր որպես հաղորդակից անոթներ, որպես համաշխարհային գործընթացների տեղայնացված, սակայն բազում ընդհանրություններ ու կապեր ունեցող հայելի:

Սրանով էր պայմանավորված Ս. Երեմյանի հետաքրքրությունը նաև մոտ և հեռու երկրների ու տարածաշրջանների (Ադվանք, Վիրք, Հյուսիսային Կովկաս, Բյուզանդիա, Ռուսիա) քաղաքական ու տնտեսական պատմությամբ, մշակույթով: Այս բնույթի գիտական գործերից են՝ «Յուրի Բոգոլյուբսկին ըստ հայկական և վրացական աղբյուրների»<sup>8</sup>, «Լիպարիտ զորավարը և նրա նախորդները»<sup>9</sup>,

<sup>7</sup> Г. Тирацян. Опыт периодизации истории материальной культуры Армении. — «Известия АН АрмССР, общественные науки», 1957, № 2, с. 77–90; Բ. Ն. Առաքելյան. Հին Հայաստանի նյութական մշակույթի հիմնական գծերը. — ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1960, № 7–8, էջ 81–98:

<sup>8</sup> Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. — Научные труды Ереванского государственного университета, т. 23, 1946, с. 389–421.

<sup>9</sup> Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ. — «Երևանի պետական համալսարան», 1947, № 2, էջ 103–149:

«Լիպարիտ գորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը»<sup>10</sup>:

Ս. Երեմյանին կենդանության օրոք հաճախ ճանաչում էին քարտեզագիր: Դա իրավացի է, սակայն խիստ նոսրացնում է նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը: Սրանով հանդերձ՝ Ս. Երեմյանն էր, որը հետևողականորեն աղբյուրներից քաղած յուրաքանչյուր ցեղանուն կամ տեղանուն ամրագրում էր աշխարհագրական որոշակի հենքի վրա՝ այն շնչավորելով, դարձնելով պատմաաշխարհագրական, պատմամշակութային տարածք: Նա խոր իջվածքով բաժանված անցյալի և իր օրերի ափերը կամրջեց՝ այս կառույցի հենասյուներ դարձնելով բոլոր մատչելի սկզբնաղբյուրները, պատմության բոլոր կարևոր հանգրվանների մասին եղած տվյալները: Երեմյան – պատմաբանը և Երեմյան – քարտեզագիրը միասին հյուսում են բազմաթիվ այսպիսի քարտեզներ, որոնց ճնշող մասը չի կորցրել այժմեականությունը՝ մնալով որպես հուսալի տեղեկատվական միջոց Հայաստանի, Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի ու Իրանի պատմության զանազան խնդիրները բացահայտելու համար<sup>11</sup>: Չափազանց արժեքավոր են գիտնականի հեղինակած քարտեզները՝ 1971-ից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական 8 հատորյակի, Հայկական սովետական հանրագիտարանի բազմահատորյակի համար: Ս. Երեմյանի քարտեզները բազմաչերտ են՝ տվյալներ մատուցելով հայ ժողովրդի կազմավորման, ցեղային տեղաշարժերի, հին պետականության, միջնադարյան թագավորությունների, նոր և նորագույն դարաշրջանների Հայաստանի ու հարևան երկրների, բազում մշակութային երևույթների մասին:

Ս. Երեմյանի պատմական աշխարհագրությունը նվիրված աշխատանքների պսակը VII դ. Աշխարհացույցն է: Տարաբնույթ աղբյուրների բացառիկ իմացությունը, դրանք համադրելու անկրկնելի ու-

<sup>10</sup> ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1947, № 8, էջ 65–79:

<sup>11</sup> Հեղինակի հրատարակության պատրաստած և շրջանառվող գրեթե հարյուրի հասնող քարտեզներից տե՛ս, օրինակ, Торговые пути Закавказья в конце IV века по Tabula Peutingeriana и Анониму Равеннского. — «Вестник древней истории», 1939, № 1, с. 80; Государства Закавказья с I в. до н. э. по VII в. н. э. — История СССР для средней школы, ч. I. М., 1948, с. 5; Закавказье и Средняя Азия в VII–IX вв. (նույն տեղում, էջ 6); Киликийское армянское государство в XII–XIII вв. — В кн.: Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, вкладыш между с. 534 и 535; Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն» գրքի՝ մաս I-ի, Երևան, 1952, յոթ թերթ քարտեզ, Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ատլաս, Երևան, 1961. այստեղ, մասնավորապես, տե՛ս Ուրարտու պետությունը և հարևան երկրները մ. թ. ա. VIII – VII դդ., էջ 102, Հայաստանը հելլենիստական ժամանակաշրջանում (մ. թ. ա. III – I դդ.), էջ 103, Հայաստանը I–IV դդ., էջ 104:

նակությունները նրա այս աշխատանքը դասեցին համաշխարհային գիտական քարտեզագրության լավագույն ստեղծագործությունների շարքը: Քանի դեռ Հռոմեական կայսրության կործանումից հետո իր անցյալը մոռացած Եվրոպան պետք է կրկին ծանոթանար ինքն իրեն՝ արաբների միջոցով ներմուծվող Պլատոնի, Արիստոտելի և այլոց գործերով, հայկական այս բացառիկ հուշարձանը պահպանել էր անտիկ օյկումենի մշակույթի, մասնավորապես, աշխարհագրության լավագույն ձեռքբերումները:

Ս. Երեմյանը բացահայտեց, որ Աշխարհացույցը անհետացած քարտեզների մատենաշարի՝ աշխարհի ատլասի բացատրագիր էր: Բնագրի դժվարին քննութամբ նա ետ բերեց կորստյան մատնված քարտեզների ժողովածուն՝ «Աշխարհացույց»-ը<sup>12</sup>, ինչպես և նրան համաժամանակյա հայկական գլոբուսը<sup>13</sup>: Ս. Երեմյանի՝ «Աշխարհացույց»-ին հավելած մեկնաբանություններն անսպառ տեղեկատու են պատմության, աշխարհագրության, ազգաբանության, լեզվաբանության, համեմատական առասպելաբանության, քաղաքական ու հոգևոր մշակույթի պատմության, ֆլորայի և ֆաունայի մասնագետների համար: Գիտնականի գործունեության կարևորագույն նվաճումներից է նաև պատմական ու քարտեզագրական դպրոցների ստեղծումը, որոնց երրորդ և չորրորդ սերունդները ներկայացնող գիտնականները մեր օրերում շարունակում են Ս. Երեմյանի գիտական ժառանգության երևակումը:

Ս. Երեմյանը վարժ կողմնորոշվում էր պատմական բնույթի ցանկացած դիսցիպլինի հարցերում՝ հնագիտություն, ազգագրություն, համեմատական լեզվաբանություն, վիմագրություն, դրամագիտություն և այլն՝ իր արժեքավոր խորհուրդներով կիսվելով գործընկերների հետ:

Ս. Երեմյանի ջանքերով մի շարք կոլեկտիվ ուսումնասիրություններ վերածվել են ամփոփ մենագրությունների: Դրանցից կարևորագույնը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական 8 հատորյակի առաջին 2 հատորներն են, որոնց էջերում ակադեմիկոսը և՛ հեղինակ էր, և՛ պատասխանատու խմբագիր: Համադրելով հին պատմիչների, հնագիտության և վիմագրության ընձեռած ժլատ նյութը՝ Ս. Երեմյանը լուծեց մի այնպիսի բարդ խնդիր, ինչպիսին հայ ժողովրդի՝ առաջին դարերի քաղաքական պատմությունն է: Գիտնականի հանրագիտարանային հոդվածներն արժեքավոր ներդրումների մի մեկ ուրիշ բնագավառ էր:

Ս. Երեմյանը տասնամյակներ շարունակ Հայաստանի Հանրապետության ու հայ ժողովրդի, նաև Անդրկովկասի և Խորհրդային Միության դեմքն է եղել միջազգային բազում գիտաժողովներում:

Ս. Երեմյանն առօրյալում և գիտություն մեջ համատեղում էր սո-

<sup>12</sup> Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963:

<sup>13</sup> Գլոբուսի մասին տե՛ս, օրինակ, Ս. Երեմյան. Օրացույցի պատմությունից: Երկրագունդը ըստ Անանիա Շիրակացու. - «Գիտություն և տեխնիկա», 1984, № 1, ներդիրներ I և IV:

կունուլթյուն, աշխատասիրուլթյուն, ազնվուլթյուն, վճռականուլթյուն, ինքնավստահուլթյուն, նվիրվածուլթյուն, սրամտուլթյուն, միևնույն ժամանակ՝ համեստուլթյուն և հանդուրժողականուլթյուն, բարյացակամուլթյուն, հոգատարուլթյուն, ինքնաքննադատուլթյուն, նորով ոգևորվելու հատկուլթյուն: Դրա վկայուլթյուններից է Ս. Երեմյանի ուշագրավ աշխատանքներից մեկը, որով, ըստ էության, գիտնականը հեռանում էր հայ ժողովրդի ծագման իր նախկին վարկածի դրույթների մի մասից՝ ընդունելով ու տեղայնացնելով մի նոր վարկած (Թ. Գամկրելիձե – Վ. Իվանով)<sup>14</sup>: Առանձնապես արժեքավոր է էթնիկական տեղաբաշխման նրա քարտեզը, որը խորագրված էր «Հնդեվրոպական ընդհանրուլթյան ժամանակաշրջանը Առաջավոր Ասիայում. Հայկյան առաջին շրջանում (2492 – 1032 թթ. մ. թ. ա.)»:

Ս. Երեմյանի աշխատուլթյուններն ընթերցվում և վերընթերցվում են գիտնականների ու պատմուլթյունը, մշակույթը սիրողների ավելի լայն հանրուլթյան միջավայրում: Այսօր էլ ակադեմիկոսի գործերը պահանջված են, քարտեզները գարմացնում են իրենց խորուլթյամբ: Ս. Երեմյանի անձը շատերի համար մտավորականի օրինակելի կերպար է:


ՀԱՅԿ ՀԱԿՈՒՅԱՆ

<sup>14</sup> Ս. Երեմյան. Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը. – «Գիտուլթյուն և տեխնիկա», 1985, № 4, էջ 29–34:



ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՆ  
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի  
ծննդյան 95-ամյակի առթիվ)

1996 թ. նոյեմբերի 20-ին Էդվարդ Ջրբաշյանն իր կենսամատենագիտություն վրա, որը հրատարակել էր ՀՀ ԳԱԱ-ն ու ակադեմիայի



Ֆունդամենտալ գիտական գրադարանը («Նյութեր Հայաստանի գիտնականների կենսամատենագիտության», №51), ունի այսպիսի ընծայագիր. «Հանրային գրադարանի Անձեռնմխելի ֆոնդին, որն ինձ համար միշտ հյուսիսային տուն է եղել»: Սա պերճախոս վկայում է գիտնականի ով լինելը:

Էդ. Ջրբաշյանը՝ մեծ գրականագետը, բանասերը, աղբյուրագետը, գրականություն տեսաբանը, դեռ դպրոցական տարիներից նախախնամություն կամքով ծնվել էր իր գործով հայ գրականագիտական միտքն առաջ մղելու և այն հարստացնելու համար: Նրա արձատները կապվում

են մարդկության հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկի՝ Վանի հետ, որից սերում էր Ջրբաշյանների նշանավոր գերդաստանը՝ 1915 թ. եղեռնից մազապուրծ եղած ու Երևանում հաստատված: Անշուշտ, պատանի Էդվարդը չէր տեսել չքնաղ Վանը, Աղթամարի սուրբ Խաչ եկեղեցին, Վարազա վանքը, Մհերի դուռը, Սարգուր Առաքելի բարձր բերդը, որն իշխում է Վան քաղաքի վրա, ինչպես Արարատը՝ Երևանի, սակայն լսել էր դրանց մասին և հետո էլ կարգացել իր մեջ կրում էր ցեղի գենետիկ հիշողությունը: Վանի այգեստաններն ու նրա հայ բնակիչների քրտնաջան աշխատանքը քաղաքը վերածել էին դրախտավայրի: Այդ մասին նշում են նաև օտարները: Իվ Տերնոնի և Ժան-Գլոդ Քեբաբջյանի «Հայաստան – 1900» գրքում կարդում ենք. «Վանն այս կյանքում, և դրախտը՝ մյուսում»<sup>1</sup>: Վանը հայտնի էր իր այգեստաններով, և, հավանաբար, այդու նկատմամբ ունեցած պաշտամունքի պատճառով ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը չապրեց բարձրահարկ շենքում, այլ Կոնդի իր համեստ առանձնատանը, որն այդու մեջ էր:

Էդ. Ջրբաշյանի առաջին հոդվածը տպագրվել է 1941 թ. մայիսի 20-ին «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթում՝ «Շրջանավար-

<sup>1</sup> Yves Ternon, J.-C. Kebedjian. Arménie – 1900, Paris, 1980, p. 25.

տի խոհեր» խորագրով: Ի՞նչ իմանար դպրոցի ուսումնատենչ շրջանավարտը, որ Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից գեներալ ձեռքին մասնակցելու է Ֆաշիզմի դեմ մղվող պայքարին, որի ընթացքում պարգևատրվել է «Կարմիր աստղի» շքանշանով, մի շարք մեդալներով, իսկ 1985-ին խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով: Պատերազմի վերջում նա ծանր վիրավորվել է:

1945–1950 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բանասիրական ֆակուլտետում, որից հետո նույն բուհի ասպիրանտուրայում՝ գրականության տեսություն մասնագիտությամբ: Նրա գիտելիքներն այնքան հարուստ էին, որ հենց ասպիրանտուրայի առաջին կուրսից անցնում է դասախոսական աշխատանքի և, որպես հմուտ մանկավարժ, բազմաթիվ սերունդներ կրթում մինչև կյանքի վերջը:

Էդ. Զրբաշյանն այն բացառիկ գրականագետներից էր, որը դասախոսական աշխատանքին գուզընթաց անձանձիր հարստացնում էր հայ գիտական միտքը, հրատարակում գրքեր, որոնցով կրթում էր ոչ միայն ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի ուսանողներին, այլև բոլոր այն բուհերի ուսանողներին, որոնք յուրօրինակ ձևով դառնում էին նրա հեռակա ուսանողները: Նա ուսուցիչ էր բոլոր նրանց համար, ովքեր հայ գրականության նվիրյալներ էին:

Երիտասարդ գիտնականը «Պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ» թեմայով ատենախոսությամբ 1954-ին ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ «Թումանյանի պոեմները» աշխատության համար 1965-ին՝ դոկտորի աստիճան:

Դեռ ուսանողական տարիներին ապագա տաղանդաշատ գրականագետի հետազոտական միտքը սկսում է կենտրոնանալ Հովհաննես Թումանյանի անձի ու ստեղծագործության վրա և «Գրական թերթում» 1949-ին տպագրվում է ուսանող Զրբաշյանի ուշագրավ հարցազրույց ունեցող հոդվածը՝ «Ինչու՞ էր Թումանյանը սիրում Պուշկինին»: Հետագայում այս հարցազրույցն ընդգրկելու էր XIX և XX դարերի ողջ հայ բանաստեղծական դասական ժառանգությունը, ու 1999-ին հրատարակվելու էր գրականագետի «Պուշկինը և հայ բանաստեղծները» հիանալի գիրքը<sup>2</sup>:

Էդ. Զրբաշյանի համար գրականագիտական հեղինակություններ էին Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Բաֆֆին, Հովհ. Թումանյանը, Ա. Չոպանյանը, Ե. Չարենցն իրենց գրականագիտական հոդվածներով, XIX և XX դարերի ուսու դասական գրականագետներն ու, հատկապես, Վ. Բելինսկին, որն ունի համաշխարհային հռչակ: Ահա թե ինչ է գրում Փրանսիացի գրաքննադատ Ռ. Փայոլը Բելինսկու մա-

<sup>2</sup> Էդ. Զրբաշյանի աշխատությունների մասին առավել ամբողջական տեղեկատվությունը տես «Հայ գրատպություն և գրքարվեստ» հանրագիտարանում (Երևան, 2015, էջ 917–918):

սին. «Նախորդ դարի մեծագույն գրականագետներից մեկը՝ Բելլինսկին»<sup>3</sup>:

Ասպիրանտական տարիներից սկսած՝ զբաղվելով գրականության տեսությունով, էդ. Ջրբաչյանը, որպես իսկական ընծա, հայ բանասիրությանը և դրա դասավանդմանը նվիրված ուսանողության համար առաջին անգամ հայ բարձրագույն դպրոցի պատմության մեջ, գրեց ու հրատարակեց «Գրականության տեսություն» դասագիրքը, որի համար արժանացավ ՀՍՄՀ պետական մրցանակի (1974): Այդ դասագիրքը մինչև 1980 թ. ունեցել է 5 հրատարակություն: Գրականագետը չի բավարարվում դրանով: Մոսկվայում 1982-ին լույս տեսած «Գրականության տեսության քրեստոմատիայի» օրինակով<sup>4</sup>, նրա խմբագրությանը ԵՊՀ-ի գրականության տեսության ամբիոնի դասախոսների աշխատասիրությանը լույս է տեսնում «Գրականագիտության ներածություն, Քրեստոմատիա» ժողովածուն, որի «խմբագրի կողմից» սեղմ նախաբանում գրականագետը բացատրում է այդօրինակ քրեստոմատիայի հույժ կարևորությունը. «Բանն այն է, որ համաշխարհային գեղագիտական և գրական-քննադատական մտքի շատ նշանավոր հուշարձաններ մինչև օրս էլ չեն թարգմանվել հայերեն, իսկ մյուսները հրատարակվել են շատ վաղուց և մատչելի չեն մասսայական ընթերցողին: Եվ առհասարակ՝ ուսանողի համար անչափ դժվար է գտնել և օգտվել օժանդակ տեսական գրականության անհրաժեշտ նյութերից, որոնք ցրված են բազմազան և հազվագյուտ հրատարակությունների էջերում»<sup>5</sup>:

Երկրորդ պետական մրցանակը էդ. Ջրբաչյանը ստացել է 1980-ին՝ «Հայ գրականության պատմություն» գրքի հինգերորդ հատորի համար, որի խիստ ծավալուն «Ներածություն», «Դարասկզբի հայ քննադատները», «Հովհաննես Թումանյան», «Միսաք Մեծարենց» հոդվածների հեղինակն էր:

Պարույր Սևակը պահանջում էր, որ ամեն իսկական գրող և գրականագետ քաջ տիրապետի մայրենի լեզվին, որը նշանակում էր՝ գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի լավ իմացություն: Էդ. Ջրբաչյանը ոչ միայն տիրապետում էր վերոհիշյալ լեզվական դրսևորումներին, այլև հիանալի գիտեր հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը: Դա հենց փայլուն ձևով երևում է «Հայ նոր գրականության պատմություն» գրքի հինգերորդ հատորի «Ներածության» մեջ, որն ընդգրկում է հայ հասարակական կյանքը, մշակույթը, գրականությունը XX դ. սկզբին՝ իր երկու՝ արևելյան ու արևմտյան հատվածներով:

Եթե ուշադիր զննում ենք էդ. Ջրբաչյան գրականագետի անցած ուղին, ապա տեսնում ենք, որ երկու շատ կարևոր պրոբլեմներ նրան

<sup>3</sup> R. Fayolle. La critique, Paris, 1978, p. 12.

<sup>4</sup> Ст'ю Хрестоматия по теории литературы. Пособие для студентов. М., 1982, с. 448.

<sup>5</sup> «Գրականագիտության ներածություն, Քրեստոմատիա», Երևան, 1984, էջ 3:

ուղեկցել են գրականագիտական առաջին քայլերից մինչև կյանքի վերջը: Դրանք են Հովհ. Թումանյանն իր ամբողջուլթյան մեջ և գրականության տեսությունն իր նրբություններով:

1984 թ. լույս է տեսել Ավ. Բահաթրյանի «Հին Հայոց տաղաչափական արվեստը, Քննական տեսություն» գիրքը, որը Էդ. Ջրբաչյանի գյուտերից էր. 1976 թ. «նրան բախտ է վիճակվել Հայտնաբերել ու հրատարակ հանել» այդ գիրքը<sup>6</sup>: Դրա առաջաբանին նախորդում է Եղիշե Չարենցի հետևյալ դիտարկումը. «Ըստ էության՝ մեր նոր գրականագիտությունը (Աբովյանից մինչև օրս) ունի ընդամենը երկու ինքնուրույն, միանգամայն անօրինակ, համարյա հանճարեղ դեմք կամ անուն: Դրանք են՝ Գևորգ Ախվերդյան և ահավասիկ այս մոռացված գրքի հեղինակ Ավետիք Բահաթրյանը»<sup>7</sup>: Գրականագետի կարծիքով՝ Ավ. Բահաթրյանի այս գիրքը «սկզբունքային կարևոր նշանակություն ունի ինչպես Եղիշե Չարենցի ստեղծագործական դիմանկարի ամբողջացման, այնպես էլ հայ բազմադարյան բանաստեղծական արվեստի տեսական հարցերը պարզաբանելու համար»<sup>8</sup>:

Ե. Չարենցը ևս մշտապես եղել է Էդ. Ջրբաչյանի գրականագիտական նախասիրությունների ոլորտում: 1982-ին լույս է տեսել գրականագետի «Չորս գագաթ» (Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց) կոթողային մենագրությունը: Նա առանձին ծավալուն մենագրություն է նվիրել Ե. Չարենցի անմահ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության անցած դժվարին ճանապարհին: Ժամանակին այդ բանաստեղծությունը խիստ քննադատվել է, որովհետև չի համապատասխանել սոցիալիստական գրականության պահանջներին: Մենագրության մեջ գրականագետը փաստացի հիմնավորում է, թե ինչպիսին է եղել ազգապաշտ հրաշք քերթվածի առաջին տողի չարենցյան ինքնագիրը: Հենց այդպես էլ այն հրատարակված է 1987 թ. լույս տեսած բանաստեղծի «Հատընտիր» ժողովածուում, որը կազմել են Էդ. Ջրբաչյանն ու Չարենցի կրտսեր դուստրը՝ Անահիտը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում<sup>9</sup>:

Գրականագետի համար հայ բանաստեղծության չորս գագաթներից մեկը Վահան Տերյանն էր, որի բանաստեղծությունների տաղաչափական համակարգին նա նվիրում է հերթական կոթողային հետազոտությունը: «Երկու խոսք» նախաբանում կարդում ենք. «Հայ բանասիրության մեջ առաջին անգամ է ձեռնարկվում որևէ առան-

<sup>6</sup> Ավ. Բահաթրյան. Հին Հայոց տաղաչափական արվեստը, Քննական տեսություն, Երևան, 1984, էջ IX:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ III-IV:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ XXXIV:

<sup>9</sup> Ե. Չարենց. Հատընտիր, Երևան, 1987, էջ 326:

ձին բանաստեղծի տաղաչափական համակարգը մենագրական հետազոտությունների նյութ դարձնելու մի այսպիսի փորձ»<sup>10</sup>:

Վ. Տերյանի բանաստեղծությունների տաղաչափական բազմազանությունը քննվում է հայկական, ինչպես և ռուսական բանաստեղծության գույազհեռումների համեմատական իրողություններով: Գիրքն ունի բազմաթիվ աղյուսակներ, որոնք բացահայտում են տաղաչափական բազմազան և հարուստ իրողությունները ոչ միայն Տերյանի պոեզիայում, այլև արևելահայ բանաստեղծության մեջ: Առանձին բաժին է հատկացված Տերյանի թարգմանությունների տաղաչափությանը:

Էդ. Զրբաչյանի հոդվածները, գրքերը, ծանոթագրությունները, նախաբաններն ու առաջաբաններն ունեն մի ակնառու իրողություն. ամեն ինչ ճշգրտված է, և բոլոր եզրակացությունների հիմքը փաստն է. նա չի սիրում տպավորություն թողնել բարդագրություններ: Այս խնդիրներում հետևողն է Հովհ. Թումանյանի ու նշանավոր հայագետ Նիկողայոս Մառի, որոնց համար գիտական եզրակացության հիմքը միայն փաստն էր:

Որպես գրականության տեսաբան՝ գրականագետը մի ծավալուն հետազոտության մեջ («Պոետիկայի հարցեր») ի մի է բերում պոետիկայի իր ընկալման համակարգը՝ բնորոշելով գեղարվեստական մեթոդի էությունը, գրական ժանրերի հիմնական չափանիշները, իսկ պոետիկական գործողության մեջ ներկայացվում է Թումանյանի վարպետության օրինակով:

Ուսանողության համար առձեռն բառարան դարձավ գրականագետի «Գրականագիտական բառարանը», որի երկրորդ հրատարակությունն արդեն ուներ հեղինակակից՝ Հենրիկ Մախչանյան: Բառարանն ուսուցիչների իսկական օգնականն է:

1983 թ. մի գրքում լույս են տեսնում ակադեմիկոսի տարբեր տարիներին լույս տեսած գիտական հոդվածները՝ «Գեղագիտություն և գրականագիտություն» խորագրով: Այս հատորում հատկապես ուշադրով են «Վ. Գ. Բելինսկին գեղարվեստականության մասին», ինչպես նաև «Ընդհանուրը և առանձնահատուկը հայ գրականության դասական ուղղություններում» ուսումնասիրությունները: Արևմտահայ բանաստեղծներից գրականագետն առանձին մենագրություններ է նվիրել Ռուբեն Սևակին (1965) և Միսաք Մեծարենցին (1977): «Միքայել Նալբանդյանը և արդիականությունը» գրքում (1984) գրականագետը հիմնավորում է, թե ինչու հանճարեղ մտածողը, հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ նվիրյալն իր գործերով արդիական է նաև մեր օրերում:

Էդ. Զրբաչյանը թողել է Թումանյանագիտական այնպիսի հարուստ ժառանգություն, որը կարելի է առանձին հատորներով հրատարակել բանաստեղծի հոբելյանի՝ ծննդյան 150-ամյակի առթիվ:

<sup>10</sup> Էդ. Զրբաչյան. Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Երևան, 1995, էջ 3:

1987 թվականից մինչև իր ոչ այնքան երկար կյանքի ավարտը, Ջրբաշյանը Մ. Աբեղյանի անվան գրականությունների ինստիտուտում Հովհ. Թումանյանի կյանքի ու ստեղծագործության հրատարակութունների գիտահետազոտական խմբի ղեկավարն է եղել: 1964 թ. լույս է տեսնում նույն ինստիտուտի «Թումանյան» ընդհանուր վերնագրով ուսումնասիրությունների և հրապարակումների առաջին հատորը: Եվ այդ հատորում գրականագետը հոգևած ունի Թումանյանի վարպետության հարցերի վերաբերյալ: Հովհ. Թումանյանի վերաբերյալ հրատարակվել են գիտնականի հետևյալ գրքերը՝ «Թումանյանի պոեմները» (1964, 1986), «Թումանյանի բալլադները» (1969, 2004), «Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ» (1988), «Թումանյանը և հայ գրականությունից ավանդույթները» (1994), «Թումանյանի գրական ժառանգությունը» (2000):

Հովհ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի տաս հատորներից երրորդը հիացմունք է պատճառում բանաստեղծի պոեմների ծանոթագրությունների հարստությամբ, որի հեղինակը դարձյալ էդ. Ջրբաշյանն է:

Էդ. Ջրբաշյանը դեռ շատ երիտասարդ հասակից կարևոր դեր է կատարել գրական ու հայագիտական պարբերականներում: Աշխատել է «Գրական թերթում», եղել է «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր, 1967-ին եղել է ԵՊՀ-ի «Բանբեր Երևանի համալսարանի (հասարակական գիտությունների)» հիմնադիրը, երկար տարիներ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ էր: Նա մեծ դեր է կատարել Հայաստանի գրողների միությունում՝ լինելով այդ միության նախագահության անդամ:

1977-ից 1999-ը էդ. Ջրբաշյանը Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենն էր: Նրա ղեկավարությամբ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել շատերը: Շատ-շատերը բախտ են ունեցել գիտական աստիճաններ ստանալ մասնագիտական այն խորհրդում, որի նախագահն էր մեծ գիտնականը:

Էդ. Ջրբաշյանը ոչ միայն նշանավոր գիտնական էր, այլ նաև առաքինի, սկզբունքային անհատականություն, որը վեր էր կյանքի մանրախնդրությունից, որովհետև նրա համար մշտական արժեքներ էին ազգային շահը, մարդկային առաքինություններն ու բարոյական քրիստոնեական չափանիշները: Նա անշահախնդիր աջակցում էր բոլոր նրանց, ում մեջ տեսնում էր գիտական նվիրվածություն և մարդկային մաքրություն: Հրաշալի զրուցակից էր. հին աշխարհի իմաստունների նման կարող էր ժամերով ունկնդրին մատուցել իր բազմագիտակությունը:

Էդ. Ջրբաշյանը դասական գրականագետ էր դեռ կենդանության օրերին և հայագիտությունը ներկայացրել էր նաև արտերկրում՝ գեկուցումներով հանդես գալով Ավստրիայում ու Շվեյցարիայում:

*Ի թիվս այլ պարգևների ուներ գիտություն վաստակավոր գործչի կոչումը և ՀՀ ԳԱԱ վաստակագիրը:*

*Էդ. Ջրբաշյանը, անշուշտ, ուներ բազում գիտական հղացումներ, և նրա պայծառ միտքն ու եռանդը լիովին կնպաստեին նոր գիտական գլուխգործոցներ երևան գալուն: Բոլոր դեպքերում, այն ինչ մեզ է մնացել նրա գիտական ժառանգությունից, հարստացրել է հայ գրականագիտությունը՝ հատկապես թումանյանագիտությունը:*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԱՎԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ  
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ծննդյան  
75-ամյակի առթիվ)

Լրացավ հայ նշանավոր գիտնական, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ծննդյան 75-ամյակը:



Յուր. Սուվարյանը քաջաձանոթ անուն է Հայաստանի գիտական հասարակայնությանը, հատկապես բուհական մտավորականությանը, ինչպես և ակադեմիական շրջանակներին: Հիրավի՝ զարմանալի, բովանդակալից և արգասաբեր կյանքով է ապրում ակադեմիկոս Յուր. Սուվարյանը, կարողանում է համա-

տեղել գիտական և մանկավարժական լարված աշխատանքը վարչականի հետ, բեղուն գրչով կյանքի կոչում մեկը մյուսից խոր ու արժեքավոր հետազոտություններ, նպաստում բազմաթիվ ասպիրանտների և հայցորդների գիտական աճին, խորհրդատվություն իրականացնում ինչպես ՀՀ պետական զանազան մարմինների, այնպես էլ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների համար:

Յուր. Սուվարյանը ծնվել է 1943 թ. ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում, 1965 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1983 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987–1994 թթ. պրոֆեսոր Սուվարյանը, որպես Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ինչպես նաև տնտեսագիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահի տեղակալ, ապա նաև՝ նախագահ, մեծապես նպաստել է բուհում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: 2006 թ. դառնալով հարազատ բուհի ռեկտոր՝ Յուր. Սուվարյանը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համահունչ միջազգային պահանջներին: Նրա ղեկավարության շրջանում Տնտե-



սագիտական համալսարանն անցավ հանրապետության օրինակելի բուհերի առաջին շարքը:

2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ընտրվել է Հ. ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: Բարեխղճորեն կատարելով իր պարտականություններն այդ պաշտոնում՝ նա որոշակի ավանդ է ներդրել «Հայագիտության զարգացման հայեցակարգի» և «2012–2025 թթ. հայագիտության զարգացման ռազմավարություն» մշակման, Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման գործում:

Յու. Սուվարյան քաղաքացու կերպարը հասկանալու համար կարևոր է նշել նաև 1991–1992 թթ. նրա աշխատանքը որպես ՀՀ վարչապետի խորհրդական (համատեղության կարգով): Երկրի տնտեսության համար օրհասական այդ պայմաններում առավելագույնս պիտանի եղան Յու. Սուվարյանի համակարգային մտածելակերպը, արագ կողմնորոշվելու և վճռելու փորձը, տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրների ներքին կապը զգալու և դրանք համադրված լուծելու կարողությունը: 1994 թ. Յու. Սուվարյանը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) կառավարման ամբիոնի վարիչն է: Նրա ջանքերով ամբիոնը վերածվել է գիտամանկավարժական հզոր կենտրոնի: Պատկառելի է հենց իր՝ ակադեմիկոս Սուվարյանի գիտական հրատարակությունների ցանկը. շուրջ 270 աշխատություն, որից 42-ը մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Նրա գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն արդյունքներից են արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու կառավարման նոր մեթոդաբանության մշակումը, գիտություն կառավարման կարևորագույն հիմնախնդիրների նոր լուծումների, հանրային կառավարման տեսության յուրօրինակ հայեցակարգի հիմնավորումը, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման և տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգի մշակումը, հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքի ու միտումների բնութագրությունը, հանրապետության տնտեսական զարգացման վրա կրթության և գիտության ներազդեցության գնահատումը, գիտակրթական համակարգի կառավարման նոր հայեցակարգի առաջադրումը:

Յու. Սուվարյանի ղեկավարությունը ու խմբագրմամբ լույս է տեսել «Մենեջմենթ» հայերեն բուհական առաջին դասագիրքը (1999, 2002, 2009, 2016), որը եղավ վերջին շրջանի հայ տեսական-մանկավարժական մտքի նվաճումներից մեկը: Բուհական ուսուցման համակարգի արդիականացման մեջ պրոֆեսորի և նրա համախոհների ծանրակշիռ ներդրումը եղան «Ձեռնարկության արդյունավետ կառավարում» և «Ծառայությունների ոլորտի արդյունավետ կառավարում» էլեկտրոնային համակարգչային գործարար խաղերի մշա-

կումն ու ներդրումը: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի գիտական ղեկավարությունում մշակվել են մի շարք գործնական ուղղվածությունների ծրագրեր, մասնավորապես՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը (1994 թ.), ՀՀ երկաթուղային տրանսպորտի բարեփոխումների ծրագրերը (1998 թ.), որոնք ընդունվել են հանրապետության գործադիր իշխանությունների կողմից և իրագործվել: Դժվար է գերազանահատել Յու. Սուվարյանի դերը տնտեսագիտական բարձրորակ կադրերի, գիտական հերթափոխի պատրաստման ասպարեզում: Անցած տարիներին նրա ղեկավարությունում տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի աստիճան են ստացել բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատված են «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), Միջազգային փրկաստիճանական ակադեմիայի «Դավիթ Անհաղթ» (2010), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի (2011) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014-ին արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա «Հանրային կառավարում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության», «Լրաբեր հասարակական գիտությունների» և այլ հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է, ՀՊՏՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Արցախի պետական ու այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր: 2016 թ. ընտրվել է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Իր հարուստ փորձը Յու. Սուվարյանը տրամադրել է նաև Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ու ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնների կայացմանը: Այժմ 75-ամյա մեր գործընկերը լի է եռանդով, արդիական գաղափարներով ու ծրագրերով: Մաղթում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,  
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՐԱԿԱՆԱԳԵՏՆԸ, ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ  
ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՈՒ  
(Ազատ Եղիազարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

*Լրացավ ճանաչված գրականագետ, մանկավարժ, քննադատ, հրապարակագիր, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայոց լեզվի և գրականությունից ամբիոնի վարիչ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ազատ Կոմունարի Եղիազարյանի ծննդյան 75-ամյակը:*



Ա. Եղիազարյանը ծնվել է 1943 թ. ապրիլի 10-ին Գավառ քաղաքում: 1965-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը ու սկսել աշխատել Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում՝ իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Ծառայել է բանակում, իսկ 1969–1972

թթ. սովորել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1973-ին աշխատանքի է անցել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և նույն տարում էլ պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1988-ին ստացել դոկտորի գիտական աստիճան:

Այս տեղեկությունները կմնային լուր պաշտոնական հարցաթերթի ընդունված կետերի պատասխաններ, սակայն այդ թվականների և դրանց հաջորդող տարիների միջև հստակ ուրվագծվում է հետազոտական լայն ընդգրկումներ ունեցող գրականագետի՝ հետևողական արգասավոր գործունեությունը: Գրականության ինստիտուտում սկսելով իր աշխատանքը իբրև գիտաշխատող՝ հետագայում դարձել է նորագույն գրականության բաժնի վարիչ, իսկ 1999–2008 թթ. ստանձնել ինստիտուտի տնօրենի պատասխանատու և պատվաբեր պաշտոնը: Այդ տարիներին քննադատ, գրականագետի հետազոտական աշխատանքներին գումարվել է գիտական կոլեկտիվի ղեկավարման, նրա ապագայամետ ծրագրերի մշակման և իրագործման կազմակերպչական գործընթացը: Առաջնորդվելով իր նախորդների՝ բազմավաստակ գիտնականներ, ակադեմիկոսներ Վաչե Նալբանդյանի, Էդվարդ Զրբաշյանի կազմակերպչական սկզբունքների շարունակելիության ավանդույթներով՝ ինստիտուտը իր բնականոն աշխատանքներով լրացնում է հայ գրականագիտության նոր խնդիրներով նշանավորվող XXI դարի զարգացումները: Տպագրվում են

մենագրություններ, կոլեկտիվ աշխատություններ, հայ դասականներից Լ. Շանթի, Ավ. Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակությունները: Այդ տարիներին առանձին ուշագրություն է հատկացվում ինստիտուտի միջազգային կապերի ընդլայնմանը Ռուսաստանի, Եվրոպայի, ԱՄՆ-ի գիտնականների և գիտական հաստատությունների հետ: Այդպիսի համագործակցության արդյունք են դառնում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հանձարեղ երկի 1000-ամյակին նվիրված գիտաժողովները Երևանում, Մոսկվայում, Փարիզում, 2001-ին՝ «Հայ գրականությունը և քրիստոնեությունը», այնուհետև «Սասնա ծռեր» էպոսն ու համաշխարհային էպիկական ժառանգությունը», որը պարբերաբար տեղի է ունեցել 2002–2017 թթ., 2003-ին «Հայ-ռուսական գրական կապեր» գիտաժողովը Մ. Գորկու անվան գրական ինստիտուտի հետ համատեղ, 2005-ին՝ Վիտենբերգի համալսարանի հետ հայ և գերմանական միջնադարյան քնարերգությունը, 2007-ին Ե. Ջարենցի ծննդյան 110-ամյակին նվիրված ու մի շարք այլ գիտաժողովներ: Ուշագրավ է, որ այս կարևոր ձեռնարկումները դարձել են շարունակելի նաև հետագա տարիներին, երբ Ա. Եղիազարյանը սկսել է պաշտոնավարել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնում: Դրանցից հիշարժան են եղել Հովհ. Թումանյանին, Հ. Մաթևոսյանին, V դարի հայ գրականությունը նվիրված և այլ գիտաժողովներ: Կարևոր է նաև, որ ինչպես Գրականության ինստիտուտում կայացած, այնպես էլ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտաժողովներից շատերի նյութերը հավաքվել և հրատարակվել են առանձին ժողովածուներով:

Գրականության ինստիտուտում Ա. Եղիազարյանի գործունեությունը ժամանակաշրջանում առանձին կարևորություն էր պետք է նշենք նաև նրա նախաձեռնությունը՝ «Գրականագիտական հանդես» կիսամյա տեսական-քննադատական պարբերականի հիմնումը 2003 թվականին՝ Գրիգոր Հակոբյանի և Սաթենիկ Ավետիսյանի համագործակցությամբ, որը հրատարակվում է մինչ օրս: Այս հատորների գիտական արժեքը դժվար է գերազնահատել, քանզի դրանք ներկայացնում են հայոց և համաշխարհային գրականության բազմազան հանգուցային հարցեր՝ դրանով իսկ նպաստելով արդի հայ գրականագիտության արգասավոր ընթացքին:

Ա. Եղիազարյանի գիտամանկավարժական գործունեությունն առարկայացել է նրա 20-ից ավելի գրքերում՝ մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, դասագրքեր, 100-ից անցնող հոդվածներում ու ուսումնասիրություններում, որոնք տպագրվել են ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրի հեղինակավոր մասնագիտական պարբերականներում:

Ա. Եղիազարյանի՝ որպես գրականագետի կայացման ճանապարհի սկզբում նշանակալից են եղել ՀՀ ԳԱ ակադեմիկոսներ էլվարդ Զրբաշյանի և Արամ Գրիգորյանի դերն ու գիտական ուղղորդումները: Գրականագիտության իր նախորդներից ժառանգելով մասնագիտ-

տական կայուն սկզբունքներ՝ նա իր ուսումնասիրություններում եղել է հետևողական՝ գործուն մասնակցություն բերելով ժամանակակից գրականագիտության տիրույթում ընթացող ավանդականի և նոր մտածողության առաջադրությունների քննությանը: Նրա բազմաշերտ հետաքրքրությունների տարածքում գրականության տեսություն, պատմություն, բանահյուսության, գեղարվեստական թարգմանություն և որ կարևորն է՝ արդի գրական գործընթացների կանխորոշող հիմնանյութ երևույթներն են, որտեղ արժևորվում են առաջին հայացքից տարաբնույթ ոլորտների, միտումների միջև խորն ընկած աղերսները, փոխներգործուն դրսևորումները: Կարելի է ասել, որ նրա հետազոտությունները բազմաձայն են և՛ նյութի ընտրություն, և՛ մեթոդաբանություն: Մեթոդաբանությունն անպայման ենթադրում է և՛ բանավեճ այլ տեսակետների հետ, և՛ զուգադրումների, համադրումների տարբեր հայեցակետեր, որոնց ամբողջությամբ էլ համակարգվում է նյութի ուսումնասիրությունը:

Սկսած իր առաջին աշխատություններից՝ «Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը» (1977), «İyö è iâðââîâ» (1979), «Գեղարվեստական պատում» (1986), «Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները» (1990), «Չարենցը և պատմությունը» (1997), ««Սասնա ծռեր» էպոսի պոետիկան» (1990) և հետագա մյուս նշանակալի ուսումնասիրությունները, վկայություն են ոչ միայն իմացության և գիտական լայն հետաքրքրությունների, այլև վերլուծության ընդհանրացնող ելակետային կայուն սկզբունքների: Դրանցից հետազոտողը կարևորում է տարբեր ազգային գրականությունների գեղարվեստական մտածողության փաստերի զուգահեռ համադրումներն ու առանձնահատկությունների դրսևորումները:

Գրականության զարգացման, հատկապես նորագույն շրջանում տարբեր ազգերի հոգևոր-մշակութային կապերի, արժեքների փոխներգործության, գեղարվեստական մտածողության տիպաբանական ընդհանրությունների գիտական ֆենոմենը ձեռք է բերում առանձնակի նշանակություն: Ընդ որում, Եղիազարյանն իր ելակետային դրույթները հիմնավորելու համար դիմում է ոչ միայն այլ ազգերի գրական փաստերին, այլև դրանց գրականագիտական ուսումնասիրության փորձին: Նման հետազոտական մոտեցումների արդյունք են գրականագետի «20-րդ դարի հայ գրականություն: Պատմության ուրվագիծ» (2004), «Պատմության երգեհոնը (Եղիշե Չարենց)» (2007), «Այս հմուտ, հանճարեղ լուեցին...» (2009) ուսումնասիրությունները:

Ա. Եղիազարյանի աշխատանքներն արժևորող անդրազարձներ են եղել ոչ միայն հայրենիքում, այլև եվրոպական, ամերիկյան գրականագետների շրջանում: Օտար մասնագետներին հատկապես հետաքրքրել է «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան՝ աշխատությունը և դրան նպաստել էր, անշուշտ, գրքի անգլերեն թարգմանությամբ հրատարակությունը՝ “Daredevils of Sasun. The Poetics of an Epic”, որն ի-

րականացվեց 2008 թ. Լոս Անջելեսի UCLA համալսարանի պրոֆեսոր Պիտեր Քաուլիի կողմից: Աշխատությունների հանդեպ ուշադրությունը հիմնավորված էր, քանզի այն առաջին մենագրությունն էր՝ ամբողջականորեն նվիրված այնպիսի բարդ ու բազմախնդրային նյութի, որպիսին է պոսի պոետիկան է: Ուսումնասիրությունը հատկանշվում է կոնցեպտուալ հստակությամբ, էպոսի գաղափարական և գեղագիտական ակունքների ու նրա արտահայտության ոչ պարզ ձևերի տեսական առանձնահատուկ հետազոտությամբ: Էպոսի պոետիկան դիտարկվում է որպես ինքնատիպ ստեղծագործական գոյակերպ՝ իր ուրույն աշխարհագրագոգությունից դրսևորումներով: Հեղինակի գիտական դիտարկումների այս մեկնակետն է ընդգծում հայագետ Ժան Պրեո Մահեն. «Ա. Եղիազարյանի մենագրությունն իրենից ներկայացնում է հայկական ազգային էպոսի խորքային բացահայտման հրաշալի ուղեցույց: Հեղինակի գեղագիտական նուրբ զգացողությունը մեզ համար բացահայտում է այս գլուխգործոցի գեղեցկությունն ու կոլորիտը, որն ինքնին արժանի է ստանալու իր գնահատականը որպես այդպիսին և ոչ պարզապես որպես պատմական վկայություն կամ էլ առասպելների պատառիկների շտեմարան, ինչպես հաճախ արվել է նախկինում» (“Revue des etudes armeniennes”, vol. 31, 2009, Փարիզ): Էպոսի գաղափարագեղարվեստական արժեքայնության ճանաչման բացահայտումների հետ նաև աշխատությունների հեռանկարայնությունն է շեշտում մի ուրիշ գրախոս՝ Էոլ Անդերսոնը՝ գրելով. «Այս գրքի առկայությունը այլևս թույլ չի տալիս արևմտյան հետազոտողներին երկրորդական տեղ հատկացնել «Սասնա ծռերին» իրենց հետազոտություններում: Եղիազարյանի աշխատությունն այն լավագույն գիրքն է, որ մեզ ծանոթացնում է «Սասնա ծռերին» իբրև էպոսի: Այսքան բարձրարժեք աշխատանքը բնականաբար կարող է սկիզբ դառնալ կամ գոնե ոգևորել՝ բացելու նոր արահետներ գիտության մեջ» («Armenian Review», vol. 51, Fall-winter, 2009, Բոստոն): Նույնպիսի բարձր գնահատականներ են հնչել Թեոփան Լինտի, Գևորգ Բարդակչյանի, Ջորջ Բուռնությունի տպագրած գրախոսականներում<sup>1</sup>:

Բարձր կարծիքները եզակի չեն, և բացի նշված աշխատությունից, հավասարաբեք գիտականության որակները վերաբերում են նաև գրականագետի մյուս ուսումնասիրություններին, որոնք որոշարկված են ինքնահատուկ տեսական որոնումներով ու ամրակայվում են հետևողական ներհուն իմաստավորմամբ: Ավելորդ է նշել նաև գրականագետի՝ նյութի մատուցման լեզուն և ոճը: Գրականագիտական մտայնության կիրառումն այդ աշխատություններում միանգամայն տեղին է և նպատակամետ, սակայն բացառում է խրթին ակա-

<sup>1</sup> Համապատասխանաբար տե՛ս “Comparative Literature Studies”, vol. 47, № 4, 2010 (Պենսիլվանիա, ԱՄՆ); “Middle Eastern Literature”, vol. 14, issue 3, 2011 (Լոնդոն); A. Yeghiazaryan. Daredevils of Sasun: Poetics of an Epic, Costa Mesa, California, 2008, p. IX.

դեմիգմը: Ա. Եղիազարյանն իր ընթերցողին գրական դաշտ է բերում մատչելի արտահայտչալեզվով, և դրա շնորհիվ է, որ նրա ասելիքն իր բավարար փաստարկելիությունով հետաքրքրում է ոչ միայն մասնագետներին, այլև, ինչպես ընդունված է ասել, լայն ընթերցողին:

Գրականագետի գիտական սեռումները ձևավորվել են գրական քննադատության հանդեպ նրա աշխույժ հետաքրքրության դրսևորումներից: Դեռևս 1970-ականների սկզբից նա հրապարակում է գրախոսականներ՝ արձագանքելով ժամանակի գրական տեղաշարժերին և հաճախ առաջինը ներկայացնում երիտասարդ գրողների գործերի ինքնատիպ երևույթը: Տարիների հետ նրա բազմաթիվ հոդվածներն ի հայտ են բերում մտքի օրգանական զարգացումը, և եթե հիշենք, թե որքան բան էր փոխվում XX դ. վերջին տասնամյակներին հասարակական գիտակցության ու, հետևաբար, նաև գրականության ու քննադատության մեջ, առավել քան կարևորվում է քննադատ Եղիազարյանի գնահատման չափանիշների ստուգությունն ու հեռանկարայնությունը: Այդպիսի մեկնաբանություններով են բնորոշվում նրա այն հոդվածները, որոնցում քննության նյութ են դառնում Հրանտ Մաթևոսյանի, Ռուբեն Հովսեփյանի, Աղասի Այվազյանի, Վանո Սիրադեղյանի, Արտաշես Ղահրիբյանի և ժամանակի շատ ուրիշ գրողների գործերը: Սակայն եթե Հ. Մաթևոսյանի կամ Ռ. Հովսեփյանի հանդեպ հեղինակի վերաբերմունքն արդեն կայուն ու ակնհայտ նախասիրություն էր, որ ի հայտ էր գալիս ակնդետ և խորագնին ուշադրությամբ դեպի յուրաքանչյուր նոր գործ, ապա Սիրադեղյանի առաջին ժողովածուի գնահատումները քննադատի նորի և արժեքայնության հանդեպ անաչառ հայացքի արդյունք էին: Ընդ որում, Եղիազարյանը գտնում է ոչ միայն երիտասարդ գրողի ուրույն ստեղծագործական դիմանկարի բնորոշ գծերը, այլև այն արմատները, որոնք ձգվում են դեպի հայ պատմվածքի լավագույն ավանդույթները:

Գրական շարժման ամենատարբեր խնդիրների արձարձման մեջ տարիների հոլովությունում քննադատին առաջնորդողը գրականության ներկա վիճակն էր և վաղվա օրվա տեսլականը: Այդ մտահոգություններ են ներթափանցված նրա խոհերը նաև արդի բանաստեղծության, գեղարվեստական թարգմանության ու, ընդհանրապես, գրականության հարատև շարժուն ընթացքի օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին: Ա. Եղիազարյանի՝ ժամանակակից գրականությանը վերաբերող քննադատական հոդվածները հրապարակվել են ոչ միայն Երևանում՝ «Գրական թերթ», «Սովետական գրականություն» (այժմ՝ «Նորք») հանդես, «Ἐὐδοῦδοῦσῖαι Ἀδιῖαι», «Գարուն», այլև մոսկովյան պարբերականներում՝ «Ἐὐδοῦδοῦσῖαι ἁὰρῶδοῦ», «Äððæàà ìàðîäîä», «Äïðîñü èèðàðàòòðü», «Ἐὐδοῦδοῦσῖαι ìäîçðäîèà» և այլ հեղինակավոր հանդեսներ ու թերթեր: Հետագայում այդ բազմաթիվ հոդվածներից ընտրվել ու ընդգրկվել են նրա «Մարդը ներսից» և «Իննսունականները» ժողովածուներում: Հայեցակետերի միասնականության երևույթով են հատկանշվում նաև

այդ գրքերը, ու դրա հիմքում դիտարկումների հաստատուն տեսադրույթներն են:

Ասում են, որ մարդուն ձևավորում է կյանքի սկիզբը, և այն, որ Ա. Եղիազարյանն այդ սկիզբը գտել էր դպրոցում՝ իբրև մանկավարժ, դառնում է փորձառութուն, որ առավել քան պիտի որոշարկվեր նրա հետագա գործունեությամբ արդեն բուհական ասպարեզում: Մանկավարժի իր իմաստավորված կենսափորձն ու խորքային իմացութունը նա փոխանցում է ուսանողներին Հայ-ուսական (Սլավոնական) համալսարանում, ներգրավում գիտական հետազոտութունների ոլորտ երիտասարդ մասնագետներին՝ ղեկավարելով նրանց գիտական ատենախոսութունները: Հիշարժան են նաև նրա դասախոսութունները Բերկլիի, Լոս Անջելեսի (UCLA), Չիկագոյի, Միչիգանի, Պենսիլվանիայի (ԱՄՆ), Օքսֆորդի (Անգլիա) համալսարաններում:

Իր հետևողական աշխատանքով Ա. Եղիազարյանը նպաստել է Հայրենական գիտական մտքի ներուժի և հետազոտութունների շրջանակների ընդլայնման ու առաջընթացի զարգացմանը: Ժամանակի գրականագիտական ուղեգծում նա ունեցել և պահպանել է իր անհատականութունը: Նրա գործունեության անշտապ ուղին դրսևորումն է մարդկային ու քաղաքացիական կայուն վարքագծի: Շուրջ 50-ամյա նրա ստեղծագործական կենսագրութունը հայ գրականությանն անսակարկ ծառայելու լավագույն օրինակներից է: Ա. Եղիազարյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայութունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Մշակույթի նախարարության, Գրողների միության և Հայ-ուսական (Սլավոնական) համալսարանի ոսկե մեդալներով:

Շնորհավորելով մեր գործընկերոջը 75-ամյա վաստակած հոբելյանի առթիվ՝ մաղթում ենք քաջառողջութուն՝ հետագա արգասավոր գործերի ակնկալիքներով:

ԼԱՈՒՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ



---

---

ՀԱՄԼԵՏ ՍԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
(Ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության  
40-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ պատմությունից ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի վարիչ, Գավառի պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը հանրապետության ճանաչված պատմաբան-մանկավարժներից է, բոլորում է նրա ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակը: Այս ծանրակշիռ հոբելյանները նա դիմավորում է պատմագիտության բնագավառում ունեցած լուրջ ներդրումով և մանկավարժական մեծ վաստակով: Իրավամբ, կարելի է հավաստել, որ անվանի պատմաբանն ակադեմիական վերահիշյալ ինստիտուտի և ուսումնական հաստատության հիմնասյուններից է, որտեղ աշխատում է համապատասխանաբար 40 և շուրջ 25 տարի:



Վաստակաշատ պատմաբանը ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի) Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, 1978 թ. դեկտեմբերից՝ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ Հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. կեսերին տեղափոխվել է Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին:

Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմության խորագիտակ մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ղազարխանյանի ղեկավարությամբ Հ. Հարությունյանը 1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը, ստեղծագործական

ակտիվությունը»], իսկ 1991 թ.<sup>1</sup> դոկտորական ատենախոսություն («Հայաստանի բանվոր դասակարգը 1940–1950-ական թվականներին»): 2005 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը փորձառու վարչական աշխատող է. 1994 թ. մինչ օրս Գավառի պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչն է: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից Նորագույն պատմության բաժնի վարիչն է: Նա Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի Գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈՂ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ է:

Չափազանց լայն է պրոֆ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունները շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին ու միջին դարերի<sup>1</sup>, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի XIX և XX դարերի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է 6 մենագրության և շուրջ 100 հոդվածի:

Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը նվիրված մենագրություններում<sup>2</sup> Հ. Հարությունյանը համակողմանի վերլուծում է 1938–1960 թթ. (խորհրդային տարիներին այս ժամանակահատվածը բնորոշվում էր իբրև «սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջան») ՀԽՍՀ բանվոր դասակարգի քանակական ու որակական, սեռատարիքային և ազգային կազմի փոփոխությունները, գործնական ակտիվությունը, Հայկոմկուսի կողմից բանվորների շրջանում իրականացվող գաղափարական աշխատանքները և հարակից այլ հարցեր: Հարկ է փաստել, որ այդ ժամանակաշրջանով զբաղվող մասնագետների համար նշյալ ուսումնասիրություններն առաջօր կարևոր և օգտակար են:

Արցախյան հարցի վերազարթոնքի և, հատկապես, Արցախյան պատերազմի շրջանում հայ պատմագիտության համար առանցքային խնդիր էր հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունն ու

<sup>1</sup> Տե՛ս 10-րդ դարի նորահայտ վիմագիր արձանագրություն Գեղարքունիքի մարզի (Սևանի ենթաշրջան) վարսեր գյուղից. – Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Գավառ, 2000, № 4, էջ 25–27, Լճափ գյուղը և նրա նորահայտ արձանագրությունները. – Նույն տեղում, էջ 28–32, Իշտիկունի – Լճաշեն (հնագույն ժամանակներից մինչև 2006 թ.). – Նույն տեղում, 2007, № 9, էջ 31–38:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 158 էջ, Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 245 էջ:

քարոզչական դաշտում ադրբեջանական կեղծիքների բացահայտումը: 1980-ական թվականների վերջերից հայ պատմաբանները բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակել Արցախի պատմության վերաբերյալ: Այդ աշխատանքների շարքում կարևոր տեղ ունի Հ. Հարությունյանի «Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ.» մենագրությունը<sup>3</sup>, ուր լուսաբանված է այդ ժամանակահատվածում Արցախում հայկական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, երկրամասի հայության համագումարները, թուրք և ադրբեջանցի նվաճողների դեմ համառ պայքարը, Անտանտի տերությունների ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու գործընթացը: Պատմաբանների կողմից այս աշխատությունը, իրավամբ, համարվում է արցախյան թեմատիկայով հայրենական պատմագիտության առանցքային ուսումնասիրություններից մեկը:

Պատմական երևույթների ընկալման առումով ամենևին էական չէ հանրության համար ակնհայտ դարձնել ներկայի գերազանցությունն անցյալի նկատմամբ, առավել կարևոր է ապագայի կանխագագացողությունը: Պատմությունը երբեք չի ընդունում դժվարությունը որպես արդարացում: Սա անչափ կարևոր նկատառում է: Պատմության ճանապարհին մեր կորցրածն ավելի շատ է, քան գտածը: Բայց այդ քիչն էլ շատ ավելի թանկ է, քան այն, ինչ կար և այսօր չկա: Իսկ եղածի կայացման ընթացքը, որի ամբողջական շարունակությունն է ներկան, հարկ է, որ գիտակցվի մեր կողմից: Ահա այս նպատակի իրագործման ճանապարհին Հ. Հարությունյանի երկար տարիների աշխատանքի արդյունքը՝ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի ամբողջական պատմությունը (1828–1930 թթ.), կարևոր քայլ է: Հրապարակի վրա են հեղինակի «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.», «Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ.» և «Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ.» հիմնարար մենագրությունները<sup>4</sup>: Այս աշխատություններում հարուստ աղբյուրագիտական նյութի օգտագործմամբ ներկայացված է գավառի պատմությունը՝ սկսած Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միանալուց մինչև 1930 թ. Խորհրդային Հայաստանում գավառների փոխարեն շրջանների ստեղծումը: Ընդգրկուն է բարձրացված հարցերի շրջանակը՝ նորագրավյալ երկրամասի վարչաժողովրդագրական հիմնահարցը Ռուսաստանի ռազմավարության համատեքստում, գավառի վարչատարածքային կառուցվածք, ժողովրդագրական տեղաշարժեր, բնակչության թվաքանակ, ազգային, էթ-

<sup>3</sup> Տե՛ս Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, 299 էջ:

<sup>4</sup> Տե՛ս Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ, Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 434 էջ, Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 278 էջ:

նորավանաբանական, սեռատարիքային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-եկեղեցական, կրթամշակութային, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականների ու որբերի՝ գավառում տեղավորման, նրանց խնամքի կազմակերպման աշխատանքներ, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Հայաստանի կազմում գավառի ունեցած դերի ու նշանակության և այլ բնույթի հարցեր, որոնց խոր ու համակողմանի վերլուծությունը ստեղծում է Նոր Բայազետի գավառի ամբողջական պատկերը: Նկատենք, որ այս խնդիրները լուսաբանվում են Արևելյան Հայաստանի, հաճախ նաև Անդրկովկասի պատմության համապատկերի վրա:

Երևույթների դարգացման ներքին պատճառական կապերի բացահայտման ընթացքում խիստ կարևորվում են տարբեր ժամանակներն ու հանգամանքները միմյանց համադրելու, փաստական հարուստ նյութը շրջանառության մեջ դնելու հաջողված փորձերը: Այս դեպքում էլ ընդհանուր շարադրանքում օգտագործված բազմաթիվ վավերագրերի, իրողությունների գործածությունն ու տարածաշրջանի մասին ամբողջական ժողովրդագրական պատկերի ստեղծումը, որն անգնահատելի է ընդգրկման ծավալով ու խորքով, չի դառնում այս աշխատությունների միակ արժանիքը: Մեզ համար խիստ կարևոր է այս ամբողջական համակարգված նյութերից, տեքստից վերացարկված գաղափարը, իսկ դա այն է, ինչ անհրաժեշտ է սերունդներին:

Արժևորելով «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.» վերնագրով մենագրության նշանակությունը՝ պ. գ. դ., պրոֆ. Ա. Մ. Հակոբյանը իր գրախոսականում գրում է. «Աշխատանքը բազմակողմանի է, այն ոչ միայն պատմագիտական ուսումնասիրություն է, այլև ինչ որ տեղ նաև ազգագրական, հնագիտական, պատմաաշխարհագրական, նույնիսկ տնտեսագիտական թեքում ունի և այնքան հարուստ է բազմազան նյութերով, որ միաժամանակ կարող է փաստաթղթերի և նյութերի յուրօրինակ տեղեկատու ժողովածուի դեր կատարել նման խնդիրներով զբաղվող ուսումնասիրողների համար: ... Մենագրության արժեքը շատ ավելի են մեծացնում հեղինակի կողմից կազմված մի քանի տասնյակի հասնող վիճակագրական տարաբնույթ աղբյուրները: Փաստական վավերագիր, կամերալ և վիճակագրական այլ նյութերի հիման վրա թվերի լեզվով ցույց են տրված ներգաղթի ողջ գործընթացը, էթնոժողովրդագրական տեղաշարժերը, մասնավորապես հայ տարրի ու հայկական բնակավայրերի թռիչքային աճի դինամիկան»<sup>5</sup>: Մեկ այլ՝ «Նոր Բայազետի գավառը 1920–1930-ական թթ.» աշխատության մասին նույն հեղինակը գրում է. «Քննարկվող աշխատության գիտական արժեքը մեծանում է նրանով, որ հեղինակը բավարարվել է ոչ թե ազգաբնակչության տեղաշարժերի, գյուղատնտեսության և ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության դարգացման, դպրոցական-կրթական ու մշակութային շինարարության և այլ ոլորտներում սոսկ փաստեր արձա-

<sup>5</sup> «Պատմաբանասիրական Հանդես», 2008, № 2, էջ 256–257:

նագրելով, այլ աղբյուրագիտական-վիճակագրական ցաքուցրիվ տվյալների համակարգման միջոցով, տքնաջան հաշվարկների հիման վրա կազմել է ընդհանուր թվով 14 աղյուսակ և կատարել դրանցից բխող վերլուծություններ ու ընդհանրացնող եզրահանգումներ: Գրքի վերջում բերված է նաև 4 ցուցակներից բաղկացած հավելված»<sup>6</sup>:

Ի դեպ, Նոր Բայազետի մասին անվանի պատմաբանի այս հատորները կարող են սեղանի գիրք լինել յուրաքանչյուր գեղարքունիքցու համար, նաև նախադեպ դառնալ Հայաստանի այլ տարածաշրջանների պատմությունը շարագրողների համար:

Ինչևէ. պրոֆ. Հարությունյանն այժմ հրատարակության է պատրաստում «Երևանի նահանգը 1849–1917 թվականներին» վերնագրով մենագրությունը, ուր ուսումնասիրվում են նահանգի ստեղծման, նրա վարչատարածքային կառուցվածքի, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերը: Այս նահանգի պատմությունը պատմագիտության կողմից մինչ օրս չի ենթարկվել համապարփակ հետազոտության: Այն ունի մեկ այլ, շատ կարևոր արժանիք. հիմնահարցի լուսաբանումը նաև քաղաքական է, ունի հույժ արդիական նշանակություն, երբ մեր հարևանները փորձում են «ապացուցել», որ Երևանի նահանգն ի սկզբանե եղել է մուսուլմանաբնակ և միայն 1828–1830 թթ. պարսկահայերի ու արևմտահայերի վերաբնակեցումից հետո է հայկական դարձել: Այս տեսակետից հիմնահարցի ուսումնասիրությունը ճանաչողական մեծ արժեք է ստանում, այն է՝ իրական փաստերով ներկայացնել նահանգի էթնոժողովրդագրական օտարացման պատճառները: Աստիճանաբար բնիկները դուրս են մղվել կամ էլ անգլխորեն սահմանափակվել է նրանց հայրենիքը:

Հ. Հարությունյանը սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար է: Նրա ղեկավարությունում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ մեկ տասնյակ երիտասարդներ, եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության IV հատորի երկու գրքերում (որից վերջինի պատասխանատու խմբագիրն է) տեղ են գտել նաև անվանի պատմաբանի հեղինակած տեքստերը: Նա ուսումնական դասագրքերի համահեղինակ է:

Մեր հոբելյարը մանկավարժական-դասախոսական աշխատանքի շուրջ 40 տարվա կենսագրություն ունի: Բացի Գավառի պետական համալսարանից, նա դասախոսել և հատուկ դասընթացներ է վարել նաև Երևանի պետական, Հայաստանի ազրարային, Հայաստանի տնտեսագիտական, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական և «Հրաչյա Աճառյան» համալսարաններում: Վերջին

<sup>6</sup> «Պատմաբանասիրական հանդես», 2016, № 1, էջ 239:

տարիներին նա «Հայոց պատմության հիմնահարցեր» խորագրով հատուկ դասընթաց է կարգում ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ մագիստրանտների համար: Վերոնշյալ ուսումնական հաստատություններից մի քանիսում, նաև Վանաձորի պետական համալսարանում բազմիցս եղել է պետական ավարտական քննական հանձնաժողովի նախագահ:

Հ. Հարությունյանը մասնակցել է հայագիտական միջազգային բազմաթիվ գիտաժողովների, նախագահել է դրանց տարբեր մասնաճյուղերը, հանդես է եկել ուշագրավ զեկուցումներով:

Տարիներ ի վեր շփվելով, աշխատելով մեր ավագ գործընկերոջ հետ՝ համոզվել ենք, որ նա իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ պարզությամբ, բարոնությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով մեծ հեղինակություն է վայելում ընկերական ու գիտական մտավորական միջավայրում: Ավելացնենք նաև, որ Հ. Հարությունյանն ընտանիքի նվիրյալ է, հոգատար ամուսին, երկու զավակների հայր, ունի չորս թոռ:

Սրտանց շնորհավորելով գիտության անխոնջ մշակ Հ. Հարությունյանի հոբելյանը՝ նրան ցանկանում ենք քաջառողջություն, երջանկություն և ստեղծագործական բեղմնավոր գործունեությամբ լեցուն կյանք:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ,  
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԿԵՐՆԵՐ»  
ԹԵՄԱՅԻՆ

2018 թ. ապրիլի 25-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ Արևելագիտության ինստիտուտի ու ալ-Ահրամ ռազմավարական և քաղաքական հետազոտությունների կենտրոնի (Կահիրե) համատեղ գիտաժողովը՝ «Հայ-արաբական փոխառնչություններ. Հայոց ցեղասպանությունից մինչև արդի մարտահրավերներ» խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Պապիկյանը, ՀՀ-ում հավատարմագրված արաբական դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, ուսանողներ, երիտասարդ հետազոտողներ, լրագրողներ, Սփյուռքի գործիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Նա, մասնավորապես, նշեց. «Միջազգային այս գիտաժողովը շատ կարևոր խնդիր է իրագործում՝ մեկ անգամ ևս լուրջ քննարկման ենթարկել Հայ և արաբ ժողովուրդների բարեկամական կապերը, որոնք սկիզբ են առել հնագույն ժամանակներից: Հայ-արաբական համագործակցությունն ունի նաև կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն: Այս գիտաժողովը շատ կարևոր քայլ կլինի նաև Հայաստանի ու Եգիպտոսի հարաբերությունները գիտական և այլ ոլորտներում էլ ավելի խորացնելու ուղղությամբ»: Ա. Պապիկյանի կարծիքով՝ նման նախաձեռնությունները հնարավորություն են տալիս գիտական հենքի վրա հասկանալ մեր հարևանությունը տեղի ունեցող այն իրադարձությունները, որոնք ազդում են նաև Հայաստանի վրա: Նա մանրամասն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղությունը, նշեց մեր երկրի նախաձեռնությունները՝ ուղղված տարածաշրջանի կայունությանն ու խաղաղությանը, աջակցությունը անվտանգության և փախստականների խնդրին:

Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպան Թարեք Մաաթին կարևորեց Հայաստանում Արևելագիտության ինստիտուտի գոյությունը հայերի ու արաբների միջև հարաբերությունների ամրապնդման հարցում: «Արաբների և հայերի պատմական հարաբերությունները փոխադարձ շահի վրա են հիմնված: Ուզում եմ նշել, որ տասնյակ տարիների ընթացքում կարողացանք համագործակցության կամուրջներ կառուցել: Մասնավորապես Եգիպտոսում մեծապես կարևորում ենք Հայաստանի հետ հարաբերությունները: Հայկական համայնքը ևս Եգիպտոսում շատ

մեծ դեր է ունեցել և ունի: Ունենք հայ քաղաքագետներ, արվեստագետներ, տնտեսագետներ, գործարարներ և այլն», – ասաց նա:

Եզիպտոսի Հայ դատի հանձնախմբի նախագահ Արմեն Մազլումյանը հայ-արաբական հարաբերությունները զարգացնելու և միմյանց ճանաչելու հարցում կարևորեց մեղիա դաշտի նշանակությունը: Նա նշեց, որ վերջին տարիներին Եզիպտոսում Հայոց ցեղասպանությունից վերաբերյալ գրքեր են տպագրվել, նկարահանվել են գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր: Հայաստան են այցելել բազմաթիվ եզիպտացի լրագրողներ, հասարակական-քաղաքական և մշակութային գործիչներ, պաշտոնատարներ, ինչը կարևոր է երկկողմ համագործակցության համար: Ա. Մազլումյանը հայ-եզիպտական հարաբերությունների զարգացման հարցում կարևորեց եզիպտահայ համայնքի դերը: Ի դեպ, գիտաժողովի կայացմանը նաև օժանդակել էին Եզիպտոսի հայ համայնքը և Եզիպտոսում ՀՀ դեսպանությունը:

Եզիպտական կողմից գիտաժողովին մասնակցում էին ալ-Ահրամ կենտրոնի քաղաքական հետազոտությունների բաժնի փորձագետ, նաև ալ-Ահրամի «Ժողովրդավարություն» ամսագրի խմբագիր Ատեֆ Սաադավին, ինչպես նաև ալ-Ահրամի թուրքական հետազոտությունների ծրագրի փորձագետ, նույնանուն ամսագրի գիտական քարտուղար Քարամ Սայիդը: Նրանց զեկուցումները վերաբերում էին Եզիպտոսում Հայոց ցեղասպանությունից ճանաչման գործընթացին, Եզիպտոսի հայ համայնքին, նրա մասին եզիպտական հասարակությունից ու պետությունից մոտեցումներին, Հայաստան-Եզիպտոս հարաբերությունների զարգացման հեռանկարին: Եզիպտացի հետազոտողները նշեցին, որ Եզիպտոսում ոչ պաշտոնապես Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչվել է. վերջին շրջանում Եզիպտոսի խորհրդարանում դրա մասին լսումներ են անցկացվել: Բացի այդ, Եզիպտոսում բազմաթիվ ֆիլմեր են նկարահանվել, գեղարվեստական աշխատանքներ են ստեղծվել, պատմագիտական և իրավագիտական ոլորտներում հետազոտություններ են կատարվել Հայոց ցեղասպանության թեմայով: Ընդհանրապես, Օսմանյան կայսրությունում իրականացված ոճրագործության դատապարտումը Եզիպտոսում ժողովրդական դիվանագիտության օրակարգում է և կարող է աջակցել օրենսդրական նախաձեռնությունների գործադրմանը: Նաև նշվեց այն մասին, որ Եզիպտոսում մեծ թվով արխիվային նյութեր ու փաստաթղթեր կան, որոնք հաստատում են Հայոց ցեղասպանության վավերականությունը և կարող են օգտակար լինել դրա ուսումնասիրության ու միջազգային ճանաչման հարցում: Դրանցում ևս կան Օսմանյան շրջանի պետական տարբեր պաշտոնյաների ու գործիչների, ինչպես նաև՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների վկայություններն Օսմանյան կայսրության մեջ հայկական ջարդերի մասին: Եզիպտացի հետազոտողները նշեցին, որ Եզիպտոսում Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացին էականորեն կարող է օգնել Եզիպտոս-Հայաստան



երկկողմ հարաբերությունների էլ ավելի սերտացումն ամենատարբեր ոլորաններում:

Արևելագիտության ինստիտուտից ելույթ ունեցան՝ արաբագետ, պ. գ. թ., դոցենտ Արաքս Փաշայանը (գեկուցման թեման՝ «Հայաստանի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը»), թուրքագետ Անուշ Հովհաննսիյանը (գեկուցման թեման՝ «Աֆրիկի գրավումը թուրքիայի արտաքին և ներքաղաքական ընդգրկումներում»), արաբագետ, պ. գ. թ. Արամ Գասպարյանը (գեկուցման թեման՝ «Երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականությունը արաբական վերայեթներում առաջին աշխարհամարտի սկզբին»), արաբագետ Արարատ Կոստանյանը (գեկուցման թեման՝ «Սիրիայի հայ համայնքը. արդի մարտահրավերներ»), արաբագետ, պ. գ. թ. Նարինե Մարգարյանը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից (գեկուցման թեման՝ «Հայ գաղթականների վրանաքաղաքները Պորտ Սաիդում Հայոց ցեղասպանության տարիներին») և արաբագետ, պ. գ. թ. Նարինե Երանոսյանը՝ Պատմության ինստիտուտից (գեկուցման թեման՝ «Հայկական հարցը եգիպտական ալ-Ահրամ թերթում (19-դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ)»):

Հայաստանցի հետազոտողները նշեցին, որ հայ-արաբական փոխառնչությունների պատմությունը սկիզբ է առել իսլամի ձևավորումից հետո և որ հայերը եղել են Մերձավոր Արևելքի խճանկարի կարևոր բաղկացուցիչներից մեկը: Վերջիններս մոտ երկու դար Արաբական խալիֆայության մաս են կազմել: Օսմանյան կայսրության շրջանում հայերն ու արաբները ենթակա են եղել ազգային խտրականության քաղաքականությանը: XIX դարավերջին արաբական մամուլը, ինչպես, օրինակ, եգիպտական «ալ-Ահրամ» թերթը, անդրադարձել է Օսմանյան կայսրության մեջ հայերի ջարդերին: 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո արաբական երկրներն ապաստան տվեցին ցեղասպանությունից մազապուրծ հայերին: Ասվածի ապացույցը եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքում հայ գաղթականների վրանաքաղաքն էր, որտեղ հիմնականում տեղավորվել էին մուսալեուցիներ: Հայոց ցեղասպանությանը հաջորդած տարիներին արաբական մի շարք երկրներում սկսվեց հայ համայնքների ձևավորման ու ինստիտուցիոնալացման գործընթացը: Պետք է նշել, որ հայերն արաբական երկրներում կրոնադավանական փոքրամասնություն էին և նրանց շնորհվեց ազգային կյանքով ապրելու, սեփական լեզուն, ինչպես նաև կրոնն ուսանելու ու դավանելու հնարավորություններ: Որպես արաբական երկրների օրինապահ քաղաքացիներ՝ նրանք մեծապես գնահատվեցին թե՛ հասարակությունների և թե՛ իշխանությունների կողմից: Հայերն իրենց ներդրումն ունեցան արաբական երկրների մշակութային, առողջապահական, կրթական, ռազմական, քաղաքական, արհեստագործական և այլ ոլորտներում: Արաբական երկրներում ժամանակի ընթացքում նաև ճանաչում ձեռք բերեց հայկական մշակույթը: 1991 թ. անկախությունից հետո Հայաստանն արաբական մի շարք երկրների հետ դի-

վանագիտական կապեր հաստատեց և երկկողմ հարաբերություններ զարգացրեց (Սիրիա, Եգիպտոս, Լիբանան, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Իրաք, Հորդանան և այլն): Հայ-արաբական հարաբերությունների զարգացման հարցում կարևոր դեր ունեցան արաբական երկրների հայ համայնքները: Հայաստանի Հանրապետությունն այն բացառիկ պետություններից է, որ արաբական աշխարհի հետ քաղաքական խնդիրներ չունի և ներկայացված է Արաբական պետությունների լիգայում: Հայաստանը հավասարակշռված դիրքորոշում ունի մերձավորարևելյան մի շարք խնդիրների և հակամարտությունների նկատմամբ: ՀՀ-ն և արաբական երկրները Մեծ Մերձավոր Արևելքի մի մասն են և ենթակա են այն նույն մարտահրավերներին, որոնց բախվել է տարածաշրջանը: Այս տեսանկյունից խոսք գնաց Մերձավոր Արևելքի արդի զարգացումներում թուրքիայի ոչ շահեկան քաղաքականության և հարևան պետությունների, ինչպես, օրինակ, Սիրիայի ներքին գործերին միջամտելու նրա քաղաքականության մասին: Նաև նշվեցին ընդհանրություններ Հայոց ցեղասպանության օսմանյան ծրագրի և սիրիական Աֆրինում Անկարայի գործողությունների միջև:

Գիտաժողովում խոսք գնաց այն մասին, որ հայ-արաբական հարաբերությունների առկա մակարդակն այդքան էլ գոհացուցիչ չէ. Հայաստանը կարիք ունի ավելի սերտացնել համագործակցությունն արաբական աշխարհի տարբեր շրջանակների հետ՝ խորհրդարանական, քաղաքական, գիտական, գործարար, մշակութային, տեղեկատվական, հասարակական, զբոսաշրջային և այլն: Նշվեց նաև, որ Հայաստանում մեծ հետաքրքրություն կա արաբական աշխարհի նկատմամբ. արաբագիտությունը ՀՀ-ում զարգացած ակադեմիական ուղղություն է՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում գործում է արաբական երկրների բաժին, իսկ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում կա արաբագիտության ամբիոն:

Թե՛ եգիպտացի, թե՛ հայ հետազոտողները կարևորեցին նմանատիպ գիտաժողովների անցկացումը՝ որպես լավագույն միջոց արաբական երկրների ու Հայաստանի միջև բազմակողմ հարաբերությունների զարգացման հարցում:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ. Գ» ԹԵՄԱՅՈՎ

Մայիսի 17-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի ղահլիճում բացվեց ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմակերպած «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ» թեմայով երրորդ հանրապետական գիտաժողովը: Այն նվիրված էր պատմաբան, հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի ծննդյան 70-րդ տարեդարձին և մահվան տարելիցին: Գիտաժողովը, որը կայացավ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» (բաժնի վարիչ՝ Ալեքսան Հակոբյան) և «Արևելյան աղբյուրագիտությունն ու պատմագրությունն» (բաժնի վարիչ՝ Ազատ Բողոջյան) բաժինների առաջնորդությամբ, իր թեմատիկ սահմանումներում փորձել էր ներառել Պ. Չոբանյանի գիտական հետաքրքրությունների ողջ ծավալը: Այն է՝

- հայ-վրացական և հայ-աղվանական քաղաքական ու պատմաճակովթային առնչություններ, կովկասյան մշակովթային աշխարհ,
- հայ-ռուսական քաղաքական և մշակովթային առնչություններն ու ճիճնադարում,
- հայ և արևելաքրիստոնեական ձեռագրագիտություն, վիճագրություն, պատմագրություն, տեղանվանագիտություն, արվեստ ու ճարտարագետություն,
- արևելյան աղբյուրագիտություն,
- քրիստոնյա Երուսաղեմ,
- արգի Կովկաս:

Գիտաժողովին մասնակցում էր 36 գեկուցող Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Հունաստանի ակադեմիական և բուհական հաստատովթյուններից՝ ԳԱԱ արևելագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտներից, Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտից (Մատենադարան), Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնից, Երևանի պետական համալսարանից, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանից, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտից և այլն:

Ութ նիստերից բաղկացած գիտաժողովի առաջին նիստում (նախագահողներ՝ Հակոբ Սիմոնյան, Լուսինե Ղուչչյան) ողջույնի խոսքերով հանդես եկան ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանն ու Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Ապա ելույթ ունեցան Պ. Չոբանյանի

գործընկերները՝ ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ, գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյանը, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ Հայրապետ Մարգարյանը, ամերիկահայ հայագետ Աբրահամ Տերյանը, համակուրսեցի հնագետներ Հակոբ Սիմոնյանը և Մկրտիչ Զարդարյանը: Գիտնականի կերպարը ներկաների համար ամբողջական դարձավ դստեր՝ Հայկանուշ Զոբանյանի՝ հոր մասին հուշերով:

Այնուհետև նիստը շարունակվեց Վրաստանից ժամանած մասնակիցներին՝ Խաթունա Գափրինդաշվիլու և Իրմա Խոսիտաշվիլու («Թվագրված հայերեն Ավետարանները Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում») զեկուցմամբ: Այն Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում պահպանված 37 հայերեն Ավետարանների մասին էր, որոնցից 25-ը թվագրված են և ընդգրկում են ԺԳ – ԺԸ դարերը: Հաղորդվեց, որ Ավետարաններում եղած հիշատակարանները, ինչպես նաև ձեռագրերի ձևավորումն ու զարգանկարները կարևոր տեղեկություններ են տալիս ոչ միայն այս ձեռագրերի մասին, այլև ընդհանրապես հայ ձեռագրային արվեստի զարգացման վերաբերյալ: Ազատ Բոգոյանի («Կոստանդնուպոլսի պատրիարքությունը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում») և Քրիստինե Կոստիկյանի («Աղվանից կաթողիկոսության ներքին խնդիրներն ըստ Մատենադարանի ԺԸ դարի պարսկերեն վավերագրերի») զեկուցումները նվիրված էին հայ ու աղվանից եկեղեցիների որոշ կարևոր հարցերի լուսաբանմանը:

Երկրորդ նիստի (նախագահողներ՝ Հայրապետ Մարգարյան, Խաթունա Գափրինդաշվիլի) զեկուցողներն էին Հակոբ Սիմոնյանը («Աղձքի վաղ միջնադարյան նորահայտ արձանագիր տապանաքարերը»), Տորք Դալալյանը («Մասքութների ծագման և տեղորոշման խնդիրները»), Վահագն Հակոբյանը («Մատենադարանի պարսկալեզու վավերագրերը որպես էջմիածնի վանական հողատիրության պատմության սկզբնաղբյուր») և Գեորգի Միրզաբեկյանը («Մակուրի նահիեն 1728 թ. օսմանյան հարկամատյանում»):

Երրորդ նիստում (նախագահող՝ Ազատ Բոգոյան) ներկայացվեցին Հայրապետ Մարգարյանի («Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Զուղայեցու զեգերումները Վրաստանում»), Մերուժան Կարապետյանի («Զաքարիա Աղամ մատենագիր (1611–1688)»), Արթուր Մաթևոսյանի («Հայոց եկեղեցու վարդապետական աստվածաբանության հիմնադրույթները սբ. Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկում»»), Գևորգ Ղազարյանի («Կյուրեղ Սկյութապոլսեցու տեղեկությունները Ե–Ձ դդ. Պաղեստինի հայ վանականների մասին») և Գոհար Մխիթարյանի («Ասորախանի հայկական համայնքը Ս. Գմելինի ուղեգրության մեջ») գիտական հետազոտությունների արդյունքները:

Չորրորդ նիստը (նախագահողներ՝ Արթուր Մաթևոսյան, Գոհար Մխիթարյան) բացվեց Սանկտ Պետերբուրգից ժամանած մասնակցի՝ Լուսինե Ղուչչյանի զեկուցմամբ («Երուսաղեմ: Տեղը և ժամանա-

կը»), որում դիտարկված էին Երուսաղեմի էթնոգրավանական խմբերի փոխհարաբերությունները: Դրանք կարևոր դեր ունեն քաղաքի ներկայիս կրոնական ու աշխարհիկ կերպարի ձևավորման մեջ: Այնուհետև լավեցին Բենիամին Մաիլյանի («Կրասնոգարի երկրամասի հայերը. պատմամշակութային և ժողովրդագրական ակնարկ»), Էլինա Ղազարյանի («Հայկական բնակավայրերն ըստ Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության»), Սարգիս Բաղարյանի («Մի ֆրանսիացի դեսպան Երևանում. Պիեռ Վիկտոր Միշելի անտիպ հուշագրությունն ու հայերը») և Արման Մալոյանի («Եվրոպացի ուղեգիրների տեղեկությունները Մարդինի մասին (ԺԸ դարի վերջին քառորդ – ԺԹ դարի սկիզբ») գեկուցումները):

Մայիսի 18-ին ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում շարունակվեցին գիտաժողովի աշխատանքները: Հինգերորդ նիստում (նախագահողներ՝ Մկրտիչ Զարդարյան, Նորա Ենգիբարյան) իրենց գեկուցումները ներկայացրին Զարուհի Հակոբյանը («Բրդաձորի մեծ կոթողի պատկերագրական շարքը»), Ռուբեն Հակոբյան-Թարումյանը («Հայոց այբուբենի ձ տառի ծագումը»), Քնարիկ Միրզոյանը («Հայ-ուսական քաղաքական և մշակութային առնչություններն ու միջնադարում»):

Թեմատիկ առումով այս նիստի սերտ շարունակություն էր նաև վեցերորդ նիստը (նախագահող՝ Զարուհի Հակոբյան): Զեկուցումներով հանդես եկան Նորա Ենգիբարյանը և Գագիկ Սարգսյանը («Կարևոր երկաթեղարյան դամբարանները»), Նյուրա Հակոբյանը («Նորահայտ բուրվառ Անիից»), Մկրտիչ Զարդարյանը («Սյունիք-Արցախի առևտրային ուղիները որպես Մերձավոր Արևելքի ճանապարհագրության հետազոտման մոդուլ»), Աղավնի Ժամկոչյանը («Աղթամիր-Ոսկեվազ գյուղավանդ միջնադարում»):

Վահե Հովսեփյանի «Կովկասի փոխարքայության ձևավորումը և վարչատարածքային բաժանումների հիմնախնդիրը 1844–1849 թթ.» գեկուցումն արդեն հայոց պատմության նոր շրջանի իրողությունների լուսաբանումն էր, ինչը շարունակվեց նաև յոթերորդ նիստի (նախագահող՝ Ալեքսան Հակոբյան) աշխատանքներում: Այս նիստին իրենց գեկուցումները ներկայացրին Գրիգորի Այվազյանը «Ուտիների ապահներգրման և ապագայնացման հարցի շուրջ»), Խաչատուր Ստեփանյանը («Հայդար Բամաթը և Հայկական հարցը») և Գուրգեն Մուրադյանը («Ահաբեկչության տարածման միտումները և կանխարգելման ուղիները Հարավային Կովկասում»):

Վերջին՝ ութերորդ նիստի (նախագահողներ՝ Խաչատուր Ստեփանյան, Մերուժան Կարապետյան) առաջին զեկուցողն Ալեքսան Հակոբյանն էր: Զեկուցման թեման էր՝ «Աշխարհացույցյան Փայտակարան նահանգի գավառների տեղորոշման նոր փորձ»: Արամ Պողոսյանի զեկուցումը կրկին միջնադարյան իրողությունների վերլուծություն էր («Մոնղոլական նվաճողական ուղեգրությունը կովկասյան տարածաշրջանում»), իսկ արդեն վերջին երեք զեկուցումները՝ Արաքս Փաշայան «Սուննի սալաֆիականությունը Ադրբեջանում»,

Վարդան Գալստյան «Ազրբեջանի ժողովրդագրական իրական պատկերի վերհանման փորձ՝ ըստ ազրբեջանական պաշտոնական տվյալների» և Անի Մելքոնյան «Ազրբեջանական մամուլի անդրադարձը Ջուղայի խաչքարերի ոչնչացմանը», բացահայտում էին հարևան երկրի քաղաքական ու ինֆորմացիոն ծուղակները:

Նկատենք, որ զեկուցումներին հաջորդում էին հետաքրքիր և ուղղորդիչ քննարկումներ, լուսաբանվում խնդիրները: Գիտաժողովի աշխատանքային լեզուներն էին հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Գիտաժողովի ավարտին նախագահողներն ամփոփեցին արդյունքները՝ արժևորելով հատկապես զեկուցումների գիտական նորույթն ու գրեթե բոլոր ելույթներին բնորոշ խորքային վերլուծութայունը: Կարևորվեց նաև Արևելագիտության ինստիտուտի՝ արդեն լավ ավանդույթ դարձած այս գիտաժողովների թեմատիկ բազմազանությունը, ինչն առավել շահեկան է դառնում մեկ ընդհանուր լսարանի պարագայում, երբ նիստերն համատեղ են, չունեն բաժանմունքային առանձնացում՝ այդպիսով առավելապես ընդգծելով գիտաժողովի միջգիտակարգային բովանդակությունը:

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ,  
ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆԿԻՐՎԱԾ ՄԱՅԻՍՅԱՆ  
ՉԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀՈԶԱԿՄԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ**

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը դարակազմիկ նշանակություն ունեցավ. ցեղասպանության հետևանքով բնօրրանի մեծ մասը կորցրած հայ ժողովուրդը Սարգարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսայի մայրսյան հերոսամարտերում դրսևորած միասնության և անձնուրաց պայքարի շնորհիվ իր հայրենիքի մի փոքր հողակտորի վրա հռչակեց հայոց անկախ Հանրապետության ծնունդը՝ այդպիսով վերականգնելով ազգային պետականությունը:

Նորագույն ժամանակներում հայոց պետականության զարգացման բազմաշերտ պատմությունը համակողմանիորեն ներկայացնելու և վերարժեքելու նպատակով համազգային հոբելյանին համահունչ 2018 թ. մայիսի 25–26-ին Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Հայաստանի Հանրապետություն – 100» խորագրով: Այն կազմակերպել էին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ): Իսկ ԳԱԱ պատմության ինստիտուտն (ՊԻ) իր նշանակալի ներդրումն ունեցավ այդ կարևոր գիտական միջոցառման կազմակերպման գործում: Գիտաժողովին մասնակցեցին շուրջ յոթ տասնյակ հայ և օտարազգի գիտնականներ, ովքեր ներկայացնում էին Հայաստանը, Արցախի Հանրապետությունը, ԱՄՆ-ը, Գերմանիան, Ռուսաստանը, Վրաստանն ու Լիբանանը:

Գիտաժողովը մեկնարկեց ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Լիագուժար նիստում բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Նա շեշտեց մայրսյան հաղթական հերոսամարտերի կարևորությունը հայ ժողովրդի վերջնական բնաջնջման թուրքական ծրագիրը խափանելու և հայոց անկախ պետականությունը վերականգնելու գործում:

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ի-ը գիտաժողովի մասնակիցներին հղել էին շնորհավորական ուղերձներ, որոնք փոխանցեցին Արցախի Հանրապետության նախագահի մամուլի խոսնակ Դավիթ Բաբայանը և ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը: ՀՀ սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի խոսքը ներկայացրեց նախարարության Հայրենադարձության և հետազոտությունների վարչության պետ, պ. գ. թ. Գրիգոր Արշակյանը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ղեկավարմամբ, մեր պետականության մի քանի հազարամյա հոլովությունում Հայաստանի առաջին Հանրապետության երկուսուկես տարին կարող է չափազանց կարճ թվալ, սակայն այդ ժամանակահատվածը վիթխարի նշանակություն ունեցավ. այն հիմք դարձավ Հայոց պետականության շարունակականության համար: Նաև կարևոր էր նորաստեղծ պետության որակական կողմը. պառլամենտական հանրապետությունում գործում էին օրենսդիր, գործադիր, ինքնուրույն դատական և տեղական ինքնակառավարման համակարգեր, մեծ ուշադրություն էր դարձվում ներդրումների ներգրավմանը, տնտեսության բոլոր ճյուղերի, ինչպես նաև կրթության զարգացմանը, որի վառ վկայությունը համալսարանի բացումն էր:

ԵՊՀ ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի համոզմամբ, պետականության վերականգնման հարյուրամյակը նշելով մտովի անդրադառնում ենք մեր ամբողջ պատմության ընթացքին: Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունն ուսանելի շատ դասեր է տալիս, որոնք այսօր առավել կարևոր են աշխարհաքաղաքական բարդ ու վտանգավոր տարածքում գտնվող Հայաստանի քաղաքական ուժերի և իշխանությունների համար:

Վրաստանի Թբիլիսիի պետական համալսարանի անկախ գիտահետազոտական միավոր Իվ. Զավախիչվիլիի անվան պատմության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմության դոկտոր Գիորգի ձեխչվիլին կարևորեց անցյալի դասերը հաշվի առնելու անհրաժեշտությունը հայ ու վրացի ժողովուրդների ապագան կերտելու ճանապարհին: 1918 թ. Անդրկովկասում անկախ հանրապետությունների ստեղծումը պատմական ընտրություն էր: «Այսօրվա Հայաստանը և Վրաստանը այդ առաջին հանրապետությունների ժառանգորդներն են: Հայ և վրացի ժողովուրդները ցույց տվեցին քաղաքակիրթ աշխարհին, որ փոքր ազգերն էլ կարող են նպաստել մարդկության առաջընթացին», – ասաց նա: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև նույն ինստիտուտի գիտաշխատող Գիորգի Սամարազվիլին:

Գիտաժողովն ուներ հագեցած օրակարգ: Լիազուստ երկու նիստերում լսվեց ինը զեկուցում: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը «1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրության գիտաճանաչողական նշանակությունը» վերնագրով զեկուցման մեջ մատնանշեց խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող և, իր համոզմամբ, դեռևս հիմնավոր հետազոտության կարոտ հիմնախնդիրները: Ուշագրավ էր ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի «Ջանգեզուրի գոյամարտը 1918–1921 թթ. պայքար պետականության պահպանման համար» թեմայով զեկուցումը: Ընդգծվեց, որ Ջանգեզուրի գոյապայքարը լավագույն ապացույցն է թե՛ հայ ժողովրդի կենսունակու-



յան և թե՛ վկայությունը նրա իմաստությունը. մեր ժողովուրդն անձնուրաց պայքարի գնով պահեց հայրենի հողի պատառիկը՝ թույլ չտալով, որ այն դուրս մնա հայկական պետականության սահմաններից: ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը «Հայոց պետականության վերականգնում. դարակազմիկ իրադարձություն» վերնագրով զեկուցման մեջ շեշտեց, որ հայ ժողովուրդն իր անկախությունը ձեռք բերեց ազատագրական պայքարի՝ մայիսյան հերոսամարտերի գնով: Դրանով արմատապես հերքվում է այն թյուր կարծիքը, թե Անդրկովկասյան սեյմի փլուզման հետևանքով հայ ժողովուրդը դատապարտվեց անկախության, իսկ պետականության վերականգնումը տեղի ունեցավ թուրքական կողմի բարյացկամ վերաբերմունքի հետևանքով: Կարևորվեց, որ Հայաստանի առաջին Հանրապետության հենքի վրա ստեղծվեց նոր Հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը, որն էլ հող նախապատրաստեց Երրորդ անկախ հանրապետության ձևավորման համար: Հայկական երեք հանրապետությունների կյանքում պետականության շարունակականությունը 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ու Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման պատմական խորհուրդն է: ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը զեկուցեց «Հայաստանի Հանրապետության ծագումնաբանությունը. աշխարհաքաղաքական մարտահրավերներ» թեմայով: Նա վերլուծեց Հայաստանի առաջին Հանրապետության, որպես աշխարհաքաղաքական առանձին միավորի, փոխհարաբերություններն արտաքին միջավայրի հետ, ներկայացրեց դրանց աշխարհաքաղաքական մարտահրավերները: Դյուսելդորֆի Գասպար Սվեբերտի անվան կաթոլիկ ակադեմիայի դասախոս Միխայել Հայգեմանի զեկուցումը վերնագրված էր «Հռոմի պապ Բենեդիկտոս XV-ը, Վատիկանը և Հայաստանի Հանրապետությունը»: Բոստոնի համալսարանի ժամանակակից պատմության և գրականության ամբիոնի ղեկավար, պրոֆ. Սիմոն Փայասլյանը զեկուցեց «Ուրվագիծ հայրենիքի անկախության գաղափարի մտապատկերացման ըստ ԱՄՆ-ի հայկական մամուլի (XIX դարավերջ – XX դարասկիզբ)» թեմայով: Նրա դիտարկմամբ՝ նշված ժամանակաշրջանում ամերիկահայության շրջանում դեռևս չկար ձևավորված քաղաքական միտք, քանի որ գաղութաբնակների մեծ մասն աղքատ գաղթականներ էին: Այդ պատճառով էլ ԱՄՆ-ի հայկական մամուլի լոկ մի մասն է լուսաբանել և արժևորել 1918 թ. ազգային պետականության վերականգնումը: Պյատիգորսկի «Հյուսիս-կովկասյան դաշնային համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար հաստատության (մասնաճյուղ) Սերվիսի, զբոսաշրջության և դիզայնի ինստիտուտի գիտական աշխատանքների ու նորարարական գործունեության գծով տնօրենի տեղակալ, ք. գ. դ., պրոֆ. Առուշան Վարդումյանի (ՌԴ) զեկուցման թեման էր «Ա. Ի. Դենիկինը և Հայաստանի Հանրապետությունը. հարաբերությունների, քաղաքական համակրանքների և հիասթափությունների պատմություն»:

Պյատիգորսկի պետական լեզվաբանական համալսարանի դոցենտ,

նույն քաղաքի Կրթութեան, գիտութեան և զբոսաշրջութեան ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիայի պրոֆեսոր, Գիտութեան և արվեստների պետության ակադեմիայի թղթակից անդամ, պ. գ. թ. Վիկտոր Հակոբյանը գեկուցեց «Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների զարգացման ուղիների ընտրությունը 1918–1921 թթ.» թեմայով: Իսկ Վրաց պատրիարքարանին կից Քրիստոնեական հետազոտությունների միջազգային կենտրոնի փոխնախագահ, պատմության դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդրե Դաուշվիլին ներկայացրեց «Անդրկովկասի անկախությունը և Մոսկվայի բողոքական մամուլը 1918 թ.» թեմայով գեկուցումը:

Գիտաժողովի օրակարգում ընդգրկված մյուս գեկուցումները խմբավորվել էին ըստ հիմնախնդիրների և ներկայացվեցին վեց բաժանմունքների նիստերում:

«Հայաստանի Հանրապետության հռչակման պատմաքաղաքական նախադրյալները: Մայիսյան հերոսամարտերը» (նախագահող՝ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյան) խորագրով նիստում ելույթ ունեցան բ. գ. թ. Արծվի Բախչինյանը՝ «Սարգարապատի ճակատամարտի մասնակից և տարեգիր Ալեքսանդր Շենուր» [համահեղինակ՝ պ. գ. թ. Վարդան Մատթեոսյան (ԱՄՆ)], պ. գ. թ., դոց. Մհեր Հովհաննիսյանը՝ «Հայոց պետականության վերականգնման խնդիրը 1917–1918 թթ. – ՌՄԴԲ(բ) հարաբերությունների համատեքստում», պ. գ. դ. Վալերի Թունյանը՝ «Անդրկովկասում դաշնային պետության կազմավորման և տրոհման գործընթացը (1917–1918 թթ.)», Ս.-Դ. Հնչակյան կուսակցության կենտկոմի անդամ, դոկտոր Եղիկ Ճերեճյանը (Լիբանան)՝ «Պանդուխտի դերը Սարգարապատի ճակատամարտում», պ. գ. թ., դոց. Արմեն Մարուքյանը՝ «Ղարաբաղի ճակատամարտի նշանակությունը Մայիսյան հերոսամարտերի շարքում», պ. գ. դ. Ռուբեն Սահակյանը՝ «Հայկական բանակի կայացումը և գեներալ Թովմաս Նազարբեկյանը», պ. գ. թ., դոց. Արմեն Ասրյանը՝ «Արամ Մանուկյանի դերը Հայաստանի Հանրապետության հիմնադրման գործում», ԵՊՀ ասպիրանտ Գևորգ Նազարյանը (ԱՄՆ)՝ «Թուրքական բանակի 1918 թ. Հայաստանի վրա հարձակումը ըստ բրիտանական գեկուցագրերի» գեկուցումներով:

«Հայաստանի առաջին Հանրապետության պետաիրավական կառուցվածքը և ներքին դրությունը» (նախագահողներ՝ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, ի. գ. դ., պրոֆ. Գառնիկ Սաֆարյան, ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ., դոց. Սուրեն Սարգսյան) խորագրով բաժանմունքի նիստում ելույթ ունեցան ի. գ. դ., պրոֆ. Արթուր Վաղարշյանը՝ «Հայաստանի առաջին Հանրապետության իրավական դասերը», Գառնիկ Սաֆարյանը՝ «Հայաստանի առաջին Հանրապետության պետաիրավական համակարգի ձևավորման և զարգացման հիմնական տեսակետները», պ. գ. դ., պրոֆ. Արարատ Հակոբյանը՝ «Հայաստանի Հանրապետության պե-

տաիրավական կառուցվածքը», ք. գ. դ., պրոֆ. Լևոն Շիրինյանը՝ «Հայ հասարակութայն վերակազմությունը Հայաստանի առաջին Հանրապետութայն շրջանում», պ. գ. դ., պրոֆ. Վանիկ Վիրաբյանը՝ «Հայաստանի Հանրապետութայն անվտանգութայն համակարգի ստեղծման գործընթացը (1918–1920 թթ.)», պ. գ. դ., պրոֆ. Վահրամ Բալայանը (Արցախի Հանրապետություն)՝ «Պետական մարմինների կազմավորման գործընթացը Արցախում (1917 թ. դեկտեմբեր – 1918 թ. սեպտեմբեր)», պ. գ. դ. Ամատունի Վիրաբյանը՝ «Հայաստանի Հանրապետութայն ներքին կյանքը 1918 թ. հունիս – սեպտեմբեր ամիսներին», պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանը՝ «Համազասպ Սրվանձտյանի գործունեությունը Հայաստանի Հանրապետութայն տարիներին», ք. գ. թ., դոց. Հայկ Սուքիասյանը՝ «Առաջին Հանրապետութայն քաղաքական կազմակերպման հարցի շուրջ», պ. գ. թ. Կարեն Հայրապետյանը՝ «Գաղթականութայն հիմնահարցը Հայաստանի առաջին Հանրապետութայն օրերին», ԵՊՀ հայցորդ Վանիկ Բաբաջանյանը՝ «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918–1920 թթ.», Սուրեն Սարգսյանը՝ «Հայ ռամկավարների գործունեությունը Հայաստանում 1918–1920 թթ.», երկրաբ. գիտ. թեկն. Հայկ Մելիք-Աղամյանը՝ «Հայաստանի Հանրապետութայն քաղաքականությունը հանքահումքային ռեսուրսների նկատմամբ» (համահեղինակներ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետազոտող-քարտեզագետ Տիգրան Բաբայան, ՊԻ հայցորդ, Մշակույթի նախարարութայնն առընթեր պատմամշակութային ժառանգութայն կենտրոնի գիտաշխատող Արմեն Ասատրյան) գեկուցումներով:

«ՀՀ արտաքին քաղաքականությունը: Սևրի դաշնագիրը» (նախագահողներ՝ ԵՊՀ պատմութայն ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Էդիկ Մինասյան, ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գայանե Մախմուրյան) բաժանմունքի նիստում պ. գ. թ., դոց. Լիլիթ Հովհաննիսյանը գեկուցեց «Սևրի պայմանագրում Հայաստանին ու հայերին վերաբերող հոդվածների պատմական և իրավական նախադրյալները» թեմայով: Ընդգծվեց, որ Սևրի պայմանագիրն առաջին և առայժմ միակ բազմակողմ պայմանագիրն է, որում միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա համարժեք պատասխան է տրված ցեղասպանութայն հանցագործություն կատարելու արդյունքում ծագող բոլոր հարցերին: Նրա վավերացված չլինելը քաղաքական գործոնների ազդեցութայն հետևանք է և որևէ կերպ չի թուլացնում հայերի ցեղասպանութայն համար թուրքիայի քաղաքական ու նյութական պատասխանատվութայն հիմքերը: Պ. գ. թ., դոց. Արմենուհի Ղամբարյանը «Հայ-ամերիկյան հարաբերությունները Հայաստանի անկախութայն հռչակումից մինչև Վերսալ» վերնագրով գեկուցման մեջ շեշտեց, որ Հայաստանի Հանրապետութայնը նյութական օգնություն տրամադրելու հարցում ԱՄՆ դրսևորել է գնահատելի մարդասիրություն, իսկ քաղաքական հարցերում՝ իրատեսություն և ճկունություն: Սևրի պայմանագրի և Հա-

յաստանի Հանրապետության նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության ժամանակագրական վերլուծությունը շարունակեց Գայանե Մախմուրյանը՝ «Սևրի դաշնագիրը և ԱՄՆ-ի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919–1920 թթ.» գեկուցմամբ: Ընդգծվեց, որ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը հնարավոր չեղավ իրագործել, քանի որ Թուրքիայի քեմալական կառավարությունն արդյունավետ օգտագործեց Սևրի պայմանագրի կնքումից հետո ունեցած ժամանակը՝ 1920 թ. սեպտեմբերին պատերազմ սանձազերծելով Հայաստանի Հանրապետության դեմ: Այն ավարտվեց Հայաստանի պարտությունով, տարածքային և դիվանագիտական ծանր կորուստներով ու հետևանքներով: Թեև Հայաստանի առաջին Հանրապետությունը որևէ գործնական արդյունք չստացավ Սևրի պայմանագրից, այդուհանդերձ, միջազգային-իրավական այդ փաստաթուղթն ունի դիվանագիտական դրական փորձ. նրանում տրված է տեխնիկական այն բոլոր հարցերի պատասխանը, որոնց հիման վրա իրագործվելու էր Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագծումը: Էդիկ Մինասյանը գեկուցեց «Լևոն Շանթի գլխավորած պատվիրակության գործունեությունը Մոսկվայում» թեմայով: Քանի որ նշված ժամանակաշրջանում Հայաստանի կառավարությունը երկրի արտաքին քաղաքական նպատակների իրագործումը և Հայկական հարցի լուծումը կապում էր Սևրի պայմանագրի հետ, թերազնահատելով Ռուսաստանի դերը տարածաշրջանում, հայ-ռուսական բանակցությունները չդարձան Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև հարաբերությունների ամրապնդման քաղաքական հարթակ: Ընդհակառակը, օրեցօր ամրապնդվեց քեմալաբուլչեիկյան գործակցությունը Հայաստանի դեմ:

Նիստում երկու գեկուցում էլ նվիրված էր 1918–1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության և նրա անմիջական հարևան թշնամի պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի ու Ադրբեջանի Հանրապետության միջև հարաբերություններին: Պ. Գ. Թ. Սուրեն Մանուկյանը բնութագրեց հայ-օսմանական հարաբերությունների հիմնական ուղղությունները, իսկ պ. Գ. Թ., դոց. Յուրիկ Ղուլյանը ներկայացրեց հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները, որոնց առանցքը Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի հայկական երկրամասերի նմատմամբ Բաքվի իշխանությունների գավթողական նկրտումներն էին: Օգտվելով իր տնտեսական և աշխարհաքաղաքական առավելություններից, միաժամանակ, հենարան ունենալով նախ՝ Թուրքերին, ապա՝ անգլիացիներին, իսկ 1920 թ. մայիսից՝ նաև Խորհրդային Ռուսաստանին՝ Ադրբեջանը Հայաստանի հետ ունեցած բոլոր խնդիրների լուծման համար ընտրեց ուժային ճանապարհը՝ բացառելով զիջումների տարբերակը: Նշվեց, որ Հայաստանը հարկադրված էր հնարավոր ամեն ինչ անել՝ իր իրավունքներն ու տարածքներն Ադրբեջանի ոտնձգություններից պաշտպանելու համար, թեև դա նրան ոչ բոլոր դեպքերում հաջողվեց:

«1920 թ. թուրք-հայկական պատերազմը և Հայաստանի առաջին Հանրապետության անկման հանգամանքները» (նախագահողներ՝ ՊԻ փոխտնօրեն, պ. գ. դ., պրոֆ. Կարեն Խաչատրյան, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյան) բաժանմունքի նիստը ևս անցավ հազեցած մթնոլորտում: Զեկուցումներով հանդես եկան՝ ք. գ. թ., դոց. Էմիլ Օրբուխանյանը՝ «Քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները Հայաստանի առաջին Հանրապետությունում», Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի գիտաշխատող Ռուբինա Փիրումյանը՝ «ՀՅԴ – բուլղեիկ հարաբերությունները վճռահատող ազդակ անկախ Հայաստանի կյանքում», պ. գ. դ., պրոֆեսորներ Հրանտ Աբրահամյանը՝ «Արցախի խորհրդայնացման գործընթացը (1920 թ. ապրիլ-մայիս)», Կարեն Խաչատրյանը՝ «Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը և անկախության հիմնահարցը», պ. գ. թ., դոց. Խաչատուր Ստեփանյանը՝ «Հայաստանի առաջին Հանրապետության անկման հանգամանքները վտարանդի գործիչների գնահատմամբ», պ. գ. դ., դոց. Արման Եղիազարյանը՝ «Հայաստանի Հանրապետությունը և Սփյուռքը», Արմեն Ասատրյանը՝ «Գեներալ Դանիել բեկ Փիրումյանի գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարիներին», պ. գ. դ. Ստեփան Ստեփանյանցը՝ «Հայ եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին»:

«Կրթական կյանքը և գեղարվեստական գրականությունը Հայաստանի Հանրապետությունում» (նախագահող՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյան) բաժանմունքի նիստում զեկուցեցին՝ պ. գ. թ., դոցենտներ Գուրգեն Վարդանյանը՝ «Կրթական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում 1918–1920 թթ.» և Համո Սուքիասյանը՝ «Հայաստանի իշխանությունների քաղաքականությունը մամուլի նկատմամբ (1918–1920 թթ.)», բ. գ. թ. Մարիամ Հովսեփյանը՝ «Գաղթականների և որբերի նկատմամբ Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքականության լուսաբանումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի էջերում», պ. գ. թեկնածուներ Սեդա Օհանյանը՝ «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի կին պատգամավորների գործունեությունը 1918–1920 թթ.» և Անի Ֆիլենկճյանը՝ «Հայաստանի Հանրապետության անկումից հետո վտարանդի մտավորականների գործունեությունը Սիրիայում», բ. գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյանը՝ «Հայ գրականությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին», ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դուրուխանյանը՝ «Հայկական հարցը և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը Ֆրանսիացի հայագետների հետազոտություններում», Սուսաննա Հովհաննիսյանը՝ «Հովհաննես Թումանյանի գրական-հասարակական գործունեությունը 1918–1920 թթ.», բ. գ. թ., դոց. Հրաչիկ Բայրամյանը՝ «Հովհաննես Թումանյանը հայ-վրացական հարաբերությունների ջահակիր», բ. գ.

թ. Լուսինե Վարդանյանը՝ «Հայ գրահրատարակչությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին» թեմաներով:

«Հայաստանի առաջին Հանրապետությունը արվեստի ստեղծագործություններում» (նախագահողներ՝ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյան) ելույթ ունեցան՝ արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանը՝ «Մեկ ստեղծագործության պատմություն. էդգար Հովհաննիսյանի և Պարույր Սևակի «Սարգարապատը»», ճարտ. դ., պրոֆ. Դավիթ Քերթմենյանը՝ «Մայիսյան հերոսամարտին նվիրված հուշարձանները», արվ. թեկնածուներ Արթուր Ավագյանը՝ «Հայաստանի առաջին Հանրապետության գեղարվեստական կյանքը», Լիլիթ Արտեմյանը՝ «Երաժիշտները Սարգարապատի հերոսամարտում. Վահան Տեր-Առաքելյան», Արսեն Համբարձումյանը՝ «Երկու աշխարհների բախումը «Սարոյան եղբայրներ» գեղարվեստական ֆիլմում», բ. գ. թ. Ռուզան Սարյանը՝ «Սարգարապատի ճակատամարտի մասնակից Մովսես Գյուլնազարյանի սարյանական դիմանկարը» գեկուցումներով:

Բաժանմունքների նիստերում գեկուցումները լսելուց հետո, ծավալվում էին քննարկումներ, որոնց ընթացքում վեր էին հանվում մասնակիցներին հուզող հարցերը, պարզաբանումներ տրվում պատմական նորահայտ փաստերի ու դրանց մեկնաբանությունների վերաբերյալ:

Մայիսի 26-ին՝ բաժանմունքների նիստերն ավարտելուց հետո, գիտաժողովի աշխատանքը շարունակվեց ԵՊՀ-ում, որտեղ տեղի ունեցավ Հայաստանի առաջին Հանրապետության հարյուրամյակին նվիրված «Արամ Մանուկեան: Նամականի» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի շնորհանդեսը: Ստվարածավալ ժողովածուն Բոստոնի ՀՅ Դաշնակցության արխիվներում պահպանված հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ Արամ Մանուկյանի (1879–1919) նամակների հիման վրա կազմել, խմբագրել և ծանոթագրել է ՀՅԴ Բյուրոյի նախկին անդամ ու նշված արխիվների գիտակ Երվանդ Փամբուկյանը (Լիբանան): Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական խորհուրդը: Շնորհանդեսին Ա. Մանուկյանի կյանքի և գործունեության 1904–1915 թթ. ընդգրկող ժամանակահատվածը լուսաբանող նամականու վերաբերյալ ծավալուն գեկուցմամբ հանդես եկավ Երվանդ Փամբուկյանը:

Գիտաժողովն իր աշխատանքներն ամփոփեց լիագումար նիստով (նախագահողներ՝ Յուրի Սուվարյան և Արամ Սիմոնյան), որի ընթացքում լավեցին բաժանմունքների ղեկավարների՝ Էդիկ Մինասյանի, Արարատ Աղասյանի և Կարեն Խաչատրյանի հաղորդումները նիստերում հնչած գեկուցումների, դրանց քննարկումների արդյունքների վերաբերյալ: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԳԱԱ

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի  
ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը:

Գիտաժողովը ոչ միայն ամբողջացրեց Հայաստանի Հանրապե-  
տության հարյուրամյակին նվիրված մի շարք գիտական միջոցա-  
ռումները, այլև շահեկանորեն առանձնացավ դրանց շարքում թե՛  
մասնակիցների մեծ թվով, թե՛ քննարկված հիմնախնդիրների շրջա-  
նակով ու շեշտադրումների արդիականությամբ: Հեղինակավոր գի-  
տական, կրթական և մշակութային հաստատություններ ներկայաց-  
նող Հայաստանյան ու արտասահմանյան մտավորականների մաս-  
նակցությամբ գիտաժողովը դարձավ մասնագիտական փորձի, տե-  
սակետների և կարծիքների արտահայտման ու փոխանակման օգտա-  
կար հարթակ:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ  
ՄԱՆՈՒԿ ԲԵՅ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ

2018 թ. հունիսի 7-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում բացվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված Մանուկ Բեյ Միրզայանին: Մանուկ Մարտիրոսի Միրզայանը XVIII–XIX դդ. Օսմանյան և Ռուսական կայսրությունների հպատակ,



գլխավորապես ասպարեզի ամենահայտնի դեմքերից է, պետական գործիչ և ազգային մեծ բարերար: Ահա այս անվանի հայի մահվան 200 և ծննդյան 250-ամյակներին ընդառաջ էր կազմակերպվել միջազգային գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը և ԳԱԱ արևելագիտության

ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանը:

Գիտաժողովին իր օրհնությունը բերեց ռումինահայոց հոգևոր թեմի առաջնորդ Տաթև եպիսկ. Հակոբյանը: Մասնակիցներին ողջունեց նաև Արագածոտնի փոխմարզպետ, պատմաբան Մուշեղ Աբգարյանը: Նա հրավիրեց գիտաժողովի երրորդ, եզրափակիչ օրն անցկացնել Աշտարակում, մասնակցել Կարբի գյուղի հրապարակի անվանակոչությանը Մանուկ Բեյի անունով, հիշատակի ոգեգոյման պատարագին Կարբիի ս. Աստվածամայր եկեղեցում:

Գիտաժողովին մասնակցելու էին եկել գիտնականներ Ուկրաինայից, Մոլդովայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Թուրքիայից: Աշխատանքային լեզուներն էին հայերենը, ռուսերենն ու անգլերենը:

Գիտաժողովը բացվեց Մանուկ Բեյ Միրզայանին նվիրված «Հետք պատմության մեջ» ֆիլմի ցուցադրմամբ:

Առաջին զեկուցողը Մոլդովայի Խրնչչետ քաղաքում Մանուկ բեյի արդեն վերականգնված ապարանքի տնօրեն Պլաչիդե Թյուդորն էր, ով նախաձեռնել էր ավերակի վերածված պալատի ապարանքի վերականգնման աշխատանքները և շուրջ 10 տարի հետազոտում է Մանուկ Բեյի կյանքն ու գործունեությունը: Նա խոսեց Բեսարաբիայում Մանուկ Բեյի ժառանգության մասին:



Ռուսինահայոց հոգևոր թեմի առաջնորդ Տաթև եպիսկ. Հակոբյանը հանդես եկավ «Մանուկ բեյը և ռուսինահայոց թեմը» գեկուցմամբ:

Բուխարեստի «Արարատ» և «Նոր կյանք» պարբերականների խմբագիր Էդուարդ Անտոնյանը գեկուցեց «Մանուկ բեյ Միրզայան հայը՝ Եվրոպայի խաչմերուկում» թեմայով:

Գիտաժողովի ընդմիջմանը կատարվեց Հակոբ Սիրունու «Էջեր Մանուկ Բեյի կյանքին» գրքի գինեձոնը: Գիրքը ներկայացնում էր 1969–1970 թթ. «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում տպագրված Հ. Սիրունու երկի լուսապատճենային տպագրությունը և ուսումնասիրությունների թարգմանությունը: Այն փաստագրական հարուստ նյութ է պարունակում ուսու-թուրքական պատերազմի, Մանուկ Բեյի դերակատարության և հաշտության դաշնագրի գործում ունեցած ներդրման մասին: Երկի լույս ընծայումը, մասնավորապես, անգլերեն թարգմանությունում, կարևորագույն նվեր էր գիտաժողովի մասնակիցներին: Թարգմանիչն Աստղիկ Երանոսյանն էր, գլխավոր խմբագիրը՝ Գայանե Շաբունցը, իսկ առաջաբանի հեղինակը՝ պ. գ. դ. Հասմիկ Ստեփանյանը: Գինեձոնի արարողությունը կատարվեց Տաթև եպիսկ. Հակոբյանի ձեռամբ և օրհնության երգեցողությամբ:

Գիտաժողովի հաջորդ նիստը սկսվեց «Մանուկ Բեյ Միրզայան» ֆելմով, որը ռուսինահայերի նվերն էր գիտաժողովին՝ հատուկ արված հայերեն տողատակերով:

Այնուհետև լսվեցին մի շարք գեկուցումներ: Մատենադարանի գիտաշխատող Օքսաննա Կարապետյանը հանդես եկավ «Մանուկ Բեյ Միրզայան՝ Մուսթաֆա փաշա Բայրաթթարի խորհրդականից՝ Ցարական Ռուսաստանի հպատակ» թեմայով: Ստամբուլահայ պատմաբան, թարգմանչուհի Սիրվարդ Մալխասյանը խոսեց Մանուկ Բեյի՝ Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում ունեցած դերի մասին: Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը ներկայացավ «Մանուկ բեյը և ժամանակի հայ գրական կյանքը» գեկուցմամբ:

Հունիսի 8-ին գիտաժողովի նիստերը շարունակվեցին Արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում: Առավոտյան նիստի նախագահողներն էին Տաթև եպիսկ. Հակոբյանը և Պլաչիդե Թյուդորը: Ուկրաինայում հայ մշակութային արժեքների մասնագետ, կոթողային ուսումնասիրության հեղինակ Իրինա Հայուկը գեկուցեց XVIII–XX դդ. Ուկրաինայի հարավային շրջանների զարգացման գործում ուսու-թուրքական փոխհարաբերությունների կարևոր գործոն լինելու մասին: Ռուսինիայի ակադեմիայի Հարավ-արևելյան եվրոպայի ինստիտուտի տնօրեն Անդրեյ Տիմոտինը խոսեց Ռուսինիայի ազգային արխիվում գտնվող Հակոբ Սիրունու ֆոնդի փաստաթղթերի մասին և կարևորեց դրանց՝ ուսումնացի ու հայ գիտնականների համատեղ ուսումնասիրությունը:

Այդ մասին խոսեց նաև Տաթև եպիսկ. Հակոբյանը, ում շնորհիվ Բուխարեստի եկեղեցուն կից գրադարանը, ձեռագրատունն ու թանգարանը դարձել են ոչ միայն հայ, այլև օտար գիտնականների համար հայագիտական բազմակողմանի ուսումնասիրությունների կարևորագույն կենտրոն:

ԳԱԱ «Հայկական Հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանն անդրադարձավ 1969–1970 թթ. «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում տպագրված և գիտաժողովի օրերին լույս տեսած Հակոբ Միրունու «Էջեր Մանուկ Բեյի կյանքեն» աշխատությունը: Հակոբ Միրունու եղբորորդին՝ փարիզաբնակ Պատրիս Ծօլօլյանը, պատմեց իրենց գերդաստանի մասին և ցուցադրեց իր հոր՝ հայտնի լուսանկարիչ Գրիգոր Ծօլօլյանի՝ պատմական արժեք ներկայացնող մի քանի տասնյակ լուսանկարներ: «Հայ իշխան Մանուկ Բեյը» գեղարվեստափաստագրական ուսման պատումի հեղինակ, մոսկվայաբնակ գրող Գոհար Ռշտունին խոսեց տարիներ առաջ լույս տեսած իր գրքի համար կատարած հետազոտությունների մասին:

Գիտաժողովի երեկոյան նիստը (նախագահողներ՝ Սիրվարդ Մալխասյան ու Իրինա Հայուկ) սկսվեց ստամբուլահայ երիտասարդ հետազոտող Սարո Դադյանի՝ «Գազազ Արթին Ամիրան և հայ համայնքը Օսմանյան կայսրությունում 1808–1832 թթ.» գեկուցմամբ: Բուխարեստաբնակ Անդրեյ Պասլարիուն «Խան Մանուկ իջևանատունը Բուխարեստում» վերնագրով գեկուցումը կարգաց հայերենով:

Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանը խոսեց «Այանները և նրանց բանկիրները. իշխանություն արտահոսքը Օսմանյան կայսրությունում (XVIII դ. վերջ – XIX դ. սկիզբ)» թեմայով:

Գիտաժողովի երրորդ, եզրափակիչ օրը՝ հունիսի 9-ին, մասնակիցները և հյուրերը մեկնեցին Կարբի: Կարբեցիները, որ համարյա անտեղյակ էին իրենց հուշակավոր համադրուղացու պատմությանը, արդեն պատրաստվում են հաջորդ տարի տոնել Մանուկ Բեյի ծննդյան 250-ամյակը և տեղադրել նրա կիսանդրին: Ողջունի խոսքով հանդես եկավ Արագածոտնի հոգևոր դասը ներկայացնող Վրույր վարդապետը: Հանդիպմանը ներկա էր Արագածոտնի փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանը: Մանուկ Բեյի կենսագործունեության մասին պատմեց Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Հասմիկ Ստեփանյանը: Երախտագիտության խոսքով հանդես եկան ստամբուլահայ գիտնական Սիրվարդ Մալխասյանը և Գոհար Ռշտունին: Ելույթ ունեցան գյուղի մանուկները: Ապա Կարբիի ս. Աստվածամայր եկեղեցում հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ ի հիշատակ ծնունդով կարբեցի Միրզայան գերդաստանի: Ներկաները մասնակցեցին Կարբիի հրապարակի՝ Մանուկ Բեյ Միրզայանի անունով կոչելու արարողությանը: Հուշատախտակի բացումը կատարեց ու ելույթ ունեցավ Ռումինայում ՀՀ արտակարգ և լիազոր նախկին դեսպան, այսօր՝ ՀՀ նախագահի

խորհրդական Համլետ Գասպարյանը: Ի դեպ, նրան ենք պարտական այս գիտաժողովի անցկացման գաղափարի համար:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Օչական՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին ուխտագնացության, ապա շրջեցին հայկական քարե տառերի այգում:

Գիտաժողովի եզրափակիչ նիստը (նախագահող՝ Հ. Գասպարյան) տեղի ունեցավ Օչականի եկեղեցուն կից դահլիճում՝ Արևելագիտության ինստիտուտի աշխատակից, պ. գ. թ. Կարինե Ավետյանի «Կաթողիկոսական վավերագրերը Մանուկ Բեյի ընտանիքի մասին» գեկուցմամբ: Դրան հաջորդեցին նիստերի նախագահողների ելույթները: Որոշում կայացվեց գիտաժողովի նյութերն առաջիկայում հրատարակելու վերաբերյալ:

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

---

---

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵԳԻՊՏՈՍԻ, ՍՈՒՂԱՆԻ  
ԵՎ ԵԹՈՎՊԴԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԻՆ

2018 թ. մայիսի 29–30-ը Բեյրութում կայացավ Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի կազմակերպած «Եգիպտոսի, Սուդանի և Եթովպիայի հայերը» թեմայով միջազգային գիտաժողովի երկրորդ փուլը: Գիտաժողովի առաջին փուլը տեղի էր ունեցել ապրիլի 12–13-ին Կահիրեում:

Գիտաժողովի պաշտոնական բացմանը ներկա էին Լիբանանի Հայոց առաքելական թեմի առաջնորդ Գերաշնորհ Շահե եպս. Փանոսյանը, Հայկազյան համալսարանի նախագահ Վերապատվելի Պոլ Հայտոսթյանը, Միջին Արևելքի հայկական գաղթօջախների պատմությունները հետաքրքրվող մտավորականներ:

Իր ողջունի խոսքում Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն դոկտ. Անդրանիկ Դաքեսյանն ասաց, որ «այս գիտաժողովներուն շարքին հինգերորդով հատած կ'ըլլանք ծրագրուած շարքին կէսը,– եւ թէ՛ Գահիրէի մէջ կայացած երեք նիստերու 10 զեկուցողներուն կու գան աւելնալու 7 նիստերու 26 ուրիշ զեկուցաներ»: Նա նաև ավելացրեց, որ մասնակիցների «անձնական, ընտանեկան, հաւաքական-ազգային, թէ՛ գիտական ենթահողէ բխած զեկուցաները չեն սահմանափակուիր լոկ գիտելիքի փոխանցմամբ: Այդ գիտելիքին մէջ կայ գնահատանք՝ իրագործուածին հանդէպ, պայքար՝ գոյատեւումի, ճիշտ՝ աջակցութեան, կոչ՝ որոնումի, թելադրանք՝ խորաթափանց եւ այլատեսակ վերլուծումներու, մարտահրաւէր՝ գալիքի...»:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Հայկազյան համալսարանի նախագահ Վեր. Պոլ Հայտոսթյանը: Իր խոսքում, մասնավորապէս, նա ասաց. «Անգամ մը եւս, Սփիւռքի Ուսումնասիրութեան կեդրոնը մեզ կը հաւաքէ իր փեթակին շուրջ՝ ծանօթանալու, վերյիշելու կամ ուսումնասիրելու նոր տարածաշրջան մը, ուր երկար տասնամեակներ շարունակ հայուն զարկերակը իր հիմնադիր ու ստեղծարար ազդեցութիւնը ունեցած է սփիւռքեան կեանքին վրայ տեղական սահմաններէն շատ անդին»:

Լիագումար նիստում լսվեց Վաչինգտոնի Հայ ազգային ինստիտուտի (ANI) տնօրեն, ցեղասպանագետ դոկտ. Ռուբեն Ադալյանի «Նեղոսի և ծովի մոտ. արդիականության ընթացքն ու հոսանքները և հյուսիսարևելյան Աֆրիկայի հայկական սփյուռքի դերը» բովանդակալից դասախոսությունը: Նա հանգամանորեն ներկայացրեց Աֆրիկյան եղջուրի երկրների վերջին երկու դարերի փոթորկահույզ պատմությունը և այդ միջավայրում հայ ազգային փոքրամասնության ունեցած դերը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան Հայաստանից, Լիբանանից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Եթովպիայից հայ և օտարազգի 26 մասնագետներ: Գումարված յոթ նիստերում զեկուցումները խմբավորված էին ըստ հետևյալ բնագավառների. 1) Պատմություն՝ մինչև XX դարակիրը, 2) Ցեղասպանություն, նպաստամատույց և պետություն, 3) Եգիպտահայությունը 1940–80-ական թվականներին, 4) Երիտասարդություն, ինքնություն, եգիպտահայությունն այսօր, 5) Կրթություն և ժառանգություն, 6) Սուղանի հայօջախը, 7) Եթովպիայի հայօջախը:

Առաջին նիստում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Վահե Սարգսյանը հանդես եկավ «Բ. ա. II – I հազարամյակների Հայկական լեռնաշխարհի և Եգիպտոսի փոխառնչությունները» վերնագրով զեկուցումով: Նա ներկայացրեց հայ-եգիպտական փոխառնչությունների բնույթը և դարավոր զարգացումները մ. թ. ա. XVII–XVI դարերից մինչև Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95–55) իշխանության շրջանը:

Ֆրանսահայ պատմաբան, պրոֆ. Կլոդ Մուլթաֆյանը ներկայացրեց «Վերին Եգիպտոսի Սպիտակ վանքը» վերնագրով զեկուցումը: Նա նշեց, որ Վերին Եգիպտոսում, Նեղոսի ձախ ափին գտնվող Սպիտակ վանքում պահպանվել է մի մեծ որմնանկար, շրջանակված Քրիստոսի պատկերով, որի երկու կողմերի արձանագրությունները հայերեն են: Բարձրորակ լուսանկարների շնորհիվ զեկուցողին հաջողվել էր բացահայտել որմնանկարչի անունը և ծագումը՝ Թեոդորոս Քեսունցի, և ժամանակը՝ 1124 թ.: Զեկուցողն արձանագրեց, որ XII դ. սկզբին Սպիտակ վանքը պատկանել է հայերին, իսկ որմնանկարը լիարժեք հայկական գործ է, որը պահպանվել է «չոր օդի և բարձր դիրքի» շնորհիվ:

Շվեդիայի արքայական թանգարանի երկարամյա աշխատակից Անն Գրոնհամմարը հանդես եկավ «Օհան Դեմիրճյան. Եգիպտոսի խզիվի նվիրակը, շվեդական արքայական պալատի նշանակյալ արևուստը՝ 1866–1872, և իր երկու եղբայրները» ուշագրավ զեկուցումով: Շվեդիայի ազգային արխիվի և Բեռնադոտ ընտանիքի արխիվային փաստաթղթերի հիման վրա նա ներկայացրեց Եգիպտոսի խզիվի նվիրակ, եգիպտահայ Օհան Դեմիրճյանի (1836–1877) շվեդական գործունեությունը և իբրև Շվեդիայի թագավորի ներկայացուցիչ՝ նրա գործունեությունը Եգիպտոսում ու մասնակցությունը Սուեզի ջրանցքի բացմանը 1869 թ.:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը հանդես եկավ «Եգիպտոսի հայոց թեմը» ընդգրկուն զեկուցումով, որտեղ ներկայացրեց թեմի պատմական զարգացումը: Նա նշեց, որ թեմի ձևավորման սկիզբը կարելի է համարել 981 թվակիր խաչքարի փաստը, որով հաստատվում է, որ այդ թվականից հայերն արդեն Կահիրեում ունեցել են իրենց եկեղեցին: Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ թեմի

գործունեությունը XX դարում, հատկապես՝ Թորգոմ եպիսկոպոս (պատրիարք) Գուշակյանի առաջնորդության շրջանից մինչև XXI դ. սկիզբը:

Եզրպտահայ պատմաբան Արմին Կրետյանը ներկայացրեց «Մարդահամարների ընթերցումը. 1906–1907-ի Կահիրեի հայոց և 1911-ի Ալեքսանդրիայի հայոց մարդահամարները» խորագրով զեկուցումը: Իր խոսքում նա կարևորեց նաև Միջին Արևելքում ցրված հայկական համայնքային արխիվների պահպանման, թվայնացման և հետազոտողներին մատչելի դարձնելու խնդիրը:

Երկրորդ նիստում Կալիֆորնիայի Նորթրիջ համալսարանի ժամանակակից և դասական լեզուների ու գրականության բաժանմունքի հայագիտության բաժնի տնօրեն, դոկտ. Վահրամ Շեմմասյանը հանդես եկավ «Պորտ Սաիդի հայոց գաղթականների հիմնումը 1915-ին» վերնագրով զեկուցումով: Նա նշեց, որ Պորտ Սաիդի գաղթականը հիմնվել է 1915 թ. սեպտեմբերի կեսերին, երբ Ֆրանսիական նավատորմի կողմից փրկված Մուսա լեռան հայությունն ապաստան է գտել այնտեղ: Զեկուցողը ներկայացրեց հայ գաղթականների կյանքը կայանում մինչև 1919 թ. ձմեռը:

Գերմանացի ցեղասպանագետ, դոկտ. Հիլմար Քայզերի զեկուցումը կրում էր «Օսմանյան զինվորական դատարաններից մինչև մերօրյա հետազոտություն. եզրպտական հիմնարար մի նպաստ ցեղասպանագիտությանը» վերտառությունը: Նա ներկայացրեց ցեղասպանությունը վերապրած եզրպտահայ մտավորական Գրիգոր Կերկերյանի (Գրիկեր) գործունեությունը, որն իր կյանքի մեծ մասն անցկացրել էր Եզրպտոսում և ստեղծել Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուղենշային ուսումնասիրություններ, որոնք առ այսօր չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը: Զեկուցողն արժևորեց Գրիկերի հետազոտությունները և այն նպաստը, որ նա բերել է ցեղասպանագիտությանը:

ԱՄՆ-ի Մինեսոտայի Սենտ Ջոնս համալսարանի դասախոս, դոկտ. Ջոն Արմաճանին հանդես եկավ «Եզրպտոսի սահմանադրությունները և փոքրամասնությունների իրավունքները» վերնագրով զեկուցումով: Նա նախ հակիրճ ներկայացրեց Եզրպտոսի 1923 թ. սահմանադրությունը, որտեղ խոսվում էր ազատությունների, կրթության իրավունքի, խորհրդարանի առաջացման և այլ հարցերի մասին: Այս սահմանադրությունը սկզբնաղբյուր դարձավ այդ երկրի 1930, 1952, 1956, 1958, 1964, 1971 և 2012 թթ. սահմանադրությունների համար: Զեկուցողը մանրամասնեց նաև Եզրպտոսի 2014 թ. սահմանադրության դրույթներն ու ներկայացրեց այն մտահոգությունները, որ սուլնի ծայրահեղականները կարող են առաջացնել Եզրպտահայոց և այլ ազգային ու կրոնական փոքրամասնությունների հանդեպ:

Երրորդ նիստում առաջինը հանդես եկավ ծնունդով լիբանանահայ, այժմ երևանաբնակ պ. գ. թ. Գևորգ Յազըճյանը, որը ներկայացրեց «Եզրպտոսի հայկական գաղութը խորհրդային գաղտնի

փաստաթղթերում» ուշագրավ գեկուցումը: Նա մասնավորապես նշեց, որ խորհրդային դիվանագիտությունը և հատուկ ծառայությունները մշտապես ջանացել են իրենց հենարանները ստեղծել եգիպտահայ գաղութում: Խորհրդային մարմիններն առանձնապես հետաքրքրված էին Եգիպտոսում հայ ավանդական կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ կառույցով, նախագահ Գամալ Աբդել Նասերի ազգայնացման քաղաքականության նկատմամբ տեղի հայությունից հակադրվածությամբ, 1940-ական թվականների երկրորդ կեսի ու 1960-ականների հայրենադարձությունները և այլ գերտերությունների մարմինների կողմից տեղի հայկական գաղութի նկատմամբ հետաքրքրությունից աչալուրջ հետևումով:

Գ. Յազըճյանը նաև ներկայացրեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ. Վերժինե Սվալյանի՝ գիտաժողովին ուղարկված «Եգիպտահայ հայրենադարձների նպաստը Մայր Հայրենիքին» շահեկան գեկուցումը:

Հայաստանի ազգային արխիվի գիտահետազոտական բաժնի վարիչ, պ. գ. թ. Գոհար Ավագյանը հանդես եկավ «Հայաստանի ազգային արխիվի եգիպտահայ նյութերը և Եգիպտոսի հայոց առաջնորդարանի արխիվային նյութերը» վերնագրով գեկուցմամբ: Նա մասնավորապես նշեց, որ Հայաստանի ազգային արխիվում պահվում են եգիպտահայ համայնքի և հայ-եգիպտական կապերի մասին պատմող հազարավոր փաստաթղթեր: Զեկուցողը նաև անդրադարձավ Կահիրեի հայոց առաջնորդարանի՝ տակավին գիտական չըջանառություն մեջ չգրված արխիվի աղբյուրագիտական մեծ արժեքին: Վերջում կարևորեց Սփյուռքի համայնքային արխիվները պահպանելու և հետազոտողների համար մատչելի դարձնելու հարցը:

«Նորավանք» գիտակրթական կենտրոնի փորձագետ Վահրամ Հովյանը ներկայացրեց «Եգիպտոսի հայ համայնքի լրատվամիջոցներն արդի փուլում» վերնագրով գեկուցումը: Նա նշեց՝ Եգիպտոսի հայ համայնքի լրատվամիջոցների շարքում առաջնային դեր ունի տպագիր մամուլը, որն ունի կուսակցական պատկանելություն: Հայ ավանդական երեք կուսակցություններն էլ ունեն իրենց տպագիր օրգանները՝ «Հոսաբեր» (1913), «Արև» (1915) և «Ձահակիր» (1948): Մամուլի օրգանները եգիպտահայ ամենաավանդական լրատվամիջոցներն են և, չնայած համայնքի նվազումին, շարունակում են հրատարակվել: Սակայն, գեկուցողը մատնանշեց, որ համայնքի նոսրացմամբ և թուլացմամբ պայմանավորված՝ նվազել է որոշ լրատվամիջոցների հրատարակման պարբերականությունը:

Ալեքսանդրիայի հայկական վարժարանի ուսուցչուհի Լիմի Զուլաքյան-Խունկանյանը հանդես եկավ «Եգիպտոսի Հայ Ավետարանական համայնքը» վերնագրով գեկուցումով: Նա ներկայացրեց համայնքի պատմությունը և անցած ուղին՝ Կահիրեի ու Ալեքսանդրիայի մեջ: Զեկուցողը նշեց, որ վերջերս դադարել է Կահիրեի Հայ

Ավետարանական համայնքի գոյությունը, և անդրադարձավ Ալեքսանդրիայի մեջ համայնքի ներկա մտահոգիչ իրավիճակին:

Մայիսի 30-ին՝ չորրորդ նիստում, առաջինը հանդես եկավ եգիպտահայ մտավորական Թովմաս Ջաքարյանը, որի գեկուցման թեման էր՝ «Երիտասարդական անկախ հարթակներ՝ Կահիրեի «Հոկտեմբեր» (1975–80) և Բեյրութի «Երիտասարդ հայ» (1969–75) հանդեսները»: Նա մասնավորապես նշեց, որ Եգիպտոսում և Լիբանանում առաջացած «Հոկտեմբերն» ու «Երիտասարդ հայը»՝ ավանդականության դեմ երիտասարդական շարժումներ էին: Երկու շարժումներն էլ իրենց գոյություն իմաստը ստացել էին ՀՀանդուրժելով համայնքների լծացած մտավորական կյանքը, ըմբոստանալով կուսակցամոլության դեմ, քննադատելով համայնքների քաղաքական, մշակութային, կրթական-հասարակական կյանքն ու պատասխանատուների անտարբերությունը:

Իսկ լիբանանահայ ճանաչված մտավորական Ժիրայր Դանիելյանը ներկայացրեց «Հոկտեմբերի» բեյրության տարբերակ «Երիտասարդ հայ» պարբերականը: Վերոնշյալ շարժումների շնորհիվ երիտասարդության մի լուռ գանգված հարթակ ունեցավ և հնարավորություն ստացավ հասարակական կյանք վարել առանց որևէ կուսակցական շրջանակի պատկանելու:

Միյուռնաբազետ, դոկտ. Սոսի Գասպարյանի գեկուցումը կրում էր «Լուռ աշխարհաքաղաքացիներ. արդի եգիպտահայ համայնքը» վերտառությունը: Նա նշեց, որ Եգիպտոսի հայկական գաղթօջախը բաղկացած է տարբեր ալիքներով այդ երկրում հաստատված հայ գաղթականներից: 1952 թ. հեղափոխությունից և Գամալ Աբդել Նասերի ազգայնացման քաղաքականությունից հետո, մյուս ազգային փոքրամասնությունների նման հայերն էլ սկսեցին արտագաղթել այդ երկրից: Այսօր Եգիպտոսի հայկական գաղթօջախը գտնվում է վայրէջքի փուլում:

Եգիպտահայերի ազգային ինքնության խնդիրներին էր նվիրված երիտասարդ հետազոտող Ասփե Ճիզմեճյանի «Ինքնության հարցը Եգիպտոսի հայօջախի մեջ» ուղագրավ գեկուցումը:

Հինգերորդ նիստում «Արևմտահայերենի ուսուցումը եգիպտահայ դպրոցների մեջ այսօր» վերնագրով գեկուցումով առաջինը հանդես եկավ նախկին հալեպահայ, այժմ կահիրեաբնակ, տեղի Գալուստյան-Նուբարյան ազգային վարժարանի հայոց լեզվի ավագ ուսուցչուհի Մարուշ Երամյանը: Նա ներկայացրեց եգիպտահայ դպրոցների մերօրյա խնդիրները և անդրադարձավ Եգիպտոսի հայկական գաղթօջախում արևմտահայերենի վիճակին:

Հայկազյան համալսարանի դասախոս Եաղիկ Խուրավերդյանն էլ հանդես եկավ «Լիբանանահայ վարժարանների փորձը» շահեկան գեկուցմամբ:

Եգիպտահայ երիտասարդ հետազոտող Այգ Ջաքարյանն իր «Եգիպտահայ համալսարանականները. ընդհանուր ակնարկ» գեկուցմամբ ներկայացրեց տեղի հայ ուսանողության վիճակը, որոնք հա-



ճախում են եգիպտոսի կամ արտասահմանի համալսարաններ: Նա վիճակագրորեն ներկայացրեց նաև եգիպտահայ երիտասարդների հաճախած համալսարանները, նրանց մասնագիտություններն ու հետաքրքրությունները:

Եգիպտահայ ճարտարագետ, դոկտ. Նայիրի Համբիկյանը հանդես եկավ «Ի՞նչ է ճակատագիրը Սիյունքի հայկական ճարտարապետությունում: Մար Մինայի հայկական պատմական գերեզմանատան պարագան» ուշագրավ գեկուցմամբ, որտեղ կանգ առավ եգիպտահայոց ժառանգությունն ապագայի համար պահպանելու խնդրի վրա: Նա անդրադարձավ Հին Կահիրեի Մար Մինայի հայոց պատմական գերեզմանատան մեջ տարվող վերականգնողական աշխատանքներին և նորագույն հայտնաբերումներին:

Վեցերորդ նիստում հանդես եկավ դոկտ. Ջոն Արմաճանին, որի երկրորդ գեկուցումը կրում էր «Հյուսիսային Սուդանի և Եթովպիայի սահմանադրությունները և փոքրամասնությունների իրավունքները» խորագիրը: Զեկուցման առաջին մասում նա քննարկեց Հյուսիսային Սուդանի 2005 թ. սահմանադրության մի շարք դրույթներ՝ ազգային փոքրամասնությունների կրոնական ազատությունների մասին: Ապա անդրադարձավ Եթովպիայի 1994 թ. սահմանադրությանն ու դրա՝ փոքրամասնությունների իրավունքների դրույթներին, նաև վերլուծելով, թե ինչպես է այս սահմանադրությունը կրում այդ երկրի 1931, 1955 և 1987 թթ. սահմանադրությունների ազդեցությունը: Զեկուցման մեջ նա կենտրոնացավ կրոնական ազատությունների և ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրներին՝ ներկայացնելով այն մտահոգությունները, որոնց դիմադրվում են Եթովպիայի հայերն ու այլ փոքրամասնությունները:

Այնուհետև «Սուդանի հայօջախը» թեմայով գեկուցում կարդաց Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի մագիստրանտ Աննա Ավազյանը: Սուդանի հայկական գաղութը ձևավորվել է XIX դ. վերջին և ստվարացել XX դ. սկզբին, երբ 1915 թ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերը հաստատվել են այնտեղ: Սկզբում հայ համայնքը, ասաց նա, բաղկացած էր մոտ 200 հոգուց, իսկ հետո նրանց թիվը հասել է շուրջ 800-ի, որոնք հիմնականում բնակվում էին մայրաքաղաք Խարտումում:

Յոթերորդ նիստում առաջինը հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Արտակ Մաղալյանը, որի գեկուցումը կրում էր «Հայ ուղեգիրները Եթովպիայի և հայ-եթովպական հարաբերությունների մասին» վերտառությունը: Նա ներկայացրեց 1678 թ. քաղաքական առաքելությամբ Եթովպիա մեկնած Հովհաննես արքեպիսկոպոս Թովթունջիի, XVII դ. վերջին այդ երկրում եղած ճանապարհորդ Ավետիք Բաղդասարյան Տիգրանակերտցու, 1764 թ. Եթովպիա այցելած վաճառական Հովհաննես Թովմաճանի (Թովմաճանյան) և 1867 թ. միջնորդական առաքելու-

յամբ այնտեղ մեկնած Երուսաղեմի միաբան Տիմոթեոս վրդ. Սափ-րիչյանի ուղեգրություններն ու արժևորեց դրանք:

Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան մատենադարանի տնօրեն Բորիս Ա-ճեմյանը հանդես եկավ զույգ գեկուցումներով, որոնք կրում էին «Գաղթի հուշեր: Քսաներորդ դարի Եթովպիայի մեջ հայերի մի օջախի առաջացումը» և «Արքայի փողերախումբը» խորագրերը: Առաջին գեկուցման մեջ նա, մասնավորապես, նշեց, որ Եթովպիայի կայսր Մենելիքը (1889–1913) և նրա հաջորդները հայօջախի կողմից նկատվել են որպես համայնքի բարերարներ: Եթովպական արքունիքում ծառայել են բազմաթիվ հայեր՝ Մենելիքի, Զատուդիտուտի (1916–1930) և Հայլե Սելասիե I-ի (1930–1974) իշխանության շրջանում՝ հասնելով բարձր պաշտոնների: Երկրորդ գեկուցման մեջ նա ներկայացրեց Եթովպիայի արքայական փողերախմբի կամ՝ հռչակավոր Ֆանֆարի ստեղծման պատմությունը: Հայտնի է, որ 1924 թ. արքայազն Ռաս Թաֆարի Մաքոնենը (ապագա Հայլե Սելասիե կայսրը) Երուսաղեմից 40 հայ եղեռնահար որբերի տարավ Եթովպիա՝ հիմնելու համար Եթովպիայի առաջին արքայական փողերախումբը, իսկ խմբավար Գևորգ Նալբանդյանը ստեղծեց այդ երկրի առաջին օրհներգը:

Այնուհետև ելույթ ունեցավ ծնունդով սուդանցի, նախկին Եթովպահայ, այժմ անգլիաբնակ Ռուբինա Սվաճյան-Քինգուելը, որի գեկուցումը նվիրված էր իր հոր՝ արքայական ոսկերիչ Պետրոս Սվաճյանի կյանքին ու գործունեությանը: Վերջինս Եթովպահայ հայտնի ոսկերիչ էր, որը Հայլե Սելասիե I-ի կողմից ստացել էր կայսերական ոսկերչագործության մատակարարման իրավունքը՝ 1955–1974 թթ.: Զեկուցողն անդրադարձավ նաև հայ այլ ոսկերիչների, որոնց փոխանցվում էին կայսերական ոսկերչագործության պատվերներ:

Երեկոյան դասախոսությունները հանդես եկավ Եթովպիայի հայկական համայնքի ղեկավար, ադիսաբեբայաբնակ Վարդգես Նալբանդյանը, որը ներկայացրեց Եթովպահայության անցյալի փառավոր պատկերը և հեռավոր Աֆրիկայի ավելի քան 102 միլիոն բնակչությամբ այդ երկրում ապրող շուրջ 100 հայերի հերոսական մաքառումներն իրենց ազգային ինքնության պահպանման համար:

Գիտաժողովի նիստավարներն էին լիբանանահայ ճանաչված մտավորականներ Արտա Արսենյան-Էքմեքճին, Նանոր Գարակյոզյանը, Արշալույս Թովալյանը, Արմեն Ուրնեչլյանը, Անդրանիկ Դաքեսյանը, Շաղիկ Խուրավերդյանը և Եղիա Թաշճյանը: Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ աշխույժ քննարկում, որի ընթացքում կարևորվեց նմանատիպ գիտաժողովների անցկացման անհրաժեշտությունը:

Գիտաժողովը կազմակերպվել էր Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական համայնքների բաժնի նվիրատվությամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի կազմակերպած վերջին հինգ գիտաժողովների նյութերը՝ Լիբանանի, Սիրիայի, Հորդանանի,

Իրաքի և Եգիպտոս-Սուդան-Եթովպիայի հայկական գաղթօջախների վերաբերյալ, չափազանց կարևոր նշանակություն ունեն այդ համայնքների անցյալի ու ներկայի պատմությունը զբաղվողների համար: Արդեն իսկ հրատարակվել են Լիբանանի և Սիրիայի հայերին նվիրված հատորները, առաջիկայում լույս են տեսնելու նաև Հորդանանի ու Իրաքի հայօջախներին նվիրված գիտաժողովների նյութերը:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
(Հիմնադրման 75-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում արդեն 75 տարի համակարգված աշխատանքներ են ընթանում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվել են գիտական մեծարժեք բազմաթիվ աշխատություններ, պատրաստվել գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և հմուտ լեզվաբաններ: Ինստիտուտի տարբեր սերունդների գիտաշխատողներ զբաղվել ու զբաղվում են հայոց լեզվի կառուցվածքի և գործառություն, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, գրական արևելահայերենի ու արևմտահայերենի քննությամբ, հաստատությունում կարևորվում է ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարանների և տերմինարանների ստեղծումը: Գիտնականների հետաքրքրությունների ոլորտում են նաև գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը: Ինստիտուտի աշխատակիցները հեղինակել են ընդհանուր-տեսական և հայերենի կառուցվածքի ու պատմական զարգացման առանձին հարցերի վերաբերող մենագրական ու խմբային աշխատություններ, մշակել կամ առաջադրել են հայ քերականագիտության զարգացման համար կարևոր սկզբունքներ: Հաստատությունը զգալի նվաճումներ ունի հայերենագիտական հետազոտությունների բոլոր բնագավառներում:

Ներկայում էլ ինստիտուտի համար բնութագրական են գիտաշխատողների մասնագիտական բարձր որակները, գիտական աշխատանքների նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումը և պահանջկոտությունը, որոնք տասնամյակների ընթացքում ավանդաբար ձևավորվել ու փոխանցվում են սերնդեսերունդ: Հրապարակվող արժեքավոր հոդվածների և գրքերի քանակի տարեցտարի աճը վկայում է ինստիտուտի վերընթաց զարգացման մասին: Մասնավորապես, վերջին հինգ տարիների ընթացքում ինստիտուտի գիտաշխատողները հրապարակել են վեց տասնյակից ավելի մենագրություն, ժողովածու և դասագիրք, 340 հոդված ու զեկուցում: Ժամանակակից հայերենի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում գիտարկվել են արդի փուլում լեզվի զարգացման հիմնական միտումները, գործառության էական առանձնահատկությունները, քննվել են գրական լեզվի կանոնարկման, կանոնի ու կիրարկության խնդիրներ, տեքստի վերլուծության, բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման, դրանց փոխակերպման լեզվաոճական արժեքի և այլ հարցեր, կատարվել են բառապաշարի առանձին

չերտերի, տերմինային համակարգի վերլուծություններ, ժողովրդախոսակցական լեզվի մեր օրերին բնորոշ որոշ յուրահատկությունների վերհանում և ուսումնասիրում, խոսակցական հայերենի ու գրական լեզվի փոխազդեցությունների դիտարկում:

Հրապարակված բազմաթիվ աշխատանքներում կատարվել են գրաբարյան և միջինհայերենյան մի շարք մատյանների լեզվական քննություն, լեզվի զարգացման տարբեր փուլերում տերմինային համակարգերի հետազոտություն, լեզվի ու քերականագիտության պատմական զարգացման առանձնահատկությունների դիտարկում, վեր են հանվել ձեռագիր բառարանների, հիշատակարանների, բժշկարանների բառապաշարի առանձնահատկությունները, հետազոտվել և մեկնաբանվել են V դարի մատենագրության մեջ բառերի մեկնությունների փորձերը: Արգի տիպաբանական լեզվաբանություն լույսի ներքո հետազոտվել են հայերենի որոշ տիպաբանական առանձնահատկություններ, դիտարկվել է հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ հայերենի տվյալների օգտագործման խնդիրը, անդրադարձ է կատարվել ավանդական և արգի հնդեվրոպասեմական մոտեցումների որոշ առանցքային տարբերություններին: Հանգամանորեն քննության են ենթարկվել Սփյուռքի տարբեր համայնքներում գործառույզ գրական արևմտահայերենի տարբերակային ձևերը, վիճահարույց խնդիրները, համակարգված ձևով ներկայացվել են քերականական օրինաչափություններն ու կանոնական ձևերը, արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային մի շարք ենթահամակարգերի գուգադրական քննություն մեր են հանվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, մատնանշվել են երկու ճյուղերի տերմինահամակարգերի փոխհարստացման, մերձեցման և միասնական զարգացման հնարավորություններն ու ուղիները, դիտարկվել է արևմտահայերենի ուսումնասիրության ընթացքը: Բարբառագետները կատարել են նախկինում չուսումնասիրված բարբառային մի շարք միավորների համակարգերի նկարագրություն, հետազոտել են ՀՀ տարածքում գործառույզ կը ճյուղի բարբառների և գրական արևմտահայերենի փոխհարաբերությունները ըստ հնչյունաքերականական ու բառապաշարային համակարգերի, քննել են հայ բարբառների քերականական, բառապաշարային, հնչյունական մի շարք իրողություններ՝ լեզվաբանական աշխարհագրության, ինչպես նաև համեմատական ու պատմական մեթոդներով: Հարկ է նշել, որ հրատարակված շատ աշխատանքներ կիրառելի են ոչ միայն լեզվաբանության ոլորտում, այլև կարող են հետաքրքրել հանրության լայն շրջանակների: Վերջին տարիներին ինստիտուտում կիրառական լեզվաբանության ուղղություն մշակվել և իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են մի կողմից՝ լեզվաբանական հետազոտությունների բնագավառում նորագույն տեխնոլոգիաների, համացանցի հնարավորությունների, համակարգչային տեխնիկայի կիրառությանը, մյուս կողմից՝ հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառույթ

յանը: Իրականացվել է «Հայկական էլեկտրոնային համաբարբառ» նախագիծը, որով գիտական հանրությանը մատուցվում է համակարգչային ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառների մեծածավալ շտեմարան՝ արտակարգ լայն ընդգրկումով, գրաբարյան, միջինհայերենյան և աշխարհաբարյան շրջաններին վերաբերող երկերի շարունակական ներածման հնարավորություններով:

Հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են լեզվի ուսումնասիրության տարբեր ոլորտներին նվիրված հանրապետական ու միջազգային գիտաժողովներ, դրանց թվում՝ «Ջահուկյանական ընթերցումներ», Երիտասարդ լեզվաբանների ամենամյա գիտաժողովները: 2017 թ. լեզվի ինստիտուտը հաջողությամբ կազմակերպեց առաջին առցանց գիտաժողովը, որին մասնակցեցին երեք տասնյակից ավելի հետազոտողներ ինչպես հանրապետության գիտակրթական տարբեր հաստատություններից, այնպես էլ արտերկրից: Կանոնավորապես կազմակերպվում են գիտական սեմինարներ, որոնցում գիտաշխատողները ներկայացնում են իրենց հետազոտությունների ուշադրավ արդյունքները, ինչպես նաև լեզվաբանության այս կամ այն ոլորտին վերաբերող նորագույն տեսություններ ու հրապարակումներ: Ինստիտուտը լեզվաքաղաքականությանը, լեզվի խնդիրներին նվիրված հանրապետական խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ է կազմակերպում ՀՀ սփյուռքի նախարարության, Գրողների միության, ակադեմիական ու բուհական հաստատությունների հետ՝ ներգրավելով բուհական հայերենագիտական ամբիոնների ներկայացուցիչներին: Միաժամանակ, ինստիտուտի գիտաշխատողներն ակտիվորեն մասնակցում են բուհերում կազմակերպվող գիտաժողովներին, քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին ու այլ աշխատանքներին: Հաստատության հետազոտական աշխատանքների արդյունքները մեծապես նպաստում են հայ լեզվաբանական մտքի զարգացմանը, իրենց կիրառությունն են գտնում կրթական համակարգում, հարակից գիտաճյուղերի ուսումնասիրություններում:

Ինստիտուտի արևմտահայերենի բաժնում հետազոտական աշխատանքներ են ծավալել սիրիահայ մտավորականներ, բաժնին կից ձևավորվել և հասարակական կարգով ԱՄՆ-ում գործում է հայերենագետների խումբ, որի աջակցությամբ ընթանում են արևմտահայերենի գործնական բառարանի ստեղծման աշխատանքներ: Սկիզբ է դրվել Արամ Ա կաթողիկոսի հովանու ներքո գործող Արևմտահայերենի պաշտպանության հանձնախմբի հետ համագործակցությանը: Հաստատությունում պարբերաբար գեկուցումներով հանդես են գալիս հայագետներ Կանադայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Նիդեռլանդներից, Իրանից, Լիբանանից, Եգիպտոսից: Վերջին ժամանակներս ինստիտուտում հյուրընկալվել են Իրանի և Ղազախստանի գեսպանները: Լեզվի ինստիտուտում պատշաճ ուշադրություն է դարձվում երիտասարդ լեզվաբանների պատրաստման խնդրին:

Գիտխորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են ասպիրանտներին ու հայցորդներին առնչվող խնդիրներ, տնօրենությունը երիտասարդ մասնագետների հետ հանդիպումներում անդրադառնում է նրանց ուսումնառության ընթացքին, հուզող հարցերին, արվում են եզրահանգումներ, և ցուցաբերվում է անհրաժեշտ աջակցություն: Ինստիտուտը պատրաստում ու տարին երկու համարով հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսը, որն ընդգրկված է ԲՈՂ-ի համար ընդունելի պարբերականների շարքում: Աշխատանքներ են տարվում հայերենագիտական էլեկտրոնային հանդեսի հրատարակումը սկսելու ուղղությամբ: Ինստիտուտում է գործում ԲՈՂ-ի 019 «Լեզվաբանություն» մասնագիտական խորհուրդը: Վերջին տարիներին ինստիտուտի 4 աշխատակից պաշտպանել է դոկտորական, 3 աշխատակից՝ թեկնածուական ատենախոսություն: Լեզվաբաղաքականություն ու լեզվամշակույթի արդի խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով հաստատությունում կազմակերպվում են մայրենիի խնդիրներին առնչվող ամենամյա միջոցառումներ, պարբերական հանդիպումներ ու քննարկումներ լրագրողների, մանկավարժների, սովորողների հետ: Ինստիտուտի աշխատակիցները լեզվական հարցերի շուրջ մեկնաբանություններով հանդես են գալիս հեռուստատեսությամբ ու ռադիոյով, զանգվածային լրատվության այլ միջոցներով: Հաստատության համացանցային կայքը պարունակում է ինստիտուտի մասին անհրաժեշտ տեղեկություններ, ապահովում է տեղեկատվություն տարբեր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ, ընթերցողներին հասանելի է դարձնում հրատարակված աշխատությունների էլեկտրոնային տարբերակները և այլն: Կայքում գետեղված նյութերով հաստատությունը ձգտում է նաև նպաստել գրական հայերենի անադարտության պահպանմանը, արևմտահայերենի կանոնակարգմանը:

Ընդհանուր առմամբ, ինստիտուտի գործունեության վերջին հինգ տարիների ձեռքբերումներում էական պետք է համարել երկու կարգի իրողություններ.

1. նոր ստորաբաժանումների՝ արևմտահայերենի, բառարանագրության, ընդհանուր ու համեմատական լեզվաբանության բաժինների ձևավորում, որը հնարավորություն ստեղծեց տվյալ ուղղություններով ձեռնարկելու ավելի հիմնավոր և խորը ուսումնասիրություններ,

2. հետազոտական աշխատանքների նոր ուղղությունների և հնարավորությունների կիրառում (պատմահամեմատական մեթոդի կիրառում բարբառագիտության ոլորտում, կենդանի բարբառային խոսքի ու խոսակցական լեզվի ուսումնասիրում, նորագույն տեխնոլոգիաների կիրառում, համակարգչային լեզվաբանության զարգացում և այլն), որը թույլ է տալիս ուսումնասիրության առարկան քննել նոր գիտանկյուններով ու դրսևորումներով՝ այդպիսով ավելի համակողմանի դարձնելով գիտական հետազոտությունը:

Գիտությունների զարգացման բնականոն ընթացքը ենթադրում է տարբեր ոլորտներում ավելի խորացված ուսումնասիրություն, գիտական արդյունքի որակի բարձրացում, նոր ուղղությունների գծով աշխատանքների ծավալում, հետազոտական նոր մեթոդների տիրապետում և գործադրում: Ինչ խոսք, մեծ կարևորություն ունեն նաև գիտակազմակերպական աշխատանքների արդյունավետության բարձրացումն ու նոր եղանակների կիրառումը:

Հաստատությունում նախատեսվում է հետազոտական աշխատանքները շարունակել հետևյալ ուղղություններով.

1. արդի հայերենի բոլոր դրսևորումների կառուցվածքի և գործառություն համակարգված ուսումնասիրություն, որ ներառում է՝

ա) գրական արևելահայերենի ու արևմտահայերենի բառապաշարի և հնչյունաքերականական իրողությունների ուսումնասիրում, կանոնարկում ու նորմավորում, գրական լեզվի երկու ճյուղերի զուգադիր քննություն և նկարագրություն, մերձեցման ու փոխներթափանցման հնարավորությունների ուղղությամբ հետազոտությունների ծավալում,

բ) հայոց լեզվի տերմինների մշակում, տերմինաբանական, ուղղագրական, երկլեզվյան բառարանների կազմում,

գ) խոսակցական հայերենի կառուցվածքի և գործառության համակարգված ուսումնասիրություն,

դ) բարբառագիտական ատլասի ամբողջացման, բարբառային գուգաբանությունների շտեմարանների կազմման աշխատանքների շարունակում, բարբառագիտության տեսական հարցերի արծարծում, առանձին բարբառների ամբողջական ուսումնասիրում, համեմատական, տարածքային բարբառագիտական աշխատանքների նախաձեռնում, ընդհանուրհայերենյան և բարբառային հատկանիշների տարանջատում, բարբառային հայերենի ամբողջական նկարագրություն ուղղությամբ աշխատանքների ծավալում:

Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքները միտված են լինելու հետևյալ ընդհանրական ծրագրերի իրագործմանը.

ա. արդի հայերենի ամբողջական քերականության ստեղծում, որը համակողմանիորեն ներկայացնելու է արդի հայերենի բոլոր դրսևորումների՝ արևելահայերենի, արևմտահայերենի, խոսակցական լեզվի և բարբառների հնչյունաքերականական իրողությունները՝ իրենց փոխադարձ կապերով ու առնչություններով,

բ. արևմտահայերենի գիտական քերականության ստեղծում, որը կպարունակի արևմտահայերենի ձևավորման պատմությունը, գրական արևմտահայերենի հնչյունաքերականական համակարգերի ու բառապաշարի գիտական համակողմանի վերլուծություն, կանոնական, միասնական ձևերի առաջադրում և հիմնավորում՝ այդպիսով հավակնելով հիմք դառնալ արևմտահայերենի դասագրքերի ստեղծման,

գ. «Հայ բարբառագիտություն» աշխատության պատրաստում, որը կներկայացնի հայ բարբառագիտության պատմությունը, բարբառ-



ուսուցիչության տեսական ու գործնական մի շարք խնդիրների նորովի մեկնաբանություններ, կամփոփի բարբառագիտության արդի փուլի ձեռքբերումները:

2. Հայոց լեզվի պատմական զարգացման, ժամանակային տարբեր դրսևորումների ուսումնասիրություն, որ ներառում է՝

ա) Հայոց լեզվի ծագման, ձևավորման ու լեզվական շփումների հարցերի հետազա խորացված ուսումնասիրում,

բ) գրաբարյան բառապաշարի ամբողջացման, նորահայտ բառերի ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքների շարունակում,

գ) գրաբարի բառապաշարի և քերականական կառուցվածքի համակարգված ուսումնասիրություն ու գրաբարի ակադեմիական քերականության ստեղծման ուղղությամբ աշխատանքների ձեռնարկում,

դ) հայերենի ստուգաբանական բառարանի ցանկում ճշգրտումներ և լրացումներ կատարելու ուղղությամբ աշխատանքների շարունակում,

ե) միջին հայերենի բառապաշարի և կառուցվածքի հետազա քննություն, բարբառների ուսումնասիրության ժամանակ միջինհայերենյան լեզվական տվյալների հաշվառում,

զ) հայերենի ամբողջական պատմական քերականության ստեղծման ուղղությամբ աշխատանքների շարունակում:

Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքները միտված են լինելու հետևյալ ընդհանրական ծրագրերի իրագործմանը.

ա. ըստ զարգացման տարբեր փուլերի՝ գրաբարի համակարգային քննության իրականացում՝ հստակորեն տարբերակելու բնիկ իրողություններն ազդեցություններից, որոշելու տարբերակային ձևերն ու դրանց հնարավոր բարբառային հիմքերը, ունենալու լեզվական փոփոխությունների ամբողջական պատկերը՝ գրաբարի տարբեր փուլերը համեմատելու միջոցով,

բ. միջին հայերենի ամբողջական քերականության ստեղծում, որը կպարունակի միջին հայերենի կազմավորման և ուսումնասիրության ամբողջական նկարագրություն, հնչյունաքերականական համակարգերի ու բառապաշարի համակարգային վերլուծություն, կներկայացնի միջինհայերենյան շրջանի գրականության լեզվի մանրագնին ուսումնասիրություն՝ ըստ ժամանակային ու տարածական հատկանիշների:

3. Ընդհանուր և համեմատական, կիրառական լեզվաբանական ուղղություններով ուսումնասիրությունների ծավալում ու խորացում, որ ներառում է՝

ա) հայերենի ու հնդեվրոպական տարբեր լեզուների, հայերենի և փոքրասիական հին ու հնագույն լեզուների առնչությունների ուսումնասիրություն, քերականական իրողությունների համեմատական և տիպաբանական դիտարկում,

բ) իմաստային տարբեր խմբերի մեջ մտնող բառերի ծագումնային, իմաստային և բառակազմական քննություն, բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ,

գ) նորագույն լեզվաբանական ուղղությունների ուսումնասիրում և լեզվի հետազոտման ոլորտում նոր մեթոդների գործածում,

դ) համակարգչային լեզվաբանության զարգացում, փորձառական հետազոտությունների, լեզվաբանությունը հարակից գիտաճյուղերի հետ ուսումնասիրությունների ծավալում:

Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքները միտված են լինելու հետևյալ ընդհանրական ծրագրերի իրագործմանը.

ա. ընդհանուր և համեմատական լեզվաբանություն արդի նվաճումները, լեզվաբանական նորագույն ուղղությունների հետազոտական խնդիրներն ու մեթոդները, արդի հայ լեզվաբանական հետազոտություններում դրանց կիրառման հեռանկարները ներկայացնող աշխատությունների պատրաստում,

բ. հայերենի ուսումնասիրությունում գործում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ փորձառական հնչյունաբանության զարգացում, մանավանդ որ փորձառական հետազոտության կարիք ունեն հայերենի բոլոր դրսևորումների հնչյունական իրողությունները,

գ. էլեկտրոնային շտեմարանների, համակարգչային քերականական բառարանների, համաբարբառների, գրադարանի ձևավորում, էլեկտրոնային ուսուցողական ուղղագրական, ուղղախոսական համակարգերի ստեղծում,

դ. բարբառային խոսքի ձայնագրում և բարբառային ձայնադրանի ընդլայնում, համացանցային շտեմարանի ստեղծում, որը մեծապես կնպաստի բարբառների շարունակական հետազոտությանը:

Լեզվի ինստիտուտի բնականոն և արդյունավետ գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակ ունեն գիտակազմակերպական աշխատանքները, որոնք միտված են համակարգելու կատարվող հետազոտությունները, բարձրացնելու գիտաշխատողների պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, գիտական արդյունքների որակն ու ներկայացման մակարդակը, կիրառելու ուսումնասիրությունն ու նորագույն եղանակներ, պատրաստելու գիտական բարձրորակ կադրեր տարբեր ուղղությունների գծով, նաև զանազան գիտական միջոցառումներում գիտական խնդիրների քննարկումներով, հայերենի և օտարերկրյա գիտնականների ու գիտական կազմակերպությունների համագործակցությամբ, տեխնիկական նորագույն միջոցների օգտագործմամբ նպաստելու առավել համակողմանի ու ամբողջական հետազոտությունների իրականացմանը, գիտական մտքի առաջնությունը և այլն:

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

---

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

**Վազգեն Համբարձումյան** – Հ. Հյուբշմանը և հայերենը հնդեվրոպական առանձին ճյուղի լեզու լինելու հարցը (ծննդյան 170 և մահվան 110-ամյակի առթիվ) .....3

**Վիկտոր Կատվալյան** – Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում (1958–1960 թթ.) .....20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀՈՂԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Հրայր Զորյան** – Հայաստանի պետական լրատվական գործակալության հիմնադրումն ու գործունեությունը (1918–1920 թթ.) .....34

Մ. ԳՈՐԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Ռոբերտ Բաղդասարյան** – Մաքսիմ Գորկին և հայ իրականությունը (ռուս.) .....53

**Տիգրան Սարգսյան** – Գրական-երաժշտական ստեղծագործական կապեր. Մ. Գորկի և Ալ. Սպենդիարյան .....64

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

**Անուշավան Զաքարյան** – Ռուս գրողները և Հովհաննես Թումանյանը (1914–1920 թթ.) .....71

II

**Ֆելիքս Մովսիսյան** – Պոլսահայ մասոնների նշանավոր դեմքերը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ) .....93

**Համո Սուքիասյան, Նարինե Երանոսյան** – «Կարմիր մոծակ» երգիծաթերթը և խորհրդահայ գրաքննությունը (1926–1927 թթ.) .....121

**Եվա Մնացականյան** – XIX դարավերջի հայ գրաքննադատության զարգացման միտումները .....135

**Տաթևիկ Հակոբյան** – Աբդուլ Համիդ II ներքին քաղաքականությունը և դրա լուսաբանումը թուրքական պատմագրության մեջ (ուրվագիծ) .....154

**Ռոբերտ Թաթոյան** – Բիթլիսի նահանգի հայ բնակչության միգրացիոն գործընթացների պատմությունից (1880-ական թվականներ – 1914 թ.) .....164

**Արփինե Բաբլունյան** – Մալաթիա գավառի հայաբնակ բնակավայրերը (1835–1870-ական թվականներ) .....182

**Էդուարդ Հովհաննիսյան** – Խանական կառավարման վերացումը Ղարաբաղում՝ ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի նյութերի .....191

**Գարիկ Սկրտչյան** – Միջին հայերենի բարբառային տարբերակվածության լեզվական և պատմահասարակական նախադրյալները .....204

**ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**Հովհաննես Խորիկյան** – Արիանոսի մի տեղեկության շուրջ .....213

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Սուսաննա Հովհաննիսյան** – Սուրմա Թումանյան. «Միայն շատ տարիներ անց...» կամ «անցյալի որոնումներում» (ռուս.) .....218

**Մագդա Ջանփոլադյան** – Սուսաննա Հովհաննիսյան. Հովհաննես Թումանյանը Առաջին աշխարհամարտի տարիներին (ռուս.) .....224

**Արմեն Կարապետյան** – Եղիկ Ճերճեան. Մեծն Սուրատ (Համբարձում Պոյաճեան) ..230

**Հրաչյա Բալոյան** – Արարատ Հակոբյան. 1937 թվականը Հայաստանում: Քննական դիտարկումներ քաղաքական բռնաճնշումների 80-ամյա տարելիցի առիթով ..... 234

**Աստղիկ Մուշեղյան** – Գայանե Ամիրադյան. Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հնդկահայոց երգվածքում .....237

**Գոհար Մելիքյան** – Թամար Հայրապետյան. Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ .....241

**ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ**

**Վերժինե Սվազլյան** – Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի կյանքն ու գործը (ծննդյան 125-ամյակի առթիվ) .....246

**Հայկ Հակոբյան** – Ակադեմիկոս Սուրեն Տիգրանի Երեմյան (ծննդյան 110-ամյակի առթիվ) .....255

**Աելիտա Դուրլխանյան** – Գրականագիտության հսկան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 95-ամյակի առթիվ) .....264

**ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ**

**Ռադիկ Մարտիրոսյան, Վլադիմիր Հարությունյան** – Ականավոր գիտնականը և մանկավարժը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ) .....271

**Լաուրա Մուրադյան** – Վաստակաշատ գրականագետը, գիտակրթական գործի կազմակերպիչը (Ազատ Եղիազարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ) .....274

<b>Անուշավան Զաքարյան, Համո Սուքիասյան</b> – Համլետ Մալխասի Հարությունյան (ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակի առթիվ) .....	280
---	-----

## ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

<b>Արաքս Փաշայան</b> – Գիտաժողով՝ «Հայ-արաբական փոխառնչություններ. Հայոց ցեղասպանությունից մինչև արդի մարտահրավերներ» թեմայով .....	286
<b>Լուսինե Վարդանյան, Արման Մալոյան</b> – Գիտաժողով՝ «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ» թեմայով .....	290
<b>Լիլիթ Հովհաննիսյան</b> – Միջազգային գիտաժողով՝ նվիրված մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության հռչակման հարյուրամյակին ..	294
<b>Հասմիկ Ստեփանյան</b> – Միջազգային գիտաժողով՝ նվիրված Մանուկ Բեյ Միրզայանին .....	303
<b>Արտակ Մաղալյան</b> – Գիտաժողով՝ նվիրված Եգիպտոսի, Սուդանի և Եթովպիայի հայկական գաղթօջախներին .....	307

## ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

<b>Վիկտոր Կատվալյան</b> – ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (հիմնադրման 75-ամյակի առթիվ) .....	315
--	-----

## СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ, СООБЩЕНИЯ

## I

<b>Вазген Амбарцумян</b> – Г. Гюбшман и вопрос об армянском как о языке отдельной группы индоевропейских языков (к 170-летию со дня рождения и 110-летию со дня смерти) .....	3
<b>Виктор Катвалян</b> – Вопрос происхождения армянских диалектов на страницах «Историко-филологического журнала» (1958 – 1960 гг.) .....	20

К 100-ЛЕТИЮ ПРОВОЗГЛАШЕНИЯ  
ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

<b>Грайр Зорян</b> – Создание и деятельность Государственного информационного агентства Армении (1918 – 1920 гг.) .....	34
---	----

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ М. ГОРЬКОГО

<b>Роберт Багдасарян</b> – Максим Горький и армянская действительность (на русск. яз.) .....	53
--	----

**Тигран Саркисян** – Литературно-музыкальные творческие связи: М. Горький  
и Ал. Спендиарян .....64

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
ОВ. ТУМАНЯНА

**Анушаван Закарян** – Русские писатели и Ованес Туманян (1914–1920 гг.) .....71

II

**Феликс Мовсисян** – Видные представители константинопольского армянского  
масонства (вторая половина XIX в. – начало XX в.) .....93

**Амо Сукиасян, Нарине Ераносян** – Сатирическая газета «Кармир моцак» и  
советская армянская цензура (1926–1927 гг.) .....121

**Ева Мнацакянян** – Тенденции развития армянской литературной критики  
конца XIX века .....135

**Татевик Акобян** – Внутренняя политика Абдула Гамида II и ее освещение в  
турецкой историографии (очерк) .....154

**Роберт Татоян** – Из истории миграционных процессов армянского населения  
Битлисского вилайета (1880-е годы – 1914 г.) .....164

**Арпине Баблумян** – Армянские населенные пункты области Малатия (1835–  
1870-е годы) .....182

**Эдуард Оганесян** – Конец ханского правления в Карабахе по материалам  
Актов Кавказской археографической комиссии .....191

**Гарик Мкртчян** – Языковые и социально-исторические предпосылки  
диалектной вариативности среднеармянского языка .....204

ОБСУЖДЕНИЯ

**Оганнес Хорикян** – Об одном сведении Арриана .....213

РЕЦЕНЗИИ

**Сусанна Ованесян** – Сурма Туманян. «И только через много лет...» или «в  
поисках прошлого» (на русск. яз.) .....218

**Магда Джанполадян** – Сусанна Ованесян. Ованес Туманян в годы Первой  
мировой войны (на русск. яз.) .....224

**Армен Карапетян** – Ехик Черечян. Великий Мурат (Амбарцум Поячян) .....230

**Рачья Балоян** – Арарат Акоюн. 1937 год в Армении. Критические наблю-  
дения в связи с 80-летием политических репрессий .....234

**Астхик Мушегян** – Гаяне Амирагян. Система восьмигласия в Новоджультинском или  
Индийско-армянском распеве армянского духовного песнетворчества .....237

**Гоар Меликян** – Тамар Айрапетян. Сочетание архетипов в армянских  
волшебных сказках и в эпическом наследии .....241

## НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

- Вержине Связлян** – Жизнь и деятельность академика Карапета Мелик-Оганджяна (к 125-летию со дня рождения) .....246
- Гайк Акопян** – Академик Сурен Тигранович Еремян (к 110-летию со дня рождения) .....255
- Аэлиты Долуханян** – Исполн. литературоведения (к 95-летию со дня рождения академика НАН РА Эдварда Джрбашяна) .....264

## НАШИ ЮБИЛЯРЫ

- Радик Мартиросян, Владимир Арутюнян** – Выдающийся ученый и педагог (к 75-летию со дня рождения академика НАН РА Юрия Суваряна) .....271
- Лаура Мурадян** – Заслуженный литературовед, организатор научно-просветительского дела (к 75-летию со дня рождения Азата Егиазаряна) .....274
- Анушаван Закарян, Амо Сукиасян** – Гамлет Малхасович Арутюнян (к 70-летию со дня рождения и 40-летию научно-педагогической деятельности) .....280

## НАУЧНАЯ ЖИЗНЬ

- Аракс Пашаян** – Научная конференция на тему «Армяно-арабские отношения: от Геноцида армян до современных вызовов» .....286
- Лусине Вардамян, Арман Малоян** – Научная конференция на тему «Армения и восточнохристианская цивилизация. III» .....290
- Лилит Оганисян** – Международная научная конференция, посвященная столетию майских героических сражений и провозглашения Республики Армения .....294
- Асмик Степанян** – Международная научная конференция, посвященная Манук Бей Мирзаяну .....303
- Артаг Магальян** – Научная конференция, посвященная армянским колониям Египта, Судана и Эфиопии .....307

## ПАМЯТНЫЕ ДАТЫ

- Виктор Катвалян** – Институт языка им. Р. Ачаряна НАН РА (к 75-летию основания) .....315

CONTENTS

ARTICLES, REPORTS

I

- Vazgen Hambardzumyan** – H. Hübschmann and the issue of the Armenian as a language of separate group among the Indo-European languages (to the 170th birth and the 110th death anniversaries) .....3
- Viktor Katvalyan** – The issue of the origin of Armenian dialects on the pages of the Historical-Philological Journal (1958–1960) .....20

ON THE CENTENNIAL OF THE  
PROCLAMATION OF THE FIRST  
REPUBLIC OF ARMENIA

- Hrayr Zoryan** – The establishment and activities of the State Media Agency of Armenia (1918–1920) .....34

TO THE 150TH BIRTH  
ANNIVERSARY OF M. GORKY

- Robert Baghdasaryan** – Maxim Gorky and the Armenian reality (In Russian) .....53
- Tigran Sargsyan** – Literary-musical creative ties: M. Gorky and Al. Spendiaryan .....64

TOWARDS THE 150TH BIRTH ANNIVERSARY  
OF H. TUMANYAN

- Anushavan Zakaryan** – Russian writers and Hovhannes Tumanyan (1914–1920) .....71

II

- Felix Movsisyan** – Prominent figures of the Armenian Masons of Constantinople (the second half of the XIX – the beginning of the XX cc.) .....93
- Hamo Sukiasyan, Narine Yerosyan** – The satirical paper “Karmir Motsak” and the Soviet Armenian censorship (1926–1927) .....121
- Eva Mnatsakanyan** – The tendencies of development of Armenian literary criticism at the end of the XIX century .....135
- Tatevik Hakobyan** – The internal policy of Abdul Hamid II and its interpretation in the Turkish historiography (outline) .....154
- Robert Tatoyan** – From the history of the migration processes of the Armenian population of Bitlis vilayet (1880s–1914) .....164
- Arpine Bablumyan** – The Armenian settlements of Malatia region (1835–1870s) .....182



<b>Eduard Hovhannisyan</b> – Abolishment of the Khan rule in Karabakh based on Acts of Caucasian Archaeographic Commission .....	191
<b>Garik Mkrtchyan</b> – Linguistic and socio-historical prerequisites of Middle Armenian dialectic differentiation .....	204

## DISCUSSIONS

<b>Hovhannes Khorikyan</b> – On an information of Arrian .....	213
--	-----

## BOOK REVIEWS

<b>Susanna Hovhannisyan</b> – Surma Tumanyan: “Only many years later...” or “in the search of past” (In Russian) .....	218
<b>Magda Janpoladyan</b> – Susanna Hovhannisyan. Hovhannes Tumanyan during the years of the First World War (In Russian) .....	224
<b>Armen Karapetyan</b> – Yeghik Tcheretchyan: Great Murat (Hambardzum Poyachyan) .....	230
<b>Hrachya Baloyan</b> – Ararat Hakobyan: Armenia in 1937. Critical observation on the occasion of the 80th anniversary of political repressions .....	234
<b>Astghik Musheghyan</b> – Gayane Amiraghyan. Eight-mode System in New Julfa’s or Indian- Armenian Chant of the Armenian Sacred music .....	237
<b>Gohar Meilkyan</b> – Combination of Archetypes in Armenian Tales of Magic and Epic Heritage .....	241

## OUR HONOURED SCHOLARS

<b>Verzhine Svazlyan</b> – The life and activities of Academician Karapet Melik-Ohanjanyan (to the 125th birth anniversary) .....	246
<b>Hayk Hakobyan</b> – Academician Suren Tigran Yeremyan (to the 110th birth anniversary) .....	255
<b>Aelita Dolukhanyan</b> – The giant of literary criticism (to the 95th birth anniversary of NAS RA Academician Eduard Jrbashyan) .....	264

## OUR JUBILEES

<b>Radik Martirosyan, Vladimir Harutyunyan</b> – The prominent scientist and pedagogist (to the 75th birth anniversary of NAS RA Academician Yuri Suvaryan) .....	271
<b>Laura Muradyan</b> – The honoured literary scholar, organizer of scientific-educational activity (to the 75th birth anniversary of Azat Yeghiazaryan) .....	274
<b>Anushavan Zakaryan, Hamo Sukiasyan</b> – Hamlet Malkhas Harutyunyan (to the 70th birth and 40th scientific-pedagogical activity) .....	280

## SCIENTIFIC LIFE

<b>Araks Pashayan</b> – Conference entitled “Armenian-Arab Interrelations: From the Armenian Genocide to Modern Challenges: III” .....	286
<b>Lusine Vardanyan, Arman Maloyan</b> – Conference entitled “Armenia and Oriental Christian Civilisation” .....	290

---

<b>Lilit Hovhannisyan</b> – International scientific conference dedicated to the centenary of the May heroic battles and the proclamation of the Republic of Armenia .....	294
<b>Hasmik Stepanyan</b> – International conference dedicated to Manouk bey Mirzayan .....	303
<b>Artak Maghalyan</b> – Conference dedicated to the Armenian colonies of Egypt, Sudan and Ethopia .....	307

COMMEMORATIVE DATES

<b>Viktor Katvalyan</b> – Institute of Language after H. Acharyan of NAS RA (to the 75th anniversary of its foundation) .....	315
---	-----

ՀԱՆԴԵՍԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՄԱՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ՝ 100 ԱՄՆ ԴՈԼԱՐ  
(ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵՔ ՀԱՄԱՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԸ)

---

«Պատմաբանասիրական հանդեսը» վաճառվում է  
Երևանի գրախանութներում

*Համակարգչային շարվածքը և էջադրուժը՝ Շուշան Բասենցյանի*

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. 581872  
Адрес редакции: 375019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. 581872  
Address: 24G Marshal Baghramian av., 375019, Yerevan, Armenia, tel. 581872

E-MAIL: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

---

*Հրատ. պատվեր № 880  
Ստորագրված է տպագրության 31.08.2018 թ.:  
Տպագրական 20.5 մամուլ: Թուղթ № 1, 70x100:*

---

*ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:*

---

Изд. заказ № 880  
Подписано к печати 31.08.2018 г.  
Печ. 20.5 л. Бумага № 1, 70x100.

---

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.